



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԹԻԻ 17 ԽԱՖԻԸՆ

(Ժամանակակից պատմական վեպ)

Երեք գրքով

Գիրք Ա

**Գրականության և արվեստի թանգարանի
հրատարակչություն
ԵՐԵՒԱՆ - 2000**

ԴՏՀ 891.981-3 Օտեան
ԳՄԴ 84Հ-44
Օ-782

**Գիրքը տպագրվում է ամերիկահայ գրասեր,
բարերար ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՄՈՆՅԱՆԻ
մեկենասությամբ**

*Տեքստը տպագրության պատրաստեց
ՀԵՂԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ*

Օ - 782 Օտյան, Ե.,
«Թիվ 17 խաֆիեն» [վեպ], / (Ե. Օտյան - Եր.,
Գրականության և արվեստի թանգարանի հրատ.,
2000, 328 էջ):

Գիրքն ընդգրկում է հայ խոշորագույն երգիծաբան
Ե. Օտյանի լավագույն ստեղծագործություններից
մեկի՝ «Թիվ 17 խաֆիեն» մեծածավալ վեպի առաջին
մասը:

Օ $\frac{4702080101}{841(01) - 2000}$ 2000

ԳՄԴ 84Հ - 44



ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանը 1999 թ., Երվանդ Օտյանի ծննդյան 130 ամյակի առթիվ, ամերիկահայ գրասեր և բարերար Հարություն Սիմոնյանի ոգեշնչմամբ ու հովանավորությամբ, ծրագրեց առանձին հատորներով տպագրել մեծ երգիծաբանի անտիպ ու չհավաքված երկերը: Այդ թվականին Թանգարանը լույս ընծայեց Օտյանի անհայտ մնացած ժառանգությունից երեք հատոր. «Հայ Տիասրորան» վեպը, «Վերնատունէն» ֆելիետոնների ժողովածուն և գրողի նամակները:

Գրողի նամականու առաջաբանի հեղինակ, բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Մուրադյանի համոզմամբ, հրատարակվելիք գրքերից առաջնահերթը «Թի 17 խաֆիէն» խորագրով «բացառիկ կարևորության» վեպն է, որն ականատեսի գրչով ներկայացնում է «մեր պատմության ամենաողբերգական շրջանը՝ 1913-1918 թթ., այսինքն՝ հայոց Մեծ եղեռնի նախապատրաստության և իրագործման գեղարվեստական պատմությունը»:

«Թի 17 խաֆիէն» վեպը, որպես թերթոն, լույս է տեսել Կ. Պոլսի «Վերջին լուր» օրաթերթի 1919 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1920 թ. հոկտեմբերի 2-ի համարներում: Այստեղից 1938 թ., չորս հատորներով, այն վերահրատարակել է Կահիրեի «Սինեվէպ» տպարանը: 1957 թ. Բեյրութի «Չարթօնք» օրաթերթը «Սինեվէպի» հատորներից, թերթոնի ձևով, վերահրատարակել է վեպը: Նշված հրատարակությունները «անմատչելի են ընթերցողներին ու ուսումնասիրողներին», և հասունացել էր վեպի վերահրատարակությունը, ինչը խորհրդային տարիներին «անկարելի էր գրաքննչական պատճառներով»:

Այսօր ունենալով խոսքի ազատության և օտյանասեր մեկեմասի առկայության բարեբախտությունը՝ ձեռնարկում ենք այդ մեծարժեք գրապատմական հուշարձանի տպագրությունը: Վեպի վերահրատարակությունն անհրաժեշտ է նաև այլ նկատառումներով:

Ինչպես մյուս թերթոնային վեպերի պարագայում, այս գործը տպագրելիս էլ Օտյանը հնարավորություն չի ունեցել սրբագրել այն, վերանայել ու վերահրատարակել: Ուստի և թերթոնային օրի-

ճակում առկա են բազմաթիվ վրիպակներ ու լեզվաոճական անհարթություններ: Կահիրեում լույս տեսած քառահատորյակն էլ առավելապես ներկայացնում է թերթոնի պարզ արտատպությունը (անգամ որոշ հատվածների բացակայությամբ)՝ առանց վերլուծական առաջաբանի ու վեպի ընկալմանն օժանդակող ցանկերի:

Օտյանի այս վեպի վերահրատարակությունը կարևոր է նաև այնու, որ այստեղ Եղեռնի թեման շոշափող գեղարվեստական գործերի մեծ մասին հատուկ ողբասացության փոխարեն առկա է պատմական սթափ հայացքը, անգամ՝ մեծ աղետին հայի մեղսակցության համարձակ ու իրատես հայացքը:

«Թիւ 17 խաֆիէն» վեպը բաղկացած է հեղինակային առաջաբանից, 50 (Մ) վերնագրված գլուխներից ու վերջաբանից: Օտյանն իր այս վեպը չի բաժանել հատորների կամ մասերի: Նկատի ունենալով վեպի խոշոր ծավալը՝ «Սինէվէպ»ը այն տպագրել է չորս հատորներով՝ պահպանելով էջակալման հաջորդականությունը (1220 էջ), սակայն յուրաքանչյուր հատորում փոխելով գլուխների համարակալումը: Մենք ևս հրատարակչական նպատակահարմարությունից ելնելով՝ վեպը պայմանականորեն տրոհել ենք և տպագրել երեք գրքով՝ պահպանելով բոլոր գլուխների հաջորդական համարակալումը:

Վեպը վերահրատարակելիս հիմք ենք ընդունել «Վերջին լուր»ի թերթոնային օրինակը: Ուղղել ենք բոլոր վրիպակները, որոշ երկձև գրություններ բերել ենք միօրինակության, վերանայել ենք կետադրությունն ըստ արդի կանոնների: Երրորդ գրքի վերջում գետեղել ենք վեպում հիշատակվող պատմական անձանց, ինչպես նաև դժվար հասկանալի բառերի ու դարձվածների բացատրական ցանկերը:

Հայոց ցեղասպանության 85-րդ տարում Օտյանի «Թիւ 17 խաֆիէն» վեպի հրատարակությունը մեծարժեք նվեր կլինի թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի ընթերցող հանրությանը: Ուստի մեր ջերմ շնորհակալական խոսքն ենք հղում հարգարժան մեկեճաս Հարություն Սիմոնյանին և բոլոր նրանց, ովքեր մասնակցել են հատորների հրատարակչական ու տպագրական աշխատանքներին:

ՄԵՄ ԵՂԵՌՆԸ ՊԱՏԿԵՐՈՂ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՎԵՊԸ

Այսօրվա ընթերցողին, դժբախտաբար, խոշորագույն երգիծաբան Երվանդ Օտյանի՝ մի քանի տասնյակ հատոր կազմող գրական ժառանգության ոչ բոլոր էջերն են մատչելի կամ հայտնի: Խորհրդային ժամանակներում, երբ տպագրելու անսահման հնարավորություններ կային, և քանիցս տպագրվել են նաև այդ մեծ դասականի երկերը (նկատի ունենք հատկապես 1935, 1957 թթ. մեծադիր հատորները և մանավանդ՝ 1960-ական թթ. սկզբներին հրատարակված Երկերի վեցհատորյա ժողովածուն), ի թիվս այլ գործերի, զուտ քաղաքական և գլավլիտային-գրաքննչական նկատառումներով չեն հրատարակվել նրա երկու ամենանշանավոր ստեղծագործությունները: Դրանցից մեկը հայ քաղաքական երգիծանքի գլուխգործոց «Ընկեր Բ. Փանջունին» է, որն առանց երկմտանքի կարելի է անվանել դարի վեպ: Երևանում Լ. Հախվերդյանի առաջաբանով լույս տեսավ միայն խորհրդային կարգերի փլուզման նախաշեմին՝ 1989 թ.: Դիպուկ է նկատել սփյուռքահայ նշանավոր գրող, հրապարակախոս և մանկավարժ, երջանկահիշատակ Սիմոն Սիմոնյանը՝ գրելով, թե Երվանդ Օտյան հրատարակել առանց «Ընկեր Փանջունու»՝ նույնն է, ինչ հրատարակել Սերվանտես առանց նրա գլուխգործոց «Դոն Կիխոտի»: Իր ճակատագրով «Թիւ 17 խաֆիէն» վեպը, որը Ս. Սիմոնյանի եղբոր՝ հայ մշակույթի նվիրյալ, գրականասեր և բարերար Հարություն Սիմոնյանի հովանավորությամբ, ահա, Հայաստանում տպագրվում է առաջին անգամ, և՛ նման է նախորդին, և՛ տարբեր է նրանից:

Ինչո՞վ է նման: Երկու վեպերն էլ թեև խորհրդային ժամանակներում արգելված էին, սակայն գրականագետներին «բարեհոգաբար» թույլատրվում էր իրենց աշխատություններում գրել դրանց մասին և նույնիսկ արժեքավորել՝ խորհրդային պետությանն ու կոմունիստական կուսակցությանը ձեռնադրող գաղափարական դիտանկյունից: Իսկ այդ վեպերը հրատարակելը պետականորեն արգելվում էր, քանի որ կնկատվեր նրանց իրական բովանդակությունը, ի հայտ կգար բուն ճշմարտությունը, այսինքն՝ հակասությունը պաշտոնական կուսակցական քարոզչության և այդ երկերի իրական բովանդակության միջև: Առաջինով կբացահայտվեր

սոցիալիզմի և բուլշևիզմի բուն էությունը, երկրորդում՝ իրական ճշմարտությունը խորհրդային պետության կողմից աշխարհից ու հատկապես Հայաստանի հայությունից հետևողականորեն թաքցվող՝ 20-րդ դարի սկզբին մարդկության դեմ գործած անորակելի ոճրագործության՝ Մեծ եղեռնի մասին:

«Թիւ 17 խաֆիէն» լայնակտավ վեպը նախապես լույս էր տեսել Վահան Թոշկիյանի (ի դեպ, նա վեպի գործող հերոսներից է նաև) խմբագրությամբ հրատարակված «Վերջին լուր» թերթի 1919-1920 թթ. համարներում, այնուհետև՝ 1938 թ., չորս հատորով տպագրվել էր Կահիրեում՝ «Սինէվէպ» մատենաշարով:

«Վերջին լուրը» այսօր առհասարակ մատչելի չէ ընթերցողին, իսկ Կահիրեի քառահատոր հրատարակությունից Հայաստանում հազիվ թե գտնվի մեկ-երկու օրինակ՝ այն էլ անձեռնմխելի ֆոնդերում: Իսկ խորհրդային շրջանի գրականագիտական աշխատություններից ընթերցողը վեպի մասին կարող է ունենալ միայն միակողմանի, թյուր և աղավաղված պատկերացում:

Հայ գրականության ամենածավալուն այդ երկը, որն այժմ հրատարակվում է երեք հատորով, հեղինակը համեստորեն անվանել է *քաղաքական վեպ*:

Մեզ թվում է՝ հեղինակի կողմից իր երկին տրված ժանրային այս բնութագիրը առնվազն թերի է, քանի որ լիովին չի բացահայտում այդ ընդգրկուն վեպի բուն էությունը. իրականում այն, քաղաքականի հետ միասին, 1913-1918 թթ. ողբերգական իրադարձությունները պատկերող գեղարվեստավերական լայնակտավ ստեղծագործություն է: Նրա համադրական գեղարվեստական ազատ մտածողությունը հնարավոր է դարձրել ռեալիստականի և ռոմանտիկականի, ողբերգականի ու երգիծականի, հերոսականի ու արկածավիպայնության, գրական այլ ուղղությունների ու դպրոցների ստեղծագործական լավագույն սկզբունքների համաձուլումը, անշուշտ, ռեալիստականի գերակշռումով, և դրանով էլ՝ պատկերվող իրականության համակողմանի ու բազմերանգ արտացոլումը:

Վեպում ոչ միայն պատկերվող դեպքերն են պատմականորեն հավաստի, այլև սյուժետային տարբեր գծերում կերպավորված հայ, թուրք, հույն, արաբ, հրեա, բուլղարացի բազմաթիվ իրական ճշմանավոր անձնավորություններ՝ իրենց իրական անուններով, պատմական իրադարձություններին իրենց մասնակցությամբ ու խաղացած դերով, որոնք, սակայն, բարձրանում են մասնավոր անձի կարգավիճակից դեպի տիպականության ոլորտը: Նույնիսկ

հեղինակն ինքն է կերպավորված՝ իբրև այն չորս երեսփոխաններից մեկը, որ հատուկ գրությամբ Ազգային ժողովից պահանջում էր դատապարտել և զոհե բարոյական պատժի արժանացնել Ազգային կենտրոնական վարչության մի քանի անդամների, որոնք իրենց պախարակելի արարքներով կարող էին «մեծապես վտանգել ազգին արժանապատուութիւնը և ազգային իշխանութեան վարկը»: Եվ այդ գրության տակ ստորագրել էին՝ Ս. Պեհրեյան, Դոկտ. Թյուլյան, Արամ Անտոնյան և Երվանդ Օտյան:

Իր ընդգրկման մասշտաբներով, հարյուրավոր հերոսներով, հայության բռնի տեղահանության, արտոյի ու բնաջնջման պատկերումով այս երկը մի խոշոր էպոպեա է և բացառիկ երևույթ հայ գրականության մեջ: Այն գեղարվեստականի հետ միասին ունի նաև վիթխարի ճանաչողական ճշմանակություն. նրանով Օտյանը, առաջինը մեզանում, բացահայտում էր թուրքական պետության իրական դեմքը, երիտթուրքերի հայակեր քաղաքականության, ծայրահեղ ազգայնամոլության, իսլամի՝ ուրիշ դավանանքի պատկանող մարդկանց նկատմամբ մոլեռանդ ատելության կրոնական դրդապատճառները, ագրեսորի իսկական էությունը, հայերի ցեղասպանության՝ պետականորեն գաղտնի կազմակերպման և իրագործման քաղաքական, կրոնական, ազգայնամոլական ու հոգեբանական շարժառիթները: Նրա էջերում ականատեսի հայացքով ներկայացվում է 20-րդ դարի առաջին մեծ ցեղասպանությունը՝ իր ողբերգական հետևանքներով, իր իրական կազմակերպիչներով:

Դերգորյան եղեռնադժոխքից հրաշքով փրկված և Պոլսում վերահաստատված Օտյանի՝ 1919 թ. հունվարի 23-ին Արշակ Չոպանյանին հղած նամակում ակնարկվող «թերևս մէկ քանի հատոր կազմող ընդարձակ աշխատութիւնը», անկասկած, «Թիւ 17 խաֆիէն» վեպն է: Երվանդ Օտյանն այդ նամակում գրել է. «Ողջ եմ, երեքուկէս տարուան ահռելի, աներևակայելի ողիսականէ մը ետքը: Միճչև Դէր Զօր, աւելի վար, Միջագետքի անապատը, էլ Պոսւէրա քշուեցայ, Եփրատի ու Զորարի մէջտեղը. հո՛ն, ուր Եզեկիէլ իր տեսիլքները ունեցաւ: *Չեմ գիտեր, թէ պիտի կրնա՞մ պէտք եղածին պէս պատմել տեսածներս, բայց պիտի փորձեմ: Ընդարձակ աշխատութիւն մը պիտի ըլլայ ասիկա, թերևս մէկ քանի հատոր (ընդգծ. իմն է - Ս. Մ.)*»¹:

Սակայն այս վեպում Երվանդ Օտյանն իր տեսածները «պատ-

1. Երուանդ Օտեան, Նամակներ, Գրականության և արվեստի թանգարանի հրատ., Երևան, 1999, էջ 244:

մել» է ո՛չ այնպես, ինչպես «Յուշամատենան Մեծ եղեռնի» ժողովածուում ընդգրկված նյութերի կամ այլ հուշագրական երկերի հեղինակներն են իբրև ականատես պատմում: Հայության մեծ ողբերգությանն ականատես հեղինակը այն պատմել է իբրև գեղագետ-վիպագիր՝ գործադրելով պատկերավոր մտածողությունները, կերպարաստեղծման ու վիպական ճարտարապետության իր բացառիկ վարպետությունը, որոնցով նա, շատ ընդհանրություններ ունենալով հանդերձ, էականորեն տարբերվում է սովորական հուշագիրներից:

1938 թ. «Սինեվեպ» մատենաշարը, խորապես գիտակցելով այդ վեպի գեղարվեստավերական ու ճանաչողական արժեքը, անստորագիր առաջաբանում գրել է. «Երուանդ Օտեանի «Թիւ 17 խաֆիէն» հրատարակելով՝ Մատենաշար «Սինեվեպ» խորապես համոզուած է, որ ընթերցողին ճաշակը զարգացնելով հանդերձ պիտի ստեղծէ աննախընթաց հետաքրքրութիւն հայ կեանքին և հայ մօտաւոր անցեալին շուրջ: Հեղինակը գիտցած է հետաքրքրական դարձնել իր գործը՝ դնելով անոր մէջ ինչ որ անհրաժեշտ է արկածախնդրական վէպերուն համար: Ասկէ զատ, հանրային ճշմանոր դէմքերուն տրուած դերը այս վէպին մէջ զայն կը դարձնէ յուշամատենան մը հայ ընթերցողին համար»:

Օտյանի մյուս վեպերն ու վիպակները հաճախակի են արժանացել գրականագետների ուշադրությանը և գոնե բավարար չափով գնահատվել են: Սակայն այս վեպի քիչ թե շատ ընդարձակ բնութագրության հանդիպում ենք միայն Ա. Մակարյանի (որն, ի դեպ, մեծ ջանքեր է ներդրել Օտյանի երկերի հավաքման, հրատարակման և ուսումնասիրման բնագավառում) «Երվանդ Օտյան» մենագրության էջերում²:

Գրականագետի նկատողությունների ու կարծիքների զգալի մասի հետ համամիտ լինելով հանդերձ՝ հարկադրված ենք ոչ թե ուշացած բանավեճ սկսել, այլ նրա մի շարք վրիպումների և ապակողմնորոշող սխալների վրա պարզապես հրավիրել ընթերցողի ուշադրությունը:

Ամենից անընդունելի սխալը, թերևս, վեպի հիմնական բովանդակության շրջանցումն է կամ անտեսումը, որը հագիվ թե կապված լինի միայն գլավլիտային-գրաքննչական սահմանափակումների հետ: Իր վերլուծության մեջ Ա. Մակարյանը ոչ մի ակնարկ չի արել հայոց ցեղասպանության մասին, չի ասել նույնիսկ, որ այդ վե-

2. Տես Ա. Մակարյան, Երվանդ Օտյան, Երևան, 1965, էջ 396-423:

պը պատկերում է 1910-ական թթ. մեր ազգային մեծ ողբերգությունը: Հեղինակի գաղափարագեղագիտական գլխավոր նպատակադրումը թողած՝ նա պնդում է, թե «վիպական գործողության առանցք դարձնելով Աստիկ Մարկոսյանի շահատակությունները՝ այնուամենայնիվ Օտյանը չի կարողացել այդ թեման արևմտահայ տվյալ շրջանի կյանքի բացահայտման միջոց դարձնել, որովհետև հիշյալ թեման գուրկ է ընդգրկման այդօրինակ հնարավորությունից, ուստի նա առաջ է քաշել նաև մի այլ թեմա՝ Տրդատի և Լուսյայի սիրո թեման (ընդգծ. իմն է - Ս. Մ.)»³:

Հարկադրված ենք ասել՝ ուրիշ ոչ մի կերպ հնարավոր չէ աղքատացնել Օտյանի վեպի բովանդակային հարստությունն ու նսեմացնել նրա բացառիկ արժեքն ու ճշմանկությունը, քանի որ հենց այս մոտեցմամբ է անտեսված գլխավորը՝ հայոց Մեծ եղեռնի գեղարվեստական պատկերումը, որը եղել է Օտյանի բուն նպատակը:

Մ. Բախտիանը Ֆրանսուա Ռաբլեի գլխավոր նպատակադրումն իրավացիորեն համարել է «դարաշրջանի և նրա իրադարձությունների պաշտոնական պատկերի ավերումը, դարաշրջանի ողբերգությունը կամ կատակերգությունը հրապարակայնորեն ծիծաղող ժողովրդի դիտանկյունից ծաղրելը»: Ընդհատ այդպես, ահա, ողբերգության պատկերման հետ միասին, Օտյանի մյուս գլխավոր խնդիրը եղել է երիտթուրքերի կեղծ ժողովրդավարության քննադատումը, իթթիհատական պետության մասին պաշտոնական պատկերացումների փշրումն ու պատմական ճշմարտության վերհանումը:

Այս երկու գլխավոր նպատակադրումներն էլ Օտյանն իրագործել է՝ գեղարվեստական մեծ ուժով պատկերելով և՛ հայոց մեծ աղետը, և՛ բացահայտելով թուրքական պետության քաղաքականության հակամարդկային էությունը, և՛ այդ քաղաքականությունն իրականացրած գործիչների ագրեսորային հոգեբանությունն ու ծայրահեղ շովինիզմը: Մինչդեռ գրականագետը գեղարվեստական միջոցը շփոթել է նպատակի հետ և թաքցրել վեպի իրական բովանդակությունը:

Հերոսուհու անվան թյուրիմացաբար փոխելն էլ, իր հերթին, ստեղծում է մի ուրիշ խառնաշփոթություն: Աստիկ Մարկոսյանի հոմանունին, որ հետո դառնում է վեպի կենտրոնական հերոսներից մեկի՝ Տրդատի սիրած կինը, իրոք մեծ դեր է կատարում վիպական գործողություններում: Հանդես գալով վեպի երկրորդ՝

3. Նույն տեղում, էջ 422:

«կանանց հովանոցով կինը» գլխում՝ այնուհետև նա մինչև վերջ մնում է առանցքային հերոսուհին: ԺԱ գլխում արդեն, որ կրում է «Վարագոյրը կը պատոհի» բնութագրական վերնագիրը, նույն այդ «կանանց հովանոցով կինը», ծանոթանալով «Կիկո» երգիծաբեր-թի խմբագիր Գրիգոր Թորոսյանի հետ, հայտնում է իր անունը՝ **Էլիզ Մայյան:** Այնինչ Ա. Մակարյանը նրան ներկայացրել է **Լուսյա** անունով: Աստիկ Մարկոսյանը, նրա ասելով, վաղուց էր լքել կնոջն ու երեխաներին և փարթամորեն ապրում էր սիրեկանի՝ Լուսյայի տանը կամ «առաջ է քաշել նաև մի այլ թեմա՝ Տրդատի և Լուսյայի սիրո թեման» և այլն:

Վիպական որոշ կերպարների տրվել են կամայական բնութագրումներ, որոնք բնավ չեն համապատասխանում նրանց էությանը: Այսպես, «Վերջին լուր» թերթի խմբագիր Վահան Թոշկյանին նա բնութագրել է որպես «համարձակ խոսքից վախեցող քաղքեմու տիպ»՝ այն դեպքում, երբ հենց վեպի տվյալներով նա այդպիսին չէ: Բավական է միայն դիտարկել նրա ձերբակալության և հարցաքննության դրվագները, և պատկերը պարզ կդառնա:

Չպետք է մոռանալ, որ Օտյանի ուրիշ վեպերի նման՝ սա էլ տպվել է իբրև թերթոն, իսկ թերթոնային վեպն ունի մամուլի պահանջներով թելադրվող իր որոշակի յուրահատկությունները: Որևէ համարում տպագրվող հատվածը պետք է լիներ կապող օղակ նախորդի և հաջորդի միջև, ունենար հետաքրքրություն ու ձգողություն, ընթերցողին պահեր այնպիսի լարվածության մեջ, որ նա տվյալ թերթի հաջորդ համարները փնտրելու և կարդալու փափագ ունենար: Այս նպատակով էլ Ե. Օտյանը դիմել է արկածային վիպասանության հնարքներին՝ յուրաքանչյուր գլուխ ավարտելով այնպիսի խորհրդավոր գաղտնիքի կամ անավարտ գործողության նկարագրությամբ, որի շարունակությունը պիտի լիներ հաջորդ գլուխներում:

Վեպը մի ուրիշ յուրահատկություն էլ ունի. նրա հիմնական բովանդակությունը քաղաքական է, գեղագիտական նպատակադրումը՝ դարաշրջանի ազգային, քաղաքական, սոցիալական, կրոնական հակասությունների և մարդկային հարաբերությունների բարդ մթնոլորտի պատկերումը: Իսկ վիպական գործողություններում հանդես են բերված միս ու արյունից կազմված հերոսներ, որոնք ունեն իրենց անձնական կյանքը, բնավորությունը, շահերը, ձգտումները, կրքերն ու զգացմունքները: Առանց այս ամենի պատկերման հերոսները կդառնային կենդանությունից, բնավորությունից ու հոգեբանությունից զուրկ խրտվիլակներ և կվտանգեին վե-

պի գեղարվեստականությունը: Իթթիհատի դեկավարության, թուրք ոստիկանական պաշտոնյաների, իրենց ազգակիցներին ջարդող թուրք պետությանը շնային հավատարմությամբ ծառայող հայ խաֆիե-լուտենների, հայ ազգային երեսփոխանների, Պոլսո Հայոց Պատրիարքարանի հոգևոր պաշտոնյաների, հայ մտավորականների, հեղափոխականների, բարձրաստիճան թուրք իշխանավորների ու զինվորականների, շարքային թուրքերի և հայերի կերպարների ստեղծումը, նրանց ոչ թե սուկ իրենց իրական պատմական անուններով, այլ իբրև մարդկային կենդանի բնավորություններ գործողության մեջ ներկայացնելը ոչ թե պատմաբան-գիտնականի կամ հուշագրողի, այլ հենց վիպասան-գեղագետ Ե. Օտյանի գործն էր: Միայն իբրև այդպիսին նա կարող էր իրական դեպքերը վերլուծել ոչ միայն պատմական փաստերի տրամաբանության, այլև արվեստագետի, պատկերավոր մտածողության և մարդկային հոգեբանության դիրքերից: Ահա ինչ է նա գրել վեպի՝ «Իբրև նախաբան քանի մը խօսք» վերտառությամբ փոքրիկ առաջաբանում. «Բոլոր այս իրողութիւնները կ'ուզեմ վիպական ձևով պատմել «Վերջին լուր»-ի ընթերցողներուն՝ վատահ ըլլալով, որ հետաքրքրութեամբ պիտի կարդան մօտիկ անցեալի մը վերաբերեալ այս դէպքերը, որոնց խառնուեցան նաև շա՛տ մը սիրուած ու ծանօթ անձեր, որոնցմէ մեծ մասը, ափսո՛ւ, արքայազնի դառնութիւնները ճաշակելէ ետքը նահատակի չարչարանքն ալ կրեցին»:

Զոհրապ-Թալեաթ հարաբերության մասին գիտենք հուշագիրների պատումներից, պատմագիտական աշխատություններից: Բայց նրանցում Թալեաթը Թուրքիո ներքին գործոց նախարարն է, երիտթուրքերի պարագլուխներից և հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը, իսկ Զոհրապը՝ հայ գրող, իրավաբան, Ազգային ժողովի երեսփոխան, թուրքական խորհրդարանի մեկուս:

Մեր գրականության պատմության մեջ, փաստորեն, առաջինը Ե. Օտյանն է կերպավորել Թալեաթին՝ իբրև կենդանի մարդկային բնավորություն՝ իր հրեշավոր էությամբ: Իր իսկ խմբագրությամբ հրատարակված «Մանանայ» պարբերականում տպագրված «Մեր երեսփոխանները» շարքում նա արդեն կերտել էր Գրիգոր Զոհրապի գեղարվեստական դիմանկարը՝ սակայն վիպական գործողությունների մեջ ներկայացված Զոհրապը կերպավորված է բոլորովին այլ գեղարվեստական միջոցներով ու նպատակներով:

4. Տես Երուանդ Օտեան, Մեր երեսփոխանները, Մեր Ազգային ժողովը, «Մագաղաթ» հրատ., Երևան, 1999, էջ 20-23:

Թալեաթի և Չոհրապի վիպականացված կերպարներն, անշուշտ, ավելին են, քան նրանց մասին վավերական վկայությունները: Վեպում նրանցից յուրաքանչյուրը մի անհատականացված ընդհանրացում է՝ հանդես բերված իր բնավորության առավել հատկանշանական գծերով: Պահպանելով վավերականը՝ Օտյանը շեշտը դրել է նրանց արտաքին մտերմության, ձևական բարեկամության և առավելապես՝ նրանց ներքին սուր հակասությունների բացահայտման վրա: Իրողություն է Չոհրապի և Թալեաթի բարեկամ լինելը, և Օտյանը ոչ միայն չի ժխտել այդ փաստը, այլև նրաց երկու հանդիպումների դրվագում էլ ընդգծել է այն:

Թալեաթն է անձամբ հեռաձայնում և իր մոտ հրավիրում Չոհրապին՝ զարմանք պատճառելով վերջինին. նախորդ իրիկուն միասին էին մինչև կեսգիշեր, ու նա իրեն ոչինչ չէր ասել. հիմա ինչո՞ւ անակնկալ որոշեց հանդիպել իրեն: Հեռառես Չոհրապն, իհարկե, լավ գիտեր, որ Իթթիհատի ղեկավարները, բարեկամ ձևանալով, ներքուստ ասում են հայերին: Ատելության պատճառներն էլ գիտեր: Թեև իր միջնորդությամբ էին Պոլսում Հայոց Պատրիարքարանի դիմումներն ուղարկվել Ռուսաստանի և եվրոպական մեծ տերությունների ղեկավարներին, բայց և այնքան էր խոհեմ, որ գըտնում էր, թե պետք չէ ամբողջ հույսը դնել օտարների վրա, այլ **«պէտք է աշխատինք, որ թուրքերը մեզի բոլորովին թշնամի չդարձնենք»**: Այդքան խոհեմ ու լրջմիտ լինելով էլ Չոհրապն ակամա ընկնում է Թալեաթի լարած թակարդը:

Թալեաթին ամեն գաղտնիք վաղօրոք հայտնի է, ուստի չափազանց ծանր է Չոհրապի գրույցը նրա հետ: Թալեաթը նրան դեմ է անում Պատրիարքարանում, Ազգային ժողովում կատարված անցուդարձի բոլոր մանրամասները, տարբեր դեսպանատներ հայերի ուղարկած փաստաթղթերի օրինակները, դիմումների պատճենները, իր՝ Չոհրապի բոլոր գաղտնի քայլերը: Վիճակը հոգեբանորեն ավելի է բարդանում, քանի որ Թալեաթը Չոհրապի հետ խոսում է մտերմորեն, ջանում է դիվանագիտորեն նրան համոզել, որ հայերը ետ կանգնեն մեծ տերություններին ուղղված դիմումներից և դարձյալ մտերմաբար «պարտադրում» է, որ վերջինս համոզի Պատրիարքին ու հանձնաժողովի մյուս անդամներին, թե **«առանց երրորդ ուժի միջամտության եկէք սա հայկական խընդիրն ալ մէջերնիս կարգադրենք»**:

Սա չի՞ հաստատում արդյոք, որ մեր օրերի «քաղաքագետներին» երրորդ ուժի բացառման տեսությունը բոլորովին էլ նոր չէ և էն գլխից եղել է թուրք պետության կառավարիչների ցանկություն-

նը: Միշտ էլ հայ-թուրքական հարաբերություններում Հայաստանը արտաքին աշխարհից մեկուսացնելով են թուրքերը զավթումներ կատարել:

Անշուշտ, Չոհրապը պիտի ջանար խուսանալով, շատ բաներից հրաժարվել, սակայն Թալեաթի ծուղակից խուսափելն անկարելի էր...

Ամեն մեկը բնութագրվում է իր իսկ խոսքերով: Դարի խոշորագույն ոճագործ Թալեաթը՝ խորամանկ, նենգ ու դաժան, ճիզվիտային կեցվածքով, անսահման իշխանության պարզևած ամբարտավանության մարմնացում: Եվ սրան է հանդիպադրված Չոհրապը՝ իր գրչեղբայրների, իր ողջ ժողովրդի բախտով մտահոգ, իր աչքի առաջ և իր շուրջը կատարվող ոճիրներից շանթահար, անել վիճակում էլ բարձր արժանապատվությունը պահել կարողացող առաքինության մարմնացում:

Չոհրապ-Թալեաթ հարաբերության միջոցով փաստորեն ներկայացված է իրարամերժ երկու աշխարհների ողբերգական բախումը՝ արտաքուստ խաղաղ, քաղաքակիրթ, բայց ներքին մեծ լարվածությամբ, տագնապներով ու փոթորկալից հուզումներով: Այս դեպքում, երբ հերոսները իրական-պատմական անձնավորություններ են, գեղարվեստական վերացարկված ընդհանրացման, մասնավորից ընդհանուրը գնացող պատկերավորման փոխարեն ընդհանուրն է խտանում անհատականացված կերպարի մեջ: Վեպում արդեն ո՛չ Թալեաթն է մասնավոր անձ, ո՛չ էլ Չոհրապը. երկուսն էլ ընդհանրացում են ու խորհրդանշ. տիպականացումն այստեղ չի դրսևորվում միայն բնորոշ հատկանիշների և միջավայրի ու հերոսի կապի ցուցադրումով: Երկու գործիչների վերջին հանդիպման պատկերը շատ ավելի տարողունակ է, քան կարող է երևալ առաջին ընկալմամբ: Պատկերի կոնկրետության խորքում, իրական անձնավորությունների ետևում ո՛չ միայն դահի և զոհի, առաքինության ու քաղաքակիրթ բարբարոսության հարաբերությունն է, այլև լայն առումով հենց այն երևույթը, որ կոչվում է հայ-թուրքական հարաբերություններ:

Եղեռնի դժոխային ծրագիրը Պոլսում էր հղացվել, և այստեղից էր հրահանգվում նրա գործադրումը: Օտյանը խորապես համոզված էր, որ հայոց եղեռնադժոխքի ճանապարհներին ու մահաճամբարներում իր տեսած ամեն ինչ նոր համիդների՝ թալեաթների, էնվերների, ջեմալների, պետրիների, ճազրմների, շաքիրների ծրագրածն էր, ուստի երիտթուրքական որջի՝ Պոլսի մթնոլորտի պատկերումն այս վեպի համար սուկ նախադրություն չէր, այլ

գործողությունների հանգուցակետ էր նաև: Միլիոնավոր ամենա հայերի մահավճիռն այստեղ էր կայացվել և գործադրվում էր Գո- Գիայում, Էրեյլիում, Չանղըրում, Իսլահիեում, Սեպիլում, Էլ Բու- սերայում, Դեր Ջորում և այլուր: Ահա ինչու պոլսական մթնոլորտի պատկերը մեծ տեղ է գրավում վեպում:

Այս մթնոլորտում էլ, բնականաբար, պիտի աշխուժանային խաֆիե-լրտեսները և ապրեին իրենց «ուկեդարը»: Երիտթուրքերի պետությունն էր դա խրախուսում՝ հայերի բնաջնջման իր ծրագիրն իրագործելիս հենվելով հայկական միջավայրը լավ ճանաչող լրտեսների վրա: Դժբախտաբար, «Թի 17 խաֆիե» վեպում կերպավորված հայ լրտեսներն Օտյանի հնարածը կամ նրա երևակայության արդյունքը չէին, այլ ցավալի իրողություններ, որոնց ճանաչել էր Օտյանը, և որոնց մասին ժամանակի մամուլում կան արժանահավատ տեղեկություններ:

Թեոդիկն իր 1916-1920 թթ. «Ամենուն տարեցույց»-ում բացի նրանից, որ տպագրել է երեք նշանավոր լրտեսների՝ Արթին Մկրտիչ-յանի, Արշավիր Սահակյանի և Հմայակ Արամյանցի լուսանկարները, «Տխրահոչակները» վերնագրով գրության մեջ էլ հետևյալ տեղեկություններն է հաղորդում. «Պատերազմի տարիներում, Պոլսոյ Ընդհ. Ապահովութեան տնօրէնութեան Ա. ճիւղին պետն էր Մէհմէտ, որ ամենամեծ դերը կատարեց Պոլսահայոց տարագրութեան գործին մէջ: Այդ ճիւղին էր, որ կը գործակցէր տխրահոչակն **Արթին Մկրտիչեան**, այլ անուամբ՝ **Հարուն**, «գովիսէր»-ի աստիճանով գաղտնի ոստիկան, աջ բազուկ՝ Պէտրիի, կաշառակործ պնակալէզ՝ Թալեադի, օժանդակ՝ հայաջինջ քաղաքականութեան, պատրաստիչ՝ աքսորելի Հայոց ցանկերու, Է՛ն ահաւոր **խաֆիէն**, որ ծնած ըլլայ երբեք, և որուն սխրագործութիւններով հատորներ կարելի է լեցնել: Իբր գրաքննիչ՝ պատուհաս եղած էր պոլսահայ թերթերու գլխուն և չէր դադրած մնտնել Հայութեան դարաւոր պատիւը: 21 Մարտ 1919-ին մահափորձ մը կատարուեցաւ իր վրայ, Պէշիքթաշ: Այնուհետև 20 օր հազիւ ապրեցաւ:

Տխրահոչակ գործունէութեան տեսակէտով իրն է վերջ կու գայ հաւատուրաց Հայը՝ **Հիտայէթ**, որ անվերջ չարիքներ գործած է պոլսեբնակ ազգայնոց, գրպանը պարարտացնելու միակ տեւականով: Ինք էր, որ Զաւէն Ա.- ի աքսորման ատեն՝ ուղեկից եղաւ անոր, յայտնի լրտեսի իր հանգամանքովը»⁵:

Ամենայն հավանականությամբ Օտյանին հայտնի են եղել նաև

ուրիշ լրտես-խաֆիեների անուններ: Բացի նրանից, որ Օտյանի մասնակցությամբ է Ազգային ժողովը ապարդյուն քննել թիվ 17 խաֆիեին բացահայտելու խնդիրը, Պատրիարքարանի և Ազգային ժողովի գաղտնիքները թուրքական ներքին գործոց նախարարությանը հաղորդելու մեջ կասկածվել են նրան ծանոթ տարբեր մարդիկ. իրական և բացահայտված լրտեսներից մեկին նա հանդիպել է դերգորյան աքսորավայրում՝ անփառունակ վախճանի արժանացած: Այնպես որ, չարագործներին պատժելը ոչ թե «Օտյանի ռեալիզմի թերության» արտահայտությունն է, ինչպես փորձել են ներկայացնել, այլ կատարված իրողություն, որ Օտյանից բացի, ինչպես տեսանք, վկայում են և՛ Թեոդիկը, և՛ ուրիշ ժամանակակիցներ:

Թեև պարզ է Օտյանի վերաբերմունքը խաֆիե-լրտեսների նկատմամբ, սակայն գրողին, բնականաբար, չպիտի բավարարեր որևէ հերոսի՝ իր վեպում որպես լրտես ներկայացնելը առանց նրա բնավորության վերլուծության, առանց նրա արարքների քաղաքական, սոցիալական ու մարդկային դրդապատճառների քննության և հոգեբանորեն հիմնավորման: Այլապես խոսք անգամ չի կարող լինել գեղարվեստական համոզչության մասին:

Ծիշտ է, որ Օտյանի կերպավորած լրտեսները Մեծ եղեռնի շրջանում աքսորվող ու շարժվող հայերի ցանկերը կազմելու գործում ստոր դեր խաղացին: Բայց եթե Աստիկ Մարկոսյանը, Արթին Մկրտիչյանը, Արշավիր Սահակյանը, Էմին, Աբգար և Սերովբե Էֆենդիները, Արշակ Ալլյանը, Հիդայեթ հավատուրաց հայը չլինեին, մի՞թե թուրքական կառավարությունը պիտի հրաժարվեր հայերին տեղահանելու և բնաջնջելու իր ոճրամիտ ծրագրից, կամ Պոլսո շուրջ 130 հազար հայերի մեջ դժվար էր գտնել սրանց փոխարինողներ: Ուրեմն Օտյանը իսկապես պիտի լուծեր գեղարվեստական բարդ մի խնդիր՝ ինչո՞ւ հատկապես սրանք դարձան գործիք թուրք կառավարության ձեռքին:

Եսամուլությունը, հարստանալու մոլուցքը աննկարագիր մարդու համար դառնում են գերագույն նպատակ. այդպիսիները հանուն իրենց նեղլիկ շահերի նույնիսկ պատրաստ են գործել ընդդեմ իրենց հայրենիքի ու ժողովրդի: Իսկ սա զուտ հայկական երևույթ չէ, և կոպիտ սխալ է ազգային առանձնահատկության վերագրելը: Այսօր էլ բոլոր ժողովուրդների մեջ կան օտարներին դրամի համար ծառայող, անգամ իրենց հայրենիքի ու պետության գաղտնիքները ուրիշներին վաճառողներ: Այս կարգի եսամուլները ո՛չ ազգություն են ճանաչում, ո՛չ հայրենիք: Օտյանի պատկերած լըր-

5. Թեոդիկ, *Ամենուն տարեցույց*, 4. Պոլիս, 1916-1920, էջ 180:

տեսները կա՛մ հանուն դրամի և իշխանության, շահախնդրական նպատակներով են ծառայում թուրքերին, կա՛մ ստրկամտությունն ու բնագրական վախն են նրանց դարձրել հյու կամակատարներ:

Բնորոշ է, որ վեպի Ա հատորի Զ գլուխը, ուր առաջին անգամ ներկայացվում է Աստիկ Մարկոսյանը, հեղինակը վերնագրել է «Մեծ արկածախնդիր մը»: Սա չունի Արթին Մկրտիչյանի, Արշավիրի, Էմինի, Հիդայեթի և մյուս իրական լրտեսների միագիծ բացասական բնավորությունը, այլ ավելի բարդ կերպար է՝ իր ուրույն աշխարհով, մարդկային բազմազան հետաքրքրություններով: Հազիվ 38-39 տարեկան, «խնամուած դաստիարակութեամբ», թուրքերենի ու ֆրանսերենի մեջ քաջահմուտ, գրելու արտակարգ դյուրությամբ օժտված, փաստաբանական կրթություն ստացած այդ մարդը երիտասարդության տարիներին չէր կարողացել իր համար փայլուն դիրք ապահովել և բռնել էր լրտեսության ստոր ճանապարհը: Օտյանի բնութագրմամբ՝ միակ պատճառն այն էր, որ «իր նկարագիրը բնաւ համապատասխան չէր իր մտային ունակութիւններուն, կամ, ավելի ճիշդը, նկարագիր չունէր բնաւ»:

Աստիկը իր բացասական հատկանիշներով վիպական գործողությունների մեջ է դրվում իբրև ձևավորված բնավորություն և կատարյալ պատուհաս բոլոր այն մարդկանց համար, ովքեր դժբախտություն պիտի ունենային նրա թակարդն ընկնելու: Ոչ ոք առանց դրամ տալու նրանից չի փրկվում, մանավանդ զինվորական ծառայությունից ազատվելու համար դիմածները, որ հարկադրված էին նրան մեծագույն կաշառք տալ: Իր շորթած դրամները նա անխնա ծախսում է միայն աշխարհիկ անձնական վայելքների համար և հատկապես Էլիզ Մալյանի վրա: Բացի նրանից, որ Աստիկը «շահադիտութեան այդ ճիւղը կը մշակէր գերազանց ճարպկութեամբ», դրամ շահելու նրա մյուս ճյուղը մեծահարուստ վաճառականներին կողոպտելն էր:

Փորձառու լրտեսը նախ մարդուն տագնապի էր մատնում, սարսափեցնում այն կեղծ լուրով, թե ինքը Պետրի և Ռեշատ բեյերի մոտ եղած՝ արտոբելիք հայերի ցուցակում անձամբ տեսել է, ասեմը, վաճառական Աբրահամ էֆենդու անունը: Վկայակոչված ցուցակները դեռ երևակայական էին, բայց Աստիկն արդեն գործի էր անցել և ենթադրյալ արտոբելիքից մեծ դրամագլուխ էր վերցնում՝ նրանց անունն այդ զարհուրելի ցուցակներից ջնջելու խոստումներով:

Աստիկ Մարկոսյանն այս ընթացքով շատ էր հեռացել մարդկայնությունից ու իր հայ լինելուց: Թուրքական «Իգտամ» թերթի

խմբագիրը լինելով՝ նա վաղուց արդեն հայերեն չէր էլ գրում, սակայն լավ գիտեր այն հայ գրողների ու մտավորականների արժեքը, որոնք, իբր, կարող էին թուրքական պետության համար վտանգ ներկայացնել: Ահա ինչու թուրք կառավարությունը հենց նրան էր վստահում արտոբելիք հայ մտավորականների ցանկերի կազմումը:

Արդարացնելու խնդիր չէ, պարզապես կան սահմանային իրավիճակներ, կենսական առանձնահատուկ հանգամանքներ, որոնց հարկադրանքով ազնիվ մարդիկ ավելի են վեհանում՝ ընդգրծելով իրենց մարդկային արժանապատվությունը, հայրենասիրությունը, կամքի ուժը, բարձրագույն իդեալներին նվիրվածությունը, հերոսանալու վճռականությունն ու զոհաբերվելու պատրաստակամությունը, դրական մյուս հատկանիշները: Նույն կենսապայմաններում, նույն հանգամանքներում ուրիշ մարդիկ դրսևորում են իրենց մատնիչությունը, ստոր բնագղներն ու մոլությունները, մյուս դատապարտելի հատկությունները: Իսկ այս բոլորը գեղարվեստորեն համոզիչ դարձնելը գրող արվեստագետի գործն է: Այն ճակատագրական պահին, երբ վեպի անձնվեր գործիչները՝ Գրիգոր Զոհրապը, Զավեն Պատրիարքը, հեղափոխականներ Տրդատը, Սիսակը, Ծավարը Միսաքյանը և մյուսները ամեն գնով ջանում էին չեզոքացնել հայության գլխին կախված մահացու վտանգը, Աստիկը և մյուս հայ լրտեսները շատ էին վստահ, թե թուրք պետությունը բարձր պիտի գնահատի իրենց ծառայությունները: Մանավանդ մեծ հույսեր էին կապել իթթիհատականների դեմ հայ և թուրք հեղափոխականների կազմակերպած ենթադրյալ մահափորձի, իրենց թաքցրած ռումբերը «հայտնաբերելու» շնորհիվ նոր հայ դավադիրների ավելի մեծ քանակություն բացահայտելու դիվային «սքանչելի» ծրագրի հետ:

Սակայն ո՛չ Աստիկը, ո՛չ մյուսները հաշվի չէին առել, որ իրենք ընդամենը թուրք պետության ամենաողորմելի կամակատարներն են: Պնակալեզի նրանց ծառայությունները իրոք հաշվի չեն առնվում: Ավելին. նրանք նույնպես իրենց զոհերի հետ միասին արտոբելում են Գոնիա ու Դեր Զոր և ճաշակում այն չարչարանքներն ու դառնությունները, որոնք կրեց եղեռնամեծ հայությունը: Բայց նրանք թուրքական բանտերում էլ, արտոբել ճանապարհներին էլ, իրենց բնաջնջվող ժողովրդի ողբերգությունը, թուրք դահիճների դաժանությունները և իրենց իսկ զոհերի սուկալի վիճակը տեսնելով՝ դարձյալ ստրկամտորեն ծառայում են թուրքերին, որոնց համար իրենք այլևս կարևորություն չունեին:

Տարագրության մեջ՝ աքսորի ճանապարհին միայն Աստիկը Հ. Տեր-Հակոբյանին խոստովանում է այն գաղտնիքը, որ տարիներ շարունակ հուզում էր պոլսահայությանը, Պատրիարքարանին և Ազգային ժողովին. ինքն է եղել Թի 17 խաֆիէն, որ դրամի համար թուրքական ներքին գործոց նախարարությանն էր հայտնել հայության՝ բարենորոգումների հետ կապված բոլոր ծրագրերն ու գաղտնիքները:

Մեծ արկածախնդիրը անփառունակ վախճանի է արժանանում. նույն պարանով երկու ձեռքերը մեջքին և թուրք ոստիկանի ձիու թամբին կապված՝ խղճալի, ողորմելի վիճակում նա աքսորվում է Դեր Ջոր և սատկում այն ախոռում, ուր բանտարկել էր նրան թուրք ոստիկանը:

Բանտարկվում և աքսորվում է նաև Արշավիրը, որի երկարամյա լրտեսական գործունեությունը նույնպես չի զնահատվում: Ընդհակառակն, նրան ճանաչում են և հաշիվ պահանջում.

«Օր մը այս ըրածներուդ պատիժը պիտի գտնես ու չարաչար մահուամբ սատկիս...»

Այս անգամ լրտեսը սարսուռ և կարծես իրեն սպասող ահաւոր վախճանը զգաց այս խօսքերուն մէջ»:

Հավատուրաց հայերի և ազգադավ լրտեսների կողքին Օտյանը, դարձյալ իրական հիմքի վրա, «Թի 17 խաֆիէն» լայնակտավ վեպում կերպավորել է հայ ժողովրդի տարբեր խավերի՝ մտավորականների, հեղափոխականների, հոգևորականների, վաճառականների, պարզ աքսորյալների:

Պոլսո Ջավեն Պատրիարքը Էրեյլից ստանում է Աբիկ Մուբախչյանի տեղեկագրությունը գաղթական հայերի ողորմելի կացության մասին: Նրանց որևէ բանով օգտակար լինելու մտատանջության մեջ է Պատրիարքը, երբ նրա մոտ է գալիս Արթին Մկրտիչյանի կողմից գործուղված Սերովբե էֆենդի վաճառականը: Եկել էր խոհեմություն և հաշտարար քաղաքականություն թելադրելու, հայ հեղափոխականների գործունեությունը դատապարտող մի փաստաթուղթ պահանջելու՝ թուրք կառավարության բարեհաճությունը շահելու նպատակով: Ողջամիտ Պատրիարքը, սակայն, ստրկամիտ վաճառականին տալիս է խելացի պատասխաններ: Նրանց երկխոսության մեջ բնութագրվում են երկու բնավորություն, մարդկային երկու որակ: Պատրիարքի առաջարկությունից հետո էլ մեծահարուստ վաճառականը նեղյալներին դրամ չի ուզում տալ վախից ու ժլատությունից:

«Ուրեմն տրամադիր չէ՞ք դրամական օգնութիւն մը ընել այս խեղճերուն:

– Ե՞ս, դրամ տամ ատանկ բանի մը համա՞ր, – գոչեց Սերովբե էֆենդի դող ելած, – փա՛րք Աստուծոյ, դեռ խելքս չկորսնցուցի, ո՛չ դուք ատանկ բան մը ըսած եղէք, ո՛չ ես լսած»:

Հետևանքը լինում է նաև Ջավեն Պատրիարքի տարագրությունը:

Իսկապես էլ Օտյանը դեպքերը պատմում է «եղածին պէս»: Նրա համար նշանակություն չունի ազգային կամ կուսակցական պատկանելությունը: Անաչառությունն ու անկողմնակալությունը, անկեղծությունն ու գրողական ազնվությունը նրա պատումի գրվածքի արտանձնահատկությունն են: Ընթերցողը կտեսնի, որ այդ անկողմնակալությունը դրսևորվում է նաև թուրք հերոսների կերպավորելիս:

Ջավեն Պատրիարքը Դեր Ջորում է և այստեղից էլ պիտի աքսորվի Բաղդադ: Նրան ուղեկցում են Հիդայեթը և մի թուրք ոստիկան: Ծանապարհին սրանց միանում է մի բարձրաստիճան թուրք սպա՝ հազարապետ Ֆիքրի բեյը: Դեր Ջորի ոստիկանները հրճվանքով էին հազարապետին պատմում հայերի ահռելի սպանդի մանրամասները: Իսկ սպան «այդ պատմութիւնը մտիկ կ'ընէր անտարբեր դէմքով մը»: Չարագուշակ ժպիտով նրան հայտնում են նաև, թե կրոնավորը մինչև Բաղդադ չպիտի հասնի, և իրենց հրամայված է սպանել նրան ճանապարհին: Սակայն միմյանց ճանաչում են Ջավեն Պատրիարքն ու Ֆիքրի բեյը: Վերջինս առանձին գրուցում է թուրք ոստիկանների հետ և շատ խիստ սպառնալիքով ասում նրանց.

«Այս կրօնատուրը իմ բարեկամս է, զինքը շատ մօտէն կը ճանչնամ և գիտեմ, որ լաւ մարդ մըն է. ձեզի բացարձակապէս կ'արգիլեմ անոր մագին մէկ թելին դպչելու... Եթէ անոր սպանելու փորձ ընէք, երկուքդ ալ շան պէս կը մեռցնեմ»:

Թուրք սպան հայ Պատրիարքի հետ նույն կառքն է նստում և ուղեկցում Բաղդադ՝ առանց նրան նույնիսկ հայտնելու սպառնացող վտանգի մասին:

Այս ամենի հետ միասին բացառիկ արժեք են ներկայացնում վեպի այն էջերը, ուր ականատեսի, վավերագրողի գրչով պատկերված են Հայոց Մեծ եղեռնի նախապատրաստությունը, ողջ Արևմտյան Հայաստանից՝ իր բնիկ պատմական հայրենիքից արևմտահայության տեղահանության ու զանգվածային ջարդերի դժոխային ծրագրի՝ ամենադաժան եղանակներով գործադրումը և դրա սուսկալի հետևանքները: Թեև դեպքերի թարմ ու անմիջական տպավորությամբ՝ սակայն մեծ գրողի և տեսանողի սթափ հայաց-

քով է Օտյանը բացահայտել 20-րդ դարի առաջին մեծ ցեղասպանության, հայ ժողովրդի և աշխարհի ողջ մարդկության դեմ գործված մեծ ոճրի պատճառահետևանքային կապերը, պատկերել արքորի ճանապարհներից, արաբական անապատներում հիմնըված մահաճամբարներում (որոնք, ի դեպ, խորհրդային ու ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների նախօրինակներն էին) և այլուր տարիներ շարունակ մեծ տերությունների աչքի առաջ գեներով, սպանության հրեշավոր ձևերով, բռնի դավաճափոխությամբ ու ձուլմամբ, հարկադիր սովով ու համաճարակային հիվանդություններով ոչնչացվող հայության աննախադեպ պատմական ողբերգությունը: Իսկ դա միայն մեր ողբերգությունը չէր: Այդ նախադեպը, թուրք ոճրագործների վայրագությունները ժամանակին չկասեցնելով ու չդատապարտելով՝ հետագայում մարդկությունը կանգնեց փոքրաթիվ ժողովուրդների ցեղասպանության նոր փաստերի ու դեռևս շարունակվող ողբերգությունների առաջ...

«Թիւ 17 խաֆիէն» վեպը ոչ միայն քաղաքական, այլև իր նմանը չունեցող գեղարվեստավարական երկ է, Ե. Օտյանի մեծ ներդրումը հայոց եղեռնապատումի գրականության մեջ: Այն, գեղարվեստականից բացի, ունի նաև ճանաչողական հսկայական արժեք: Վեպի նյութը, այո՛, մեր ազգային ողբերգական պատմությունն է, բովանդակությունը, գաղափարական հարցադրումները իրոք որ համամարդկային են ու արդիական, քանի որ այն մշտաբան կպահի մարդկության պատմական հիշողությունը՝ իբրև մարդկության դեմ գործված ոճիրները դատապարտող, համամարդկային արժեք և արդիական հնչեղություն ունեցող եզակի ստեղծագործություն:

Ուրեմն այն պետք է բոլոր ժողովուրդներին՝ և՛ մեծերին, և՛ փոքրերին, և՛ հզորներին, և՛ տկարներին:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՂՈՒԱՆ ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐԸ

Անոնք մենէ լաւագոյն՝ և մանաւանդ՝ մենէ ահարկու պիտի ըլլան. կարմիր մտաւորականներ:

Եղեռնի կաղամարին մէջ պիտի թաթխեն իրենց գրիչը և արիւնի մելանով պիտի գրեն իրենց արձակն ու բանաստեղծութիւնը: Անոնք գեղեցիկ ու հրէշային պիտի ըլլան, աւելի սարսափեցուցիչ, քան Եսայի ու Եզեկիէլ, որովհետև այդ հսկայ տեսանողներէն հարիւրապատիկ աւելին տառապեցան և ընդվզեցան:

Սիամանթօներ ու Դանիէլ Վարուժաններ Հայ Նահատակութիւնը երևակայեցին ու գծագրեցին. վաղուանները Հայ Նահատակութիւնը ապրեցան և պիտի լուսանկարեն:

Ահռելիօրէն սոսկալի պիտի ըլլայ վաղուան հայ գրականութիւնը:

*ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ
Դեկտեմբեր, 1918*

ԹԻԻ 17 ԽԱՖԻՆ

ԻՐՐ ՆԱԽԱՐԱՆ ՔԱՆԻ ՄԸ ԽՕՄՔ

Ամենուն յիշողութեան մէջ թարմ է տակաւին այն տենդային յուզումը, որ առաջ եկաւ մեր ազգային շրջանակին մէջ, երբ 1914ի սկիզբները, ճիշդ այն միջոցին, ուր Հայկական նահանգներու բարենորոգման հրատապ հարցը բոլոր Հայութեան ուշադրութիւնը գրաւած էր, լսուեցաւ, թէ ներքին գործերու նախարարութեան Հաղորդուած էին կարգ մը պատրիարքական գաղտնիքներ:

Նոյն ժամանակուան Վարչութիւնը, Հանրային կարծիքի ճնշումին ներքեւ, թէև քննութեան պէս բան մը կատարեց, բայց կարելի չեղաւ երևան Հանել այն լրտեսը, որուն «Թիւ 17 խաֆիէ» անունը տրուած էր:

Բնականաբար ենթադրութիւնները ազատ ասպարէզ գտան, և լրտեսութեան կասկածը տարածուեցաւ շատ մը անձերու վրայ, որոնք Հեռուէն կամ մօտէն յարաբերութեան մէջ էին Պատրիարքարանի հետ:

Յետոյ, կամաց-կամաց, խնդիրը մարեցաւ, մանաւանդ, երբ ապրիլ 11ի ձերբակալութիւնները և աքսորանքը վրայ հասան, որոնց յաջորդեց ապա տարագրութիւնը:

Եւ դիպուածը ուզեց, որ այդ խորհրդաւոր 17 թիւն ալ տարագրներուն մէջ գտնուի և օր մը, անգիտակցաբար, ինքզինք մատնէ ուրիշ տարագրի մը:

Այդ մարդը, որուն ես ալ Հանդիպեցայ էրէյլի և ապա Թարսուս, բախտին մէկ Հեգնութեամբը, թուրք կառավարութեանէն ամենէն աւելի Հալածուող Հայերէն մէկը եղաւ և ի վերջոյ շղթաներու մէջ մեռաւ, ինչպէս լսեցինք:

Բոլոր այս իրողութիւնները կ'ուզեմ վիպական ձևով պատ-

մել «Վերջին լուր»ի ընթերցողներուն՝ վստահ ըլլալով, որ հետաքրքրութեամբ պիտի կարդան մօտիկ անցեալի մը վերաբերեալ այս դէպքերը, որոնց խառնուեցան նաև շա՛տ մը սիրուած ու ծանօթ անձեր, որոնցմէ մեծ մասը, ափսո՛ս, աքսորանքի դառնութիւնները ճաշակելէ ետքը նահատակի չարչարանքն ալ կրեցին:

ԳԼՈՒԽ Ա
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԴՌՆՓԱԿ ԵՒՍՏԸ

1914 փետրուար 7, ուրբաթ օր, արտասովոր իրարանցում մը կը տիրէր Ղալաթիոյ Խորհրդարանը:

Երեսփոխանները հետզհետէ կը հասնէին փութկոտութեամբ մը, որուն նմանը շատ ցանցառ կը տեսնուի:

Յայտնի էր, որ նոյն օր միտքերը յուզող, կիրքերը հրահրող խնդիր մը կար:

«Հրաժարական Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական և Քաղաքական Ժողովոց» – կ'ըսէր օրակարգը, բայց իրողութիւնը այն էր, որ երեսփոխանները մտրակող և զիրենք Ղալաթիոյ Խորհրդարանը քշող խնդիրը միայն այդ հրաժարականը չէր:

Ուրիշ հարց մը, նոյն միջոցին, կը յուզէր հայ մամուլը, հանրային կարծիքը և ազգային պաշտօնական շրջանակները:

Ամիս մը առաջ կարևոր յայտնութիւն մը եղած էր:

Իմացուած էր, թէ Պատրիարքարանի պատկանող գաղտնի պաշտօնաթուղթեր հաղորդուած էին ներքին գործերու նախարարութեան:

Լուրը հրապարակուած էր ազգային երեսփոխանի մը՝ Եղուարդ Շիրինեանի կողմէ, որ իրողութիւնը հաղորդած էր Վարչութեան և քննութիւն պահանջած:

Շիրինեան մասնաւոր աղբիւրէ մը իմացած էր, թէ նոր պաշտօնի անցած Մահմուտ Շէվքէթ փաշայի դահլիճը խուզարկութիւն մը կատարած էր նախորդ Քէամիլ փաշայի դահլիճին պատկանող նախարարներու գրասենեակներուն մէջ, և այս առթիւ նախորդ ներքին գործերու նախարար Րէշիտ պէյի թուղթերուն մէջ գտնուած էր տօսիէ մը, որ «թիւ 17» ստորագրութիւնը կը կրէր և մասնաւոր տեղեկագիր մըն էր և ունէր սա վերտառութիւնը՝ «Հայոց Պատրիարքարանի գաղտնի տօսիէ»:

Շիրինեան այս տեղեկութիւնը առնելուն հետեւալ օրն իսկ կը հանդիպի Վարչութեան կրօնական ժողովի նախագահ Դուրեան Սրբազանի և կը հարցնէ, թէ Նորին սրբազնութիւնը տեղեկութիւն մը ունի՞ այս մասին:

– Այո՛, – կը պատասխանէ Դուրեան Սրբազան, – իմացայ, որ մէկ քանի կարևոր նամակներու պատճէններ ներքին գործերու նախարարութեան հաղորդուած էին թիւ 13 խաֆիէի մը կողմէ...

Եւ Դուրեան կ'աւելցնէ.

– Չարագուշակ թիւ արդարեւ...

– Կարծեմ այդ թիւը սխալ է, – դիտել կուտայ Շիրինեան:

– Կրնայ ըլլալ, ես այսպէս իմացայ և կամ այդպէս միտքս պահեցի, – կը պատասխանէ Դուրեան սկեպտիկ շեշտով մը, – բայց յամենայն դէպս, թիւը կարևորութիւն չունի:

– Բայց իրողութիւնը մեծ կարևորութիւն ունի կարծեմ:

– Հակառակը չեմ պնդեր:

– Վարչութիւնը, քանի որ տեղեկութիւն ունի այս մասին, քննութեան մը ձեռնարկած է:

– Չեմ կարծեր:

– Ինչո՞ւ համար, – կը հարցնէ Շիրինեան:

– Որովհետեւ խնդիրը շատ մութ է, և որոշ բան մը չի կայ մէջտեղ:

– Ես այս մասին պաշտօնապէս քննութիւն պիտի պահանջեմ Վարչութեանէն, – կ'ըսէ Շիրինեան:

– Շատ աղէկ կ'ընէք: Որմէ՞ կը կասկածիք:

– Ե՞ս, ոչ ոքէն... միայն թէ իրողութիւն մը կայ մէջտեղ, այդ տօսիէն ինքիւրեն չէ գացած, անշուշտ, ներքին գործերու նախարարին դարակը. տանող ձեռք մը կայ, և պէտք է այդ ձեռքը երևան հանել, ու այս պարտականութիւնը կը վերաբերի Վարչութեան:

Այս խօսակցութեան հետեւալ օրը Շիրինեան կը տեսնէ կրօնական ժողովի անդամ Պալագեան վարդապետը, որուն կը խօսի այդ գաղտնի տեղեկագրին վրայ:

– Իրողութիւնը ճիշդ է, մենք ալ իմացած ենք, – կը հաստատէ Պալագեան:

– Ի՞նչ թիւ խաֆիէին կողմէ թուղթերը տարուած են,— կը հարցնէ Շիրինեան:

– 17 թիւ,— կը պատասխանէ վարդապետը:

– Ուրեմն համաձայն ենք միասին, ես ալ այդպէս լսեցի:

Թիւ 17 խաֆիէին լուրը անմիջապէս կը տարածուի ամէն կողմ: Մամուլը կը զբաղի անով և մեծ յուզում առաջ կը բերէ հանրային կարծիքին մէջ:

Նոյն միջոցին շատ տենդայոյզ շրջան մը կ'անցընէր ազգը: Հայաբնակ նահանգներու բարենորոգմանց հարցը կը զբաղեցնէր ամբողջ ազգը: Թէ՛ Բարիզի մէջ և թէ՛ Պոլիս տենդազին գործունէութիւն մը կը տիրէր: Կաթողիկոսը իր կողմէ լիազօր պատգամաւոր կարգած էր Պօղոս Նուպարը, որ դիմումներ կը կատարէր Եւրոպական պետութիւններու քով և Հայաստանի համար հիմնական բարենորոգումներ կը պահանջէր: Պոլիս, նոյնպէս, դեսպաններու մօտ նոյն մտքով դիմումներ կ'ըլլային: Մասնաւոր յանձնաժողով մը կազմուած էր վարելու համար ազգային քաղաքականութիւնը:

Մեծ յոյս կար, թէ այս անգամ Եւրոպական պետութիւնները լուրջ և ազդու միջամտութիւն մը պիտի ընէին մեր դարաւոր տառապանքին վերջ մը տալու համար:

Թուրք կառավարութիւնը բնականաբար հաշտ աչքով չէր դիտեր բոլոր այս գործունէութիւնը և անտարբերութիւն կեղծելով՝ ձեռքի տակէ կ'աշխատէր ձախողանքի մատնելու Հայկական բարենորոգումները և ասոր համար կը դիմէր ամէն տեսակ մեքենայութիւններու, խաբեքայութեան և ուրիշ թաքուն միջոցներու:

Ամէնքը գիտէին, թէ իթթիհատական կառավարութիւնը, իր այս մութ գործունէութեան մէջ, իրեն աջակից ունէր նոյնիսկ հայեր:

Որո՞նք էին այդ ազգադաւանները...

Ենթադրութիւններ կ'ըլլային, անուններ կը տրուէին, բայց որոշ, շօշափելի փաստեր չի կային որևէ անձի դէմ:

Այս պարագաներու ներքեւ երբ յանկարծ լսուեցաւ նաև թիւ 17 խաֆիէի խնդիրը, յուզումը իր ծայրագոյն աստիճանին հասաւ:

Կասկածները սկսան, և ամէն մարդ ջանաց գուշակել, թէ ո՛վ էր այդ նոր դաւաճանը:

Մասնաւորաբար կասկածը կը ծանրանար մէկ քանի անձերու վրայ:

– Պատրիարքարանի պաշտօնեայ այսինչն է,— կը պնդէին ումանք:

– Չէ՛, անիկա չէ, այլ այնինչ պաշտօնեան,— կ'ըսէին ուրիշներ:

Նոյնիսկ կասկածներ կային Վարչութեան մէկ անդամին վրայ, խմբագրի մը վրայ, երեսփոխանի մը վրայ:

Ինչպէս ըսի, Վարչութիւնը քննութեան մը ձեռնարկած էր այս մասին, բայց կը լսուէր, թէ այդ քննութիւնը շատ հարեանցի կերպով կը կատարուէր և որևէ դրական արդիւնք չէր ի տար:

Փետրուար 7ին, այդ ուրբաթ օրը, շատ երեսփոխաններ կ'ենթադրէին, թէ Վարչութիւնը իր հրաժարականին հետ պիտի հաղորդէր նաև թիւ 17 խաֆիէի մասին իր կատարած քննութեան արդիւնքը, և ասոր համար փութացած էին ժողովի:

Հիմա, որ մեր ընթերցողներուն պարզեցինք օրուան կացութիւնը, դառնանք Ղալաթայի Խորհրդարանը:

Երեսփոխաններուն մէկ մասը արդէն բազմած էր թիկնաթոռին մէջ, բայց մեծամասնութիւնը ոտքի վրայ, պզտիկ-պզտիկ խումբերու բաժնուած, տենդային խօսակցութեան մը անձնատուր եղած էր. խօսակցութիւն, որ ատեն-ատեն վիճարանութեան և նոյնիսկ կռիւի կը փոխուէր:

Մասնաւորապէս շրջապատուած էին Գրիգոր Զօհրապ, Յարութիւն Շահրիկեան, Եղուարդ Շիրինեան և Ներսէս Օհանեան: Միհրդատ Հայկազն, իր խոշոր փորը տնկած, կ'երթար, կուգար, մէկ խումբէն միւսը խօսք կը տանէր, կը բերէր: Բարձրաձայն հարցումներ կ'ուղղէր հեռուն նստած երեսփոխանի մը, հրահանգներ կուտար բարապաններուն, դուրս կ'ելլէր, ներս կը մտնէր:

– Պատրիարքը ո՞ւր է, ինչո՞ւ չէ եկեր,— կը հարցնէր Աբիկ Մուպահեանեանի, որ ձեռքը մօրուքին՝ ցած ձայնով կը փսփրսար:

– Հիմա կուգայ, անգղիացի թղթակից մը եկած է, անոր հետ կը տեսնուի կոր:

Օրմանեան Սրբազան թիկնաթոռին մէջ բազմած՝ անհանդարտ տղու մը պէս կը շարժէր, ասդին կը դառնար, անդին կը դառնար անընդհատ, խօսքեր կ'ուղղէր իր ետեւը նստող երեսփոխաններուն ու կը խնդար փորը շարժելով:

Հմայեակ քահանայ էքսէրճեան, փակեղը ձեռքը, իր ճաղատ գլուխը ցուցադրած, խուպոտ ձայնով, կը խօսէր կրօնաւորներու խումբի մը.

– Փնտռելու-գտնելու է այդ թշուառականը և արժանի պատիժը տալու է... ասանկ դաւաճանութիւն կ'ըլլա՞յ...

Վահրամ Արքեպիսկոպոս Մանկունի դաժան ու աններող քրմապետի արձանացած դիրքովը նստած էր պատրիարքական գահին մօտ՝ իր սպիտակափառ մօրուքը ջրվիժեցնելով կուրծքին վրայ: Իր քովը Դուրեան Սրբազան՝ աջ ձեռքը ճակտին, աչքերը քօղարկած, խորին հայեցողութեան մը մէջ ընկղմած կը թուէր:

Ասդին՝ Դաւիթ Տէր-Մովսէսեան, պարութան թեւին տակ, գլուխը անդադար ճօճելով, Ֆէսը ետև նետած, ակնոցը քթին, աջ թեւը մեքենական շարժումով մը ետև-առաջ տանելով՝ ժողովի վիճաբանութեան ատեն Ռամկավար կուսակցութեան բռնելիք ուղղութիւնը կը բացատրէր Գարեգին Տէմիրճիպաշեանի, Լեոն Տնտեսեանի, Մարկոս Նաթանեանի և Սարգիս Սուլինի.

– Խնդիրը այս կերպով պէտք է պաշտպանել, որովհետև թէ՛ իրաւաբանական, թէ՛ օրինական, թէ՛ օրէնսգիտական և թէ՛ փաստաբանական տեսակէտով...

Եւ Դաւիթ Տէր-Մովսէսեանի Ֆէսը կը շարժէր ու կը շարժէր՝ խօլական ու դիւային շարձարանքի մը մատնելով փրկակիւղը:

Արշակ Այլօյաճեան կուռազան կնոջ անախորժ ձայնովը, քիչ մը անդին, կը պոռար Արամ Անտոնեանի երեսին.

– Սխա՛լ, էֆէնտիմ, ես մօտէն կը ճանչնամ զինքը, անիկա ասանկ մարդ չէ... փաստ ունի՞ս, ապացոյց ունի՞ս... առանց փաստի ինչպէ՞ս կարելի է այդպիսի ամբաստանութիւն մը ընել մէկու մը վրայ:

Պետրոս Հալաճեան սև ըրտենկօթով, լուսթրին կօշիկներով, պիսերը դէպի վեր ոլորած, քաղզէա-ասորեստանական երկար

սև մօրուքը լուրջ հանդիսաւորութեամբ մը յարդարած, նուրբ դիւանագէտի մը հոգեբանութիւնը կ'ըսէր Եդուարդ Գարակէօզեանին.

– Մօն չէ՞ս, կացութիւնը շատ փափուկ է, ես մօտէն տեղեակ եմ, շատ զգուշաւորութեամբ պէտք է շարժիլ, անխոհեմ քայլ մը կրնայ ամէն բան վտանգել, դիւանագիտութեամբ գործելու է:

Իսկ Վարդգէս կաղնիկաղ կ'երթար-կուգար՝ խնդալով, կատակելով, աջ ու ձախ խօսքեր նետելով, ձեռքի նշանացի շարժումներ ընելով հեռուն գտնուողներուն:

Ունկնդիրները արդէն լեցուած էին իրենց սահմանուած տեղը և կամաց-կամաց կը ջանային նաև գրաւել խմբագիրներու աթոռները՝ օգտուելով անոնց բացակայութենէն, որովհետև այս վերջինները ժողովասրահը կը գտնուէին տեղեկութիւն հաւաքելու, փոխանակուած խօսակցութիւններուն ականջ դնելու համար:

Սեպուհ Ակունի սևուլիկ աչքերով, խուզարկու նայուածքով, թունաւորուած մուկի մը պէս անհանդարտ ժուռ կուգար սրահին մէջ, ականջները սրած, որպէսզի ըսուած խօսքերէն բառ մը չփախցնէ:

Հո՞ն էր նաև Ներսէս Փափագեան իր ածիլուած դէմքովը, սև փողկապովը, ակնոցը հաստատ տեղաւորած քթին վրայ:

Վահան Թօշիկեան ժպտուն, խպրիկ, խարտեաշ, սրածայր մօրուքը տնկած կը սպրդէր ամէն կողմ՝ երեսփոխաններուն ուսը ծծելով, բարեկեցիկ, ժպտելով, հարցումներ ընելով: Յաճախ տեղեկութիւններ կը հաղորդէր՝ կրկնապատիկը գանձելու յոյսով, թելադրանքներ կ'ընէր, ուղղութիւն ցոյց կուտար.

– Պէտք է մերժել Վարչութեան Հրատարականը, այս միջոցիս ի՞նչ պէտք կայ վարչական նոր տագնապ մը ստեղծելու...

Իսկ Արմենակ Տէր-Յակոբեան, լրաբերներու Բենիամինը, սմանողուկ ժպիտ մը շրթունքին վրայ, նորաբոյս պիսերը իզուր ոլորել փորձելով, կը սլքտար դիւանին շուրջը՝ պաշտօնական թուղթերուն վրայ ծածուկ աչք մը նետելու, անոնցմէ իր թերթին համար լուր մը քաղելու յոյսով:

– Պատրիարքը եկած է, մեծամասնութիւն ունինք, ինչո՞ւ ատեանը չէք բանար...

Միհրդատ Հայկազն էր, որ իր անկիւնէն, ժողովրդական

տրիրուների մը կեցուածքով, մարտագոռ հնչական ձայնովը այս դիտողութիւնը կ'ընէր:

– Այո՛, այո՛, ատեննը բանալու է,– կրկնեցին քանի մը երեսփոխաններ,– ատենը անցաւ:

– Ատենապետը ո՞ւր է:

– Նորատունկեան էֆէնտին չէ եկած այսօր:

– Երկրորդ ատենապետը թո՛ղ բանայ ատեննը:

– Երկրորդ ատենապետ տօքթոր Տաղաւարեան էֆէնտի նամակով մը իր բացակայելու հարկադրուած ըլլալը կը հաղորդէ,– պատասխանեց Աբիկ Մուպահեան:

– Ուրեմն այսօր ժողով պիտի չունենանք:

– Կարծեմ Պարգև էֆէնտի Փափագեանը հոս է:

– Ուրեմն ա՛ն թող բանայ ժողովը:

Աբիկ Մուպահեանն ոտքի ելաւ և դուրս գնաց ի խոյզ և ի խնդիր Պարգև էֆէնտիի:

Քիչ յետոյ Գ ատենապետը ըրտէնկօթին փէշերը ծածանելով, ակնոցը ձեռքը և իր անվնաս ու բարեմիտ առիւծի գլուխը վեր բռնած եկաւ գրաւելու ատենապետի աթոռը:

Իրեն կը հետևէր Պատրիարքը, զոր երեսփոխանները ընդունեցին յոտնկայս:

Ջանգակին ձայնը հնչեց:

– Ատեննը բացուած է, տեա՛րք երեսփոխանք,– յայտարարեց Պարգև Փափագեան:

Պատրիարքը արտասանեց սովորական աղօթքը՝ Տէրոջմէն խնդրելով, որ «ուղիղ արասցէ զգործս ձեռաց մերոց», խընդրանք մը, որ աւա՛ղ, անլսելի կը մնայ գրեթէ միշտ, որով ժողովին գործերը միշտ խոտոր կ'ընթանան:

Ատենական գործողութիւնները սկսան: Քահանայ մը իր հրաժարականը կուտար երեսփոխանութենէ «անձնական տկարութեան և զբաղմանցը» պատճառաւ:

Յետոյ կարդացուեցաւ Վարչութեան մէկ գրութիւնը, որով կը ծանուցուէր, թէ Թօբգաբուէն երեսփոխան ընտրուած է Գէորգ Սիմքէշեան:

Ասոր յաջորդեց տասը երեսփոխաններու կողմէ հետևեալ առաջարկը.

«Նկատի առնելով, որ օրակարգի միակ խնդիրը Վարչութեան հրաժարականի խնդիրը կը ներկայացնէ և անոր կարևորութեան հետ կապուած են այնպիսի հարցեր, որոնց վրայ հրապարակաւ վիճաբանիլ օրուան պահանջներուն համապատասխան չէ՝ կ'առաջարկենք, որ նիստը դռնփակի վերածուի»:

Այս առաջարկը ընդունուելով՝ ատենապետը հրաւիրեց ունկընդիրները ժողովասրահէն դուրս ելլելու:

Այս «հրաւէր»ը դժգոհութեան ցոյցերով ընդունուեցաւ ունկընդիրներու կողմէ: Պէտք եղաւ, որ բարապաններ միջամտեն և ստիպեն ժողովուրդը դուրս ելլելու:

Միհրդատ Հայկազն ինքն ալ աջակցեցաւ բարապաններուն՝ յորդորելով, սպառնալով, պոռալով:

Մինչ ատենապետը դիւանի բարձունքէն սա տեսակ խօսքեր կ'ուղղէր ունկընդիրներուն.

– Օրէնքը յարգեցէ՛ք... այս ժողովը չկրնար ճնշումի տակ գումարուիլ... ժողովին հեղինակութիւնը պէտք է բարձր մնայ... և այլն, և այլն:

Վերջապէս սրահը պարպուեցաւ, և միայն մամուլի ներկայացուցիչները մնացին իրենց յատկացուած տեղը:

Ատենադպիրը կարդաց չորս երեսփոխաններու կողմէ ստորագրուած գիր մը:

«Ցաւօք լսեցինք թէ,– կը գրէին երեսփոխանները,– Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներէն մէկ քանին, օգտուելով իրենց վստահուած պաշտօնական հանգամանքէն, կարգ մը դատապարտելի արարքներու մէջ գտնուած են, արարքներ, որոնք կրնան մեծապէս վտանգել ազգին արժանապատուութիւնը և ազգային իշխանութեան վարկը, եթէ արդէն չեն վտանգած»:

Եվ կը պահանջէին, որ խորհրդարանական քննութեամբ մը խնդիրը լուսաբանուի և անոնք, որ զուտ անձնական շահու համար չարաչար գործածած են ազգին կողմէ իրենց ընծայուած վստահութիւնը, գոնէ իրենց բարոյական պատիժը կրեն:

Այս պահանջումը ընող չորս երեսփոխաններն էին Ս. Պէհրէան, տօքթոր Թիւլեան, Արամ Անտոնեան և Երուանդ Օտեան:

Այս գրութեան մէջ ակնարկուած խնդիրը ծանօթ էր արդէն երեսփոխաններու մեծամասնութեան:

Ծանօթ երիտասարդ փաստաբան մը, երեսփոխան և Վարչութեան անդամ միանգամայն, կարգ մը դատապարտելի արարքներու մէջ գտնուած էր, որոնց գլխաւորներն էին.

Ա. Իր դիրքէն օգտուելով Թալէաթ փաշայէն (այն ատենը տակաւին պէյ) կառավարական պաշտօն մը խնդրած և յաջողած էր զայն ձեռք բերել:

Բ. Ազգային դատ մը պաշտպանելու համար յիսուն ոսկի պահանջած ու առած էր Պատրիարքարանի սնտուկէն:

Գ. Իբրև Վարչութեան անդամ, իր մէկ պաշտօնակցին հետ, մէպուսական խնդրին մասին Թագրիբ մը ներկայացուցած էր կառավարութեան՝ միևնոյն ատեն յայտարարելով, թէ ինք անձնապէս համակարծիք չէ տրուած Թագրիբին:

Այս երեք իրողութիւնները կասկածիլ կուտային, թէ յիշեալ փաստաբանը տակաւին ուրիշ շիլ գործունէութիւններ ալ ունեցած է:

«Արդեօք ի՞նքն է թիւ 17 խաֆիէն», — կը մտածէին ոմանք:

Ուրիշներ կ'ուզէին վանել այդ տեսակ ենթադրութիւն մը, իբրև անհիմն: Ու արդարև այս մասին որևէ փաստ կամ ապացոյց չի կար իրեն դէմ:

Յանկարծ ժողովասրահին դուռը բացուեցաւ, և ներս մտաւ խնդրի առարկայ երեսփոխանը: Տիրան Երկանեան, գէր, երկայնահասակ, բարեձև ու գեղեցիկ մարդ մըն էր: Ամենուն ակնարկները իր վրայ սեռեցան, և ինք այդ ակնարկներուն տակ շուարած, շփթած՝ տփուկեցաւ: Զգաց, թէ այդ նայուածքները բարեկամական չէին, և դողահար ձեռքով մը ներկայութեան տոմարը ստորագրելէ ետքը ուղղուեցաւ սրահին ձախ կողմը, հո՛ն, ուր Վարչութեան անդամները նստած էին:

Ծնշող լուութեան մը մէջ լսուեցաւ ատենապետին ձայնը, որ կ'ըսէր.

— Առաջին խօսքը Ներսէս էֆէնտի Օհանեանինն է, միայն կը յիշեցնեմ պատուարժան երեսփոխաններուն, որ իրենց պաղարիւնութիւնը պահեն և օրէնքին սահմանին մէջ խօսին:

Այս ազդարարութիւնը ցոյց կուտար, թէ ատենապետը փոթորկայոյց նիստի մը հեռապատկերէն կը վախնար:

Ներսէս Օհանեան բուռն կերպով քննադատեց Վարչութիւնը և ըսաւ, թէ՛

— Վարչութեան անդամներէ ոմանք անձնական շահեր կը հետապնդեն:

— Ո՞վ են այդ անդամները, անունը տուէ՛ք, — կը պոռային երեսփոխաններ:

Գլուխները հետզհետէ կը տաքնային, կիրքերը կը բորբոքէին:

Օհանեանէն յետոյ խօսեցան Շահրիկեան, Ժագ Սայապալեան և տօքթոր Փաշայեան:

Ունկնդիրները, որ դուրսը կեցած էին, սկսան ժողովասրահին դուռը զարնել՝ պահանջելով, որ ժողովը դռնբաց կատարուի:

Պահ մը աղմուկ և շփոթութիւն տիրեց, յետոյ ունկնդիրները ցրուեցան, ու ժողովը շարունակեց իր վիճարանութիւնը:

Մէկ քանի երեսփոխաններ ևս խօսեցան, և ի վերջոյ ոտքի ելաւ Տիրան Երկանեան, յուզուած և տժգոյն դէմքով մը... և մի առ մի ընդունեց, թէ ճիշդ էին իր մասին եղած քննադատութիւնները:

Ի վերջոյ, ընդունուեցաւ հետեւեալ բանաձևը.

«Ազգային ժողովը, լսելէ յետոյ Վարչութեան հրաժարականին շուրջ թեր ու դէմ խօսուածները, Քննիչ յանձնաժողով մը կազմելով՝ անոր կը յանձնարարէ անմիջապէս լսել Վարչութեան համարատուութիւնը և իր եզրակացութիւնը փութով բերել, որպէսզի այդ եզրակացութեան արդիւնքին համեմատ ժողովը իր որոշումը տայ»:

Այսպէս փակուեցաւ Ազգային ժողովին դռնփակ նիստը, և երեսփոխանները ցրուեցան:

— Իսկ թիւ 17 խաֆիէին խնդի՞րը, — Հարցուց երեսփոխան մը Վարչութեան անդամի մը:

— Այդ մասին մեր քննութիւնները դեռ չեն աւարտած, — պատասխանեց միւսը:

— Որո՞ւ վրայ կը ծանրանան կասկածները:

- Այդ մասին բան մը չեմ կրնար ըսել:
 - Գոնէ կարևոր հետք մը գտա՞ծ էք:
 - Ներեցէք, որ ձեր հարցումին չպատասխանեմ...
- Եւ վարչութեան անդամը հեռացաւ արագ քայլերով:

ԳԼՈՒԽ Բ
ԿԱՆԱՆՉ ՀՈՎԱՆՈՅՈՎ ԿԻՆԸ

Ինչպէս տեսանք, Ազգային ժողովի նիստը նախ դռնբաց եղած էր, և ունկնդիրները նիստը սկսելէն ու դիւանական գործողութիւնները կատարուելէն յետոյ դուրս հանուած էին:

Այդ ունկնդիրներուն մէջ կը գտնուէին նաև մէկ քանի կիներ և օրիորդներ:

Առաջին վայրկեանէն իսկ մէկ քանի երեսփոխաններու և գրագրողներու ուշադրութիւնը գրաւած էր շիք հագուած, նուրբ դիմագիծներով մանկամարդ կին մը, որ կանանց գոյն հովանոց մը բռնած էր ձեռքը, ինչ որ տարօրինակ տպաւորութիւն մը կ'ընէր զինքը դիտողներուն վրայ:

Արդարև, ձմեռուան մէջ ամառնային հովանոց մը անսովոր բան մըն էր, մանաւանդ կնոջ մը համար, որ խնամուած ու ճաշակաւոր արդուզարդ մը ըրած էր:

«Կարծես դիտմամբ այդ հովանոցը առած է իր վրայ ուշադրութիւն դարձնելու համար», - կը խորհէին ոմանք:

Ո՛վ էր այդ կինը: Այս հարցումը կ'ընէին իրարու մամուլի ներկայացուցիչները՝ ատեն-ատեն ետև դառնալով ու կինը դիտելով: Ո՛չ ոք կը ճանչնար զայն, ու այս բանը աւելի կը սրէր իրենց հետաքրքրութիւնը:

Սեպուհ Ակունի և Գրիգոր Թորոսեան (Կիկօ) մասնաւորապէս կը շահագրգռուէին այդ անծանօթուհիով:

Իրենց համար կարծես տեսակ մը պատիկութիւն կը համարէին չճանչնալ կին մը, որ հայ կիսաշխարհիկ մը ըլլալ կը թուէր:

- Գեղեցիկ աչքեր ունի, - դիտել տուաւ Թորոսեան:
- Եւ անառակ քիթ մը ու վաւաշոտ շրթուներ, - աւելցուց Ակունի:

- Արդեօք երեսփոխանի մը հոմանուհի՞ն է:
- Խենթ խօսքեր մի՛ ըներ:
- Ուրեմն ինչու ելեր, ժողովի եկեր է:
- Ո՛վ գիտէ, թերևս մէկը տեսնալ կ'ուզէ... եթէ սրահը լեցուած չըլլար, իրեն կը մօտենայի ու խօսակցութեան կը բռնուէր հետը:

- Անպատճառ բերացի ըլլալու է այս կինը, - պնդեց Թորոսեան:

- Թերևս մեր կարծածին պէս չէ ու պատուաւոր կին մըն է, - ըսաւ Ակունի:

- Կրնայ ըլլալ... ինչ որ է, պէտք է լուսաբանենք այդ խնդիրը: Խորհրդաւոր բան մը կայ այս կնոջ հոս ներկայութեանը մէջ:

- Կը կարծե՞ս, որ կապ ունի թիւ 17 խաֆիէին խնդրին հետ, - հարցուց Ակունի խնդալով:

- Չըլլալիք բան չէ... չե՞ս գիտեր, որ ամէն խնդրի մէջ կնոջ մատ կայ:

- Գրաւ կը դնեմ, որ այս կինը վարժուհի մըն է...

- Եթէ Սմբատ Դաւիթեանը հոս ըլլար, անոր կը հարցնէինք: Ու այսպէս երկու խմբագիրները խորհրդաւոր կնոջ վրայ կը խօսէին առանց կարենալ զիրար լուսաբանելու:

Երբ ատենապետը յայտարարեց, թէ ժողովը դռնփակի վերածուած էր և հրաւիրեց ունկնդիրները, որ դուրս ելին, կանանց հովանոցով կինը տեղէն չշարժեցաւ և միայն այն ատեն ոտքի ելաւ ու մեկնեցաւ, երբոր տեսաւ, թէ ալ ունկնդիր չէր մնար սրահին մէջ:

Ինչպէս տեսանք, ունկնդիրներէն մեծ մաս մը թէև սրահէն մեկնած էին, բայց դուրսը կը սպասէին, յուսալով, որ դուռը կը բացուի, և կրկին ժողովուրդը ներս կընդունուի:

Կանանց հովանոցով կինն ալ այդ սպասողներուն մէջ մնաց բաւական ատեն, յետոյ, ա՛լ յոյսը կտրած, դուրս ելաւ, երկար պտոյտ մը ըրաւ մինչև Թօփհանէ, յետոյ կրկին վերադարձաւ Խորհրդարան և այս անգամ ուղղուեցաւ դէպի ժողովասրահ տանող մուտքը:

Ելաւ սանդուխներէն վեր ու հասաւ նրբանցքը, ուր երկու բարապաններ նստած էին:

– Ի՞նչ կ'ուզէք, տիկի՛ն, – Հարցուց բարապաններէն մին: Կիներ պաղարիւնով ու հաստատ շեշտով մը ըսաւ:

– Սրբազան Պատրիարքը կ'ուզեմ տեսնել:

– Սրբազանը այս միջոցիս ժողովին կը նախագահէ:

– Գիտեմ... Հոգ չէ, կ'սպասեմ:

– Թերեւս ժողովը կ'երկարի:

– Կարևոր գործի մը համար ստիպուած եմ այսօր անպատճառ գինքը տեսնելու, հոս տեղ մը չի կա՞յ, ուր կարենամ նստիլ և սպասել:

Բարապանը պահ մը մտածեց: Այդ մաքուր արդուզարդով կիներ տեսակ մը պատկառանք կ'ազդէր իրենց: Թերեւս ծանօթ անձնաւորութեան մը կիներ էր, և անոր հանդէպ եթէ կոշտ վերաբերում մը ունենար, կրնար անախորժ հետեանքներու տեղի տալ:

– Եթէ անպատճառ կը պնդէք, այս սենեակը սպասեցէք, – պատասխանեց:

Եւ գինքը առաջնորդեց Վարչութեան սրահը, ուր քարտուղար մը նստած գիր կը գրէր:

– Այս տիկինը Ս. Պատրիարքը տեսնել կ'ուզէ, հոս պիտի սպասէ ժողովի լմննալու, – բացատրեց բարապանը քարտուղարին:

Այս վերջինը շարունակեց գիրը առանց պատասխան տալու: Կիներ տեղաւորուեցաւ թիկնաթոռի մը մէջ: Քարտուղարը իր գիրը շարունակելով Հանդերձ, ատեն-ատեն, ակնոցին ներքեւէն գաղտնագողի ակնարկներ կ'ուղղէր կնոջ և ամէն մէկ նոր ակնարկին նոր հրապոյր մը կը գտնէր անծանօթուհիին վրայ:

«Ո՞վ է արդեօք, – կը խորհէր ինքնին, – հարուստի մը կիներ կ'երևայ... Ի՞նչ գործ կրնայ ունենալ Պատրիարքին հետ... Հաւանօրէն ամուսնական խնդիր մը, թերեւս ամուսնալուծում պիտի պահանջէ... Թերեւս ամուսինը անհաւատարիմ գտնուած է... բայց ասանկ կին մը ունեցողը ինչպէ՞ս անհաւատարմութիւն կրնայ գործել»:

Վերջապէս ուզելով իր հետաքրքրութեան յագուրդ տալ՝ պահ մը իր գիրը ընդհատեց և կնոջ դառնալով հարցուց.

– Կը ներէք, տիկի՛ն, արդեօք ի՞նչ խնդրի համար կ'ուզէք տեսնել Նորին սրբազնութիւնը:

– Զուտ անձնական խնդրի մը համար, – պատասխանեց կինը չոր ու կտրուկ ձևով մը:

Այս խօսքերը արտասանեց այնպիսի շեշտով մը, որ քարտուղարը չհամարձակեցաւ ուրիշ խօսք ուղղելու իրեն և նորէն շարունակեց իր անվերջանալի գրութիւնը:

Կիներ ոտքի ելաւ և գնաց դէպի այն դուռը, որ կը տանի ժողովասրահ: Դուռը բացաւ և մտաւ փոքրիկ նրբանցքը: Հիմա ժողովասրահէն բաժնուած էր դռնով մը միայն: Մօտեցաւ դրան և ականջ դրաւ:

Վիճաբանութիւնները որոշապէս կը լսուէին: Անծանօթուհին ուշադիր մտիկ կ'ընէր, երբ յանկարծ բարապանը երևցաւ նրբանցքին մէջ:

– Տիկի՛ն, – դիտել տուաւ, – արգիլուած է այստեղ կենալ:

– Ինչո՞ւ համար, – Հարցուց կիներ միամիտ դէմքով մը:

– Որովհետեւ ներսը դռնփակ նիստ տեղի կ'ունենայ:

– Կը ներէք, չէի գիտեր, – պատասխանեց անծանօթուհին թեթեւ մը կարմրելով:

Յետոյ վերադարձաւ սրահ, քիչ մըն ալ նստաւ և ի վերջոյ ոտքի ելլելով՝ ըսաւ քարտուղարին.

– Կ'երևայ, որ ժողովը դեռ պիտի ուշանայ, ես ստիպուած եմ գիւղ երթալ, շոգենաւին ժամանակը հասաւ... վաղը կը ջանամ գալ և տեսնուիլ Պատրիարքին հետ, մնաք բարով:

– Ինչպէս որ կ'ուզէք, տիկի՛ն, – պատասխանեց քարտուղարը, – երթաք բարով:

Կիներ իջաւ եկեղեցիին բակը. պահ մը կեցաւ վարանոտ ձևով մը: Կարծես չէր կրնար որոշել, թէ ի՞նչ պիտի ընէր. դուրս ելլելու շարժում մը ընելէ հտքը ետ դարձաւ և մտաւ եկեղեցին, ուր մնաց բաւական երկայր ատեն, մինչև որ ժողովը վերջացաւ, և ժողովականները սկսան ցրուիլ:

Այն ատեն ինքն ալ բակը ելաւ և դիտեց մեկնողները:

Թորոսեան և Ակունի միասին երևցան բակին մէջ և նշմարելով կանանց հովանոցով կիներ՝ կանգ առին:

– Ես պիտի մօտենամ իրեն և հետը խօսակցութեան պիտի մտնեմ, – յայտարարեց Ակունի:

– Ես ալ կը կենայի, բայց ստիպուած եմ խմբագրատուն եր-

Թալ,— պատասխանեց Թորոսեան,— գրաշարները ձեռագիրի կը սպասեն...

Եւ հեռացաւ՝ վերջին ականարկ մը նետելով կնոջ:

Սեպուհ Ակունի շրջան մը ընելով՝ մօտեցաւ անծանօթուհիին.

— Տիկի՛ն,— ըսաւ խնդումներես,— արդեօք մէկո՞ւ մը կը սպասէք:

— Ո՛չ,— պատասխանեց կինը չոր շեշտով մը:

— Կարծեմ ժողովին ներկայ գտնուելու համար եկած էիք, բայց դժբախտաբար նիստը դռնփակ եղաւ, թէև բնաւ պէտք չկար դռնփակ ընելու... կարևոր խնդիր մը չկար մէջտեղ, ո՛չ ալ ծածոկ մնալու բան մը:

Անծանօթուհին այս անգամ բարեհաճեցաւ խօսելու:

— Դուք ներկա՞յ էիք,— հարցուց:

— Բնականաբար:

— Իբրև երեսփոխա՞ն...

— Ո՛չ, իբրև խմբագիր:

— Ինչո՞ւ համար նիստը դռնփակ ըրին:

— Որովհետև տասը երեսփոխանի խելքին այդպէս փչած էր:

— Ի՞նչ խնդիրի վրայ վիճաբանեցան:

— Վարչութեան հրաժարականին վրայ... արդէն օրակարգը այդ էր:

— Ուրի՞շ,— հարցուց կինը հետաքրքիր:

— Ուրիշ ոչինչ,— պատասխանեց Ակունի:

— Կը կարծէի, թէ ուրիշ խնդիրներ ալ վիճաբանութեան պիտի դրուէին:

— Ի՞նչ խնդիր...

— Օրինակի համար... թիւ 17 խաֆիէի խնդիրը:

— Վարչութիւնը տակաւին այդ խնդրին մասին իր բացած քննութիւնը չէ աւարտած,— բացատրեց Սեպուհ Ակունի:— Դեռ քննութիւնները կը շարունակուին, և չեմ կարծեր, որ մօտ օրէն վերջանան... բայց ինչո՞ւ այդ խնդիրը ձեզ կը շահագրգռէ:

— Ոչինչ... պարզ հետաքրքրութիւն մը,— պատասխանեց կինը ժպտելով,— այս միջոցիս ամէն մարդ կը հետաքրքրուի այդ խնդրով:

— Ես այդ խնդրին մանրամասնութիւններուն մօտէն տեղեակ եմ,— ըսաւ Ակունի տիկնոջ ուշադրութիւնը իր վրայ դարձնելու համար:

— Իրա՞ւ կ'ըսէք...

— Անշուշտ, իմ պաշտօնիս բերումով ամէն պաշտօնական մարմիններու հետ շփման մէջ եմ, ամէն օր Պատրիարքարան կ'երթամ, վերջապէս իմ մասնաւոր ազբիւրներս ունիմ:

— Որո՞ւ վրայ կը ծանրանան կասկածները,— հարցուց անծանօթուհին:

Սեպուհ Ակունի լուրջ և խորհրդաւոր ձև մը առաւ:

— Քանի մը մարդերու վրայ կասկածներ կան, բայց դեռ ուրոշ փաստեր կամ ապացոյցներ կը պակսին... խնդիրը շատ կնճռոտ է... դժբախտաբար Վարչութիւնը սխալ ուղղութեան կը հետևի... ես Վարչութեան մէկ քանի անդամներուն ըսի այդ բանը, բայց մտիկ չըրին: Այս կերպ քննութիւնը որևէ արդիւնք չկրնար տալ... կարելի է այդ խաֆիէին ո՛վ ըլլալը մէջտեղ հանել, բայց տարբեր կերպով... այդ մարդերը գործելու կերպը չեն գիտեր:

— Որո՞նք են կասկածելի նկատուածները,— հարցուց կրկին կանանչ հովանոցով կինը:

— Ներեցէ՛ք, տիկի՛ն, բայց անուն չեմ կրնար տալ, խնդիրը շատ փափուկ է...

Կինը տեսնելով, որ իր հետաքրքրութիւնը գոհացում պիտի չգտնէր

— Ներեցէք, պարո՛ն, ուշ մնացի, մնաք բարով,— ըսաւ ու հեռացաւ Ակունիի քովէն:

Այս վերջինը պահ մը խորհեցաւ հեռուէն հետապնդել անծանօթուհին, բայց ինքն ալ ստիպուած էր խմբագրատունը ձեռագիր հասցնել, ուստի ստիպուեցաւ հրաժարիլ այդ մտադրութենէն:

Կինը փողոց ելլելով՝ դարձաւ դէպի աջ և ուղղուեցաւ դէպի Գումպարաճը Եօթուշու:

Արագ քայլերով անցաւ աղտոտ փողոցներէն ու հասաւ գառիվերը: Հոն քայլերը դանդաղեցուց և ի վերջոյ կանգ առաւ մութ գինետան մը առջև ու մտաւ ներս:

Գինետան մէջ միակ յաճախորդ մը նստած էր սեղանի մը քով: Խարտեաչ երիտասարդ մըն էր, շատ մաքուր հագուած:

Կինը ուղղակի անոր քով գնաց:

– Ի՞նչ լուր, – հարցուց երիտասարդը մտահոգ դէմքով մը:

– Ոչինչ, պարապ տեղը գացի:

– Ժողովը չգումարուեցա՞ւ:

– Գումարուեցաւ, բայց նիստը դռնփակ էր...

– Չկրցա՞ր իմանալ, թէ ինչ անցած-դարձած է ներսը:

– Իմացայ... միմիայն Վարչութեան հրաժարականով զբաղած են, միւս խնդրին վրայ խօսք չէ եղեր, տակաւին այդ խընդրին քննութիւնը չէ աւարտած... խմբագիրի մը հանդիպեցայ, որմէ բաւական տեղեկութիւն քաղեցի, կարծեմ վախնալիք բան չի կայ:

– Մ՛վ էր այդ խմբագիրը:

– Անունը չըսաւ. թուիս դէմքով, սև աչքերով, փոքրիկ պեխերով երիտասարդ մըն էր:

– Հասկցա՞յ, – գոչեց երիտասարդը, – Սեպուհ Ակունին է:

– Կը ճանչնա՞ս զինքը:

– Բնականաբար... Կը վախնամ, որ վրադ կասկած հրաւիրած ես, – ըսաւ երիտասարդը:

– Չեմ կարծեր, շատ վարպետութեամբ շարժեցայ, – պատասխանեց կինը:

– Իցի՛ւ թէ Սեպուհ Ակունիի հետ չտեսնուէիր:

Երիտասարդը ոտքի ելաւ, իր հաշիւը մաքրեց, որովհետև գաւաթներով քօնեաք խմած էր և հեռացաւ մանկամարդ կնոջ հետ:

ԳԼՈՒԽ Գ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ՍԵՏՈՒԿԸ

Որպէսզի մեր ընթերցողները լաւագոյն կերպով հետևին այս պատմութեան և վերահասու ըլլան անոր բոլոր իրադարձութիւններուն, պէտք կը զգանք պահ մը ետ երթալ մինչև պատերազմական նախարար Նազըմ փաշայի սպանութեան յաջորդ օրը:

Տակաւին Մահմուտ Շէվքէթ փաշայի իթթիհատական դահլիճը չէ կազմուած, բանակցութիւններ արդէն իսկ կը կատարուին այս մասին:

Իթթիհատական պետերը իրարանցումի մէջ են: Իրենցմէ մէկ քանիններ՝ Ահմէտ Նէսիմի պէյ, Քէմալ պէյ, Տիարպէքիրլի Ջիա պէյ և ուրիշներ «Թանինի» Նուրի Օսմանիէ խմբագրատունը հաւաքուած խորհրդակցութիւններ կը կատարեն օրուան կացութեան մասին:

Յանկարծ ներս կը մտնեն երկու դաշնակցականներ՝ Յարութիւն Գալֆայեան և Յ. Ճ. Սիրունի:

Իթթիհատական պետերը սիրալիբ ընդունելութիւն մը կ'ընեն նորեկներուն: Դաշնակցութիւնը թէև 1912 մայիս 10էն ի վեր պաշտօնապէս իր յարաբերութիւնները խզած էր Իթթիհատի հետ, այսուհանդերձ երեսանց բարեկամութիւնը կը շարունակուէր:

Ահմէտ Նէսիմի և Քէմալ պէյերը կը փութան դաշնակցական երկու ներկայացուցիչներուն հաղորդել օրուան եղելութիւնները, վերջին լուրերը և այն անձերու անունները, որոնք պաշտօն պիտի ստանան նոր դահլիճին մէջ:

– Չուտ իթթիհատական դահլիճ մը պիտի ունենանք այս անգամ, – կը գոչէ Ահմէտ Նէսիմի պէյ յաղթականօրէն, – և պիտի տեսնէք, թէ ինչն'ը պիտի ընենք...

– Իշալլահ, – կը պատասխանէ Գալֆայեան թերահաւատ շեշտով մը:

– Զօրաւոր դահլիճ մը, որ պիտի կրնայ երկիրը կործանումէ փրկել...

Եւ այս առթիւ իթթիհատական պետերը իրենց բարեկամական զգացումները կը յայտնեն հայերու հանդէպ:

– Արևելեան նահանգներու բարենորոգումը մենք մեր ձեռքով պիտի կատարենք, – կը հաւաստէ Քէմալ պէյ, – առանց թոյլ տալու, որ Եւրոպա միջամտէ... և այդ բարենորոգութիւնները այնչա՛փ հիմնական պիտի ըլլան և այնքա՛ն լայն սահմանի մը մէջ պիտի գործադրուին, որ այլևս հայերը որևէ դժգոհութեան պատճառ պիտի չունենան:

Երկու դաշնակցականները բաւական ատեն մնալէ ետքը «Թանինի» խմբագրատունը կը պատրաստուին մեկնելու:

Այն ատեն իթթիհատական պետերէն մին կը մօտենայ իրենց և կ'ըսէ.

- Կարևոր բան մը ունիմ ձեզի հաղորդելիք:
- Ի՞նչ բան, - կը հարցնէ Գալֆայեան:
- Նախկին ներքին գործերու նախարար Բէշիտ պէյի սնտուկը փախցուցինք իր գրասենեակէն... շատ կարևոր թուղթեր կան մէջը:

- Ձեր կուսակցութեա՞ն համար:
- Ո՛չ թէ միայն մեր կուսակցութեան, այլ նաև ձեզի համար, այսինքն հայերու մասին:

Եւ իթթիհատական պետը ձայնը ցածցնելով՝ կ'աւելցնէ.

- Սնտուկին մէջ կայ տօսիէ մը, որ «Թիւ 17» անունը կը կրէ, այդ տօսիէին մէջ կը գտնուին հայկական խնդրին և մասնաւորաբար Պատրիարքարանի ներքին գործերուն մասին ժուռնալներ, ինչպէս նաև Բարիզէն ու Եգիպտոսէն եկած տեղեկագիրներ:

Այս տեղեկութիւնը բնականաբար չափազանց կը հետաքրքրէ երկու դաշնակցականները, որոնք աւելի մանրամասն տեղեկութիւններ կ'ուզեն ստանալ տօսիէի մասին:

- Դժբախտաբար առայժմ աւելի բան մը չեմ կրնար ըսել, - կը պատասխանէ թուրքը, - տակաւին ժամանակ չեմ ունեցած սնտուկին մէջ գտնուած թուղթերը մի առ մի քննելու, բայց քանի մը օրէն այդ քննութիւնը կը կատարեմ, և վստահ եղէք, որ Հայկական խնդրին մասին տօսիէն ձեզի կը յանձնենք:

- Ի՞նչ միջոցաւ այդ թուղթերը հասած են Բէշիտ պէյի ձեռքը:

- Ատիկա պէտք է իրեն հարցնել, մենք տեղեկութիւն չունինք: Սաչափը գիտեմ, որ սնտուկին մէջ կայ նաև շատ մը ծանօթ իթթիհատականներու մասին տրուած ժուռնալներ:

Գալֆայեան և Սիրուսի տեսնելով, որ աւելի տեղեկութիւն կարելի պիտի չըլլայ առնել, կը մեկնին խմբագրատունէն:

Գալֆայեան կ'ուղղուի դէպի Մաքրիզիլը երթալու համար, իսկ Սիրուսի կը փութայ Բերա, Համալ պաշի փողոցը, «Ազատամարտ» խմբագրատունը:

Հո՞ն հաւաքուած են Ակնուսի, Շահրիկեան, Ջարդարեան, Վահան Փափազեան և ուրիշներ:

Սիրուսի կը պատմէ իր լսածները թիւ 17 տօսիէին մասին:

Ամէնքն ալ կը յուզուին այս իրողութիւնը իմանալով: Բայց ամենէն աւելի Վահան Փափազեանն է, որ չափազանց կը խռովի:

Ինք թէ՛ Քաղաքական ժողովի անդամ է, թէ՛ Հարստահարութեանց յանձնաժողովի:

- Արդեօք մեր մէջէ՞ն է մատնիչը, - կը գոչէ, - բայց ո՞վ...

- Թերևս Պատրիարքարանի պաշտօնեաներէն մէկն է, - դիտել կուտայ ուրիշ մը:

- Պատրիարքարանի պաշտօնեաները այդ գաղտնի թուղթերը չեն տեսներ, ի բաց առեալ մէկէն:

- Թերևս այդ մէկն է...

- Պէտք է, որ այս խնդիրը անմիջապէս հաղորդեմ իմ պաշտօնակիցներուս, - կը յայտարարէ Վահան Փափազեան:

Եւ արդարև, երկու օր ետքը, երբ Վարչութիւնը նիստ գումարած էր, խնդիրը կը պարզէ:

Միւս կողմէ դաշնակցականները կ'ուզեն ձեռք անցընել տօսիէն և դիմում կ'ընեն իթթիհատական պետին ու իր խոստումը կը յիշեցնեն իրեն:

- Դեռ թուղթերը քննելու ժամանակ չունեցայ, - կը պատասխանէ:

Երկու-երեք օր ետքը նոր դիմում, և միևնոյն պատասխանը: Երրորդ անգամ, երբ կը դիմեն՝

- Սնտուկը ուրիշի մը յանձնուած է, - կը պատասխանէ, - այլևս այդ խնդրով չեմ զբաղիր կոր:

Եւ այսպէս խորհրդաւոր տօսիէն կը մնայ ծածուկ:

Նոյնքան ծածուկ կը մնայ նաև այդ գաղտնի թուղթերը հաղորդող անձը:

Վարչութիւնը իր քննութիւնները կ'ընէ առանց որևէ հետք մը, որևէ նշան մը ունենալու ձեռքը: Եդուարդ Շիրինեան, որ առաջին անգամ ձայն բարձրացուցած և իբրև ազգային երեսփոխան գրաւոր կերպով քննութիւն պահանջած էր Վարչութեանէն թիւ 17 խաֆիէին մասին, կը հրաւիրուի Վարչութեան կողմէ, որպէսզի այդ խնդրին նկատմամբ իր գիտցած տեղեկութիւնները հաղորդէ:

Շիրինեան կը հաստատէ Հաղորդուած գաղտնի թուղթերուն գոյութիւնը, բայց թիւ 17 խաֆիէին ինքնութեան մասին լուսաբանութիւն չկրնար կամ չուզեր տալ:

Կասկածները հետզհետէ կը ծանրանան Պատրիարքարանի պաշտօնեաներէն մէկուն վրայ, որ իր գործին բերումով միշտ յարաբերութեան մէջ էր թուրք պաշտօնական շրջանակներու հետ:

Նոյնիսկ Վարչութեան անդամներէն ոմանք կը կասկածին իրմէ:

– Ինչո՞ւ զինքը չեն հարցաքններ անգամ մը, – կ'ըսէին ուրիշներ ալ, որոնք կատարեալ Համոզում գոյացուցած էին անոր յանցաւորութեան մասին:

Այդ կասկածներուն տեղի տուած էին յիշեալ պաշտօնեային չափազանց թրքասիրութիւնը և իր վարուելակերպը թուրքերու հետ:

Ուրիշ խնդիր մըն ալ կը յուզէր միտքերը.

«Ի՞նչ թուղթեր կային նախարարին սնտուկի մէջ գտնուած թիւ 17 տօսիէին մէջ»:

Այս մասին ալ կատարեալ անորոշութիւն կը տիրէր:

Ոմանք անկարևոր թուղթեր կը նկատէին զանոնք, ուրիշներ մեծ կարևորութիւն կուտային:

– Պօղոս փաշայի հետ փոխանակուած բոլոր գաղտնի թղթակցութիւններուն օրինակներն են եղեր, – կը հաւաստէր մին:

– Դեսպանատուններու տրուած յիշատակագիրներու պատճէններն են, – կը պնդէր ուրիշ մը:

– Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ այսչափ կարևոր թուղթեր պաշտօնեաներուն ձեռքը կ'անցնին... աս ի՞նչ անհոգութիւն է այս, – կը քննադատէր երրորդ մըն ալ:

– Այս գործին մէջ Վարչութիւնն ալ պատասխանատու է, Պատրիարքն ալ...

– Պատրիարքարանը կատարեալ քառս մըն է...

– Խելքը գլուխը մարդ չիկայ մէջտեղ:

– Ամէն մարդ անձնական շահը կը փնտռէ միայն և կը ջանայ քիւլահ մը խափմիշ ընել:

– Ազգին ճակատագիրը բախտախնդիրներուն ձեռքը մնացեր է:

Բոլոր այս դիտողութիւնները բնականաբար չէին լուսաբաներ խնդիրը, բայց չափազանց կը գրգռէին միտքերը:

ԳԼՈՒԽ Դ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ

Գրասեղանին առջև, թիկնաթոռին մէջ իր զանգուածային մարմինը փռած, Բիւզանդ Քէչեան իր շաքաթական «Ինչ կ'անցնի կը դառնայ»-ն գրելու զբաղած էր:

Այս կարևոր գործողութիւնը մտքի կատարեալ Հանդարտութեամբ կատարելու համար «Բիւզանդիոն»-ի խմբագրապետը արգելափակած էր իր դուռը ո՛չ միայն ձանձրանալի հիւրերու դէմ, այլ նոյնիսկ խմբագիրներու համար:

«Միայն ծանուցումի կամ ուրիշ դրամական գործի համար եթէ մէկը գայ՝ թող տուէք ներս մտնելու», – պատուիրած էր:

Այս պատուէրին գործադրութիւնը յանձնուած էր Արշակ Ալպոյաճեանի, որ դուրսի սրահը, փոքրիկ գրասեղանի մը առջև թաղուած էր հաշուական կնճիռներու մէջ:

Յանկարծ ներս մտաւ Արիկ Մուլահեաճեան և արագ քայլերով ուղղուեցաւ դէպի Քէչեանի սենեակը: Բայց մէկէն Ալպոյաճեան կեցուց զայն.

– Մի՛ երթար, էֆէնտին խմբագրական կը գրէ կոր...

– Բայց կա՛ց, կարևոր բան մը պիտի ըսէի:

– Ետքը կ'ըսես կամ ինձի ըսէ՛ ըսելիքդ:

– Չըլլար, քեզի չեմ կրնար ըսել, – պատասխանեց Մուլահեաճեան խորհրդաւոր ձևով մը:

– Ուրեմն կը սպասես մինչև որ խմբագրականը աւարտի:

Մուլահեաճեան ստիպուեցաւ համակերպիլ և եկաւ Ալպոյաճեանի գրասեղանին քով նստելու:

– Ի՞նչ նոր լուր կայ, – հարցուց այս վերջինը:

– Քանի մը լուրեր կան... բայց թերթին մէջ հրատարակուելիք բաներ չեն:

Նոյն միջոցին Աշոտ Քէչեան մօտեցաւ երկու խօսակիցներուն:

– Պատրիարքարանէ՞ն կուգաս կոր,– Հարցուց՝ խօսքը Աբի-
կի ուղղելով:

– Ձէ, Ղալաթիոյ Խորհրդարանէն: Վարչութիւնը նիստ ու-
նէր այսօր:

– Թիւ 17 խաֆիէի խնդրի՞ն համար:

– Ձէ, բայց անով ալ զբաղեցան:

– Նոր տեղեկութիւն մը կա՞յ:

– Որոշ, վճռական բան մը չկայ,– պատասխանեց Աբիկ,– է-
ֆէնտիմ, այս խնդիրը այդ ձևով քննել չըլլար: Այդ տեսակ
քննութիւնները ծածկաբար կատարելու է, վարպետութեամբ
գործելու է... ասոնք ամէն բան մէջտեղ կը դնեն կոր... այս ձևով
եթէ տասը տարի ալ աշխատին՝ արդիւնք մը ձեռք չեն կրնար
բերել:

– Իրա՞ն է, որ կասկածներ կան Վահէ Գափլանեանի մա-
սին,– Հարցուց Աշոտ:

– Ես ալ ատանկ բան մը լսեցի, այդ տեսակ խօսքեր կ'ըսէին
կոր, բայց որոշ բան մը չկայ, ես չեմ հաւատար այդ ըսուածնե-
րուն:

Վահէ Գափլանեան Պատրիարքարանի քարտուղար մըն էր:
Քանի մը օրէ ի վեր իր անունն ալ սկսած էր յեղյեղուիլ իբրև
կասկածելի:

– Շատ հաւանական է, որ ան ըլլայ,– ըսաւ Աշոտ:

– Ի՞նչ հաւանականութիւն կայ,– գոչեց Ալպոյաճեան,–
փաստ, ապացոյց ունի՞ս այդ տեսակ զրպարտութիւն մը ընելու
համար:

– Կա՛մ ան է և կա՛մ քու բարեկամդ:

«Քու բարեկամդ» խօսքով Աշոտ կ'ակնարկէր Պատրիարքա-
րանի այն պաշտօնեային, որ յարաբերութեան մէջ էր թրքական
չրջանակներու հետ:

– Պարապ խօսքեր,– պոռաց Ալպոյաճեան,– մարդ այդ տե-
սակ բան մը ըսելու համար որոշ ապացոյցներ պէտք է ունենայ:

– Ապացոյցներ կան, բայց կը ծածկեն կոր, չեն ուզեր կոր, որ
մէջտեղ ելլայ:

– Ինչո՞ւ համար...

– Որովհետև ուրիշ մարդիկ ալ կան գործին մէջ... ասիկա

մէկ-երկու հոգիի գործ չէ, ասիկա կազմակերպուած մարմինի
մը գործն է, որուն մէջ Վարչութեան մէկ քանի անդամներն ալ
մատ ունին... ահա ճիշդ ասոր համար է, որ Վարչութիւնը գոր-
ծը խեղդել կ'ուզէ կոր:

– Աշո՛տ, տղայական խօսքեր մի՛ ըներ,– ըսաւ Աբիկ,–
Վարչութիւնը գործը խեղդել չուզեր կոր, այլ միայն գործը
չկրնար կոր վարել... Թող ինծի յանձնեն այս գործին քննութիւ-
նը, և այն ատեն կը տեսնէք, թէ յանցաւորը ինչպէս երևան կը
հանեմ:

– Դուն քու կողմէդ ըրէ ընելիքդ:

– Ինչո՞ւս պէտք, քանի որ ինծի բան մը ըսող չիկայ:

– Ազգասիրաբա՛ր աշխատէ:

– Ազգասիրութիւնը փոր չկշտացներ... ես իմ գործս թողում,
ատո՞՞վ զբաղիմ:

– Այդ թիւ 17 խաֆիէն Պատրիարքարանէն դուրս ուրիշ տեղ
փնտռելու է,– դիտել տուաւ Ալպոյաճեան:– Ինչո՞ւ անպատճառ
կ'ենթադրէք, որ թուղթերը Պատրիարքարանէն գողցուած և ըն-
դօրինակուած են:

– Հապա ո՞ւր տեղէն կ'ուզես, որ գողցուին:

– Այդ թուղթերը, ինչպէս կ'ըսուի, դեսպանատուններու
տրուած յիշատակագիրներ են, ուրեմն կրնայ ըլլալ, որ այդ
դեսպանատուններէն առնուած են, պէտք չի կայ անպատճառ
յանցանքը Պատրիարքարանի վրայ բեռցնել:

– Դուն պարզապէս այդ ենթադրութիւնը կ'ընես քու բարե-
կամիդ վրայէն կասկածները հեռացնելու համար,– ըսաւ Աշոտ:

– Խենթ խօսքեր մի՛ ըներ,– պոռաց Ալպոյաճեան:

– Արչակին ըսածը անկարելի բան մը չէ,– միջամտեց Ա-
բիկ,– կրնայ ըլլալ, որ այդ թուղթերը դեսպանատունէ մը առ-
նուած են... արդէն ատանկ խօսք մը դարձաւ:

Նոյն միջոցին սենեակին դուռը բացուեցաւ, և երևան ելաւ
Բիւզանդ Քէչեանի խոշոր փորը:

– Աշո՛տ, սըւոնք ներս տուր,– գոչեց «Բիւզանդիոն»ի խըմ-
բագրապետը՝ ձեռքը բռնած թուղթերը երկարելով:

Աշոտ փութաց հայրական հրամանը կատարելու:

Քէչեանի երևումը վերջ տուած էր վիճաբանութեան: Աբիկ

Մուպահեան հեռացաւ Արշակին քովէն ու գնաց Քէչեանի սենեակը իր «շատ կարևոր» ըսելիքները հաղորդելու:

Արշակ վերսկսած էր իր թուարանական հաշիւներուն՝ երբ ներս մտաւ Ներսէս Օհանեան:

– Տեսա՞ր մի եղած խաղբուլթիւնը, – գոչեց բարկաճայթ ձայնով մը:

– Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ, – հարցուց Արշակ՝ իր աշխատութիւնը ընդհատելով:

– Ի՞նչ պիտի ըլլայ, Վարչութիւնը պարզապէս մեր քիթին կը խնդայ կոր... Թեւեռնէն բռնելու, ամէնքն ալ դուրս նետելու է, ուրիշ ճար չի կայ:

– Բայց արդէն հրաժարած չե՞ն:

– Հրաժարած՝ սակայն նորէն իրենց ընելիքը կ'ընեն կոր:

– Նոր բա՞ն մը կայ:

– Արիկ Մուպահեանը չըսա՞ւ, – հարցուց Օհանեան:

– Ձէ՛, բան մը չըսաւ, – պատասխանեց Արշակ:

– Ան անանկ է արդէն, ինչ որ ըլլայ՝ ծածուկ կը պահէ, ծածկելով-ծածկելով չէ՞, որ խնդիրը մինչև այստեղ բերինք... բայց ես ա՛լ պիտի չհամբերեմ, ամէն բան մէջտեղ պիտի հանեմ:

Եւ Օհանեան ձեռքը ծոցին զարնելով՝ շարունակեց.

– Ամբողջ հոս ես տօքիւմանները... ալ կը բաւէ, որչափ որ մեզի խաբեցին... պարզապէս դաւաճանութիւն է ամենուն ալ ըրածը:

– Բայց, Օհանեան էֆէնտի, խնդիրը ի՞նչ է, – հարցուց Արշակ:

Օհանեանի պոռալու ձայնէն հետաքրքրուած Պարոյր Քէչեան իր սենեակէն դուրս ելաւ և մօտեցաւ երկու խօսակիցներուն:

– Եթէ դուք լուռ մնաք, եթէ չի գրէք աս եղածները, պիտի ըսեմ, որ դուք ալ անոնց միացած էք կամ անոնցմէ կաշառուած էք, – գոչեց Օհանեան՝ խօսքը Պարոյրին ուղղելով:

– Խնդիրը նախ բացատրէ՛, – պնդեց Արշակ:

– Խնդիրը այն է, որ Վարչութիւնը բոլորովին ծածկել կ'ուզէ կոր թիւ 17 խաֆիէի խնդիրը: Քննութիւնը վերջացուց առանց եզրակացութեան մը յանգելու. արդէն եղածը քննութիւն չէր, այլ կատակերգութիւն...

– Բայց ի՞նչ կ'ուզէիր, որ ընէր, քանի որ հետք մը չի կար մէջտեղ:

– Հետք չի կա՞ր մի... ո՞վ կ'ըսէ կոր, միայն թէ ամէն բան ըրին, ամէն միջոցի դիմեցին խնդիրը խեղդելու համար... որովհետեւ եթէ այդպէս չընէին՝ իրենց աղտոտութիւնները մէջտեղ պիտի ելլար:

Եւ Օհանեան ուղղուեցաւ Բիւզանդ Քէչեանի սենեակը:

Այս վերջինը գլուխ գլխի, խորհրդաւոր տեսակցութեան մը բռնուած էր Արիկ Մուպահեանին հետ:

Նորեկին մուտքը վերջ տուաւ այդ տեսակցութեան:

– Հրամանեցէ՛ք, նստեցէ՛ք, Օհանեան էֆէնտի, – ըսաւ Քէչեան աթոռ մը ցոյց տալով:

Օհանեան նստաւ և գրպանէն խոշոր թաշկինակ մը հանելով՝ ճակատը սրբեց:

– Սիկառա չունիմ, որ քեզի հրամցնեմ, – ըսաւ Քէչեան, – ես չեմ ծխեր:

– Քու չծխելդ պատճառ մը չէ, որ փաքէթ մը սիկառա չունենաս հիւրերու համար, – դիտել տուաւ Օհանեան:

– Եթէ ամէն եկողին սիկառա հրամցնեմ, օրը երեք փաքէթը չօգտեր:

– Թո՛ղ տասը փաքէթ ըլլայ, ի՞նչ կ'ըլլայ եղեր, – գոչեց Օհանեան, – պաթմի՞չ կ'ըլլաս:

Եւ գրպանէն սիկառէթի տուփը հանելով՝ հատ մը Արիկ Մուպահեանին հրամցուց և հատ մըն ալ ինք վառեց:

– Սիկառայէն վազ անցանք, փա՛ռք Աստուծոյ, փաքէթ մը սիկառա առնելու չափ դրամ ունիմ, – շարունակեց Օհանեան, – ես քենէ ուրիշ բան ուզելու եկած եմ...

– Ի՞նչ բան, – հարցուց Քէչեան, – հիւանդանոցի համար նորէն բա՞ն գրել պիտի տաս... ասկէց վերջը գիտցած ըլլաս, որ հիւանդանոցին մասին ինչ որ գրուի՝ դրամով է:

– Հիւանդանոցի խնդիր չի կայ... դուն աս լրագիրը իբրև հանրօգուտ գո՞րծ կը հրատարակես կոր, թէ՞ պարզապէս խանութ բացած ես:

– Երկուքը միասին, – պատասխանեց Քէչեան խնդալով:

– Եթէ հանրօգուտ թերթ մըն է «Բիւզանդիոն»ը, պէտք է որ

իր պարտականութիւնը կատարէ, միայն դաշնակցականները քննադատելով գործ չլմննար, քննադատելիք ուրիշ շատ բաներ կան, անոնց համար ինչո՞ւ լուութիւն կը պահես կոր:

– Ըսէ՛, տեսնե՞ք, ի՞նչ բան կայ քննադատելիք:

– Եղած խաղըութիւնները:

– Չե՞ս գիտեր կոր... Նախ քովինիդ հարցուր, – գոչեց Օհանեան՝ Աբիկ Մուպահեաճեանը ցոյց տալով:

Այս վերջինը մօրուքը շոյելով պատասխանեց.

– Ես բան մը չեմ գիտեր կոր:

– Ամէն բան գիտես, բայց չգիտնալ կը ձևացնես... այսօր Ղալաթիոյ Նորհրդարանը չէի՞ր Վարչութիւնը նիստ գումարած ատեն:

– Միջոց մը հանդիպեցայ:

– Թիւ 17 խաֆիէին խնդիրը ինչպէս ծալլեցին, ծրարեցին, բաժնը դրին, – գոչեց Օհանեան, – այդ խաղըութեան համար բան մը պիտի չգրէ՞ք ձեր թերթին մէջ:

– Ես գրելու համամիտ չեմ, – պատասխանեց Աբիկ:

– Ինչո՞ւ համար չգրուի... որպէսզի դաւաճանները քաջալերուի՞ն:

– Այդ տեսակ խնդիրները հրապարակով քննադատելիք բաներ չեն, որչափ ծածուկ մնան, այնչափ աղէկ կ'ըլլայ... ի՞նչ օգուտ թերթերու մէջ գրելով:

– Անանկ է, չգրենք, որ անոնք ալ ուզածնուն պէս ազգին ճակատագրին հետ խաղան:

– Իմ կարծիքս այս է, – ըսաւ Աբիկ, – այսուհանդերձ Քէչեան էֆէնտիին գիտնալիք բանն է... Թերթը իրն է, ինչ որ յարմար տեսնէ՛ ան կ'ընէ:

– Ի՞նչ կ'ուզես, որ գրենք, – հարցուց Քէչեան:

– Վարչութիւնը վերէն վար աղէկ մը լուալու է:

– Լաւ ազդեցութիւն չընե՞ր, Օհանեան՝ էֆէնտի, – դիտել տուաւ Աբիկ:

– Շատ ալ աղէկ ազդեցութիւն կ'ընէ, արդէն խնդիրը միայն թիւ 17 խաֆիէին վրայ չէ, դեռ ինչե՛ր, ինչե՛ր կ'ըլլան կոր մութիւն մէջ, խապար ունի՞ք... ի՞նչ էնթրիկներ կը դառնան կոր, ի՞նչ խաղեր կը խաղցուին կոր... նա՛, գրպանս լեցուն է թուղթերով...

Եւ Օհանեան կրկին իր գրպանը ծծծեց:

– Ի՞նչ են այդ թուղթերը, մենք ալ տեսնանք, – ըսաւ Քէչեան:

– Դեռ ժամանակը չէ, քիչ մըն ալ սպասեցէք ու այն ատեն կը տեսնաք... Ազգային ժողովին կը սպասեմ կոր ամէն բան մէջտեղ հանելու համար:

– Այդ քու գիտցածներդ ես ալ գիտեմ, – ըսաւ Աբիկ, – միայն թէ խոհեմութիւն չեմ համարե՞ր հրապարակ հանելու, որովհետեւ գործը կը վնասուի:

– Ի՞նչ գործ, – գոչեց Օհանեան:

– Բարենորոգումներու գործը:

– Բարենորոգումներու գործը արդէն ջուրը պիտի խնայ, եթէ այս մարդոց ձեռքը մնաց:

– Այդպէս չէ, մարդիկը կրցածնուն չափ կ'աշխատին կոր:

– Եթէ դուք գրել չուզէք, ես ալ ուրիշ թերթի մէջ գրել կուտամ, – ըսաւ Օհանեան ոտքի ելլելով:

– Ինչ որ պիտի ըսէք՝ ուղղակի իրենց ըսէք, առանց հրապարակային քննադատութիւններ ընելու, – թելադրեց Աբիկ:

– Կը կարծես, որ չե՞մ ըսած, – գոչեց Օհանեան, – պողապողազի կռիւ ըրին հետերնին, բայց ինչ օգուտ, իրենց գիտցածէն շաշմիշ չեն ըլլար կոր... ամէնքը իրենց տօլապը ունին դարձնելիք, ազգին վրայ խորհողը ո՞վ է որ... ամենէն աղէկը Ջօհրապը չէ՞, անոր վրայ ալ շատ ըսելիքներ կան... բերանս բանալ մի տաք:

Օհանեան ոտքի ելաւ, «մնաք բարով» ըսաւ և հեռացաւ «Բիւզանդիոն»ի խմբագրատունէն:

Իր մեկնելէն ետքը Քէչեան ըսաւ Աբիկին.

– Աս Օհանեանն ալ ուղղամիտ մարդ է, բայց ամէն խնդիր չափազանցութեան կը տանի... այդ թիւ 17 խաֆիէին վրայ ի՞նչ կարելի է գրել, քանի որ ձեռքերնիս որոշ սպացոյց մը չունինք:

– Անոր ըսածը միայն թիւ 17ի խնդրին համար չէ, անիկա ամբողջ Վարչութեան գործունէութիւնը կ'ուզէ քննադատել, բայց հիմա ատենը չէ, – պատասխանեց Աբիկ, – ես ալ շատ բաներ գիտեմ, բայց ձայն չեմ հաներ կոր:

ԳԼՈՒԽ Ե
ԶՕՀՐԱՊ ԵՒ ԹԱԼԷԱԹ

Նոյն օրն իսկ, ուր «Բիւզանդիոն»ի խմբագրատան մէջ այս խօսակցութիւնները տեղի կ'ունենային, Գրիգոր Զօհրապ, երբ իր գրասենեակին մէջ նստած կարգ մը դատական թուղթերու քննութեամբ զբաղած էր, յանկարծ թէլէֆօնին զանգակը հնչեց:

Զօհրապ մեքենական շարժումով մը առաւ թէլէֆօնին փողը և ականջին մօտեցուց:

– Այո՛, ի՞նչ կ'ուզէք, – Հարցուց:

– Զօհրապ էֆէնտիի գրասենեակն է այդտեղ, – Հարցուց ձայնը:

– Այո՛:

– Զօհրապ էֆէնտին հո՞ղ է:

– Ես եմ, դուք ո՞վ էք...

– Թալէաթն եմ, – ձայն տուաւ գործիքը: – Անպատճառ կ'ուզեմ քեզ տեսնել այսօր: Ե՞րբ կրնաս գալ Պապը Ալի:

– Անմիջապէս, եթէ կարևոր է:

– Այո՛, շատ կարևոր, կը խնդրեմ իսկոյն կառք նստեցէք և եկէք, ձեզի կը սպասեմ կոր:

– Գլխուս վրայ:

Զօհրապ դատական թուղթերը ծրարեց, պարութային մէջ զետեղեց, յետոյ իր գրագրին քանի մը հրահանգներ տալէ ետքը դուրս ելաւ Լաճիվէրտ խանէն, ուր կը գտնուէր մեծանուն փաստաբանին գրասենեակը:

Փողոցը հանդիպած առաջին պարապ կառքը կեցուց, մէջը նետուեցաւ և՛

– Պապը Ալի, – հրամայեց կառապանին:

Այս վերջինը ձիերը մտրակեց, և կառքը ճամբայ ելաւ:

Զօհրապ կառքին անկիւնը ընկողմանած, ոտքը ոտքին վրայ, սիկառէթ մը վառեց և սկսաւ ծխել:

«Ի՞նչ կայ արդեօք, որ Թալէաթը այսպէս, մէկէն ի մէկ զիս տեսնել կ'ուզէ, – կը մտածէր, – երէկ իրիկուն մինչև կէսգիշեր միասին էինք, ու որևէ կարևոր խնդրի մասին խօսք չեղաւ, անպատճառ անակնկալ բան մը ըլլալու է...»:

Եւ այս մտածումը իր միտքը կը լլկէր: Ժամանակէ մը ի վեր Զօհրապ իթթիհատական պետերու մասին երկիւղներ ունէր: Այլևս ո՛չ անոնց բարեկամութեան և ո՛չ ալ խոստումներուն կը հաւատար: Կը զգար, որ այդ մարդիկը երեսանց բարեկամ ձեռնալով հանդերձ հայերուն՝ ներքնապէս կ'ատէին զանոնք, և այս ատելութիւնը հետզհետէ որոշ ձև մը կ'առնէր ու կ'սպառնար գործնական հողի վրայ փոխադրուելու:

Բարենորոգումներու հարցը, այս առթիւ հայերուն բռնած դիրքը, Պալքանեան պատերազմին ատեն Կիլիկիոյ մէջ փորձուած կարգ մը ապստամբական շարժումներ, հայերու համակրանքը դէպի պալքանեան քրիստոնեայ ազգերը և վերջապէս Եւրոպայի մէջ հայ պատգամաւորութեան գործունէութիւնը մէյմէկ պատճառներ եղած էին այդ ատելութիւնը հետզհետէ աւելի գրգռելու:

Պոլսոյ մէջ ալ ազգային իշխանութիւնը ակնյայտնի գործունէութեան մէջ էր հայաբնակ գաւառներու հիմնական բարենորոգութիւնը ձեռք բերելու համար Եւրոպական պետութիւններու միջնորդութեամբ:

Այլևս թուրք կառավարութեան համար գաղտնիք մը չէր, թէ Պատրիարքարանը այս մտքով ուղղակի յարաբերութեան մէջ էր մեծ պետութիւններու դեսպանատուններուն հետ, և թէ այդ յարաբերութեան գլխաւոր միջնորդն էր Գրիգոր Զօհրապ:

Կառքին մէջ բոլոր ասոնք աչքի առջև բերելով՝ Զօհրապ տեսակ մը մտահոգութեան մատնուեցաւ:

«Արդեօք նոր յայտնութիւն մը եղա՞ծ էր, արդեօք թիւ 17 խաֆիէ՞ մըն ալ մէջտեղ ելած էր»:

Այս մտածումը կը չարչարէր Զօհրապի ուղեղը:

«Թերևս ո՛չ այս, ո՛չ այն է, այլ լոկ անձնական խնդրի մը համար զիս տեսնել կ'ուզէ, – խորհեցաւ, – և ես պարապ տեղը միտքս կը չարչարեմ»:

Ու վանելու համար իր մտահոգութիւնը՝ նոր սիկառէթ մը վառեց:

Երբ կառքը հասաւ Պապը Ալի, էֆէնտիները արդէն կամաց-կամաց կը մեկնէին:

Զօհրապ կառապանին պատուիրեց, որ սպասէ, ներս մտաւ և

չիտակ ուղղուեցաւ դէպի ներքին գործերու նախարարութիւնը՝ աջ ու ձախ բարեկներ տալով:

Նախարարին սենեակին դրան առջև դռնապան մը կը սպասէր: Մարդը Ձօհրապը տեսնելուն պէս ոտքի ելաւ և յարգանքով բարեկեց:

– Թալէաթ պէյը հո՞ն է, – հարցուց Ձօհրապ:

– Նորին վսեմութիւնը ներսն է, – պատասխանեց միւսը:

– Առանձի՞ն է:

– Այո՛, առանձին է, կրնաք ներս մտնել, արդէն ապսպրեց, որ Ձեր բարձրութիւնը գալուն պէս ներս մտցնեմ:

Եւ դռնապանը վարագոյրը վեր առաւ:

– Վա՛յ, Ձօհրա՛պ էֆէնտի, բարի եկաք, ես ալ ձեզի կը սպասէի կոր, – գոչեց Թալէաթ զայն տեսնելով:

– Թէլէֆօն ընելնուդ պէս ճամբայ ելայ, – պատասխանեց Ձօհրապ:

Եւ քանի մը վայրկեան աննշան խօսակցութենէ մը ետքը ներքին գործերու նախարարը ըսաւ.

– Շատ կարևոր խնդրի մը մասին կ’ուզեմ խօսիլ ձեզի հետ:

– Ձեզ մտիկ կ’ընեմ, – պատասխանեց Ձօհրապ:

– Սուրիացիներու հետ մեր բոլոր առկախ խնդիրները կարգադրեցինք փոխադարձ գիշորութիւններով և բարեկամաբար:

– Շատ լաւ ուրեմն, – պատասխանեց Ձօհրապ:

Թալէաթ ոտքի ելաւ, գնաց սենեակին դուռը կղպեց և վերադարձաւ իր թիկնաթոռը:

– Հիմա ծածկաբար քեզի առաջարկութիւն մը ունիմ ընելիք, – շարունակեց նախարարը՝ ձայնը քիչ մը ցածցնելով, – եկէ՛ք, սա հայկական խնդիրն ալ մէջերնիս կարգադրենք:

Ձօհրապ թեթեւ ցնցում մը ունեցաւ, բայց իր պաղարիւնութիւնը պահեց:

– Դժբախտաբար հայկական խնդիրը մենէ ելած է, – դիտել տուաւ, – և եւրոպական դահլիճներն են, որ կը զբաղին առով:

– Իրար չխաբենք... Պօղոս փաշայի պատգամաւորութիւնն է, որ եւրոպայի մէջ այդ խնդիրը կ’արծարծէ...

– Այդ պատգամաւորութիւնն ալ մեր իրաւասութենէն դուրս կը գտնուի և ուղղակի Ռուսիոյ մէջ գտնուած կաթողիկոսին կողմէ պաշտօնի կոչուած է և անոր անուսովը կը գործէ:

– Իսկ հոս ձեր Պատրիարքարանը բնաւ բան մը չընե՞ր:

– Մեր Պատրիարքարանը բոլորովին կրաւորական դեր մը կը կատարէ:

– Մեծ պետութիւններու դեսպանատուններուն հետ յարաբերութեան մէջ չէ՞:

– Այսինքն երբ դեսպաններէն մէկը որևէ խնդրի մը մասին տեղեկութիւն հարցնէ՝ բնականաբար ստիպուած է պատասխանելու:

– Ձօհրա՛պ էֆէնտի, զիրար խաբելու չաշխատինք, – գոչեց Թալէաթ սրտնեղած դէմքով, – մենք ամէն բանէ տեղեկութիւն ունինք... ասիկա դուք ալ գիտէք: Ամբողջ գաղտնի տօսիչներ կան ձեր խնդրին մասին: Պատրիարքարանի մէջ ինչ որ անցնի՝ դառնայ, մենք անմիջապէս լուրը կ’առնենք, նոյնիսկ դեսպանատուններու մէջ անցած-դարձածը գիտենք:

– Աւելի լաւ, մենք ծածուկ բան մը չունինք, մեր կատարած դերը այստեղ շատ աննշան է և կարևորութենէ զուրկ...

– Կ’ուզէ՞ք, որ ձեզի ըսեմ, թէ ո՞ւր էիք երէկ, – ըսաւ ներքին գործերու նախարարը՝ Ձօհրապի խօսքը ընդմիջելով, – նախ ուսուսական դեսպանատունը և յետոյ՝ գերմանական դեսպանատունը:

– Ճիշդ է, – խոստովանեցաւ Ձօհրապ:

– Ըսե՞մ նաև, թէ ինչու գացած էիք հոն. յիշատակագիր մը ներկայացնելու բարենորոգումներու խնդրին համար և Անգղիոյ ու Գերմանիոյ օժանդակութիւնը խնդրելու: Իսկ գալով այդ յիշատակագրին՝ ահաւասիկ անոր մէկ օրինակը...

Եւ Թալէաթ գզրոցը բանալով՝ թուղթ մը ներկայացուց Ձօհրապին: Այս վերջինը իր պաղարիւնութիւնը պահելու համար հօր ճիգ մը ըրաւ, թուղթը առաւ, ակնարկ մը նետեց վրան ու վերադարձուց նախարարին:

– Ճիշդ չե՞ն ըսածներս, – հարցուց Թալէաթ:

– Շատ շիտակ են:

– Ես ձեզի չեմ դատապարտեր այս դիմումներուն համար, անշուշտ իրաւունք ունիք ձեր շահերը պաշտպանելու ձեր գիտցած ձևով, միայն թէ լաւագոյն միջոցը չէ, որ ընտրած էք:

– Ի՞նչ ըսել կ’ուզէք:

– Ըսել կ'ուզեմ, որ մենք մեզի և բարեկամաբար կրնանք ամեն բան կարգադրել առանց օտար միջամտութեան, ինչպէս ըրինք սուրիացիներուն հետ: Իմ զգացումներս հայերու մասին յայտնի են և պէտք չի կայ նոր փաստերու, որպէսզի ապացուցանեմ, թէ ես միշտ ձեր բարեկամը եղած եմ: Եթէ երկու կողմէն անկեղծօրէն մօտենանք իրարու, խնդրին լուծումը շատ կը դիւրանայ և օտար միջամտութեան տեղի չմնար: Օտար միջամտութիւնը մեր ներքին գործերուն մէջ ամենէն աւելի մեր ջիղերուն կը դպչի, և մենք ձեր ձեռքէն եկած ամէն բան պիտի ընենք, որպէսզի այդպիսի միջամտութիւն մը չըլլայ և եթէ, հակառակ մեր կամքին, ըլլայ իսկ, այն ատեն ամէն դժուարութիւն պիտի ստեղծենք, որպէսզի ձախողի, և այս պարագային դուք պիտի ըլլաք տուժողը:

– Բայց ի՞նչ ծառայութիւն կը սպասէք ինչ,– հարցուց Զօհրապ:

– Ամէն բան...

– Ես յանձնատողովի մը պարզ անդամն եմ, ես Պատրիարք չեմ, ո՛չ ալ Եւրոպայի պատուիրակութեան նախագահը:

– Ես գիտեմ, որ եթէ դու ուզես ամէն բան կրնաս ընել, Պատրիարքն ալ կը համոզես, պատուիրակութիւնն ալ, մի՞թէ պատուիրակութեան հետ յարաբերութեան մէջ չես...

Զօհրապ չպատասխանեց այս հարցումին, իսկ նախարարը շարունակեց.

– Մի՛ կարծեր, որ Եւրոպական պետութիւնները համաձայն են իրենց մէջ Արևելեան նահանգներու բարեկարգութեան մասին, և մեր կողմէ այս կամ այն պետութեան փոքրիկ զիջողութիւններ ընելով՝ կրնանք զանոնք իրարու դէմ հանել և գործը ամբողջովին վիժեցնել... Բայց այդ ծայրայեղութեան չենք ուզեր դիմել առ այժմ, որովհետև մենք ալ համոզուած ենք, որ բարեկարգութեան անհրաժեշտ պէտք կայ, ու այս վիճակը չկրնար այսպէս տևել, բայց բարեկարգութիւնը հարկ է, որ մեր ձեռքով կատարուի կառավարութեան և հայերու բարեկամական համաձայնութեամբ:

– Զեր ըսածը շատ աղուոր երազ մըն է,– պատասխանեց Զօհրապ:

– Այդ երազը կրնանք իրականութեան փոխել, իսկ հակառակ պարագային կը վախնամ, որ պիտի ստիպուինք ձեզի հանդէպ մեր բարեացակամ ընթացքը փոխել և տարբեր ընթացք մը բռնել... Մենք չենք կրնար ընդունիլ, որ պետութեան մէջ ուրիշ պետութիւն մըն ալ հաստատուի և ասոր համար, եթէ հարկ ըլլայ, ամէն բան աչք առած ենք, նոյնիսկ Թուրքիոյ կործանումը: Մեզի յուսահատական արարքներու մի՛ մղէք:

Նախարարը լռեց և Զօհրապին նայեցաւ իր խօսքերուն ազդեցութիւնը նշմարելու համար անոր դէմքին վրայ:

Զօհրապ մտածկոտ դէմք մը առած էր և յայտնի էր, որ ներքին յուզումի մը անձնատուր եղած էր:

Թալէաթ դարձեալ սկսաւ խօսիլ և ըսել, թէ հայերուն համար բարենորոգումներ ձեռք բերելու միակ միջոցն էր Թուրքերուն մօտենալ և Թողուլ եւրոպական տէրութիւններուն օձիքը:

– Անոնք ամէնքն ալ իրենց անձնական շահը կը հետապնդեն,– աւելցուց,– մենք ենք ձեր միակ բարեկամները:

– Ամէն պարագային,– պատասխանեց Զօհրապ,– ես առանձին չեմ կրնար ձեզի բան մը ըսել, պէտք է Պատրիարքին և ընկերներուս հետ խորհրդակցիմ:

– Իմ ըսածներս արդարացի չե՞ն թուիր քեզի:

– Անշուշտ ճշմարտութիւններ կան անոնց մէջ:

– Ես կ'ըսեմ, թէ ամէնքն ալ ճշմարիտ են:

Թալէաթ աւելի մտերմական շեշտ մը դրաւ իր խօսակցութեան մէջ և սկսաւ հարցուփորձել Զօհրապը մեծ պետութիւններու դեսպաններու տրամադրութեան մասին:

Զօհրապ մէկ քանի տեղեկութիւններ հաղորդեց՝ խորհելով, թէ ատոնք հայկական դատին չէին կրնար վնասել:

Ի փոխարէն Թալէաթ ևս Թուրք պետութեան տեսակէտը պարզեց, ըսաւ, թէ Հայկական բարենորոգումներու համար մինչև որ աստիճան զոհողութիւններ կրնային ընել, և այլն:

Յետոյ իրարու հետ կարծիքի փոխանակութիւններ ըրին, թէ ի՞նչ հիման վրայ կարելի էր բանակցութիւնները սկսիլ:

Ի վերջոյ Զօհրապ ոտքի ելաւ և մեկնեցաւ:

– Այս գիշեր Սէրբըլը տ'Օսիան իրարու հետ կը տեսնուինք,– ըսաւ Թալէաթ՝ մտերմօրէն Զօհրապի ձեռքը սեղմելով:

Այս վերջինը արագ քայլերով անցաւ Պապը Ալիի նրբանցքներէն և դուրս ելաւ:

Իր կառքը կը սպասէր, Ձօհրապ ժամացոյցը նայեցաւ և կառապանին հրամայեց.

– Դէպի Բերա:

Կառքին մէջ դարձեալ մտածումի մէջ թաղուեցաւ: Թալէաթի հետ ունեցած տեսակցութիւնը զինքը չափազանց վրդոված էր:

«Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ մեր բոլոր գաղտնիքները այսպէս կ'իմանայ, – կը մտածէր, – արդեօք լրտեսներով պաշարուած ենք»:

Եւ մտածումը ուղղուեցաւ դէպի թիւ 17 խաֆիէն:

«Թերևս ինքն է դարձեալ այս գաղտնիքները հաղորդողը: Յիշատակագիր մը կուտանք դեսպանատունները, և օրինակը իսկոյն կը հաղորդուի Թալէաթի. ինչպէ՞ս կարելի է ասիկա: Մերկէ առնուած է օրինակութիւնը, Պատրիարքարանէ՞ն, թէ՞ դեսպանատուններուն մէկէն, երկուքն ալ կարելի է»:

Յետոյ անդրադարձաւ Թալէաթի հետ ունեցած տեսակցութեան:

«Կարծեմ սխալ ըրի քիչ մը շատ առաջ երթալով, – խորհեցաւ, – պէտք էր, որ աւելի խոհեմ ընթացքի մը բռնէի... գրեթէ բանակցութեան սկսայ հետը, առանց այդպիսի պաշտօն մը կամ իրաւասութիւն մը ունենալու, բայց եթէ խոհեմ վարուէի, այն ատեն ալ կասկած պիտի հրաւիրէի վրաս»:

Ինչպէս ըսինք, այդ թուականին Ձօհրապ սկսած էր չափազանց յոռետես ըլլալ, իրա՛ւ է, որ կը շարունակէր աշխատիլ Հայկական բարենորոգումներու համար, բայց առանց համոզումի, առանց հաւատքի: Մտքի այդ տրամադրութեան ներքև իրեն համար Թալէաթի առաջարկը բոլորովին անընդունելի բան մը չէր թուեր իրեն:

«Եթէ վաղը Եւրոպական պետութիւններու միջև անհամաձայնութիւն մը ծագէր, և բարենորոգումներու հարցը մէկ կողմ ձգէին, ի՛նչ պիտի ըլլար մեր վիճակը:

Լաւագոյն չէ՞ր կարելի եղածին չափ խզում յառաջ չբերել իթթիհատի հետ»:

Այս մտածումներով տոգորուած՝ Ձօհրապ հասաւ իր բնակարանը, Այազ փաշայի կողմը:

Հետեւեալ օրն իսկ Ձօհրապ մանրամասնօրէն պատմեց Թալէաթի հետ իր տեսակցութիւնը Հարստահարութեանց յանձնաժողովի անդամներուն: Ասիկա բուռն վիճաբանութիւն մը առաջ բերաւ ժողովին մէջ:

Շատեր դատապարտեցին զինքը ինքնագլուխ այդպիսի բանակցութիւն մը կատարած ըլլալուն համար:

– Պէտք էր, որ նախապէս մեզի հետ խորհրդակցէիր, – կ'առարկեն:

– Բայց երբոր Թալէաթ զիս իր քով հրաւիրեց, չէի գիտեր, թէ ի՛նչ խնդրի համար էր:

– Երբ խնդիրը հասկցար, այն ատեն կրնայիր կարծիք չյայտնել:

– Տեսակցութիւնը պաշտօնական հանգամանք չունէր, գուտ մտերմական էր:

Ձօհրապ հաղորդեց նաև գաղտնի թուղթերուն Թալէաթի քով գտնուելուն պարագան:

Դարձեալ ցցուեցաւ, այս առթիւ, թիւ 17 խաֆիէին խորհրդաւոր գաղտնիքը:

Յանձնաժողովի անդամները ամէնքն ալ յուզուած էին:

– Ջարմանալի է, որ ազգային իշխանութիւնը տակաւին հետք մը չէ կրցած գտնել, – դիտել տուաւ մին:

– Կարծեմ այս անգամ որոշ հետք մը գտած են, բայց շատ գաղտնի կը պահեն կոր, – ըսաւ ուրիշ մը:

– Թող ուզածնուն չափ գաղտնի պահեն, բայց գործ մը տեսնեն: Եթէ մեր գաղտնիքները, մեր խօսածները և գրածները այսպէս կառավարութեան ձեռք պիտի անցնին, մենէ ոչ մէկը պիտի ուզէ իր պաշտօնը շարունակել:

– Բնականաբար... ինչո՞ւ մեր անձը վտանգենք:

– Պէտք է ստիպել Վարչութիւնը, որ արագ և ազդու կերպով գործէ:

– Այս աթոռին վրայ նստողը պէտք է ամէն անձնական նկատում մէկ կողմ դնէ և ամէն վտանգ աչքը առնէ, – գոչեց Շահրիկեան:

Շահրիկեանի այս խօսքերը լիճը նետուած քարի մը ազդեցութիւնը ըրին. բոլոր գորտերը լռեցին:

ԳԼՈՒԽ Զ
ՄԵԾ ԱՐԿԱԾԱԽՆԴԻՐ ՄԸ

Այդ առտուն, երբ Աստիկ Մարկոսեան խնամուած արդու-
զարդ մը ընելէն ետքը տունէն դուրս ելաւ և գրպանները քննու-
թեմէ մը անցուց, շատ անհաճոյ անակնկալ մը ունեցաւ:

Գրպաններուն մէջ հազիւ 7-8 դուրուշ մնացած էր:

Նախորդ իրիկուն տակաւին բաւական կլորիկ գումար մը, 4
5 ոսկի ունէր քովը, ինչպէ՞ս այդ փայլուն ոսկիները փոխուած
էին փոքրիկ արծաթ դրամներու:

Աստիկ Մարկոսեան չէր կրնար լուծել այս հարցը, որովհետև
յիշողութիւնը իրեն օգնութեան չէր գար:

Տարտամորէն կրցաւ մտաբերել, թէ ծանօթներու հետ շատ
մը քօնեաք խմելէ ետքը, մէկ-երկու ընկերներով ճաշ ըրած էր և
յետոյ երգեցիկ սրճարան մը գացած էր:

«Կ'երևայ, որ բոլոր ըմպելիներուն և ճաշերուն դրամները ես
վճարած եմ», — եզրակացուց:

Յետոյ ինքնին խորհեցաւ.

«Դրամին ինչպէս ծախսուելը խնդիր չէ և չարժեք ասոր հա-
մար միտք յոգնեցնել. աւելի կարևոր խնդիր մը կայ, այն է՝ կոր-
սուած կամ ծախսուած դրամին տեղը լեցնել: Ատոր վրայ մտա-
ծենք»:

Ո՞վ էր Աստիկ Մարկոսեան:

Կ'արժէ, որ զինքը քիչ մը մանրամասնօրէն ներկայացնենք
մեր ընթերցողներուն:

Հազիւ 38-39 տարեկան, բարեձև ու միջահասակ, համակրե-
լի դէմքով երիտասարդ մըն էր, շագանակագոյն պիտերով ու
քիչ մը ճաղատ ճակտով:

Մասնաւոր հոգածութեամբ մը կը հագուէր՝ կրելով միշտ սև
պօնժուռ մը, որ իրեն պաշտօնական հանգամանք մը կուտար:
Թեև տակ էր փաստաբանական սև պարուժայ մը՝ թուղթերով
ու թերթերով ուռած:

Աստիկ խնամուած դաստիարակութիւն մը ստացած էր և
մասնաւորաբար քաջամուտ էր թուրքերէն ու ֆրանսերէն լե-
զուներու: Այս երկու լեզուներով գրելու արտակարգ դիւրու-
թիւն մը ունէր:

Փաստաբանական վարժարանի ընթացքը աւարտած էր թէև,
բայց ճիշտօրէն ի գործ չէր դնէր:

Կանուխէն աշխատակցած էր թուրք թերթերու, և խմբագ-
րութիւնն էր այժմ իր խոստովանելի արհեստը:

Այս ճիւղին մէջ մեծ յաջողութիւններ ձեռք բերած և մինչև
իսկ թուրք կարևոր օրաթերթի մը խմբագրապետը եղած էր՝
բուն խմբագրապետ-արտօնատիրոջ Եւրոպա ըրած մէկ երկա-
րատև ձեռնորութեան միջոցին:

Հակառակ իր բազմադիմի կարողութիւններուն Աստիկ Մար-
կոսեան չէր կրցած փայլուն դիրք մը ստեղծել իրեն համար, և
ասոր միակ պատճառը այն էր, որ իր նկարագիրը բնաւ համա-
պատասխան չէր իր մտային յատկութիւններուն, կամ, աւելի
ճիշդը, նկարագիր չունէր բնաւ: Ուղղամտութիւն, պարկեշտու-
թիւն, արժանապատուութիւն, բարոյականի տարրական սկզբ-
բունքները չի կային իր քով: Ասոր վրայ պէտք է աւելցնել նաև
կարգ մը մոլութիւններ՝ գինեմոլութիւն, շուայտութիւն, խաղա-
մոլութիւն, որոնց անձնատուր եղած էր սանձարձակօրէն:

Շուայտութիւնն ալ իր գլխաւոր թերութիւններէն մէկն էր:
Դրամը գրպանին մէջ կը հալէր, ինչպէս կտոր մը սառը՝ կրակին
քով:

Որչափ ալ մեծաքանակ դրամ ունենար քովը, հազիւ օր մը
կը բաւէր: Այս վիճակին մէջ ու այս նկարագրով մարդ մը, կըր-
նաք երևակայել, թէ ի՞նչ միջոցներու կարող էր դիմել դրամ
ձեռք բերելու համար:

Դրամաշորթութիւնը արուեստի մը բարձրութեան հասու-
ցած էր, և ասիկա ի գործ կը դնէր այնպիսի մախթրիայով մը,
որ իրապէս զարմանք և հիացում կ'ազդէր: Այդ ճիւղին մէջ կըր-
նար բացառիկ հանճար մը նկատուիլ:

Հիմա, որ ընթերցողները բաւական ճանչցան մեր հերոսը,
ձեռք առնենք պատմութեան թելը:

Ինչպէս տեսանք, այդ առտուն Աստիկի գրպանները պարապ
էին:

Ասիկա հանպագորեայ վիճակ մըն էր իրեն համար, ուստի
որևէ ազդեցութիւն չէր ընել վրան:

Քովը մնացած քանի մը դուրուշովը տուփ մը առաջին կար-

գի սիկառէթ առաւ, Հատ մը վառեց և ճամբան շարունակեց դէպի Ղալաթիա, ուր խանի մը մէջ գրասենեակ մը ունէր:

Ճամբան կը քալէր՝ դրամ ճարեչու միջոցի մը վրայ խորհեցիլով:

Մտային այս աշխատութիւնը շատ երկար չտևեց, յանկարծ դէմքին վրայ ժպիտ մը գծագրուեցաւ, ինչ որ կը յայտնէր, թէ միջոցը գտնուած էր:

Աստիկ քայլերը արագեց, նոր սիկառէթ մը վառեց և ճամբան շարունակելով՝ հասաւ թիւնէլ և առաջին կարգի տոմսակով մը մտաւ վակօն:

Վակօնին մէջ մէկ քանի ծանօթներ բարեկեց թրքական թէմէնահաներով և քաղաքավարական բանաձևներով:

Խօսքի բռնուեցաւ մէկու մը հետ, որ իր կարծիքը կ'ուզէր իմանալ օրուան քաղաքականութեան մասին:

Աստիկ քանի մը բառով բացատրեց Անգղիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ և Ռուսիոյ հետեւած քաղաքականութիւնը:

Թիւնէլէն դուրս ելլելով՝ Աստիկ ուղղուեցաւ Ուն Գարանի կողմը, աղտոտ սրճարան մը, ուր հաւաքուած էին բեռնակիրներ, նաւավարներ և այլն:

Այդ մթնոլորտին մէջ իր ներկայութիւնը տեսակ մը իրարանցում առաջ բերաւ: Ամէնքը զարմացած կը նայէին այդ շիբ հագուած էֆէնտիին, որուն հոն ներկայութիւնը չէին կրնար բացատրել:

Աստիկ ուղղակի դիմեց սրճարանատիրոջ և հարցուց.

– Համալ պաշի մը կա՞յ այստեղ:

– Ահաւասիկ Պէքիր աղան, որ սա սեղանին քով նստած է, – պատասխանեց սրճարանատիրոջ:

– Կ'ուզեմ քիչ մը հետը տեսնուիլ, – ըսաւ Աստիկ, – կրնա՞ս Հոս կանչել:

Եւ Աստիկ բազմեցաւ պարապ սեղանի մը քով:

Բոպէ մը ետքը Պէքիր աղա յարգանքով մօտեցաւ իրեն և բարեւ մը տալով՝ ոտքի կեցաւ:

– Նստէ՛, – հրամայեց Աստիկ՝ աթոռ մը ցոյց տալով:

Պէքիր կրկին բարեկեց և նստաւ:

– Սուրճ մը կ'առնե՞ս:

– Ծնորհակալ եմ, էֆէնտի՛, հիմա խմեցի: Ի՞նչ հրաման ունիք:

– Քենէ մէկը կ'ուզեմ, որ իմ սենեակիս պահապանութիւն ընէ:

– Ո՛ւր է ձեր սենեակը:

– Հոս, Ղալաթիա, խանի մը մէջ:

– Շատ աղէկ, ձեզի մէկը կը գտնեմ:

– Միայն թէ երբեմն ասդին-անդին պիտի երթայ, նամակ պիտի տանի, դրամ պիտի բերէ-տանի, վերջապէս գրասենեակի մը անհրաժեշտ գործերը պիտի տեսնայ:

– Բնական է, էֆէնտի՛ս, գրասենեակին ամէն գործերը պիտի կատարէ, պիտի աւլէ, սրբէ... գիշերն ալ հո՞ն պիտի պառկի:

– Եթէ կ'ուզէ՛ թող հոն պառկի:

– Ձեզի շնորհքով մէկը կը գտնամ:

– Բայց անմիջապէս պէտք ունիմ:

– Հիմա կը բերեմ մէկը:

– Ուրիշ խնդիր մը կայ սակայն:

– Ի՞նչ խնդիր, – հարցուց Պէքիր աղա:

– Ինչպէս ըսի, դրամական գործեր ալ պիտի ընէ, այսինքն գանձումներ կամ վճարումներ և այլն:

– Կ'ընէ, էֆէնտի՛մ, կ'ընէ, ձեզի աչքը բաց մէկը պիտի տամ, որ արդէն վարժ է այդ տեսակ գործերու...

– Վարժ ըլլալը բաւական չէ, քանի որ դրամի խնդիր կայ, պէտք է, որ երաշխաւորութիւն մը տայ:

– Ես անոր համար երաշխաւոր եմ, – պատասխանեց Պէքիր աղա:

– Ատիկա բաւական չէ, դուն անոր բարոյականին կրնաս միայն պատասխանատու ըլլալ, իսկ նիւթականին համար պէտք է, որ դրամական երաշխաւորութիւն մը ըլլայ, այսինքն պէտք է, որ ինծի որոշ գումար մը յանձնէ: Ես այդ գումարը քովս կը պահեմ, և երբ որևէ պատճառաւ քովէս մեկնի՛ իրեն կը վերադարձնեմ: Ես միշտ այս պայմանով քովս մարդ աշխատացուցած եմ:

– Ես երթամ մարդը բերեմ, դուք հետը համաձայնեցէ՛ք, – ըսաւ Պէքիր աղա՝ ոտքի ելլելով:

– Աղէկ կ'ըլլայ, միայն թէ շուտ եկէք, ես շատ ժամանակ չու-
նիմ, ստիպուած եմ ներքին գործերու նախարարին երթալ:

– Վայրկեանէ մը կուգանք:

Աստիկ գրպանէն թերթ մը հանեց և սկսաւ կարդալ:

Համալ պաշին արդարեւ քիչ ետքը վերադարձաւ՝ հետը մարդ
մը բերելով:

Աստիկ անոր ալ բացատրեց, թէ ինչ պիտի ըլլար կատարե-
լիք գործը և ի վերջոյ երաշխաւորութեան խնդիրը մէջտեղ
դրաւ:

– Ի՞նչ գումար պիտի տամ,– հարցուց միւսը երկչոտ դէմ-
քով մը:

– Առնուազն յիսուն ոսկի պէտք է տաս,– պատասխանեց
Աստիկ:

– Աման, էֆէնտի՛, ես ուսկի՞ց կրնամ յիսուն ոսկի ճարել,–
գոչեց մարդը:

– Դուն շնորհքով մարդ մը կ'երևաս կոր, քառասուն ոսկի
տուր, գործը լմնցնենք:

– Էֆէնտի՛ս, այդ գումարն ալ չեմ կրնար տալ:

Աստիկ կը պնդէ, միւսը կը խնդրէ, որ զինքը ընդունի ա-
ռանց դրամական երաշխաւորութեան և կ'երդնու, որ հաւա-
տարմօրէն պիտի ծառայէ: Բայց Աստիկ դիտել տուաւ, թէ իրեն
համար սկզբունք ըրած էր այս պայմանով քովը մարդ առնել և
հիմա չէր կրնար հրաժարիլ անկէ:

– Գոնէ պզտիկ բան մը տալու ես, որպէսզի սկզբունքը յար-
գուի,– ըսաւ մարդուն:

– Էֆէնտի՛, դուք բան մը որոշեցէք:

– Տասը ոսկի տո՛ւր:

Մարդը Պէքիր աղայի երեսը նայեցաւ: Այս վերջինը նշան ը-
րաւ, թէ ընդունի պայմանը:

– Շատ աղէկ,– ըսաւ մարդը,– քանի որ կը պնդէք՝ տասը
ոսկի կուտամ:

– Բայց կանխիկ պէտք է վճարես:

– Դժբախտաբար վրաս այդչափ դրամ չունիմ: Երթամ ըն-
կերներէս փոխ առնեմ ու բերեմ:

– Մի՛ ուշանար:

– Հիմա կուգամ:

Կէս ժամ ետքը վերադարձաւ և տասը ոսկի համրեց Աստիկի
ձեռքը:

Բախտախնդիրին դէմքը ճառագայթեց:

– Հետս եկո՛ւր,– ըսաւ մարդուն:

Մարդը յարգանքով հետեցեցաւ անոր:

– Դուն ո՞րտեղացի ես,– հարցուց՝ երբ փողոց ելան:

– Պօլուցի,– պատասխանեց մարդը:

– Անունդ ի՞նչ է:

– Օսման:

– Քեզի ի՞նչ ամսական պիտի տանք:

– Էֆէնտի՛, դուք գիտէք:

– Հիմակուհիմա երեք ոսկի կուտամ, եթէ գոհ մնամ՝ ետքը
կ'աւելցնեմ... ամսականէդ զատ, իմ գործիս մէջ բաւական պախ-
շիշ ալ կ'ընդունիս, գիտցած ըլլաս...

– Էֆէնտի՛, դուք ինչպէս յարմար տեսնէք, անանկ ըրէք:

– Միայն թէ կ'ուզեմ, որ հաւատարմութեամբ ծառայես:

– Պէքիր աղային հարցուցէ՛ք իմ ինչ մարդ ըլլալս:

Վերջապէս հասան այն խանը, ուր կը գտնուէր իր գրասե-
նեակը:

– Զիս փնտռող եղա՞ւ,– հարցուց օտա պաշիին:

– Ո՛չ, էֆէնտի՛:

– Նամակ և այլ բան մը բերի՞ն:

– Այս երկու նամակները բերին:

Աստիկ անփոյթ ձեռով մը առաւ նամակները, աչք մը նետեց
պահարաններուն վրայ և առանց բանալու՝ գրպանը դրաւ:

Յետոյ Օսմանը ետին ձգած ելաւ խանին երկրորդ յարկը, ուր
կը գտնուէր իր գրասենեակը:

Սենեակին դուռը բանալու միջոցին նշմարեց պատանի մը,
որ ուրիշ գրասենեակէ մը դուրս կ'ելլէր: Իր մասնաւոր հոտա-
ռութեամբը իսկոյն գուշակեց, որ այդ պատանին նոր որս մըն
էր, և փոխանակ սենեակէն ներս մտնելու՝ դրան առջև սպասեց,
մինչև որ պատանին մօտեցաւ իրեն:

– Ինծի այնպէս կը թուի, որ ձեզ պիտի ճանչնամ,– ըսաւ պա-
տանին,– դուք Սերգիսեան էֆէնտիին զաւակը չէ՞ք, Վահանը:

– Ո՛հ,– պատասխանեց պատանին,– իմ անունս Վահան է, Տիրան է և Հայրս ալ Սերգիսեան չկոչուիր...

– Ջարմանալի բան, որչափ կը նմանիք կոր իրեն... կարծեմ Պալթահան էֆէնտիին գրասենեակէն դուրս ելաք, ազգականութի՞նն ունիք հետը:

– Չէ՛, գործի համար եկած էի, ինծի ըսին, որ գրագիրի մը պէտք ունի եղեր, անոր համար եկայ, բայց արդէն հատ մը գտեր է:

– Գրագրի պաշտօ՞ն մը կը փնտռէք ուրեմն:

– Գրագրի կամ ուրիշ ուէ գործ մը,– պատասխանեց պատանին:

– Կը հաճի՞ք քիչ մը ներս մտնել:

– Շատ աղէկ,– պատասխանեց պատանին:

Աստիկ Օսմանին դառնալով՝ ըսաւ.

– Իմ գրասենեակս այս է, դուն աթոռ մը առ և դուրսը նստէ, եթէ պէտք ունենամ՝ կը կանչեմ: Մեզի երկու սուրճ ապսպրէ...

Ներս մտնելով՝ բազմեցաւ գրասեղանին առջև, իսկ պատանին իր քովը, աթոռի մը վրայ նստեցուց: Յետոյ գրպանէն սիկառէթի տուփը հանելով՝ հրամցուց:

– Շնորհակալ եմ, էֆէնտի՛, սիկառէթ չեմ գործածեր,– ըսաւ պատանին:

– Շատ աղէկ կ'ընես, տղա՛ս, դժբախտաբար ես մէկ քանի տուփ կը սպառեմ օրը... այսպէս ուրեմն, գրագրի պաշտօ՞ն մը կը փնտռես կոր:

– Այո՛,– պատասխանեց միւսը:

– Ո՞ր դպրոցէն ելած ես:

– Կեդրոնական վարժարանէն չըջանաւարտ եմ:

– Թուրքերէն և ֆրանսերէն գիտե՞ս:

– Կը գրեմ, կը կարդամ:

– Մէկ լեզուէն միւսը թարգմանութիւն կրնա՞ս ընել:

– Կ'ընեմ,– պատասխանեց պատանին ինքնավստահ դէմքով մը:

Աստիկ գրպանէն թուրքերէն թերթ մը հանեց, անոր մէջէն տեղ մը ցոյց տուաւ պատանիին և առաջարկեց, որ ֆրանսերէնի թարգմանէ:

Պատանին թարգմանութիւնը ըրաւ և ներկայացուց Աստիկի, որ զայն կարդալէ ետքը յայտարարեց.

– Պզտիկ սխալներ կան, բայց բաւական լաւ է, գիրդ ալ մաքուր է: Հաշուակալութիւն գիտես անշուշտ:

– Բնականաբար... արդէն վաճառականի քով գրագրութիւն և Հաշուակալութիւն ըրած եմ տարիի մը չափ:

– Ինչո՞ւ թողուցիր գործդ:

– Վաճառականը սնանկացաւ:

– Կ'երևայ, որ ոտքդ ուղուրլու չէ եղեր,– ըսաւ Աստիկ խընդալով:

– Ուրիշ վաճառականի մը բռնուած էր, որ սնանկացաւ, այդ պատճառաւ ինքն ալ մեծ կորուստներ ըրաւ,– բացատրեց պատանին:

– Ինչ որ է, ատիկա խնդիր չէ, ես քեզի գործ մը կը գտնեմ:

– Շատ շնորհակալ կ'ըլլամ... ներեցէք, ի՞նչ է ձեր անունը:

– Աստիկ Մարկոսեան: Իսկ ձե՞ր անունը:

– Տիրան Մինիկեան:

– Ծնողք ունի՞ս...

– Այո՛, Հայր ու մայր ունիմ:

– Հայրդ ի՞նչ գործով կը զբաղի:

– Կէտիկ փաշայի կողմը ախտէրութիւն կ'ընէ:

– Քեզի երեք ոսկի ամսականով եթէ գործ մը առաջարկեմ՝ կ'ընդունի՞ս:

– Կ'ընդունիմ,– պատասխանեց պատանին:

– Ամսականն ալ կանխիկ:

– Աւելի աղէկ:

– Բայց պայմանով մը... ես գործի մարդ եմ, պարապ տեղը ծառայութիւն չեմ մատուցաներ և ի փոխարէն ես ալ ուրիշէն պարապ տեղը ծառայութիւն չեմ սպասեր...

– Ի՞նչ ըսել կ'ուզէք, Աստի՛կ էֆէնտի,– հարցուց պատանին:

– Ըսել կ'ուզեմ, որ այս գործին համար առնուազն տասը ոսկի պիտի վճարես ինծի...

Պատանին պատասխանելէ առաջ պահ մը մտածեց: Յետոյ ըսաւ.

– Տակաւին չըսիք, թէ գործս ի՞նչ պիտի ըլլայ:
– Մեծ բան մը չէ, երբեմն նամակներ պիտի գրես, երբեմն թարգմանութիւններ պիտի ընես, երբեմն գանձումներու պիտի պտըտիս... Հա՛, մոռցայ կարևոր կէտ մը, աշխատութիւնդ կէս օր է միայն:

– Ինչպէ՞ս կէս օր...

– Այսինքն առտունները պիտի երթաս մինչև կէսօր, ետքը ազատ ես, այնպէս որ կէսօրէն յետոյ կրնաս ուրիշ գործով զբաղիլ:

Այս պարագան չափազանց ուրախացուց պատանին:

«Ահաւաստիկ լաւ գործ մը, պէտք չէ ձեռքէ հանել», – մտածեց:

– Ե՞րբ պիտի սկսիմ գործի, – հարցուց Աստիկի:

– Անմիջապէս, երբոր տասը ոսկին բերես...

– Որո՞ւ քով պիտի աշխատիմ:

– Անունը կը սորվիս, – պատասխանեց Աստիկ խնդալով, – կ'երևայ, որ զիս շատ միամիտ մէկու մը տեղ կը դնես կոր, դուն նախ դրամը բեր, և ես անձամբ կը տանիմ քեզ մարդուն քով:

– Բայց եթէ զիս չընդունի...

– Պարապ խօսքեր մի՛ ըներ, բարեկա՛մս, ամէն բան ինծի յանձնուած է, ես պիտի հաւնիմ, ես պիտի քննեմ, ես պիտի տանիմ իրեն փնտռած պաշտօնեան, գործը իմ քովս կը լմննայ, հասկցա՞ր... նոյնիսկ առաջին ամսականն ալ տուած է, որպէսզի յարմար մէկը գտնելուս պէս վճարեմ: Կ'ուզե՞ս, որ կանխիկ տամ երեք ոսկին...

– Ինչպէս որ կ'ուզէք:

– Ա՛ռ, տղաս:

Եւ Աստիկ անփութօրէն ժլլէին գրպանէն հանեց տասը ոսկին և անոնցմէ երեքը պատանիին տուաւ:

– Երթամ ուրեմն տասը ոսկին բերեմ, – ըսաւ պատանին բոլորովին ապահովուած:

– Ե՞րբ կը վերադառնաս, – հարցուց Աստիկ:

– Հազիւ քանի մը ժամէն... մինչև Կէտիկ փաշա պիտի երթամ հօրմէս դրամը առնելու:

– Ուրեմն ցերեկուան մօտ եկուր Պոլիս, ինծի գտիր Պապը

Ալիի դէմը գտնուող Տուպլը Տէ ճաշարանը, այս ցերեկ հոն պիտի ճաշեմ:

– Գլխուս վրայ, շատ երախտապարտ եմ ձեզի, Աստի՛կ էֆէնտի:

– Չըլլայ, որ երեք ոսկին առնես փախիս ու մէյ մըն ալ մէջտեղ չելլես, – ըսաւ Աստիկ խնդալով:

Պատանին այս կասկածանքէն չափազանց վիրաւորուեցաւ և շիկնեցաւ:

– Եթէ կ'ուզէք՝ երեք ոսկին ետ տամ, – ըսաւ:

– Չէ՛, չէ՛, ես կատակ ըրի, – աւելցուց բախտախնդիրը, – դէմքէդ յայտնի է, որ դուն պատուաւոր ու պարկեշտ տղայ մըն ես: Չմոռնաս ըսած տեղս, Պապը Ալի ճատտէսի, Տուպլը Տէ ճաշարանը:

– Գիտեմ այդ ճաշարանը, – պատասխանեց երիտասարդը, – ամէն օր առջևէն կ'անցնիմ:

Պատանին մեկնեցաւ:

Աստիկ Մարկոսեան ժամացոյցը նայեցաւ և ինքնիրեն ըսաւ.

«Օ, ժամանակը ուշ է եղեր...»

Եւ ոտքի ելլելով՝ ուղղուեցաւ դէպի դուռը:

Օսման իր պաշտօնին գիտակից լրջութեամբ մը բազմած էր աթոռին վրայ. էֆէնտիին մօտենալը տեսնելուն պէս ոտքի ելաւ:

– Օսմա՛ն, – ըսաւ Աստիկ, – ես ներքին գործերու նախարարը տեսնելու կ'երթամ կոր, անկէ ալ ուրիշ գործեր ունիմ, հաւանական է, որ ուշանամ կամ բնաւ չգամ: Դուն իրիկունը ժամը 5ին գրասենեակը գոցէ:

– Գլխուս վրայ, էֆէնտի՛:

– Վաղը առտու կանուխ կուգաս կը բանաս ու ես չեկած՝ կը մաքրես:

– Շատ աղէկ, էֆէնտի՛:

Աստիկ փողոց ելլելով՝ առաջին պարապ կառքին մէջ ցատքեց և կառապանին պոռաց.

– Պապը Ալի ճատտէսի...

Աստիկ սովորութիւն ունէր երբեք չքալելու, երբ գրպանը կառք մը վարձելու չափ դրամ գտնուէր:

Երբ կառքը հասաւ Բ. Դրան պողոտան՝ Աստիկ զայն կեցնել

տուաւ «Սապահ»ի խմբագրատան առջև ու դրամը վճարելով կառապանը ճամբեց:

Յետոյ մտաւ խմբագրատուն, մէկ քանի թուրք խմբագիրներու հետ տեսակցեցաւ ու ապա բարձրացաւ վերի յարկը, ուր կը գտնուէր խմբագրապետ Տիրան Քէլէկեան:

Այս վերջինը թիկնաթոռի մը մէջ բազմած, ակնոցը քիթին, պատկառելի մօրուքը գրասեղանին քսելով «Սապահ»ի խմբագրականը գրելու գրադած էր:

«Վա՛յ, էֆէնտի՛մ» ըսելով Աստիկ սկսաւ թրքերէն շարք մը քաղաքավարական բանաձևեր շարել, որոնց յաջորդեցին գովեստներ իր գրած խմբագրականներուն մասին.

– Տէհչէթ, էֆէնտիմ, տէհչէթ:

Տիրան Քէլէկեան, որ չէր սիրեր բնաւ աշխատած միջոցին ընդմիջուիլ, անհամբերութեան շարժումներ ընելով՝ միավանկ բառերով կը պատասխանէր իրեն ուղղուած խօսքերուն:

Բայց Աստիկ առանց կարևորութիւն ընծայելու այս պաղ ընդունելութեան, շարունակեց իր խօսքը, մինչև որ Քէլէկեանի համբերութիւնը սպառեցաւ և նեղսիրտ դէմքով մը ըսաւ.

– Կը ներէք, Աստի՛կ էֆէնտի, գրաշարները իմ ձեռագիրիս կը սպասեն կոր, դուք խմբագիր էք, գիտէք, որ ճիշդ այս միջոցիս մեր ամենէն գրադած ատենն է...

Այս խօսքերը իրենց ազդեցութիւնը ըրին: Աստիկ ոտքի ելաւ, ներողութիւն խնդրեց և մեկնեցաւ:

Քիչ մը ետքը մտաւ «Իգտամ»ի խմբագրատունը, ուր մնաց կէս ժամու չափ, յետոյ ճամբան շարունակեց և եկաւ «Ժամանակ»ի խմբագրատունը, ուր Սարգիս Գոչունեան նարկիլէ կը քաշէր:

– Ի՞նչ նոր բան կայ, – հարցուց Գոչունեան, – եթէ լուր մը ունիս՝ ըսէ տէ, գրենք:

– Չէ, դեռ Պապը Ալի չգացի, կէսօրէն ետքը պիտի երթամ:

– Եթէ կարևոր բան մը իմանաս, մեզի հանդիպէ...

– Շատ աղէկ, կը հանդիպիմ, – խոստացաւ Աստիկ:

– Մեզի երբեմն քաղաքական յօդուածներ չգրե՞ս...

– Հայերէն գրելու վարժութիւն չունիմ, ասկէ զատ ժամանակ ալ չունիմ, այս միջոցիս չափազանց գրադած եմ... Հազար տեսակ գործ ունիմ...

Յետոյ, պահ մը լռելէն ետքը, աւելցուց.

– Դուք ի՞նչ լուրեր ունիք, տեսնենք:

– Մեր լուրերը «Ժամանակ»ին մէջն են, – ըսաւ Գոչունեան:

– Այդ թիւ 17 խաֆիէին խնդիրը ի՞նչ պիտի ըլլայ:

– Այդ մասին նոր բան մը չի կայ, խնդիրը մարածի պէս է:

– Վերջապէս չհասկցուեցա՞ւ, թէ ով է եղեր...

– Քանի մը հոգիի վրայ կասկածներ կան:

– Ես ալ այդ խնդիրով քիչ մը գրադեցայ, – ըսաւ Աստիկ, – իմ կողմէս քննութիւն մը ըրի և սա համոզումը գոյացուցի, թէ այդ թուղթերը ներքին գործերու նախարարին հաղորդողը հայ է:

– Ո՞վ է ուրեմն:

Աստիկ ձայնը ցածցուց և խորհրդաւոր դէմքով մը ըսաւ.

– Գերմանական դեսպանատունէն հաղորդուած են... Վանկէնհայմը իր ձեռքով այդ թուղթերը յանձնած է թալէաթին:

– Իրա՞ւ կ'ըսես, – գոչեց Գոչունեան զարմացած:

– Գիտես, որ ես դեսպանատուններու հետ միշտ՝ յարաբերութիւն ունիմ, մօտէն գիտեմ անցած-դարձածները:

– Կարծեմ դուն թարգմանի պաշտօն ալ վարած ես դեսպանատան մը մէջ:

– Այո՛, յետոյ ձգեցի պաշտօնս, որովհետեւ ամսականս գոհացուցիչ չէր:

Աստիկ կը ստէր, դեսպանատունէն զինքը ճամբած էին, որովհետեւ իր մէկ քանի զեղծումները մէջտեղ ելած էին:

– Բուն թիւ 17 խաֆիէն Վանկէնհայմն է...

– Մե՛ղք, որ ատիկա չենք կրնար թերթին մէջ գրել, – ըսաւ Գոչունեան:

– Եթէ այդպիսի բան մը «Ժամանակ»ին մէջ գրես, թերթն ալ ձեռքէդ կ'երթայ, դուն ալ ինքզինքդ մինչև ե՛մէն կը գտնաս:

– Կը վայլէ՞ դեսպանի մը, որ ասանկ բան ընէ:

– Քաղաքականութեան մէջ շատ բարակը չեն նայիր: Այս միջոցիս Գերմանիա ամէն ջանք կ'ընէ կոր Հայկական բարենորոգումները վիժեցնելու և ասոր համար ամէն միջոց կը գործածէ: Շատ բաներ կ'անցնին-կը դառնան կոր դեսպանատուններու մէջ, բայց մերինները լուր չունին:

Եւ Աստիկ ոտքի ելաւ մեկնելու համար:

– Եթէ կարևոր լուր մը առնես, չմոռնաս հոս հանդիպելու, –
յանձնարարեց Գոչունեան:

– Անհոգ եղիր... Հիմա շիտակ ներքին գործերու նախարարին քով կ'երթամ կոր, եթէ բան մը իմանամ՝ շիտակ հոս կուգամ:

Աստիկ «Ժամանակ»ի իմբագրատունէն մեկնելով՝ արդարեւ Պապը Ալի գնաց, հոն մէկ քանի աննշան պաշտօնեաներու հետ տեսնուեցաւ մինչև կէսօր և յետոյ եկաւ Տուպլը Տէ ճաշարանը:

Հազիւ թէ սեղանի մը առջև նստած և կերակուրը ապսպրած էր, երբ առտուան պատանին՝ Տիրանը, ներս մտաւ ճաշարանէն, վեհերոտ ականարկ մը նետեց չորս դին և Աստիկը նշմարելով՝ մօտեցաւ իրեն:

– Աստիկ էֆէնտի, դրամը բերի, – ըսաւ ամչկոտ ձայնով մը:

– Հա՛, աղէկ, – ըսաւ Աստիկ անտարբեր ձայնով մը, – տո՛ւր, տեսնենք:

Պատանին տասը ոսկին յանձնեց:

– Այսօր ա՛լ ժամանակը ուշ է, – ըսաւ Աստիկ, – ինչպէս ըսի, քու գործը կէսօրէն առաջ է, ուստի վաղը առտու կանուխ իմ գրասենեակս գտնուէ, որպէսզի միասին երթանք և քեզ ներկայացնեմ քու նոր բաթրօնիդ:

– Շատ աղէկ, – պատասխանեց պատանին և ականածալից բարև մը տալով՝ դուրս ելաւ ճաշարանէն:

«Այս օրուան օրականը հանեցինք», – խորհեցաւ բախտախնդիրը գոհունակ դէմքով մը:

Ճաշը աւարտելէ ետքը նշմարեց, որ քիչ մը անդին, սեղանի մը քով նստած էին թղթատարական նախարար Ոսկան Մարտիկեան, հանքերու և անտառներու նախարար Սիւլէյման էլ Պուսթանի և Լևոն Տէմիրճիպաշեան:

Աստիկ մօտեցաւ անոնց, յարգական թէմէննահաներ ըրաւ, քաղաքավարական բանաձևներ կրկնեց, որպիսութիւններն հարցուց, իրենց առողջութեան համար մաղթանքներ ըրաւ և դուրս ելաւ ճաշարանէն:

Հազիւ թէ քանի մը քայլ առած էր, երբ մարդ մը մօտեցաւ իրեն և դաժան դէմքով մը ըսաւ.

– Երէկ մինչև իրիկուն զիս պարապ տեղը սպասուցիր գրասենեակդ, մէջտեղ չելար:

– Կը ներես, – ըսաւ Աստիկ, – երէկ սաստիկ զբաղած էի, անակնկալ գործեր պատահեցան: Առտուն գահաժառանգ իշխանին այցելութեան գացած էի, յետոյ ստիպուեցայ Պապը Ալի երթալ, արտաքին գործերու նախարարը պիտի տեսնէի, բայց նախարարաց խորհուրդը կար, պարտաւորուեցայ սպասել, հոնկէ ալ Ֆրանսական դեսպանատունը գացի...

– Ատոնք պարապ խօսքեր են, Աստիկ էֆէնտի, պարզապէս երեսդ ծածկեցիր, որպէսզի պարտքդ չվճարես:

– Հաւատացէք, որ ճշմարտութիւնը այն է:

– Ինչ որ է, քանի որ հանդիպեցանք՝ տո՛ւր, տեսնեմ:

– Այս իրիկուն ո՛ւր կրնամ գտնել քեզի:

– Իրիկուն պէտք չի կայ, հիմա հոս տուր տալիքդ, լմընայ... տասը ոսկիին համար քառասուն անգամ է ետևէդ կը պտըտիմ կոր:

– Ժամը երկուքին գանձում մը պիտի ընեմ, իրիկունը անպատճառ կը վճարեմ:

– Ա՛լ այդ տեսակ խօսքերէ չեմ խաբուիր, դրամս կ'ուզեմ...

– Կ'երդնում, որ երկու ժամէն գանձում մը ունիմ... այս իրիկուն Պրասըրի տը Լօնարը ինծի սպասէ, ժամը 5ին:

– Տեղ մըն ալ չեմ սպասեր, ա՛լ հերիք է, որչափ սպասեցի... առնելիքիս չափ ալ ստիպուեցայ ասդին-անդին գարեջուրի, սուրճի և այլ դրամ վճարել... պարզապէս խաղբութիւն է ըրածդ:

– Կը խնդրեմ, փողոցին մէջ այսպէս մի՛ պողար, ամէն մարդ մեզի կը նայի կոր:

– Թո՛ղ նային, ես փարա կ'ուզեմ:

– Փարադ պատրաստ է...

– Եթէ պատրաստ է, տո՛ւր:

– Իրիկունը ժամը հինգին:

– Օձիքդ չեմ ձգեր մինչև որ դրամս չառնեմ:

Աստիկ տեսաւ, որ պիտի չկրնար այդ յամառ պարտապահանջին ձեռքէն ազատիլ, ըսաւ.

– Լա՛ւ, հետս Ղալաթիա եկուր, երթանք, գանձումը ընեմ և դրամդ տամ:

- Շատ աղէկ,- ըսաւ մարդը,- հետդ կուգամ:
- Բայց ես տակաւին այս կողմերը գործ ունիմ:
- Ես գործ մը չունիմ, քեզի կրնամ ընկերանալ:

Պարտապահանջը անտանելի կը դառնար, Աստիկ անհամբերութեան շարժումներ ըրաւ, պահ մը խորհեցաւ փոքրիկ թեր հաշիւ մը տալ ու ճամբել մարդը: Ձեռքը գրպանը տարաւ, բայց հազիւ թէ մատները ոսկիներուն հետ շփում մը ունեցան, իր միտքը փոխեց և արագ շարժումով մը ձեռքը հանեց գրպանէն:

- Եղբա՛յր, զիս մի՛ նեղեր, այսչափ սպասեցիր, քանի մը ժամ ալ սպասէ,- ըսաւ:

- Ձէ՛,- գոչեց միւսը ձայնը բարձրացնելով,- ալ չեմ կրնար սպասել, միտքս դրած եմ օձիքդ չձգել մինչև որ առնելիքս չգանձեմ:

- Կատակ կ'ընես...

- Շատ լուրջ կը խօսիմ... դրամի պէտք ունիմ:

- Լա՛ւ, ուրեմն հետս եկուր:

Աստիկ կառք մը կեցուց, մարդուն հետ մէջը մտաւ և կառապանին հրամայեց, որ Ղալաթի տանի գիրենք:

Ձղագրգիռ վիճակ մը ունէր. այդ մարդուն հանդիպումը զինքը չափազանց նեղացուցած էր: Առտուրնէ ի վեր գործերը լաւ ընթացած էին, և ահա՛ յանկարծ ձախողութիւնը զինքը կը հալածէր:

Այսուհանդերձ ինքզինքը զսպեց, նոյնիսկ ժպտուն դէմք մը առաւ և սիկառէթ մը հրամցուց մարդուն:

- Հիմա յիսուն ոսկիի գանձում մը պիտի ընեմ,- ըսաւ,- քու առնելիքդ կը վճարեմ, եթէ պէտք ունիս՝ մի՛ քաշուիր, ըսէ՛, աւելի տամ...

- Ձէ՛, շնորհակալ եմ,- ըսաւ մարդը,- իմ տասը ոսկիս եթէ տաս՝ բաւական է:

- Ծշմարիտ կ'ըսեմ, եթէ պէտք ունիս, 15-20 ոսկի տամ բացէն... երբ որ ունենաս՝ կը վճարես:

- Պէտք չունիմ, Աստի՛կ էֆէնտի, տասը ոսկին իմ գործս կը տեսնայ, ինչո՞ւ պարապ տեղը պարտքի տակ մնամ:

- Պարտքը ի՞նչ խօսք է, բարեկամաբար կուտամ, երբոր ուզես՝ այն ատեն վճարէ՛, ես ատանկ պզտիկ բաներու չեմ նայիր,

այսօր ես ունիմ՝ քեզի կուտամ, վաղն ալ պէտք ունենամ նէ՛՝ քե- նէ կ'առնեմ... դրամը ինծի համար կարևորութիւն չունի, հակա- նը բարեկամութիւնն է:

Այս խօսքերը լսելով՝ պարտապահանջը հիմա ամօթ կը գգար այնքա՛ն յամառօրէն իր առնելիքը պահանջած ըլլալուն համար:

«Պէտք չէր, որ ծանր խօսքեր ընէի,- կը խորհէր,- ու զինքը վշտացնէի, այս մարդը ազնիւ մարդ մըն է և յայտնի է, որ մէ- կուն դրամը չուտեր»:

Երբ Ղալաթիա հասան, Աստիկ կառքը կեցնել տուաւ ին- վար խանի առջև, վար ցատքեց և խանը մտաւ. միւսը կը հետևէր իրեն: Աստիկ գրասենեակ մը մտաւ, պահ մը խօսեցաւ, յետոյ ուրիշ գրասենեակ մը մտաւ, անկէ ալ դուրս ելաւ:

- Դեռ չէ եկած,- ըսաւ մարդուն,- արդէն գիտէի, որ պիտի չկրնանք գտնել, քանի որ ժամը շուկէսին խօսք տուած էր, և դեռ ժամը մէկն է... զիս պարապ տեղը գործէս ըրիր, ես Պոլսոյ կողմը տակաւին մարդիկ ունէի տեսնելիք, ինչ որ է, դուն այս- տեղ սա մահալլէպիճիին խանութը սպասէ, ես հիմա կուգամ... փախլավա մը կեր...

- Շնորհակալ եմ...

- Կե՛ր, ճանրմ, ասոր փախլավան նշանաւոր է...

Եւ մարդուն թևէն բռնելով՝ մահալլէպիճիին խանութը խօ- թեց, յետոյ խանութպանին հրամայեց.

- Էֆէնտիին ազուր խայմախլը փախլավա մը տուր... ես հիմա կուգամ, Մէհմէտ Ալի փաշա խանը մէկը պիտի տեսնեմ, չըլլայ, որ երթաս...

Եւ ինվար խանէն դուրս ելաւ, արագ քայլերով ուղղուե- ցաւ դէպի թիւնէլ, տոմսակ մը առաւ և տասը վայրկեանէն հա- սաւ Բերա:

- ՕՖ,- ըսաւ մեծ շունչ մը առնելով,- այս փորձանքէն ալ ազատեցանք...

Իր ուրախութիւնը շատ կարճ տևեց սակայն: Հազիւ թէ դէ- պի Շիտակ ճամբան քանի մը քայլ առած էր, թաւ պիտերով, խոժոռադէմ մարդ մը զինքը դիմաւորեց:

- Փա՛ռք Աստուծոյ, երեսդ տեսանք,- ըսաւ յանդիմանա- կան շեշտով մը:

– Վա՛յ, պէյս, ինչպէ՞ս էք, աղէ՞կ էք, ո՞ւր էք, չէք երևար կոր,– Հարցուց Աստիկ ժպտուն դէմքով մը,– երէկ իրիկունն ժամերով սպասեցի քեզի, ինչո՞ւ չեկար...

– Ո՞ւր սպասեցիր:

– Հոն, ուր խօսք ըրած էինք... Լիւքսէնպուրկին սրճարանը:

– Ինչպէ՞ս Լիւքսէնպուրկի,– գոչեց միւսը,– Լիւքսէնպուրկի դիմացի սրճարանը ժամադիր եղանք, և ես երկու ժամ սպասեցի քեզի այնտեղ:

– Սխա՛լ, պէյս, սխա՛լ, Լիւքսէնպուրկ ըսի ես քեզի:

– Աստի՛կ էֆէնտի, հետս կը զբօսնո՞ւս կոր... Լիւքսէնպուրկի դէմը չըսի՞ր...

– Ալլահ, ալլահ, կ'երևայ, որ դուն աղէկ չես հասկեցեր... ես քեզի Լիւքսէնպուրկ ըսի և հակառակ, որ շատ մըն ալ կարևոր գործեր ունէի, ամէնքը ձգեցի, վազեցի եկայ, որ ատենին հասնիմ ժամադրութեան:

– Ինչ որ է,– պատասխանեց միւսը,– հիմա որ զիրար տեսանք, հաշիւնիս մաքրենք:

– Ա՛խ, երէկ իրիկունն ինչպէ՛ս սխալեցար ու ժամադրութեան չգտնուեցար,– գոչեց Աստիկ,– հիմա հաշիւդ մաքրուած պիտի ըլլար, դուն չեկար, ես ալ քովս գտնուած դրամը ծախսեցի, բայց հոգ չէ... վաղը քեզ ո՞ւր կրնամ տեսնալ:

– Ալ չափը անցուցիր, ամիս մըն է զիս կը խաղցնես կոր, սա դրամը պիտի տա՞ս, թէ՞ ոչ:

– Վաղը տեղէ մը յիսուն ոսկի պիտի առնեմ, կուտամ, մեծ բան մը չէ արդէն, տասնըհինգ ոսկին ի՞նչ կարևորութիւն ունի, խօսքը ընելը անգամ չարժեր:

– Եթէ քեզի համար կարևորութիւն չունի, ինծի համար մեծ կարևորութիւն ունի, ես դրամս կ'ուզեմ:

– Եղբա՛յր, դրամդ չեմ ի տար ըսի՞ քեզի:

– Ինչո՞ւ պիտի չի տաս:

– Ուրացա՞յ, տալիք չունիմ ըսի՞ր...

– Ինչպէ՞ս կրնաս ատանկ բան մը ըսել:

– Ուրեմն ի՞նչ այդչափ վրաս կ'իյնաս... դրամդ պիտի տանք, զարմանալի բան...

– Ե՞րբ պիտի տաս...

– Վաղը իրիկունն եկուր, առ դրամդ, լմննայ խնդիրը:

Այսպէս խօսելով՝ հասած էին մինչև ուսական դասպանատունը, որուն դէմը կը գտնուէր Սթարզպուրկ գարեջրատունը: Աստիկ հոն մտաւ պարտապահանջն ալ միասին ներս քաշելով:

– Եկուր, մէյմէկ քօնեաք խմենք,– առաջարկեց:

Մարդը մերժումի շարժում մը ըրաւ, բայց բախտախնդիրը այնչա՛փ ստիպեց, որ վերջապէս հաւանեցաւ:

– Միւսի՛ւ Եանի, մեզի երկու գաւաթ Մառթէլ զրկէ՛,– հրամայեց Աստիկ՝ խօսքը գարեջրատան տիրոջ ուղղելով:

Եւ սեղանի մը առջև նստելով՝ թեւի տակի պարութան բացաւ, մէջէն թուղթեր հանեց և սկսաւ ուշադրութեամբ կարդալ:

Ատեն–ատեն ընթերցումը կ'ընդհատէր և քովը նստողին դառնալով՝ կ'ըսէր.

– Բարեկա՛մ, քօնեաքդ չխմե՞ս... կը ներես, ես կ'ուզեմ սա թուղթերը կարդալ, ցերեկը այնչա՛փ զբաղած էի, որ ժամանակ չգտայ... հիմա կը լմնցնեմ, ներողութիւն...

Փաւաթները երբ պարպուեցան, հատ մըն ալ ապսպրեց:

Մարդը փորձեց մերժել, ըսելով, թէ քօնեաք խմելու սովորութիւն չունի:

– Ասիկա ֆրանսական առաջին կարգի քօնեաք է,– դիտել տուաւ Աստիկ,– թէ՛ մարսողական է և թէ՛ բոլորովին անվնաս:

Միւսը ստիպուեցաւ համակերպիլ:

Աստիկ վերջապէս թուղթերուն ընթերցումը աւարտեց և երրորդ քօնեաք մը ապսպրեց:

– Շնորհակալ եմ, գինովցայ,– ըսաւ պարտապահանջը:

– Այս քօնեաքը չգինովցնեմ:

– Ես բնաւ վարժութիւն չունիմ:

– Եթէ կ'ուզես ուրիշ բան մը խմէ, հոս աղէկ օղի կայ, ինչպէս նաև գերմանական առաջնակարգ գարեջուր... հուլիսի մը կը խմե՞ս... կամ պրանտի մը, կամ Տիւպօնէ մը...

– Բան մըն ալ չեմ խմեր, բաւական է ինչ որ խմեցի:

Այսուհանդերձ ստիպուեցաւ երրորդ գաւաթն ալ խմել, որուն յաջորդեց չորրորդը:

Աստիկ երկար պատմութիւն մը սկսաւ: Սքանչելի գործ մը

կար, շատ դրամ չահելիք, դժբախտաբար քիչ մը դրամագլխի պէտք կար, ոչինչ բան մը, 200-250 ոսկին կը բաւէր, բայց այդ միջոցին այս գումարը չունէր քովը:

– Ձեռքս քանի մը գործեր ունիմ, երբոր աւարտեմ բաւական գումար մը պիտի ունենամ,– բացատրեց,– բայց կը վախնամ, որ միւս գործը կը փախցնեմ մինչև այն ժամանակ... ասանկ առիթներ շատ չեն ներկայանար:

– Ի՞նչ տեսակ գործ է,– Հարցուց միւսը:

– Վաճառական մը մեծ քանակութեամբ ելեքտրական գործիքներ բերել տուած է, կ'ուզէ որևէ գնով ձեռքէն հանել, որովհետև սնանկութիւն պիտի յայտարարէ... խաբեբայական գործ մը, բայց վերջապէս ինծի ի՛նչ, իր գիտնալիք բանն է, իրողութիւնը այն է, որ հազար-հազար երկու հարիւր ոսկինոց ապրանքը այսօր պատրաստ է 200-250 ոսկիի ծախելու: Ես մէկ քանի վաճառականներու խօսեցայ, այսօր պատրաստ են այդ տեսակ ապրանքները առնուազն հազար ոսկիի առնել... երկու օրուան մէջ 7-8 հարիւր ոսկի շահիլը բան մը չէ... քօնեաք մըն ալ կը խմե՛ս:

– Ծնորհակալ եմ, շատ եղաւ:

– Խաթերս համար, հատ մըն ալ խմէ՛:

Եւ հինգերորդ գաւաթը եկաւ:

Աստիկ շարունակեց իր բացատրութիւնները այդ շահաւոր գործին մասին:

Մարդը, որուն գլուխը բաւական տաքցած էր, ուշադիր կը հետևէր բախտախնդրին պատմութեան առանց կասկածելու, թէ բոլորովին մտացածին գործի մը շուրջ կը դառնար խնդիրը: Ի վերջոյ Հարցուց.

– Այդ ելեքտրական գործիքները կարելի չէ՞ անգամ մը տեսնել:

– Ինչու չէ, թերևս կարելի է,– պատասխանեց Աստիկ,– միայն թէ մարդը չուզեր կոր, որ գործը իմացուի, կարծեմ ընկեր մը ունի ու անկէ ծածուկ պիտի ծախէ ապրանքները, վերջապէս գաղտուկ կ'ուզէ ընել ամէն բան:

– Բայց առանց ապրանքները տեսնելու ինչպէ՞ս կարելի է դրամ համրել:

– Դուն միտք ունի՞ս ծախու առնելու:

– Ես՝ ո՛չ, բայց բարեկամ մը ունիմ, որ այդ տեսակ գործեր կ'ընէ:

– Դրամ ունի՞ այդ բարեկամդ,– Հարցուց Աստիկ հետաքրքիր:

– Քանի մը հարիւր ոսկի կրնայ տրամադրել այդ գործին, եթէ վստահ ըլլայ, որ շահ կայ:

– Ծահր ապահով է... դուն այդ բարեկամդ մէյմը ինծի ղրկէ, հետը լրջօրէն խօսինք...

– Բայց նախ ապրանքները տեսնելու ենք ու յետոյ այդ վաճառականին հետ ալ ծանօթանալու ենք:

– Ատոնք դիւրին են, խնդիրը դրամին վրան է, դրամ եղա՛ւ մի՛ ամէն բան կ'ըլլայ, մարդը ինծի ղրկէ... կառսօ՛ն, սա գաւաթները լեցուր:

– Աման, Աստի՛կ էՖէնտի, չափազանց խմեցի... Հինգ գաւաթ եղաւ, ետքը տունս չեմ կրնար գտնել:

– Այս քօնեաքը բնաւ չվնասեր:

Եւ շարունակեցին խմել այն աստիճան, որ պարտապահանջը գրեթէ ինքզինք կորսնցուց:

Աստիկ, ընդհակառակը, պահած էր իր կատարեալ պաղա-րիւնութիւնը և բանականութիւնը:

– Ալ երթանք,– ըսաւ ոտքի ելլելով,– ժամադրութիւն մը ունիմ, պէտք է անպատճառ գտնուիմ, շատ կարևոր է:

Միւսն ալ, ջանք մը ընելով, կրցաւ դժուարաւ ոտքի վրայ կենալ և դէպի դուռ ուղղուիլ:

Դրան առջև իրարմէ բաժնուեցան:

«Այս մարդն ալ այսպէս ճամբեցինք»,– մտածեց Աստիկ իր ճամբան շարունակելով դէպի Կալաթա Սէրայ:

Հոն ուրիշ սրճարան մը մտաւ և դարձեալ քօնեաք մը ապրապըրեց և սկսաւ «Սթամպուլ»ը կարդալ: Այս ընթերցումին մէջ թաղուած էր, երբ սրճարանէն ներս մտաւ մանկամարդ, բաւական գեղեցիկ կին մը, վեց տարեկան մանուկի մը ձեռքէն բռնած:

Այս կինը Աստիկի ամուսինն էր, գոր երեսի վրայ թողած էր և ատեն-ատեն, եթէ գրպանը դրամ գտնուէր, նիւթական օգնութիւն մը կ'ընէր:

– Վերջապէս կրցայ քեզ գտնել, – ըսաւ կինը անոր մօտենալով, – տղուդ հետ ժամ մըն է Շիտակ ճամբան վեր-վար կը պտըտինք կոր քեզի հանդիպելու յոյսով:

– Ի՞նչ կայ նորէն, – Հարցուց Աստիկ նեղացած դէմքով մը:

– Ի՞նչ պիտի ըլլայ, երեք օր է տասը փարա չկայ գրպանս... գոնէ սա տղան մեղքցիր...

Աստիկ ձեռքը գրպանը տարաւ և չորս ոսկի հանելով՝ կնոջը տուաւ:

– Ասիկա ի՞նչ բանի կը բաւէ, – ըսաւ կինը, – մսավաճառին, հացավաճառին ու նպարավաճառին պարտքերս անգամ չեմ կրնար վճարել:

– Պարտք վճարելը ի՞նչ պիտի ըլլայ, – գոչեց Աստիկ, – թո՛ղ սպասեն, փաթլամիչ չեն ըլլար կոր ա՛...

– Տղուն վրան – գլուխը նայէ՛ մէյմը, կօշիկի պէտք ունի, հագուստի պէտք ունի...

– Հիմա քովս աւելորդ դրամ չունիմ, ունեցածս տուի, ահա՛...

– Խմելու դրամ կը գտնաս միշտ:

– Շատ մի՛ երկարեր, ամէն մարդ մեզի կը նայի կոր:

– Յանցանքը քուկդ է, եթէ կը ստիպուիմ սրճարաններու մէջ այս տեսակ խօսքեր ընելու...

– Ես տունէն հեռացայ, որպէսզի այդ տեսակ դիտողութիւններ չլսեմ:

Կինը տեսնելով, որ կարելի չէր աւելի երկարել խօսակցութիւնը, հեռացաւ՝ տխրօրէն գլուխը օրօրելով:

Աստիկ քանի մը գաւաթ քօնեաք ևս խմեց և հաշիւը մաքրելով՝ դուրս ելաւ սրճարանէն:

Մուտքը կոխած էր արդէն: Աստիկ ժամացոյցը նայեցաւ և մտովի ըսաւ.

«Դեռ ժամ մը ատեն ունիմ... երթամ անգամ մը Լիւքսէնպուրկ, ուր մէկ քանի ժամադրութիւններ ունիմ»:

Արդարև, բախտախնդիրը օրական գրեթէ 30-40 ժամադրութիւններ կուտար, որոնց մեծ մասը միևնոյն ժամուն և զանազան տեղեր կ'ըլլային, այնպէս որ նիւթապէս անկարելի էր իրեն համար այս ժամադրութիւններուն գտնուիլ:

Հազիւ թէ Լիւքսէնպուրկ մտած էր՝ մէկ քանի սեղաններէ սկսան զինքը կանչել:

Աստիկ մէկ սեղանէն միւսը սկսաւ պտըտիլ և իրեն սպասողներուն խօսք հասկցնել:

Այնչափ ճարպիկ էր համոզելու արուեստին մէջ, որ յաջողեցաւ քանի մը վայրկեանի մէջ ամէնը գոհացնել և ճամբու դնել:

Ինքն ալ սրտի գոհունակութեամբ և յաղթական ձևով մը դուրս ելաւ սրճարանէն ու ճամբան շարունակեց դէպի Թաքսիմ:

– Վա՛յ, էֆէնտի՛մ, մաշալլահ, այս կողմերը այս ատեն ի՞նչ գործ ունիք, կարծեմ դուք Գատըգիւղ կը բնակիք, – ըսաւ նիւհարակազմ խարտեաչ պեխերով մարդու մը, որ նոյնինքն Երուանդ Տէր-Անդրէասեանն էր:

– Չէ, Գատըգիւղ չեմ բնակիր, Սկիւտար կը բնակիմ, – պատասխանեց Տէր-Անդրէասեան իր պարտիզակցի յատկանշական հնչումովը:

– Ալ լրագիրներուն մէջ չենք կարդար կոր ձեր գեղեցիկ յօդուածները, ինչո՞ւ համար:

– Ի՞նչ ընեմ, եղբա՛յր, ժամանակ չունիմ գրելու, դասերով զբաղած եմ:

– Ցաւալի բան, որովհետև միշտ հաճոյքով կը կարդամ ձեր քաղաքական տեսութիւնները:

– Շնորհակալ եմ, Աստի՛կ էֆէնտի, լրագրութիւնը արդարև աղէկ արհեստ է, պայմանով, որ թերթը քուկդ ըլլայ... Խմբագրութենէ խեր չի կայ, պարզապէս թերթին տիրոջ համար աշխատիլ կը նշանակէ:

– Բայց ինչո՞ւ դուն քեզի համար թերթ մը չես հրատարակիր... վստահ եղիր, որ մեծ յաջողութիւն կը գտնես, քեզի պէս ծանօթ և կարող հրապարակագիր մը իրեն մասնաւոր թերթը չունենայ՝ իրաւցընէ մեղք է:

– Ես ալ շատ կը փափաքիմ թերթ մը հրատարակելու, բայց անկարելի է:

– Ինչո՞ւ համար...

– Որովհետև այս միջոցիս հայերէն թերթի համար արտօնութիւն չեն ի տար:

— Չե՛ն ի տար մի,— գոչեց Աստիկ,— եթէ կ'ուզես՝ տասը հատ հայերէն թերթի արտօնութիւն առնեմ վաղը:

— Ինչպէ՞ս,— հարցուց Տէր-Անդրէասեան զարմացած:

— Տպագրական տեսուչը, ներքին գործերու նախարարը, ամէնքն ալ իմ բարեկամներս են, մէկ խօսքս երկուք չեն ըներ... եթէ թերթի արտօնութիւն կ'ուզէիր՝ ինչո՞ւ մինչև հիմա ինծի չդիմեցիր:

— Ճշմարիտը՝ մտքէս չանցաւ,— խոստովանեցաւ Տէր-Անդրէասեան,— ուրեմն կարելի՞ է արտօնութիւն մը ձեռք ձգել:

— Երկու ժամուան գործ է պարզապէս ինծի համար... Ի՞նչ անուն դնել կ'ուզես թերթիդ:

— Անունը կարևորութիւն չունի, որևէ անուն մը կը դնեմ:

— Այնպէս է, իրաւունք ունիս, անունը կարևորութիւն չունի:

— Շիտակը՝ շատ երախտապարտ պիտի ըլլամ, եթէ կարենաք այդ ծառայութիւնը մատուցանել ինծի:

— Երախտապարտութեան բան չկայ... Ես ձեզի շատ կը սիրեմ ու կը յարգեմ և սիրով կ'ընեմ ձեռքէս եկածը... միայն թէ քիչ մը դրամ անհրաժեշտ է, որպէսզի գործը շուտով մը լմննայ:

— Որչա՞փ պէտք է,— հարցուց Տէր-Անդրէասեան մտահոգ դէմքով մը:

— Մեծ բան չէ, պզտիկ գումար մը... վերջապէս դուն մենէ ես, եթէ ուրիշ մը ըլլար՝ տարբեր բան... անցածները թուրքի մը համար թերթի մը արտօնութիւն առի՞ մարդը 50 ոսկի վճարեց:

— Յիսուն ոսկի՞,— գոչեց Տէր-Անդրէասեան սարսափած:

— Ճանրմ, անիկա ուրիշ, Ես քու վիճակդ գիտեմ, անոր համեմատ կուտաս:

— Օրինակի համար՝ քանի՞ ոսկի...

— Եթէ երեք ոսկի տաս՝ արտօնութիւնը երկու օրէն գրպանդ է:

— Կանխի՞կ պիտի վճարեմ:

— Բնականաբար, չմոռնամ ըսելու, որ խնդրագիրը և այլն ես պիտի գրեմ, դրոշմաթուղթին դրամը պիտի վճարեմ, ասկէ զատ ուրիշ մանր-մունր ծախքեր ալ կան ընելիք, որպէսզի գործը շուտով կարգադրուի... դուն մէկ կողմէն տպարանի և այլ պատ-

րաստութիւնները տես, որպէսզի անմիջապէս գործի սկսիս. ես քեզի լուրի մասին ալ դիւրութիւններ ցոյց կուտամ... «Իգտամ»ին կ'ըսեմ, որ իրենց լուրերը ձեզի տան ամէն իրիկուն. առտուա՞ն, թէ՞ իրիկուան թերթ պիտի ընես:

— Դիտաւորութիւնս առտուան թերթ հրատարակել է:

— Շատ աղէկ կ'ըլլայ...

— Ուրեմն երեք ոսկին հիմա պէ՞տք է, որ վճարեմ,— հարցուց սպառնալիք արտօնատէրը վարանոտ դէմքով մը:

— Բայց այդ դրամը հազիւ կը բաւէ ըլլալիք ծախքերուն, ես մէջը շահ մը չունիմ, պարզապէս բարեկամաբար գործդ պիտի տեսնամ:

— Գոնէ ապահո՞վ ես, որ արտօնութիւնը պիտի կրնաս առնել:

— Համարէ՛, որ արտօնութիւնը արդէն գրպանդ է, և անոր համեմատ գործդ տես,— ըսաւ Աստիկ հաստատուն շեշտով մը,— ես երբեք չեմ խոստանար գործ մը, որ կարող չեմ կատարել... իմ սկզբունքս այդ է:

Տէր-Անդրէասեան վերջապէս հանեց երեք ոսկին ու յանձնեց բախտախնդրին, որ անփոյթ ձեռով մը դրամը գրպանեց և ըսաւ.

— Եկուր միասին մէյ մէկ բան ճակեմք:

— Ձէ՛, եղբա՛յր, ժամանակը ուշ է, հազիւ վերջին շոգենաւին կրնամ հասնիլ,— պատասխանեց Տէր-Անդրէասեան,— մնա՛ք բարով, կը խնդրեմ, որ սա թերթին գործը շուտով կարգադրես...

— Անհոգ եղի՛ր, վաղը կամ առ առաւելն միւս օր արտօնութիւնը պատրաստ է:

Աստիկ բաժնուեցաւ Տէր-Անդրէասեանէն ու մտաւ Սաքըզ Աղաճ փողոցը և հասաւ Թառլա պաշի ու կանգ առաւ համեստ երևոյթով տան մը առջև:

Հազիւ թէ դրան զանգակը հնչեցուց, մանկամարդ գեղուհի մը եկաւ դուռը բանալու:

Կանանչ հովանոցով կիներ էր, զոր տեսանք մեր պատմութեան սկիզբը:

— Վերջապէ՛ս եկար,— գոչեց ուրախութեամբ,— անհամբեր քեզի կը սպասէի, վախցայ, որ պիտի չի գաս:

— Բայց այս իրիկուան համար խօսք տուած էի:

- Քու խօսքիդ շատ վստահութիւն չըլլար:
- Ուրիշները թերևս իրաւունք ունին այդ խօսքը ըսելու, բայց դուն՝ ո՛չ, - ըսաւ Աստիկ տունէն ներս մտնելով:
- Կինը դուռը գոցեց և աղապատանքով փաթթուեցաւ Աստիկի վզին և սկսաւ անոր այտերը համբուրել:
- Բախտախնդիրը փոխանակեց այդ համբոյրները, յետոյ հարցուց:
- Օղի ունի՞ս...
- Թէփսին պատրաստ քեզի կը սպասէ կոր,- պատասխանեց մանկամարդուհին զուարթութեամբ:
- Գրաւ կը դնեմ, որ դուն արդէն քանի մը գաւաթ խմած ես:
- Առա՛նց քեզի... երբե՛ք:
- Թողունք, որ երկու սիրահարները զուարճանան գլուխ գլխի:

ԳԼՈՒԽ Է ՀԵՏՔ ՄԸ

Այդ օրը Պատրիարքարանի մէջ անսովոր գործունէութիւն մը կար: Հարստահարելոց յանձնաժողովը նոր յիշատակագիր մը պատրաստած էր, որ պիտի ղրկուէր մեծ պետութիւններու դեսպաններուն:

Պատճէնները պատրաստուած էին ու պահարաններու մէջ դրուած կը հանգչէին գզրոցի մը մէջ, որուն բանալին կը գտնուէր Վահան Փափագեանի քով:

Պատրիարքը ատեն-ատեն զանգակը կը հնչեցնէր, և երբ բարապանը ներկայանար, կը հարցնէր, թէ Վահան Փափագեանը եկա՞ծ է:

- Ո՛չ, դեռ չեկաւ,- կը պատասխանէր բարապանը:

«Բայց այդ նամակները այսօր իսկ պէտք է ղրկուին իրենց տեղերը,- կը խորհէր ինքնին Պատրիարքը,- ո՞ր մնաց Փափագեանը, որ խոստացաւ կէս ժամէն վերադառնալ»:

Վերջապէս Վահան Փափագեան երևցաւ:

- Սրբազանը անհամբեր քեզի կը սպասէ,- ըսաւ բարապանը զայն տեսնելուն պէս:

- Աւելի կանուխ պիտի գայի, կարևոր գործ մը պատահեցաւ,- պատասխանեց Վահան Փափագեան՝ Պատրիարքին սենեակը մտնելով:

- Վերջապէ՛ս,- գոչեց Զաւէն Սրբազան զայն տեսածին պէս:

- Կը ներէք, Սրբազա՛ն, անակնկալ գործ մը պատահեցաւ և ստիպուեցայ ուշանալ:

- Ատենը անցած է արդէն, կը խնդրեմ սա յիշատակագիրները անմիջապէս ղրկեցէք դեսպանատուններուն, եթէ գզրոցի բանալին միասին տարած չըլլայիք՝ ես պիտի ղրկել տայի...

- Ես հիմա կ'առնեմ զանոնք ու ձեռքովս կը ձգեմ իրենց հասցէներուն:

- Շատ աղէկ կ'ըլլայ, ամենէն ապահով միջոցը այդ է:

- Արդէն ես որոշած էի իմ ձեռքով տանիլ նոր փորձանքի մը չհանդիպելու համար:

Վահան Փափագեան տենդոտ քայլով մը մտաւ այն սենեակը, որ իրեն յատկացուած էր և ուր կը գտնուէին բարենորոգումներու վերաբերեալ բոլոր թղթակցութիւնները և վաւերաթուղթերը:

Մեծ եղաւ իր զարմանքը, երբ իր գրասեղանին առջև նստած տեսաւ Գամիկ Սիրունեան. Պատրիարքարանի այն պաշտօնեան, որու մասին կասկածներ յարուցուած էին թիւ 17 խաֆէի խընդրին առթիւ:

Իր զարմանքը ալ աւելի մեծ եղաւ տեսնելով, որ ճիշդ իր ներս մտած միջոցին Գամիկ զբաղած էր բանալիներու տրցակ մը ձեռքը՝ գրասեղանին գզրոցները բանալ փորձելու:

- Ի՞նչ կ'ընէք այստեղ,- հարցուց Վահան Փափագեան:

- Ոչինչ, կը փորձէի գզրոցը բանալ,- պատասխանեց Սիրունեան,- բայց քովս գտնուած բանալիները չեն յարմարիր կոր:

- Բայց ինչո՞ւ պիտի բանայիք գզրոցը և ի՞նչ իրաւունքով, այս սենեակը ինծի կը պատկանի և իմ բացակայութեանս ատեն ոչ ոք պէտք է մտնէ հոս:

- Որովհետև ուշացաք, Պատրիարքը ուզեց գզրոցը բանալ տալ և դեսպանատունները ղրկուելիք նամակները առնել և ղըրկել՝ վախնալով, որ ժամանակին իրենց տեղերը չեն հասնիր:

- Զեզի՞ յանձնեց այդ գործը:

— Չէ՛, բայց երբ Պատրիարքին քովն էի, լսեցի, որ կը հարցընէր, թէ արդեօք բանալի մը կա՞ր այս գզրոցները բացող... Ես ալ ուզեցի անգամ մը փորձել... Բայց իմ բանալիներս չեն յարմարի կոր, արդէն պէտք ալ չմնաց, քանի որ դուք եկաք: Կը զարմանամ, որ այսչափ չնչին բանի մը համար դիտողութիւն կ'ընէք...

— Կարծեմ շատ իրաւունք ունիմ դիտողութիւն ընելու: Ինչպէ՞ս կրնաք ուրիշի մը պատկանող գզրոց մը բանալ, երբ այդպիսի արտօնութիւն մը չէ տրուած ձեզի...

— Բայց այս գրասեղանը ո՛չ թէ անձնապէս ձեզի կը պատկանի, այլ Պատրիարքարանին, և երբ Պատրիարքը կ'ուզէ բանալ, կարծեմ դուք չէք կրնար արգելք ըլլալ:

— Պատրիարքը ձեզի չէ ըսած, որ ձեր բանալիները փորձէք...

— Ուղղակի կերպով չըսաւ, բայց փափաք յայտնեց, որ դրոցը բացուի՝ եթէ կարելի է:

— Այս սենեակը ուղղակի իմ պատասխանատուութեանս տակ կը գտնուի, ես այս գիտեմ, և ձեր ընթացքը դատապարտելի է:

— Ամէն պարագային դուք չէք, որ կրնաք դատապարտել, Հոս պետ մը ունինք, որ միայն կրնայ իմ ընթացքս դատապարտել կամ արդարացնել...

Այս ըսելով Գամիկ Սիրունեան ոտքի ելաւ և սրտնեղած դէմքով մը դուրս ելաւ սենեակէն:

Վահան Փափագեան յուզումէն դողացող ձեռքով մը բացաւ գզրոցը և նամակները առնելով՝ մի առ մի ուշադրութեամբ քննեց, յետոյ անոնց վրայ կասկածելի բան մը չգտնելով՝ զրպանը դրաւ և դուրս ելաւ գրասենեակէն:

Երկու բարապաններ կեցած էին սրահը:

— Ասկէ ետքը ո՛չ ոքի թոյլ պիտի տաք, որ իմ սենեակը մըտնէ իմ բացակայութեանս, — ըսաւ անոնց:

— Բայց արդէն ոչ ոք կը մտնէ, — դիտել տուաւ բարապաններէն մին:

— Ինչպէ՞ս, — գոչեց Փափագեան, — դեռ հիմա ներս մտած ատենս տեսայ, որ Գամիկ էֆէնտին նստած էր գրասեղանին առջև:

— Գամիկ էֆէնտին տարբեր, անիկա Պատրիարքարանի պաշտօնեայ է:

— Ես չեմ ուզեր, որ նոյնիսկ Պատրիարքարանի պաշտօնեաները մտնեն Հոս, կը հասկնա՞ք:

— Շատ աղէկ, քանի որ այնպէս կ'ուզէք, — պատասխանեց բարապանը:

— Եթէ ուրիշ անգամ որեւէ մէկը տեսնեմ գրասենեակիս մէջ, ձեզի պատասխանատու պիտի բռնեմ:

— Այն ատեն լաւագոյն է, որ սենեակը կղպէք և բանալին միասին տանիք կամ ձեզի յանձնէք:

— Այո՛, այո՛, այսպէս պէտք է ընեմ, — ըսաւ Վահան Փափագեան և խօսքը գործին միացնելով՝ իր գրասենեակը կղպեց և բանալին յանձնեց բարապանին:

Յետոյ մտաւ կրկին Պատրիարքին սենեակը և պատմեց Գամիկ Սիրունեանի Հետ ունեցած միջադէպը:

— Իրա՛ւ է, որ ես պահ մը խորհեցայ բանալ տալ գզրոցը տարբեր բանալիով մը, բայց երբեք այդպիսի պաշտօն մը չեմ յանձնած իրեն, — ըսաւ Պատրիարքը, — այսուհանդերձ կարծեմ խնդիրը մեծ կարևորութիւն մը չունի:

— Բայց վերջապէս իր ընթացքը քիչ մը կասկածելի թուեցաւ ինծի:

— Ես մինչև հիմա Սիրունեանի մասին կասկածելու պատճառ մը չեմ ունեցած:

— Ինչ որ է, ես բարապաններուն պատուիրեցի, որ ասկէ ետքը իմ սենեակս կղպուած պահեն և ոչ ոքի թոյլ տան ներս մըտնել իմ բացակայութեանս ատեն:

— Շատ աղէկ կարգադրութիւն մըն է այդ, — պատասխանեց Պատրիարքը, — իցի՛ւ թէ աւելի կանուխ այդ հրահանգը տայիք: Նոյն միջոցին ներս մտաւ Գամիկ:

— Սրբազա՛ն, — ըսաւ, — ես մէկ քանի անձնական գործեր ունիմ, ստիպուած եմ մեկնելու, հրաման մը ունի՞ք:

— Չէ՛, — ըսաւ Պատրիարքը, — կրնաք երթալ: Հազիւ թէ Գամիկ դուրս ելած էր, Փափագեան ևս մեկնեցաւ և ուղղուեցաւ դէպի կայարան:

Հակառակ Պատրիարքին հաւաստումներուն՝ Փափագեանի

միտքը պղտորած էր և կը խորհէր, որ արդեօք Գամիկ չիլ դեր մը չէ՞ր կատարեր Պատրիարքարանի մէջ՝ օգտուելով իր գրաւած դիրքէն:

Շատ մը պատճառներ իրաւունք կուտային իրեն այսպէս մտածելու: Բացի այդ պատճառներէն ընդհանուրին գաղափարն ալ նպաստաւոր չէր այդ պաշտօնեային մասին և նոյնիսկ բացէիբաց ամբաստանողներ ալ կային զինքը, միայն թէ մինչև հիմա ո՛չ ոք կրցած էր գրական փաստ մը ցոյց տալ:

Եւ պարզ կասկածներով կարելի չէր մարդ մը ամբաստանել, մանաւանդ երբ խնդիրը այնքա՛ն ծանրակշիռ Հանգամանք մը ունէր:

Բայց այդ օրուան գորոցի դէպքը բաւական լուրջ ապացոյց մը կը թուէր Փափագեանի, և կը մտածէր այս մասին իր ընկերներուն խօսիլ:

Այս մտածումներով տոգորուած Հասաւ կայարան, ուր արդէն իրմէ առաջ եկած էր Գամիկ: Փափագեան չմօտեցաւ անոր և քարափին վրայ, մէկ կողմ քաշուած սպասեց կառախմբին գալու և գրպանէն ուսերէն թերթ մը Հանեց կարդալու:

Նոյն միջոցին պատանի մը մօտեցաւ իրեն: Հագիւ 18-19 տարեկան, վառվռուն սև աչքերով, երկայն, գիսախուիւ մագերով մէկն էր՝ լայն սև փողկապ մը դրած: Յայտնի էր, որ այդ տղան յեղափոխական մըն էր, ապագայ գործիչ մը ըլլալու սահմանուած:

Յարգանքով մօտեցաւ Փափագեանին և քառքէթը Հանելով բարեկեց:

– Դո՞ւ ես, Կարօ՛, ի՞նչ բան ունիս այստեղ, – ըսաւ Փափագեան մտերմական շեշտով մը:

– Նամակներ կար Գումգաբուի ընկերներուն բաժնելու, անոր Համար եկայ, – պատասխանեց պատանին:

– Հիմա ո՞ւր կ'երթաս:

– Կը վերադառնամ Բերա:

Նոյն միջոցին կառախումբը սուլելով մտաւ կայարան:

Վայրկեան մը ետքը Փափագեան և պատանին տեղաւորուած էին երկրորդ կարգի վակօնի մը մէջ:

– Գամիկ էֆէնտին կը ճանչնաս՞, – Հարցուց Փափագեան պատանիին:

– Ո՞ր Գամիկ էֆէնտին:

– Սիրունեան... Պատրիարքարանի պաշտօնեայ:

– Այո՛, այո՛, կը ճանչնամ, – ըսաւ պատանին, – Հիմա կայարանն էր, կարծեմ մեզի հետ կառախումբ մտաւ...

– Կեցցե՛ս, – գոչեց Փափագեան, – ճիշդ այդ է ըսածս:

– Բնականաբար կը ճանչնամ... շատ անգամ Պատրիարքարանի մէջ տեսած եմ զինքը:

– Հետը տեսնուա՞ծ ես:

– Չէ՛, Հետը տեսնուելու առիթ չէ եղած:

– Ուրեմն ինք քեզի չի՞ ճանչնար:

– Ո՛չ, չճանչնար, – Հաստատեց Կարօ:

– Ուրեմն շատ լաւ, գործերնիս կարգին է:

– Ի՞նչ գործ, – Հարցուց պատանին Հետաքրքիր:

– Դուն Հիմա Բերա գործ մը ունի՞ս:

– Ո՛չ, ես իմ գործս տեսած եմ:

– Ուրեմն եթէ քեզի գործ մը յանձնեմ, կրնա՞ս կատարել:

– Ամենայն սիրով, եթէ մեր կուսակցութեան Համար է:

– Երբոր Սիրքէճիի կայարանը Հասնինք, իսկոյն վար կ'իջնաս վակօնէն, կը փնտոես, կը գտնես Գամիկ էֆէնտին և հեռուէն անոր կը հետևիս, բայց առանց անոր ուշադրութիւնը հրաւիրելու:

– Գիտես, որ ես այդ տեսակ գործերու մէջ շատ ճարպիկ եմ, – պատասխանեց պատանին խրոխտ ձևով մը:

– Այո՛, անշուշտ, և ճիշդ ատոր Համար է, որ շատ գոհ եմ քեզի Հանդիպելուս: Հեռուէն կը դիտես, թէ ո՞ւր կ'երթայ, որո՞ւ հետ կը տեսնուի ան, և յետոյ կուգաս զիս կը գտնես ու տեղեկութիւն կուտաս:

– Քեզի ո՞ւր պիտի գտնեմ:

– «Ազատամարտ»ի խմբագրատունը:

– Շատ աղէկ... բայց ինչո՞ւ Համար կ'ուզես այդ մարդը հետապնդել:

– Որովհետև իր մասին կասկածներ ունիմ, – պատասխանեց Փափագեան:

– Կասկածնե՞ր ունիս իր մասին, ի՞նչ տեսակ կասկածներ, – Հարցուց պատանին:

– Գիտե՞ս, թէ այժմ թիւ 17 խաֆիէի խնդիր մը կայ:
– Այո՛, «Ազատամարտ»ի մէջ կարդացի:
– Կարգ մը անձերու վրայ կասկած կայ, թէ իրենք են այդ թիւ 17...

– Որո՞նք են այդ անձերը:
– Անոնցմէ մին ահա՛ այս Գամիկն է, թէև Հաստատ ապացոյց մը չիկայ այս մասին... Ինչ որ է, այսօր դէպք մը պատահեցաւ, որ իմ կասկածներս աւելի զօրացուց, ասոր Համար կ'ուզեմ իմ կողմէս, ծածկաբար, քննութիւն մը ընել, մինչև որ կարենամ ապացոյց մը ձեռք ձգել:

– Բայց ի՞նչ պէտք կայ երկար-բարակ քննութիւններու, – գոչեց պատանին:

– Ինչպէ՞ս պէտք չիկայ, – Հարցուց Փափազեան:
– Կարճ միջոցը լաւագոյնն է:
– Եւ ո՞րն է այդ կարճ միջոցը:
– Զինքը անմիջապէս տէրօրական գործողութեան ենթարկել:

– Բայց դեռ պարզ կասկած մըն է մեր ունեցածը:
– Ատիկա բաւ է արդէն...
– Չէ՛, տղա՛ս, ատիկա բաւ չէ, պէտք է նախ քննութիւն կատարել, իրողութիւնը ստուգել, փաստեր և ապացոյցներ ձեռք բերել, և յետոյ կ'որոշենք, թէ ինչ պատիժ պէտք է տալ իրեն:

– Ու մինչև այն ատեն ինք պիտի շարունակէ իր դաւաճանութիւնները, այնպէս չէ՞...

– Դու դեռ պատանի ես, շուտով կը բորբոքես, պէտք է պաշարիւնով գործենք, ուստի ինչ որ քեզի պատուիրեցի՛ այն կատարէ... և յետոյ, պէտք չէ, որ ոչ ոքի բան մը խօսիս այս մասին:

– Իհարկէ, – պատասխանեց պատանին:
Երբ կառախումբը հասաւ Սիրքէճի կայարանը, Կարօ խկոյն վար ցատքեց վակօնէն և զնաց դիրք բռնել ճամբորդներու ելքի դրան մօտ:

Քիչ յետոյ նշմարեց Գամիկը, որ կուգար իր տաճիկ պէյի գիրուկ ու պէլադրի կերպարանքովն ու խորխտ քալումբովը:

Երբ գուրս ելաւ կայարանէն, Կարօ, 20-25 քայլ հեռուէն, հետեւեցաւ իրեն:

Պատանին իրեն յանձնուած պաշտօնին այնքա՛ն կարևորութիւն ընծայած էր, որ կը կարծէր, թէ Հայաստանի փրկութիւնը իր կատարելիք հետապնդումէն կախուած է:

Վահան Փափազեան հեռուէն դիտեց այդ երկուքին դէպի Պապը Ալի ճատտէսին երթալը և մտովի ըսաւ.

«Կարօ լաւ և հաւատարիմ, մանաւանդ ուշիմ տղայ է, մեծ բարեբախտութիւն մը եղաւ, որ իրեն հանդիպեցայ և այս հետախուզութեան գործը իրեն յանձնեցի: Վստահ եմ, որ խղճահարութեամբ գործ պիտի տեսնէ»:

Այս խորհրդածութիւնը ընելէ ետքը Վահան Փափազեան ուղղուեցաւ դէպի կամուրջ և անկէ ալ Բերա, ուղղակի «Ազատամարտ»ի խմբագրատունը:

Մուտք տիրած էր արդէն, բայց խմբագրատան երկու սրահները ելեքտրական լոյսերով ողողուած էին:

Դուրսի սրահին մէջ Համբարձում Համբարձումեան, Նիհար, ջղային, տժգոյն դէմքով, նստած գրասեղանին առջև, իր խելացի աչքերը հակած թղթին վրայ, տենդայոյզ ձեռքով մը արագ-արագ կը գրէր նոյն օրուան մէպուսական ժողովի նիստին նկարագրութիւնը՝ ատեն-ատեն աչք մը նետելով թուղթի մը վրան, ուր նօթիր առած էր:

Քիչ մը անդին, նոյն սեղանին վրայ, նստած էր Գեղամ Բարսեղեան՝ երկար, արուեստագետի մազերով, ակնոցը քթին, մեկամաղձոտ, երազուն դէմքով, փորձեր սրբագրելու զբաղած էր:

Ներսէս Փափազեան, ուրիշ սեղանի մը քով, անդդիացի ջլէրճիմէնի ածիլուած երեսովը, լուրջ ու հանդիսական, օրուան մէջ իր քաղած ազգային լուրերը կը շարագրէր, մինչ Յակոբ Սիրունի ընկղմած կը թուէր բանաստեղծութեան հատորի մը ընթերցումին մէջ:

Վահան Փափազեան անցաւ այդ սրահէն, հաւաքական «բարե ձեզ» մը ուղղելով ամենուն և մտաւ միւս սենեակը, բուն «Ազատամարտ»ի խմբագրապետին խուցը:

Հոն հաւաքուած էին Ռուբէն Զարդարեան, Շահրիկեան և է. Ակնունի:

Հայկական բարենորոգումներու խնդրին վրայ կը խօսէին, երբ ներս մտաւ Վահան Փափազեան:

– Ի՞նչ եղաւ յիշատակագիրը,– Հարցուց անմիջապէս Շահ-րիկեան, երբ իրենց ընկերը տեսաւ:

– Հիմա ես ձեռքովս յանձնեցի դեսպանատուններուն,– պատասխանեց Վահան:

– Լա՛ւ, աւելի աղէկ... այդ յիշատակագրին համար շատ մտահոգ էի... պէտք է, որ բոլորովին ծածուկ մնայ: Թուրքերը սկսած են շատ կասկածով վերաբերուիլ մեզի հանդէս:

– Գիտեմ, մեր վրայ այլևս վստահութիւն չունին:

– Այսօր,– շարունակեց Շահրիկեան,– մէկ քանի թուրք իթ-թիհատականներու հետ տեսնուեցայ, պարզապէս սպառնալիք կ'ընեն: Մանաւանդ Պատրիարքարանի յարաբերութիւնները դեսպանատուններու հետ շատ գէշ ազդեցութիւն կը գործէ իրենց վրայ...

– Բայց տարբեր կերպով չենք կրնար ընել, ստիպուած ենք Եւրոպական պետութիւններու պաշտպանութեան դիմել, քանի որ թուրքերէն յոյս չի կայ... այդ մարդիկը, մինչև այսօր, մեզի խաբեցին ու ասկէ ետքն ալ պիտի խաբեն:

– Անշուշտ այդպէս է,– դիտել տուաւ Ակնունի,– միայն թէ շատ մեծ խոհեմութեամբ վարուելու ենք, թուրքերը պէտք չէ, որ մեր ըրածները գիտնան...

Եւ այս առթիւ դարձեալ խօսքը դարձաւ թիւ 17 խաֆիէին շուրջը:

– Այսօր տարօրինակ դէպք մը պատահեցաւ,– ըսաւ Վահան Փափազեան:

– Ի՞նչ բան,– Հարցուց Զարդարեան:

Վահան Փափազեան մանրամասնօրէն պատմեց զգրոցի դէպքը և ըսաւ, թէ ինչ պաշտօն յանձնած էր Կարոյի:

– Շատ լաւ ըրեր ես,– ըսաւ Շահրիկեան,– պէտք է այդ մարդուն վրայ լուրջ ուշադրութիւն դարձնել... ես առաջին օրէն չեմ հաւանած այդ մարդուն:

– Ես ալ նմանապէս,– պատասխանեց Փափազեան,– միայն թէ Պատրիարքը և Վարչութեան անդամները կը պաշտպանեն զինքը... ըսելով, թէ որեւէ դրական ապացոյց չկայ իրեն դէմ:

– Իրական ապացոյցի ի՞նչ պէտք,– գոչեց Շահրիկեան,– քանի որ կասկած կայ իր մասին, պէտք է հեռացնել զինքը Պատրիարքարանէն...

– Լաւ, ինչո՞ւ դուն այդ պահանջը չես ըներ իբրև Հարըս-տահարութեանց յանձնաժողովի անդամ:

– Ես այդ մասին խօսեցայ իմ ընկերներու հետ և տեսայ, որ շատ համամտութիւն ցոյց չի տուին... արդէն Պատրիարքարանը պէտք է արմատէն մաքրագործել:

Խօսակցութիւնը այսպէս շարունակուեցաւ երկարատեան, մինչև որ Կարօ եկաւ իր հետապնդութեան արդիւնքը հաղորդելու:

– Ի՞նչ լուր,– Հարցուց Վահան Փափազեան զայն տեսածին պէս:

– Կայարանէն ելլելով,– սկսաւ պատմել պատանին,– Գամիկ էֆէնտի ուղղուեցաւ դէպի «Բիւզանդիոն»ի խմբագրատունը, հոն հասնելով վեր ելաւ: Ես դռնէն քիչ մը հեռու սպասեցի: Քանի մը վայրկեան ետքը վար իջաւ, այս անգամ հետը ուրիշ մէկը կար...

– Ո՞վ էր այդ մարդը,– Հարցուց Վահան Փափազեան:

– Նախ չկրցայ ճանչնալ, որովհետև բաւական հեռու կը գտնուէի իրենցմէ, բայց երբոր մօտեցայ, տեսայ, որ Արշակ Ալ-պոյաճեանն էր...

– Իր մտերիմ բարեկամն է,– դիտել տուաւ Փափազեան:

– Կամաց-կամաց մօտեցայ իրենց և ականջ դրի իրենց խօսքերուն... Ալպոյաճեան պոռալով կը խօսէր, ու իմացայ, որ թիւ 17 խաֆիէին մասին կը խօսէին...

– Ի՞նչ կը խօսէին,– Հարցուց Շահրիկեան հետաքրքիր:

– Ալպոյաճեան կ'ըսէր, որ այդ խնդիրը նորէն Ազգային ժողովին մէջ վիճաբանութեան առարկայ պիտի ըլլար և թէ այս անգամ նոր յայտնութիւններու կը սպասուէր, իսկ Գամիկ կ'ըսէր, թէ խնդիրը վերջացած է, և Վարչութիւնը որեւէ եզրակացութեան մը չէ կրցած հասնիլ և այս անգամ Ազգային ժողովին պիտի հաղորդէ իր տեղեկագիրը...

– Այո՛, գիտեմ,– ըսաւ Շահրիկեան,– ճիշդ է Գամիկին ըսածը, Վարչութեան տեղեկագիրը բոլորովին բացասական է, որովհետև չէ կրցած որեւէ ապացոյց գտնել կասկածելի համարուած անձերուն մասին:

– Յետոյ ի՞նչ եղաւ,– Հարցուց Վահան Փափազեան՝ խօսքը պատանիին ուղղելով:

– Երբ Պապը Ալի մօտեցան, Ալպոյաճեան բաժնուեցաւ Գամիկէն, իսկ այս վերջինը ուղղուեցաւ Բ. Դուռ և ներս մտաւ: Ես չհամարձակեցայ երթալու ետևէն և դուրսը սպասեցի:

– Չպէտք էր իր օձիքը թողնէիր,– դիտել տուաւ Շահրիկեան:

– Վախցայ, որ ներս մտած ատենս դիտողութիւն կ'ընեն,– պատասխանեց պատանին:

– Ոչ ոք իրաւունք ունի ներս մտնողներուն դիտողութիւն ընելու:

– Ես երբեք Պապը Ալիէն ներս չեմ մտած, հետևաբար չէի գիտեր, թէ մուտքը ազատ էր:

– Ինչ որ է, պատմութիւնդ շարունակէ՛,– ըսաւ Փափազեան:

– Կէս ժամ յետոյ Գամիկ դուրս ելաւ թուրքի մը հետ: Նորէն կամաց մը մօտեցայ իրենց, բայց այնչափ ցած ձայնով կը խօսէին, որ կարելի չէր իմանալ:

– Հետաքրքիր էր գիտնալ, թէ ի՛նչ կը խօսէին:

– Քանի մը բառեր կրցայ իմանալ, բայց առանց իմաստ մը կարենալ հանելու,– պատասխանեց պատանին,– միայն կ'երևար, որ Պատրիարքարանի մասին էր խօսքը, որովհետև «փաթրիք» և «փաթրիքհանէ» բառերը մէկ քանի անգամ լսեցի:

– Չկրցա՞ր թուրքին անունը իմանալ:

– Չէ՛, Գամիկ «պէյ, էֆէնտի» ըսելով կը խօսէր հետը:

– Ինչպէ՞ս մարդ էր:

– Կարճահասակ, գիրուկ, սև ու թաւ պեխերով մարդ մըն էր, շատ մաքուր հագուած: Միասին մինչև էմին էօնիւ գացի, հոն թուրքը դէպի Պալք Բագար ուղղուեցաւ, իսկ Գամիկ կամուրջէն անցնելով՝ եկաւ Ղալաթիա և Մէհմէտ Ալի փաշա խանը մտաւ: Ես ալ հետևեցայ իրեն: Հոն գրասենեակ մը մտաւ:

– Որո՞ն գրասենեակը,– հարցուց Փափազեան,– գոնէ կըրցա՞ր հասկնալ:

– Այո՛, հասկցայ:

Եւ պատանին ծանօթ հայ վաճառականի մը անունը տուաւ:

– Հագիւ հինգ վայրկեան մնաց հոն,– շարունակեց Կարօ,– ու դուրս ելլելով՝ կրկին դէպի կամուրջ գնաց: Տեսնելով, որ ժամանակը ուշ էր, այլևս չհետևեցայ իրեն:

– Պէտք է ասել, որ այդ հետապնդումը որևէ արդիւնք չէ տուել,– եզրակացուց Շահրիկեան:

– Ինչ որ ըլլայ՝ այդ մարդը միշտ կասկածելի է ինձի համար,– ըսաւ Ռուբէն Զարդարեան, որ մինչև այն ատեն լուռ մնացած էր:

– Կասկածը բաւական չէ, փաստ և ապացոյցներ հարկաւոր են, և ոչինչ կայ,– պատասխանեց Ակնունի:

– Մինչև որ Պատրիարքարանը արմատապէս չմաքրագործուի, կարելի չէ բան մը անել,– կրկնեց Շահրիկեան,– և այդ մաքրագործումը անկարելի է:

– Ինչո՞ւ համար անկարելի,– հարցուց Զարդարեան:

– Որովհետև կամք և կորով կը պակսին, յետոյ ամէն մէկ պաշտօնեայի ետև կեցած է, իբրև պաշտպան, մի մենծ աղա, որուն խաթրին կարելի չէ դպչիլ:

– Կարօ՛, դուն կընաս երթալ,– ըսաւ Փափազեան պատանիին:

Այս վերջինը, ներկաները բարևելով, դուրս ելաւ քիչ մը սրտաբեկ երևոյթով:

Ինք այնպէս ենթադրած էր, որ շատ կարևոր գործ մը տեսած էր ու հիմա կը հասկնար, որ բան մը չէր կրցած ընել:

Շահրիկեան շարունակեց իր տեսութիւնը Պատրիարքարանի մաքրագործումին մասին:

Յանկարծ դուռը բացուեցաւ և ներս մտաւ Վարդգէս՝ սիկառէթը բերնին:

– Ի՞նչ նորութիւն,– հարցուց խօսքը ամենուն ուղղելով:

– Դու ես դրսէն գալիս, քո մօտ պէտք է լինին նորութիւնները,– դիտել տուաւ Ակնունի:

– Իմ քով նորութիւնը այն է, որ Հայկական բարենորոգումներու հարցը ջուրը իյնալու վրայ է,– ըսաւ Վարդգէս՝ թիկնաթոռին մէջ տեղաւորուելով:

– Ինչո՞ւ այդ յոռետեսութիւնը,– հարցուց Զարդարեան:

– Որովհետև հիմա Տիրան Քէլէկեանի հետ էի, և շատ յուսահատեցուցի բաներ ըսաւ:

– Ինչպէ՞ս...

– Պարոն Վանկէնհայմ ամէն բան կ'ընէ եղեր ձախողութեան մատնելու համար Հայկական խնդիրը:

– Ատիկա նորութիւն մը չէ մեզի համար, – նկատեց Ջարդարեան:

– Այո՛, բայց խնդիրը այն է, որ իր նպատակին հասնելու համար ամէն միջոց կը գործածէ... երէկ Տիրան Քէլէկեան տեսակցութիւն մը ունեցած է հետը և այդ տեսակցութեան միջոցին խօսք բացուեց է հայկական նահանգներու բարենորոգումներուն վրայ: Վանկէնհայմ բացէիբաց յայտարարեց է, որ իր կառավարութիւնը երբեք պիտի չթոյլատրէ, որ Հայկական բարենորոգումներու անունին տակ Ռուսիա, Անգղիա և Ֆրանսա ազդու միջամտութիւն մը ընեն թուրքիոյ ներքին խնդիրներուն և ջանան տեսակ մը խնամակալութիւն հաստատել անոր վրայ:

– Պէտք է, որ դեսպանին այդ խօսքերը հաղորդենք իսկոյն անգղիական և ռուսական գեսպաններուն, – դիտել տուաւ Շահրիկեան:

– Ի՞նչ հարկ հաղորդելու, քանի որ Վանկէնհայմ ծածկաբար չգործեր և նոյն խօսքերը հաւանօրէն կրկնած է նաև միւս պետութիւններու դեսպաններուն: Ուրիշ կարևոր բան մըն ալ ըսաւ Քէլէկեանը:

– Ի՞նչ բան:

– Հայկական բարենորոգումներու համար ինչ բանակցութիւններ որ կը կատարուին դեսպաններու միջև, Վանկէնհայմ իսկոյն կը հաղորդէ եղբր թալէաթին: Նոյնիսկ ըսուեցաւ, որ Պատրիարքարանէն տրուած յիշատակագիրներ գերման դեսպանատան կողմէ հաղորդուած են թուրք կառավարութեան: Վերջապէս պէտք է շատ խոհեմութեամբ գործենք, – ըսաւ Վարդգէս:

– Ես չեմ կարծեր, որ գերմանական էնթրիկները կարենան Հայկական Հարցը բոլորովին վիժեցնել, – պատասխանեց Ջարդարեան, – մանաւանդ որ այս անգամ Անգղիա, Ֆրանսա և Ռուսիա հաստատ կերպով որոշած կը թուին այդ բարենորոգութիւնները գործադրել:

– Գերմանիոյ այս ընթացքը եթէ խնդիրը բոլորովին վիժեցնել ալ չիտայ, շատ պիտի վնասէ գործին, և առերևոյթ բարենորոգութիւններով թերևս պիտի վերջացնեն գործը:

– Թալէաթն ալ արդէն երկու օր առաջ ինծի կ'ըսէր, թէ Հա-

յերը եթէ անհաշտ ընթացք մը բռնեն թուրքերու հանդէպ, շատ անախորժ բաներ կ'ընան պատահիլ, – յայտարարեց Շահրիկեան:

– Թալէաթի խօսքերը պարզապէս պլըֆ են, – ըսաւ Ակնունի:

– Թուրքերը եթէ իրապէս պաշտպանութիւն գտնեն գերմաններէն և ո՛չ մէկ բարենորոգութիւն կ'ընեն, ես այս գիտեմ, – գոչեց Վարդգէս:

– Պէտք է ըսել, որ Զօհրապն ալ վերջերս շատ յոռետես դարձած է, – դիտել տուաւ Ջարդարեան:

Նոյն միջոցին դուռը զարնուեցաւ:

– Մտէ՛ք, – ըսաւ Ջարդարեան:

Դուռը բացուեցաւ, և ներս մտաւ Աստիկ Մարկոսեան:

Առաջին անգամ էր, որ այդ մարդը կ'երևար «Ազատամարտ» խմբագրատան մէջ, և ներկաները, որոնցմէ միայն Ջարդարեան կը ճանչնար զայն, զարմանքի շարժում մը ըրին:

Աստիկ աջ ու ձախ թէմէնահաներ սփռելով բարեկեց ամէնքը:

Ջարդարեան պարտք զգաց զինքը ներկայացնել միւս ընկերներուն.

– Էֆէնտի՛մ, յատկապէս պարտք համարեցի գալ և ձեր այսօրուան խմբագրականը շնորհաւորել... սքանչելի էր, պարզապէս սքանչելի էր, – ըսաւ Աստիկ, – երեք անգամ կարդացի... զարնելու է, էֆէնտի՛մ, այդ մարդոց գլխին զարնելու... միայն որ, եթէ, կը ներէք ձեզի դիտողութիւն մը ընեմ... բայց կը ներէք համարձակութեանս...

– Խօսեցէ՛ք, – ըսաւ Ջարդարեան:

– Ձեր խմբագրականները երբեմն կը թարգմանէք կոր թուրքերէնի և շատ աղէկ կ'ընէք կոր, միայն թէ այդ թարգմանութիւնները լաւ, սահուն, յստակ և թուրք լրագրական ոճին յարմար չեն... կը ներէք, բայց ըրած դիտողութիւնս...

– Մեր միտքը գրականութիւն ընել չէ, այլ պարզապէս թուրքերուն հասկցնել իրենց գիտցած լեզուովը, ինչ որ կը խորհինք իրենց մասին:

– Անշուշտ, անշուշտ, բայց վերջապէս կարելի է աւելի խնամով ընել այդ թարգմանութիւնները... օրինակի համար, վստահ եմ, որ այսօրուան խմբագրականը վաղը թուրքերէնի պիտի

Թարգմանէք ձեր թերթին մէջ... մեղք պիտի ըլլար, եթէ լաւ թըրքերէնով մը չթարգմանուէր:

– Ո՛հ, այդ խմբագրականը պիտի չթարգմանուի, – նկատեց Ջարդարեան:

– Ինչո՞ւ համար:

– Այդ մասին մենք մեր մասնաւոր պատճառները ունինք:

– Այդ տարբեր բան... ինչ որ է, իմ ըրածս պարզ դիտողութիւն մըն էր, բարեկամական դիտողութիւն մը... որովհետեւ անկեղծօրէն կ'ըսեմ, ես շատ համակիր եմ ձեր թերթին ուղղութեան:

– Ծնորհակալ ենք, – պատասխանեց Ջարդարեան:

– Ձեր ըրածը բո՛ւն ժուռնալիստ է... առանց որեէ նկատողութեան, առանց կաշկանդումի որեէ հաշիւի:

– Իհարկէ, մեր թերթը կուսակցական թերթ մըն է և որոշ ուղղութիւն մը ունի:

– Քիչ մը թերեւ լուրերու բաժինը տկար է, – դիտել տուաւ Աստիկ, – այսինքն ըրբօրթաժի ճիւղը... բայց կարելի է այդ մասին ալ դարման մը խորհիլ:

– Մենք լուրերու շատ կարևորութիւն չենք տար, մենք լուր չենք վաճառեր, այլ գաղափար կը տարածենք, – ըսաւ Ջարդարեան:

– Շատ ճիշդ կը խօսիք, բայց վերջապէս թերթը ծախելու համար լուրերու ալ ոյժ տալու է, այս մասին թերեւս ես կրնամ ձեզի օգտակար ըլլալ:

– Ի՞նչ կերպով:

– Գիտէք, որ թուրք թերթերու հետ սերտ յարաբերութիւն ունիմ, ասկէ զատ թէ՛ թուրք պաշտօնական շրջանակներու հետ և թէ՛ օտար դիւանագիտական աշխարհի հետ ծանօթութիւններ ունիմ... մէկ խօսքով, կրնամ ձեզի, ատեն–ատեն, կարևոր տեղեկութիւններ հաղորդել:

– Այդ մասին կրնանք մտածել, – պատասխանեց Ջարդարեան խուսափողական ձևով մը:

– Ես այս առաջարկութիւնը կ'ընեմ իբրև ձեր թերթին համակիր մը, առանց ուրիշ որեէ նկատումի...

– Շատ շնորհակալ ենք:

– Այսինքն նիւթական փոխարինութիւն մը չեմ սպասեր ատոր համար:

– Մեր սկզբունքն է միշտ վճարել մեր աշխատակիցները, – պատասխանեց Ջարդարեան, – բայց նախ պէտք է որոշենք, թէ պէտք ունի՞նք նոր լրատուի մը:

– Ես կ'ուզեմ ձրիաբար աշխատակցիլ:

– Այդ խնդիր չէ... միայն թէ ես առանձին որոշում մը չեմ կրնար տալ, պէտք է նախ խորհրդակցիմ ընկերներու հետ:

– Ասկէ զատ, սա ևս ըսեմ, որ ես միմիայն լուրեր չէ, որ կ'ուզեմ հաղորդել, այլ յօդուածի ձևով տեղեկութիւններ տալ... այսինքն միևնոյն ատեն խորհրդածութիւններ ընել:

– Ատոնք յետոյ կարելի է որոշել...

– Օրինակի համար Հայկական բարենորոգութիւններու մասին բաւական տեղեկութիւններ ունիմ... գիտեմ, թէ թուրք կառավարութեան բռնած ընթացքը ի՞նչ է և միւս կողմէ դեսպանատուններու մէջ անցած–դարձածը, բոլոր ասոնք կրնան յօդուածներու շարքի մը նիւթ ըլլալ:

– Անշուշտ...

– Եւ շատ շահեկան՝ ընթերցողներու համար: Գիտէ՞ք, որ այս անգամ Եւրոպական պետութիւնները շատ լրջօրէն ձեռք առած են խնդիրը:

– Այո՛, այնպէս կ'երևայ:

– Պատրիարքարանը սակայն պէտք եղած աշխատութիւնը չըներ կոր:

– Պատրիարքարանը ուէ կերպով վճռական ազդեցութիւն մը չի կրնար ունենալ խնդրին վրայ, – դիտել տուաւ Ջարդարեան:

– Ընդհակառակը, շատ բան կրնայ ընել, – պատասխանեց Աստիկ, – ես մօտէն գիտեմ, որ Պատրիարքարանի կողմէ դեսպաններուն տրուած յիշատակագիրներուն մեծ կարևորութիւն կը տրուին:

Եւ Աստիկ Շահրիկեանի դառնալով՝ ըսաւ.

– Կարծեմ այսօր ալ նոր յիշատակագիր մը տրուեցաւ Պատրիարքարանի կողմէ դեսպաններուն:

– Տեղեկութիւն չունիմ, – պատասխանեց Շահրիկեան չոր ձայնով մը:

– Բայց դուք Հարստահարելոց յանձնաժողովին անդամ
չէ՞ք:

– Այո՛, անդամ եմ:

– Ուրեմն ինչպէ՞ս կ'ըլլայ, որ տեղեկութիւն չէք ունենար...
Վահան էֆէնտի Փափագեանը անշուշտ գիտնալու է:

– Ես ալ լուր չունիմ, – ըսաւ Փափագեան: – Դուք ուրկէ՞ լսե-
ցիք այդ լուրը:

– Բայց նոյնիսկ Յանձնաժողովին անդամներէն մէկը ըսեր
է:

– Սխալած ըլլալու է, թերևս հին յիշատակագրին ակնարկած
է:

– Չէ՛, խնդիրը այսօր իսկ դեպքաններուն յանձնուած յիշա-
տակագրի մը մասին է, – պնդեց Աստիկ:

– Մենք լուր չունինք բնաւ, – ըսաւ Փափագեան:

– Տարօրինակ բան, – գոչեց Աստիկ:

– Անպատճառ սխալմունք մը կայ գործին մէջ, – դիտել
տուաւ Ջարդարեան: – Ի՞նչ գրուած է եղեր այդ յիշատակագրին
մէջ:

– Պարունակութիւնը չեմ գիտեր... իմ յօդուածաշարքիս Հա-
մար կ'ուզէի գաղափար մը ունենալ և ճիշդ ասոր համար մտա-
ծեցի, որ թերևս դուք կրնայիք զիս լուսաբանել:

– Նոյնիսկ եթէ այդպիսի յիշատակագիր մը տրուած ըլլար և
մենք պարունակութիւնը գիտնայինք՝ պիտի չկրնայինք հաղոր-
դել ձեզի, քանի որ գաղտնի մնալու սահմանուած է...

– Ես յիշատակագիրը արտատպելու միտք չունիմ, պարզա-
պէս կ'ուզէի լուսաբանուել...

– Դժբախտաբար պիտի չկրնանք ձեզ գոհացնել:

Աստիկ վարանոտ շարժում մը ըրաւ.

– Ինչ ընենք, քանի որ պարունակութիւնը չէք գիտեր...

– Նոյնիսկ յիշատակագրին տրուած ըլլալէն ալ լուր չու-
նինք:

– Այդ մասին ապահով եմ:

– Մենք ոչինչ գիտենք, – պնդեց Շահրիկեան:

– Ներեցէ՛ք, որ ձեզի անհանգիստ ըրի, – ըսաւ Աստիկ, – ար-
դէն իմ հոս գալուս բուն պատճառը այդ չէր, այլ պարզապէս

այսօրուան խմբագրականը շնորհաւորել... մնաք բարով, էֆէն-
տիներ, մնաք բարով:

Եւ մէկ քանի թէմէնահաներ շոյլելէ ետքը դուրս ելաւ սե-
նեակէն:

– Ի՞նչ էք մտածում այս այցելութեան մասին, – Հարցուց
Շահրիկեան, երբ բախտախնդիրը աներևոյթ եղաւ:

– Կարծեմ այսօրուան խմբագրականէն աւելի յիշատակա-
գիրն է զինքը շահագրգռողը, – պատասխանեց Ջարդարեան:

– Իմ վրայ էլ ճիշդ այդ տպաւորութիւնը թողնեց, – ըսաւ
Ակնունի:

– Այդ մարդը քիչ մը տարօրինակ կեանք մը կը վարէ, – դի-
տել տուաւ Ջարդարեան, – և կարծեմ կարող է դրամի համար
ամէն բան ընել:

– Պէտք է զգուշութեամբ վերաբերուիլ իրեն հետ:

– Արդէն առաջին անգամն է, որ ոտքը այս խմբագրատունը
դրաւ:

– Լաւ է, որ վերջինը լինի:

Շահրիկեանի այս խօսքին վրայ փակուեցաւ Աստիկի մասին
սկսուած խօսակցութիւնը, և ամէնքը միասին դուրս ելան ճաշե-
լու:

ԳԼՈՒԽ Ը

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Այդ ուրբաթ օրը, 29 մարտ 1913, Ազգային ժողովը կրկին
գումարուած էր Ղալաթիոյ Խորհրդարանը:

Իր օրակարգին մէջ կը տեսնուէր հետևեալը.

«Տեղեկատուութիւն Ազգային Վարչութեան ի մասին թիւ 17
լրտեսի»:

Թերթերը օր առաջ ծանուցած էին օրակարգի խնդիրները և
այս պատճառաւ, ժողովէն առաջ, ունկնդիրներու բազմութիւն
մը լեցուած էր Ս. Լուսաւորիչ եկեղեցիին բակը: Ընդհանրապէս
երիտասարդներ և պատանիներ էին, որոնք 3-4 հոգիոց խում-
բեր կազմած կը վիճաբանէին՝ սպասելով ժողովի բացումին: Այդ

բազմութեան մէջ կ'երևար Գրիգոր Անգուլթ ձեռքը սօփայի մօտեցող Հաստ գաւազան մը բռնած, առանց փրկակիւղի Ֆէս մը գլուխը, խահուէի գոյն թաւիչէ ժաքէթ մը հագած, վիզը լայն, սև փողկապով մը, իր կապոյտ աչքերուն մերթ ժպտուն, մերթ սպառնական սուր նայուածքը ուղղելով աջ ու ձախ:

Հրոսախմբի պետ մըն էր կարծես, որ շիւ յարձակումի մը պատրաստութիւնները կը տեսնար ծածկաբար:

Ատեն-ատեն հրահանգներ կ'ողղէր այս կամ այն խումբին:

— Տղա՛ք, եթէ նիստը դռնփակ ընել ուզեն, բողբոջէ՛ք, թող մի՛ տաք:

Կամ՝

— Մինչև որ ես նշան չընեմ, դուրս չելլաք սրահէն... Հերիք, որչափ տեղի տուինք:

Յետոյ կը մօտենար ներս մտնող երեսփոխաններուն և առնոց ահանջին սպառնալիքներ կամ պահանջմունքներ կը փսփսար.

— Ժողովուրդը կը պահանջէ, որ նիստը դռնբաց ըլլայ...

— Ժողովուրդը գրգռուած է, գիտցած ըլլաք, եթէ դէպք մը պատահի՝ պատասխանատուն դուք էք:

— Դռնփակ ուզող երեսփոխաններուն օձիքէն պիտի բռնենք, դուրս նետենք:

— Որոշած ենք եկեղեցիին դուռը գոցել և ամէնքդ ալ հոս բանտարկել...

Երեսփոխանները մէյ մը Գրիգոր Անգուլթի աչքերուն, մէյ մը ձեռքի գաւազանին և մէյ մըն ալ բակը հաւաքուած բազմութեան կը նայէին և՝

«Ժողովուրդը իրաւունք ունի... իհարկէ... օրինաւոր պահանջք...» և այլն մըմտալով կը փութային դէպի ժողովարահ:

Թերթերու լրաբերներն ալ, որոնք եկեղեցիին բակը հաւաքուած էին, ոյժ կուտային Գրիգոր Անգուլթի, կը քաջալերէին զայն իր պահանջումներուն մէջ և խորհուրդ կուտային ծայրալիցութեան դիմելու:

— Աս մարդոցը ծեծ պէտք է, ծեծ,— կ'ըսէր Կիկօ,— խօսքով չեն հասկնար:

— Նախ մենք խօսքով, անուշութեամբ կը խօսինք հետեր-

նին,— կը պատասխանէր Անգուլթ,— և եթէ չհասկնան՝ այն ատեն պէտք եղած դասը կուտանք:

— Բան մըն ալ չէք կրնար ընել,— միջամտեց Վահան Թօշիկեան,— նիստը որոշուած է, որ դռնփակ ըլլայ:

— Թո՛ղ փորձեն,— գոչեց Անգուլթ բարկութեամբ,— պիտի տեսնաս, որ մեր տղաքը ժողովարահէն դուրս պիտի չելլեն, նոյնիսկ եթէ ոստիկանութիւն բերելու վատութիւնը գործեն:

— Ժողովարահէն դուրս ելլելու պէտք պիտի չմնայ արդէն,— դիտել տուաւ Վահան Թօշիկեան:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետև արդէն ներս մտնելու թոյլ պիտի չտան:

— Ինչպէ՞ս, ինչպէ՞ս,— գոչեց Անգուլթ գաւազանը ճօճելով,— թոյլ պիտի չի տա՞ն...

— Այո՛, ունկնդիրներու սրահին դուռը կղպուած պիտի մնայ:

— Կը կոտրենք, ներս կը մտնանք:

— Ատիկա պարզապէս ճնշում բանեցնել կը նշանակէ:

— Քանի որ անոնք ժողովուրդին իրաւունքը ոտնակոխ կ'ընեն, մենք ալ անշուշտ ծայրայեղ միջոցներու կը դիմենք:

— Որոնք որեւէ օգուտ չեն կրնար ունենալ,— դիտել տուաւ Թօշիկեան:

— Ինչո՞ւ...

— Որովհետև եթէ դուռը խորտակելով բռնի ժողովարահ մտնանք՝ այն ատեն ատենապետն ալ ժողովը կը փակէ:

— Թո՛ղ փակէ...

— Եւ դուք ի՞նչ կը շահիք:

— Մեր իրաւունքը պաշտպանած կ'ըլլանք:

Ուրիշներ, դուրսէն, մասնակցեցան վիճաբանութեան:

— Գրիգոր Անգուլթ իրաւունք ունի, պէտք է դուռը խորտակել, եթէ բանալ չուզեն...

— Սպասելու չէ, որ բանան կամ չբանան, Հիմա երթալու խորտակելու է:

— Ոտքի հարուած մը եթէ տամ՝ արդէն դուռը կը բացուի:

— Եկէ՛ք, տղա՛ք, երթանք բանանք...

— Կեցէ՛ք, տղա՛ք,— գոչեց Գրիգոր Անգուլթ հրամայական

չեչտով մը՝ ձեռքը օդին մէջ երկարելով, — կեցէ՛ք, յախուռն գործ չտեսնանք, որպէսզի մեր իրաւունքը չկորսնցնենք... կարգապահութեամբ շարժինք: Ես մէկ քանի երեսփոխաններու հետ տեսնուեցայ, ամէնքն ալ խօսք տուին, որ ժողովը դռնբաց պիտի ըլլայ:

— Անոնք քեզ խաբեր են:

— Քիթիդ խնդացեր են:

— Զեռքէդ ազատելու համար անանկ ըսեր են:

— Եղբա՛յր, ես անոնց սպառնալիք չըրի, պարզապէս խորհուրդ տուի:

— Անոնք գիտեն, թէ այդ խորհուրդին ծայրը ուր կ'երթայ:

— Դուն ինչէ՞ն գիտես, թէ նիստը դռնփակ պիտի ըլլայ, — հարցուց Անգուսթ Վահան Թօշիկեանի դառնալով, — հրաւիրագիրներուն մէջ ատանկ բան մը գրուած չէր:

— Խօսասարեան էֆէնտին տեսայ, ան ըսաւ:

— Դիւանը ի՞նք տուեր է այդ որոշումը:

— Վարչութեան անդամները այնպէս խորհուրդ տուեր են:

— Վարչութիւնը ի՞նչ իրաւունք ունի Ազգային ժողովին խառնուելու, — գոչեց Անգուսթ, — աս ի՞նչ խաղբուծութիւն, ի՞նչ խայտառակութիւն է... այս մարդիկը ո՛չ իրենց պարտքին, ո՛չ իրենց իրաւունքին գիտակցութիւնը ունին:

— Իմ գիտցածս այն է, թէ որոշուած է, որ այսօրուան նիստը դռնփակ պիտի ըլլայ, և եթէ իմ խրատս կ'ուզէք մտիկ ընել, լաւ կ'ընէք, եթէ տեղերնիդ երթաք, քան թէ պարապ տեղը այստեղ սպասէք:

— Սրկէ հունա չենք երթար և կը տեսնուինք անոնց հետ... ալ համը կը փախցնեն կոր...

— Ինչ որ կ'ուզէք՝ ան ըրէք, — պատասխանեց Թօշիկեան հեռանալով:

Վերը, ժողովասրահին մէջ, երեսփոխանները կը խորհրդակցէին:

— Ժողովը դռնբաց է, թէ՞ դռնփակ, — հարցուց երեսփոխան մը Աբիկ Մուկահեաճեանին:

— Դռնփակ, — պատասխանեց այս վերջինը:

— Ինչո՞ւ համար:

— Մայր դիւանը այնպէս որոշեց:

— Սակայն դռնփակ ընելու պատճառ մը չի կայ:

— Վարչութիւնը այնպէս փափաք յայտնած է:

— Ծանրմ, պարապ տեղը խնդիր չհանենք... տեսէ՛ք, ժողովուրդը բակը լեցուած է, մէջերնին անայիպ մարդիկ ալ կան... կ'ելլան, կոխ մը կը հանեն:

— Եթէ կ'ուզէք, անգամ մը Հայկ էֆէնտի Խօսասարեանի խօսեցէք, — պատասխանեց Աբիկ:

Երեսփոխանը ուրիշ վեհերոտ երեսփոխան մըն ալ հետը առնելով՝ մօտեցաւ Հայկ Խօսասարեանին:

— Ծանրմ, ինչո՞ւ դռնփակ կ'ընէք կոր նիստը, — հարցուց:

— Վարչութեան ատենապետը անանկ փափաք յայտնեց է... թէ և ես սկզբունքով հակառակ եմ դռնփակի:

— Լաւագոյն է, որ ժողովը հրապարակային ըլլայ...

— Համակարծիք եմ ձեզի:

— Ուրեմն դռնբաց ըրէ՛ք:

— Թո՛ղ ժողովականները հաւաքուին, և որոշում մը կուտանք:

Ուրիշ երեսփոխաններ ալ պնդեցին, որ դռնբաց ըլլայ, և ի վերջոյ Հայկ Խօսասարեան տեղի տուաւ:

— Գոնէ ատենական գործողութիւնները դռնբաց կ'ընենք և յետոյ, երբ կարգը գայ թիւ 17 խաֆիէին, այն ատեն ունկնդիրները դուրս կը հանենք, — ըսաւ:

— Ատիկա պատճառ պիտի ըլլայ, որ վէճ ծագի, — դիտել տուաւ երեսփոխան մը:

— Հոգ մի՛ ընէք, անուշութեամբ խնդիրը կը կարգադրենք:

Նոյն միջոցին մաս մը ունկնդիրներ սկսան դուռը հարուածել:

— Բացէ՛ք դուռը, եթէ ո՛չ պիտի կոտորենք, — կը պոռային դուրսէն:

Խօսասարեան բարապանի մը հրամայեց, որ դուռը բանայ:

Հրամանը անմիջապէս գործադրուեցաւ, և Գրիգոր Անգուսթ երեցաւ իր սպայակոյտովը և իսկոյն եկաւ գրաւել առաջին կարգի նստարանները:

— Տղա՛ք, ամուր նստեցէ՛ք ձեր տեղերը, — հրամայեց շուրջիններուն:

Երեսփոխաններուն թիւը վաթսուներ մօտեցած էր, և ուրիշներ հետզհետէ կը հասնէին:

— Ատենապետ էֆէնտի, ատեանը բացէ՛ք, — պոռացին քանի մը երեսփոխաններ:

Հայկ խօծասարեան ժամացոյցը նայեցաւ և նազելածեմ գնացքով մը դէպի դիւանը ուղղուեցաւ:

Ատենական գործողութիւնները բաւական երկար տևեցին:

Վերջապէս կարգը եկաւ օրակարգի առաջին խնդրին, որն էր թիւ 17 լրտեսի մասին Վարչութեան տեղեկատուութիւն:

— Օրակարգի անցնելէ առաջ, — ըսաւ Հայկ խօծասարեան, — կ'ուզեմ իմանալ, թէ ժողովը դռնփակ, թէ՞ դռնբաց նիստ գումարել կը փափաքի:

— Դռնփակ, դռնփակ, — գոչեցին շատ մը ձայներ աջակողմէն:

— Ո՛հ, դռնբաց, — պոռացին ուրիշներ ալ ձախակողմէն:

— Խօսք կ'ուզեմ, — ըսին մէկ քանիներ:

Եւ վիճաբանութիւն մը բացուեցաւ դռնբաց, թէ դռնփակի մասին:

Խնդիրը բաւական ձեծուելէ ետքը «քուէ՛, քուէ՛» պոռացին երեսփոխանները, և ատենապետը քուէի դնելով խնդիրը՝ 16ի դէմ 32 քուէով որոշուեցաւ ժողովը դռնփակի վերածել:

— Կը խնդրեմ ունկնդիրներէն, որ բարեհաճին դուրս ելլել, — ըսաւ ատենապետը:

— Ո՛հ, չենք ելլեր, — պոռացին քանի մը ձայներ:

— Թո՛ղ առաջուց ծանուցանէիք, թէ նիստը դռնփակ պիտի ըլլայ, և պարապ տեղը մինչև հոս չի գայինք, — առարկեցին ուրիշներ:

— Կը խնդրեմ, որ ժողովին պատկառանքը չխանգարէք, — ըսաւ ատենապետը:

— Ծնշումի տակ նիստ չենք կրնար գումարել, — պոռաց երեսփոխան մըն ալ:

— Ժողովուրդը դուրս պիտի չելլէ, — գոռաց Գրիգոր Անգութ:

— Յարգեցէ՛ք ժողովին որոշումը, — ըսաւ ատենապետը:

— Դուք ալ ժողովուրդին իրաւունքը յարգեցէ՛ք, — պատասխանեց Անգութ:

Եւ ահա աղմուկը հետզհետէ սաստկացաւ:

Չախակողմէն մէկ քանի երեսփոխաններ փութացին Անգութի և իր ընկերներուն քով և բանակցութեան մը սկսան:

Ի վերջոյ Անգութ խորհրդաւոր նշան մը ըրաւ, և ունկնդիրները կամաց-կամաց դուրս ելան:

Երբ հանդարտութիւնը տիրեց, Հայկ խօծասարեան ոտքի ելաւ և ըսաւ.

— Տեա՛րք երեսփոխանք, ինչպէս գիտէք, օրակարգի խնդիրն է թիւ 17 լրտեսի մասին Վարչութեան տեղեկատուութիւնը, ուստի կը հրաւիրեմ Վարչութիւնը, որ իր տեղեկատուութիւնը ընէ:

Այս հրաւերին վրայ Վարչութեան կողմէ տօքթոր Թէրզեան ոտքի ելաւ և հետևեալ բացատրութիւնները տուաւ.

— Շիրինեան էֆէնտի թիւ 17 խաֆիէի մասին իր հարցումը ընելէն անմիջապէս ետքը Վարչութիւնս քննութեան ձեռնարկած է և նախ և առաջ կանչած է զինքը, իր բացատրութիւնները լսելու համար: Շիրինեան էֆէնտիէն խնդրեցինք, որ իր յայտարարութիւնները գրաւոր կերպով ևս ընէ և իր ստորագրութիւնն ալ դնէ: Մերժեց և միայն բերանացի բացատրութիւններ տալով՝ յայտարարեց, թէ իր լսածին համեմատ ներքին գործերու նախորդ նախարար Ռէշիտ պէյի տօսիէին մէջ ժուռնալ մը գտնուած է «Թիւ 17 Պատրիարքարանի խաֆիէ» ստորագրութեամբ, թէ ինքը ասկէ զատ բան մը չգիտեր, սակայն անձամբ քննութիւն մը պիտի կատարէ և արդիւնքը տեղեկագրէ մեզի: Ըրսաւ նոյնպէս, թէ ինչ տեսակ թուղթեր են, որ Ռէշիտ պէյի ձեռքը անցեր են: Քիչ մը ատեն անցնելէ ետքը Շիրինեան էֆէնտի պէտք եղած բացատրութիւնները դարձեալ չկրցաւ տալ և ասկէ զատ ցոյց չտուաւ այն աղբիւրը, ուրկէ լսած էր այս խնդիրը: Թէև շատ խնդրեցինք, բայց յայտարարեց, թէ իր ըսածներէն զատ ո՛չ մէկ նոր բացատրութիւն չունի:

Մենք նկատեցինք, որ շատ ծանր խնդրի մը առջև կը գրտնուէինք, ուստի ընդարձակեցինք քննութիւնը և հարցաքննեցինք Պատրիարքարանի գլխաւոր պաշտօնեանները և եկանք սա համոզման, թէ դրական փաստ մը չի կայ որևէ գրութիւն պետութեան յանձնուած ըլլալու մասին: Ասով ալ չբաւականա-

ցանք, ամէն օր Պատրիարքարանի Հետ յարաբերութեան մէջ եղողներ, խմբագիրներ ալ լսեցինք, բայց ճշգրիտ, Համոզիչ փաստեր չկային:

Անուղղակի միջոցներ ձեռք առինք, պատուհան մը, դուռ մը (??) գտնելու նպատակով ու վերջապէս այլևս կատարելապէս Համոզուեցանք, թէ այդպիսի մէկը գոյութիւն չունի Պատրիարքարանի շրջանակներուն մէջ:

Ապահովութեան յանձնաժողովին տօսիէն պրպտեցինք, պակաս թուղթ չգտանք: Միայն պատճէնի խնդիր մը կայ, անձնական նամակի պարագայ մը: Պատրիարքը կը հրամայէ Պատրիարքարանի պաշտօնեաներէն մէկուն նամակ մը խմբագրել և բերել իրեն: Նամակը կը ղրկուի իր Հասցէին, սակայն պատճէնը կը մոռցուի քարտուղարին քով ու անոր բազմազբաղութեան պահուն մէկը կը վերցնէ այդ պատճէնը:

Հետևաբար կուզանք մեր քննութեան արդիւնքը Հոս պարզելով յայտնելու, թէ թիւ 17 խաֆիէի մը գոյութիւնը չէ Հաստատուած:

Վարչութեան անդամ տօքթոր Թէրզեան այս յայտարարութիւնը ընելէ ետքը բազմեցաւ իր թիկնաթոռին մէջ: Ամենուն նայուածքը ուղղուեցաւ Եդուարդ Շիրինեանի վրայ, որ ամբաստանողի դիրքէն յանկարծ զրպարտիչի աստիճանին կ'իջնէր, թէ և ամէնքն ալ գիտէին, թէ յարգելի երեսփոխանին ամբաստանութիւնը Հիմնաւոր էր և թէ Վարչութիւնն էր, որ կը սխալէր՝ ուրանալով թիւ 17 խաֆիէին գոյութիւնը:

– Խօսք կ'ուզեմ, – գոչեց Շիրինեան:

– Խօսքը Շիրինեան էֆէնտիինն է, – յայտարարեց ատենակալը:

Շիրինեան իր նիհար մարմինը ցցելով, տենդային շարժումով մը ոտքի ելաւ և գնաց դէպի բեմ, ուրկէ գրաւոր ճառ մը արտասանեց ու յայտարարեց, թէ Վարչութեան անդամներէն Եղիշէ Դուրեան Սրբազան, Պալաքեան վարդապետ, ինչպէս նաև Վահան Փափազեան և Տիրան Երկանեան տեղեկութիւն ունէին թիւ 17 խաֆիէին մասին, և անոնք ալ լսած էին, թէ ազգային պաշտօնաթուղթեր յանձնուած են Րէշիտ պէյի, տակաւին ինք իր Հարցումը Ազգային ժողովին չբերած, թէ ինք խնդիրը Ազ-

գային ժողովին Հանեց այն պատճառով, որ Վարչութիւնը Հապ-ճեպով, առանց որևէ քննութեան, Հերքումի ձև հրատարակութիւն մը ըրած էր: Նոյնիսկ Տիրան Երկանեան մտերմաբար ըսած էր իրեն, թէ Րէշիտ պէյի թուղթերը Շէրիֆ փաշայի Իթթի-Հատի կեդրոնատեղին փոխադրուած ըլլալով՝ ինքը կրնայ ստուգել, թէ որևէ ազգային պաշտօնագիր գոյութիւն ունի՞ անոնց մէջ:

Շիրինեան իջաւ բեմէն և գնաց գրաւել իր թիկնաթոռը: Շատ մը երեսփոխաններ, որոնք կարևոր յայտնութիւններու կը սպասէին, յուսախաբ եղան:

Տօքթոր Թէրզեան ոտքի ելաւ և ըսաւ.

– Յանուն Վարչութեան կը Հաւաստեմ, թէ մենք, Հաւաքաբար, իրապէս տեղեկութիւն չունէինք այդպիսի բանէ մը. մեր ընկերը՝ Վահան Փափազեան, կրնայ լսած ըլլալ, որ Պատրիարքարանի գործառնութիւնները կը տեղեկագրուին Բ. Դրան: Թերթերը արդէն ամէն բան գրած են: Մենք գաղտնիք չունինք. եթէ փաստացի բան մը գոյութիւն ունենայ, նոր քննութիւն մը կը բանանք:

Այս միջոցիս տեղի ունեցաւ դէպք մը, որ տակնուվրայ դարձուց ժողովը և ռազմադաշտի մը վերածեց զայն:

Ատենադպիրը կարդաց գրութիւն մը, զոր ստորագրած էին Ռ. Զարդարեան, Յ. Շահրիկեան, Բ. Զօրեան և որով հրապարակային բացատրութիւն կը պահանջէին Հմայեակ Արամեանցէն իր մէկ յայտարարութեան Համար, թէ թիւ 17 խաֆիէն «Ազատամարտ»ի խմբագրութեանն կամ անոնց մօտիկ մէկն է:

Հմայեակ Արամեանց, որ նախապէս իր պատասխանը գրաւոր կերպով պատրաստած էր, յանձնեց զայն դիւանին, որպէսզի կարդացուի:

Այդ պատասխանագիրը սակայն ուրիշ բան չէր, այլ բոլոր ու նախատալից յարձակողական մը Դաշնակցութեան Հասցէին ուղղուած, անոր անցեալ ու ներկայ գործելակերպը դատապարտող:

Զարդարեան և տօքթոր Փաշայեան բողոքեցին, որ փոխանակ ուղղակի պատասխան տալու՝ Արամեանց կարգ մը Հայհոյութիւններ կ'ընէ իրենց կուսակցութեան: Ուրիշ դաշնակցա-

կան երեսփոխաններ ևս ձայնակցեցան, և Արամեանցի գրին ընթերցումը աղմկալից ժխորի մը մէջ ընդհատուեցաւ:

Ընդհանուր աղմուկին մէջ կը լսուէր Զարդարեանի ձայնը, որ յուզուած ու բարկաճայթ կը պոռար.

— Սրիկա՛յ, փոխանակ կազմակերպութեան դէմ հայհոյելու, ուղղակի պատասխանէ, թէ ո՞վ է խաֆիէն. մենք հոս իբրև Դաշնակցութեան անդամներ չէ, որ կը ներկայանանք, այլ իբրև «Ազատամարտ»ի խմբագիրներ և ազգային երեսփոխան: Բերանդ կը պատուեմ, եթէ ինծի խաֆիէ ըսես. կա՛մ կը հաստատես ամբաստանութիւնդ, կա՛մ կ'ընդունիս, թէ ստոր զրպարտիչ մըն ես:

Իսկ Արամեանց իր սինիք պաղարիւնութեամբը և անամօթաբար կը պատասխանէր.

— Հանդարտութեամբ խօսեցէ՛ք, սոփայով, սպառնալիքով գործ չի լմննար:

Ժողովարահին մէջ աղմուկը աննկարագրելի էր: Երեսփոխանները, թեր ու դէմ, Արամեանցի գրին ընթերցումը շարունակելու կամ ընդհատելու մասին կը վիճէին:

Ի վերջոյ յարմար դատուեցաւ, որ ատենապետը մտովի անգամ մը կը կարդայ այդ գիրը և եթէ պատշաճ դատէ, թոյլատրէ անոր ընթերցումը:

Ատենապետը՝ Հայկ Խօճասարեան, կարդալէ ետքը զայն, երբ ասդին ժխորը տակաւին կը շարունակուէր, ըսաւ.

— Արամեանցի պատասխանագիրը ուղղակի առնչութիւն չունի թիւ 17 խաֆիէի խնդրին հետ, հետեաբար պիտի չկարդացուի: Անոր մէջ միայն շարք մը անուանարկումներ կ'ըլլան կուսակցութեան մը հասցէին: Իր պատասխանը որևէ լուսաբանութիւն չբերի խնդրին: Վերջին մասին մէջ կ'ըսէ, թէ իր ըսածները պատրաստ է ապացուցանելու:

Յարութիւն Շահրիկեան ոտքի ելլելով՝ կը յայտարարէ.

— Ես երբեք չեմ ցանկանում, որ Ազգային այս ժողովը դատարան դառնայ կուսակցական վէճերի. մենք երբեք չենք զիջանի մի որևէ Արամեանցի փեղցփեղութիւններին պատասխանել: Նա կա՛մ հաստատում է փաստացի կերպով իր ասածը, թէ թիւ 17 խաֆիէն «Ազատամարտ»ից է և կա՛մ այս ժողովը կ'որոշէ, թէ ինչ ընթացք պիտի բռնի մի զրպարտիչի հանդէպ:

— Պիտի ապացուցանեմ ըսածներս,— կը գոչէ Արամեանց դիմացի կողմէն:

Յակոբ Պահրի յարեց, թէ երեք ամիսէ ի վեր ստութեան հետեանքով ազգը յուզումի մատնուած է, և այս ստութիւնը ազգը բարոյապէս անուանարկեց օտարներուն առջև:

Կեդրոնի լիտըր Դաւիթ Տէր-Մովսէսեան ինքն ալ կը մասնակցի վիճաբանութեան:

— Այսպիսի քննութիւն մը չէր կրնար ելք մը ունենալ,— կը յայտարարէ,— իրաւ է, ազգը գաղտնիքներ չունի, բայց պաշտօնաթուղթներու Բ. Դրան հաղորդուելուն մէջ անպատեհութիւններ կան: Վարչութեան ատենապետը խմբակցութեան ներկայացուցիչներէն բաղկացած հաւաքոյթի մը մէջ յայտարարեց, թէ ազգային պաշտօնաթուղթները նամակատունէն է, որ կը յանձնուին եղեր Բ. Դրան: Եթէ ասանկ բան մը կայ, պէտք է Վարչութիւնը միջոցներ ձեռք առնէ: Գալով Արամեանցի յարուցած խնդրին, քանի որ ան անձի անուն չիտար, անորոշ խօսքերով «Ազատամարտ»ի մեր պաշտօնակիցները անպատուուած չեն համարուիր: Մենք թիւ 17 խաֆիէի խնդիրը հրապարակ հանած ատեննիս չըսինք, թէ Պատրիարքարանի մէջ խաֆիէ կայ, որևէ ամբաստանութիւն ալ չըրինք, այլ միայն հարցում մը բերինք: Վարչութիւնը չըսաւ մեզի, թէ Բէշիտ պէյի քով իրապէս թուղթերը կա՞ն, հոգ չէ՛ անոնք ուրկէ գացած ըլլան...

Եւ Տէր-Մովսէսեան խօսքը աւարտեց սա յայտարարութեամբ.

— Ինծի համար բաւական չէ այս քննութիւնը:

Կարգ մը երեսփոխաններ սկսան նորէն աղմկել ժողովը:

— Այո՛, քննութիւնը թերի է...

— Վարչութիւնը առաջին օրէն ջանաց խնդիրը խեղդել:

— Գործին չէր իգար լուրջ քննութիւն մը կատարել:

— Քանի որ թիւ 17 խաֆիէ մը գոյութիւն ունի, ըսել է անոր մէջ գտնուող 16 խաֆիէներ ալ կան... ո՞վ են ատոնք:

— Խիստ և անաչառ քննութիւն կը պահանջենք:

Այս ժխորին մէջ խօսք ուզեց Տիրան Երկանեան:

— Քո՞ւ կողմէդ, թէ՞ Վարչութեան կողմէ կը խօսիս,— պոռաց երեսփոխան մը:

– Յանուն Վարչութեան, – պատասխանեց Երկանեան:

– Խօսքը ձերն է, Երկանեան էֆէնտի, – ըսաւ ատենապետը:

– Կերեւայ որ, – սկսաւ Երկանեան, – մոռցուած է, թէ այս խնդիրը ինչպէս հոս եկաւ: Պատրիարքարանի մէջ թիւ 17 խաֆիէ մը կա՞յ հարցումը եղաւ մեզի: Խնդիրը շատ փափուկ էր, և այդ տեսակ բանի մը հրապարակ հանուիլը կրնար վնասակար ըլլալ: Այս խնդիրը յարուցանողներուն բուն նպատակն էր Վարչութիւնը արատաւորել:

– Պարապ խօսք, – գոչեց Շիրինեան:

– Ասանկ բանի մը հրապարակումը թուրք պաշտօնական շրջանակները արթնցուց և սկսան կասկածիլ, թէ արդեօք Պատրիարքարանը դա՞մ մը կը նիւթէր պետութեան դէմ, քանի որ այսչափ իրար կ'անցնէր՝ լսելով, որ իր մէջ խաֆիէ մը կայ: Շիրինեան Վարչութեան անդամներուն և իմ խօսքերս խեղաթիւրեց: Վարչութեան թուղթերէն ոչ մէկը դուրս չէ ելած: Մենք մարդասպան մը կը փնտռենք, մինչդեռ մէջտեղը սպանուած մէկը չի կայ: Ասոր համար մեր խորին ցաւը կը յայտնենք:

Վարչութեան անդամին այս խօսքերը աւելի գրգռեցին միտքերը, և Վահան Թէքէեան քննադատեց, թէ ինչո՞ւ Երկանեան Իթթիհատի մօտ քննութիւն մը չէ կատարած՝ հասկնալու համար, թէ Րէշիտ պէյի թուղթերուն մէջ ազգային պաշտօնաթուղթ կա՞յ, թէ՞ ո՛չ, մանաւանդ որ խոստացած էր այդպիսի քննութիւն մը կատարել:

Մարկոս Նաթանեան Բագրատունեաց Գագիկ Թագաւորին ժամանակ տեղի ունեցած լրտեսութեան դէպք մը յիշեց և զայն բաղդատութեան դնելով թիւ 17 խաֆիէի խնդրին հետ՝ սա եզրակացութեան հասաւ, թէ Ֆրանսական անցեալ մեծ յեղափոխութեան ժամանակ ալ այս տեսակ բաներ պատահած էին:

– Սողոմոն իմաստուն արդիէն կ'ըսիէ, թէ՛ արևու տիակ նիոր բան չի կայ, – ըսաւ Նաթանեան ու նստաւ թիկնաթոռին մէջ:

Յետոյ խօսք առաւ Գասպար Նեմցէ և ծաղրազարդ ոճով գրաւոր ճառ մը արտասանեց բեմէն, Վիքթօր Հիւկոյէն, Թէնէն և Ժիւլ Լըմէդրէն վկայութիւններ առաջ բերաւ ու փորձեց նմանաձայն բառերով լուծել թիւ 17 խաֆիէի կնճիռը:

Հագիւ իր ճառին կէսը կարդացած էր, երբ բողոքներ սկսան բարձրանալ ամէն կողմէ:

– Ատիկա լրագրի մէջ իբրև յօդուած կը տպուի միայն:

– Լռեցէ՛ք, բաւական է:

– Ձեր ըսածները խնդրոյն հետ կապ չունին:

– Վա՛ր իջէք բեմէն, ձեզ մտիկ չենք կրնար ընել:

– Կէսն ալ ուրիշ ատեն կը կարդաս...

Ու Գասպար Նեմցէ ստիպուեցաւ կիսատ թողուլ ճառը, թուղթերը ժողովել, գրպանը դնել ու վար իջնել բեմէն:

Ուրիշ մէկ քանի երեսփոխաններ ալ խօսեցան և ըսին, թէ Վարչութեան կատարած քննութիւնը անկատար էր:

Ամենէն վերջը խօսք առաւ Արամեանց և սմանդուկ կերպով մը ըսաւ.

– Ես որպէս սօցիալ-դէմոկրատ, այս թիւ 17 խաֆիէի խընդրով շատ չեմ հետաքրքրուիր: Ես անձի հետ գործ չունիմ, ես սկզբունքային տեսակէտով կը դատեմ գործը: Օր մը, երբ Գուժ Գաբուէն Սիրքէճի կուգայինք բարեկամի մը հետ, վակօսին մէջ, խօսակցութեան միջոցին, բարեկամս զարմանք յայտնեց, թէ ինչո՞ւ «Ազատամարտ», որ շատ զբաղեցաւ թիւ 17 խաֆիէի խընդրով, յանկարծ լեզուն քաշեց: Այսպէս ուրեմն, լաւ ուշադրութիւն ըրէք, զարմանք կամ կասկած յայտնողը ես չեմ, այլ բարեկամս, բայց «Ազատամարտ» իրաւունք չունէր ինծի դէմ եղած բաց նամակը հրապարակելով մէկտեղ, առանց իմ պատասխանիս սպասելու, «Ստոր զրպարտութիւն» վերնագիրը դնելու:

Այս ճղճիմ բացատրութիւնը ծաղրական ծիծաղներով ընդունուեցաւ ժողովականներու կողմէ:

Զարդարեան և իր ընկերները, այդ տեսակ մը յետս կոչումէն վերջ, միջադէպը փակուած հռչակեցին:

Այս կերպով թիւ 17 խաֆիէի մասին բացուած վիճաբանութիւնը վերջ գտաւ:

Երեսփոխանները որոշեցին յաջորդ ժողովին թողուլ այս խնդրի մասին ներկայացուելիք բանաձևներուն քուէարկութիւնը:

Ասոր վրայ ատենապետը Ատեանը փակուած յայտարարեց, և երեսփոխանները սկսան ցրուիլ:

Որպէսզի մեր ընթերցողները կրկին անգամ Ազգային ժողովի բերելու հարկ չ'մնայ, կը բաւէ անմիջապէս ըսել, թէ յաջորդ նիստին, որ տեղի ունեցաւ մայիս 24ին, ատենապետը յայտարարեց.

— Օրակարգի արտոյր խնդիրն է թիւ 17 խաֆիէի մասին բանաձևի քուէարկութիւնը:

Յ. Շահրիկեան առարկեց, որ եթէ բանաձևի քուէարկութիւն է, պէտք չ'է այլևս կարծիք յայտնել ի նպաստ կամ աննպաստ:

— Հոս դռնփակ նիստի մը մէջ վիճարանուեցաւ այդ խնդրի մասին,— ըսաւ,— և դուրսը ամէն բան գիտուեցաւ, միայն մի բան չի կրցաւ հաստատել հարցումը ընողը, թէ ՌՎ է թիւ 17 ԽԱՖԻԷՆ...

Արամեանց ըսաւ, թէ հարցումը ընողը պէտք է պաշտօնապէս ետ առնէ իր հարցումը:

Յետոյ կարդացուեցաւ Ժազ Սայապալեանի հետեւեալ բանաձևը.

«Ժողովը Պատրիարքարանի մէջ թիւ 17 խաֆիէի մը գոյութեան մասին եղած հարցումին Վարչութեան կողմէ տրուած բացատրութիւնները և հերքումը գոհացուցիչ նկատելով՝ կը ցաւի, որ այսպիսի տարածայնութիւն մը միտքերը յուզելու ձևով մը բերուած է Ազգային ժողովին»:

Իսկ Դաւիթ Տէր-Մովսէսեան և Հայկ Խօճասարեան ներկայացուցին հետեւեալ բանաձևը.

«Ժողովը նկատի առնելով թիւ 17 խաֆիէի մասին Վարչութեան բացատրութիւնները, անբաւական կը նկատէ զանոնք և կ'անցնի օրակարգին»:

Ատենապետ տօքթոր Տաղաւարեան քուէի կը դնէ երկու բանաձևները, և երկուքն ալ հաւասարապէս 11 քուէ կը ստանան:

— Ատենապետը պէտք է քուէ տայ,— կ'ըսէ ձայն մը:

— Ատենապետը չ'ըլլար, նախագահը պէտք է տայ,— կը գոչեն ուրիշ ձայներ:

— Չէ՞ որ ատենապետն ալ քուէի իրաւունք ունի:

— Թո՛ղ առաջ տար,— կը պոռան մէկ քանի երեսփոխաններ:

— Այո՛,— կ'ըսէ Հայկ Խօճասարեան,— ատենապետը քուէի իրաւունք ունի, բայց եթէ բուն քուէարկութեան ատեն չտուաւ, և քուէարկութիւնը փակուեցաւ, ուրեմն ատենապետը ձեռն-

պահ մնացած կը նկատուի, այս պարագայիս նախագահին քուէն է, որ կ'ընդունուի:

— Ես իմ քուէս Սայապալեան էֆէնտիի բանաձևին կուտամ,— յայտարարեց նախագահ Արշարունի Սրբազան:

Եւ այսպէս Ազգային ժողովը չեղեալ յայտարարեց թիւ 17 խաֆիէին գոյութիւնը, իր նախագահին քուէովը, և խնդիրը միանգամ ընդմիջտ թաղեց:

Եւ սակայն թիւ 17 խաֆիէն կը գործէր մութին մէջ...

ԳԼՈՒԽ Թ ՆՈՐ ԾԱՅՏԵՆՈՒԹԻՒՆԵՆԵՐ

Ժողովէն ետքը Սարգիս Սուին, Ղազարգիւ, յուզուած կերպարանքով մը դուրս ելաւ սրահէն՝ իր ակնոցը շտկելով:

— Սերգիս,— պոռաց ետեւէն Ներսէս Օհանեան,— կեցի՛ր, միասին երթանք:

Եւ իր հիւանդ ոտքը քաշելով՝ գնաց միանալ Սուինի:

— Հաւնեցա՞ր այս խաղքութեան,— ըսաւ այս վերջինը սրբունեղած կերպարանքով մը:

— Ես ասոր այսպէս ըլլալը առաջուց գուշակեր էի,— պատասխանեց Օհանեան,— բոլոր յանցանքը Շիրինեանինն է, որ թեթևօրէն խնդիրը մէջտեղ նետեց և առանց սպասելու, որ յարմար ժամանակը գար:

Նոյն միջոցին Աղասի Աղասեան ալ իր խոշոր մօրուքը պարզած, փորը տնկած, թաւ յօնքերովն ու դաժան նայուածքովը մօտեցաւ երկու խօսակիցներուն:

— Եկէք, երթանք մէյմէկ գարեջուր խմենք,— առաջարկեց:

— Շոգեմաւին ատեն ունի՞նք,— հարցուց Օհանեան:

— Ժամուկէս ատեն ունինք:

— Դուն այս իրիկուն ո՞ւր պիտի երթաս,— հարցուց Օհանեան Սուինին:

— Պալաթ երթալու միտք ունիմ, քանի օր է չեմ գացած:

— Երթանք ուրեմն քիչ մը նստինք ձէնիօծ,— որոշեց Օհանեան:

Այս որոշումը տալէ ետքը Օհանեան վերադարձաւ թիւ 17 խաֆիէի խնդրին:

— Վարչութիւնը պարզապէս խեղդել ուզեց գործը,— դիտել տուաւ:— Առաջին օրէն այս էր արդէն իր նպատակը:

— Բայց կ'երևայ, որ որոշ փաստ ալ չի կայ մէջտեղ,— յարեց Աղասեան:

— Որոշ փա՞ստ, բայց իրողութիւն կա՛յ մէջտեղ,— գոչեց Սուին,— թուղթեր տրուած են ներքին գործերու նախարարին, ասիկա անհերքելի ճշմարտութիւն մըն է:

— Ես խնդրին մանրամասնութիւնները չեմ գիտեր, ժողովին մէջ յաճոյններէս կը դատեմ խնդիրը,— պատասխանեց Աղասեան,— արդ, ժողովին մէջ ո՛չ ոք կրցաւ կարևոր յայտնութիւն մը ընել թիւ 17 խաֆիէին մասին, նոյնիսկ անոր գոյութիւնը կարելի չեղաւ ապացուցանել... Շիրինեան բան մը չկրցաւ ըսել...

— Որովհետեւ Շիրինեան բան մը չի գիտեր,— դիտել տուաւ Օհանեան,— անիկա Դուրեան Սրբազանէն ու Պալաքեան վարդապետէն խօսք մը իմացեր է ու ատոր վրայ, առանց խնդիրը քննելու, ուսումնասիրելու մէջտեղ նետուեցաւ և անօգուտ իրարանցում մը առաջ բերաւ...

— Որ իւր քսեց բո՛ւն յանցաւորին կամ աւելի ճիշդ՝ յանցաւորներուն հացին,— ընդմիջեց Սուին՝ իր ակնոցը շտկելով:

— Հիմա ձէնիօսին երթանք նէ՛ քեզի կը պատմեմ գործը,— ըսաւ Օհանեան,— փողոցը խօսիլը աղէկ չէ:

— Ըսել է՞ քանի մը հատ խաֆիէ կայ մեր մէջը,— ըսաւ Աղասեան Սուինի դառնալով:

— Ես այնպէս կը կասկածիմ, ասիկա մէկ մարդու գործ չէ:

— Բայց Վարչութիւնը յայտարարեց, թէ պաշտօնաթուղթներուն մէջ պակաս չի կայ բնաւ:

— Վարչութիւնը ստիպուած էր այդպէս յայտարարելու:

— Ուրեմն սո՞ւտ էին եղած յայտարարութիւնները:

— Եթէ ո՛չ բոլորովին սուտ, շատ խեղաթիւրուած:

— Ինչ որ է, քիչ մը ետքը կը խօսինք, հիմա ուրիշ խօսք ըրէ՛ք,— խորհուրդ տուաւ Օհանեան:

Երբ հասան ձէնիօսի սրճարանը, Օհանեան իր երկու ընկեր-

ները առաջնորդեց խորը անկիւն մը, ուր բոլորովին առանձին էին:

— Հոս ազատօրէն կրնանք խօսիլ,— ըսաւ աթոռի մը վրայ տեղաւորուելով:

— Գիտես որ,— սկսաւ Սուին խօսքը Աղասեանի ուղղելով,— Վարչութեան կողմէ ըրած յայտարարութեան մէջ տօքթոր Թէրզեան նամակի մը ակնարկութիւն ըրաւ, որուն պատճէնը, և հակառակ Պատրիարքին հրամանին, քարտուղարը իր քովը պահեց, յետոյ կորսնցուցեր է...

— Այո՛, անձնական անկարևոր նամակ մըն է եղեր,— պատասխանեց Աղասեան,— տօքթոր Թէրզեան այնպէս ըսաւ:

— Վարչութեան անձնական անկարևոր նամակ մը յայտարարածը, ընդհակառակը, շատ գաղտնի ու կարևոր նամակ մըն է Պատրիարքին կողմէ Պօղոս Նուպար փաշայի ուղղուած,— ըսաւ Սուին խորհրդաւոր ձևով մը:

— Ի՛նչ կ'ըսես,— գոչեց Աղասեան զարմացած:— Բայց այն ատեն ինչպէ՞ս Վարչութիւնը կ'ըսէ, թէ անկարևոր է:

— Քիչ մը առաջ ըսի քեզի, որ Վարչութիւնը իրողութիւնները կը խեղաթիւրէ:

— Այն ատեն պէտք էր բողոքել, ես եթէ գիտնայի, ասիկա երևան կը հանէի:

— Ի՛նչ օգուտ, քանի որ նամակը կորսուած է:

— Բայց գոնէ ասկէ ետքը պէտք է, որ ուշադրութիւն ընեն:

— Այդ մասին միջոցներ ձեռք կ'առնենք,— պատասխանեց Սուին լուրջ և հանդիսական:

— Միայն այդ նամակին վրա՞յ է ամբողջ խնդիրը:

— Դեռ ինչե՛ր, դեռ ինչե՛ր,— ըսաւ Օհանեան՝ ձեռքը օդին մէջ ճօճելով:

— Աւելի խըլեախը պատմեմ քեզի,— շարունակեց Սուին:— Բէշիտ պէյի ներքին գործերու նախարար եղած ատենը, օր մը, Վարչութեան երկու անդամներ այցելութեան կ'երթան իրեն, և խօսակցութեան միջոցին Բէշիտ պէյ յանկարծ գզրոցը բանալով՝ ծրար մը տակաւին չբացուած նամակներ ցոյց կուտայ և կ'ըսէ՝ «Մի՛ կարծէք, որ մենք չենք գիտեր կամ չենք իմանար ձեր գաղտնի գործունէութիւնները. մենք ամէն միջոց ունինք լուր

առնելու համար... տեսէ՛ք այս նամակները, տակաւին նոր ստացայ, բայց ժամանակ չունեցայ քննել տալու... ամէնքն ալ Պատրիարքարանին կը վերաբերին»:

– Ի՛նչ կ'ըսես, – գոչեց Աղասեան ափ ի բերան եղած:

– Բացարձակ իրողութիւնն է, որ կը պատմեմ, – հաստատեց

Սուրին:

– Եւ ես ալ ճշմարտութեանը կը վկայեմ, – աւելցուց Օհանեան:

– Այդ նամակները ինչպէ՞ս կրնան նախարարին ձեռքը անցնիլ:

– Երկու կերպով, կա՛մ այն է, որ թղթատունէն կ'առնէ և կա՛մ այն անձն է, որ պաշտօն ունի նամակը թղթատուն տանելու:

– Այդ նամակները ո՞վ կը տանի թղթատուն:

– Ընդհանրապէս Պատրիարքարանի բարապանները:

– Ո՞ր թղթատունը կը յանձնուին:

– Յրանսականին, – պատասխանեց Սուրին, – և որովհետև հաւատալի չէ, որ Ֆրանսական թղթատունէն այդ նամակները յանձնուին ներքին գործերու նախարարին, մեր կասկածը կը կեղրոնանայ աւելի բարապաններուն վրայ:

– Ահաւասիկ իրողութիւններ, որոնցմէ բնաւ տեղեկութիւն չունէի, – խոստովանեցաւ Աղասեան:

– Քեզի կ'ըսեմ, որ շատ բաներ կը դառնան կոր, չես ուզեր հաւատալ, – դիտել տուաւ Օհանեան:

– Եւ այդ մասին բնաւ քննութիւն մը չեղա՞ւ...

– Հարեանցի կերպով բարապանները հարցափորձեցինք, անոնք ալ բնականաբար ուրացան, ու այս կերպով խնդիրը փակուեցաւ:

– Բայց բարապան մը ինչպէ՞ս կրնայ յարաբերութիւն ունենալ ներքին գործերու նախարարի մը հետ, – դիտել տուաւ Աղասեան:

– Կը տեսնամ, որ շատ միամիտ մարդ ես, խաթրդ չմնայ ամա, – ըսաւ Օհանեան խնդալով:

– Ինչո՞ւ համար:

– Նախարարին հետ յարաբերութիւն ունենալու պէտք չի-

կայ, հաւանօրէն միջնորդ մը կայ, և անոր միջոցաւ կ'ըլլայ ամէն բան:

– Իրաւունք ունիս, – պատասխանեց Աղասեան, – ամէն պարագային Վարչութիւնը դատապարտելի է, որ այս տեսակ բաներ կը պատահին, և ինք անտարբեր կը մնայ:

– Վարչութեան անդամներուն միակ մտահոգութիւնն է քիւլահ մը խափմիչ ընել, – գոչեց Օհանեան:

– Ըստ իս պէտք է, որ խիստ ծածուկ կերպով հսկողութիւն մը կատարուի այդ բարապաններուն վրայ, – ըսաւ Աղասեան, – այս կերպով թերեւ ճշմարտութիւնը երեւան ելլէ:

– Ատիկա ես առաջարկեցի, – ըսաւ Սուրին:

– Լաւ, յետո՞յ...

– Հաւանութիւն յայտնեցին, բայց բան մը ընող չեղաւ:

– Արդէն միշտ ատանկ կ'ըլլայ, – ըսաւ Օհանեան, – «Հայհայ ընելու է, էֆէնտիմ» կ'ըսեն ու բան մըն ալ չեն ըներ:

– Աւելի ծանրակշիռ բաներ կան, – աւելցուց Սուրին խորհրդաւոր ձևով մը ձայնը ցածցնելով, – բայց տակաւին ատենը չէ հրապարակելու:

– Բնական է, որ պէտք չէ հրապարակել, – ըսաւ Օհանեան, – եթէ ոչ՝ ամբողջ գործը կը վտանգուի:

– Դեռ ուրիշ ինչե՞ր կան, – հարցուց Աղասեան հետաքրքիր, – դարձեա՞լ մատնութիւններ...

– Մատնութիւն չէ, բայց էնթրիկներ, – բացատրեց Օհանեան... – ամէն մարդ իրեն համար ուղղութիւն մը բռնած կ'երթայ: Գիտէ՞ք, որ համաձայնութիւն չի կայ Բարիգի պատուիրակութեան և Պոլսոյ մէջ:

– Ատ գէշ բան, – գոչեց Աղասեան, – ես կը կարծէի, որ Վարչութիւն և Հարստահարելոց յանձնաժողով Պոլսոյ մէջ կը գործեն Պողոս փաշայն եկած հրահանգներուն համեմատ:

– Սկիզբը այնպէս էր, բայց հիմա փոխուեցաւ, ամէն մարդ իր քաղաքականութիւնը ունի...

– Ատանկ խաղըութիւն կ'ըլլա՞յ:

– Դժբախտաբար իրողութիւնը այս է: Պողոս փաշա կ'ուզէ, որ բանակցութեան կեղրոնը Բարիգ ըլլայ, և պատգամաւորութեան ձեռքով կատարուի ամէն բան: Իսկ քանի մը մարդիկ ու-

նինք, որոնք կը փորձեն խնդիրը Պոլսոյ մէջ կարգադրել, որ-
պէսզի իրենց ձեռքով և իրենց ուղածին պէս ըլլայ ամէն բան:

— Ես բոլոր ատոնք մօտէն տեսնելուս համար ահա քաշուիլ
կ'ուզեմ,— յայտարարեց Սուլին,— ես չեմ ուզեր, որ ապագային
որևէ պատասխանատուութիւն գայ վրաս:

— Ձէ՛, ընդհակառակը, պէտք է, որ դուն մնաս մէջերնին, որ-
պէսզի ամէն բան տեսնաս ու հասկնաս,— դիտել տուաւ Օհա-
նեսան:

Աղասեան լսելով բոլոր այս յայտնութիւնները՝ տխրութեամբ
գլուխ կը շարժէր:

Սուլին ժամացոյցը նայեցաւ և ըսաւ.

— Իմ շոգենաւիս ատենը եկաւ, հազիւ քառորդ ժամ ունիմ:

— Մենք ալ կամաց-կամաց ճամբայ ելլենք,— ըսաւ Օհանեսան:

Ու երեքը միասին դուրս ելան սրճարանէն:

ԳԼՈՒԽ Ժ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ

Մեր վերը պատմած դէպքերուն վրայէն մէկ քանի ամիսներ
անցած էին, թիւ 17 խաֆիէի խնդիրը մոռցուած էր, և ո՛չ ոք կը
գրադէր անով:

Հայկական գաւառներու բարենորոգումներու հարցը կը ծե-
ծուէր ու կը ծեծուէր, առանց սակայն վերջնական կարգադրու-
թեան մը յանգելու:

Իրա՛ւ է, որ Եւրոպական պետութիւնները միշտ լրջօրէն բա-
նակցութիւններ կը կատարէին իրենց մէջ այս մասին, և ընդ-
հանրապէս այն համոզումը կը տիրէր, թէ արմատական դարման
մը պիտի ըլլար այս անգամ:

Եւրոպացի բարձր քօմիսէրը մը լիազօր իշխանութեամբ Հա-
յաստանը ղրկելու որոշումը տրուած էր արդէն, բայց պետու-
թիւնները տակաւին չէին կրնար համաձայնութիւն մը գոյաց-
նել, թէ ո՛վ պիտի ըլլար այդ բարձր քօմիսէրը, և մինչև ուր պի-
տի տարածուէր իր իրաւասութիւնը:

Պօղոս Նուպար տենդային գործունէութիւն մը ցոյց կուտար

և կը շրջէր մեծ մայրաքաղաքները՝ Լոնտոն, Պերլին, Բեռլին-
պուրկ՝ Հայկական դատը յաջողցնելու համար:

Միւս կողմէ՛ իթթիհատական թուրք կառավարութիւնը, տա-
կաւին Պալքանեան պատերազմի սասանումի ներքեւ, ոյժ չէր
զգար հակառակելու մեծ պետութիւններու կամքին և կը ջանար
կողմնակի միջոցներով և էնթրիկներով վիժեցնել այս գործը:

Եւ ասոր համար ո՛չ դրամ, ո՛չ խոստում կը խնայէր:

Ճիշդ այդ միջոցներուն, օր մը, մէկ քանի ծանօթ ազգային-
ներ հրաւէր կը ստանային Պետրոս Հալաճեանէն իր տունը հա-
ւաքուելու, գիշեր ատեն, «կարևոր խորհրդակցութեան մը հա-
մար»:

Այդ ազգայիններն էին Գրիգոր Զօհրապ, Ստեփան Գարա-
յեան, Վարդգէս, Բաստրմաճեան և այլք:

Որոշեալ ժամուն գումարումը տեղի ունեցաւ:

Խորհրդակցութեան սկսելէ առաջ ներկաներէն մին Հարցուց.

— Արդեօք Շահրիկեան էֆէնտիի հրաւէր չէ՞ ուղղուած:

— Ո՛չ,— պատասխանեց Պետրոս Հալաճեան նեղուած ձևով:

— Ինչո՞ւ համար:

— Մօն շէւ, աւելորդ համարեցի հրաւիրել, քանի որ արդէն
բաւական թիւով մարդ եկած է... արդէն ըլլալիքը պարզ խոր-
հրդակցութիւն մըն է... կարծիքի փոխանակութիւն մը...

— Ինչ որ ալ ըլլայ, քանի որ մեր խորհրդակցութիւնները
Հայկական բարենորոգումներու մասին են, Շահրիկեանի ներ-
կայութիւնը աւելորդ չէր...

Պետրոս Հալաճեան չպատասխանեց և ձեռքի անորոշ շար-
ժում մը ըրաւ:

Գրիգոր Զօհրապ հարկ համարեց միջամտելու:

— Իրաւ է, որ Շահրիկեանն ալ կրնար գալ,— ըսաւ,— այսու-
հանդերձ առանց իրեն ներկայութեանն ալ այս գումարումը իր
արժէքէն բան մը չկորսնցներ... և թերևս իր ներկայութիւնը
չատ ալ օգտակար չըլլար,— աւելցուց ժպտելով:

— Ինչո՞ւ համար...

— Այս գումարումը, եթէ չեմ սխալիր, կարծեմ նպատակ ու-
նի ելից ճամբայ մը գտնել կնճռոտ հարցերու մասին... Արդ,
Շահրիկեանը, անշուշտ, ամէնքս ալ կը յարգենք ու կը սիրենք,

բայց միանգամայն գիտենք իրեն քիչ մը չափազանց անհաշտ նկարագիրը և թէօրիսիէնի յամառութիւնը, մինչդեռ մենք կը փափաքինք գործնական հող մը գտնել, բրաթիք գործ մը տեսնել: Այս տեսակէտով իր բացակայութիւնը վնաս մը չէ, և կարծեմ այդ մտածումէն առաջնորդուած Հալաճեան էֆէնտին ալ հրաւէր չէ ուղղած անոր:

— Այո՛, մոն շեռ, ես ալ ճիշդ այդ մտածումը ունեցայ, շատ լաւ բացատրեցիք,— ըսաւ Հալաճեան:

Այս բացատրութենէն ետքը խորհրդակցութիւնը սկսաւ:

Խնդիրը, ինչպէս ըսինք, հայկական գաւառներու բարենորոգումներու մասին էր: Գումարումի հրաւէր ուղղողները կը փափաքէին գիտնալ, թէ հայերու հետեւած քաղաքականութիւնը ճիշդ և լաւագո՞յնն էր, թէ՞ կարելի էր տարբեր ձևով մը խնդիրը կարգադրել մեր շահերուն համար աւելի նպաստաւոր կերպով:

Մէկ քանի կարծիքներ յայտնելէ ետքը խօսք առաւ Գրիգոր Զօհրապ:

— Ես,— ըսաւ,— ճշմարտութիւնը խօսելու համար, կացութիւնը շատ լաւ չեմ տեսնար: Կը վախնամ որ, ինչպէս նշանները ցոյց կուտան, Ֆրանսա և Անգլիա պիտի չկրնան իրենց խօսքը քալեցնել, Ռուսիա արդէն խնդիրը թոյլ կերպով բռնած է, գալով Գերմանիոյ և Աւստրիոյ, անոնք եթէ ո՛չ յայտնապէս, գոնէ ներքնապէս հակառակ են այդ բարենորոգումներուն և աւելի կը նախընտրեն բարեկամ մնալ թուրքերուն: Այս պայմաններուն մէջ լաւ է, որ մեր բոլոր յոյսը Եւրոպայի վրայ չդնենք:

— Ի՞նչ կ'ուզէք, որ ընենք,— հարցուց ներկայ մը:

— Պէտք է աշխատինք, որ թուրքերը մեզի բոլորովին թշնամի չդարձնենք:

— Ուրեմն հրաժարի՞նք մեր դատէն:

— Ես այդպէս բան չըսի, կարելի է բարեկամ մնալ թուրքերուն հետ: Գիտէ՞ք, այս խնդրին մէջ ամենէն աւելի ի՞նչ բան կը կատրեցնէ կամ կը զայրացնէ թուրքերը, ո՛չ թէ բարձր քոմիտէի մը անուանումը, զոր սկզբունքով արդէն ընդունած են, այլ այդ քոմիտէին միմիայն եւրոպացիներու կողմէ անուանումը: Այդ բանը իրենց արժանապատուութիւնը կը վիրաւորէ, և կ'ու-

զեն, որ քոմիտէրը իրենք անուանեն և թուրք կառավարութեան պաշտօնեայ համարուի: Այդ գիշողութիւնը կարծեմ թէ կրնանք ընել առանց անպատեհութեան, գոնէ իմ անձնական կարծիքս այդ է:

— Բայց այն ատեն եւրոպական քօնթրօլը ջնջուած պիտի ըլլայ,— դիտել տուաւ ներկաներէն մին,— ինչպէ՞ս կրնանք ընդունիլ այդպիսի բան մը, մենք, որ մեր բոլոր յոյսը դրած ենք այդ տեսակ քօնթրօլի մը վրայ:

— Քօնթրօլը միշտ քօնթրօլ է,— պատասխանեց Զօհրապ,— ըլլալիքը պարզ ձևակերպութիւն է և ո՛չ ուրիշ բան, միայն երևոյթները փրկելու և թուրք կառավարութեան արժանապատուութիւնը չվիրաւորելու համար:

— Ես բանաւոր կը գտնեմ Զօհրապ էֆէնտիի առաջարկութիւնը,— միջամտեց Հալաճեան:

— Մենք առանձին որոշում չենք կրնար տալ այդ մասին, խնդիրը շատ ծանրակշիռ է,— դիտել տուաւ Վարդգէս:

— Արդէն հոս ունէ որոշում պիտի չտրուի, պարզ կարծիքի փոխանակութիւն մըն է, որ կ'ընենք զիրար լուսաբանելու համար,— պատասխանեց Զօհրապ,— երբոր իրար հասկացողութեան մը գանք, այն ատեն մեր տեսակէտը կը պարզենք Վարչութեան:

Ստեփան Գարայեան մէկ քանի վերապահումներով օգտակար գտաւ Զօհրապի առաջարկը:

— Միշտ շրջահայեցութեամբ գործելը լաւ է,— եզրակացուց,— քանի որ Եւրոպական պետութիւնները միաձայն և զօրեղ կերպով ու վճռաբար մեր դատը պաշտպանելու տրամադիր չեն երևար:

— Ինչ որ ալ ըլլայ, մենք չենք կրնար գիշողութիւն ընել թուրք կառավարութեան և աղաչաւորի ձև առնել,— ըսաւ Գ. Բաստրմաճեան:

Մէկ քանի ուրիշ ժողովականներ ալ նոյն կարծիքը յայտնեցին:

Նոյն միջոցին դուռը բացուեցաւ, և ներս մտաւ թուրք պէյ մը, զոր Հալաճեան փութաց ներկայացնել ներկաներուն իբրև ջերմ հայասէր անձ մը, որուն երազն էր սերտ եղբայրակցումը ստեղծել թուրքերու և հայերու միջև:

Զօհրապ, որ արդէն ծանօթ էր նորեկ թուրք պէյիին, բացատրեց անոր իրենց խօսակցութեան նիւթը:

— Մեր այս տեսակցութիւնը, — ըսաւ, — որեւէ պաշտօնական հանգամանք չունի, պարզապէս բարեկամական հաւաքոյթ մըն է:

— Շատ աղէկ, շատ աղէկ, — պատասխանեց թուրքը, — շատ գոհ եմ, որ ես ալ բարեբախտութիւնը ունեցայ այսպիսի հաւաքոյթի մը ներկայ գտնուելու... կը յուսամ, որ իմ ներկայութիւնս որեւէ կերպով ձեզ չի նեղեր:

— Ընդհակառակը, մօծ շեռ, շատ գոհ եմք, որ եկաք, — ըսաւ Հալաճեան, — մենք կը փափաքինք իմանալ նաև ձեր կարծիքը:

Թուրքը շատ աղաչելի չտուաւ, սկսաւ երկար տեսութիւն մը ընել Հայկական խնդրին վրայ, ջարդերու և հալածանքներու ամբողջ պատասխանատուութիւնը բեռցնել Ապտիւլ Համիտի վրայ և զայն նկատել թուրք և հայ հակառակութեան միակ հեղինակը:

Յետոյ հազար անգամ յեղյեղուած բանաձևերը կրկնեց, ըսաւ, թէ հայ և թուրք հինգ հարիւր տարիէ ի վեր իրարու հետ քով քովի, եղբօր պէս ապրած են, թէ հայը կրցած է այս պետութեան մէջ «Հաւատարիմ Հպատակ» տիտղոսին արժանանալ, թէ բոլոր լուսամիտ թուրքերը խորին զայրոյթով տեսած են անոնց անիրաւ տեղ հալածուելի ու ջարդուելի, թէ Իթթիհատի կուսակցութիւնը, առաջին օրէն, ուզած է այդ երկարամեայ հալածանքներուն արժանի փոխարինութիւնը ընել Հայաստանի մէջ արմատական բարենորոգութիւններ ընելով, բայց դժբախտաբար 5-6 տարիներէ ի վեր իրարու յաջորդող դժբախտ դէպքերը պէտք եղած ժամանակը և միջոցը չեն տուած իրեն և այլն:

Յետոյ, ազատական ծայրայեղ գաղափարներ յայտնեց, կրօնական նախապաշարումները ձաղկեց, փաթթոցաւորները դատապարտեց իբրև ժողովուրդը կրօնամոլութեան մղող, թուրքերու թերութիւնները մատնանշեց և հայերուն յատկութիւններուն վրայ ծանրացաւ և վերջապէս եկաւ բուն խնդրին:

— Հայաստանի բարենորոգութիւնները, — ըսաւ, — մենք որոշած էինք գործադրել ինքնաբերաբար, այս մասին ծրագիրներ ալ մշակած էինք, միայն թէ գործադրութեան յարմար վայրկեա-

նին կը սպասէինք: Եթէ սա Պալքանեան անիծյալ պատերազմը տեղի չունենար, մինչև հիմա ամէն բան եղած-լմնցած էր: Զեր սխալը այն եղաւ, որ համբերութիւն չունեցաք, առանց մեր նեղ կացութիւնը նկատի առնելու պահանջեցիք, որ իսկոյն բարենորոգութիւններու ձեռնարկուի և ասոր համար դիմում ըրիք Եւրոպական պետութիւններու:

— Թերևս իրաւունք ունէիք, — շարունակեց, — այսպէս վարուելու, քանի որ մինչև հիմա թուրքերը բարենորոգութիւններ խոստացած են միշտ ու չեն գործադրած: Բայց այս անգամ այնպէս չէ. հիմա ա՛լ մենք համոզուած ենք, որ առանց արմատական բարենորոգութիւններու այս երկիրը չի կրնար ապրիլ: Արդարութեան, հաւասարութեան, ազատութեան հիման վրայ պէտք է, որ արմատական բարենորոգութիւններ ըլլան: Եւ այս բանը կարելի է միայն այն ատեն, երբ Օսմանեան հայրենիքի բոլոր զաւակները, առանց ազգի կամ կրօնքի խտրութեան, ձեռք ձեռքի տան, մէկ սիրտ մէկ հոգի գործեն:

— Շատ ճիշդ կը խօսիք, — ընդմիջեց Զօհրապ:

— Բայց ահա՛ դուք հիմա մենէ կասկածելու ձև մը ունիք:

— Դուք տեղի տուած էք այս կասկածին, — նկատեց Վարդգէս:

— Այսինքն հին թուրքերը, նախկին ըէթիմը, — պատասխանեց թուրքը, — բայց հիմա ընդունեցէ՛ք, որ մեծ փոփոխութիւն մը կատարուած է մեր մէջ: Բարենորոգումները մենք մեր ձեռքով պէտք է որ ընենք, առանց օտարին միջամտութեան:

— Ե՞րբ, — հարցուց ներկաներէն մէկը:

— Հիմա, որ Պալքանեան խնդիրը կարգադրուեցաւ, ալ ժամանակը հասած է, որ լրջօրէն ձեռք առնենք խնդիրը: Թերևս մինչև հիմա գործադրութիւնը սկսած ըլլայինք, եթէ օտար միջամտութիւն չըլլար: Եւրոպական միջամտութիւնը փոխանակ օգտակար ըլլալու, վնասակար եղաւ ձեզի, որովհետև այդ միջամտութիւնը մեր արժանապատուութիւնը վիրաւորեց, և մենք ամէն ջանք ըրինք, որպէսզի գործը ձգձգենք: Վստահ եղէք, որ եթէ ուղղակի մեզ դիմած ըլլայիք բարենորոգութիւններու համար, մենք տրամադիր էինք շա՛տ աւելի լայն սահմաններու մէջ կատարել այդ բարենորոգութիւնները, քան ինչ որ ձեզի խոս-

տացած են Եւրոպական պետութիւնները: Այս ըսածս կրնամ փաստաթուղթերով ապացուցանել, որովհետեւ ծրագիրները դեռ պահուած են ներքին գործերու նախարարութեան դիւաններուն մէջ, և ես, որ ձեզի կը խօսիմ, բաւական մեծակալ բաժին մը ունեցած եմ անոնց պատրաստութեան մէջ:

— Կարծեմ Բ. Դրան մէջ կազմուած Բարենորոգումներու յանձնաժողովին անդամ էիք,— ըսաւ Հալաճեան:

— Եւ ամենէն գործօն անդամներէն մէկը,— պատասխանեց թուրքը,— ծրագիրներուն մեծ մասը ես առանձին պատրաստած եմ: Վստահ եղէք, որ նախարարութեան մէջ ամէնքն ալ կողմնակից են բարենորոգութիւններու, ո՛չ թէ միայն Հայկական գաւառներու Համար, այլ ընդհանուր թուրքիոյ Համար, որովհետեւ որչափ Հայերը, նոյնչափ և թերեւ աւելի, կը տառապին միւս ազգերն ալ, քիւրտ, արաբ, սուրիացի, թուրք և այլն: Ասոր Համար ընդհանուր բարենորոգութիւններ անհրաժեշտ են, և արդէն իսկ ընդարձակ ծրագիրներ պատրաստած ենք այդ մասին: Միայն թէ, կը կրկնեմ, միակ պահանջում մը ունինք. կ'ուզենք, որ այդ բարենորոգութիւնները կատարուին մեր ձեռքով և ո՛չ թէ արտաքին ճնշումի տակ: Գիտենք, որ մենք մեր սեփական ուժերով չենք կրնար բան մը ընել, որովհետեւ կարող մարդիկ կը պակսին մեր մէջ, և այս պատճառով սկզբամբ ընդունած ենք վարչական և ոստիկանական նոր կազմակերպութեան Համար Հրաւիրել Եւրոպացի մասնագէտ անձեր, միայն թէ անոնք պէտք է ըլլան մեր պաշտօնեաները և ո՛չ թէ օտար պետութիւններու կողմէ մեր վրայ դրուած քօնթրօլներ...

Թուրքը պահ մը լռեց և շուրջը ակնարկ մը պտըտցուց իր խօսքերուն ազդեցութիւնը Հասկնալու Համար:

— Ի՞նչ ապահովութիւն կրնաք տալ, թէ առանց արտաքին ճնշումի պիտի կատարէք բարենորոգութիւնները,— հարցուց Զօհրապ:

— Բայց ըսի արդէն, որ մենք ինքնին որոշած ենք այդ բարենորոգութիւնը ընել ո՛չ թէ մեր Հպատակ ազգերուն գոհացում տալու Համար, այլ մեր Հայրենիքը կորուստէ փրկելու Համար:

— Որոշում տալ և գործադրել իրարմէ բաւական տարբեր են,— դիտել տուաւ Զօհրապ, որ ընդդիմարանի դերը ստանձ-

նած կը թուէր,— այս երկրին մէջ, շատ անգամներ, շատ գեղեցիկ որոշումներ տրուած են, որոնք, ափսո՛ս, անգործադրելի մնացած են:

— Որովհետեւ պետութիւնը բռնակալ ըէժիմի մը ներքեւ կ'ապրէր,— պատասխանեց թուրքը,— որովհետեւ սուլթանները միշտ ամէն բարենորոգութիւն, ամէն քայլ դէպի առաջ վնասակար նկատած են իրենց սուլթանական ցեղին շահերուն: Բայց Հիմա, փա՛ռք Աստուծոյ, սահմանադրական ըէժիմի մը տակ կ'ապրինք: Սուլթանին իշխանութիւնը սահմանափակուած է, և Խորհրդարանն է, որ կը վարէ երկրին ճակատագիրը: Դուք մօտեցէք մեզի, բանակցեցէք մեզի հետ և պիտի տեսնէք, որ մենք կարող պիտի ըլլանք ամէն ապահովութիւն տալու:

— Ձեր ըսածները լրջօրէն նկատողութեան առնուելիք խնդիրներ են,— պատասխանեց Գարայեան,— և, ինչպէս նախապէս ըսինք, այս գումարումը որեւէ պաշտօնական Հանգամանք չունի...

— Գիտեմ, գիտեմ,— ընդմիջեց թուրքը,— արդէն ես ալ ձեռնէ վճռական պատասխան մը չեմ սպասեր: Ո՛չ դուք կրնաք այդպիսի պատասխան մը տալ, և ո՛չ ալ ես իրաւունք ունիմ ձեռնէ պահանջելու: Արդէն ես պարզ այցելութեան մը եկած էի Հալաճեան էֆէնտիի և դիպուածով է, որ ձեզ Հանդիպեցայ այստեղ: Միայն թէ, կարծեմ ամէնքդ ալ, ձեր ազգային գործերուն մէջ բաւական կարևոր դեր մը ունիք և ձեր ազգակիցներուն վրայ մեծ ազդեցութիւն, հետեւաբար օգտակար ծառայութիւն մը կըրնաք մատուցանել թէ՛ ձեր ազգին և թէ՛ պետութեան, եթէ իմ ցոյց տուած ուղղութեամբ գործէք:

— Ձեռնէ առաջ արդէն նոյն գաղափարը յայտնեց Զօհրապ էֆէնտի,— յարեց Բաստրմաճեան,— և մենք այդ մասին կը վիճաբանէինք, երբ դուք եկաք:

— Զօհրապ էֆէնտի ձեր ազգին և մեր պետութեան պատիւ բերող անձնաւորութիւն մըն է,— պատասխանեց թուրքը,— իր խելքը, իր հմտութիւնը և իր փորձառութիւնը պէտք է որ ձեզի ուղեցոյց ըլլան: Շատ գոհ և Հպարտ եմ, որ այս խնդրոյն մէջ Զօհրապ էֆէնտիի պէս անձնաւորութեան մը հետ Համակարծիք կը գտնուիմ:

– Կ'աղաչեմ, ատիկա ինձի համար պատիւ մըն է:

– Սթաֆուրլա՛ս...

Եւ այսպէս ա լա թուրքա իրարու կարգ մը քաղաքավարական խօսքեր շոյալելէ ետքը թուրքը ոտքի ելաւ և կարևոր ժամադրութիւն մը պատրուակելով՝ ներկաները բարևեց և մեկնեցաւ:

Խօսակցութիւնը բաւական երկարեցաւ, առանց ուէ դրական արդիւնքի: Միայն սա տեսնուեցաւ, որ մեծամասնութիւնը համաձայն չէր Զօհրապի գաղափարներուն:

Հետևեալ օրը Հարստահարելոյ յանձնաժողովը նիստ ունէր, և հո՛ն գիշերային գումարումին ներկայ գտնուող անդամ մը պատմեց ինչ որ ըսած էր Զօհրապ:

Դիւրագրգիռ Շահրիկեան յանկարծ բորբոքեցաւ:

– Բայց դա յիմար բան է,– գոչեց զայրացած,– ինչպէ՞ս կարելի է երթալ համաձայնուել թուրք կառավարութեան հետ, երբ մենք ամիսներէ ի վեր նրա հակառակ ենք գործում... դա պարզապէս դասալքութիւն, անձնասպանութիւն կը նշանակի:

Ընկերները գինքը հանդարտեցնելու համար դիտել տուին, որ ատիկա պարզապէս Զօհրապի մէկ անձնական կարծիքն էր և որևէ կերպով չէր կրնար ազդել յանձնաժողովին բունելիք ընթացքին վրայ:

– Մի՞թէ ամէն մարդ ազատ չէ իր կարծիքը յայտնելու...

– Իհարկէ,– պատասխանեց Շահրիկեան,– բայց խնդիրը այն է, որ Զօհրապ առանձին չէ, ուրիշներ ալ կան, որ նոյն կարծիքը սկսած են յայտնել: Դա մի նոր հոսանք է, որ առաջ է գալիս, չեմ գիտեր՝ ո՞ր կողմից: Թուրք կառավարութիւնը կ'ուզէ մեզ խարի, նա պարզապէս ցանկանում է վիժեցնել բարենորոգումները գործը և այդպէս էնթրիկներ է սարքում:

– Ո՞վ կը հաւատայ իր խօսքերուն...

– Բայց արդէն ահա՛ սկսել էք հաւատալ:

– Հաւատացող չի կայ, Շահրիկեան՝ն էֆէնտի,– գոչեց ներսէս Օհանեան,– դուն հոգ մի՛ ընիր, մենք գիտենք ինչ կ'անցնի՝ կը դառնայ կոր, չօճուխ չենք, օլտուղճա խիղճ ունինք՝ կը մտածենք, ականջ ունինք՝ կը լսենք, աչք ունինք՝ կը տեսնանք...

– Ես քեզի չեմ ակնարկում,– պատասխանեց Շահրիկեան,– ես քեզ ճանաչում եմ:

– Գիտեմ, որ խօսքդ ինձի համար չէ, բայց նորէն կ'ըսեմ, իրար անցնելու բան չի կայ, քանի մը հոգի բաներ մը դարձնել կ'ուզեն կոր, եղածը աս է... ցաւալին այն է, որ այդ գիշերային ժողովին դուն ներկայ չես գտնուած:

– Ինչպէ՞ս կարող էի ներկայ գտնուիլ, երբ զիս չեն հրաւիրել:

– Բայց ինչպէ՞ս կ'ըլլայ, որ ձեր միւս ընկերները կը հրաւիրեն ու ձեզ չեն կանչեր:

– Այդ Հալաճեան էֆէնտիի հարցրիր,– պատասխանեց Շահրիկեան իր մեֆիսթօֆէլեան ժպիտովը:

– Ձեր ժողովի չհրաւիրուիլը մեծ նշանակութիւն ունի,– վրճուեց Օհանեան:

– Ունենայ թէ ոչ՝ իրողութիւնը այն է, որ ես ներկայ չեմ եղել և ասոր համար շատ էլ դժգոհ չեմ:

– Ինչո՞ւ համար...

– Որովհետև կարելի էր, որ համբերութիւն չուենայի, և մի սքանտալ առաջ գար,– պատասխանեց Շահրիկեան:

Հարստահարելոյ յանձնաժողովը ցրուելէ ետքը Շահրիկեան և Ներսէս Օհանեան միասին հեռացան ժողովասրահէն:

ԳԼՈՒԽ ԺԱ ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԸ ՊԱՏՈՒ

Շաբաթ մը ետքը տարօրինակ իրողութիւն մը պատահեցաւ, որ շատ մեկնութիւններու տեղի տուաւ և կասկածանքներու ծնունդ տուաւ:

Բայց նախքան այդ եղելութիւնը պատմելը, պէտք կը զգանք ուրիշ դէպք մը պատմել մեր ընթերցողներուն. դէպք մը, որ թերևս անուղղակի կերպով կապ ունի մեր քիչ մը վերը ակնարկած իրողութեան հետ:

Չորեքշաբթի իրիկուն մը, Պապը Ալի ճատտէսի, Ճըղալ օղլու եօքուշու Հայկ Կօշկարեանի գրավաճառանոցը նստած էին խանութին տէրը և Աշոտ Քէչեան, երբ նրբահասակ, խիստ վայելչօրէն հագուած, գեղանի ու երիտասարդ կին մը ներկայացաւ և հարցուց.

– Արդեօք պարոն Գրիգոր Թորոսեանը հո՞ւ է:
– Ոչ, դեռ չեկաւ,– փութաց պատասխանել Կօշկարեան,–
բայց կուգայ...
– Ե՞րբ...
– Յայտնի չէ, թերևս հիմա, թերևս մէկ ժամէն:
Գեղանի կինը վարանոտ շարժում մը ըրաւ:
– Հրամանեցէ՛ք, նստեցէ՛ք,– ըսաւ Կօշկարեան, որ հրապու-
րուած էր կնոջ գեղեցկութենէն,– չեմ կարծեր, որ ուշանայ, ո-
րովհետև «Կիկօ»ի համար ձեռագիր պիտի բերէր:
– Հոգ չէ, կէս ժամէն կրկին կը հանդիպիմ,– պատասխանեց
գեղուհին,– հոս մօտերը գործ մը ունիմ... մէկը պիտի տեսնեմ,
կրկին կուգամ... միայն թէ կը խնդրեմ, եթէ պարոն Թորոսեանը
գայ, ըսէք իրեն, որ սպասէ:
– Շատ լաւ, կը հաճի՞ք ձեր անունը ըսել, որպէսզի հաղոր-
դեմ իրեն:
– Պէտք չի կայ,– պատասխանեց կինը ժպտելով,– որովհետև
եթէ անունս ալ տաք՝ օգուտ մը չունի, քանի որ զիս չի ճանչը-
նար... ըսէք միայն, որ կին մը կ'ուզէ հետը տեսնուիլ:
– Շատ աղէկ, տիկին... բայց կրնայիք հոս սպասել:
– Ձէ՛, չնորհակալ եմ, ինչպէս ըսի, ուրիշ մարդ ալ պիտի
տեսնեմ:
– Ինչպէս որ կ'ուզէք ուրեմն:
Գեղուհին հազիւ մեկնած էր՝ Հայկ Կօշկարեան գոչեց.
– Վա՛յ շունշանորդի, ի՛նչ աղուր կնիկ էր, ո՞վ է արդեօք:
– Ես կարծեմ այս կինը կը ճանչնամ, բայց չեմ յիշեր կոր,–
ըսաւ Աշոտ Քէչեան,– Բերա տեսած եմ:
– Ինծի ալ այնպէս կուգայ, որ Շիտակ ճամբան հանդիպած
եմ իրեն:
– Բայց ի՞նչ գործ ունի Կիկոյին հետ:
– Ո՞վ գիտէ, քիչ մը ետքը կը հասկնանք:
– Պատուաւոր կին մը կ'երևայ կոր:
– Հիմա պատուաւոր կինը անպատիւէն զանազանելը շատ
գժուար է:
– Ինչ որ ալ ըլլայ, ըսելիք չի կայ, շատ գեղեցիկ կին մըն
էր...

– Հիմա միտքս ինկաւ,– գոչեց Աշոտ Քէչեան,– յիշեցի, թէ
ո՞ւր տեսած եմ զինքը... կանանչ հովանոցով կինն է:
– Կանանչ հովանոցով կինը ո՞վ է,– հարցուց Կօշկարեան:
– Կին մը, որ քանի մը ամիս առաջ Ազգային ժողովին եկած
էր և ամենուս հետաքրքրութիւնը շարժեց... այսօր տարբեր ար-
դուզարդ ըրած էր, ու մէկէն ի մէկ չկրցայ ճանչնալ զինքը:
– Կանանչ հովանոցով կի՛նը, այդ ի՞նչ խորհրդաւոր բան է:
– Իրաւցընէ քիչ մը խորհրդաւոր է,– պատասխանեց Ա-
շոտ,– երբեք այդպիսի կին մը չէր տեսնուած Ազգային ժողովի
ուսկնդիրներուն մէջ... և ի՞նչ նիստի եկած էր, գիտե՞ս...
– Ի՞նչ նիստի,– հարցուց Կօշկարեան:
– Թիւ 17 խաֆիէի մասին վիճաբանութիւն պիտի ըլլար այդ
օրը... միայն թէ նիստը դռնփակ տեղի ունեցաւ, և ինքն ալ ստի-
պուեցաւ դուրս ելլել սրահէն: Յետոյ տեսանք զինքը բակին մէջ,
նոյնիսկ կը յիշեմ, որ Սեպուհ Ակունիին հետ խօսքի բռնուեցաւ:
– Այդ բոլոր մանրամասնութիւնները որեւէ որոշ տեղեկու-
թիւն մը չեն ի տար իր վրայ:
– Հիմա որ Կիկոյին հետ գործ ունի, դիւրաւ կրնանք հասկը-
նալ իրեն ո՞վ կամ ի՛նչ ըլլալը:
– Արդեօք «Կիկօ»ին մէջ բա՞ն մը պիտի գրել տայ,– հար-
ցուց Կօշկարեան:
– Հաւանական է,– պատասխանեց Աշոտ Քէչեան:
– Այն ատեն տեսնուինք,– ըսաւ Հայկ Կօշկարեան խնդա-
լով,– պարապ տեղը բան մըն ալ չեմ գրել տար:
– Թերևս կը վճարէ...
– Դրամը ի՞նչ պիտի ընեմ, ուրիշ կերպով կը համաձայնիք
հետը:
Այս երևակայական սակարկութեամբ զբաղած էր Կօշկա-
րեան, երբ Գրիգոր Թորոսեան ներս մտաւ:
– Քեզի միւժտէ մը ունիմ, ի՞նչ կուտաս, եթէ ըսեմ,– հար-
ցուց Կօշկարեան:
– Նախ հասկնամ, թէ ի՞նչ տեսակ բան է,– ըսաւ Կիկօ:
– Ո՛չ, չեմ կրնար ըսել... միայն ըսէ՛, թէ ի՞նչ պիտի տաս:
– Եթէ իրաւցընէ միւժտէ մըն է, քեզի իրիկունը Պալապանին
քանի մը գարեջուր կը խմցնեմ:

– Գարեջուրով լմննալիք բան չէ...
 – Ուրեմն միւժտէ՞ր քեզի պահէ:
 – Հաւատա, որ կ'արժէ ինչ որ տաս, – միջամտեց Աշոտ:
 – Ուրեմն դո՞ւն ալ գիտես կոր, – ըսաւ Կիկօ:
 – Ա՛յո, անիկա ալ գիտէ, – ըսաւ Կօշկարեան:
 – Երկար մի՛ ընէք, ըսէք, տեսնեմ ի՛նչ է խնդիրը, ով գիտէ՛ ինչ պարապ բան է:
 – Խնդիրը այն է, որ շատ գեղեցիկ, շատ շիք հագուած կին մը եկաւ քեզ փնտռեց, քիչ մը ետքը դարձեալ պիտի գայ...
 – Չճանչցա՞ք զինքը:
 – Չէ՛...
 – Անունը թող հարցնէիք:
 – Հարցուցի, բայց չըսաւ. «արդէն անունս չգիտեք» պատասխանեց:
 – Բայց ես ճանչցայ ով ըլլալը, – միջամտեց Աշոտ, – անցածները Ազգային ժողովին եկող կինն էր... կը յիշե՞ս, կանանչ հովանոց մը ունէր ձեռքը...
 – Այո՛, այո՛, միտքս եկաւ, կարծեմ հետն ալ քանի մը խօսք ըրի, – պատասխանեց Կիկօ, – ծօ՛, իրա՛ւ խըյեախ կտոր մըն էր... բայց ինծի հետ ի՞նչ գործ կրնայ ունենալ:
 – Կեցիր, տեսնենք, հիմա կը հասկնանք, – ըսաւ Կօշկարեան:
 Արդարեւ բաւական տարօրինակ կը թուէր Կիկոյի այս կնոջ այցելութիւնը: Չէր կրնար գուշակել, թէ ինչ գործ կրնար ունենալ իրեն հետ: Բաւական մտածելէ ետքը հասաւ այն եզրակացութեան, ուր իր երկու ընկերները հասած էին:
 «Կ'երևայ, որ «Կիկօ»ի մէջ բան մը գրել պիտի տայ», – խորհեցաւ:
 Բարեբախտաբար քիչ մը ետքը գեղանի անձանօթուհին երևցաւ և հարցուց, թէ արդեօք Գրիգոր Թորոսեանը եկա՞ծ է:
 – Ահաւասիկ, – ըսաւ Կօշկարեան ցոյց տալով «Կիկօ»ի խմբագիրը:
 Թորոսեան փութաց ընդառաջ երթալ գեղանի տիկնոջ:
 – Ձի՞ս կ'ուզէք տեսնել, – հարցուց:
 – Գրիգոր է՞՞՞նտի Թորոսեանը դո՞ւք էք:
 – Այո՛, տիկի՛ն:

– Ուրեմն ձեզի հետ կ'ուզէի տեսակցութիւն մը ունենալ... բայց կը փափաքէի, որ առանձին ըլլայինք, ես կը կարծէի, որ դուք ձեզի համար առանձին գրասենեակ մը ունիք:
 – Դժբախտաբար ո՛չ տակաւին, – պատասխանեց Թորոսեան ժպտելով, – բայց եթէ կ'ուզէք՝ հոս մօտերը տեղ մը կրնանք գրտնել, ուր կարող ըլլանք ազատօրէն տեսակցիլ:
 – Շատ գոհ պիտի ըլլամ, կը ներէք, որ ձեզ անհանգիստ ըրի, թերևս զբաղած էիք:
 – Ո՛չ, տիկի՛ն, բնաւ անհանգիստ չըրիք:
 Եւ Գրիգոր Թորոսեան անձանօթուհիին ընկերակցութեամբ ուղղուեցաւ Պապը Ալի ճատտէսիէն վար:
 – Ո՛ւր պիտի երթանք, – հարցուց կինը:
 – Ամենէն յարմարը, – պատասխանեց Թորոսեան, – Սիրքէ-ճիին կայարանին դէմը գտնուող գարեջրատունն է. հո՛ն պարտէզը կրնանք նստիլ ու տեսակցիլ:
 – Շատ աղէկ, հոն երթանք:
 Քանի մը վայրկեան ետքը հասան գարեջրատան պարտէզը:
 – Ամենէն առաջ, – ըսաւ տիկինը, – պէտք կ'զգամ ինքզինքս ներկայացնել:
 – Ինչպէս որ կ'ուզէք:
 – Էլի՞ք Մայիան...
 – Շատ շնորհակալ եմ, տիկի՛ն, և շատ ալ գոհ ձեզ հետ ծանօթանալուս:
 – Շատ ազնիւ էք, պարո՛ն, հիմա գանք բուն խնդրին, – ըսաւ տիկինը քիչ մը նեղուած կերպարանք մը առնելով, – խնդիրը այնչափ փափուկ է, որ շիտակը, չեմ համարձակիր կոր ըսել:
 – Մի քաշուիք, տիկի՛ն, – պատասխանեց ժպտելով, – խմբագիրները քահանաներու պէս են, ամէն բան կրնան իմանալ իբր խոստովանահայր...
 – Ես բաւական ժամանակ է ի վեր ամուսինէս բաժնուած եմ, – շարունակեց կինը, – որովհետեւ անհաւատարիմ ընթացք մը ունեցած է ինծի հանդէպ:
 – Ձեզի նման կին մը ունենալ և հաւատարիմ չըլլա՛լ, ճշմարիտը անհաւատալի է ատիկա:
 – Եւ սակայն ճշմարտութիւնը այս է... հիմա կ'ուզեմ, որ օ-

րինաւոր կերպով բաժնուիմ իմ ամուսինէս, որովհետեւ այլեւ
հաշտութեան որեւէ յոյս չէ մնացած:

– Շատ իրաւունք ունիք ամուսնալուծութիւն պահանջելու,
դեռ շատ երիտասարդ էք, կրնաք կրկին ամուսնանալ:

– Ձէ՛, այդպիսի դիտաւորութիւն մը չունիմ, – ըսաւ կինը, –
իմ նպատակս է ազատութիւնս ձեռք բերել:

– Եւ սպասել լաւագոյն առիթի մը, – ըսաւ Թորոսեան խնդա-
լով:

– Այս տեսակ գործերու համար ըսին ինծի, թէ ներսէս Փա-
փազեան անուն անձ մը մասնաւոր գործակալութիւն մը հաս-
տատած է:

– Շատ ճիշդ է:

– Եւ թէ այդ մարդը ձեր բարեկամն է եղեր:

– Այդ ալ ճիշդ է:

– Ձննէ պիտի խնդրէի, որ զիս իրեն յանձնարարէք, որպէս-
զի իմ գործս աւելի ուշադրութեամբ նայի:

– Ամենայն սիրով, – պատասխանեց Թորոսեան, – բայց ներե-
ցէք, որ դիտողութիւն մը ընեմ. ինչո՞ւ ուղղակի իրեն չզդմեցիք,
քանի որ ես ալ իրեն չափ անծանօթ էի ձեզի:

Գեղուհին նեղը ինկած մէկու մը պէս շարժում մը ըրաւ, յե-
տոյ պատասխանեց.

– Վերջապէս խմբագիրի մը կողմէ եթէ յանձնարարագիր մը
ուսնենամ, բնական է, որ աւելի ուշադիր կ'ըլլայ գործիս... ասկէ
զատ ասիկա առիթ մըն էր ձեզի հետ ծանօթանալու, ինչպէս
նաև ձեր շնորհիւ ուրիշներու հետ ալ...

– Դեռ ուրիշներու համար ա՞լ յանձնարարականներ կ'ու-
ղէք, – հարցուց Թորոսեան:

– Ոչ թէ յանձնարարական, բայց թերևս պէտք ըլլայ զիս ան-
ձամբ ներկայացնելու:

– Որո՞նց, – հարցուց «Կիկօ»ի խմբագիրը:

– Այնպիսի անձերու, որոնք իրենց դիրքովը կրնան նպաս-
տել, որպէսզի այս ամուսնալուծութեան գործը շուտով կար-
գադրուի ի նպաստ ինծի:

– Բայց քանի որ իրաւունքը ձերն է, քանի որ անհաւատա-
րիմը ձեր ամուսինն է, ա՛լ ի՞նչ պէտք ունիք պաշտպանութիւն-
ներու:

– Այնպէս է, սակայն ամուսինս շա՛տ ճարպիկ, շա՛տ ազդե-
ցիկ մարդ է, կրնայ հազար տեսակ խաղեր խաղալ ինծի, նոյնիսկ
անանկ մը ընել, որ ես յանցաւոր ըլլամ և ինք արդար... շիտա-
կը՝ ես այդ մարդէն կը վախնամ և կ'ուզեմ, որ գլուխս փորձանք
չի գայ...

– Որո՞նց հետ կը փափաքիք խօսիլ այդ գործին մասին:

– Օրինակի համար, եթէ կարելի ըլլար Զօհրայ էֆէնտիի
հետ անգամ մը տեսնուիլ:

– Անկարելի բան մը չէ:

– Դուք կը ճանչնաք զինքը, այնպէս չէ՞:

– Բնականաբար, – պատասխանեց Կիկօ:

– Կրնաք զիս գիրով մը ներկայացնել իրեն:

– Գիրով կարելի չէ, բայց եթէ կ'ուզէք՝ օր մը իր գրասենեա-
կը կ'երթանք, և անձամբ կը ներկայացնեմ... Ես չեմ կրնար Զօհ-
րայի պէս մէկու մը յանձնարարական գրել:

– Իրաւունք ունիք, – պատասխանեց գեղանի Էլիզ, – աւելի
աղէկ է, որ անձամբ երթանք, ներկայանանք իրեն:

– Ուրեմն երբոր կ'ուզէք, իմաց տուէք:

– Միայն թէ դուք պէտք է, որ զիս ներկայացնէք իբրև Հին
ծանօթ մը, որպէսզի ազդեցութիւն մը ընէ: Եթէ ըսէք, որ այսօր
զիս ճանչցաք, այն ատեն ներկայացումը իր կարևորութիւնը կը
կորսնցնէ:

– Շատ աղէկ, իբրև Հին ծանօթ կը ներկայացնեմ, – հաւանե-
ցաւ Թորոսեան:

– Ուրեմն, եթէ կ'ուզէք, ճամբայ ելլենք...

– Ո՛ւր, – հարցուց Թորոսեան:

– Զօհրայ էֆէնտիի գրասենեակը:

– Հիմա՞, անմիջապէ՞ս, – գոչեց Թորոսեան զարմացած:

– Ինչո՞ւ չէ... չեմ ուզեր, որ գործը ձգձգեմ, Հիմա ամենէն
յարմար է, քանի որ դուք ալ ըսիք, որ գործ մը չունէիք:

– Այո՛, բայց քիչ մը ետքը գործ ունիմ...

– Կ'աղաչեմ, այն փոքրիկ զոհողութիւնը ըրէք ինծի... արդէն
դուք Հոն մնալու պէտք չունիք, զիս կը ներկայացնէք ու կը
մեկնիք... տեղը հեռո՞ւ է:

– Լաճիվէրտ խան, Ղալաթիա, թիւնէլի մօտերը:

– Տասր վայրկեան չտևեր: Կէս ժամէն կրնաք դարձեալ Հոս ըլլալ, եթէ կ'ուզէք, կառք մը կը բռնենք ու այնպէս կ'երթանք:

Անծանօթուհին այնքա՛ն թախանձեց, իր աղուոր աչքերուն Հմայքը այնքա՛ն գործածեց, որ Գրիգոր Թորոսեան Հաւանեցաւ ճամբայ ելլելու:

– Խնդիրը այն է, որ տեսնենք, թէ Զօհրապ էֆէնտին իր գրասենեակը պիտի գտնե՞նք,– ըսաւ, երբ կամուրջէն անցան:

– Այն ալ մեր բախտին կը թողունք,– պատասխանեց գեղուհին:

Բախտը կը ժպտէր իրենց. արդարև Զօհրապ իր գրասենեակն էր:

Թորոսեան գեղուհիին ընկերակցութեամբ ուղղակի մտաւ մեծանուն փաստաբանին սենեակը: Եթէ առանձին ըլլար, բնականաբար պիտի չհամարձակէր, այսպէս, յանկարծակի անհանգիստ ընել անձ մը, որ ո՛վ գիտէ, դատական ի՛նչ կարևոր խընդիրներով զբաղած էր: Բայց իր Հետը ունէր շէք ու գեղեցիկ կին մը, և Թորոսեան լաւ գիտէր, թէ այդպիսի ընկերակցութեամբ մը կրնար առանց անպատեհութեան և առանց իր վրայ դիտողութիւն հրաւիրելու մտնել Զօհրապի սենեակը:

Երբ ներս մտան, արդարև փաստաբանը այնչա՛փ խորասուզուած կը թուէր թուղթերու դէզի մը մէջ, որ ո՛չ անոնց ոտնաձայնը լսեց և ո՛չ ալ զիրենք նշմարեց:

Թորոսեան ստիպուեցաւ թեթև մը Հազալ:

Այն ատեն Զօհրապ գլուխը վեր առաւ և նշմարեց երկու այցելուները, իր ակնարկը պահ մը սևեռած մնաց գեղուհիին վրայ:

«Կիկօ»ի խմբագիրը վայրկեանը յարմար սեպեց իր ընկերուհին ներկայացնելու:

– Զօհրա՛պ էֆէնտի,– ըսաւ,– կը ներէք, որ ձեզ անհանգիստ ըրինք... տիկինը կը փափաքէր անձնական գործի մը համար ձեզի Հետ խորհրդակցիլ, խնդրեց ինչ, որ իրեն ընկերանամ, որպէսզի ձեզի ներկայացնեմ, տիկին էլիզ...

– Շատ շնորհակալ եմ,– պատասխանեց Զօհրապ,– հրամայեցէ՛ք, նստեցէ՛ք:

Եւ գրասեղանին մօտ աթոռ մը ցոյց տուաւ կնոջ:

Թորոսեան մնաց ոտքի վրայ:

– Առանձին պիտի գար, բայց չհամարձակեցաւ:

– Ի՞նչ է ձեր խնդիրը,– Հարցուց Զօհրապ:

Գեղուհին առանց պատասխանելու՝ ամչկոտ կերպարանք մը առաւ:

– Ամուսնալուծութեան գործ մը ունի,– միջամտեց Թորոսեան:

– Երբ առանձին մնանք, կը բացատրեմ ձեզի,– ըսաւ կինը:

Այս խօսքը պարզապէս Թորոսեանը ճամբու դնելու ձև մըն էր:

– Ինչպէս որ կ'ուզէք, տիկին,– ըսաւ Զօհրապ:

– Միայն թէ կը վախնամ, որ ձեզ անհանգիստ ըրի, որովհետև ներս մտած ատենս տեսայ, որ չափազանց զբաղած էիք:

– Այո՛, քանի մը կարևոր գործեր կ'ուսուսնասիրէի, բայց վնաս չունի: Թո՛ղ քիչ մը ետքը ըլլայ...

Թորոսեան տեսնելով, որ իր Հոն կենալը այլևս աւելորդ է՝

– Մնաք բարով,– ըսաւ և դուրս ելաւ:

Պահ մը մտածեց իր ընկիւղին վրայ:

«Զգեմ Հեռանա՛մ, թէ՞ սպասեմ,– ըսաւ ինքնիրեն,– աս կինը կարծեմ պարզապէս իմ քթիս խնդաց և զիս իրեն գործիք ըրաւ մինչև Զօհրապին գալու համար և յետոյ պարզապէս զիս վռնտեց գրեթէ: Ասանկ բան կ'ըլլա՞յ... մանաւանդ ինձի: Ես Հոս կը սպասեմ և օձիքէն կը բռնեմ... ասանկ կին մը դիւրաւ ձեռք չանցուիր ու անցուելէ ետքն ալ ձեռքէ չփախցուիր... խորհրդակցութիւնը շատ երկար չկրնար տևել, Հազիւ կէս ժամ... արդէն Զօհրապ չափազանց զբաղած էր, անշուշտ անոյշ տեղը պիտի կապէ և ուրիշ օրուան համար ժամադիր պիտի ըլլայ Հետը...»:

Այսպէս մտածելով Թորոսեան Լաճիվէրտ խանի դէմը գլուխը ուրիշ խան մը մտաւ, խահուէճիին սուրճ մը ապսպրեց և աթոռ մը առնելով՝ բակը նստաւ:

Բաւական սպասելէ ետքը, թերևս կէս ժամէն աւելի, Թորոսեան նշմարեց Զօհրապի պաշտօնեաներէն մէկը, որ շտապով դուրս ելաւ և քիչ ետքը վերադարձաւ կառքով մը:

«Կ'երևայ, որ Զօհրապ պիտի մեկնի,– մտածեց Թորոսեան,–

ուրեմն կինը հիմա դուրս պիտի ելլէ, պատրաստուինք զինքը ձերբակալելու»:

Քիչ ետքը, արդարև, տիկին էլիզ Մալեան երևցաւ. միայն թէ առանձին չէր, այլ Ձօհրապի ընկերակցութեամբ:

Երբ կառքին մօտեցան, Ձօհրապ գեղուհիին թեւէն բռնելով՝ զինքը վեր հանեց, և երկուքը միասին բազմեցան:

— Առապածը Շիշլիէ սիր... — լսուեցաւ Ձօհրապի ձայնը:

Կառքը ճամբայ ելաւ:

«Թոռա՛ւ...», — մտածեց Թորոսեան՝ մելամաղձոտ ականարկ մը նետելով կառքին ետեւէն:

Եւ ինքն ալ ճամբայ ելաւ դէպի կամուրջ՝ Պոլիս վերադառնալու համար:

«Այդ ամենուն մէջ ի՞նչ եղաւ իմ դերս» — կը մտածէր դառնութեամբ՝ առանց համարձակելու զայն որակել:

Գրավաճառատան մէջ Կօշկարեան և Աշոտ Քէչեան կը սպասէին իրեն. անոնց միացեր էր նաև Արամ Անտոնեան:

— Ի՞նչ ըրիր կնիկը, — հարցուց Կօշկարեան, երբ ներս մտաւ:

— Զգէ՛ պէ՛, — ըսաւ Թորոսեան սրտնեղութեամբ:

— Փախուցի՞ր...

— Ափսո՛ս, այնպէս եղաւ, — պատասխանեց Թորոսեան:

— Պատմէ՛, տեսնե՞ք, գլխուդ եկածը, — առաջարկեց Արամ Անտոնեան:

Թորոսեան մանրամասնօրէն պատմեց ինչ որ տեղի ունեցած էր:

— Կը շնորհաւորենք, ուրեմն, նոր պաշտօնդ, — ըսաւ Աշոտ:

— Եւ այդ գործը տեսար առանց փոխարինութեա՞ն, — աւելցուց Կօշկարեան:

— Ես Ձօհրապին կ'ըսեմ, քեզի նուէր մը կուտայ, — ըսաւ Անտոնեան:

— Կատակը ձգեցէք, — գոչեց Թորոսեան, — արդէն սիրտս նեղ է, ձեզ մտիկ չեմ կրնար ընել:

— Տղա՛ք, ատենը ուշ է, խանութը գոցենք ու երթանք, — ըսաւ Կօշկարեան:

Քիչ ետքը չորսը միասին կ'ուղղուէին դէպի կամուրջ, Բերա երթալու համար:

Իսկ գեղանի էլիզ ո՞ւր գացած էր Ձօհրապի հետ:

Լաւ է, որ այս մասին հետաքրքիր չըլլանք և թողուք, որ դէպքերը խօսին:

Այս մեր պատմած իրողութիւններէն քանի մը օր ետքը Վարչութիւնը ժողով գումարած էր Ղալաթիոյ Խորհրդարանը, երբ բարապան մը ներս մտնելով՝ Պատրիարքին ականջն ի վար բաներ մը փսփսաց:

— Իռուսական դեսպանատունէն թարգման մը եկեր է և կ'ուզէ անմիջապէս տեսակցութիւն մը ունենալ ինձի հետ, — ըսաւ Պատրիարքը՝ խօսքը ժողովականներուն ուղղելով:

— Անշուշտ կարևոր խնդրի մը համար է, — պատասխանեց ժողովականներէն մէկը, — պէտք է, որ Ձեր սրբազնութիւնը անմիջապէս ընդունի զինքը:

— Լաւ կ'ըլլայ, որ Վարչութեան ատենապետն ալ ընկերանայ, — դիտել տուաւ ուրիշ մը:

— Բնականաբար:

Պատրիարքը և Վարչութեան ատենապետը գացին դեսպանատան թարգմանը ընդունելու, մինչ ժողովականները, պահ մը իրենց աշխատութիւնը ընդհատած, զանազան ենթադրութիւններ կ'ընէին այս այցելութեան առթիւ:

Կէս ժամ յետոյ Պատրիարքը վերադարձաւ ատենապետին հետ: Երկուքին դէմքն ալ մռայլ էր:

— Արդեօք ծանրակշիռ տեղեկութի՞ւն մը հաղորդեց թարգմանը, — հարցուց ժողովական մը՝ խօսքը ատենապետին ուղղելով:

— Ծանրակշիռ՝ ո՛չ, բայց բաւական տարօրինակ... արդէն հաղորդածը տեղեկութիւն մը չէր, այլ եկած էր դեսպանին կողմէ թելադրութիւն մը ընել մեզի:

— Եթէ օգտակար թելադրութիւն մըն է, շնորհակալ ենք:

— Այդ թելադրութիւնը ռուս դեսպանէն առաջ արդէն մեզի ըրած էր Ձօհրապ էֆէնտի, երբ գիշերային գումարում մը ունեցանք Պետրոս էֆէնտի Հալաճեանի տունը, — պատասխանեց Վարչութեան ատենապետը:

— Այսինքն բարենորոգումներու խնդրին կարգադրութեան համար ուղղակի համաձայնութիւն մը գոյացնել թուրք կառավարութեա՞ն հետ:

– Այո՛:

– Եւ ասոր համար ի՞նչ պատճառներ առաջ կը բերէ:

– Ճիշդ այն պատճառները, զորս Զօհրայ էֆէնտի առաջ բերաւ իր տեսութիւնը պաշտպանելու համար:

– Ուրեմն Զօհրայ էֆէնտի ռուսական դեսպանատունէն ներշնչուած այդ կարծիքը յայտնեց մեզի:

Վարչութեան ատենապետը չպատասխանեց և գլխու անորոշ շարժում մը ըրաւ, յետոյ զանգակը հնչեցուց, և երբ բարապանը ներս եկաւ, ըսաւ.

– Հարստահարելոց յանձնաժողովը այսօր գումարում ունի՞:

– Այո՛, – պատասխանեց բարապանը, – այս միջոցիս արդէն ժողով կ'ընեն կոր:

– Ըսէ իրենց, որ երբ ժողովը լմնայ՝ բարեհաճին հոս գալ:

– Ինչո՞ւ համար, – հարցուց ժողովական մը:

– Որպէսզի իրենց ալ հաղորդենք դեսպանական զեկոյցը, առանց անոնց կարծիքը առնելու բան մը չենք կրնար ընել:

Հարստահարելոցի անդամները քիչ յետոյ եկան, և Վարչութեան ատենապետը հաղորդեց անոնց ռուսական դեսպանատան թարգմանին այցելութիւնը և անոր հաղորդածները: Այս յայտարարութիւնը մեծ յուզում պատճառեց ամենուն:

Մանաւանդ Շահրիկեան չափազանց յուզուած կը թուէր:

– Սրա մէջ ես պարզապէս դաւաճանութիւն եմ տեսնում, – գոչեց:

Այս խօսքերը փոթորիկ մը առաջ բերին ժողովին մէջ:

– Ի՞նչ ըսել կ'ուզէք...

– Բացատրեցէք ձեր միտքը:

– Ո՞վ է դաւաճանը...

– Այդ խօսքը չենք ընդունիր:

– Ապացոյց կը պահանջենք:

Այսպէս կը պոռային ամէն կողմէ:

Շահրիկեան պաղարիւնով կը դիտէր այդ իրարանցումը. երբ ժողովը հանդարտեցաւ, ըսաւ.

– Մի՛ շտապէք, սպասէք, հիմա կը բացատրեմ իմ միտքը:

– Խօսեցէ՛ք, ուրեմն:

Եւ Շահրիկեան իր ցուցամատը օդին մէջ ճօճելով՝ սկսաւ պարզել իր տեսութիւնը:

Ըսաւ, թէ ինչ որ այժմ ըսած էր ռուսական դեսպանատան թարգմանը, նոյնը արդէն կրկնած էր Զօհրայ շաբաթ մը առաջ. ինչպէ՞ս կ'ըլլայ, որ Զօհրայ և ռուսական դեսպանատունը միևնոյն տեսակէտը կը պաշտպանէին: Պարզ գուգադիպութի՞ւն մըն էր այս, թէ՞ ուրիշ թաքուն պատճառ մը կար... Շահրիկեան ըսաւ, թէ իր կարծիքով պարզ գուգադիպութիւն մը չէր այս, այլ Զօհրայի և ռուսական դեսպանատան միջև եղած կարգադրութիւն մը կամ համաձայնութիւն մը: Խնդիրը այն է, թէ Զօհրայ ներշնչուած է ռուսական դեսպանատունէն, թէ՞ ինք ազդած է անոր վրայ: Ահա այս մասին ալ Շահրիկեան այն կարծիքը յայտնեց, թէ Զօհրայի դիմումներուն վրայ ռուսական դեսպանատունը իր թարգմանը ղրկած է Պատրիարքին մօտ:

Շահրիկեանի այս յայտարարութիւնը խոր տպաւորութիւն յառաջ բերաւ ժողովականներուն վրայ:

Արդարև տարօրինակ գուգադիպութիւն մը կար Զօհրայի և ռուսական դեսպանատան առաջարկներուն միջև:

– Ձեր ամբաստանութիւնը պատրա՞ստ էք կրկնելու Զօհրայ էֆէնտիի երեսին, – հարցուց ժողովական մը՝ խօսքը Շահրիկեանին ուղղելով:

– Բնականաբար, – գոչեց այս վերջինը:

Նոյն միջոցին դուռը բացուեցաւ, և ներս մտաւ Զօհրայ:

– Չափազանց զբաղուած էի, չկրցայ ժամանակին գալ այսօրուան նիստին, – ըսաւ, – այսուհանդերձ ուզեցի վայրկեան մը հանդիպել՝ խորհելով, որ թերևս պէտք կ'ունենաք ինծի:

– Շատ աղէկ ըրիք գալով, – ըսաւ Գարայեան, – խիստ կարևոր խնդրի մը վրայ կը խորհրդակցէիք այս միջոցիս:

– Ի՞նչ խնդիր, – հարցուց Զօհրայ հետաքրքիր:

– Հիմա կը բացատրենք...

Եւ Ստեփան Գարայեան մանրամասնօրէն պատմեց ռուսական դեսպանատան թարգմանին այցելութիւնը:

– Ես արդէն առաջուրն է ձեզի նոյն խորհուրդը տուի, – ըսաւ Զօհրայ:

– Ճիշդ այդ իրողութիւնն է մեզ զարմացնում, – պատասխանեց Շահրիկեան:

– Ի՞նչ ըսել կ'ուզէք, – գոչեց Զօհրայ:

– Ասել կ'ուզեմ, թէ զարմանալի է, որ դուք և ոուս դեսպա- նատունը միևնոյն ժամանակ միևնոյն հայեցակէտը ունենաք այս խնդրի մասին:

– Եւ ի՞նչ կը հետեցնէք ասկէ:

– Ասկէ կարելի է հետեցնել, թէ կա՛մ դուք ոուս դեսպանա- տան ազդեցութիւնը կը կրէք և կա՛մ ոուս դեսպանատունը ձեր ազդեցութիւնը կը կրէ:

Զօհրապ ուսերը թօթուեց արհամարհոտ ձևով մը:

– Եղածը պարզ գուգադիպութիւն մըն է պարզապէս,– ը- սաւ,– ես այդ խորհուրդը տուի առանց արտաքին որևէ ազդե- ցութեան, միմիայն իմ տեսածներէս ու լսածներէս ազդուած... կարծեմ իմ անկեղծութեանս մասին ո՛չ ոք կրնայ կասկածիլ... ինչո՞ւ կ'ուզէք, որ իմ և ոուս դեսպանատան միջև որևէ թաքուն համաձայնութիւն մը ըլլայ, ասանկ բան մը մտածել պարզապէս ապսուրտ է...

– Զօհրա՛պ էֆէնտի, մի՛ յուզուիք,– ըսաւ Ստեփան Գա- րայեան,– կարծեմ ձեր անձին դէմ որևէ վիրաւորիչ ակնարկու- թիւն մը չեղաւ:

– Ասկէ զատ,– շարունակեց Զօհրապ,– իմ յայտնած կարծի- քիս կողմնակից գտնուեցան նաև Պետրոս Հալաճեան և նոյնիսկ դուք՝ Գարայեան էֆէնտի...

– Այսինքն լուրջ առաջարկ մըն է, որ կ'արժէր նկատողու- թեան առնել:

– Դա անկարելի է,– գոչեց Շահրիկեան,– դա երբեք կարե- լի չէ նկատել իբրև լուրջ առաջարկ, դա պարզապէս մի մեքե- նայութիւն է, որ կ'ուզեն լարել ամբողջ գործը վիժեցնելու հա- մար...

Այս խօսքերը կրկին միտքերը յուզեցին:

Զօհրապ մանաւանդ չափազանց բարկացած կը թուէր:

– Եւ ե՞ս եմ, որ այդ մեքենայութիւնները կ'ընեմ,– գոչեց:

– Ես այդպէս բան չասացի,– պատասխանեց Շահրիկեան:

– Զըսի՛ր, բայց լուեիայն այնպէս հասկցնել ուզեցիր:

– Ես երբեք ծածուկ ակնարկութիւններ չեմ անի, ես կ'ասեմ ինչ որ ունիմ ասելիք, դուք պարզապէս գործիք էք եղել էնոնց ձեռք...

– Գործի՞ք... բայց այդ աւելի ծանր է...

– Թերևս անգիտակից, թերևս միամիտ գործիք, բայց վերջա- պէս դուք կը կրէք նրանց ազդեցութիւնը:

Երկու ժողովականներու միջև կռիւր բաւական բուռն եղաւ և աւելի ծանր հանգամանք մը պիտի ստանար, եթէ միւս պաշ- տօնակիցները չմիջամտէին և չաշխատէին խնդիրը անոյշ տեղը կապելու:

– Քանի որ այսպիսի կասկածանքներու տեղի կուտայ կոր իմ գործունէութիւնս,– յայտարարեց Զօհրապ,– ես կը հրաժա- րիմ ու ա՛լ չեմ խառնուիր այս գործերուն:

– Երբեք չենք կրնար ընդունիլ քու հրաժարականդ,– ըսաւ Ներսէս Օհանեան,– դուն պիտի մնաս հոս ու մեզի հետ աշխա- տիս, եթէ քաշուիս՝ այն ատեն ինքզինքդ դատապարտած կ'ըլ- լաս:

– Բայց չեմ կրնար հանդուրժել, որ դեսպանատուններու մօտ իմ կատարած դիմումներս այսպէս խժբժանքներու տեղի տան:

– Ատոր ալ ճար մը կրնանք խորհիլ:

– Ինչպէ՞ս...

– Ասկէ ետքը փոխանակ առանձին երթալու դեսպանատուն, միշտ մեր ընկերներէն մէկը միւսին կ'ընկերանայ...

– Ինչու չէ... ես անպատճառ առանձին գործելու փափաք չունիմ:

– Մանաւանդ, որ եթէ երկու հոգի ըլլաք՝ պատասխանա- տուութենէ բոլորովին զերծ կը մնաս...

– Անշուշտ...

– Եւ զուր տեղը քննադատութիւններու չես ենթարկուիր:

– Շատ ճիշդ է:

– Դուք ի՞նչ կ'ըսէք այս կարգադրութեան,– հարցուց Օհա- նեան՝ միւս ժողովականներուն դառնալով:

– Այդպէս շատ լաւ կ'ըլլայ,– ըսին մէկ քանիներ:

Ու այս կերպով վերջացաւ խնդիրը:

Արդարև այդ օրէն սկսեալ Զօհրապ միշտ ընկերակիցով մը կ'այցելէր դեսպանատունները, երբ հարկ ըլլար որևէ խնդրի առթիւ բանակցութիւն կատարել:

Իսկ գալով Պետրոս Հալաճեանի բնակարանին մէջ տեղի ունեցած գիշերային Հաւաքումին՝ անիկա որևէ արդիւնք չէր ունեցած:

Եւ սակայն իթթիհատականները կը շարունակէին մութին մէջ գործել:

ԳԼՈՒԽ ԺԲ ՆՈՒՐԻ ՕՍՄԱՆԻՔԻ ԳԼԻԻՊԸ

Յունիսի տաք ու հեղձուցիչ իրիկուն մըն էր: Պաշտօնատունները կը սկսէին պարպուիլ, ու ամէն ոք կը փութար դէպի թռամվայները, կայարանը կամ կամուրջ՝ իր բնակարանը երթալու համար:

Թուրք պաշտօնեաները զուարթ տրամադրութեան ներքեւ էին, որովհետեւ հետեւեալ օր ուրբաթ էր և ամբողջ օր մը անձրնդիւր պիտի հանգչէին իրենց բնակարաններուն մէջ՝ ուտելով, խմելով և ծխելով. թողո՛ւնք ուրիշ հեշտութիւններն ալ:

Եւ սակայն եթէ պաշտօնէութեան մեծամասնութիւնը կը փութար ժամ առաջ երթալ իր տունը, կար նաև փոքրամասնութիւն մը, որ տարբեր մտահոգութեամբ մը տոգորուած կը թուէր: Այդ փոքրամասնութիւնը տենդայոյզ քայլերով կը դիմէր դէպի Նուրի Օսմանիէի կողմը, ուր կը գտնուէր իթթիհատական կեդրոնատեղին:

Ժամը 5ին միջոցները Պապը Ալիի Սէտարէթի դրան կողմը եկաւ կեցաւ բաց կառք մը, և քիչ յետոյ տեսնուեցաւ գիրուկ, յաղթանդամ, թաւ սև պեխերով մարդ մը, որ հոնկէ դուրս կ'ելլէր և դէպի կառքը կուգար, իր քովէն կը քալէր իրմէ քիչ մը նուազ գէր և քիչ մը աւելի վայելչակազմ մէկը:

Այս երկու անձերը երբ կառքին մօտեցան՝ պահ մը կանգ առին:

— Ուրեմն, Պէտրի՛, չե՞ս ուզեր միասին գալ, — հարցուց թաւ սև պեխերով անձը իր ընկերոջ:

— Ո՛չ, պէ՛յս, շատ կարևոր գործեր ունիմ, — պատասխանեց միւսը:

— Բայց այս իրիկուն մեր գումարումն ալ շատ կարևոր է:

— Եթէ անպատճառ պէտք ունենաք ինծի, կրնաք անմիջապէս թէլէֆօն ընել... երկու ձեռքս կրակն ալ ըլլան նէ՛ կը ձգեմ, կուգամ:

— Աղէկ, ուրեմն երթաւ բարով:

Եւ գէր մարդը բազմեցաւ կառքին մէջ ու սիկառէթ մը հանելով վառեց, մինչ կառքը վայրկեան մը ետքը կանգ կ'առնէր իթթիհատի կեդրոնատեղիին դրան առջև:

Բակը գտնուողները տեսնելով նորեկը, որ կառքէն վար կ'իջնար, յարգալից բարևի կեցան:

Բայց ինք մտերմական ձևով մը բարևեց ամէնքը, նոյնիսկ պահ մը կանգ առաւ և մէյմէկ խօսք ուղղեց ամենուն.

— Շէրի՛ֆ պէյ, ինչպէ՞ս էք, ձեր եղբորմէն լուր առի՞ք:

— Արի՛ֆ պէյ, կը յուսամ, որ ձեր առողջութիւնը լաւ է...

Ու այսպէս ամենուն մէյմէկ սիրալիւր խօսք ուղղելով՝ սանդուխէն վեր ելաւ:

Վերի ընդարձակ սրահները լեցուած էին ծանօթ և անծանօթ իթթիհատականներով, որոնք ցած կամ բարձր ձայնով կը վիճէին իրարու հետ:

Յանկարծ այդ բազմութեան մէջ երևցաւ Հայ փաստաբան մը, ազգային երեսփոխան և Վարչութեան անդամ: Իր մուտքը համակրական ողջոյններով ընդունուեցաւ ամէն կողմէ:

— Պուլուրունուզ, էֆէնտիմ, պուլուրունուզ:

Փաստաբանը աջ ու ձախ բարևներ սփռելով՝ անցաւ բազմութեան մէջէն և ուղղուեցաւ խորի սրահը՝ աչքը չորս կողմ ժուռ ածելով: Յայտնի կ'երևար, որ մէկը կը փնտռէր:

Նոյն միջոցին Հայ բժիշկ մըն ալ ներս մտաւ, նոյնպէս ազգային երեսփոխան:

Այս վերջինը սկսաւ խօսակցիլ մէկ քանի թուրք երիտասարդներու հետ շատ մտերմական շեշտով մը:

Երիտասարդ բժիշկը իր բարեկամներուն հետ խօսելով հանդերձ աչքը դէպի սանդուխին կողմ ուղղած էր՝ կարծես մէկու մը գալուստին սպասելով:

Փաստաբանը վերադարձաւ այն սրահը, ուր կը գտնուէր բժիշկը: Այս վերջինը զայն նշմարելով՝ զարմանքի և միևնոյն ա-

տեն տհաճութեան շարժում մը ունեցաւ, այսուհանդերձ տեսնե-
լով, որ ան զինքը կը բարեւէ, պէտք զգաց քովը մօտենալու:

– Ի՞նչ է այս, – ըսաւ խնդալով, – դո՞ւն ալ իթթիհատական
եղար...

– Եթէ ըլլամ իսկ՝ կարծեմ յանցանք մը չէ, – պատասխանեց
փաստաբանը, – բայց եթէ ամէն հոս եկող պէտք է, որ անպատ-
ճառ իթթիհատական ըլլայ, այն ատեն ըսել է, որ դուն ալ ա-
նոնցմէ ես:

– Ես եկայ հիւանդի մասին տեղեկութիւն հարցնելու հիւան-
դին տէրջմէն, – պատասխանեց բժիշկը:

– Ես ալ դատական խնդրի մը համար յաճախորդ մը պիտի
տեսնէի՝ անոր համար եկայ, – ըսաւ փաստաբանը:

Հազիւ թէ երկուստեք այս բացատրութիւնը տրուած էր, երբ
յանկարծ ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր թուրքերէն լեզուով.

– Վա՛յ, մաշալլահ, էֆէնտիմ, ինչպէ՞ս էք, աղէ՞կ էք, հան-
գի՞ստ էք, այս ի՞նչ բախտ, ի՞նչ երջանկութիւն ձեզ այսպէս
հանդիպելը, իշալլահ ձեր թանկագին առողջութիւնները լա՞ւ
են:

Այս խօսքերուն կ'ընկերանային կարգ մը թէմէննահներ:

Երկու խօսակիցները գլուխին դարձուցին և իրենց առջև
տեսան Աստիկ Մարկոսեանը:

– Աղէկ, շնորհակալ ենք, դուք ինչպէ՞ս էք, – ըսաւ փաստա-
բանը չոր ձայնով մը:

– Մեր որպիսութիւնը միշտ միևնոյնն է, կ'աշխատինք, կը
գրենք:

– Հիմա ո՞ր թերթին կ'աշխատակցիս:

– Մասնաւոր թերթ մը չունիմ, մէկ քանի թերթերու միան-
գամայն կ'աշխատիմ... աս աւելի աղէկ է, մէկ թերթի կապուիլը
լաւ չէ:

Յետոյ խօսքը բժիշկին ուղղելով՝

– Է՛յ, տօքթո՞ր էֆէնտի, իշալլահ աղէկ և հանգիստ էք. տի-
կինը, տղաքը, ամէնքն ալ առո՞ղջ են...

– Փառք Աստուծոյ, – պատասխանեց բժիշկը:

– Օր մը, եթէ ձեր գիւղը գամ, այցելութիւն մը կ'ուզեմ տալ
ձեզի:

– Հրամայեցէ՛ք, շատ գոհ կ'ըլլանք:

– Շնորհակալ եմ:

Աստիկ յանկարծ խօսքը հայերէնի դարձուց և ցած ձայնով
ըսաւ.

– Ասոնք նորէն շատ բռնկած են այս օրերս:

– Ինչո՞ւ համար, – հարցուց բժիշկը անտարբեր ձևով մը:

– Բարենորոգումներու խնդրին համար... Եւրոպացիները
շատ ճնշում կը բանեցնեն կոր...

– Կը կարծե՞ս:

– Մօտէն տեղեկութիւն ունիմ... դեսպանատուններէն, և այս
իրիկուն ալ գլխաւորաբար անոր համար գումարուած են հոս:

– Ընդհակառակը, ես լսեցի, որ Եւրոպական պետութիւննե-
րը վերջերս շատ թոյլ ընթացք մը բռնել սկսեց են...

– Ձէ՛, էֆէնտի՛մ, չէ՛, բոլորովին սխալ է, Անգլիոյ դեսպանը
նոր նօթա մը տուած է, և Հայկական բարենորոգումներու ան-
միջական գործադրութիւնը կը պահանջէ կոր... լուր չունի՞ք
ասկէ:

– Ես բան մը չեմ գիտեր, – պատասխանեց բժիշկը:

– Իսկ դո՞ւք, դուք գիտնալու էք, – ըսաւ Աստիկ՝ խօսքը
փաստաբանին ուղղելով:

– Ես ալ այդպիսի բան մը չիմացայ, – պատասխանեց այս
վերջինը:

Այն միջոցին ներս մտաւ Պետրոս Հալաճեան, որու ընդառաջ
գացին քանի մը թուրք պէյեր:

Աստիկ ևս պահ մը թողուց իր երկու խօսակիցները և գնաց
ողջունելու նորեկը:

– Ի՞նչ է կարծիքդ այս մարդուն վրայ, – հարցուց բժիշկը,
երբ առանձին մնացին:

– Աստիկ Մարկոսեանի՞ վրայ:

– Այո՛...

– Շիտակը՝ շատ լաւ կարծիք մը չունիմ. բախտախնդիր ա-
ռաւփախաւին մէկն է:

– Ատկէ ուրի՛շ... ատ ամէն մարդ գիտէ:

– Ուրիշ ի՞նչ ըլլայ:

– Այսինքն կասկածելի մէկը չէ՞:

— Չեմ կարծեր,— պատասխանեց փաստաբանը,— գոնէ ես մինչև հիմա այդպիսի բան մը չեմ լսած իր մասին. թէև բաւական մօտէն յարաբերութիւն ունեցած եմ հետը... տօլանտըր-ճիութիւնները շատ լսած եմ, բայց ուրիշ բան մը չեմ գիտեր:

— Իր ընթացքը քիչ մը տարօրինակ է. ամէն տեղ կը մտնէ, կ'ելլայ,— դիտել տուաւ բժիշկը:

— Ատիկա իր պաշտօնին հետեանքն է. թուրք թերթերու լրագրեր է, ինչպէս նաև օտար թղթակիցներու ալ լուր կը հաղորդէ, հետեաբար պէտք է, որ ամէն տեղ երթայ:

— Իրաւունք ունիս,— հաւանեցաւ բժիշկը:

Քիչ յետոյ Աստիկ վերադարձաւ կրկին երկու հայերուն քով:

— Խեղճերը շատ իրար անցեր են,— փսփսաց խորհրդաւոր կերպով մը:

— Ինչո՞ւ համար,— հարցուց բժիշկը:

— Կ'երևայ, որ Անգլիա զօրաւոր ճնշում մը ըրած է և պահանջած է, որ մինչև տասը օր հայկական նահանգներու բարենորոգումներու ծրագիրը անփոփոխ ընդունի թուրք կառավարութիւնը, հակառակ պարագային...

— Ի՞նչ պիտի ըլլայ հակառակ պարագային,— հարցուց փաստաբանը՝ տեսնելով, որ Աստիկ կը վարանէր իր խօսքը առաջ տանելու և կամ դիտմամբ այնպէս կ'ընէր իր խօսակիցներուն հետաքրքրութիւնը աւելի գրգռելու համար:

— Հակառակ պարագային տարբեր միջոցներու պիտի դիմեն եղեր:

— Այդ տեսակ խօսքեր շատ լսեցինք,— ըսաւ բժիշկը սկեպտիկ ժպիտով մը:

— Այս անգամ խնդիրը տարբեր գոյն առած է,— շարունակեց Աստիկ,— խնդիրը միմիայն թուրքիոյ վրայ չէ, ո՛չ ալ Հայկական բարենորոգումներու վրայ... խնդիրը ազդեցութեան վրայ է. Անգլիա կ'ուզէ իր ոյժը ցոյց տալ Գերմանիոյ և անոր հասկցնել. թէ պիտի չենք, որ Գերմանիա իր ուզածին պէս վարէ թուրքիան... Հոս է ահա՛ խնդիրը: Ցաւալին այն է, որ Ռուսիա վերջին վայրկեանին թոյլ ընթացք մը ցոյց կուտայ... նոյնիսկ կարծես թուրքիոյ կողմը կը հակի՝ ուժ տալով գերմանական քաղաքականութեան... դուք ալ հարկաւ լուր ունիք ասկէ:

— Ես բան մը չեմ գիտեր,— յայտարարեց բժիշկը:

— Էֆէնտին գիտնալու է,— ըսաւ Աստիկ՝ փաստաբանին դառնալով:

— Շիտակը՝ ես ալ այդ մասին բան մը չեմ իմացած:

— Հիմա Ռուսիա կ'աշխատի, որ հայերուն և թուրքերուն մէջ ուղղակի բանակցութիւն կատարուի և համաձայնութիւն մը գոյանայ... ինչ որ շատ ալ գէշ գաղափար մը չէ... կարծեմ այս մասին նոյնիսկ ոռու դեսպանատունէն թելադրութիւններ եղած են Պատրիարքին:

— Չարմանալի բան, Աստիկ էֆէնտի,— ըսաւ փաստաբանը,— դուք անանկ տեղեկութիւններ ունիք, որ ես չեմ գիտեր, հակառակ որ Վարչութեան անդամ եմ...

— Կ'երևայ, որ Պատրիարքը չէ ուզած այս այցելութիւնը ձեզի յայտնել:

— Անկարելի է, որ այդպիսի կարևոր բան մը մենէ ծածուկ պահէ,— ըսաւ փաստաբանը:— Կ'երևայ, որ ձեր լսած լուրը սխալ է:

— Չէ՛, շատ աղէկ տեղէն գիտեմ,— պատասխանեց Աստիկ նուրբ ժպիտով մը,— բայց խնդիրը այն չէ... ես թէև ազգային գործերով չեմ զբաղիր, ո՛չ ալ կը հետաքրքրուիմ, բայց այս խնդրին մէջ կարծեմ թէ գործը զոյգ բռնելը աւելի խելացութիւն է: Միայն Անգլիոյ ու Ֆրանսայի ապաւինել և թուրքերու հանդէպ թշնամական ընթացք մը բռնելը ո՛չ խելացութիւն է, ո՛չ ալ խոհեմութիւն... Հիմա, որ այս մարդիկը նեղը մնացած են և շատ տրամադիր են հայերուն գոհացում տալու, ճիշդ ատենն է իրենց մօտենալու... շատ բան կրնաք ձեռք ձգել:

— Մնա՛ք բարով, ես չոգեկառքին պիտի հասնիմ,— ըսաւ բժիշկը ժամացոյցը նայելով,— հազիւ քառօրը մը ժամանակ ունիմ:

Եւ հեռացաւ:

Աստիկ շարունակեց իր տեսութիւնը պարզել, մինչև որ փաստաբանն ալ, կարևոր գործ մը պատրուակելով, հեռացաւ քովէն:

Աստիկ իր հայ խօսակիցները կորսնցնելէ ետքը վերադարձաւ թուրքերուն մօտ, որոնց հետ սկսաւ տեսակցել խիստ մտերմօրէն:

Արդարև հոն հաւաքուող իթթիհատականները այդ օրը շատ մտահոգ երևոյթ մը ունէին, զանազան խումբերու բաժնուած, ցած ձայնով կը վիճէին օրուան քաղաքական կացութեան մասին:

Իրաւամբ, եւրոպական մէկ քանի պետութիւններ զգացուցած էին, որ եթէ անմիջապէս Հայկական բարենորոգումներու չձեռնարկուէր, կրնար զինեալ միջամտութիւն մը յառաջ գալ: Ի՞նչ կերպով պիտի ըլլար այդ միջամտութիւնը: Այս բանն էր, որ ամենէն աւելի կը զբաղեցնէր զիրենք:

— Ըստ իս, Անգլիոյ ըրածը պարզ պլըֆ մըն է,— կ'ըսէր Չոլ իթթիհատական մը իր շուրջը հաւաքուած անձերուն,— Անգլիա կը սպառնայ, բայց բան մըն ալ չընենք... չէ՞ք յիշեր Ապտիւլ Համիտի ժամանակն ալ, Սասունի դէպքերէն ետքը, այդ տեսակ սպառնալիքներ եղան փարլամէնթի մէջ, իսկ երբ գործելու վայրկեանը հասաւ, ելան յայտարարեցին, թէ իրենց նաւատորմիդը չեն կրնար մինչև Արարատ տանիլ...

— Այն ատեն տարբեր էր,— դիտել տուաւ ուրիշ մը,— դեռ Պալքանեան պատերազմը չէր եղած, Տրիպոլիս, Ռուսելի, Արշիպեղազոս մեր ձեռքն էին, Թուրքիոյ վրայ ամէնքը աչք ունէին, ընդդիմամարտ շահեր կային, և դիւրին չէր զինուորական գործողութիւններու ձեռնարկել առանց ընդհանուր խառնաշփոթութիւն մը առաջ բերելու, մինչդեռ հիմա այնպէս չէ... ձեռքերնիս շատ քիչ բան մնացած է, և իրենց մէջ Համաձայնութիւնը աւելի դիւրին կը գոյանայ... ես Համոզուած եմ, որ այս անգամ իրաւցընէ ճշողական միջոցներու պիտի դիմեն՝ եթէ չկըրնանք այս խնդրին մէջէն ելլելու ճար մը գտնել:

— Ուրեմն հիմա անգլիական նաւատորմիդը մինչև Արարատ կրնա՞յ երթալ,— հարցուց մէկը ծաղրական քմծիծաղով մը:

— Արարատ երթալու պէտք չունի:

— Տարտանէ՞ր պիտի բռնաբարէ և Պոլի՞ս պիտի մտնէ:

— Ատոր ալ պէտք չի կար:

— Ուրեմն ի՞նչ բանէ կը վախնաս:

— Պարզապէս ծովային պաշարուած մը... Եթէ այսօր Անգլիա և Ֆրանսա Համաձայնի և Տարտանէլի նեղուցը փակեն ու միւս կողմէ սուրիական ծովեզերքը պաշարեն, ի՞նչ կ'ըլլայ մեր վիճա-

կը... առանց մարդ մը կորսնցնելու, առանց թնդանօթ մը նետելու կրնան մեր խերը անիծել:

— Բայց Գերմանիա՞...

— Ի՞նչ վստահութիւն ունիս, որ Գերմանիա մեզի պիտի պաշտպանէ, դաշնագրութիւն մը ունի՞նք միասին: Մեր շահը կը պահանջէ, որ այս բարենորոգումներու հարցը կարգադրենք անմիջապէս և տեղի չի տանք այդ տեսակ ճնշումի մը, որ պարզապէս երևան պիտի հանէ մեր տկարութիւնը:

— Բայց եթէ բարենորոգումները գործադրենք այն կերպով, ինչպէս կը պահանջուի, գիտցէ՛ք, որ տասը տարին չանցած այս երկրին բո՛ւն տէրերը հայերը պիտի ըլլան, և մենք անոնց ստրուկները...

— Բայց չգործադրելով դարձեալ փորձանքէն պիտի չազատինք, քանի որ մեր վրայ պիտի հրաւիրենք եւրոպական միջամտութիւն մը:

— Մեր ճարպիկութիւնը պիտի ըլլայ ահա՛ ո՛չ Հայկական բարենորոգութիւնները գործադրել և ո՛չ ալ եւրոպական միջամտութեան տեղի տալ...

— Ատիկա ընելու միջոցը պէտք է գտնել:

— Միջոցը պարզապէս խնդիրը ձգձգելն է, մինչև որ ուրիշ աւելի կարևոր խնդիր մը ծագի ու բարենորոգումներու հարցը մէկ կողմ թողուի... այս միջոցը շատ անգամներ յաջողած է և կրնայ այս անգամ ալ յաջողիլ... ահա՛ ասոր համար պէտք է, որ մենք նոր բանակցութեան մը սկսինք հայերուն հետ... եթէ որևէ օգուտ ալ չունենայ, գոնէ ժամանակ կը շահինք...

Այն, որ այս խօսքերը կ'արտասանէր, երկայնահասակ, չոր, սև պեխերով ու կորովի դիմագիծներով թուրք երիտասարդ մըն էր, իթթիհատի վարիչ ուժերէն մէկը:

Իր տեսութիւնը առաջ տարաւ՝ աւելի մանրամասնութիւններու մէջ մտնելով: Ամէնքը ուշադիր մտիկ կ'ընէին իրեն, և շատեր Համամտութիւն ցոյց կուտային իր յայտնած գաղափարներուն:

— Բայց,— առարկեց մէջերնէն մէկը,— դժբախտաբար հայերը կասկածելի վերաբերում մը ցոյց կուտան կոր մեզի հանդէպ և բնաւ մեզի մօտենալու փափաք ցոյց չեն տար կոր:

– Դեռ այս մասին մեր կողմէն վճռական քայլ մը չառինք, ա-
նոր Համար,– պատասխանեց երիտասարդ իթթիհատականը,–
այսուհանդերձ ես գիտեմ, որ հայերուն մէջ կան մէկ քանի ծա-
նօթ անձեր, որոնք նպաստաւոր են այսպիսի մերձեցումի մը:

– Թալէաթ պէյին կարծիքը ի՞նչ է այս մասին:

– Անիկա բոլորովին Համամիտ է ասոր և նոյնիսկ ինքն է, որ
այս խորհուրդը յղացաւ:

– Դժբախտաբար տեղեկութիւն չունինք հայերուն ներքին
գործունէութեան մասին, չենք գիտեր, թէ ի՞նչ կ'ընեն, ի՞նչ կը
խորհին, ի՞նչ է իրենց թաքուն նպատակները:

Այս խօսքերը լսելով՝ երիտասարդ իթթիհատականը խորհրդ-
դաւոր կերպով ժպտեցաւ:

– Ինչո՞ւ խնդացիր,– հարցուց խօսակիցը:

– Խնդացի, որովհետեւ կը տեսնեմ, որ շատ միամիտ ես,–
պատասխանեց երիտասարդը:

– Ինչո՞ւ Համար:

– Որովհետեւ հայերուն մէջ ինչ որ կ'անցնի կը դառնայ, տեղն
ի տեղօք և ժամը ժամին կ'իմանանք, ասոր վստահ եղիր:

– Իրա՞ւ կ'ըսես,– գոչեց միւսը թերահաւատ դէմքով մը:

– Իրենց բոլոր գաղտնի թղթակցութիւնները Թալէաթ պէյի
քովն են:

Նոյն միջոցին նոր դէմք մը երևցաւ սրահին մէջ:

Գամիկ Սիրունեանն էր:

– Ներեցէ՛ք ինձի,– ըսաւ երիտասարդ իթթիհատականը,–
այս նոր եկող էֆէնտիին հետ քիչ մը խօսելիք ունիմ:

Եւ գնաց դիմաւորել նորեկը, որուն հետ անցան միւս սրահը:

Այդ սրահը կը գտնուէր, 8-10 հոգիէ շրջապատուած, այն
գէր մարդը, որուն Պապը Ալիէն կառքով գալը պատմեցինք այս
գլխուն սկիզբը, և որ նոյն ինքն՝ ներքին գործերու նախարար
Թալէաթ պէյն էր:

Թալէաթ նշմարելուն պէս Գամիկը՝ նշան ըրաւ, որ մօտենայ:

Գամիկ ակնածանքով յառաջացաւ և խոնարհաբար բարեկեց
նախարարը:

– Քեզի հետ կ'ուզեմ քիչ մը առանձին տեսնուիլ,– ըսաւ
Թալէաթ խօսքը Գամիկի ուղղելով:

– Ձեր վսեմութեան տրամադրութեան ներքեւ եմ,– պատաս-
խանեց այս վերջինը:

– Հետս եկո՛ւր...

Եւ բազմութիւնը ճեղքելով՝ մտաւ փոքրիկ խուց մը, ուր ո՛չ
ոք կը գտնուէր: Գամիկ խոնարհ կերպարանքով մը հետեկեցաւ
իրեն:

Երբ խուցը մտան և դուռը գոցեցին՝ Թալէաթ, առանց որեւէ
յառաջաբանի, ըսաւ.

– Աս ձեր Պատրիարքը շա՛տ վտանգաւոր խաղ մը կը խաղայ
կոր...

– Ի՞նչ առթիւ, վսեմափա՛յլ տէր,– հարցուց Պատրիարքա-
րանի պաշտօնեան շփոթած կերպարանքով մը:

– Այս բարենորոգումներու խնդիրին առթիւ,– գոչեց Թա-
լէաթ զրգռուած շեշտով մը:

– Բայց կարծեմ Պատրիարքարանը այս խնդրին մէջ որեւէ
դեր մը չունի... գործը մենէ ելած է...

– Ինձի նայէ՛,– ըսաւ նախարարը կոշտ ձևով մը,– իրար
չխաբենք, և մանաւանդ, զիս աղու կամ ապուշի տեղ մի՛ դնէք...

– Քաւ լիցի, պէ՛յ էֆէնտի:

– Ես գիտեմ, ինչ որ կ'ըսեմ... Պատրիարքը եթէ բարենորո-
գում կը պահանջէ, ինչո՞ւ չի գար, տէրտը մեզի չի Հասկցնե՞ր
ու կ'երթայ դեսպանատուններու դուռը ափ առնել... մենք իրեն
Հասկցուցինք, որ եթէ ըսելիք մը ունի՝ թո՛ղ շիփ-շիտակ մեզի
դիմէ...

– Բայց, վսեմափա՛յլ տէր, պաշտօնապէս այդպիսի Հրաւէր
մը չստացանք:

– Ամէն բան պաշտօնապէ՞ս պէտք է ըլլայ, պէտք եղածին
չափ Հասկցուցինք ձեզի... կը սպասէիք, որ գայինք ձեր ոտքե՞-
րը իյնայինք...

– Ամա՛ն, պէ՛յ էֆէնտի, ի՛նչ խօսքեր կ'ընէք,– կմկմաց Գա-
միկ:

– Ձեր մէջը փորձառու, խելացի մարդիկ կան, ինչո՞ւ անոնց
խրատին ու խորհուրդին չէք հետևիր...

– Գիտէք, որ ես Պատրիարքարանի մէջ պարզ պաշտօնեայ
մըն եմ, իմ ձեռքս բան մը չի կայ... գալով անձնական զգացում-

ներուս, արդէն ծանօթ են ձեր վսեմութեան, միայն թէ, կը կրկընեմ, ես պարզ միջնորդ մըն եմ միայն, առանց որեւէ հեղինակութեան...

– Գիտեմ, գիտեմ այդպէս ըլլալը, – ընդմիջեց Թալէաթ, – ես իմ խօսքս քեզի չեմ ուղղեր, միայն թէ կը փափաքեմ, որ բուն կացութիւնը բացատրես Պատրիարքին և իր խորհրդատուներուն, որպէսզի սխալ ճամբաներու չհետևին...

– Ձեր վսեմութիւնը եթէ որեւէ զեկոյց մը ունի Պատրիարքին ուղղուած՝ կրնաք վստահ ըլլալ, որ բառ առ բառ պիտի հաղորդեմ իրեն:

– Ես պաշտօնապէս ըսելիք մը չունիմ իրեն, միայն բարեկամաբար կ'ուզեմ իրեն խորհուրդ տալ, որ քիչ մը թողու սա դեսպանատուներուն օձիքը և եթէ տէրտ մը ունի՝ ուղղակի գայ, մեզի բացատրէ... կրնայ վստահ ըլլալ, որ մենք շատ աւելի անկեղծօրէն մտիկ պիտի ընենք զինքը, քան թէ այդ եւրոպացիները, որոնք միմիայն իրենց շահը կը մտածեն:

– Շատ իրաւունք ունիք, պէ՛յ էֆէնտի:

– Ասկէ զատ, քեզի բացէիբաց խօսք մը ըսեմ. աղէկ մտի՛կ ըրէ:

– Մտիկ կ'ընեմ կոր, պէ՛յ էֆէնտի:

– Այս բարենորոգումներու խնդիրը կա՛մ մեզի հետ կը կարգադրուի և կա՛մ բան մըն ալ չըլլար... Պատրիարքը թո՛ղ ասիկա լաւ գիտնայ:

– Թոյլ կուտա՞ք, որ ձեր խօսքերը նոյնութեամբ հաղորդեմ Պատրիարքին:

– Ես անպաշտօն կերպով կը խօսիմ կոր, պարզապէս իմ անձնական գաղափարս է, որ կը յայտնեմ կոր քեզի բարեկամաբար և ասիկա կ'ըսեմ ո՛չ թէ թշնամական ոգիով, այլ ընդհակառակը, իբրև ձեր անկեղծ բարեկամը...

– Այդ մասին կասկած չի կայ:

– Դուք գիտէք արդէն, որ ես Հայերը կը սիրեմ և նոյնիսկ ասոր համար շատ անգամներ խնդիր ունեցած եմ իմ պաշտօնակիցներուս և ընկերներուս հետ:

– Ձեր զգացումները ծանօթ են մեզի, – ըսաւ Պատրիարքարանի պաշտօնեան:

– Սա ևս ըսեմ, որ մենք բացարձակապէս որոշած ենք արմատական բարենորոգումներ գործադրել ո՛չ թէ միայն Արևելեան նահանգներուն մէջ, այլ ամբողջ Թուրքիոյ մէջ և ասոր համար ո՛չ Եւրոպական պետութիւններու միջամտութեան պիտի սպասենք, ո՛չ ալ մեր հպատակներուն պահանջումներուն, ասիկա պիտի ընենք ինքնաբերաբար, միմիայն մեր շահուն համար: Այսօր եթէ Եւրոպական պետութիւնները մէկ կողմ քաշուին, եթէ ձեր Պատրիարքարանը որեւէ ձեռնարկ չընէ, մենք դարձեալ այդ բարենորոգութիւնները պիտի ընենք... Եթէ մենք կ'ուզենք Պատրիարքարանի հետ խորհրդակցաբար գործել, պատճառը այն է, որ կ'ուզենք լաւ և կատարեալ գործ մը տեսնել և միանգամ ընդմիջտ մէջտեղէն վերցնել որեւէ կնճիռ և դժգոհութիւն, որպէսզի կարենանք թուրք և Հայ եղբայրաբար ապրիլ այս երկրին մէջ, մոռնալ անցեալը և մէկ սիրտ մէկ հոգի աշխատիլ Հայրենիքի յառաջդիմութեան...

– Շատ սքանչելի են ձեր ըսածները և շատ ցաւալի է, որ մինչև հիմա կարելի չէ եղած համաձայնութեան մը գալ:

– Ատոր յանցանքը մերը չէ, – պատասխանեց Թալէաթ, – ես այս բաները Ձօհրապ էֆէնտիին ալ ըսի, ան ալ ինծի համամիտ գտնուեցաւ... բայց արդիւնքը չտեսանք. ես կը կարծէի, որ Ձօհրապ էֆէնտին ձեր մէջը բաւական ազդեցութիւն ունի, թէ անոր խօսքը Պատրիարքին վրայ կշիռ պիտի ունենայ, բայց հիմա կը տեսնեմ, որ սխալիք եմ:

– Կարծեմ թէ Ձօհրապ էֆէնտին բաւական աշխատեցաւ այդ մասին:

– Այո՛, գիտեմ, բայց ի՛նչ օգուտ, քանի որ այդ աշխատութիւնը որեւէ արդիւնք չէ տուած:

– Թերևս տակաւին կարելի է բան մը ընել:

– Կ'ուզէի գիտնալ, թէ որո՞նք մասնաւորաբար ընդդիմացած են Ձօհրապի յայտնած գաղափարներուն:

– Այդ մասին, պէ՛յ էֆէնտի, բնաւ տեղեկութիւն չունիմ:

– Ինչպէ՞ս կ'ըլլայ ատիկա:

– Շատ պարզ է, պէ՛յ էֆէնտի, ես, ինչպէս գիտէք, պարզ պաշտօնեայ մըն եմ, ժողովներուն ներկայ չեմ գտնուիր ու չեմ գիտեր, թէ այդ ժողովներուն մէջ ինչ կ'անցնի-կը դառնայ, մա-

նաւանդ որ այդ ժողովներու խորհրդակցութիւնները բոլորովին գաղտնի կը պահուին:

— Ուրեմն կ'երևայ, որ ես քենէ աւելի մօտէն գիտեմ ինչ որ կ'անցնի ձեր ժողովներուն մէջ, — ըսաւ Թալէաթ խնդալով:

— Կրնայ ըլլալ, — պատասխանեց Գամիկ:

— Եւ կ'ուզե՞ս, որ քեզի ըսեմ, թէ ով է որ ամենէն աւելի հակառակած է Ձօհրապին...

— Մտիկ կ'ընեմ, պէ՛յ էֆէնտի:

— Շահրիկեան էֆէնտին, — գոչեց Թալէաթ:

— Կրնայ ըլլալ...

— Ո՛չ թէ կրնայ ըլլալ, այլ այնպէս է, — հաստատեց իթթիհա-տականներուն պետը:

— Կը հաւատամ, պէ՛յ էֆէնտի, Շահրիկեան էֆէնտին քիչ մը ծայրայեղ է իր գաղափարներուն մէջ և չափազանց յամառ:

— Ես զինքը աւելի խելացի կը կարծէի... Ակնուներն ի՞նչ գաղափարի տէր է...

— Ես, ճշմարիտը, անոնց հետ յարաբերութիւն չունիմ, միայն սաչափը գիտեմ, որ Ակնուներն ազգային գործերու չի մասնակցիր, որովհետև ուսուցչատակ է և ըստ Սահմանադրութեան, օտարազգատակները չեն կրնար ազգային պաշտօն վարել...

— Այդ օրէնքները խաբեբայական բաներ են, ինծի մի՛ հասկըցներ, — ըսաւ Թալէաթ, — պաշտօնապէս չմասնակցիր, բայց անպաշտօն կերպով ամէն գործի կը խառնուի:

— Կրնայ ըլլալ, հակառակը չեմ պնդեր, միայն թէ ես այդ մասին որոշ բան չեմ կրնար ըսել:

— Ինչ որ է, մենք հիմա ժողով ունինք, աւելի երկար չեմ կրնար մնալ հոս, իմ ըսելիքներս արդէն ըսի, և դուն ալ միտքս հասկցար, այնպէս չէ՞:

— Այո՛, պէ՛յ էֆէնտի:

— Ուրեմն պէտք եղածը կը խօսիս թէ՛ Պատրիարքին և թէ՛ ձեր ժողովի անդամներուն:

— Աղէկ չըլլա՞ր, որ ձեր վսեմութեան կողմէ պաշտօնապէս հրաւեր մը ուղղէք իրենց և ձեր գաղափարները հաղորդէք անձամբ:

— Ձէ՛, ես պաշտօնապէս բան մը չեմ ըսեր, ինչ որ քեզի խօսեցայ՝ մտերմական հանգամանքով էր:

Եւ Թալէաթ բարեկրկնով դուրս ելաւ սենեակէն: Գամիկ պահ մը մտածկոտ՝ մնաց սենեակին մէջ: Ներքին գործերու նախարարին խօսքերը շատ յուզած էին զինքը և քիչ մըն ալ մտաւտանջութեան մատնած: Կը նախընտրէր այդ միջոցին հոն չեկած ըլլալ ու այդ խօսքերը չլսել:

«Ի՞նչ պիտի ընեմ հիմա, — կը մտածէր ինքնին, — այս ըսածները հաղորդե՞մ Պատրիարքին, թէ՞ բնաւ բան մը չըսեմ... երկու պարագային ալ դժուարին դիրքի մը մէջ պիտի գտնուիմ...»:

Եւ մտահոգ դէմքով մը հեռացաւ իթթիհատական կեդրոնատեղիէն:

ԳԼՈՒԽ ԺԳ ՅՈՐՀՐԴԱՒՈՐ ԶՈՅԳ ՄԸ

Բերա, դէպի թիւնէլի կողմերը, Շիտակ ճամբան աջակողմեան կողմնակի փողոցներէն մէկուն մէջ, մութ ու փոքրիկ գինետուն մը, սեղանի մը առջև երկու հոգի նստած են: Յերեկուան այդ ժամուն զինետան մէջ բոլորովին առանձին են. գինետան տէրը, թէզկեահին ետև, աթոռի մը վրայ, կը մրափէ:

Երկու յաճախորդները երիտասարդներ են, երկուքն ալ նիհար, միջահասակ, թուխ և կորովի դիմագիծներով: Մին գլուխը փափախ մը դրած է, միւսը քասքէթ մը:

Հակառակ իրենց առանձնութեան ցած ձայնով կը խօսակցին՝ կամաց-կամաց գինի խմելով:

— Մօ՛, Տրդա՛տ, սիկառ մը ունի՞ս, իմ տուփս հատեր է:

— Ունիմ, բայց կը կարծե՞ս, որ այստեղը ապահով է... եթէ մեզի նշմարեն:

— Մի՛ վախնար... ասկէ զատ, եթէ պէտք ըլլայ շուտ մը կծիկը կը դնենք, բայց նորէն կը կրկնեմ, վախնալիք բան չի կայ, աս տեղուանքը ես աղէկ կը ճանչնամ:

— Ըսել է՛ շատ կուգաս այստեղ:

— Գրեթէ ամէն օր... երէկ Սեխոյին հետ հոս էինք:

— Սեխոյին վրայ վստահութիւն ունի՞ս:

— Այնչափ վստահ եմ, որչափ քու վրադ:

– Բայց մենք չէ:
 – Այսուհանդերձ աղէկ տղայ է և վստահելի բարեկամ մը, ասկէ զատ մեզի շատ օգտակար կրնայ ըլլալ:
 – Մեր գաղտնիքին տեղեակ է:
 – Քիչ մը, սանկ հարեանցի կերպով, տակաւին բոլորովին չեմ բացուած իրեն:
 – Աւելի աղէկ, միշտ խոհեմութիւնը աղէկ բան է:
 – Ես այդ կարծիքը չունիմ, ընդհակառակը քիչ մը անխոհեմ ու յանդուգն ըլլալու է ասանկ գործերու մէջ, ես վտանգի մէջ հաճոյք կը զգամ ապրելու... Իմ բուն տարրս այն է:
 – Քիչ մը աւելի խոհեմ եղի՞ր:
 – Ինչո՞ւ աս վարագոյրը գոց է:
 – Ի՞նչ կ'ըսես, ո՞ր վարագոյրը:
 – Սա դիմացի տունին երրորդ յարկի վարագոյրը:
 – Խենթ ես, ի՞նչ ես... Հոն ի՞նչ կայ...
 – Ի՞նչ կայ մի... աղուորիկ աղջիկ մը կայ:
 – Կը ճանչնա՞ս...
 – Ճանչնալն ալ խօսք է... Հրաշալի աղջիկ մը... և տակաւին հազիւ քսան տարեկան, ճշմարիտ գանձ մը:
 – Կ'երևայ, որ սիրահարած ես իրեն:
 – Ձիս ապուշի տե՞ղ կը դնես կոր...
 – Ձգուչացիր, բարեկամ, մեզի պէս մարդիկը պէտք չէ, որ այդ տեսակ կիներու հետ շատ յարաբերութիւն ունենան... Ետքը փորձանք կուգայ գլուխնիս:
 – Սո՛ւս... ուշադրութի՛ւն:
 – Հէ, ի՞նչ կայ...
 – Նայէ՛ սա դիմացի կողմը, պատին տակը մէկը կեցած է:
 – Բան մը չեմ տեսնար կոր...
 – Մռէ՛ քիչ մը, զգուշութիւն, տեսա՞ր, պզտիկ մարդ մը...
 – Այո՛, այո՛, հիմա տեսայ:
 – Լրտես է և հայ է և զիս ալ կը ճանչնայ... այս ատեն ի՞նչ բան ունի հոս:
 – Մեզի համար եկած չըլլա՞յ... քեզի ըսի, որ այստեղ շատ վստահելի տեղ մը չէ... տեսա՞ր հիմա:
 – Իրար մի՛ անցիր, թերևս դիպուածով այս կողմերը կը դըտնուի:

– Եկուր կծիկը դնենք:
 – Դուրս ելլելնուս պէս մեզի կը տեսնայ, լաւագոյն է, որ այստեղ սպասենք...
 – Իսկ եթէ ինք ներս մտնա՞յ...
 – Այն ատեն ընելիքնիս կ'որոշենք... ընկուկէր չունի՞ս քովդ:
 – Հարկաւ ունիմ:
 – Ուրեմն հոգ մի՛ ընել, որոշումնիս որոշում է... եթէ մեզի ձերբակալելու փորձ ընեն, կը խփենք:
 – Այդ դիւրին է, բայց լաւագոյն է, որ գործը այդ ծայրայեղութեան չհասնի... ամբողջ գործը ջուրը կ'իյնայ:
 – Դեռ հոն կեցե՞ր է մարդը:
 – Այո՛, տուներն ի վեր կը նայի կոր:
 – Պարպէ՛, տեսնենք, սա գաւաթը:
 – Շիտակը՝ ախորժակս փախաւ, իցի՛ւ թէ ուրիշ տեղ մը գացած ըլլայինք:
 Քանի մը ըրպէ՛ ետքը երիտասարդներէն մին կրկին դէպի դուրս ծռեցաւ և գլուխը վեր առնելով՝ գոհունակ դէմքով մը ըսաւ.
 – Մարդը գացեր է, աչքդ լոյս:
 – Ուրեմն մենք ալ կամաց մը կծիկը դնենք...
 – Բայց Մարտիկին հետ հոս ժամադիր եղած ենք, հիմա ուր որ է՝ կուգայ... եթէ կ'ուզես, դիմացի տունը երթանք, հոն վերէն կը տեսնենք Մարտիկին գալը ու վար կ'իջնենք:
 – Դիմացի տունը ո՞րն է...
 – Աղուոր աղջիկին... Մարիքային:
 – Խենթ խօսքեր մի՛ ընել... ամէն բան կատակի կը տանիս ու չես խորհիր, որ մեր կեանքին հետ կը խաղանք կոր այս միջոցիս:
 – Ճիշդ ատոր համար պէտք չէ, որ խենթութիւնը ձեռքէ թողունք... իրաւ կ'ըսեմ, եկուր երթանք, քիչ մը ատեն կ'անցընենք:
 – Պարապ խօսքեր մի՛ ընել, նստէ՛ տեղդ:
 – Ուրեմն խմենք:
 – Ատոր ըսելիք չունիմ:
 Եւ Տրդատ գաւաթները լեցուց:

Հագիւ թէ գաւաթը շրթունքին տարած էր՝ վար դրաւ:

– Մարտիկը կուգայ կոր,– ըսաւ:

– Ուրկէ՞ տեսար,– Հարցուց ընկերը:

– Դիմացի Հայելիին մէջ տեսայ...

Արդարեւ, նոյն միջոցին մարդ մը ներս մտաւ և մօտեցաւ երկու խօսակիցներուն:

Քառասուն տարեկանի մօտ, դեղին, կարճահասակ ու գիրուկ մարդ մըն էր:

– Բարեւ ձեզ,– ըսաւ ավոտի մը վրայ բազմելով,– շատո՞նց է, որ հոս էք:

– Ժամէն աւելի է,– պատասխանեց Տրդատ:

– Բայց ես ըսի, որ ժամը երեքէն առաջ պիտի չի գամ:

– Մենք ժամանակէն առաջ եկանք, որովհետեւ ուրիշ գործ մը չունէինք ընելիք... Ի՞նչ լուր, տեսնենք:

– Աղէկ, Հիմակուհիմա գործը կարգին է: Միայն թէ շատ մեծ զգուշութեամբ պէտք է գործենք... կը վախնամ, որ ոստիկանութիւնը կասկածներ ունի:

– Կասկածնե՞ր... ինչպէս կրնայ ըլլալ, ի՞նչ կասկած, խօսէ՛, տեսնենք:

– Դեռ որոշ բան մը չեմ գիտեր, սաչափը գիտեմ միայն, որ այս օրերս ոստիկանութիւնը, մանաւանդ լրտեսները, գործի վրայ են:

– Կրնայ ըլլալ, բայց ատկէ չհետեւիր, որ այդ գործունէութիւնը մեզի համար է:

– Գիտես, որ ես պարապ խօսք չեմ ըներ և խօսք մը ըսելէ առաջ լեզուս բերնիս մէջ քանի մը անգամ կը դարձնեմ...

– Ուրեմն մանրամասնօրէն պատմէ՛ գիտցածդ:

– Գիտես, որ ոստիկանութեան մէջ բարեկամներ ունիմ, որոնք ինչ բան մը չեն ծածկեր:

– Ատոր ապացոյցը տեսած ենք արդէն,– Հաստատեց Տրդատ:

– Արդ, երէկ ոստիկանութեան մէկ կարևոր պաշտօնեան տեսայ, որ ինծի շատ ծանրակշիռ խօսք մը ըրաւ:

– Ի՞նչ ըսաւ,– Հարցուց Տրդատ չափազանց հետաքրքրուած:

– Ըսաւ, որ կառավարութիւնը տեղեկութիւն առած է, թէ դաւադրութիւն մը կը պատրաստուի Պոլսոյ մէջ Հայ յեղափոխական կուսակցութեան մը կողմէ:

– Ո՞ր կուսակցութեան...

– Ես ալ ճիշդ այդ Հարցումը ըրի իրեն և պատասխանեց, թէ չէր գիտեր, թէ և ես կը կասկածիմ, որ չուզեց ըսել:

– Իսկ դաւադրութեան ինչ ըլլալը բացատրե՞ց:

– Կառավարութեան դէմ դաւադրութիւն մըն է եղեր...

– Ու ասոր համար քննութեան և խուզարկութեան՞ ձեռնարկած են,– Հարցուց Տրդատ՝ յայտնապէս մտահոգ դէմքով մը:

– Բնականաբար... միայն թէ բարեբախտաբար ոստիկանութիւնը չհաւատար կոր այդպիսի դաւադրութեան մը գոյութեան և այն համոզումը ունի, թէ պարզապէս զրպարտութիւն է եղածը, այսուհանդերձ ստիպուած է քննութիւն մը կատարել, քանի որ ներքին գործերու նախարարութեանէն այդ դաւադրութեան լուրը հաղորդուած է իրեն: Սա ևս չմոռնանք, որ ոստիկանութիւնը շահ ունի ապացուցանելու, թէ այդպիսի դաւադրութիւն մը գոյութիւն չունի, որովհետեւ հակառակ պարագային իր ապիկարութիւնը ցոյց տուած պիտի ըլլայ...

– Շատ ճիշդ է այդ ըսածդ, ուրեմն վախնալու բան մը չունինք:

– Ո՞վ գիտէ... խնդիրը այն է, որ լրտեսները այս օրերս գործի վրայ են և հարկ է մեծ խոհեմութեամբ վարուիլ, մինչև որ որևէ հետք չգտնելով՝ յուսահատին, և կառավարութիւնն ալ համոզում գոյացնէ, թէ իրեն տրուած տեղեկութիւնը սուտ է:

– Ուրիշ ի՞նչ կարևոր բան ունիս մեզի հաղորդելիք,– Հարցուց Տրդատ:

– Կաղը և Սիմոնը դրամի պէտք ունին, ըսին, որ անպատճառ իրենց քանի մը ոսկի ղրկէք:

– Բայց դեռ նոր դրամ տրուեցաւ:

– Բացառիկ ծախքեր ըրած են այս օրերս... իրենց հին սենեակը թողուցին և ուրիշ տեղ փոխադրուեցան:

– Ինչո՞ւ համար:

– Որովհետեւ այդտեղ շատ ապահով չէին, մանաւանդ որ վերջերս երկու թուրքեր ալ եկան սենեակ բռնեցին այդ տանը

մէջ... տանտիրուհին ալ քիչ մը կասկածելի կին մը կ'երևար կոր... վերջապէս հրեայ էր, կարելի չէր շատ վստահիլ իրեն:

– Լաւ, հիմա ո՞ւր գացին:

– Դարձեալ Սիրքէճիի կողմերը յոյնի մը տուն փոխադրուեցան, բայց տանտիրուհին երեք ամսական կանխիկ ուզած էր, ստիպուեցան վճարել, ասոր համար իրենց դրամը պակսեց:

– Աղէկ, բայց մեր քովն ալ աւելորդ դրամ չի կայ... մենք ալ Ամերիկայէն դրամի կը սպասենք կոր, քանի մը օր չե՞ն կրնար համբերել:

– Այդ դիւրին է, բան մը կ'ընենք, տղաքը նեղը չենք թողուր,– պատասխանեց Մարտիկ,– եթէ կ'ուզէք՝ ես ձեր հաշուոյն քանի մը ոսկի տամ իրեն:

– Այո՛, այո՛, այնպէս ըրէ՛, 4-5 ոսկի տուր դուն, մինչև շաբաթ մը մեր դրամը կուգայ, ու քեզի կը վճարենք: Փարամազը տեսա՞ր այս օրերս...

– Երէկ միասին էինք, ձեզ տեսնել կ'ուզէր կոր:

– Մենք իրեն սպասեցինք այս առտու, մեր սենեակը, բայց չեկաւ:

– Կ'երևայ, որ շատ կարևոր տեղեկութիւններ ունի հաղորդելիք:

– Ի՞նչ տեղեկութիւն... խե՞ր է:

– Չեմ կարծեր,– պատասխանեց Մարտիկ մտատանջ դէմքով մը,– ընդհակառակը, երէկ զինքը շատ յուզուած և մտահոգ տեսայ, պատճառը հարցուցի, չուզեց որոշ բան մը ըսել, միայն սաշափը ըսաւ, որ իրենց դիրքը շատ ապահով չէ և թէ հարկ է ծայրայեղ զգուշութեան միջոցներ ձեռք առնել... յետոյ ընկերի մը մասին ակնարկութիւն ըրաւ...

– Ի՞նչ ակնարկութիւն...

– Կ'երևայ, որ կասկածելի մէկը կայ մէջերնիդ...

– Ո՞վ,– գոչեց Տրդատ իրար անցնելով:

– Որոշ բան մը չեմ գիտեր... ճիշդ այդ խնդրին համար կ'ուզէր ձեզի տեսնալ:

– Բայց այդ ըսածդ շատ կարևոր բան է, պէտք է, որ զինքը տեսնեմ անպատճառ... Հիմա կրնա՞ս երթալ գտնել Փարամազը և իսկոյն ինծի դրկել:

– Հիմա Պոլիս պիտի անցնեմ, թերևս զինքը տեսնամ,– պատասխանեց Մարտիկ:

– Պէտք է անպատճառ փնտռես, գտնաս ու մեզի դրկես:

– Կը ջանամ... ո՞ւր գայ ձեզի տեսնել... չեմ կարծեր, որ ուզէ գինետան կամ սրճարանի մէջ տեսնուիլ...

– Թո՛ղ ուղղակի մեր սենեակը գայ, մենք կէս ժամէն հոն կ'ըլլանք ու մինչև գիշեր դուրս չենք ելլեր. միայն թէ անպատճառ գտնես զինքը... եթէ կարելի է թող Արծրունին ալ միասին գայ:

– Կ'աշխատիմ երկուքն ալ գտնել,– պատասխանեց Մարտիկ,– ուրիշ ըսելիք մը ունի՞ս:

– Չէ՛, միայն թէ աճապարէ:

– Հիմա կ'երթամ կոր...

Եւ Մարտիկ ոտքի ելլելով «մնաք բարով» ըսաւ երկու երիտասարդներուն և մեկնեցաւ:

Ինչպէս տեսնեք, ամբողջ խօսակցութեան միջոցին Տրդատի ընկերը խօսակցութեան չէր մասնակցած և միայն խորին ուշադրութեամբ մտիկ ըրած էր՝ ատեն-ատեն իր գինիի գաւաթը շրթներէն տանելով ու սիկառէթը ծխելով:

Երբ Մարտիկ մեկնեցաւ՝ այն ատեն միայն լուսթիւնը խզեց և ըսաւ.

– Կը տեսնամ, թէ ինչ որ միտքէս կ'անցնի ժամանակէ մը ի վեր, դժբախտաբար, ճիշդ է:

– Ի՞նչ կ'անցնի միտքէդ, Սուրէն,– հարցուց Տրդատ անտարբեր շեշտով մը:

– Շատ ծանր կասկած մը:

– Այսի՞նքն...

– Մեր մէջը մատնիչ մը կայ,– պատասխանեց Սուրէն խուլ ձայնով մը:

– Բայց մինչև հիմա այդպիսի կասկած մը չէիր յայտնած ընաւ:

– Չէի ուզեր առանց որոշ ապացոյցի մեր ընկերներուն միտքերը պղտորել:

– Ուրեմն հիմա ունի՞ս այդ որոշ ապացոյցները:

– Ո՛չ տակաւին, բայց ահա՛ նշանները երևան կ'ելլեն... ինչ որ քիչ մը առաջ լսեցինք, կրնան իբրև փաստ ծառայել:

– Բայց ինչ որ Մարտիկ ըսաւ, շատ անորոշ բաներ էին, և այդպէս ըլլալը ինքն ալ խոստովանեցաւ:

– Այո՛, բայց վերջապէս հիմը իրականութիւն մըն է... կառավարութիւնը բաներ մը իմացած է, արդ, ո՞վ է լուր տուողը:

– Թերևս դուրսէն մէկն է:

– Դուրսէն մէկը չկրնար գիտնալ մեր խորհուրդներն ու ծրագիրը:

– Սակայն, նորէն կը կրկնեմ, Մարտիկի ըսածներուն մէջ ոչինչ կայ որոշ... պարզապէս դաւադրութեան խօսք մը:

– Ատիկա բաւական է: Իրաւցընէ կա՞յ այդպիսի դաւադրութիւն մը, այո՛ կամ ո՛չ... պատասխանէ՛: Հոս մենք մեզի ենք, իրարմէ ծածկելու բան մը չունինք:

– Բնական է, որ կայ, – պատասխանեց Տրդատ:

– Եւ ճիշդ մենք ալ ատոր համար եկած ենք Պոլիս...

– Այդ ալ ճիշդ է:

– Եւ այդ դաւադրութիւնը արդի կառավարութեան դէմ է:

– Այնպէս է, – Հաստատեց Տրդատ:

– Ուրեմն ինչ որ իմացած է կառավարութիւնը կամ ոստիկանութիւնը, ցնորք մը չէ, այլ իրականութիւն, – շարունակեց Սուրէն, – այնպէս չէ՞...

– Այո՛, այնպէս է:

– Արդ, այս դաւադրութիւնը միմիայն մեր ընկերները գիտեն, Հետեւաբար անոնցմէ մէկն է, որ իմաց տուած է կառավարութեան, Հակառակը կրնա՞ս պնդել:

– Ենթադրենք, որ քու կասկածդ ճիշդ ըլլայ, – պատասխանեց Տրդատ, – ո՞վ է դաւաճանը...

– Ծիշդ ես ալ այդ կը ջանամ գուշակել, – ըսաւ Սուրէն:

– Իսկ ես կը կարծեմ, որ քու կասկածներդ անտեղի են:

– Բայց իրողութիւններ կան մէջտեղ, – գոչեց Սուրէն:

– Ատոնք մեծ բան մը չեն ապացուցաներ... եթէ իրաւցընէ մեր գաղտնիքներուն տեղեակ ընկեր մը մեզ մատնած ըլլար, այս ժամուս արդէն ամէնքս ձերբակալուած կ'ըլլայինք:

– Շատ սխալ կը տրամաբանես կոր, – պատասխանեց Սուրէն պաղարիւնով, – վարպետ մատնիչ մը, մանաւանդ մատնիչ մը, որ դրամի համար կը դաւաճանէ, ինչպէս կ'ենթադրեմ, երբեք

իր գաղտնիքներուն ծրարը մէկ անգամէն ամբողջովին չի բանար, այլ կը ջանայ կրցածին չափ սուղ ծախել գիտցածը: Նախ անորոշ բաներ կ'ըսէ, յետոյ, կամաց-կամաց և աստիճանաբար ամէն բան երևան կը հանէ, ամէն մէկ անգամուն նորէն նոր դրամ ստանալու համար:

– Ուրեմն, ըստ քու համոզումիդ, այդ ենթադրեալ մատնիչը դեռ որոշ տեղեկութիւններ չէ՞ հաղորդած և միայն տարտամ ծանօթութիւններ տուած է:

– Այնպէս կ'ենթադրեմ:

– Այնպէս որ եթէ կարենանք իր ո՞վ ըլլալը հասկնալ, կըրնանք անմիջապէս սպառնացող վտանգին առաջըր առնել այդ դաւաճանին իր արժանի պատիժը տալով:

– Բնականաբար, – պատասխանեց Սուրէն:

– Այն ատեն պէտք է անմիջապէս խիստ քննութիւն մը կատարենք մեր ընկերներուն մասին:

– Այո՛, բայց ատիկա շատ դիւրին գործ չէ:

– Ինչո՞ւ համար... Հոս գաղտնիքին տեղեակ ընկերները շատ չեն... Հազիւ թերևս 10-11 հոգի ենք, և շատ դիւրին է այդչափ փոքրաթիւ անձերու մասին քննութիւն ընելը, մանաւանդ որ անոնց մեծ մասը արդէն բացարձակապէս վստահելի ընկերներ են, որոնց մասին կասկածելը անգամ ոճիր է:

– Շատ ճիշդ կը խօսիս:

– Այնպէս որ մեր քննութիւնը պարզապէս մէկ քանի անձերու վրայ պիտի կեդրոնանայ:

– Այդ ալ շատ ճիշդ է:

– Ուրեմն ինչո՞ւ համար կ'ըսես, թէ այսպիսի քննութիւն մը շատ դիւրին գործ չէ:

– Բայց դուռն կը խօսիս միմիայն Պոլսոյ ընկերներուն մասին, – դիտել տուաւ Սուրէն, – եթէ խնդիրը միայն անոնց համար ըլլար՝ արդարեւ դիւրին էր, բայց այդպէս չէ:

– Ինչպէ՞ս, Հապա ո՞ր ընկերներու մասին է խօսքդ:

– Չկրնա՞ր ըլլալ, որ մատնիչը Պոլսէն դուրս գտնուող ընկերներէն մէկը ըլլայ...

Տրդատ այս կէտը չէր խորհած, և Սուրէնի խօսքերը յանկարծ սթափեցուցին զինքը:

— Իրաւունք ունիս,— գոչեց,— Պուկարիայէն, Ռուսմանիայէն կամ Եգիպտոսէն կրնայ մէկը դաւաճանած ըլլալ:

— Եւ այն ատեն ահա՛ խնդիրը շատ կը դժուարանայ:

— Ուրեմն ի՞նչ պէտք է ընել:

— Իրաւ որ չեմ գիտեր,— պատասխանեց Սուրէն,— ամէն պարագային կացուեթիւնը բաւական կնճռոտ է, և պէտք է այս մասին մեր ընկերներուն հետ լրջօրէն խորհրդակցինք:

— Երբ որ Փարամազը գայ, պարզենք խնդիրը, տեսնենք՝ ինչ խորհուրդ կուտայ:

— Իցի՛ւ թէ Մարտիկ կարենար գինքը տեսնել ու ղրկել մեզի:

— Այդ մասին ապահով եմ,— ըսաւ Տրդատ,— Մարտիկ երբոր գործ մը վրան առնէ՛ անպատճառ կը կատարէ:

— Երթա՞նք:

— Կեցիր սա հաշիւնիս մաքրենք:

Տրդատ գինեպանը կանչեց, մէծիտիէ մը տուաւ և սպասեց, որ վրադիրքը բերէ: Նոյն միջոցին իր ակնարկը դէպի փողոց ուղղեց:

— Նորէն ա՛ն է,— ըսաւ յանկարծ վրդոված շեշտով մը:

— Մ՛վ,— հարցուց Սուրէն:

— Բիչ մը առաջուան հայ լրտեսը, կրկին դիմացի պատին տակ կեցած վեր կը նայի... դէպի հոս կուգայ կոր... արդեօք նե՞րս պիտի մտնայ:

Հագիւ թէ խօսքը աւարտած էր՝ Տրդատի ակնարկած մարդը գինետուն մտաւ:

Նոյն միջոցին գինեպանը մէծիտիէին մնացորդը բերաւ:

— Բարև, միւսի՛ւ Տրդատ, հոս ի՞նչ բան ունիս,— ըսաւ նորեկը մտերմական շեշտով մը՝ մօտենալով երկու ընկերներուն նըստած սեղանին:

— Գինի մը խմեցինք, կ'երթանք կոր,— պատասխանեց Տրդատ դժգոհ դէմքով մը:

— Հէլէ քիչ մը նստէ, գինի մըն ալ ինչ խմեցէք:

— Ձէ, չնորհակալ եմ, շատ կ'ըլլայ:

— Նստէ՛, աղբա՛ր, շատոնց է իրար չենք տեսեր...

— Կը ներես, ընկերոջս հետ տեղ մը պիտի երթանք:

— Կ'երթաք, ճանըմ, հիմա ես եկայ տէյի, կը փախչի՞ք կոր...

— Ձէ, մենք արդէն հաշիւնիս մաքրած կ'երթայինք կոր, երբոր դուն եկար:

— Խաթերս համար քիչ մը նստէ, քեզի խօսելիք ունիմ:

— Ուրիշ ատեն կը տեսնուինք, բարեկամս ժամադրուեթիւն մը ունի, արդէն ուշ մնացինք:

— Ճանըմ, հինգ վայրկեան ետքը թող ըլլայ ժամադրուեթիւնը...

Եւ նորեկը գինեպանին դառնալով գոչեց.

— Մեզի երեք գաւաթ աղէկ գինի բեր...

Տրդատ և իր ընկերը ստիպուեցան համակերպիլ:

— Վա՛յ, միւսիւ Տրդատ, վա՛յ,— ըսաւ լրտեսը աթոռին վրայ բազմելով,— ասանկ հէ՞, ինծի տեսածիդ պէս կը փախչիս:

— Փախչելիք բան չի կայ, միայն թէ գործ ունէինք:

— Մենք հին բարեկամներ ենք, աղբա՛ր, Ռուսճուքի մէջ անցուցած օրերնիս մոռցա՞ր... Հէյ կիտի կիւնլէր... դուն կարծեմ Ռուսճուքէն Ամերիկա գացիր:

— Այո՛,— ըսաւ Տրդատ:

— Ես ալ պիտի երթայի ա՛... խենթութիւն ըրինք, ելանք Պոլիս եկանք...

Նոյն միջոցին գինեպանը երեք գաւաթ գինի բերաւ:

— Կենացնուդ,— ըսաւ լրտեսը՝ իր գաւաթը բախելով երկու ընկերներու գաւաթներուն:

— Աս բարեկամդ ինծի չձանօթացուցիր,— ըսաւ միւսնոյն ատեն:

— Բարեկամս կէյվէցի է, առջի օր եկաւ, հետը եղ ու հաւկիթ բերած էր, ծախեց, վաղը իր տեղը պիտի դառնայ,— պատասխանեց Տրդատ:

— Մե՛ղք,— գոչեց լրտեսը,— գիտնայի նէ՛ ես ալ կ'առնէի քանի մը օխա եղ, հոս աղէկ, անարատ եղ գտնելը շատ դժուար է... օխան քանիէ՞ն ծախեցիր:

— Աժան գնաց,— պատասխանեց Սուրէն:

— Այստեղի վաճառականները անանկ են, մարդը կը խղզեն... է՛յ, ի՞նչ կայ չի կայ, նայինք...

– Ի՞նչ ըլլայ, պարապ ժամանակ կ'անցնենք կոր,– պատասխանեց Տրդատ:

– Հոս գործ մը չունի՞ս,– Հարցուց լրտեսը:

– Չէ, գործ չը փնտրեմ կոր, բայց մինչև հիմա չգտայ:

– Դուն գործը ի՞նչ պիտի ընես, կուսակցությունը ողջ ըլլայ,– ըսաւ լրտեսը խնդալով:

– Ի՞նչ կուսակցութիւն,– Հարցուց Տրդատ միամիտ ձևով մը:

– Ես ի՞նչ գիտնամ, Հնչակ կամ Դաշնակ:

– Անոնցմէ շատո՞նց վազ անցանք... Աստուած ամենուն ալ պէրան տայ, ա՛լ կ'օգտէ որչափ վնաս քաշեցիրք նէ անոնց երեսէն:

– Ըսել է՝ հիմա իրենց մէջը չես,– ըսաւ լրտեսը նուրբ ժպիտով մը:

– Հացին փարան հանելու կը նայինք կոր հիմա... Հնչակ-դաշնակ փոր չեն կշտացներ...

– Բայց Պուլկարիա եղած ատենդ այնպէս չէիր ըսեր, թունդ յեղափոխական էիր:

– Այն ատեն չօճուխ էի, հիմա խելքս գլուխս եկաւ:

– Անցած օր քուկինդ հանդիպեցայ, զիս չճանչնալ ձեռացուց:

– Իմինս ո՞վ է...

– Ծանրմ, սա Փարամազը...

– Փարամազը հո՞ս է,– Հարցուց Տրդատ զարմացական շեշտով մը:

– Չէի՞ր գիտեր...

– Չէ՛, քեռէ կ'իմանամ կոր:

– Զարմանալի՛ բան, այդքան մտերիմ բարեկամ մը... ամէն օր միասին էիք:

– Ես կը կարծէի, որ Ամերիկա կը գտնուի:

– Բաւական ժամանակ է ի վեր հոս է... կարծեմ դարձեալ գործի վրայ է և կ'երևայ, որ այս անգամ քովը դրամ ալ ունի, որովհետև վրան գլուխը շտկուած է:

– Հոս ի՞նչ գործ կրնայ ունենալ:

– Ո՛վ գիտէ... անոր գործերուն խելք չհասնիր... դեռ երէկ

Հանդիպեցայ իրեն կամուրջին վրայ, դէմ դէմի եկանք, գլուխը անդին դարձուց և աճապարանքով հեռացաւ:

– Թերևս քեզ չճանչցաւ, եթէ ոչ՝ քեռէ ինչո՞ւ պիտի փախչի:

– Շատ ալ աղուոր ճանչցաւ, ինչ որ է, խնդիրը այն է, որ Փարամազ Պուլիս կը գտնուի այս միջոցիս: Շատ կը զարմանամ, որ ասիկա չէիր գիտեր:

– Ես ինչպե՞ս կրնամ գիտնալ, այդ տեսակ մարդերու հետ յարաբերութիւններս խզած եմ. ասկէ զատ իմ անձնական գործերս ունիմ, անոնց ետեւէն կը վազեմ առտուընէ մինչև իրիկուն...

– Յեղափոխականներուն հետ կրնաս յարաբերութիւններդ խզած ըլլալ, բայց ատիկա պատճառ մը չէ, որ հին բարեկամներդ մոռնաս... կրնաս դարձեալ հետերին տեսնուիլ իբրև պարզ ծանօթ:

– Իրաւունք ունիս,– խոստովանեցաւ Տրդատ,– բայց ինչպէս ըսի, իրեն հանդիպելու առիթը չունեցայ, բնականաբար երբոր հանդիպիմ հետը կը տեսնուիմ, բայց ինչո՞ւ այս բանը ա՛յնքան կը հետաքրքրէ քեզ:

– Ոչինչ, պարզապէս հարցում մըն էր՝ ըրի,– պատասխանեց լրտեսը:– Գիտէի, որ Փարամազ քու շատ մտերիմ ու սիրելի բարեկամդ էր, և ասոր համար զարմացա, երբոր ըսիր, թէ իր հոս գտնուիլը չես գիտեր... ան չէ, ամա Արշալիրէն լուր ունի՞ս:

– Ո՛չ,– ըսաւ Տրդատ չոր կերպով:

Յետոյ ժամացոյցը նայելով գոչեց.

– Օ՛, խօսքի բռնուեցանք, ուշ մնացինք...

– Այո՛, այո՛, երթանք,– ըսաւ Սուրէն ոտքի ելլելով:

– Նստեցէ՛ք, մէյմէկ գաւաթ գինի ալ խմենք,– առաջարկեց լրտեսը:

– Չէ՛, չէ՛,– պնդեց Տրդատ,– շատ շնորհակալ եմք, բայց ստիպուած ենք մեկնելու:

– Ուրեմն ես ալ կ'երթամ,– ըսաւ լրտեսը և գինեպանը կանչելով՝ հաշիւը մաքրեց:

– Դուք ո՞ր կողմ պիտի երթաք:

– Մենք Ղալաթիա պիտի երթանք,– պատասխանեց Տրդատ վարանոտ ձևով մը:

– Ես ալ այնպէս, – ըսաւ լրտեսը, – ուրեմն միասին երթանք: Տրդատ և Սուրէն, թէև ներքնապէս չափազանց դժգոհ, ստիպուեցան համակերպիլ:

Միասին քիչ մը քալելէ ետքը Տրդատ յանկարծ ըսաւ.

– Ես անպատճառ պէտք է, որ տուն հանդիպիմ անգամ մը, ներեցէ՛ք ինծի:

– Ո՛ր կողմ կը նստիս, – հարցուց լրտեսը:

– Թառլա պաշիի կողմը... մնաք բարով:

– Կեցի՛ր, ես ալ միասին կուգամ, – ըսաւ Սուրէն, – մնաք բարով:

– Բայց Ղալաթիա կ'երթայիք կոր հապա, – դիտել տուաւ լրտեսը:

– Անկէ առաջ այստեղ մէկ քանի գործեր ունիմ, մնաք բարով:

Լրտեսը կասկածոտ դէմքով մը գլուխը օրօրեց:

– Եթէ իմ պատճառովս ետ կը դառնաք կոր, շիտակը ըսէք, ես կը հեռանամ, – ըսաւ երկու երիտասարդներուն:

– Ատ ի՞նչ խօսք է, – պատասխանեց Տրդատ, – միայն թէ միտքս բան մը ինկաւ, անոր համար ստիպուած եմ անգամ մը սենեակ հանդիպիլ:

– Երթաք բարով:

Եւ լրտեսը իր ճամբան շարունակեց, մինչ երկու երիտասարդները տարբեր ուղի մը բռնեցին:

«Հիմա հասկցայ, որ այս Տրդատը ծածուկ գործի մը վրայ է, – ըսաւ լրտեսը ինքնիրեն ճամբան շարունակելով, – զիս կ'ուզէ համոզել, որ կուսակցութենէ քաշուեր է... ես կը կլլեմ մի ատիկա... բայց սա քովինը ո՞վ էր, չկրցայ ճանչնալ... յայտնի բան է, որ Կէյվէէն եկած վաճառական չէ, հանած-վարածին մէկը ըլլալու է, դէմքէն այնպէս կ'երևար կոր... Ատոնց օձիքը թող տալու չէ»:

Մինչ լրտեսը այս խորհրդածութիւնները ընելով ճամբան կը շարունակէր դէպի Ղալաթիա, երկու երիտասարդները, արագ քայլերով և ատեն-ատեն ետևին նայելով, որպէսզի տեսնեն, թէ լրտեսին կողմէ կը հետապնդուին, կ'երթային դէպի Տրդատի սենեակը, որ կը գտնուէր Պրուսա փողոց, յոյնի մը տանը մէջ:

Երկու երիտասարդները վերջին անգամ խուզարկու նա-յուածք մը պտըտցնելէ ետքը մտան Պրուսա փողոցը և բաւական քալելէ ետքը կանգ առին դրան մը առջև:

Տրդատը զանգակը հնչեցուց, և պառաւ կին մը եկաւ բանալու:

Տրդատ և Սուրէն ներս մտան և դուռը գոցեցին:

– Զիս հարցնող եղա՞վ, – հարցուց Տրդատ պառաւին:

– Ո՛չ, – պատասխանեց այս վերջինը:

– Թերևս քիչ մը ետքը գան, զիս փնտռեն, եթէ եկող ըլլայ, շիտակ սենեակս բեր:

– Շատ աղէկ:

Տրդատ և Սուրէն այդ տան մէջ, փողոցին վրայ մեծակ սենեակ մը վարձած էին, երկու անկողինով և համեստ կահ-կարասիով:

– Շատ անախորժ օր մը անցուցինք, – ըսաւ Տրդատ՝ բազմոցին վրայ նստելով:

– Սանաւանդ այդ լրտեսին հետ մեր հանդիպումը շատ սրտնեղութիւն պատճառեց ինծի:

– Բարեբախտաբար ետևնուս չեկաւ:

– Այո՛, բայց շատ կասկածոտ բաժնուեցաւ մենէ: Իցի՛ւ թէ միասին մինչև Ղալաթիա երթայինք և հոն վարպետութեամբ կը բաժնուէինք իրմէ... մէկէն ի մէկ միտքերնիս փոխելը աղէկ չեղաւ...

– Աղէկ կամ գէշ, աս աս է, – պատասխանեց Տրդատ, – պարագ տեղը չէի կրնար մինչև Ղալաթիա երթալ ու յետոյ ետ դառնալ... մանաւանդ որ շատ ժամանակ պիտի կորսնցնէինք, և այդ միջոցին Փարամազը կրնար գալ և մեզի փնտռել այստեղ ու չգտնել:

– Ի՛նչ ցաւալի բան, որ այդ լրտեսը մեր բոլոր ընկերները կը ճանչնայ կոր, – դիտել տուաւ Սուրէն:

– Եթէ ո՛չ ամէնը, գոնէ Պուկարիա գտնուողներէն շատ կը ճանչնայ, – ըսաւ Տրդատ, – այս սրիկան հոն գտնուած ատենը

ինքզինք չափազանց Հայրենասէր ցոյց կուտար և մեր քովէն չէր բաժնուեր: Օր մըն ալ յանկարծ անյայտ եղաւ, յետոյ իմացանք, որ Պոլիս եկեր ու լրտեսութիւն կ'ընէ եղեր:

Երկու ընկերները, այսպէս, իրենց խօսակցութիւնը շարունակեցին բաւական երկար ատեն:

Միջոց մը տանը դուռը զարնուեցաւ:

– Արդեօք եկա՞ւ, – ըսաւ Տրդատ:

Քիչ մը ետքը ոտնաձայն մը լսուեցաւ սանդուխին վրայ, և վայրկեան մը ետքը սենեակին դուռը բացուեցաւ, ու սեմին վրայ երեցաւ Փարամազ:

– Վերջապէ՛ս, – գոչեց Տրդատ ուրախութեամբ:

Փարամազ ներս մտաւ, իրեն կը Հետեւէր Արծրունի:

– Ուրեմն Մարտիրը տեսա՞ք, – Հարցուց Տրդատ:

– Այո՛, – պատասխանեց Փարամազ, – նոյնիսկ եթէ չտեսնէինք՝ մենք անպատճառ պիտի գայինք... որովհետեւ շատ կարևոր դէպքեր կան:

– Ծիշդ ատոնց Համար է, որ կ'ուզէինք ձեզ տեսնել:

– Ուրեմն դո՞ւք ալ իմացաք:

– Այո՛, անորոշ բաներ մը իմացանք, բայց կ'ուզէինք, որ կացութեան մասին կատարեալ տեղեկութիւն մը ունենանք:

– Կացութիւնը լաւ չէ, ահա ճշմարտութիւնը, – ըսաւ Փարամազ՝ աթոռի մը վրայ տեղաւորուելով:

Յետոյ գրպանէն ծխախոտի տուփը Հանեց և սկսաւ սիկառէթ մը պլորել իր նիհար ու ոսկրուտ ձեռքերով:

– Պատմէ՛, տեսնեք, քու գիտցածդ, – ըսաւ՝ խօսքը Տրդատին ուղղելով:

Տրդատ մի առ մի պատմեց ինչ որ լսած էր Սեխոյէն, Մարտիրկէն և լրտեսէն:

– Յայտնի է, որ մեր մէջ դաւաճան մը կայ, – գոչեց Սուրէն, երբ Տրդատ խօսքը աւարտեց:

– Անկասկած, – ըսաւ Փարամազ:

– Պէտք է աշխատիլ այդ դաւաճանը գտնելու, – աւելցուց երիտասարդը:

– Պէտք չի կայ այդպիսի մի աշխատութեան, – պատասխանեց Փարամազ պաղարիւնով:

– Ինչո՞ւ Համար...

– Որովհետեւ այդ դաւաճանը գտնուած է:

– Ո՞վ է, – գոչեց Տրդատ:

– Արշաւիր Սահակեան, – պատասխանեց Փարամազ, – կամ ուրիշ անունով՝ Արթիւր Եսսեան:

– Եւ այս իրողութիւնը դեռ նո՞ր երևան ելաւ:

– Բաւական ժամանակէ ի վեր կասկածներ կային, բայց փաստեր և ապացոյցներ կը պակսէին, իսկ Հիմա, այսինքն երէկուրնէ ի վեր, գրեթէ ամէն բան գիտեսք:

– Ուրեմն պատմէ՛, տեսնեք, մանրամասնօրէն, գիտես, որ ես ուղղակի Ամերիկայէն եկած եմ և գրեթէ բանէ մը տեղեկութիւն չունիմ, ինչպէս նաև մեր ընկերը՝ Սուրէն:

– Լաւ ուրեմն, այս Արշաւիրը, չեմ գիտեր ինչպէս, կը յաջողի Եգիպտոսի Հնչակեան մասնաճիւղին կողմէ պատգամաւոր ընտրուիլ մեր Քօսթանցայի քօնկրէսին...

– Ի՞նչպէս կ'ըլլայ, որ Եգիպտոսի ընկերները ուրիշ մեկը չեն գտներ ղրկելու և այդ դաւաճանը պատգամաւոր կ'ընեն:

– Այդ սրիկան ա՛յնքան վարպետ է, որ կը յաջողի խաբել էն խելացի կարծուածներն իսկ: Այսպէս ուրեմն, իբրև պատգամաւոր ներկայ կը գտնուի մեր բոլոր ժողովներուն և յետոյ կ'երթայ կարգ մը յայտնութիւններ ընել Տէտէ Աղաճի թրքական Հիւպատոսին, որ զանոնք կը Հաղորդէ Պոլիս, ներքին գործոց նախարարութեան. այս վերջինն ալ իր կարգին ոստիկանութեան իմաց կուտայ:

– Բայց այն ատեն ձեր ամենուն կեանքը վտանգի մէջ է, ինչպէս նաև մերինը, – գոչեց Տրդատ:

– Կ'երևայ, որ Արշաւիր ամբողջ գաղտնիքը չէ Հաղորդած, – դիտել տուաւ Փարամազ, – եթէ ոչ՝ մինչև Հիմա ոստիկանութիւնը պէտք էր, որ մեզի ձերբակալեր և Հարցաքննութեան ենթարկեր:

– Բայց եթէ այսօր չէ Հաղորդած, վաղը կրնայ Հաղորդել:

– Ծիշդ ահա ա՛յդ է վտանգը:

– Եւ դուք այդ վտանգին առաջը առնելու Համար ի՞նչ կը խորհիք ընել:

– Դաւաճաններու մասին միակ զէնք մը ունինք մենք...

— Ուրեմն գործածենք այդ զէնքը առանց ժամանակ կորսնցընելու,— գոչեց Սուրէն,— որովհետեւ վաղը թերեւս շատ ուշ է:

— Մեր ալ նպատակն այն է...

— Բայց խնդիր մը կայ,— դիտել տուաւ Տրդատ,— զինքը պատժելու համար նախ պէտք է իր հետքը գտնել... Հիմա ո՞ւր է այդ դաւաճանը, միշտ Պուլկարիա՞ կը գտնուի...

— Արշաւիր Պուլիս կը գտնուի,— ըսաւ Փարամազ:

— Պուլիս, և դեռ թող կուտանք, որ ապրի՞...

— Դեռ երէկ իմացանք հոս ըլլալը... մեր ընկերներէն մէկը զինքը տեսեր է ճամբան, թէ և ծպտուած ու կերպարանափոխ եղած է, բայց կրցեր է ճանչնալ, նոյնիսկ բաւական հետապնդեր է զինքը, բայց յետոյ հետքը կորսնցուցեր է... Հիմա խնդիրը իր հետքը գտնելուն վրայ է:

— Եւ ասիկա բաւական դժուար գործ մըն է,— դիտել տուաւ Արծրունի, որ մինչև այն ատեն լուռ մնացած էր,— որովհետեւ Արշաւիր շատ կասկածոտ և միանգամայն շատ ալ ճարպիկ է. ամէն միջոց պիտի գործածէ մուլթին մէջ մնալու և իր դաւաճանութիւնները շարունակելու համար անպատիժ...

— Ուրեմն թեւերնիս ծալած պիտի սպասենք, որ ամէնքս ալ մէկիկ-մէկիկ ձերբակալե՞լ տայ...

— Ընդհակառակը, այսօրուրէն իսկ մեր ընկերները սկսած են իր հետքը փնտռել,— պատասխանեց Փարամազ:

— Ըստ իս, ժամ առաջ պէտք է, որ մեր ծրագիրը գործադրենք,— գոչեց Սուրէն,— երբ տակաւին ամէն բան հրեւան ելած չէ:

— Դժբախտաբար մեր միւս ընկերները այդ կարծիքը չունին,— ըսաւ Փարամազ:

— Ի՞նչ, կ'ուզեն, որ յետաձգենք գործը, մինչև որ ամէն բան մէջտեղ ելլէ...

— Ոչ թէ միայն կ'ուզեն, որ յետաձգենք, այլ նոյնիսկ կը փափաքին, որ բոլորովին հրաժարինք մեր ծրագիրէն:

— Այդ անկարելի է,— գոչեց Սուրէն,— այսչափ զոհողութիւններէ, այսչափ աշխատութիւններէ ետքը չենք կրնար մեր ծրագիրէն հրաժարիլ, մանաւանդ որ որոշումը պաշտօնապէս տրուած է, և մենք պատասխանատու ենք մեր ընկերներուն առջև:

— Մեր այստեղի ընկերները ժողովին որոշումները օրինաւոր չեն նկատեր և ասոր համար չեն ուզեր համակերպիլ անոր:

— Այն ատեն թող իրենք մէկ կողմ քաշուին ու բանի մը չխառնուին, և մենք մեր պատասխանատուութեան ներքե կ'ընենք ամէն բան:

— Ծիչդ ես ալ նոյն բանը ըսի իրենց,— պատասխանեց Փարամազ:

— Իսկ դուն, ընկեր Արծրունի, ի՞նչ կարծիք ունիս այս խընդրի մասին,— հարցուց Տրդատ:

— Իմ կարծիքս ծանօթ է Փարամազին,— պատասխանեց Արծրունի:

— Նա ևս ծրագիրը չգործադրելու կողմն է,— բացատրեց Փարամազ:

— Ուրեմն դո՞ւն ալ չես ընդունիր Քօսթանցայի քօնկրէսին օրինաւորութիւնը:

— Այո՛, քանի որ առանց մեզի հրաւէր ըլլալու գումարուած է,— պատասխանեց Արծրունի:

Եւ ահա չորս ընկերներուն մէջ բուռն վիճաբանութիւն մը սկսաւ այդ քօնկրէսին օրինաւորութեան կամ ապօրինութեան մասին:

Բնականաբար ընդդիմախօսները չկրցան զիրար համոզել, և ամէն մէկը իր կարծիքին մէջը ամրացած մնաց:

Ի վերջոյ Փարամազ ոտքի ելաւ և ըսաւ Արծրունիին դառնալով՝

— Գնա՛նք...

— Իսկ Արշաւիրի մասի՞ն,— հարցուց Սուրէն,— ի՞նչ միջոցներ ձեռք պիտի առնենք:

— Մինչև որ իր հետքը չգտնենք՝ կարող չենք ո՛չ մի բան անելու,— պատասխանեց Փարամազ:

— Եւ եթէ մինչև այն ատեն այդ սրիկան իր մատնութիւնները շարունակէ՞:

— Ի՞նչ կ'ուզես, որ ընենք... պէտք է կարելի եղածին չափ զգոյշ վարուիլ, ուրիշ ոչինչ:

— Կարելի չէ՞ յարաբերութիւն հաստատել լրտեսներու հետ և անոնցմէ իմանալ օրը օրին, ինչ որ կ'անցնի-կը դառնայ ոս-

տիկանատան մէջ... նոյնիսկ անոնց միջոցով իմանալ նաև Արշալիրի թաքստոցը:

— Ատ շատ վտանգաւոր խաղ է,— դիտել տուաւ Փարամազ,— ի՞նչպէս կարելի է վստահիլ այդ տեսակ անձերու:

— Դրամով կարելի է փորձել ամէն բան և յաջողիլ... առաջին անգամ չէ, որ լրտեսները օգտակար եղած են մեզ վարձատրութեան փոխարէն:

— Այգ բանը թերևս Տրդատ կրնայ փորձել,— դիտել տուաւ Արծրունի:

— Ե՞ս, ինչպէ՞ս,— հարցուց Տրդատ:

— Քիչ մը առաջ լրտեսի մը պատմութիւնը ըրիր, որուն հետ այսօր իսկ տեսակցութիւն մը ունեցած ես և որ Պուլկարիայէն կը ճանչնաս եղեր... կարելի չէ՞ այդ մարդը որսալ:

Տրդատ պահ մը մտածեց, յետոյ ըսաւ.

— Բոլորովին անկարելի բան մը չէ ընկեր Արծրունիի ըսածը, այդ լրտեսը իրաւ է, որ Պուլկարիոյ մէջ մօտէն ճանչցած եմ, երբ տակաւին ծախուած չէր թուրք կառավարութեան, ներքնապէս գէշ մարդ մը չէր և եթէ այսօր այդ պաշտօնը յանձն առած է՝ ապահովաբար նիւթական անձկութեան հետեւանքով է...

— Ուրեմն դրամ տալով իրեն՝ կրնանք մեզի ծառայեցնել:

— Եթէ կ'ուզէք, այդ փորձը ընեմ,— առաջարկեց Տրդատ:

— Այո՛, փորձէ մի անգամ,— պատասխանեց Փարամազ,— միայն թէ մեծ զգուշութեամբ պէտք է վարուիլ...

— Այդ մասին կրնաս ապահով ըլլալ:

— Ուրեմն ե՞րբ կրնաս տեսնել զինքը:

— Վաղը, եթէ պէտք ըլլայ, գիտեմ, թէ ընդհանրապէս ուր տեղուանքը կը գտնուի:

— Խոստացիր իրեն, ինչ որ պահանջէ, նոյնիսկ կանխավճար մըն ալ տո՛ւր, պայմանով, որ մեզի սխալ տեղեկութիւն չի տայ:

— Ատիկա առաջին փորձին կրնանք հասկնալ,— պատասխանեց Տրդատ,— հիմա նախ և առաջ ի՞նչ տեղեկութիւն պիտի ուզենք իրմէ:

— Պէտք է մեզի ցոյց տայ Արշալիրի թաքստոցը, մեզի համար, այս միջոցիս, ամենէն կարևորը այդ է,— ըսաւ Փարամազ:

— Ուրեմն վաղն իսկ կը ջանամ զինքը տեսնել:

Փարամազ և Արծրունի մեկնեցան՝ իրենց ընկերները առանձին թողլով:

ԳԼՈՒԽ ԺԵ ՄԹՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Այն լրտեսը, որուն հետ Տրդատ որոշած էր յարաբերութեան մտնել, շատ վարպետորդի ու վտանգաւոր տիպար մըն էր:

Բնիկ հաճընցի, պատանեկութեան հասակին եկած էր Պուլխա բախտ փնտռելու: Իր անունն էր Արշակ Ալլըեան, և կը պատկանէր հաճընցի ընտանիքի մը, որ լավ համբաւ չէր վայելեր իր քաղաքին մէջ: Արշակ հազիւ նախնական կրթութիւն մը առած էր իր ծննդավայրի վարժարանին մէջ, բայց յետոյ ինքնաշխատութեամբ յաջողած էր բաւական յառաջդիմել թուրքերէնի մէջ, որ արդէն իր մայրենի լեզուն էր, մինչդեռ հայերէնը սորված էր վարժարանը ու զայն կը խօսէր օտարոտի շեշտով մը:

Պուլխա, քանի մը տարի, հոս ու հոն զանազան գործեր կատարած էր՝ առանց յաջողելու դիրք մը չի նկատել իրեն համար: Թէև ի բնէ ուշիմ և գործունեայ, սակայն իր անուղղամտութիւնն, որ մինչև նենգամտութեան կը հասնէր, արգելք եղած էր իրեն յաջողելու որևէ գործի մէջ:

Իր համբաւը այնքան աղարտած էր Պուլխոյ մէջ, որ ի վերջոյ, ստիպուեցաւ արտասահման երթալ՝ գործունէութեան նոր և՛ անծանօթ ասպարէզ մը գտնելու համար:

Օտար լեզուներու անտեղեկ՝ որոշեց Պուլկարիոյ մէջ փորձել իր բախտը, ուր թուրքերէնն ու հայերէնը կրնային քիչ-շատ բաւել իրեն:

Հո՛ն ալ, սակայն, յաջողութիւնը չժպտեցաւ իրեն: Երեք տարի անցուց հոն, օրը օրին ապրելով, մերթ խոստովանելի ու մերթ անխոստովանելի միջոցներով: Այդ երեք տարուան շրջանին առիթ ունեցաւ մօտէն շփման մէջ մտնելու հայ յեղափոխական երիտասարդներու, որոնք իրմէ զգուշանալու որևէ պէտք չէին զգար, քանի որ Սահմանադրութեան վերահաստատումէն ի վեր այլևս գաղտնի գործունէութիւն չունէին, և լրտեսութիւնը անգործութեան դատապարտուած էր:

Բայց ահա Պալքանեան պատերազմէն անմիջապէս յետոյ Հայկական նահանգներու բարենորոգումներու Հարցը մէջտեղ դրուեցաւ: Թուրք իթթիհատական կառավարութիւնը սկսաւ կասկածանքով վերաբերուիլ Հայերու Հանդէպ և անոնց գործունէութեան մասին գաղտնի Հսկողութեան մը ձեռնարկել, այնպէս որ լրտեսութիւնը դարձեալ ասպարէզ մը դարձաւ:

Արշակ ուզեց օգտուիլ առիթէն, մանաւանդ որ ապրուստի ուրիշ միջոցները կը պակսէին իրեն: Ու այսպէս, օր մը, Վառնայէն շոգենաւ մտաւ և եկաւ Պոլիս, ուր իր ծառայութիւնը առաջարկեց ոստիկանութեան:

Այդ միջոցին կառավարութիւնը ամէն կարգի Հայ խաֆիէներու պէտքը զգացած էր արդէն, և գրկաբաց ընդունուեցաւ ոստիկանութեան կողմէ, և իրեն մասնաւորաբար պաշտօն յանձնուեցաւ Հսկել Հայ յեղափոխականներու գործունէութեան վրայ:

Արշակ իր պաշտօնը կատարեց խղճամտօրէն և մէկ քանի ժուռնալներ տուաւ, որոնք ուշադրութիւն գրաւեցին ու իր դիրքը ամրապնդեցին:

Օր մըն ալ ոստիկանապետը իր քովը կոչեց զինքը և ըսաւ.

– Արշակ էֆէնտի, մենք ձեր գործունէութենէն մինչև այսօր գոհ մնացած ենք և մեր այս գոհունակութիւնը քանիցս յայտնած ենք: Այսօր մեր քու վրադ ունեցած վստահութեան մէկ նոր ապացոյցը պիտի տանք շատ կարևոր գործ մը յանձնելով քեզի: Վստահ եմ, որ այս անգամ ևս Հաւատարմօրէն պիտի կատարես քու պարտականութիւնդ:

Արշակ այս գովեստներէն զգածուած շնորհակալութիւն յայտնեց և ըսաւ.

– Պատրաստ եմ ձեռքէս եկածը ընել ձեզի օգտակար ըլլալու Համար:

– Հիմա բացատրեմ ինչիւրը:

– Ձեզ մտիկ կ'ընեմ:

– Ամենաստոյգ աղբիւրէ լուր առած ենք, թէ մեծ դաւադրութիւն մը կը պարտրաստուի կառավարութեան դէմ:

– Կառավարութեան դէմ, – գոչեց լրտեսը խոռված դէմքով մը:

– Ինչո՞ւ այդչափ կը գարմանաս, – Հարցուց ոստիկանապետը:

– Որովհետեւ կը կարծէի, թէ Մահմուտ Շէֆքէթ փաշայի սպանութեան առթիւ ձեռք առնուած խիստ միջոցները այլևս վերջացուցած են կառավարութեան դէմ դաւադրութիւնները:

– Բայց իմ խօսքս մերիններուն կողմէ կազմակերպուած դաւադրութեան մը մասին չէ... փա՛ռք Աստուծոյ, այլևս այդ մասին վախ չունինք: Այս անգամ դաւադրութիւնը ձեր կողմէ պատրաստուած է:

– Մե՞ր կողմէն... չեմ հասկնար, թէ ինչ ըսել կ'ուզէք, պէ՛յ էֆէնտի:

– Այս անգամ Հայերն են, որ կը դաւեն...

– Անհաւատալի՛ բան...

– Ես ալ նոյնը պիտի ըսէի, եթէ ապացոյցներ չըլլային այդ մասին:

– Բայց Հայերը ի՞նչ պէտք ունին դաւելու կառավարութեան դէմ:

– Ատիկա չեմ գիտեր... կ'երևայ, որ պարզապէս գործիք կ'ըլլան կոր քանի մը պետութեան թշնամի անձերուն ձեռքը, որոնք Եւրոպա նստած՝ կը փորձեն երկիրը խռովութեան մատնել պըղտոր ջուրի մէջ ձուկ որսալու Համար: Բայց խնդիրը այդ չէ՛. իրողութիւնը այն է, որ այս միջոցիս Պոլսոյ մէջ դաւադրութիւն մը կը սարքուի կոր սպաննելու Համար կառավարութեան գլուխը գտնուողները...

– Չըսիք, թէ ո՞ր Հայերն են այդ ոճիրը պատրաստողները:

– Բնականաբար յեղափոխական կուսակցութիւններէն մէկը կամ աւելի բացայայտ խօսելու Համար՝ Հնչակեան կուսակցութիւնը:

– Թօճա՛ֆ բան, – դիտել տուաւ լրտեսը:

– Այդ կուսակցութեան անդամներէն մարդ կը ճանչնա՞ս:

– Այո՛, – պատասխանեց լրտեսը, – միայն թէ Հնչակեան կուսակցութիւնը մէկ քանի մասերու բաժնուած է, որոնք զատ-զատ կը գործեն և իրարու ալ չափազանց հակառակ են:

– Այդ մանրամասնութիւնները գիտեմ, – պատասխանեց ոստիկանապետը թեթև մը ժպտելով, – իմ խօսքս Սապահ Կիլի Հնչակեաններուն Համար է:

– Հասկցայ, – ըսաւ լրտեսը:

– Այդ խուճբին Պոլսոյ անդամները կը ճանչնանք,– շարունակեց ոստիկանապետը,– բայց մեր փնտառները անոնք չեն, անոնք արդէն մեր ձեռքին տակն են, և ուզած ատեննիս կրնանք իրենց օձիքէն բռնել... ասկէ զատ մեր ստացած տեղեկութիւններուն նայելով՝ անոնք մաս չունին այդ դաւադրութեան մէջ, այլ նոյնիսկ հակառակ են եղեր... բայց դուրսէն ուրիշ հնչակեաններ եկեր են, և գործը անոնց ձեռքով պիտի կատարուի. ահա՛ այդ մարդիկն է, որ պէտք է գտնել և երևան հանել:

– Իրենց անունները գիտէ՞ք:

– Ո՛չ, նոյնիսկ ապահով չենք, թէ հոս կը գտնուին, բայց եթէ հոս ալ չեն, պիտի գան, ասոր տարակոյս չի կայ: Հիմա քու գործդ պիտի ըլլայ անոնց հետքը գտնել...

– Այսօրուրնէ խուզարկութեան պիտի սկսիմ,– պատասխանեց լրտեսը,– և վստահ եղէք, որ ձեռքէս եկածը պիտի ընեմ, որպէսզի յաջողիմ այդ ապերախտները արդարութեան յանձնելու:

– Ես ալ կը խոստանամ քեզ պէտք եղածին պէս վարձատրել:

– Ծնորհակալ եմ, պէ՛յ էֆէնտի:

– Ուրեմն, քեզ նայիմ, շուտով գործի սկսէ՛: Եւ փոքրիկ հետք մը գտնելուդ պէս եկուր ինծի իմացուր: Ես ալ, իմ կողմէս, եթէ նոր տեղեկութիւն մը առնեմ, անմիջապէս քեզի կ'իմացնեմ:

Արշակ ոստիկանապետին քովէն մեկնեցաւ գոհ տպաւորութեան մը ներքեւ:

Վերջապէս առիթը կը ներկայանար կարևոր գործ մը կատարելու և դիրքի մը տիրանալու:

«Եթէ կարենամ յաջողիլ, ապագաս ապահովուած է»,– կը մտածէր:

Ու այդ օրէն սկսած Արշակ իր բոլոր եռանդն ու ճարպիկութիւնը նուիրեց այս գործին:

Ահա այսպիսի տրամադրութեան ներքեւ գտնուող լրտեսի մը հետ էր, որ Տրդատ պիտի փորձէր յարաբերութեան մտնել և զայն իրենց շահերուն ծառայեցնել:

Արշակ, որ Տրդատի հետ տեսակցելէն ի վեր սկսած էր կասկածիլ անոր մասին, որոշած էր լրջօրէն հետապնդել զայն:

Հետեւեալ օրը կրկին քանի մը անգամ անցաւ-դարձաւ այն գինետան առջևէն, ուր տեսած էր Տրդատը Սուրէնի հետ: Բայց Տրդատը չէր երևցած:

Ի վերջոյ որոշեց ներս մտնել և սպասել:

Անտարբեր ձևով մը գինեպանին հարցուց, թէ նախորդ օրուան իր երկու բարեկամները եկա՞ծ էին:

– Այսօր չերևցան,– պատասխանեց յոյն գինեպանը:

– Ընդհանրապէս ամէն օր կուգա՞ն,– հարցուց լրտեսը:

– Երբեմն կ'ըլլայ, որ չեն գար,– պատասխանեց գինեպանը:

Լրտեսը սեղանի մը առջև նստաւ և գինի մը ապսպրեց:

Հազիւ թէ գինիին գաւաթը պարպած էր, երբ նոր յաճախորդ մը ներս մտաւ և լրտեսը տեսնելով՝ իսկոյն դեպի անոր սեղանը ուղղուեցաւ:

– Վա՛յ, էֆէնտի՛մ, մաշալլահ, ինչպէ՞ս էք, աղէկ էք, աս որչա՛փ ատեն է ձեզ տեսնելու բարեբախտութիւնը չէի ունեցած,– գոչեց մէկ քանի թէմէնահներ ընելով:

Այս նորեկը, թերևս ընթերցողները գուշակեցին, նույնինքն մեր հին ծանօթ Աստիկ էֆէնտի Մարկոսեանն էր:

Առանց հրաւերի սպասելու նստաւ Արշակի դէմը:

– Ի՞նչ կը խմեք կոր,– հարցուց:

– Գաւաթ մը գինի խմեցի:

– Ծանրմ, գինին ալ խմելու բա՞ն է, մարդուս գլխին կը զարնէ...

– Ծարաւ էի, հատ մը խմեցի:

– Քօնեաքը կեցած իքէն գինի կը խմուի՞...

Եւ գինեպանին դառնալով՝ հրամայեց.

– Մեզի երկու հատ աղէկ քօնեաք բե՛ր:

– Գլխուս վրայ,– ըսաւ գինեպանը:

– Ի՞նչ քօնեաք ունիս...

– Պատուական Մէթաքսա:

– Մէթաքսոս խմուելիք բան չէ, Մարթէլ չունի՞ս:

– Ունիմ, պէ՛յս...

– Մեզի երկու հատ Մարթէլ բե՛ր:

– Շատ աղէկ... միայն թէ Մարթէլը կրկին գինն է:

– Քեզի գինը հարցնող կա՞յ, թօհաֆ բան,– գոչեց Աստիկ սրտնեղած դէմքով,– աս ի՛նչ զարմանալի մարդիկ էք...

– Կը ներէք, էֆէնտի՛ս,– ըսաւ գինեպանը խոնարհու-
թեամբ,– երբեմն յաճախորդներ կան, որոնք, եթէ գինը առա-
ջուց չըսես, ետքը խնդիր կը հանեն:

– Մենք այդ տեսակ յաճախորդներէն չենք... ասիկա հասկը-
նալու էիր, առաջին անգամ չէ, որ Մարթէլ կը խմենք կոր... խա-
նութեան ըսածդ յաճախորդը ճանչնալու է և անոր համեմատ
հետը վարուելու է...

– Կը ներէք, պէ՛յս...

– Իրաւունք չունի՞մ, Արչա՛կ էֆէնտի:

– Անշուշտ, իրաւունք ունիք,– պատասխանեց լրտեսը:

Քօնեաքը ի մի ումպ պարպելէ ու լրտեսին ալ խմցնելէ ետ-
քը կրկին գաւաթները լեցնել տուաւ, յետոյ գրպանէն սիկառէ-
թի տուփը հանեց, հատ մը Արչակին հրամցուց, հատ մըն ալ
ինք վառեց և ըսաւ.

– Ի՞նչ կայ, չի կայ, տեսնենք...

– Նոր բան մը չի կայ, Աստի՛կ էֆէնտի:

– Անկարելի է, որ ձեր քովը նորութիւն չգտնուի, դուք ա-
նանկ գործ մը ունիք, որ միշտ նորութիւններու մէջ կ'ապրիք:

– Մեր գիտցածները չեն կրնար ձեզ շահագրգռել,– պատաս-
խանեց լրտեսը:

– Ես խմբագիր եմ, ամէն բանով կը շահագրգռուիմ, մանա-
ւանդ թէ կրնայ ըլլալ, որ քեզի համար կարեւորութիւն չունեցող
լուր մը ինծի համար շատ կարեւորութիւն ունենայ:

– Անանկ է, դուք ճանճը ուղտի չափ մեծցնելու արհեստը
գիտէք,– ըսաւ լրտեսը խնդալով:

– Անկէց զատ, իմացածիս նայելով, այս օրերս բաւական ի-
րարանցումի մէջ էք եղեր... շատ կարեւոր խնդիր մը կայ եղեր...

– Ի՞նչ խնդիր:

– Մեծ դաւադրութեան պէս բան մը... Ռուճանիոյ մէջ պատ-
րաստուեր է... լուրն ալ դեռ նոր հոս հասեր է:

Լրտեսը ձև մը ըրաւ, որով կ'ուզէր հասկցնել, թէ այդ դա-
ւադրութենէն տեղեկութիւն չունէր:

– Պարապ տեղը ինչ մի՛ ծածկեր,– ըսաւ Աստիկ ժպտելով,–
ապահովութեան տնօրէնը իմ բարեկամս է, ամէն օր մէկտեղ
ենք, ու ինչ բան մը չի ծածկեր... աղէկ միտքս ինկաւ, եթէ որևէ

բանի մը պէտք ունենաս՝ ինծի ըսէ, ես կը խօսիմ իրեն... դեռ ե-
րէկ միասին էինք... իմ մէկ խօսքս երկուք չընեմ...

– Ծնորհակալ եմ, Աստի՛կ էֆէնտի:

– Ծնորհակալութեան բան չի կայ... երէկ ինք խօսք բացաւ
այդ դաւադրութեան մասին... Հնչակեանները կը պատրաստեն
կոր եղեր... տե՛ս, տեղն ի տեղօք կը խօսիմ կոր:

– Անանկ բաներ մը կայ, բայց դեռ որոշ բան մը չենք գի-
տեր,– ստիպուեցաւ խոստովանիլ Արչակ:

– Տեսա՞ր, որ շիտակ կը խօսիմ,– գոչեց Աստիկ:– Ապահո-
վութեան տնօրէնը շատ մտատանջ կ'երևար կոր...

– Բնական է, որ մտատանջ պիտի ըլլայ, որովհետև եթէ բան
մը պատահի՝ ուղղակի ինքն է պատասխանատուն: Միայն թէ
տեսնենք, որ իրաւցընէ այդպիսի դաւադրութիւն մը գոյութիւն
ունի՞, թէ՞ պարզապէս եղածը զրպարտութիւն մըն է:

– Ճիշդ ես ալ նոյն բանը ըսի իրեն, բայց ինք պատասխա-
նեց, որ ձեռքերնին դրական ապացոյցներ կան... վերջապէս այս
գործը շատ կարեւոր բան մըն է, և եթէ կարենաս հետք մը գտ-
նել և իրական ծառայութիւն մը մատուցանել իրենց, ա՛լ գործդ
եղած է:

– Դժբախտաբար շատ դիւրին բան չէ... մէջտեղը որևէ հետք
չի կայ դեռ, մութին մէջ կ'երթանք կոր առանց գիտնալու, թէ
ո՛ւր կը դիմենք:

– Բայց Պոլիս գտնուող Հնչակեանները ամէնքն ալ ծանօթ
են...

– Այո՛, սակայն խնդիրը անոնց վրայ չէ, այլ դուրսէն եկող
կամ գալիք անծանօթ անձերու վրայ:

Աստիկ կրկին քօնեաք բերել տուաւ:

– Ալ բաւական է,– առարկեց լրտեսը:

– Այս քօնեաքը լաւ տեսակ է, չվնասեր,– դիտել տուաւ Աս-
տիկ:

– Այո՛, բայց եթէ շատ խմենք՝ գլուխնուս կը զարնէ:

– 4-5 հատին խօսքը չըլլար:

Յետոյ Աստիկ գինեպանը ղրկեց, որպէսզի իբրև մէզէ քիչ մը
շաքարեղէն և պտուղ բերէ: Եւ կրկին իր խօսակցութիւնը շա-
րունակեց նոյն նիւթին վրայ: Մեծ գովեստով խօսեցաւ «իր բա-
րեկամ»ին՝ ապահովութեան տնօրէն Պէտրի պէյի մասին:

– Շատ շնորհքով, շատ ազնիւ, շատ քաղաքավար մարդ մըն է,– ըսաւ,– օր մը քեզի տանիմ իրեն ներկայացնեմ:

– Պէտք չի կայ, զիս արդէն մօտէն կը ճանչնայ,– պատասխանեց Արշակ:

– Անշուշտ պէտք է, որ ճանչնայ, բայց բարեկամի մը կողմէ ներկայացուիլն ալ ուրիշ օգուտ ունի:

Քանի մը բռնակէն ի վեր լրտեսը գլուխը ծռած ուշադիր դէպի փողոցը կը նայէր՝ առանց շատ ականջ կախելու իր խօսակցին:

Աստիկ նշմարեց այս պարագան:

– Ի՞նչ կայ, մէկո՞ւն կը նայիս,– Հարցուց:

– Այո՛... ծանօթ մը կ’անցնէր կոր, ես ալ զինքը տեսնել կ’ուզէի, հոն դէմը կեցեր է...

– Գինեպանին ըսենք, թո՛ղ ներս կանչէ:

– Չէ՛, աւելի աղէկ է, որ ես երթամ... բայց պէտք չի կայ, արդէն դէպի հոս կուգայ կոր:

Արդարեւ, նոյն միջոցին ներս մտաւ Տրդատ:

Երիտասարդը դուրսէն տեսած էր լրտեսը, բայց նշմարելով, որ քովը անծանօթ մը նստած էր, նախ չէր ուզած ներս մտնել, բայց յետոյ միտքը փոխած էր:

– Հրամմէ՛, միւսի՛ւ Տրդատ,– ըսաւ Արշակ նորեկին:

– Թերևս ձեզի անհանգիստ կ’ընեմ,– դիտել տուաւ երիտասարդը:

– Չէ՛, չէ՛, մօտ եկուր:

– Թերևս առանձին խօսք մը ունէիք:

– Խօսք մըն ալ չունինք, պօշլաֆ կ’ընէինք,– պատասխանեց

Արշակ:

Տրդատ մօտեցաւ իրենց սեղանին:

Լրտեսը փութաց զինքը ներկայացնել Աստիկին, որ քաղաքավար խօսքերով ու թէմէնահաներով պատուասիրեց նորեկը և իսկոյն հրամայեց, որ երեք գաւաթ քօնեաք բերեն:

Եւ սակայն Աստիկի ներկայութիւնը Տրդատի գործին բնաւ չէր եկած: Անիկա կը փափաքէր առանձին տեսակցութիւն մը ունենալ լրտեսին հետ:

– Մ’ըր կ’երթայիր այսպէս,– Հարցուց Արշակ երիտասարդին:

– Հոս կուգայի... յուսալով, որ քեզ հոս կը գտնեմ:

– Ինձի՞ կը փնտռէիր,– Հարցուց լրտեսը զարմացած:

– Այո՛,– պատասխանեց Տրդատ ամենայն լրջութեամբ:

Այս հաստատական պատասխանը, որ բոլորովին անկեղծ շեշտով մը ըսուած էր, ա՛լ աւելի զարմացուց լրտեսը, որ չէր կրնար գուշակել, թէ ի՞նչ պատճառաւ այդ երիտասարդը կրնար իրեն պէտք ունենալ, մինչ ինք այնպէս կ’ենթադրէր, թէ ան աւելի փախուստ տալ կ’ուզէր իրմէ:

– Բայց ինչպէ՞ս գուշակեցիր, որ զիս հոս պիտի գտնես,– Հարցուց,– ես դիպուածով միայն եկայ այստեղ:

– Ստքէս այնպէս անցաւ, որ քեզ այստեղ պիտի գտնեմ,– պատասխանեց Տրդատ խնդալով,– տեսակ մը նախազգացում, եթէ կ’ուզես...

– Որ ճիշդ ելաւ,– ըսաւ Աստիկ:

Եւ այս առթիւ նախազգացումի ուրիշ դէպքեր յիշեց, որ պատահած էին իրեն:

Բայց այս խօսակցութիւնը բնաւ չէր շահագրգռեց Տրդատը, որ կը փափաքէր ժամ առաջ տեսակցութիւն մը ունենալ Արշակին հետ:

Աստիկ կը շարունակէր քօնեաքի գաւաթները պարպել և ստիպել միւսներն ալ, որ իր օրինակին հետեւին:

Ի վերջոյ Տրդատ լրտեսին դարձաւ և ըսաւ.

– Կը փափաքէի քեզի հետ առանձին տեսակցութիւն մը ունենալ:

– Շատ աղէկ,– պատասխանեց միւսը,– ե՞րբ կ’ուզէք, որ տեսնուինք:

– Որչափ շուտ ըլլայ, այնչափ աղէկ է:

– Ուրեմն հիմա:

– Բայց կը տեսնեմ, որ դուք զբաղած էք այստեղ:

Աստիկ, որ այս խօսքերը լսած էր, միջամտեց.

– Եթէ ձեր խօսակցութեան արգելք կ’ըլլամ, ես կը մեկնիմ:

– Ո՛չ,– պատասխանեց Տրդատ,– անհանգիստ մի՛ ըլլաք, ետքն ալ կրնանք տեսնուիլ:

– Կ’երևայ, որ շատ գաղտնի է ձեր խօսքը...

– Ո՛չ թէ շատ գաղտնի, այլ բոլորովին անձնական,– պատասխանեց Տրդատ:

Աստիկ վերջին անգամ մըն ալ լեցնել տուաւ գաւաթները, յետոյ հաշիւը մաքրեց և մեկնեցաւ:

– Վերջապէս ձեռքէն ազատեցանք,– գոչեց լրտեսը ուրախութեամբ:

Խմած քօնեաքները բաւական ազդած էին վրան, զուարթութիւն մը ու միևնոյն ատեն թուրքերանութիւն մը եկած էր վրան:

Տրդատ նշմարեց այս պարագան և ուզեց անկէ օգտուիլ:

– Կ'երևայ, թէ բաւական խմեցիք այդ բարեկամիդ հետ,– ըսաւ:

– Է՛հ, բաւական, կարծեմ 5-6 գաւաթ մը եղաւ, բայց շիտակը աղէկ քօնեաք է:

– Մէյմէկ հատ ալ խմենք ուրեմն... Ինծի ալ աղէկ եկաւ:

– Խմենք,– հաւանեցաւ լրտեսը:

Գինեպանը գաւաթները լեցուց:

– Ինծի ինչո՞ւ կը փնտռէիր կոր,– հարցուց Տրդատին:

– Այսինքն յատկապէս փնտռելու շատ կարևոր բան մը չունէի... Միայն թէ կ'ուզէի բան մը հարցնել:

– Հապա ըսիր, որ մասնաւորապէս կ'ուզես հետս խօսիլ...

– Դիտմամբ ըսի, եթէ շիտակը կ'ուզես, որպէսզի միւսը հեռանայ... Ինչպէս որ ալ ըրաւ, որովհետեւ կը տեսնայի կոր, որ քեզի կը ձանձրացնէր կոր իր պարապ խօսքերովը:

– Ըսածդ իրաւ է, բայց ի՞նչ ընենք, քօնեաքին խաթերը համար մտիկ կ'ընենք կոր:

– Ուզածդ քօնեաք ըլլայ, եթէ ան հինգ հատ խմցուց, ես տասը հատ կը խմցնեմ:

– Բարեկամդ ո՞ւր է...

– Ո՞ր բարեկամ:

– Երէկ հետդ երիտասարդ մը կար:

– Հա՛, կէյվէցի վաճառակա՞նը... Հեմ գիտեր, այսօր չտեսայ զինքը, թերևս գործերը լմնցուց ու մեկնեցաւ:

– Աղէկ մարդ մը կ'երևար կոր:

– Ինք իր հալին մարդ մըն է, առուտուրէ ուրիշ բանի խելքը չի հասնիր: Հիմա քենէ տեղեկութիւն մը պիտի ուզեմ, կարելի է կրնաս տալ:

– Խօսէ՛, տեսնենք:

– Պուկկարիա գտնուած ատենս երիտասարդ մը ճանչցած էի... կը յիշե՞ս, թերևս դուն ալ տեսած ես հոն:

– Անունը ի՞նչ է:

– Արշաւիր Սահակեան:

Այս անունը լսելով լրտեսը աննշմարելի ցնցում մը ունեցաւ:

– Է՛յ,– ըսաւ:

– Յիշեցի՞ր զինքը...

– Ես այդ մարդը Պուկկարիոյ մէջ չեմ տեսած, բայց անունը լսած եմ:

– Իմացայ, որ հիմա Պուկիս է եղեր,– շարունակեց Տրդատ,– կ'ուզէի անգամ մը զինքը տեսնել. մտածեցի, որ թերևս դուն կրնաս գիտնալ ուր գտնուիլը:

– Այդ Արշաւիրը, եթէ չեմ սխալիր, հնչակեան մըն է,– պատասխանեց լրտեսը,– այնպէս չէ՞:

– Կրնայ ըլլալ,– ըսաւ Տրդատ,– չեմ գիտեր, իմ ճանչցած ատենս հնչակեան չէր, գուցէ ետքէն եղաւ. խնդիրը ասոր վրայ չէ, ես միայն կ'ուզէի զինքը տեսնել անձնական գործի մը համար:

– Գիտե՞ս, թէ այդ մարդը հիմա ի՞նչ կ'ընէ:

– Հեռուէն հեռու բաներ մը իմացայ... ոստիկանութեան մէջ պաշտօն ունի եղեր, և ճիշդ ասոր համար խորհեցայ, թէ դուն իր մասին տեղեկութիւն ունենալու ես:

Տրդատ նշմարելով, որ քօնեաքի գաւաթները պարպուած են, կրկին լեցնել տուաւ:

– Այդ Արշաւիրը հոս է,– հաստատեց լրտեսը:

– Ուրեմն դո՞ւն ալ կը ճանչնաս զինքը:

– Առաջ չէի ճանչնար, բայց հոս ճանչցայ:

– Գիտե՞ս, թէ ուր կը բնակի:

– Ձէ՛, չեմ գիտեր... զինքը քանի մը անգամ տեսայ, հետն ալ տեսնուեցայ, բայց չհարցուցի, թէ ուր կը նստէր:

– Սակայն եթէ ուզես՝ կրնաս հասկնալ:

– Անկարելի բան մը չէ: Բայց դուն ի՞նչ գործ ունիս այդ վտանգաւոր մարդուն հետ:

– Վտանգաւոր,– հարցուց Տրդատ միամիտ դէմքով մը,– ինչո՞ւ համար:

– Քանի որ ոստիկանութեան մէջ պաշտօն ունի, բնականաբար վտանգաւոր է, մանաւանդ յեղափոխականներուն և այս միջոցիս մասնաւորաբար՝ հնչակեաններուն համար:

– Ես քեզի ըսի, որ ա՛լ ատանկ գործերէ քաշուած եմ:

– Հա՛, իրաւ, կը ներես, մոռցայ,– ըսաւ լրտեսը թեթեւ մը ժպտելով:

– Դուն ալ ոստիկանութեան մարդ ես, բայց քեզի հետ կը տեսնուիմ կոր, ինչ կ'ըլլայ ատկէ... ես վախնալիք բան մը չունիմ:

– Դուն վախնալիք բան մը չունիս, բայց թերևս Արշաւիրը ունի:

– Ի՞նչ ըսել կ'ուզես:

– Ըսածս շատ պարզ է. յեղափոխական մը, որ յետոյ լրտես կ'ըլլայ, միշտ վախնալու պատճառներ ունի իր նախկին ընկերէն... ուստի Արշաւիրն ալ ստիպուած է շատ զգոյշ ըլլալ, մանաւանդ այս միջոցիս:

– Բայց ես, նորէն կ'ըսեմ, այլևս կուսակցական չեմ:

– Դուն այնպէս կ'ըսես, բայց տեսնենք ինք կը հաւատա՞յ ըսածիդ:

– Եղբա՛յր, դուն միայն իր հասցէն տուր ինծի և ուրիշ բանի մի՛ խառնուիր:

– Նախ ըսի, որ իր հասցէն չեմ գիտեր, բայց նոյնիսկ եթէ գիտնամ՝ չեմ կրնար ըսել:

– Ինչո՞ւ համար:

– Որովհետև եթէ գլխուն փորձանք մը գայ, ես կ'ըլլամ պատճառն ու պատասխանատուն:

– Պարապ խօսքեր են ասոնք... երբ բարեկամաբար ծառայութիւն մը կը խնդրեմ կոր, ելեր, ինծի հազարումէկ ենթադրութիւններ կ'ընես:

– Կատակը մէկդի,– ըսաւ լրտեսը,– անպատճառ պէ՞տք ունիս այդ հասցէին:

– Պէտք ունիմ, քանի որ կ'ուզեմ կոր:

– Այսինքն շա՞տ կարևոր բանի մը համար:

– Վերջապէս անձնական գործի մը համար... այո, բնական է, որ ինծի համար կարևորութիւն ունի...

– Ինք քեզի կը ճանչնա՞յ...

– Չեմ գիտեր, թերևս մոռցած է... Հազիւ մէկ-երկու անգամ իրարու հանդիպած ենք:

– Շատ կարևոր գործ մը ունիս մէկու մը հետ, զոր հազիւ մէկ-երկու անգամ տեսած ես տարիներ առաջ և որ վստահ ալ չես, որ քեզ կը յիշէ, շիտակը՝ քիչ մը տարօրինակ բան է,– ըսաւ լրտեսը ժպտելով ու քօնեաքի գաւաթը պարպելով:

– Ես կ'ուզեմ իրմէ տեղեկութիւն առնել երրորդ անձի մը մասին, զոր երկուքս ալ կը ճանչնանք և որուն հետքը կորսընցուցած եմ,– պատասխանեց Տրդատ:

– Հիմա խնդիրը լուծուեցաւ,– ըսաւ լրտեսը համոզուած շեշտով մը:– Եւ եթէ այդ հասցէն քեզի տամ, դուն ի փոխարէն ի՞նչ պիտի տաս ինծի:

– Ի՞նչ կ'ուզես, որ տամ ի փոխարէն:

– Ես գործի մարդ եմ, պարապ տեղը սրկէ հունա քայլ մը չեմ առներ... բացէն խօսինք, ի՞նչ կուտաս ինծի, որպէսզի Արշաւիրին հասցէն իմանամ ու քեզի ըսեմ:

– Ուզածդ այդ կ'ըլլայ... դո՛ւն որոշէ:

– Նախ, կը կրկնեմ, Արշաւիրը գրեթէ պահուրտած կ'ապրի Պոլսոյ մէջ, միշտ կը վախնայ, որ իր նախկին ընկերները փորձանք մը կը բերեն գլխուն, հետևաբար իր պահուած տեղը իմանալ ու քեզի իմաց տալը բաւական դժուար խնդիր մըն է... անանկ աժան-աժան աս գործը չտեսնուիր:

– Ի՞նչ կ'ուզես, տեսնենք:

– Առանց սակարկութիւն մէկ խօսք մը ըսե՞մ,– գոչեց լրտեսը:

– Ըսէ՛, տեսնենք:

– Տասը հատիկ դեղին ոսկի պիտի տաս:

– Ի՞նչ կ'ըսես, չափազանց պահանջկոտ ես,– ըսաւ Տրդատ:

– Ուրեմն դուն փնտռէ ու գտիր իր տեղը:

– Տասը ոսկի... անկարևոր բանի մը համար... ես, ինչպէս ըսի, պարզապէս անձնական գործի մը համար կ'ուզեմ տեսնել զինքը... անանկ բան մըն է, որ ըլլայ նէ ալ՝ կ'ըլլայ, չըլլայ նէ ալ...

– Ուրեմն բոլորովին այս խօսքը գոցենք ու խմելու նայինք: Եւ լրտեսը անտարբեր ձևով մը գաւաթը շրթունքին տարաւ ու պարպեց:

Բայց Տրդատին գործին չէր ի գար գործը այս կերպով վերջացնել:

– Կեանքիս մէջ անգամ մը քենէ փոքրիկ ծառայութիւն մը խնդրեցի՝ ան ալ մերժեցիր, – ըսաւ:

– Ընդհակառակը, խոստացայ խնդրած ծառայութիւնդ մատուցանել, միայն թէ դուն ալ փոխարէն պէտք է, որ զոհողութիւն մը ընես:

– Ատոր պատրաստ եմ, պայմանով, որ օրինաւոր բան մը ուզես:

– Չէ՛, եղբա՛յր, ատկէ պակաս չեմ կրնար ընել, որովհետեւ շատ փորձանք բերելիք բան մըն է ըսածդ... կա՛մ տասը ոսկի կուտաս և կա՛մ վազ կ'անցնիս Արշաւիրը գտնելէ:

– Վերջին խօսքդ է այդ:

– Այո՛, – պատասխանեց Արշակ վճռաբար:

– Հինգ ոսկի կուտամ, – գոչեց Տրդատ:

– Նոյնիսկ իննուկէս ոսկի չեմ ընդունիր, բարեկամութիւնը տարբեր բան, գործը՝ տարբեր...

Տրդատ մէյմէկ քօնեաք ևս ապսպրեց և տարբեր նիւթի մը վրայ սկսաւ խօսիլ:

Լրտեսը ինքզինքը բաւական կորսնցուցած էր, բայց տակաւին իր լրջութիւնը կը պահէր:

Ի վերջոյ ժամացոյցը նայեցաւ և ըսաւ.

– Օ՛, ժամանակը անցեր է, հոս այսպէս խմելու զբաղեցանք, գործը մոռցանք... պէտք էր, որ ես հիմա Պոլիս ըլլայի:

– Հատ մըն ալ խմենք, – առաջարկեց երիտասարդը:

– Չէ՛, անկարելի է, գլուխս արդէն կը դառնայ կոր քիչ մը:

Տրդատ գինեպանը կանչեց և հաշիւը մաքրեց:

Երկուքը միասին ոտքի ելան:

– Սա խնդիրքս չըրիր, – ըսաւ երիտասարդը դժգոհ դէմքով մը:

– Ի՞նչ խնդիր, – հարցուց Արշակ՝ մոռցած ձեւացնելով քիչ մը առաջ ըսուած խօսքերը:

– Եղբա՛յր, սա Արշաւիրի մասին...

– Բայց կարծեմ ատկէ վազ անցար դուն... քանի որ անկարեոր բանի մը համար է, ինչո՞ւ համար դրամ պիտի ծախսես:

– Անկարեոր, բայց կ'ուզէի անգամ մը հետը տեսնուիլ:

– Այն ատեն տասը ոսկին աչքէդ հանէ՛...

– Զարմանալի մարդ ես եղեր...

– Հաւատա՛, որ ուրիշին այդ գաղտնիքը 100 ոսկիի ալ չէի այտնեմ... որովհետեւ, ճշմարիտ կ'ըսեմ, շատ մեծ գաղտնիք մըն է ըսելիքս:

– Ե՛րբ կրնաս որոշ լուր մը բերել, – հարցուց Տրդատ:

– Երկու-երեք օրէն... պէտք է, որ գինքը տեսնամ և կերպով մը իրմէ իմանամ հասցէն... իմ վրաս կատարեալ վստահութիւն ունի, չեմ կարծեր, որ ինէ ծածկէ: Հա, ուրիշ բան մը միտքս ինկաւ... դուն իր հասցէն գիտնալու պէտք չունիս, բաւ է, որ գինքը տեսնաս, այդ բաւական է, այնպէս չէ՞...

Տրդատ դժգոհութեան շարժում մը ըրաւ:

– Այո՛... այնպէս է... բայց դուրսը տեսնուիլ յարմար չէ, – կմկմաց:

– Օրինակի համար, գինքը կ'առնեմ, հոս կը բերեմ, ինչ տեղեկութիւն որ պիտի ուզես՝ իրմէ կրնաս առնել... և այն ատեն դրամ տալու ալ պէտք չի մնար... տեսա՞ր մի, հիմա գործդ եղաւ, ինչպէ՞ս առաջ խելք չըրինք ասիկա: Ահա քեզի տասը ոսկի շահեցուցի... ես Արշաւիրը կը տեսնամ ու կը բերեմ... քեզի հետ նախապէս ժամադրութիւն մը տանք, եղաւ, լմնցաւ:

– Չէ, ես կ'ուզեմ բոլորովին առանձին տեղ մը տեսնուիլ իրեն հետ... չեմ ուզեր, որ ուրիշները զիս անոր հետ տեսնան...

– Այն ատեն քու հասցէդ տո՛ւր, ուղղակի տունդ բերեմ:

– Ես որոշ հասցէ չունիմ... ասդին-անդին, բարեկամներու տուն ժամանակ կ'անցընեմ:

– Ըսել է՝ Պոլիս շատ ծանօթներ ունիս:

– Այսինքն, այո՛, քանի մը հոգի կը ճանչնամ... երբեմն ալ օթէլը կը մնամ... խնդիրը այդ չէ, աւելի աղէկ կ'ըլլայ, որ իր տունը երթամ, գինքը գտնեմ... վնաս չունի... տասը ոսկի կը վճարեմ, քանի որ ուրիշ ճար չի կայ:

– Դուն գիտես, – ըսաւ լրտեսը աննշմարելի ժպիտով մը, – ես ուզեցի քեզի խնայողութիւն մը ընել տալ:

– Ուրեմն այսպէս, երկու օր ետքը, այստեղ քեզի կը սպասեմ լուրը առնելու համար, – ըսաւ Տրդատ:

– Երկու կամ երեք օր ետքը,– պատասխանեց Արշակ,– որովհետև չեմ գիտեր, թէ երբ պիտի կրնամ տեսնել Արշաւիրը...

– Ես ցերեկներէն ետքը ձեզի հոս կը սպասեմ քանի մը օր:

– Լաւ ուրեմն...

– Գալով դրամին... կանխի՞կ պիտի վճարեմ:

– Գոնէ կէսը,– ըսաւ լրտեսը,– կէսն ալ կուտաս, երբոր Հասցէն բերեմ քեզի... բայց ամենէն գլխաւոր պայմանը մոռցայ ըսելու...

– Ի՞նչ պայման...

– Այդ Հասցէն երբեք ուրիշին պիտի չյայտնես:

– Որո՞ւ կ'ուզես, որ յայտնեմ, քանի որ միմիայն ինծի համար է...

– Ես ի՞նչ գիտնամ... թերևս ընկերներուդ:

– Ձէ՛, անհո՛գ եղիր... ընկեր չունիմ, ասկէ զատ չեմ կարծեր, որ Արշաւիրը տեսնելու փափաքող մարդ գտնուի այստեղ:

– Ոչ ոք գիտէ,– ըսաւ լրտեսը խորհրդաւոր ձևով մը և «մնաս բարով» ըսելով՝ բաժնուեցաւ Տրդատէն և ուղղուեցաւ դէպի Ղալաթիա:

Արշակ ճամբան կը քալէր՝ ինքնիրեն խորհրդածելով.

«Վա՛յ, միամիտ տղայ, վա՛յ, իր ձեռքովը եկաւ ծուղակը ինկաւ... Արշաւիրին հետ անձնական գործ ունի եղեր... անկարևոր բան մը... և սակայն տասը ոսկի կուտայ կոր անոր Հասցէն իմանալու համար... ու յետոյ, ուրիշ տեղ ալ չկրնար կոր հետը տեսնուիլ... անպատճառ Արշաւիրին տունը պէտք է որ տեսնուին... առաջին տեսնելու արդէն Հասկցայ, որ այդ տղան հոս ուրիշ բանի համար եկած է... ան կէյվէցի վաճառականն ալ յայտնի է, որ իր ընկերներէն է... հիմա բոլորովին գոյնը դուրս տուաւ... կ'երևայ, որ Արշաւիր կը փնտռեն կոր, որպէսզի մէջտեղէն վերցնեն... եթէ ես վարպետութեամբ վարուիմ, ասոնցմէ շատ բան կրնամ իմանալ... աչքերնիս բանանք ու գործ տեսանք... մարդիկը փարա ալ ունին, պօլ-պօլ կը խարճեն կոր... անմիջապէս հինգ ոսկին հանեց տուաւ, եթէ քիչ մըն ալ զօռ ընեի՝ տասն ալ պիտի տար... ինչ որ է, թէ՛ քօնեաք խմեցինք, թէ՛ օրականնիս Հանեցինք և թէ՛ բաւական բան իմացանք... Այսօր յաջող է գործերնիս»:

Լրտեսը այս զուարթ տրամադրութեան ներքև Պոլիս անցաւ և ուղղուեցաւ դէպի ոստիկանատուն:

Իսկ Տրդատ ո՛չ նուազ ուրախ էր:

«Առանց կասկած ներշնչելու գործը յաջողուցի»,– կը մտածէր միամտօրէն:

Երկու օր ետքը Տրդատ փութաց իրենց ժամադրավայրը, ուր քիչ յետոյ եկաւ նաև Արշակ:

Այս վերջինը երիտասարդը տեսնելուն պէս զուարթ դէմքով մը ըսաւ.

– Ինծի՞ կը սպասէիր կոր, հէ՞...

– Այո՛, քանի որ ժամադիր եղած էինք:

– Մազ մնաց պիտի չի գայի, որովհետև կարևոր գործ մը պատահեցաւ, բայց ինչ որ է, շուտով գործս լմնցուցի...

– Ի՞նչ լուր, տեսնե՞ք:

– Աղէկ... գործը կարգին է. Արշաւիրը տեսայ, այսօր-վաղը սենեակը պիտի փոխէ եղեր և Բերա պիտի փոխադրուի, երբոր նոր սենեակը գայ՝ անմիջապէս Հասցէն կը հաղորդեմ քեզի, կ'երթաս կը տեսնաս:

– Ըսել է՝ դեռ քանի մը օր պիտի սպասե՞ք:

– Ձէ՛, կարծեմ այսօր գործը կը տեսնայ ու վաղը կը փոխադրուի, ինծի այնպէս ըսաւ:

– Ո՞ր կողմն է նոր սենեակը:

– Դեռ ինքն ալ չգիտեր... քանի մը սենեակ կայ, պիտի նայի և անոնցմէ մէկուն համար որոշում պիտի տայ: Ա՛, այդ գործին վրայ մի՛ մտածեր, եղածէն սեպէ... իմ վրաս Արշաւիրը բացարձակ վստահութիւն ունի... խեղճը չգիտեր, որ իր հորը կը փորեմ կոր...

– Ինչո՞ւ իր հորը պիտի փորես:

– Ես գիտեմ ըսածս... զիս ապուշի տե՞ղ կը դնես կոր... ես առաջին վայրկեանէն Հասկցայ, թէ ինչու համար իր Հասցէն կ'ուզես գիտնալ:

– Ինչո՞ւ համար,– հարցուց Տրդատ վրդոված դէմքով մը:

– Պարզապէս Հնչակեաններուն իմաց տալու համար...

– Աս ի՞նչ խնթ խօսք...

– Ինծի նայէ՛, Տրդա՛տ, իրարու խաղ չխաղանք և անկեղծ

ըլլանք. ես քու նպատակդ գուշակեցի և ճիշդ ասոր Համար Հասցէն ալ պիտի Հասկնամ ու քեզի պիտի Հաղորդեմ և ասոր Համար մնացած Հինգ ոսկին ալ պիտի Հառնեմ քենէ:

– Դեռ բան մը չեմ Հասկնա կոր ըսածներէդ:

– Բացատրեմ: Արշաւիրը իբրև Հնչակեան պատուիրակ Ե-գիպտոսէն գացած է Քօսթանցա և Հոն ներկայ գտնուած է Հընչակեաններու քօնկրէսին ու յետոյ այդտեղ տրուած գաղտնի որոշումներուն մէկ մասը Հաղորդած է Տէտէ Աղաճի թիւրք Հիւպատոսին, որ այդ տեղեկութիւնները ղրկած է ներքին գործերու նախարարութեան: Յետոյ, Արշաւիրը հրաւէր ստացած է Հոս գալու՝ աւելի լիակատար տեղեկութիւններ տալու Համար: Իր ըրած այս մատնութիւնը Հնչակեանները իմացած են և կ'ուզեն այժմ զինքը մէջտեղէն վերցնել, կամ աւելի պարզ խօսելով, տէրօրի ենթարկել: Արշաւիր այս բանը գիտէ և ասոր Համար գրեթէ միշտ ծածկուած կը մնայ և մեծ զգուշութիւններով դուրս կ'ելլէ: Դուն Հիմա կ'ուզես իր Հասցէն իմանալ, որպէսզի այդ տէրօրական գործողութիւնը կատարեք:

– Բայց ես քեզի ըսի, որ այլևս Հնչակեան չեմ. ինչո՞ւ խօսքիս չես Հաւատար:

– Կրնայ ըլլալ, որ Հնչակեան չըլլաս, բայց ատիկա պատճառ մը չէ, որ քու նախկին ընկերներուդ ծառայութիւն մը չմատուցանես: Անոնց ըսած ես, որ զիս կը ճանչնաս, և անոնք ալ խնդրած են քենէ, որ իմ միջոցովս Արշաւիրի Հասցէն իմանաս. ահա՛ ճշմարտութիւնը:

– Այդ ճշմարտութիւնը միայն քու երևակայութեանդ մէջ գոյութիւն ունի, – ըսաւ Տրդատ՝ ջանալով իր պաղարիւնութիւնը պահել, թեև ձայնը իր յուզումը կը մատնէր:

– Կ'ուզես ճշմարտութիւնը ըսէ, կ'ուզես՝ ծածկէ, ես իմ Համոզումս կազմած եմ այս մասին, – ըսաւ լրտեսը, – և կը փափաքիմ, որ ճիշդ ըլլայ իմ ենթադրութիւնս. կը գարմանա՛ս այս ըսածիս, և սակայն շատ պարզ է. ես քեզի պէս չեմ, ինչ որ կայ ներսիդիս՝ անկեղծօրէն կը յայտնեմ: Ուրեմն, մտիկ ըրէ՛: Արշաւիրի Հոս գտնուելը իմ գործիս չէ եկած. տաճկերէն խօսք մը կայ, գիտե՛ս, «իբր ճամպազ պիւր իփտէ օյնամազ», անոր Հոս գտնուելը իմ գործիս կը վնասէ, որովհետև ան ինչ շա՛տ աւելի տեղեկութիւն

ունի յեղափոխականներուն մասին ու կրնայ շուտով կարևոր դիրք մը գրաւել ոստիկանութեան մէջ, դիրք մը, որ ես կ'ուզեմ ձեռք բերել: Այսպէս ուրեմն, ես և Արշաւիր իրարու Հակառակ շահեր ունինք, կամ սանկ ըսեմ, իրարու Հակառակորդներ ենք: Հնչակեանները որչափ շահ ունին անոր մէջտեղէն վերնալուս մէջ, ես ալ նոյնչափ շահ ունիմ. Հիմա Հասկցա՞ր խնդիրը:

Լրտեսը իր տեսութիւնը այնչափ անկեղծ շեշտով մը պարզած էր, որ Տրդատ Հաւատաց ըսածներուն:

– Ուրեմն կ'ուզե՞ս, որ Արշաւիրին գլուխը փորձանք մը գայ, – ըսաւ:

– Բնականաբար. իրաւունք չունի՞մ այսպէս մտածելու:

– Արդարև գործնական տեսակէտով ճիշդ է ըսածդ. այդ մարդը կրնայ քու յառաջդիմութեանդ արգելք ըլլալ:

– Արդէն սկսած է ըլլալ, – գոչեց լրտեսը սրտմտած շեշտով մը, – իր Հոս գալէն ի վեր ինծի շատ կարևորութիւն չեն ի տար կոր. ատկէ աւելի ծանրը կայ. երէկ միւտիբը զիս կանչեց և ըսաւ, որ Հնչակեաններու խնդրին մասին միշտ Արշաւիրի հրահանգներուն Հետեւիմ. վա՛յ թշուառական, զիս անոր քով ծառայի պէս պիտի գործածեն:

– Իրաւունք ունիս բարկանալու:

– Միայն թէ բոլոր այս խօսքերը կ'ըսեմ քեզի գաղտնաբար, չըլլայ, որ մէկու մը յայտնես, ետքը գլուխս փորձանք կը բերես:

– Այդ մասին ապահով եղիր, ես տղայ չեմ:

– Քու վրադ բացարձակ վստահութիւն ունիմ, որովհետև Հինուց կը ճանչնամ, այսպէս ուրեմն, նորէն կը կրկնեմ, մեր շահերը միեւնոյն են, ուստի կրնանք միասին գործել, միայն թէ մեծ զգուշութեամբ:

Երկու երիտասարդներուն միջև պահ մը լուռութիւն տիրեց:

Տրդատ երկմտութեան մատնուած էր:

Արդեօք բոլորովին անկե՞ղծ էր լրտեսը:

Երևոյթները այնպէս կասկածիլ կուտային: Արդարև, այդ մարդը շահ ունէր, որ ասպարէզը իրեն մնար:

– Ես ո՛չ միայն Արշաւիրին Հասցէն կուտամ ձեզի, այլ ուրիշ դիւրութիւններ ալ կ'ընծայեմ, որպէսզի կարենաք ձեր գործը տեսնել, – ըսաւ՝ լուռութիւնը խզելով:

Տրդատ չպատասխանեց:

– Կը տեսնամ, որ տակաւին կը կասկածիս իմ մասիս,– գոչեց Արշակ սրտմտած դէմքով մը,– եթէ այդպէս է, լաւագոյն է, որ բնաւ չխօսինք այս խնդրին վրայ. իրարու վրայ կասկածելով կարելի չէ բնաւ գործ մը տեսնել:

– Կասկածի բան չի կայ,– դիտել տուաւ երիտասարդը,– միայն թէ ես պատրաստուած չէի այդպիսի բաներ լսելու:

– Ինչպէ՞ս պատրաստուած չէիր:

– Այսինքն, չէի գիտեր քու տրամադրութիւններդ Արշաւի-րի մասին:

– Լաւ ուրեմն, հիմա հասկցար, այնպէս չէ՞, ուրեմն պա-տասխանէ, տեսնեմ...

– Կ'ուզե՞ս, որ ես ալ քեզի հետ անկեղծ ըլլամ:

– Ժամէ մը ի վեր ատոր կը սպասեմ:

– Ուրեմն օր մը ժամանակ տուր ինծի:

– Շատ աղէկ, ուրեմն վաղը այստեղ կրկին կը տեսնուինք:

Երկու խօսակիցները բաժնուեցան, և Տրդատ փութաց իր ըն-կերներուն քով, որոնց հաղորդեց լրտեսին հետ ունեցած շահե-կան տեսակցութիւնը: Ամէնքն ալ այն կարծիքը յայտնեցին, թէ հարկ էր օգտուիլ Արշակի տրամադրութենէն, առանց սակայն անխոհեմութիւններ գործելու:

Որոշուեցաւ, որ միմիայն Տրդատ անոր հետ հաղորդակցու-թիւն ունենայ, և միւս ընկերները միշտ ծածկուած մնան:

Յաջորդ օրը Արշակ կրկին եկաւ ծանօթ գինետունը, ուր այս անգամ Տրդատ բացէիբաց յայտնեց, թէ իրեն հետ պատրաստ էր գործակցիլ:

– Միայն թէ մեծ խոհեմութեամբ վարուինք,– դիտել տուաւ լրտեսը,– այս խնդրին մէջ իմ դիրքս շատ աւելի վտանգաւոր է, քան թէ ձերինը... դուք ձեր պարտականութիւնը կը կատարէք կոր պարզապէս, մինչդեռ ես իմ պարտականութեանս դէմ կը մեղանչեմ կոր...

Բաւական խօսակցելէ ետքը բաժնուեցան իրարմէ, և Արշակ խոստացաւ երկու-երեք օրէն Արշաւի չհասցնէ հաղորդելու:

– Դեռ վերջնական տեղը չէ որոշուած, և մէկ-երկու օրուան համար բարեկամի մը տունը կը մնայ կոր եղբր,– բացատրեց:

Երկու օր ետքը Տրդատ կրկին եկաւ ծանօթ գինետունը Ար-շակը փնտռելու և սակայն այս անգամ իզուր սպասեց: Լրտեսը չերեցաւ:

«Կ'երևայ, որ կարևոր գործ մը ունեցած է և կամ տակաւին Արշաւի չհասցնէ չէ կրցած իմանալ»,– վճռեց և գնաց գտնել իր ընկերները, որոնց հաղորդեց իր ապարդիւն ժամադրութիւնը:

Իրիկուան դէմ, ուշ ատեն, անգամ մըն ալ հանդիպեցաւ յոյն գինեպանին խանութը և հարցուց, թէ իր բարեկամը եկա՞ծ էր:

– Եկաւ քեզ փնտռեց, բայց բաւական սպասելէ ետքը գնաց,– պատասխանեց յոյնը:

– Կրկին պիտի գա՞յ,– հարցուց Տրդատ:

– Եթէ ժամանակ ունենայ՝ պիտի գայ, եթէ ոչ՝ վաղը առտու պիտի հանդիպի,– պատասխանեց գինեպանը:

Տրդատ սեղանի մը առջև նստաւ և օդի մը ապսպրեց:

Ժամանակը կ'անցնէր, և ո՛չ ոք կ'երևար: Երիտասարդը շա-րունակեց խմել բաւական ատեն, մինչև որ ճաշի ժամը եկաւ:

«Այս մարդը գալիք չունի»,– ըսաւ ի վերջոյ ինքն իրեն և հաշիւը մաքրելով՝ գնաց մօտակայ ճաշարան մը՝ պատուիրելով գինեպանին, որպէսզի եթէ Արշակը գայ, սպասցնէ:

Ճաշէն յետոյ կրկին վերադարձաւ գինետուն և այս անգամ ալ մէկ քանի քօնեաք խմեց, մինչև որ ա՛լ բուրբոլի յուսահա-տած ոտքի ելաւ՝ միտքը դնելով հետեւեալ առտու կրկին գալ:

Երբ փողոց ելաւ՝ ժամացոյցը նայեցաւ:

«Օ՛,– ըսաւ ինքնիրեն,– ժամը տասն է արդէն, ուշ մնացեր եմ»:

Վարանոտ՝ պահ մը կեցաւ:

«Տո՛ւն երթամ արդեօք»,– մտածեց:

Բայց գլուխը բաւական տաքցած էր և տուն երթալ պակե-լու հեռապատկերը չէր ժպտեր իրեն:

«Շատոնց է Մարիքան չի տեսայ,– խորհեցաւ,– քանի որ այստեղ եմ, անգամ մը հանդիպիմ իրեն, քիչ մը ժամանակ կ'անցընեմ ու յետոյ կ'երթամ, կը պակիմ»:

Ինչպէս ըսինք, Մարիքա կիսաշխարհիկ կին մըն էր, որուն տունը կը գտնուէր յոյն գինեպանին խանութին դէմը:

Տրդատ Հնչեցուց դրան գանգակը:

Մերուկ կին մը դուռը բացաւ:

— Մարիքան Հո՞ւ է,— Հարցուց երիտասարդը:

— Հրամանեցէք, վերն է,— պատասխանեց կինը հաճոյակատար դէմքով մը:

Սանդուխին գլխէն Մարիքա արդէն ճանչցած էր իր բարեկամը և ուրախութեան ցոյցերով ընդունեց զինքը:

— Սալօնը օտար մարդիկ կան,— բացատրեց գեղանի ցոփուհին,— եկո՛ւր իմ սենեակս երթանք, հոն հանգիստ կը նստինք:

Տրդատ հաւանեցաւ, ու մտան աղջկան սենեակը, որ տան ետևի կողմը կը գտնուէր:

Կեղծ գուրգուրանքի սովորական արտայայտութիւններէ ետքը Մարիքա փափաք յայտնեց գարեջուր խմելու:

Երիտասարդը փութաց կատարել այդ փափաքը և երկու շիշ գարեջուր ապսպրեց, զոր պառաւը բերաւ:

— Քիչ մըն ալ ուտելիք առնել տուր,— խնդրեց աղջիկը,— այս իրիկուն տակաւին չեմ ճաշեր, անօթութենէ կը մարիմ կոր:

— Շատ աղէկ, ահաւասիկ դրամ, առնել տուր, ինչ որ կ'ուզես:

Հազիւ թէ աղանդերներով գարեջուրի առաջին շիշը պարպած էին, երբ տան դուռը գարնուեցաւ, և քիչ յետոյ պառաւը ներս մտաւ ու շփոթած դէմքով մը բաներ մը փսփսաց աղջկան ականջին:

Մարիքա ինքն ալ յուզուած կերպարանք մը առաւ յանկարծ:

— Սա ափսէն մէջտեղէն վերցուր,— ըսաւ պառաւին՝ գարեջուրի շիշերն ու գաւաթները պարունակող ափսէն ցոյց տալով:

— Ի՞նչ կայ, Մարիքա,— Հարցուց Տրդատ:

— Աման, երկու թուրքեր եկած են, ստիպուած եմ զիրենք անպատճառ ընդունելու, մէկը ոստիկանութեան պաշտօնեայ մըն է, միւս ալ գաղտնի լրտես մը, չեմ ուզեր, որ քեզ ինծի հետ տեսնեն. Աստուած իմ, ինչ պիտի ընեմ:

— Ինչո՞ւ այդչափ կը վախնաս:

— Բարկասիրտ մարդուն մէկն է, անպատճառ կռիւ կը հանէ,

քանի անգամ փորձանք բերած է գլխիս. ո՞ւր տեղէն ալ եկաւ այս գիշեր: Աստուծոյ սիրուն, սանկ տեղ մը պահուելու, մինչև որ զիրենք ճամբու դնեմ. պարապ սենեակ ալ չունինք այս միջոցիս, կը վախնամ, որ խաղթութիւն մը պիտի ելլայ տանը մէջ:

— Բայց,— գոչեց Տրդատ,— ի՞նչ իրաւունքով կռիւ պիտի հանէ:

— Խմած ըլլայ նէ՛ ըրածը չգիտեր և այս ժամուս անպատճառ խմած է. արդէն միշտ գինով վիճակի մէջ կուգայ հոս. կ'աղաչեմ, կը պաղատիմ, տեղ մը պահուելու, ես հիմա վարպետութեամբ ճամբու կը դնեմ զինքը:

— Ո՞ւր կ'ուզես, որ պահուելու...

Աղջիկը ականարկ մը պտըտցուց սենեակին շուրջը և յանկարծ գոչեց.

— Սա դարակը մտի՛ր, պարապ է:

Արդարև անկողնին քով դարակ մը կար: Երիտասարդը պահ մը վարանեցաւ: Անշուշտ կռիւէ չէր վախնար, բայց միևնոյն ատեն չէր ուզեր իր անձը վտանգել այդ միջոցին, մանաւանդ այդպիսի տեղ մը:

Պզտիկ վարանումէ մը ետքը դարակին դուռը բացաւ և ներս մտաւ:

Մարիքա իսկոյն դարակը կղպեց, բանալին գրպանը դրաւ և դուրս վազեց դիմաւորելու համար երկու հիւրերը, որոնք վարը քիչ մը ժամանակ սպասելէ ետքը անհամբեր վեր կ'ելլէին սանդուխին:

— Աս ի՞նչ է,— գոչեց թուրքերէն մին,— մեր գալը կ'իմացնենք քեզի, և դուն մեզ վարը ծառայի պէս կը սպասցնես:

— Կը ներէ՛ք, պէ՛յս,— պատասխանեց աղջիկը,— մագերս կը շիտկէի կոր, բարի եկաք, ներս հրամանեցէ՛ք:

— Այս իրիկուն կ'երևայ, որ յաճախորդնիդ շատ է:

— Այո, բացառաբար այնպէս եղաւ:

— Սալօնը երթալ ուզեցինք, լեցուն էր:

— Հոս հրամանեցէ՛ք, աւելի հանգիստ կ'ըլլաք:

Երկու թուրքերը մտան սենեակ: Իրենց հետ բերած էին մէկ քանի ծրարներ, զոր յանձնեցին աղջկան:

— Ասոնք պնակներու մէջ դնել տուր, հացն ալ կտրել տուր

և կէս օխա ալ լաւ օղի առնել տո՛ւր սա դիմացի գինեպանէն, — հրամայեց հիւրերէն մին, որ գլխաւորը ըլլալ կը թուէր:

Աղջիկը գնաց հրամանները կատարելու: Տրդատ իր թաքըստոցին մէջէն կը լսէր ամբողջ խօսակցութիւնը: Բայց այդ բանը շատ չէր շահագրգռեր զինքը, երկու գինով զբօսասէրներու շատախօսութիւնը բնականաբար զուրկ էր շահեկանութենէ:

Քիչ յետոյ աղանդեր և օղի պատրաստուեցան, և խորխոսեցին սկսաւ:

Հակառակ Մարիքայի հաւատարմին, հաւանական չէր, որ թուրքերը շուտով մեկնէին, և Տրդատ սկսաւ ձանձրանալ իր ծակին մէջ:

«Եթէ մինչև առտու այս մարդիկը հոս մնան՝ գործ ունինք», — կը խորհէր:

Մարիքա մերթ կ'երթար, մերթ կուգար՝ յաճախ առանձին ձգելով երկու գինարբուները:

Յանկարծ անուն մը Տրդատին ուշադրութիւնը գրաւեց:

— Մեր Արշակը պիտի գար, դեռ չերևցաւ, — ըսաւ թուրքերէն մէկը:

— Թերևս անակնկալ գործ մը պատահած է, — դիտել տուաւ միւսը:

— Ինծի ըսաւ, որ դիմացի գինետունը ժամադիր եղեր է հընչակեանի մը հետ, հոն պիտի հանդիպէր և ետքը այստեղ պիտի գար...

— Այդ հնչակեաններու խնդիրը ի՞նչ ջուրի մէջ է...

Տրդատ խօսակցութեան կը հետևէր հեծի հետաքրքրութեամբ մը, շունչը բռնած ու ամբողջ ուշադրութիւնը լարած:

«Յայտնի է, որ Արշակը մեր լրտեսն է, — կը խորհէր, — իսկ հնչակեանն ալ ես եմ»:

— Հնչակեաններուն խնդիրը շատ աղէկ ճամբու մէջ է, — շարունակեց թուրքը, — Արշակ շատ վարպետութեամբ ծուղակ մը լարած է իրենց, որուն մէջը պիտի իյնան ապահովաբար:

— Այդ տղան շատ վարպետորդի մէկն է:

— Եւ շատ ալ հաւատարիմ ու համեստ, միւսին չնմանիր:

— Արշաւիրի՞ն:

— Այո՛, այդ տղան բնաւ չեմ սիրած, չափազանց ինքնահաւան է և ինքզինքին ալ շատ կարևորութիւն կուտայ:

— Իրաւ է, որ մեզի արթնցնողը ան եղաւ:

— Այո՛, բայց անկէ ի վեր նոր յայտնութիւն մը չըրաւ, մինչդեռ ես ապահով եմ, որ ամէն բան գիտէ:

— Դիտմամբ սուղ կը ծախէ ինքզինքը, որ ոստիկանատան մէջ կարևորութիւն ստանայ:

— Հիմա եթէ Արշակ յաջողի իր պատրաստած ծուղակը ձգելու մեր փնտրած հնչակեանները, այն ատեն Արշաւիրին կարևորութիւնն ալ կը պակսի:

Մարիքա սենեակէն ներս մտնելով՝ խօսակցութիւնը պահ մը դադարեցաւ: Յոյն աղջիկը իր հիւրերուն հետ մէկ քանի գաւաթ օղի պարպելէ ետքը կրկին պատրուակ մը հնարեց և հեռացաւ:

Այդ միջոցին դուռը բացուեցաւ և ներս մտաւ Արշակ:

Երկու թուրքերը ուրախութեամբ ընդունեցին զինքը:

— Ո՛ւր մնացիր. երկու ժամ է, որ քեզի կը սպասենք:

— Անակնկալ գործ մը պատահեցաւ, ստիպուեցայ մինչև Սամաթիա երթալ և կրկին ոստիկանատուն երթալ, հազիւ կրօցայ օձիքս ազատել. բայց մե՛ղք, որ այստեղի գործս փախուցի:

— Ի՞նչ գործ:

— Տրդատին հետ ժամադրութեանս չկրցայ գտնուիլ. հիմա հանդիպեցայ գինեպանին, մինչև իրիկուն ինծի սպասեր ու վերջապէս յուսահատելով գացեր է. վաղը առտու կրկին պիտի գայ եղեր:

— Ուրեմն վնաս մը չի կայ, վաղը կը տեսնես զինքը: Ալ բաւ է, որ մէյ մը քիթէն բռնեցիր ու վստահութիւնը գրաւեցիր:

— Այդ մասին կասկած չունիմ, — ըսաւ Արշակ խնդալով, — միայն թէ միւս ընկերներն ալ մէյ մը ձեռք անցընենք:

— Ինք բաւական է. եթէ անգամ մը զինքը ծակը դնենք՝ խօսեցնելու կերպը շատ դիւրին է:

— Ես կը նախընտրեմ ամէն բան վարպետութեամբ իմանալ, — պատասխանեց Արշակ, — այդ կերպով գործը աւելի լաւ և աւելի դիւրին կը յաջողի:

— Կը կարծե՞ս, որ Տրդատ իր ընկերները քեզի ցոյց պիտի տայ, — հարցուց թուրքը:

— Ինչո՞ւ չէ՝ եթէ իրեն կատարեալ վստահութիւն ներշնչեմ, — պատասխանեց Արշակ:

– Այդ վստահութիւնը արդէն ներշնչած ես իրեն, քանի որ առտուրնէ ի վեր ետեւէդ կը պտտտի կոր:

– Խեղճը գլխուն գալիքը չի գիտեր:

Բոլոր այս խօսքերը, զորս Տրդատ կը լսէր իր թաքստոցէն, չափազանց կը յուզէին ու կը զայրացնէին զինքը:

Այնչափ կատաղութիւն կը զգար լսելով Արշակի խաբեբա-յութիւնը, որ կը խորհէր յանկարծ դուրս ցատքել դարակէն ու ընկնելէն թաշելով արժանի պատիժը տալ այդ վատ արարա-ծին:

Բայց ուրիշ գերագոյն մտածումներ զինքը կ'արգելէին այդ տեսակ յախուռն արարք մը գործելու:

«Եթէ այդպիսի յիմարական գործ մը տեսնեմ, ի՛նչ պիտի ըլ-լայ արգիւնքը, – կը մտածէր, – պարզապէս պիտի վտանգեմ ամ-բողջ գործը, մինչդեռ, Հիմա որ ամէն բան իմացայ, Հիմա որ գի-տեմ, թէ դիմացինս ինչ տեսակ մարդ է, թերևս կրնամ օգտա-կարապէս գործածել ինչ որ լսեցի այս գիշեր դիպուածին մէկ տարօրինակ կարգադրութեամբը»:

Մարիքա նոյն միջոցին սենեակ մտնելով՝ կրկին խօսակցու-թիւնը ընդհատուեցաւ:

Այս անգամ երեք գինարբուններ բռնի նստեցուցին աղշիկը և պահանջեցին, որ իրենց հետ թուրքերէն երգ մը երգէ, ինչ որ ստիպուեցաւ կատարել:

Օղիի բաժակները իրարու կը յաջորդէին, և երգերը կը շա-րունակուէին անընդհատ, գինովի խռպոտ ձայներով:

Ոստիկանութեան երեք պաշտօնեաները այլևս մոռցած էին քիչ մը առաջուան խօսակցութիւնը և միջավայրին արժանի խե-նէչ ակնարկութիւններով լեցուն խօսքեր կը փոխանակէին իրա-րու հետ:

Տրդատ բնականաբար ախորժ չէր զգար այդ նոր կացութե-նէն, բայց ստիպուած էր համակերպիլ անտրտունջ:

Երկու թուրքերը և Արշակ բաւական երկար ատեն շարունա-կեցին իրենց խրախճանքը, մինչև որ այլևս խմելու կարողու-թիւն չմնաց վրանին:

Տրդատ իր թաքստոցէն հասկցաւ, որ երթալու պատրաստու-թիւններ կը տեսնուին, և ուրախութեամբ սպասեց:

Արդարև քիչ ետքը Մարիքա ճամբու դրաւ իր հիւրերը և փողոցին դուռը գոցուելէ ետքը եկաւ բանալու Տրդատի դարա-կին դուռը:

Տրդատ մեծ շունչ մը առնելով՝ ինքզինք դուրս նետեց բան-տէն:

– Վերջապէս, – գոչեց, – կորսուեցան, գացին:

– Աղօթք ըրէ, որ գիշերը հոս չմնացին, – պատասխանեց աղշիկը խնդալով:

– Եթէ այդպիսի բան մը ընէին, հաւատա, որ գտնուած տե-ղէս դուրս կը ցատքէի ու անկէ ետքը չեմ գիտեր, թէ ինչ կը պատահէր:

– Աղէկ, որ այդ տեսակ խենթութիւն մը չըրիր. Հիմա նստէ՛, ու քիչ մըն ալ միասին տեսնուինք:

– Ձէ՛, շնորհակալ եմ, բաւ է, որչափ որ տեսնուեցանք, – ը-սաւ Տրդատ դառնացած շեշտով մը, – ժամանակը ուշ է:

– Վնաս չունի, գիշերը հոս կը մնաս:

– Անկարելի է... ասկէ զատ թերևս բարեկամներդ կրկին կուգան:

– Այս անգամ այլևս դուռը չենք բանար:

– Այդ երկու թուրքերէն ետքը հայ մըն ալ եկաւ հոս, – ըսաւ Տրդատ, – այդ մարդը ուրիշ անգամներ ալ եկա՞ծ է:

– Արշա՞կը, – հարցուց Մարիքա:

– Այո, կարծեմ Արշակ կը կոչէին կոր զինքը:

– Շատ անգամներ եկած է, ան ալ ոստիկանութեան պաշտօ-նեայ է, կը ճանչնա՞ս զինքը:

– Ձէ, – պատասխանեց Տրդատ, – միայն թէ իր խօսակցու-թեան ձևէն հասկցայ, որ հայ էր:

– Գաղտնի լրտես է, – բացատրեց Մարիքա, – աղէկ, որ քեզ հոս չտեսաւ:

– Ես վախնալիք բան մը չունիմ այդ տեսակ լրտեսներէն:

– Այո՛, բայց այդ մարդիկը ամէն տեսակ գէշութիւն ընելու կարող են, միշտ լաւագոյն է իրենցմէ հեռու մնալ:

– Ուրեմն դուն ինչո՞ւ գիրենք կ'ընդունիս:

– Ես ուրիշ, ինձի որևէ բան մը չեն կրնար ընել, – պատաս-խանեց Մարիքա, – մենք ստիպուած ենք ամէն տեսակ մարդ ըն-դունելու:

Տրդատ խօսակցութիւնը չերկարեց: Չափազանց մտազըր-
զըռուած էր իր լսածներէն և կ'ուզէր տուն երթալ ամփոփ միտ-
քով իր ընելիքը որոշելու համար:

Կէս գիշերը շատոնց անցած էր, երբոր Տրդատ դուրս ելաւ
Մարիքայի տունէն:

«Այս իրիկուն պատահածը պարզապէս հրաշք մըն էր, — կը
մտածէր՝ ուղղուելով դէպի Պրուսա փողոցի իր բնակարանը, — ե-
թէ խելքիս չփչէր այս տունը այցելելու և եթէ չլսէի փոխանա-
կուած խօսակցութիւնները, ամէնքս ալ թերևս կորսուած էինք»:

Տրդատ արդարև իրաւունք ունէր այսպէս մտածելու:

Իր ընկերները երբոր լսած էին Արշակի հետ ունեցած իր տե-
սակցութիւնները՝ բոլորովին հաւատացած էին լրտեսին անկեղ-
ծութեան մասին և որոշած էին կատարեալ վստահութեամբ յա-
րաբերութիւններ մշակել հետը: Նոյնիսկ Տրդատ պաշտօն ստա-
ցած էր Արշակը առնել տանելու իր ընկերներուն քով, որպէսզի
կարենային միասին կարգադրել ամէն բան:

«Ինչ մեծ բարեբախտութիւն, որ անակնկալ գործով մը չէ
կրցած գալ ժամադրութեան», — կը մտածէր Տրդատ՝ ճամբան
շարունակելով:

Վերջապէս հասաւ տուն և գնաց իր սենեակը: Ընկերը ար-
դէն անկողին մտած կը քնանար:

Տրդատ արթնցուց գայն:

— Ո՛ւր մնացիր այս ատեն, — հարցուց միւսը՝ աչքերը շփելով
ու անկողնին մէջ նստելով:

— Կարևոր բաներ պատահեցան, — պատասխանեց Տրդատ, —
արթնցիր, որ մտիկ ընես:

— Արշակը տեսա՞ր:

— Հիմա ամէն բան կ'իմանաս:

Եվ Տրդատ մանրամասնօրէն պատմեց ինչ որ մեր ընթերցող-
ները գիտեն արդէն:

Երբ պատմութիւնը ավարտեց՝ միւսը ըսաւ այլայլած դէմքով
մը:

— Հիմա ինչ պիտի ընենք:

— Ահաւասիկ խնդիրը, — պատասխանեց Տրդատ:

— Նախ, բնականաբար, այլևս պիտի չերևաս այդ մարդուն:

— Ես այդ կարծիքը չունիմ, — պատասխանեց Տրդատ՝ սի-
կառէթ մը վառելով:

— Ինչպէ՞ս, դարձեալ կ'ուզե՞ս շարունակել յարաբերութիւն-
ներդ:

— Այո՛, — ըսաւ Տրդատ հաստատ շեշտով մը:

— Ատիկա պարզապէս յիմարութիւն և անխոհեմութիւն պի-
տի ըլլայ:

— Ընդհակառակը, շատ խելացի գործ մը՝ եթէ վարպետու-
թեամբ շարժինք, հիմա մենք անոր վրայ մեծ առաւելութիւն մը
ունինք, այսինքն իր գաղտնիքը իմացած ենք, գիտենք, որ մեզ
կը խաբէ կոր և միտք ունի ծուղակը ձգելու, հետևաբար կըր-
նանք իրեն մօտենալ ապահով կերպով:

— Ես այդ արարքին մէջ մեծ ապահովութիւն մը չեմ տեսներ
կոր, — պատասխանեց ընկերը, — այսուհանդերձ անգամ մը խոր-
հրդակցինք մեր միւս ընկերներուն հետ և անոնց ալ կարծիքը
առնենք: Անկէ ետքը կրնաս որոշել ընելիքդ:

— Բայց ես պէտք է որ վաղը առտու երթամ գինքը տեսնելու,
որովհետև ժամադիր եղած ենք և եթէ չերթամ, թերևս կասկածի:

— Եւ եթէ վաղն իսկ քեզ ձերբակալել տա՞ն:

— Չեմ կարծեր, իր խօսքերէն հասկցայ, որ տակաւին բերնէս
տեղեկութիւններ առնել կ'ուզէ:

— Ուրեմն վաղը առտու գնա ժամադրութեան և յետոյ կը
տեսնենք, թէ ինչ պիտի ընենք:

Այս որոշումը տալէ ետքը երկու ընկերները քնացան:

ԳԼՈՒԽ ԺԷ ԱՐՇԱԿԻ ԵՎ ՄԱՐԿԻ

Թառլա պաշի, Մաճառ ճատտէսիէն վար փողոցի մը մէջ գըտ-
նուած տուն մը կը բնակէր դաւաճան Արշաւի Եսասան:

Երբ չափահաս հայ օրիորդներ վարձած էին այդ տունը, ո-
րուն մէկ քանի սենեակները կահաւորելով՝ ամսականով վարձու
կուտային ամուրիներու:

Արշաւի բաւական ժամանակէ ի վեր հաստատուած էր հոն

և մտերմութիւն մշակած տնեցիներուն հետ, որոնք սակայն չէին գիտեր, թէ ինչ տեսակ մէկու մը հետ էր իրենց գործը:

Դաւաճանը օրուան մեծագոյն մասը գրեթէ տանը մէջ կ'անցընէր՝ իր սենեակը քաշուած: Մերթ ընդ մերթ հիւրեր կ'ընդունէր, որոնց հետ երկար տեսակցութիւններ կ'ունենար: Արշաւիր, որ սկիզբները շատ հանդարտ, աւելի դիւրահաղորդ և գուարթ բնակորութիւն մը ունէր, հետզհետէ կասկածոտ ու դիւրագրգիռ կը դառնար: Տան օրիորդները, որ նշմարած էին այս փոփոխութիւնը, չէին կրնար մեկնութիւն մը տալ:

Եւ սակայն իր այս կասկածոտութիւնը հետզհետէ կ'աւելնար և տան մէջ անտանելի կը դառնար:

Երբ ինք հոն գտնուէր և այդ միջոցին փողոցին դուռը զարնուէր, չէր ուզեր, որ բանան, մինչև որ ինք պատուհանէն չըստուգէր, թէ ո՛վ էր եկողը:

Դուրս ելած ատեն նախ ամբողջ փողոցը խուզարկութենէ մը կ'անցընէր և յետոյ կը հեռանար տունէն: Երբեմն կը պատահէր, որ հազիւ դուրս ելած՝ կը վերադառնար ու սենեակը կը քաշուէր, ուր կը մնար ժամերով:

Իր այս տարօրինակ ընթացքը զարմանք և մտահոգութիւն կը պատճառէր երեք քոյրերուն:

— Այս մարդը անպատճառ գաղտնիք մը ունի, — կ'ըսէր կրտսեր քոյրը, — սովորական մարդու մը վիճակը չունի... մանաւանդ այս վերջին ժամանակներս:

— Անպատճառ բանէ մը կը վախնայ, — դիտել տուաւ մեծ քոյրը:

— Եթէ վախնալու պատճառներ ունի, ուրեմն գէշութիւն մը գործած է:

— Ո՛վ գիտէ, թերևս թշնամիներ ունի, որոնք զինքը կհալածեն:

— Ինծի ըսին, որ ամուսնացած ու կինը երեսի վրայ թողած է և թէ այս պատճառով վէճեր ունեցած է կնոջը ծնողքին հետ:

Եւ սակայն բոլոր այս ենթադրութիւնները չէին լուսարաններ խնդիրը:

Օր մը, երբ Արշաւիր նորէն կասկածանքներու մատնուած էր, աղջիկներէն մին ըսաւ.

— Բայց ի՞նչ ունիք, Արշաւիր էֆէնտի, ինչո՞ւ այսչափ կասկածոտ դարձած էք, ի՞նչ բանէ կը վախնաք... առաջ այսպէս չէիք:

— Որովհետև հիմա պատճառներ ունիմ կասկածոտ ըլլալու, նոյնիսկ չափազանց կասկածոտ:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետև թշնամիներ ունիմ, որոնք կ'ուզեն գլխուս փորձանք մը բերել:

— Ինչ փորձանք, Արշաւիր էֆէնտի:

— Սաչափը ըսեմ, որ եթէ ձեռքերնէն գայ՝ զիս ժամ մը չեն ապրեցնեն:

— Բայց ինչո՞ւ համար, դուք մէկու մը գէշութիւն չէք ըներ, — ըսաւ տանտիրուհին, որ կ'ուզէր առիթէն օգտուել խօսեցնել տալու համար երիտասարդը:

— Ճիշդ ատոր համար ահա՛ թշնամիներ ունիմ, — պատասխանեց Արշաւիր, — եթէ գէշութիւն ըրած ըլլայի՛ թերևս ասանկ կատաղի թշնամիներ չէի ունենար, բայց աշխարհս այսպէս է, որ չափ բարիք գործես՝ այնչա՛փ չարիք կ'ըլլայ դէմդ. «ագուար մեծցուր, որպէսզի աչքդ հանէ», — կ'ըսեն թուրքերը և իրաւունք ունին:

— Ուրեմն իրաւցընէ կը կասկածիք, որ ձեզ սպաննել կուզե՞ն:

— Այդ մասին տարակոյս չունիմ:

— Ինչո՞ւ ուրեմն ոստիկանութեան իմաց չէք ի տար:

— Ոստիկանութիւնը ի՞նչ կրնայ ընել, քանի որ դեռ մէջտեղը գործողութիւն մը չիկայ: Զիս զարնելնէն ետքը գուցէ սպաննիչները փնտռէ:

— Այն ատեն արդէն ուշ է:

— Եւ սակայն ուրիշ ճար չի կայ:

— Գոնէ գիտե՞ք, թէ որոնք են ձեր թշնամիները:

— Բնականաբար գիտեմ, — պատասխանեց Արշաւիր, որուն աչքերը ատելութեամբ շողացին:

— Բայց այն ատեն գործը կը դիւրանայ, — դիտել տուաւ օրիորդը:

— Ո՛չ ձեր կարծածին չափ, ասկէ զատ՝ համբերութիւն, ինծի հետ գլուխ ելլելը շատ ալ դիւրին գործ չէ:

Եւ Արշաւիր դուրս ելաւ մտահոգ դէմքով մը:
«Խն՛դճ մարդ,— մտածեց տանտիրուհին,— Ի՛նչ դժուար բան է այսպէս սրտադողով ապրիլը»:

Այս խօսակցութենէն մէկ քանի օր ետքը, իրիկուն մը, Արշաւիր տուն եկաւ սովորականէն աւելի վրդոված ու ջղագրգիռ վիճակի մը մէջ:

Պահ մը առանձնացաւ իր սենեակը, յետոյ, երբ մուտք բոլորովին պատած էր, վար իջաւ ու եկաւ այն սենեակը, ուր հաւաքուած էին երեք քոյրերը:

— Այս իրիկուն սովորականէն աւելի յուզուած կ'երևաք, Արշաւիր էֆէնտի,— դիտել տուաւ օրիորդներէն մէկը:

— Այո՛, իրաւունք ունիք, շատ գրգռուած եմ,— պատասխանեց երիտասարդը:

— Ինչո՞ւ համար, նոր բա՞ն մը կայ:
— Այո՛, այսօր գէշ բաներ իմացայ, թշնամիներս որոշեր են զիս անպատճառ սպաննել:

— Ի՛նչ կ'ըսէք, Արշաւիր էֆէնտի:
— Ճշմարտութիւնը կ'ըսեմ, արդէն այդ մասին կասկած չունէի և ձեզի ալ ըսած էի ուրիշ ատեն:

— Բայց ինչո՞ւ անմիջապէս ոստիկանութեան իմաց չտուիք:
— Ի՛նչ օգուտ ունի ոստիկանութեան իմաց տալը, քանի որ չեմ գիտեր, թէ ո՞վ պիտի ըլլայ զիս զարնողը և թէ ո՞ւր կը գտնուի այս միջոցիս:

— Գոնէ որու վրայ կասկած ունենալնիդ կ'ըսէ՞ք:
— Կասկածս մէկ մարդու վրայ չէ, որ...
— Եթէ ատանկ վախ մը ունիք, գոնէ զգուշութիւն ըրէք ու դուրս մի ելլէք:

— Մինչև ե՞րբ,— ըսաւ Արշաւիր,— կրնա՞մ փակուած մնալ տանը մէջ:

— Այս գիշեր դուրս պիտի ելլէ՞ք:
— Այո՛, հիմա անմիջապէս. կարևոր գործ մը ունիմ:
— Ի՛նչ անխոհեմութիւն,— գոչեց օրիորդներէն մէկը:— Գոնէ զէնք ունի՞ք քովերնիդ:

— Անշուշտ, առանց զէնքի չեմ պտըտիր:
Յետոյ դաւաճանը հանդիսաւոր ձևով մը սա խօսքերը արտասանեց.

— Բայց հոգ մի՛ ընէք, ես չեմ վախնար, խիղճս հանդարտ է և սիրտս մաքուր... նոյնիսկ եթէ զիս գլխէս զարնել ուզեն՝ հարուածը ոտքիս կուգայ... գիտցա՛՞ծ եղէք:

Ու Արշաւիր դուրս ելաւ տունէն: Երեք քոյրերը փոխանակուած խօսքերուն ազդեցութեան ներքև պահ մը լուռ մնացին: Երիտասարդը հագիւ թէ քանի մը վայրկեանէ ի վեր մեկնած էր, երբ յանկարծ հրազէնի ձայներ լսուեցան:

Աղջիկները սարսափահար իրար նայեցան:
— Արշաւիր էֆէնտին զարկին,— գոչեց իրենցմէ մին:
— Իրա՞ւ, արդեօ՞ք, իմ ալ միտքէս այնպէս կ'անցնի կոր,— պատասխանեց միւսը:

— Իցի՛ւ թէ թող չի տայինք դուրս ելլելու:
— Կարծես թէ նախազգացում մը ունէր, որ այս իրիկուն պիտի զարնուէր:
— Թերևս ուրիշ բան մըն էր եղածը, ինչո՞ւ անպատճառ կ'ենթադրէք, որ Արշաւիրն է զարնողը:

Այս խօսակցութիւնը կը շարունակուէր, երբ տան դուռը զարնուեցաւ:
Երեք օրիորդներն ալ միասին վազելով գացին բանալու:
Բայց յանկարծ կեցան:
Վախ մը զիրենք պաշարեց:
— Ո՞վ է,— պոռաց իրենցմէ մին բարձրաձայն:
— Բացէ՛ք շուտ, Արշաւիր էֆէնտին բերինք,— գոչեց ձայն մը դուրսէն:

Այս բառերը այլևս կասկած չէին թողուր, թէ երիտասարդը մահափորձի մը զոհ գացած էր:
Փութացին դուռը բանալու:
Երկու հոգի, իրենց թևերուն մէջ բռնած, ներս մտցուցին դաւաճանը:
— Աստուա՛՞ծ իմ, զարնուած է,— գոչեց դուռը բացող օրիորդը:

— Այո՛,— ըսաւ երկու անձերէն մին,— բայց բարեբախտաբար վէրքը թեթև է և անվտանգ:
— Ուրկէ՞ զարնուած է:
— Ոտքէն:

Արշաւիր ինքն ալ խօսքի խառնուեցաւ և նուազեալ ձայնով մը ըսաւ.

– Թշուառական սրիկաները թէև փորձեցին գլխէս զարնել, բայց չյաջողեցան, գիտէ՞ք, օրիորդներ, քիչ մը առաջ ձեզի կ'ըսէի, որ եթէ գլխուս նշան առնեն, իրենց հարուածը ոտքիս կուգայ, ճիշդ ըսածիս պէս կատարուեցաւ:

– Այո, – հաւաստեց օրիորդը, – այդպէս ըսիք մեկնելէ առաջ, կարծես նախագագիք, թէ այս գիշեր փորձանք մը պիտի գար ձեր գլխին, մենք ձեզի այնչա՛փ ստիպեցինք, որ դուրս չելլաք, մտիկ չըրիք:

– Եթէ այսօր չընէին՝ վաղը կամ միւս օր պիտի ընէին:

Արշաւիրի ընկերակցող երկու անձերը, որոնց մին նշան կը կոչուէր ու իր աներձագն էր, արդէն ծանօթ էր՝ տան մէջ ուրիշ անգամներ եկած ըլլալով հոն, իսկ միւս թաղին գիշերապահն էր:

Նշան այս վերջինը ճամբու դրաւ՝ փոքրիկ նուէր մը սահեցնելով ձեռքը:

Յետոյ Արշաւիրի թեւը մտնելով՝ զայն վեր հանեց սանդուխէն ու առաջնորդեց իր սենեակը:

Վէրքը այնքան աննշան էր, որ Արշաւիր գրեթէ առանց օգնութեան կրցաւ երթալ իր սենեակը:

Երբ երկուքը առանձնացան հոն և դուռը գոցեցին, չարաչուք ժպիտ մը գծագրուեցաւ դաւաճանին շրթունքներուն վրայ:

– Ի՞նչ կ'ըսես այս եղածին, – հարցուց իր աներձագին:

– Կարծեմ յաջողուցինք, – պատասխանեց այս վերջինը:

– Արդեօք գիշերապահը որևէ կասկած ունեցա՞ւ:

– Բնա՛ւ երբեք, արդէն անիկա հրազէնի պայթումէն բաւական ետքը եկաւ:

– Վախցայ, որ կ'ելլաս ծանրապէս կը վիրաւորես զիս:

– Բարեբախտաբար հրազէն գործածելու բաւական վարժութիւն ունիմ:

– Հիմա ջանանք այս արկածէն կարելի եղածին չափ օգուտ քաղել. ես անկողին կը մտնամ, կը պառկիմ. դուն նախ գնա՛, բժիշկ մը ղրկէ ինձի, յետոյ

վազէ, իրողութիւնը պատմէ քօմիսէրին, ըսէ, որ հրազէնը պարպողը երկայնահասակ երիտասարդ մըն է, որուն ուրիշ երկու երիտասարդներ կ'ընկերանային, թէ երեքը մէկէն խոյս տուած են դէպի Թաուլա պաշի. յետոյ, իսկոյն թէլէֆօն ըրէ նաև իքինձի շիւպէ միւտրի ձէմալ պէյին և ըսէ, որ ծանրապէս վիրաւորուած եմ և կը փափաքիմ մեռնելէ առաջ իմ վկայութիւնս տալ իրեն և խնդրէ, որ անմիջապէս գայ զիս տեսնելու:

– Շատ աղէկ, – պատասխանեց Նշան, – հիմա կ'երթամ, բայց նախ դուն անկողնիդ մէջ մտիք:

Արշաւիր աճապարանքով հանուեցաւ և մտաւ անկողին:

Իսկ աներձագը մեկնեցաւ կատարելու համար դաւաճանին յանձնարարութիւնները:

Վարի յարկը տանտիրուհիները իրեն կը սպասէին:

– Ինչպէ՞ս է Արշաւիր էֆէնտին, – փութաց հարցնելու օրիորդներէն մին:

– Աղէկ չէ, տաքութիւն ունի, – պատասխանեց Նշան, – վէրքը իմ կարծածէս աւելի ծանր է, վախնամ գնդակը ոսկորին դպած է:

– Ի՞նչ կ'ըսես, միւսի՛ւ Նշան:

– Հիմա կ'երթամ կոր բժիշկ մը բերելու:

– Արդեօք բանի մը պէտք ունի՞:

– Եթէ կ'ուզէք՝ մէյ մը քովը ելէք, հարցուցէք:

– Հիմա կ'երթամ:

Արդարև օրիորդը անմիջապէս փութաց վիրաւորին քով:

– Արշաւիր էֆէնտի, բանի մը պէտք ունի՞ք, – հարցուց:

– Լիմօնատ մը եթէ շինէք ու բերէք՝ շատ շնորհակալ կ'ըլլամ, – պատասխանեց Արշաւիր նուաղկոտ ձայնով մը, – ներսի-դիս կ'այրի կոր:

– Արդէն այնպէս է, վիրաւորները միշտ ծարաւ կը զգան, կեցէ՛ք, հիմա բերեմ:

Եւ հինգ վայրկեան ետքը վերադարձաւ գաւաթ մը լիմօնատով:

Երիտասարդը զայն խմեց անյազօրէն, յետոյ սիկառէթ մը վառեց.

– Ինչպէ՞ս կը զգաք դուք ձեզի, – հարցուց օրիորդը:

– Բաւական լաւ:
 – Խօսելը ձեզ չյոգնեցնէ:
 – Ո՛չ, ո՛չ... միայն թէ վերջս սարսափելի կը ցաւի կոր:
 Թշուառականները մազ մնաց գլուխս պիտի ուտէին:
 – Ուրեմն մէ՞կ հոգի չէր ձեր վրան յարձակողը:
 – Երեք հոգի, օրիորդ,— գոչեց Արշաւիր,— երեք հոգի...
 – Գոնէ կրցա՞ք զիրենք ճանչնալ:
 – Մէկ հատը, այսինքն հրազէնը պարպողը ճանչցայ, գոնէ զինքը մէկու մը նմանցուցի:
 – Դուք ինչո՞ւ ձեր զէնքը չբաշեցիք:
 – Ժամանակ չեղաւ, հազիւ թէ հրազէնը պարպեց, երեքը մէկ փախչիլ սկսան, բարեբախտաբար նոյն միջոցին Նշանը մօտեցաւ ինծի և բռնեց զիս, որ վար չիյնամ:
 – Ի՞նչ բարեբախտութիւն, որ հոն գտնուեիր է:
 – Այո՛, մեծ բարեբախտութիւն, ինքն ալ հոս կուգայ եղբր զիս տեսնելու:
 Քիչ յետոյ բժիշկը եկաւ, վերջը քննեց, յայտարարեց, թէ աննշան բան մըն էր և թէ մէկ-երկու օրէն կրնար ոտքի ելլել: Արշաւիրի ստիպումներուն վրայ, սակայն, խնամով վիրաւոր ոտքը բամպակներով ու լաթերով փաթթեց ու մեկնեցաւ:
 Արշաւիր անկողնին մէջ երկնցած՝ մտքովը ծրագիրներ կը յօրինէր իր հակառակորդները ծուղակը ձգելու համար:
 Ինչպէս ընթերցողները տեսան, այդ մահափորձը պարզապէս իր կողմէ սարքուած խաղ մըն էր և նպատակ ունէր ձերբակալել տալու կարգ մը անմեղ հնչակեաններ իբրև այդ «ոճրափորձ»ին հեղինակները կամ թելադրիչները:
 Նշան վերադարձաւ իր ազգականին քով և յայտարարեց, թէ բոլոր յանձնարարութիւնները կատարած էր:
 – Ճէմալ պէյին թէլէֆօն ըրի՞ր,— հարցուց Արշաւիր:
 – Բնականաբար և մեծ բարեբախտութիւն էր, որ տակաւին չէր մեկնած իր պաշտօնատեղիէն:
 – Ի՞նչ ըսաւ:
 – Երբ վիրաւորուիլդ լսեց՝ շատ իրար անցաւ և մանրամասն տեղեկութիւն ուզեց ստացած վերջերուդ մասին,— պատասխանեց Նշան:

– Ի՞նչ պատասխանեցիր:
 – Ըսի, որ տակաւին բժշկական քննութիւն չէր կատարուած, այսուհանդերձ վերջը բաւական ծանր կ'երևար: Ասոր վրայ ըսաւ, թէ ոստիկանութեան բժիշկը հետն առած անմիջապէս պիտի գայ, հիմա ճամբան ըլլալու է:
 – Անունը, հասցէն լաւ մը բացատրեցի՞ր:
 – Այո՛, այո՛, ապահով եղիր:
 Քառորդ ժամ ետքը կառքի թաւալումի ճայն մը լսուեցաւ:
 – Կարծեմ եկաւ,— գոչեց Նշանը:
 Արդարև կառքը քիչ յետոյ կեցաւ տան դրան առջև:
 – Դուն քիչ մը ետքը մեզ առանձին ձգէ՛,— պատուիրեց Արշաւիր,— թերևս իրարու ծածուկ ըսելիքներ ունենանք:
 – Շատ աղէկ, արդէն ես ալ ստիպուած եմ երթալու, մէկու մը հետ ժամադիր եղած եմ:
 Նոյն ըոպէին դրան զանգակը հնչեց, և օրիորդներէն մին գնաց բանալու:
 Երկու հոգի կառքէն իջան, և իրենցմէ մին հարցուց.
 – Արշաւիր է՞Ֆէնտիին տունը ա՞յս է:
 – Այո՛, հրամմեցէ՛ք,— պատասխանեց օրիորդը:
 – Կ'ուզենք զինքը տեսնել.
 – Բայց վիրաւորուած ու անկողինը պառկած է:
 – Գիտենք և ճիշդ ատոր համար եկած ենք զինքը տեսնելու:
 – Ուրեմն, եթէ կը հաճիք, սենեակը սպասեցէք, մինչև որ իրեն իմաց տամ. թերևս կը քնանայ կոր:
 – Նոյնիսկ եթէ կը քնանայ կոր, արթնցուցէ՛ք զինքը,— ըսաւ օրիորդին հետ խօսող անձը տիրական շեշտով մը:
 Յետոյ աւելցուց.
 – Ըսէք իրեն, որ իքնին շիւղ միւտի ձէմալ պէյը եկած է ոստիկանութեան բժիշկին հետ և զինքը անպատճառ տեսնել կ'ուզէ:
 Օրիորդը տեսնելով, որ գործը պաշտօնական անձերու հետ է, աւելի յարգալից կերպարանք մը առաւ:
 – Կը խնդրեմ, պէ՛յ էՖէնտի, ըոպէ մը սենեակը մտէք, մինչև որ երթամ, իմաց տամ Արշաւիր է՞Ֆէնտիին:
 – Շատ աղէկ,— հաւանեցաւ պէյը:

Քիչ յետոյ օրիորդը վերադարձաւ և երկու հիւրերը առաջ-
նորդեց վիրաւորին քով:

Արշաւիր երախտագիտական քանի մը բառեր թոթովեց
նուազեալ ձայնով մը:

Թուրք ոստիկանական պաշտօնեան ուզեց, որ իրեն ընկերա-
ցող ոստիկանական բժիշկը վէրքը քննէ:

— Արդէն ուրիշ բժիշկ մը քննեց, մաքրեց և կապեց,— ըսաւ
Արշաւիր,— և խստիւ պատուիրեց, որ չբացուի մինչև վաղը գի-
շեր, հակառակ պարագային, ըսաւ թէ, կրնայ բորբոքում մը յա-
ռաջ գալ, ուստի կը խնդրեմ, որ վէրքը չբանանք այժմ:

— Արդէն անպատճառ վէրքը նայելու պէտք չի կայ,— յայ-
տարարեց բժիշկը,— քանի որ արդէն նայուած ու կապուած է,
կը յուսամ, որ ոսկորը չէ վնասուած:

— Չեմ կարծեր,— ըսաւ Արշաւիրը,— վէրքը թէև բաւական
խոր էր:

— Շատ ցաւ կը զգա՞ք:

— Սկիզբները շատ ցաւեցաւ, բայց հիմա դեղերուն վրայ լաւ
է:

— Քանի որ ցաւ չունիք, ըսել է՝ ոսկորները չեն վնասուած:
Տեսնենք տաքուլթիւննիդ ինչպէ՞ս է:

Բժիշկը իր քննութիւնը կատարելէ ետքը յայտարարեց.

— Բայց, Արշաւիր էֆէնտի, գրեթէ բնա՛ւ տաքուլթիւն չու-
նիք:

— Քիչ մը առաջ ունէի, բայց հիմակ անցաւ,— ըսաւ վիրա-
ւորը:

— Ինչ որ է, ամէն պարագային՝ եղածը անկարևոր բան մըն
է,— յայտարարեց ձէմալ պէյ,— և շատ գոհ եմ, որ այդպէս է:
Քիչ մը առաջ, երբ ինծի թէլէֆօն ըրին, վիճակդ բաւական
ծանր ներկայացուցին:

— Իրաւ է, որ նոր զարնուած ատենս այնպէս էի, բայց յետոյ,
բժիշկին խնամքներուն շնորհիւ, շուտով ինքզինքս գտայ:

— Պարզապէս կ'երևայ, որ չափազանց վախցեր ես, ինչ որ է,
տօքթոր էֆէնտի, կարծեմ թէ դուք կրնաք երթալ, պարապ տե-
ղը ձեզ հոս վար չդնեմ, մանաւանդ որ գործ ալ ունիք:

Բժիշկը ոտքի ելաւ և մնաք բարով ըսելով՝ ուղղուեցաւ դէ-
պի դուռը. իրեն հետեւեցաւ նաև Նշան:

Օրիորդներէն մին, որ դուրսը կը գտնուէր, երկու հիւրերը
ճամբու դրաւ և յետոյ անապարանքով եկաւ վեր ու դրան
ետեւէն ականջ դրաւ ներսի խօսակցութեանը:

Այդ երկու թուրքերուն գալուստը չափազանց շահագրգռած
էր զինքը: Մինչև այն ատեն չէր գիտեր, թէ իրենց երիտասարդ
վարձակալը ի՞նչ գործ կամ պաշտօն ունէր: Երեք քոյրերը այն-
պէս կը կարծէին, թէ Արշաւիր առևտրական գործով կը զբա-
ղէր: Բայց իր վիրաւորուելուն առթիւ յանկարծ ոստիկանական
բարձր պաշտօնեայի մը այցելութիւնը բժիշկի մը ընկերակցու-
թեամբ ծանր կասկածներ ներշնչած էր իրենց Արշաւիրի ինք-
նութեան մասին: Եւ իրենցմէ մին լուսաբանուելու համար որո-
շած էր ամէն միջոցներուն դիմել և չէր վարանած գալ դրան
ետեւէն մտիկ ընելու վիրաւորին սենեակին մէջ տեղի ունեցած
խօսակցութիւնը:

Երբ Արշաւիր և ձէմալ պէյ առանձին մնացին, բաւական
ժամանակ լուռթիւն տիրեց սենեակին մէջ: Ի վերջոյ, դրան
ետեւէն, օրիորդը լսեց սա խօսքերը, զոր թուրքը կ'ուղղէր հայ ե-
րիտասարդին:

— Ես, Արշաւիր էֆէնտի, բօլիստիկին սօնը պու տըր...

Այս խօսքերը յայտնութիւն մը եղան օրիորդին համար:

Այսպէս ուրեմն, իրենց վարձակալը ոստիկանական պաշտօ-
նեայ մը, հաւանօրէն լրտես մ'էր:

Հիմա կը բացատրուէր, թէ ինչու Արշաւիր կը վախնար «թըշ-
նամիներէ»:

Ուրեմն, այսպէս, իրենք անգիտակցաբար, իրենց տան մէջ
հիւրընկալած էին դաւաճան մը: Այս մտածումը չափազանց կը
տագնապեցունէր հէգ աղջիկը:

«Ոտքի ելլելուն պէս պէտք է զինքը վռնտել տունէն»,— կը
խորհէր:

Եւ սակայն այդ բանը ընելու քաջութիւնը պիտի ունենա-
յի՞ն:

Այդ մատնիչ լրտեսը կրնար իրենց գլուխը փորձանք մը բե-
րել սուտ զրպարտութիւններով:

«Իցի՛ւ թէ հարուածը գլխուն գար ու սատկէր»,— կ'ըսէր
ինքնին:

Յետոյ կրկին մօտեցաւ դրան և սկսաւ մտիկ ընել:

Արշաւիր այժմ մանրամասնօրէն կը պատմէր իր վրայ կատարուած «մահափորձ»ին պարագաները:

Երբ պատմութիւնը աւարտեց, ձէմալ պէյ Հարցուց.

– Կը կարծե՞ս, որ այս գործին մէջ Տրդատ և իր ընկերները բաժին ունենան:

– Բնականաբար,– պատասխանեց Արշաւիր,– արդէն կասկած չի կայ, թէ մահափորձը անոնց ձեռքով պատրաստուած է:

– Պէտք է, որ Արշակը տեսնե՞ք և այս մասին իր կարծիքն ալ առնենք:

– Ըստ իս՝ պէտք է անմիջապէս ձեռքադրել տալ Տրդատը:

– Այդ դիւրին է, բայց մենք կ'ուզենք միւս ընկերներն ալ երևան հանել ու ամէնքը միասին ձեռքադրել: Արշակ ինծի ըսաւ, որ այդ բանը կարելի պիտի ըլլայ մէկ-երկու օրէն:

– Ես նորէն կը կրկնեմ, որ անմիջապէս Տրդատը ձեռքադրելու է,– պնդեց Արշաւիր,– կրնայ ըլլալ, որ ի վերջոյ նշմարէ, թէ Արշակ զինքը կը խաբէ կոր, ու ինքն ալ անյայտանայ:

– Այդ մասին Արշակ շատ ապահով է,– պատասխանեց թուրքը,– և բնաւ այդպիսի երկիւղ մը չունի:

– Վերջին անգամ ե՞րբ տեսած էր Արշակ Տրդատը:

– Երէկ առտու,– պատասխանեց ձէմալ պէյ,– և իրարու հետ համաձայնած են, որ վաղը իր միւս երկու ընկերներով գայ ու միասին բանակցին:

– Ուրեմն մինչև վաղը կրնաք սպասել, բայց ըստ իս լաւագոյն է, որ վաղը այդ երեք անձերը անմիջապէս ձեռքադրել տաք:

– Ես ալ այնպէս կը խորհիմ, թէև Արշակ խորհուրդ կուտայ քիչ մը ժամանակ ևս սպասելու:

Օրիորդը, որ դրան ետեւէն կը լսէր բոլոր այս խօսքերը, բուն յուզումի մը մատնուած էր, որովհետև կը զգար, թէ այդ երկու մարդիկը պարզապէս կարգ մը անմեղ հայերու դէմ կը դաւաճանէին նոյն միջոցին:

Եւ իրեն այնպէս կը թուէր, թէ ինքն ալ կերպով մը մեղսակից էր այդ դաւաճանութեան:

«Ա՛խ,– կը մտածէր,– եթէ այդ Տրդատը ճանչնայի և կարենայի իրեն իմացնել սպառնացող վտանգը»:

Բայց ափսո՛ս, որ իր ծանօթներուն մէջ բնաւ չէր յիշեր այդ անունով մէկը, գտնուէր ալ, դարձեալ չէր հետևեր, թէ այդ Տրդատը ինչո՞րոյ նիւթ եղող անձն է:

Այս մտածումներուն մատնուած էր, երբ լսեց, թէ տան դրան զանգակը կը հնչեցնեն:

Իր երկու քոյրերը արդէն իրենց սենեակը քաշուած էին պառկելու համար:

Օրիորդը ինքը վար վագեց դուռը բանալու:

Եկողը անծանօթ մըն էր իրեն համար:

– Մ՛վ կ'ուզէք,– հարցուց՝ առանց դուռը բոլորովին բանալու:

– Արշաւիր է՞Ֆէնտին,– պատասխանեց միւսը:

– Պառկած է:

– Գիտեմ, որ պառկած է, քանի որ այս իրիկուն տունէն դուրս ելած միջոցին ոտքէն վիրաւորուեցաւ, բայց կ'ուզեմ զինքը տեսնել անպատճառ:

– Քովը հիւր կայ:

– Ձէմալ պէյը. այն ալ գիտեմ, բայց աւելի լաւ: Արդէն զայն ալ անպատճառ տեսնել կ'ուզէի:

– Բայց դուք ո՞վ էք,– հարցուց աղջիկը:

– Իրենց ծանօթն ու բարեկամն եմ,– ըսաւ անծանօթը,– դուռը բացէք ու թող տուէք, որ ներս մտնեմ:

– Բայց Արշաւիր է՞Ֆէնտին պատուիրած է, որ առանց իրեն նախապէս իմաց տալու քովը մարդ չտանինք:

– Լաւ, ուրեմն, ըսէ՛ք իրեն, որ Արշակը եկած է ու անպատճառ զինքը տեսնել կ'ուզէ, նոյն բանը կրնաք ըսել նաև ձէմալ պէյին:

Արշակ անունը լսելով՝ օրիորդը ցնցում մը ունեցաւ: Յիշեց, որ քիչ մը առաջ այդ անունը տուած էին Արշաւիր և ձէմալ պէյ:

– Սպասեցէ՛ք այս սենեակը, որպէսզի երթամ իմաց տամ իրենց,– ըսաւ՝ նորեկը առաջնորդելով գետնայարկի խուցը:

– Բոլորովին անօգուտ ձևակերպութիւն մըն է այս,– դիտել տուաւ մարդը սենեակ մտնելով:

– Ինչ ընեմ, քանի որ այնպէս պատուէր տուած է, և այս ի-

րիկուան դէպքէն ի վեր ալ աւելի պէտք է զգուշութեամբ վարուինք:

– Արդեօք կը կարծես, որ ես ալ մահափորձ մը ընելու եկած եմ,– ըսաւ Արշակ խնդալով:

Օրիորդը առանց այս հեղնութեան պատասխանելու վեր գնաց և քիչ յետոյ վերադարձաւ յայտարարելով, թէ Արշաւիր իրեն կը սպասէր:

– Կը տեսնաս, որ օտարական մը չեմ,– գոչեց Արշակ յաղթականօրէն:

Երբ մտաւ վիրաւորին սենեակը, մտերմական ողջոյններով ընդունուեցաւ:

– Վերջապէս քու Տրդատ բարեկամդ իր ծրագիրը գործադրեց,– ըսաւ Արշաւիր:

– Ի՞նչ ծրագիր,– հարցուց Արշակ զարմացած դէմքով մը:

– Ձիս սպաննելու ծրագիրը:

– Ապահո՞ւմ ես, որ այդ գործին մէջ մատ ունի:

– Վստահ եմ, որ վրաս յարձակող երեք անձերէն մէկը ինքն էր,– հաստատեց Արշաւիր:

– Իսկ ես քեզ կ'ապահովցնեմ, թէ ինք հոն չէր և թէ լուր անգամ չունէր եղածէն:

– Ինչպէ՞ս,– գոչեց Արշաւիր դժգոհ դէմքով մը:

– Ոճրափորձը ժամը քանի՞ն տեղի ունեցաւ,– հարցուց Արշակ:

– Ժամը ութն էր, երբոր դուրս ելայ տունէն և հազիւ քանի մը վայրկեան ետքը տեղի ունեցաւ դէպքը:

– Արդ, ժամը 8-էն մինչև 9 ես ու Տրդատ միասին նստած էինք յոյն գինեպանի մը խանութը:

– Ուրեմն Տրդատ չկրնար մասնակից ըլլալ ոճրափորձին,– ըսաւ ձէմալ պէյ:

– Թերևս ես սխալ տեսած եմ,– ստիպուեցաւ խոստովանիլ Արշաւիր:

– Ապահովաբար սխալ տեսած ես,– պատասխանեց Արշակ,– քանի որ նոյն միջոցին իրեն հետ միասին էի և կարծեմ, այս ըսածիս չէք կասկածիր բնաւ:

– Երբեք կասկածի խօսք մը չըսի ես,– գոչեց դաւաճանը:–

Միայն թէ Տրդատին հոն չգտնուիլը չկրնար փաստ մը համարուիլ, թէ ինք տեղեկութիւն չունէր մահափորձէն և կամ ինք իսկ չէր պատրաստած զայն:

– Ատոր ըսելիք չունիմ,– պատասխանեց Արշակ,– միայն թէ պատճառներ ունիմ հաւատալու, որ իրաւքընէ լուր չունէր այդ մահափորձէն, և թէ նոյնիսկ այդ մահափորձը հնչակեաններու կողմէ չէ կատարուած:

– Չարմանալի՛ բան,– գոչեց Արշաւիր յուզուած շեշտով մը,– ուրեմն ո՞վ ըրաւ այդ մահափորձը:

– Չեմ գիտեր, թէ ով ըրաւ, բայց ո՛չ Տրդատ և ո՛չ ալ իր ընկերները դեր մը ունին այդ գործին մէջ:

– Ի՞նչ փաստով պիտի հաստատես ըսածդ:

– Շատ պարզ է, անոնք, որ դարանակալ եղան քու վրադ գէնք պարպելու համար, անշուշտ գիտէին, որ դու ուր կը բնակիս, քանի որ տանդ շատ մօտերը կեցած են և նոյնիսկ գիտէին նաև, թէ ո՛ր ժամերուն դուրս կ'ելլես, այնպէս չէ՞:

– Այդ մասին տարակոյս չի կայ,– պատասխանեց ձէմալ պէյ,– ապահովաբար այդ մարդիկը տունդ գիտէին:

– Լավ ուրեմն,– ըսաւ Արշակ,– Տրդատին և իր ընկերներուն փափաքն էր տանդ տեղը սորվիլ և ասոր համար ինծի հետ յարաբերութեան մտած էր և նոյնիսկ դրամական պարգևներ տուած: Եթէ քու բնակարանդ գիտնային՝ ի՞նչ պէտք ունէին ինծի կաշառել ջանալու. ուստի կը հետեցնեմ, որ մահափորձը ընողները մեր կասկածած հնչակեանները չեն:

Արշակի խօսքերը ա՛յնչափ տրամաբանական էին, որ ձէմալ պէյ շատ արդարացի գտաւ ըսածները, իսկ Արշաւիր լուռութիւն պահեց:

– Եւ սակայն,– դիտել տուաւ ոստիկանութեան թուրք պաշտօնեան,– իրողութիւն մը կայ մէջտեղ, զոր կարելի չէ ուրանալ, այն է՝ Արշաւիրի վիրաւորուած ըլլալը, արդ, որո՞նք են ուրեմն այդ մահափորձը կատարողները:

– Ծիշդ ես ալ այդ կը մտածեմ ու չեմ կրնար գտնել,– պատասխանեց Արշակ:

– Ես ձեզի պիտի ապացուցանեմ, թէ հնչակեաններու գործն է,– ըսաւ Արշաւիր:

– Ինչպէ՞ս, – Հարցուց ձէմալ պէյ:
– Իրենց իսկ խոստովանութեամբ:
– Եթէ այդ կարենաս ընել՝ այն ատեն խնդիրը կը լուծուի:
– Ես ձեզի քանի մը անձեր ցոյց պիտի տամ և պիտի խընդ-
րեմ, որ զանոնք անմիջապէս ձերբակալել տաք և իմ ներկայու-
թեանս բերէք, պիտի տեսնէք, որ ամէն բան պիտի խոստովա-
նին:
– Ուրեմն անմիջապէս ըսէ՛ այդ մարդոց անունները:
– Վաղը առտու ձեզի կուտամ ցանկը, – պատասխանեց Ար-
շաւիր:
Ձէմալ պէյ և Արշակ քիչ մըն ալ մնացին Արշաւիրի քով ու
մեկնեցան:
Վարը, դրան առջև, ոստիկանութեան պաշտօնեային կառքը
կը սպասէր: Երկուքն ալ մտան մէջը, և կառքը ճամբայ ելաւ:
– Ի՞նչ կ'ըսես այս դէպքին, – Հարցուց ձէմալ պէյ լրտեսին:
– Կ'ըսեմ, որ շատ տարօրինակ դէպք մըն է, գրեթէ անբա-
ցատրելի:
– Ինձի ալ այս գործը շատ մութ կ'երևայ:
– Կը ներէք, որ այս մասին իմ համոզումս անկեղծօրէն յայտ-
նեմ:
– Անշուշտ, խօսէ՛, տեսնենք, գիտես, որ ես քու վրադ մեծ
վստահութիւն ունիմ:
– Շատ շնորհակալ եմ, պէ՛յ էֆէնտի, լաւ ուրեմն, ես կը
կարծեմ, թէ որեւէ դէպք չէ պատահած:
– Ինչպէ՞ս, – գոչեց թուրքը, – Արշաւիր վիրաւորուած չէ՞:
– Չեմ գիտեր, թերևս ոտքէն թեթևապէս վիրաւորուած ըլ-
լայ, բայց ատոր ալ վստահ չեմ, քանի որ վէրքը չեմ տեսած, գո-
նէ դուք տեսա՞ք:
– Ո՛չ:
– Բայց կարծեմ ոստիկանութեան բժշկին հետ եկաք:
– Այո՛, սակայն Արշաւիր ըսաւ, թէ մենէ առաջ ուրիշ բժիշկ
մը եկած ու վէրքը կապած է ու պատուիրած է, որ չբացուի,
մենք ալ չպնդեցինք:
– Թեթև վէրք մը այդչափ զգուշութիւններու պէտք չունի և
տարակոյս չի կայ, որ Արշաւիրի վէրքը շատ թեթև է:

– Ուրեմն երեք դարանակայներու պատմութիւնը բոլորովին
սո՛ւտ է, և Արշաւիր որեւէ վէրք չէ՞ ստացած, բայց հրազէնի
ձայները լսեր են տնեցիները և գիշերապահն ալ:

– Կրնայ հրազէն պարպուած ըլլալ և նոյնիսկ կրնայ ոտքէն
ալ թեթևապէս վիրաւորուած ըլլալ, բայց ասիկա չապացուցա-
ներ, թէ հնչակեան դաւադրութիւն մը կայ գործին մէջ: Այդ
դէպքին իբրև վկայ, Արշաւիրէն գատ, երկու հոգի կան, մէկը՝
Նշան և միւսը՝ գիշերապահը: Ես տուն գալէ առաջ պահակա-
նոց գացի և քննութիւն մը կատարեցի: Գիշերապահը իրաւ
հրազէնի ձայն լսեր ու գացեր է դէպի ձայնը եկած կողմը, բայց
բան մը չէ տեսեր, միայն Արշաւիրը գտեր է ոտքէն թեթևապէս
վիրաւորուած, իսկ Նշան ըսեր է, որ ինք տեսեր է երեք հոգի, ո-
րոնք խոյս կուտան եղեր. այդ Նշանը, դուք ալ իմացաք, ան-
շուշտ, Արշաւիրի աներձագն է, և բաւական տարօրինակ է, որ
ճիշդ այդ միջոցին հոն գտնուեր է:

– Վերջապէս ի՞նչ ըսել կ'ուզես, – գոչեց ձէմալ պէյ:
– Ըսել կ'ուզեմ, որ ասիկա կրնայ խաղ մը ըլլալ Արշաւիրի
ու Նշանի միջև կարգադրուած, – պատասխանեց Արշակ:
– Քեզի բան մը ըսե՞մ, ես ալ այդ կասկածը ունեցայ: Բայց
ահա՛ ինք կ'ըսէ, որ բո՛ւն յանցաւորները երևան պիտի հանէ, ա-
սոր ի՞նչ կ'ըսես:

– Իցի՛ւ թէ, – պատասխանեց Արշակ թերահաւատ շեշտով
մը:

– Յետոյ ուրիշ անուրանալի իրողութիւն մը կայ մէջտեղ, –
չարունակեց ձէմալ պէյ:

– Ո՞րն է այդ, – Հարցուց Արշակ:

– Այսինքն, թէ հնչակեանները իրաւցընէ մահափորձ մը կը
պատրաստէին Արշաւիրի դէմ:

– Ատոր հակառակը չեմ ըսեր, քանի որ ես ալ մօտէն տե-
ղեակ եմ ատոր:

– Եւ յետոյ, ի՞նչ շահ ունէր Արշաւիր այսպիսի կեղծ մահա-
փորձ մը կազմակերպելու:

– Պարզապէս առիթ մը ստեղծելու համար, որպէսզի հնչա-
կեանները ձերբակալուին, և յետոյ, ինքզինքին զոհի մը ձև տա-
լու համար:

Թուրքը չպատասխանեց և մտածկոտ կերպարանք մը առաւ: Արչակ այնպէս ենթադրեց, որ իր խօսքերուն ազդեցութեան տակ ձէմալ պէյ կը խորհրդածէր ինքնիրեն:

— Եթէ կը ներէք, կառքը վայրկեան մը կեցնենք, և ես վար իջնեմ,— ըսաւ:

— Շատ աղէկ,— պատասխանեց թուրքը:

Լրտեսը իր մեծաւորին «գիշեր բարի» մաղթելէ ետքը իջաւ կառքէն:

— Վաղը առտու կանուխ եկուր գիտ տեսնելու,— հրամայեց ձէմալ պէյ՝ մինչ Արչակ կը փութար կառքին դուռը գոցելու:

Լրտեսը առանձին իր ճամբան շարունակեց դէպի Ղալաթիա:

«Իմ խօսքերս կարծեմ բաւական ազդեցութիւն ըրին,— կը խորհէր,— յայտնի կ'երևայ, որ ձէմալ պէյ համոզուած գոյացուց, թէ իմ ենթադրութիւններս ճիշդ էին: Իսկ գալով Արչակի ին, անիկա շատ դժգոհ մնաց, և կարծեմ թէ իրարու թշնամի պիտի դառնանք»:

ԳԼՈՒԽ ԺԸ

ՈՒՐ ԿՐԿԻՆ Կ'ԵՐԵՒԱՅ ԱՍՏԻԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Մեր վերը պատմած դէպքերուն հետեւեալ օրն էր:

Խմբագիրները արդէն հաւաքուած էին «ժամանակ» խմբագրատան վերի սենեակը և գրաշարներու ձեռագիր կը հասցընէին տենդային աճապարանքով մը, երբ ներս մտաւ Սեպուհ Ակունի:

— Կարևոր լուրեր ունիմ,— գոչեց յաղթական ձևով մը,— որչափ պարապ տեղ ունինք:

— Ուզածիդ չափ,— պատասխանեց Արտաշէս Գալփաքճեան:

— Ուրեմն ուրիշ ձեռագիր մի՛ տաք, մինչև որ ես գրելիքներս գրեմ:

— Բայց ի՞նչ է, տեսնենք, այդ կարևոր լուրերդ:

— Թէ՛ ազգային, թէ՛ քաղաքական,— պատասխանեց Ակունի խորհրդաւոր դէմքով:— Մահափորձը իմացա՞ք:

— Ի՞նչ մահափորձ:

— Արչակի Եասեանի դէմ, երէկ գիշեր զարկեր են Բերա, տունէն դուրս ելած միջոցին:

— Մեռե՞ր է:

— Ո՛չ, բայց վիճակը ծանր է եղեր, երեք հոգի յարձակեր են վրան, մանրամասնօրէն պէտք է գրել այս մասին, խիստ կարևոր է:

— Կը կարծե՞ս,— հարցուց Գալփաքճեան թերահաւատ դէմքով մը:

— Բնականաբար այս առթիւ շատ մը ձերբակալութիւններ եղեր են:

— Կուսակցական խնդիր մըն է այդ, որ մեզի համար կարևորութիւն չունի, իրենց աղտոտ լաթերը իրենց մէջը թող լուան:

— Անանկ չէ, եղբայր, հանրային կարևորութիւն ունեցող խնդիր մըն է,— պնդեց Ակունի,— ես այնպիսի մանրամասնութիւններ ունիմ, որ ուրիշ ոչ մէկ լրագրեր իմացած է. ականատես վկաներէ լսեցի ամէն բան:

— Ինչ որ է, գրէ՛, տեսնենք:

Ակունի անցաւ գրասենյակին առջև իր լուրերը խմբագրելու համար: Հազիւ գրիչը ձեռք առած էր, երբ Աստիկ Մարկոսեան ներս մտաւ սենեակէն:

— Վա՛յ, էֆէնտի՛մ, մաշալլահ, ինչպէ՞ս էք, աղէ՞կ էք,— գոչեց թէմէնահաներ ուղղելով աջ ու ձախ,— Սերգիս էֆէնտին ո՞ւր է:

— Վարը չէ՞ր,— հարցուց Գալփաքճեան:

— Ձէ՛, վարի սենեակը մարդ չի կար:

— Ուրեմն դուրս ելած ըլլալու է, սպասեցէք, հիմա կուգայ, եթէ անպատճառ զինքը տեսնել կ'ուզէք:

— Ձէ՛, անպատճառ տեսնելու բան մը չունիմ, հոսկէ կ'անցնէի կոր, անգամ մը հանդիպիմ ըսի, հիմա ոստիկանատունէն կուգամ կոր, շատ իրարանցումի մէջ էին, ես գործի մը համար Բէշատ պէյին գացած էի, հազիւ կրցայ հետը մէկ քանի վայրկեան խօսիլ:

Ակունի, որ գրելու պիտի սկսէր, յանկարծ գրիչը վար դրաւ:

— Ի՞նչ կայ, եթէ կարևոր բան մը իմացար, ըսէ՛, որ գրենք,— ըսաւ:

– Գրուելիք բաներ չեն,– պատասխանեց Աստիկ,– միայն սաչափը գիտեմ, որ կացութիւնը շատ ծանրացած է, մանաւանդ Հայերուն Համար, մեծ փորձանք մը կը պատրաստուի կոր մեր գլխին, և դժբախտաբար տեղի տուողը մենք ենք:

– Մենք ի՞նչ ըրած ունինք:

– Երբոր մենք կ’ըսեմ, յեղափոխական կուսակցութիւնները կը հասկնամ, ժամանակը շատ փափուկ է, ու ասիկա չեն ըմբռններ կոր, պէտք է շատ խոհեմութեամբ շարժիլ և հանդարտ կեանալ:

– Բայց բան մը ըրած չունին:

– Ինչպե՞ս չունին, անգամ մը Րէշատ պէյին հարցուցէ՛ք: Երէկ գիշերուան եղածը չիմացա՞ք:

– Ի՞նչ եղեր է,– հարցուց Ակունի՝ տգէտ ձևանալով:

– Արշաւիր անունով մէկը զարկեր են:

– Ատիկա իմացանք, բայց շատ կարևորութիւն տալու բան մը չէ, մատնիչ է եղեր, զարկեր են, ատանկ բաներ առաջին անգամ չէ, որ կը պատահին:

– Այո՛, բայց վերջապէս շատ կարևորութիւն կուտան կոր այդ դէպքին, հնչակեաններն են եղեր զարնողները:

– Ինքն ալ արդէն հնչակեան մըն է, կուսակցական խնդիր մը պարզապէս և ոչ ուրիշ բան:

– Խնդիրը ձեր գիտցածին պէս չէ,– պատասխանեց Աստիկ խորհրդաւոր ձևով մը,– եղածը կառավարութեան դէմ է, և հետևանքը շատ ծանր պիտի ըլլայ, գիտէ՞ք, որ ցանկեր կը պատրաստուին կոր:

– Ի՞նչ ցանկ:

– Վտանգաւոր Համարուած Հայերու ցանկեր:

– Ի՞նչ պիտի ըլլան այդ ցանկերը:

– Ո՛վ գիտէ, անշուշտ պարապ տեղը չէ, որ կը պատրաստեն կոր, հաւանօրէն այդ ցանկերուն մէջ անցնողները առաջին առթիւ պիտի քշուին:

– Գիտէ՞ք, թէ որոնք կան այդ ցանկերուն մէջ:

– Ձեմ գիտեր,– պատասխանեց Աստիկ խուսափողական ձևով մը,– բայց սա գիտեմ, որ հարիւրաւոր անուններ անցած են ցանկերուն մէջ:

Այս վրդովեցուցիչ տեղեկութիւնը տալէ ետքը Աստիկ մեկնեցաւ՝ բաւական մտատանջութեան մատնելով խմբագիրները:

– Դուռն այդ Արշաւիրին մահափորձին լուրը մի՛ գրեր,– խորհուրդ տուաւ Գալիաքճեան Ակունիին,– չելլայ գլուխնուս փորձանք մը չբանայ, ես այս Աստիկ էֆէնտիին ըսածներուն բնաւ չհաւանեցայ:

– Նայինք ճի՞շդ է ըսածը, անիկա երբեմն ատանկ լուրեր կը հնարէ:

– Նոյն բանը ես ուրիշ տեղէ մըն ալ լսեցի:

Արդարև, մահափորձին լուրը չհրատարակուեցաւ «Ժամանակ»ի մէջ:

ԳԼՈՒԽ ԺԹ 1914 ՅՈՒԼԻՍ 14

Արտասովոր իրարանցում մը կը տիրէր այդ օրը: Պապը Ալիի պողոտային վրայ հեծեալ ոստիկաններ հրացանը ուսերնուն կը շրջազայէին վեր-վար: Ամէն փողոցներու անկիւնը մէկ-երկու ոստիկաններ կեցած էին, որոնք անցորդները կը զննէին կասկածելի ակնարկներով:

Ամէնքը հետաքրքիր՝ այդ անսովոր հսկողութեան պատճառը կը ջանային գուշակել ու չէին յաջողեր:

«Ի՞նչ կայ» հարցումին ոստիկանները կը պատասխանէին դաժան դէմքով մը.

– Բան մը չիկայ, ճամբադ քալէ՛:

Եւ սակայն յայտնի էր, որ ծանրակշիռ իրողութիւն մը կար:

– Թերևս սուլթանը Պոլսոյ կողմը պիտի անցնի,– կ’ըսէին ոմանք:

– Ինչո՞ւ Համար, այսօր բնաւ տօն չի կայ, ասկէ զատ եթէ այդպիսի բան մը ըլլար՝ թերթերը կը գրէին:

– Արդեօք դուրսէն բարձրաստիճան հի՞ւր մը եկած է և Բ. Դուռն պիտի այցելէ:

– Թերևս նախարարական փոփոխութիւն մը կայ, և նոր նախարարներու թափօրին կը սպասեն:

Վերջապէս ամէն մարդ ենթադրութիւններու մէջ մտորած էր:

Իրիկուան դէմ իրողութիւնը լուսաբանուեցաւ:

– Նախարարներու դէմ մահափորձ մը պիտի կատարուի եղբր, և ասոր համար ոստիկանութիւնը զգուշական խիստ միջոցներ ձեռք առեր է:

– Ո՞վ են այդ մահափորձը պատրաստողները:

– Հայերը...

Կամաց-կամաց խնդիրը աւելի որոշ կերպով երևան ելաւ:

– Սապահգիւլի կողմէ սարքուած է եղբր այս մահափորձը, – կը փսփսային իրարու:

Եւ ահա չարաշուք լուր մը տարածուեցաւ ու շատին:

Բոլոր ծանօթ հնչակեանները ձեռքապաշտուած էին:

Ներսէս Զաքարեան, Սամուէլ Թումաճեան, Ստեփան Դանիէլեան, Մուրատ, տօքթոր Ճէլալ, Արծրունի, Վահան Զէյթունցեան, Սաբօ, Լեոն Պալասանեան, Ճանկիւլեան, տօքթոր Պէննէ, Փարամազ, Ռուբէն Կարապետեան և այլն, և այլն ձերբակալուած են:

Սահմանադրութեան հռչակումէն ի վեր առաջին անգամն էր, որ Պոլսոյ մէջ այսպէս հայերու հաւաքական ձերբակալութիւն մը տեղի կ'ունենար:

Համիտական ընթացքն էր, որ կը վերսկսէր:

Հետեւեալ օրերուն մէջ ձերբակալութիւնները շարունակուեցան:

Ոստիկանութիւնը Փարամազի և Ռուբէն Կարապետեանի վրայ խուզարկելով ձեռք անցուցած էր տետրակներ, որոնց մէջ Պոլիս և գաւառները բնակող բազմաթիւ անձերու անուններն ու հասցէները կային:

Ոստիկանութիւնը նմանապէս ձեռք անցուցած էր բազմաթիւ շրջաբերականներ, նամակներ, Քօսթանցայի ժողովին որոշումները, ծրագիրներ, տետրակներ, պատկերներ:

Ձերբակալուածներու թիւը այսպէս* անցաւ:

Բնականաբար Արշալիր մեծ բաժին մը ունէր այդ ձերբակալութիւններուն մէջ:

* Թերթոնի մեր ունեցած օրինակը այստեղ վնասված է: Ծան. կազմողի:

Դաւաճանը ո՛չ միայն անուններ կը հաղորդէր ոստիկանութեան, այլ նոյնիսկ յայտնութիւններ և զրպարտութիւններ կ'ընէր անոնց մասին:

Քանի մը օր ետքը, սակայն, ձերբակալուածներէն մաս մը, ինչպէս Մուրատ, տօքթոր Ճէլալ, Ճանկիւլեան, Թումաճեան և ուրիշներ, կ'արձակուին:

Մնացածներն ալ փրկելու համար ազգային իշխանութիւնը բերանացի կամ թաքրիտով դիմումներ կը կատարէր ներքին գործերու և դատական նախարարութեան և Պոլսոյ կեդրոնի հրամանատարութեան:

Բայց այդ դիմումները կարող չեն ըլլար փրկել զլիսաւոր ամբաստանեալները, որովհետեւ ծանր փաստեր կային անոնց դէմ:

Մանաւանդ Փարամազի կացութիւնը շատ ծանր էր:

Ինք կը նկատուէր դաւադրութեան բո՛ւն կազմակերպիչը, որ յատկապէս Բարիզէն զրկուած էր Սապահգիւլեանի և Շէրիֆ փաշայի կողմէ իթիբհատական պետերուն դէմ մահափորձ կատարել տալու համար, ինչպէս կ'ամբաստանէր ապահովութեան պետ Պէտրի պէյ:

Այս վերջինը ինք անձամբ կը կատարէր ձերբակալեալներու հարցաքննութիւնը, և իր զլիսաւոր հարցումը, ամենուն համար, գրեթէ միևնոյնն էր. «Փարամազը կը ճանչնա՞ս, ի՞նչ յարաբերութիւն ունեցած ես հետը» և այլն:

Եթէ ձերբակալեալը յայտնէր, թէ ճանչցած էր Փարամազը ու որեւէ յարաբերութիւն ունեցած հետը՝ այլևս օճիքը ազատելու յոյս չունէր:

Հարցաքննութիւնները նոր սկսած էին, երբ յանկարծ պայթեցաւ եւրոպական պատերազմը:

Դէպքերը գահավիժօրէն կ'ընթանային այլևս:

Թուրքիա մէկ կողմէն չէզոքութիւն յայտարարելով Հանդերձ միւս կողմէ կը պատրաստուէր պատերազմի տենդային հապճեպով մը:

Ու միևնոյն ատեն հայերուն բնաջնջումին դժոխային ծրագիրը կը մշակուէր:

Ընդհանուր պատերազմին առաջին արդիւնքը կ'ըլլար, մեզի համար, Հայկական բարենորոգումներու ջուրը իյնալը:

Հօֆ պէյ Հազիւ Վան Հասած՝ Հրահանգ կը ստանար վերադառնալ իր տեղը իր պաշտօնակիցներուն հետ:

Վէսթէնէնկ պէյ, որ արդէն Պոլսէն չէր մեկնած, ճամբայ կ'ելլէր փոխանակ Հայաստան՝ իր երկիրը վերադառնալու համար: Հայերը, սակայն, յուսահատ չէին:

«Այս ընդհանուր պատերազմէն ետքը մեր խնդիրն ալ պիտի կարգադրուի վերջնականապէս»,— կը խորհէին:

Դեռ ո՛չ ոք մտքէն կ'անցնէր մութին մէջ պատրաստուած Մեծ եղեռնը:

Հոկտեմբերի վերջերը Թուրքիոյ պաշտօնապէս մասնակցութիւնը պատերազմին ա՛լ աւելի ծանրակշիռ դարձուց կացութիւնը:

Ընդհանուր զօրակոչը, որ արդէն երկու ամիսէ ի վեր ամենուն սիրտը դող հանած էր, ճշմարիտ մղձաւանջ մը դարձաւ:

Միւսնոյն ժամանակ կառավարութիւնը յայտնապէս հալածիչ ընթացք մը սկսաւ Հայոց հանդէպ:

Կրկին գաղտնի ցանկերու չարաշուք զրոյցներ սկսան շրջիլ: — Վեց հազար հօգինոց ցանկ մը պատրաստուած է,— կը հաւատէին ոմանք,— շատ աղէկ տեղէն գիտեմ:

— Որո՞նք կան այդ ցանկին մէջ:
— Ամէն տեսակ աչքի զարնող մարդիկ, կուսակցականներ, խմբագիրներ, ուսուցիչներ, եկեղեցականներ, վաճառականներ, փաստաբաններ, բժիշկներ և այլն:

— Եւ ի՞նչ պիտի ընեն այդ մարդիկը:
— Պիտի ձերբակալեն ու քսորեն:
— Կարելի չէ, որ կառավարութիւնը այդպիսի բան մը ընէ:
— Ինչո՞ւ կարելի չէ. հիմակ ազատ է բոլորովին, ո՛չ ոք կըրնայ դիտողութիւն մը ընել, քափթիթիւսիօնները ջնջեցին արդէն, ուզածնին կրնան ընել, կը կարծէք, որ Գերմանիա՞ պիտի պաշտպանէ մեզի:

— Այդ ցանկերը ինչպէ՞ս պատրաստուած են:
— Ինչպէ՞ս կ'ուզէք, որ պատրաստուին. հայ լրտեսներու ձեռքով:

Եւ մէկ քանի հայերու անուններ կը տրուէր, որոնք այդ ցանկերու պատրաստութեան մէջ բաժին ունէին:

Այդ անուններուն մէջ կար նաև թիւ 17 խաֆիէն: Այդ տեսակ շիլ ու կեղտոտ արարածներու համար ոսկեդար մըն էր, որ կը բացուէր:

Աջէն ու ձախէն դրամ զարնելու առիթներ կը ներկայանային ամէն օր:

Այդ մարդոց հասոյթի գլխաւոր աղբիւրներէն մէկն էր կաշառքով գինուորական ծառայութենէ մարդ ազատելու գործողութիւնը:

Աստիկ Մարկոսեան շահադիտութեան այդ ճիւղը կը մշակէր գերազանց ճարպիկութեամբ մը:

Շէնք-շնորհք գործակալութիւն մը հաստատած էր ասոր համար: Իր գրասենեակը լեցուն էր գինուորական տարիքի մէջ գտնուող երիտասարդներով, որոնք հոն իրեն կը սպասէին ժամերով:

Ամէն մէկէն քանի մը ոսկի առհաշիւ դրամ մը առնելով՝ ճամբու կը դնէր խեղճերը՝ խոստանալով յաջորդ օրը գործերնին լմնցնել:

Շնորհիւ իր այս նոր գործունէութեան այժմ ճոխ կեանք մը կը վարէր՝ շուրջօրէն դրամ վատնելով:

Բայց և այնպէս չէր գոհանար դրամաշորթութեան այդ միակ միջոցովը և հասոյթի տարբեր աղբիւրներ կը ստեղծէր իրեն:

Ցերեկ մը, երբ քսակը բաւական թեթեւացած էր, իր տօսիէն թևին տակ, ներկայացաւ հայ վաճառականի մը, Աբրահամ էֆէնտի, զոր հեռուէն կը ճանչնար:

— Բարև, Աբրահամ էֆէնտի,— ըսաւ իր սովորական թէմէնահանները շուրջելով,— կը յուսամ որ, Աստուծով, աղէկ ու հանգիստ էք...

— Փառք Աստուծոյ, կ'ապրինք կոր,— պատասխանեց վաճառականը,— դո՞ւք ինչպես էք, Աստի՛կ էֆէնտի, ի՞նչ կայ-չիկայ, տեսնե՞ք...

— Սանկ-նանկ կ'երթանք կոր,— պատասխանեց Աստիկ,— կացութիւնը յայտնի է... շատ խառնաշփոթ վիճակի մէջ են գործերը:

— Այո՛, ընդհանուր պատերազմը տակն ու վրայ ըրաւ ամէն բան:

– Խնդիրը միայն առևտրական տազնապը չէ, դժբախտաբար քաղաքական կացութիւնը շա՛տ ծանրակշիռ է...

– Այսինքն պատերազմին ընթացքը:

– Պատերազմին ընթացքը մեզի ինչ,– պատասխանեց Աստիկ,– իմ խօսքս մեր՝ այսինքն Հայերու մասին է:

– Մասնաւոր բա՛ն մը կայ մեզի դէմ,– Հարցուց Աբրահամ էֆէնտի քիչ մը վրդոված դէմքով մը:

– Լուր չունի՞ս ուրեմն:

– Շիտակը՝ ես միշտ իմ գործերովս զբաղած եմ, անցած-դարձածէն լուր չունիմ:

– Աբրահամ էֆէնտի, այս միջոցին լաւ կ'ըլլայ, որ քիչ մը քաղաքականութեան հետեիս, պատրաստուած ցանկերուն մասին բան մը չլսեցի՞ր:

– Ի՞նչ ցանկեր,– Հարցուց վաճառականը, որուն հետաքրքրութիւնը հատուկեղծ կ'աւելնար:

– Կառավարութիւնը ոստիկանութեան միջոցով վտանգաւոր Համարուած Հայերու ցանկ մը պատրաստած է:

– Ատանկ բան մը իմ ալ ականջիս Հասաւ, բայց կարևորութիւն չտուի, այս միջոցիս այնչափ խենթ ու խելառ խօսքեր մէջտեղ ելած են, որ ... շիտակը՝ ես շատ չի հաւատացի այդ ցանկին, կառավարութիւնը ուրիշ հոգ չունի՞, որ Հայերով պիտի զբաղի այս միջոցիս:

– Կը սխալիս, Աբրահամ էֆէնտի, այդ ցանկին խօսքը շատ ճիշդ է, ես աչքովս տեսայ:

– Ի՞նչ կ'ըսես,– գոչեց վաճառականը զարմացական շեշտով մը:

– Այո՛, ցանկը պատրաստ է, և մէկ օրէն միւսը կառավարութիւնը կրնայ իր ծրագիրը գործադրել և բոլոր նշանակուած անձերը բռնելով՝ աքսորել, այս բանը բացէիբաց ինծի ըսին թէ՛ Պէտրի պէյը և թէ՛ Րէշատ պէյը, երկուքն ալ իմ դպրոցական ընկերներս են, եղբօր պէս կը տեսնուէինք. ինչ բան մը չեն պահեր:

– Ինչ որ ալ ըլլայ, ինծի վերաբերեալ խնդիր մը չէ,– պատասխանեց Աբրահամ էֆէնտի, որ իր պաղարիւնութիւնը գտած էր,– ատ եղածը կ'երևայ, որ յեղափոխականներու Համար է:

– Ահաւասիկ հոգ է ձեր սխալը: Եղածը միմիայն յեղափո-

խականներուն Համար չէ, այլ բոլոր Հայերուն, այս մարդոց միտքը շատ գէշ է, Աբրահամ էֆէնտի, առիթէն օգտուելով կ'ուզեն կոր Հայերը ջախջախել, ցանկին մէջ միայն յեղափոխականներ չիկան, իրա՛ւ է, որ անոնք ամենէն առաջ գրուած են, բայց անոնցմէ ետքը ուրիշներ ալ կան, անանկ մարդիկ, որոնք ո՛չ թէ այս կամ այն կուսակցութեան չեն պատկանիր, այլ նոյնիսկ հակառակ են անոնց:

– Իրաւցընէ դուն ցանկը տեսա՞ր:

– Զարմանալի՛ բան, սո՛ւտ պիտի ըսեմ ձեզի, Աբրահամ էֆէնտի,– գոչեց Աստիկ վիրաւորուած շեշտով մը:

– Շա՛տ մարդ նշանակուած է ցանկին մէջ:

– 5-6 հազարը կ'անցնի,– պատասխանեց Աստիկ Հաստատ շեշտով մը:

– Վա՛յ սարսափելի,– գոչեց վաճառականը՝ այս անգամ իրապէս դող ելած:

– Եւ ի՛նչ տեսակ մարդիկ, խելքէ, միտքէ չանցած,– շարունակեց Աստիկ,– մէջը կուսակցականը կայ, խմբագիրը կայ, վարժապետը կայ, կառավարական պաշտօնեան կայ, կիրները անգամ կան, վաճառականներ կան:

– Վաճառականնե՞ր,– ընդմիջեց Աբրահամ էֆէնտի:

– Այո՛, վաճառականներ:

– Անոնք ի՞նչ յանցանք ունին:

– Ճիշդ ես ալ նոյն բանը Հարցուցի Պէտրի պէյին, և պատասխանեց, որ անոնք ամենէն վտանգաւորներն էին, որովհետեւ իրենց դրամովը ոյժ կուտային յեղափոխականներուն: Ասկէ զատ, բուն խնդիրը ի՞նչ է, գիտե՞ս, Աբրահամ էֆէնտի:

– Ի՞նչ է,– Հարցուց:

– Կառավարութիւնը շատ գէշ աչքով կը նայի կոր Բարեգործական ընդհանուր միութեան վրայ, Պօղոս փաշան իրենց մեծագոյն թշնամին է այս միջոցիս, իսկ անոր Հիմնած Բարեգործական միութիւնն ալ ամենէն վտանգաւոր յեղափոխական կազմակերպութիւն կը նկատեն: Այսպես, այս Միութեան բոլոր անդամներուն անունը անցած է ցանկին մէջ:

– Ի՞նչ կ'ըսես:

– Եւ ճշմարիտը ըսեմ, Աբրահամ էֆէնտի, ճիշդ ատոր Հա-

մար եկայ ձեզի տեսնալու, որովհետև ձեր անունն ալ գրուած էր:

– Բայց ուրտեղէ՞ն իմացեր են իմ բարեգործականի անդամ ըլլալս:

– Ինչո՞ւ ասանկ միամիտ խօսքեր կ'ընէք, Աբրահամ էֆէնտի, անդամներու անունները իրենց ամսավճարներովը չէ՞ տպուած արդէն տետրակներու մէջ:

– Իրաւունք ունիս, – խոստովանեցաւ վաճառականը, – Ի՛նչ անխոհեմութիւն, ես արդէն անդամ գրուելի չէի ուզեր կոր ա՛, զօռով վրաս ինկան. Գաբրիէլ էֆէնտին մէկ կողմէ, տօքթոր Տաղաւարեանը միւս կողմէ, Հիւրմիւզ էֆէնտին, Ներսէս Օհանեան էֆէնտին, ես ի՛նչ գիտնամ, ամէնքն ալ վրաս ինկան, ես ալ մտածեցի, որ ասիկա բարեգործական բան մըն է, նոյնիսկ ըսին ինծի, որ յեղափոխութեան հետ բնաւ կապ չունի և նոյնիսկ Միութիւնը հակառակ է անոնց:

– Ատոնք բոլորն ալ ճիշդ են, բայց կառավարութիւնը առիթ կը փնտռէ կոր հայ վաճառականները ջախջախելու, և ասիկա պատրուակ մը համարած է:

– Դուն իմ անունս աչքովդ տեսա՞ր:

– Տեսայ, Աբրահամ էֆէնտի, տեսայ, – ըսաւ Աստիկ հառաջանք մը արձակելով:

– Աս ի՛նչ փորձանքի մէջ ինկանք, – գոչեց վաճառականը յուսահատ դէմքով մը:

– Իրար մի՛ անցնիք, Աբրահամ էֆէնտի, Աստուած ողորմած է, թերևս միջոց մը կը գտնուի, ես ուզեցի ձեզի ծառայութիւն մը մատուցանել սպառնացող վտանգը ձեզի ցոյց տալով, հիմա ժամանակ ունիք ճար մը մտածելու, չարիքը հեռացնելու համար:

– Շատ շնորհակալ եմ, Աստիկ էֆէնտի, բայց ի՛նչ պէտք է ընել:

– Ասոր մասին դուք կը մտածէք, միայն ձեռք կը խնդրեմ, որ մէկու մը չիմացնէք, թէ ձեզի իմաց տուեր եմ այս լուրը, ետքը իմ վիճակս շատ գէշ կ'ըլլայ:

– Հոգ մի՛ ըներ, Աստիկ էֆէնտի, մարդու բան չեմ ըսեր, – պատասխանեց վաճառականը: – Միայն թէ ինչպէ՞ս այս փորձանքէն պիտի ազատինք:

– Ճար մը կը գտնուի, Աբրահամ էֆէնտի, միայն թէ ժամանակ կորսնցնելու չէ:

– Կը կարծե՞ս, որ կարելի է ճար մը գտնել:

– Անշուշտ, չե՞ս գիտեր, որ այս երկրի մէջ ամէն բան դրամով կ'ըլլայ:

– Եթէ խնդիրը դրամին մնայ, այն ատեն դիւրին է:

– Քանի որ դրամ տալու տրամադիր ես, ուրեմն բանէ մը մի՛ վախնար, միայն թէ նայէ՛, որ չխաբուիս, շնորհքով մէկը գտիր, գործդ անոր ձեռքովը տես, որովհետև հիմա շատ մը խաբեբաներ մէջտեղ ելած են, հէմ պօլ-պօլ փարա կ'առնեն, հէմ ալ գործ մը չեն տեսնար:

– Դրամը որո՞ւ պիտի կերցնենք:

– Ամէնքն ալ կ'ուտեն, Աբրահամ էֆէնտի, Պէտրին է եղբր, Բէշատն է եղբր:

– Քանի՞ով կը կարծես, որ ըլլայ:

– Գործը գիտէ. քեզի համար կարծեմ 100 ոսկիով կրնաս գլուխդ ազատել:

– Եթէ գիտնամ ատանկ ըլլալը, հիմա կը վճարեմ հարիւր ոսկին, – պատասխանեց վաճառականը: – Ո՞վ կրնանք իբրև միջնորդ գործածել:

– Իրաւ որ չեմ գիտեր, – ըսաւ Աստիկ վարանումով մը, – միայն թէ այնպիսի մէկը գտնելու է, որ թէ՛ ազդեցիկ ըլլայ և թէ՛ մօտէն ծանօթ ըլլայ Պէտրիին կամ Բէշատին, որովհետև երկուքն ալ շատ կասկածոտ են և որևէ մարդու չեն ուզեր բացուիլ:

– Դուք ըսիք, որ շատ մտերիմ էք իրենց հետ:

– Այո՛, իմ յարաբերութիւններս բոլորովին մտերմական են, ինչ որևէ բան չեն ծածկեր, արդէն ցանկը ինծի ցոյց տալերնին ասոր ապացոյցն է:

– Բայց այն ատեն ամենէն յարմար անձը դուք էք այս գործին համար:

– Շիտակը՝ ես ասանկ գործերու չեմ ուզեր խառնուիլ, – պատասխանեց Աստիկ:

– Ինչո՞ւ համար:

– Ես ի՛նչ գիտնամ, թերևս մտքերնէդ կ'անցնենք, որ մէջը ես ալ շահ մը ունիմ:

– Տէր ողորմեա՛, առ ի՞նչ խօսք է, նոյնիսկ եթէ շահ մըն ալ ունենաս, ամօթ չէ, ծառայութիւն մը պիտի մատուցանես՝ բնականաբար իրաւունք ունիս փոխարինութեան մը:

– Ձէ՛, Աբրահա՛մ էֆէնտի, ես այդ տեսակ շահեր չեմ ուզեր, փա՛ռք Աստուծոյ, իմ աշխատութեամբս դրամ կը շահիմ:

– Քանի որ բարեկամութիւն մը ըրիր գալով ցանկին լուրը տալով, գոնէ այդ բարեկամութիւնդ կատարեալ ըրէ՛ և սա գործն ալ կարգադրէ՛:

– Ուրիշ մէկը եթէ գտնայիք՝ աւելի աղէկ կ'ըլլար:

– Դուք ամենէն յարմարն էք:

– Այո՛, բայց:

– Կ'աղաչեմ, մի՛ մերժէք, զիս մեծ մտմտութէ մը պիտի ազատէք, միայն թէ վստա՞՛հ էք, որ պիտի յաջողիք:

– Այդ մասին բնաւ տարակոյս չունիմ, իմ խօսքս չեն կոտրեր, մանաւանդ երբ ծայրը դրամ ալ կայ:

– Ուրեմն հարիւր ոսկիով գործը կը լմննա՞՛յ:

– Քանի որ իմ ձեռքովս պիտի ըլլայ՝ կը լմննայ:

– Դրամը հիմակուընէ՞՛ պէտք է վճարեմ:

– Բնականաբար:

– Լաւ,– ըսաւ վաճառականը ոտքի ելլելով ու դրամարկղին մօտենալով:

Յաղթական ժպիտ մը փայլեցաւ Աստիկի դէմքին վրայ:

Վայրկեան մը ետքը հարիւր կարմիր ոսկիներ համրեց Աբրահամ էֆէնտի սեղանին վրայ:

Աստիկ գանոնք գրպանեց անփոյթ դէմքով մը:

– Ե՛րբ կը տեսնաք այդ մարդիկը,– հարցուց վաճառականը:

– Այսօր իսկ,– պատասխանեց Աստիկ:

– Կը խնդրեմ, որ անմիջապէս լուր մը բերէք ինձի, որպէսզի սիրտս հանգստանայ:

– Վաղը առտու լուրը կը բերեմ,– պատասխանեց Աստիկ,– բայց դուք հիմակուընէ ապահով եղէք, որ ձեր անունը պիտի ջնջուի ցանկին մէջէն:

– Շատ երախտապարտ կը թողուք զիս:

– Բան մը չէ, Աբրահա՛մ էֆէնտի, ես ձեռքէս եկած օգնութիւնը երբեք չեմ զլանար բարեկամներու:

– Ողջ ըլլաք, Աստի՛կ էֆէնտի:

Եւ բախտախնդիրը քանի մը թէմէննահներ ընելով՝ հեռացաւ վաճառականին քովէն:

Հա՛րկ է ըսել, որ ամբողջ ցանկին պատմութիւնը երեակալական էր: Ինքն ալ, ուրիշներու պէս, դուրսէն լսած էր խորհրդադաւոր ցանկի մը պատրաստութիւնը և իսկոյն խորհած էր, թէ աստիկա լաւ առիթ մըն էր միամիտները շահագործելու:

Անմիջապէս Բարեգործական միութիւններու ցուցակը ձեռք անցուցած էր ու գործի սկսած:

Աբրահամ էֆէնտիէն բաժնուելէ ետքը գնաց գտաւ ուրիշ վաճառական մը, որուն նոյն պատմութիւնը գրեթէ բառ առ բառ կրկնեց:

Այս վերջինն ալ կարծեցեալ վտանգէն ինքզինքն փրկելու համար յիսուն ոսկի վճարեց:

«Քանի մը ժամուան մէջ հարիւր յիսուն ոսկի բաւական է այսօրուան համար»,– մտածեց Աստիկ:

Եւ Տիտոսի պէս ինքնիրեն ըսաւ.

«Օրս չկորսնցուցի»:

Հարիւր յիսուն ոսկի գրպանին մէջ՝ Աստիկ իրաւցընէ ինքզինքը հոռոմէացի կայսեր մը չափ զօրաւոր զգաց:

Անմիջապէս կառք մը նետուեցաւ և Բերա, իր հոմանուհիին տունը գնաց:

Այս վերջինը, ինչպէս միշտ, թեւաբաց ընդունեց զինքը:

Աստիկ սովորականէն աւելի գուարթ էր, ինչ որ անհերքելի ապացոյց մըն էր գրպանը լեցուն ըլլալուն:

– Այսօր շատ ուրախ կ'երևաս կոր,– ըսաւ գեղանի հոմանուհին:

– Այո՛,– ըսաւ Աստիկ,– այսօր շատ յաջող օր մըն էր ինձի համար:

– Մեծկակ շահ մը ըրիր անպատճառ:

– Ուրիշ ի՞նչ յաջողութիւն կ'ուզես:

– Քանի՞ ոսկի շահեցար:

– Գուշակէ՛, տեսնենք:

– Քսան,– գոչեց հոմանուհին:

– Քսան ոսկիին խօ՛սքը կ'ըլլայ:

– Ուրեմն աւելի՞ է:
 – Շա՛տ աւելի:
 – Յիսո՞ւնն ոսկի:
 – Այդ ի՛նչ ոչինչ գումար է:
 – Հարիւր ոսկի ուրեմն:
 – Դեռ չհասար:
 – Իրա՞ւ կ'ըսես,– գոչեց գեղուհին շլացած դէմքով մը:
 – Հարիւր յիսուն ոսկի... և առանց բան մը ընելու:
 – Եւ այդ դրամը ի՞նչ պիտի ընես:
 – Դրամը ինչ կ'ընեն... պիտի ուտենք միասին:
 – Գոնէ ինծի շրջագագեստ մը կարել տուր:
 – Ո՛չ թէ միայն շրջագագեստ մը, այլ նաև կօշիկ մը, գլխարկ մը, հոփանոց մը... վերջապէս ինչ որ կ'ուզես:
 Գեղուհին այս խոստումներէն յափշտակուած՝ նետուեցաւ իր սիրահարին թևերուն մէջ:
 – Ի՞նչ պէտք է այս ամենուն համար,– հարցուց Աստիկ ձեռքը գրպանը տանելով:
 Հոմանուհին մտովի կարճ հաշիւ մը ըրաւ և պատասխանեց.
 – Վաթսուն ոսկին կը բաւէ:
 – Այդչափ քի՞չ:
 – Գիտես, որ ես ամէն գործ խնայողութեամբ կը տեսնեմ:
 – Այո՛, աղուորս, գիտեմ, որ այնպէս է,– պատասխանեց Աստիկ վաթսուն ոսկին համրելով:
 Քանի մը ժամ, այսպէս, իր սիրուհիին հետ անցընելէ ետքը Աստիկ կարևոր գործ մը պատրուակելով՝ դուրս ելաւ և ուղղուեցաւ դէպի Շիտակ ճամբան և մտաւ նպարավաճառի մը խանութը, որուն ներսի մասը գարեջրատուն մըն էր:
 – Քօնեաք Մարթէլ,– հրամայեց սպասաւորին:
 Հազիւ թէ առաջին գաւաթը պարպած էր, երբ Արշակ ներս մտաւ:
 Լրտեսը քանի մը օրերէ ի վեր շատ մեծ իրարանցումի մէջ էր:
 Տրգատին հետքը կորսնցուցած էր բոլորովին, և ասիկա շատ կը զբաղեցնէր զինքը: Օրն ի բուն ամէն կողմ ժուռ կուգար գլուխելու համար զայն:

Անոր անհետացումը մեծ հարուած մը տուած էր իր համբաւին, ու իր մեծաւորները կը դատապարտէին զինքը այդչափ կարևոր որս մը ձեռքէ փախցնելուն համար:
 Նոյնիսկ կասկածներ կային, թէ ինք մատ ունեցած էր այդ անհետացումին մէջ:
 Արշակի այդ կասկածը յայտնած էր բացէիբաց:
 Գարեջրատուն մտնելուն պէս նշմարեց Աստիկը, «բարև» մը տուաւ և պատրաստուեցաւ դուրս ելլելու, բայց այս վերջինը կեցուց զինքը՝
 – Արշա՛կ էֆէնտի, ինչո՞ւ կը փախչիք,– գոչելով:
 – Մէկը նայեցայ, հոս չէ եղեր,– պատասխանեց լրտեսը:
 – Կարելի է՝ կուգայ:
 – Չեմ կարծեր... երթամ ուրիշ տեղ նայիմ:
 – Նախ եկուր քօնեաք մը խմէ:
 Լրտեսը վարանեցաւ, բայց Աստիկ այնչափ պնդեց, որ ստիպուեցաւ համակերպիլ:
 – Եկէք քօնեաք չխմենք և օղի խմենք,– առաջարկեց Աստիկ:
 – Ինչպէս որ կ'ուզէք:
 Աստիկ սպասաւորը կանչեց և օղի ապսպրեց:
 – Մեզի համար փօրսիօն մը սև խավեար, փօրսիօն մը ժանպօն և փօրսիօն մըն ալ լաքէրտա բն՛ր,– հրամայեց,– տու՛մ մըն ալ ստաքօզ և սարտէլա բա՛ց:
 – Ի՞նչ կ'ընէք, Աստի՛կ էֆէնտի, ես օղի մը պիտի խմեմ, երթամ,– դիտել տուաւ Արշակ:
 – Անանկ բան չկայ, պիտի նստիս, և պիտի խմենք,– պատասխանեց Աստիկ էֆէնտի:
 – Կ'երևայ, որ դուք գործ չունիք:
 – Ա՛լ իրիկուն եղաւ, այս ատեն ի՞նչ գործ կ'ըլլայ:
 – Մեր գործը որոշ ժամ չունի,– դիտել տուաւ Արշակ:
 – Այնպէս է,– պատասխանեց Աստիկ,– մանաւանդ այս միջոցիս կարծեմ չափազանց զբաղած էք:
 – Այո՛, չափազանց:
 – Մանաւանդ հայերս, այնպէս չէ՞,– հարցուց Աստիկ:
 – Կառավարութիւնը այս միջոցիս մեծ ուշադրութիւն դարձուցած է հայերուն վրայ և իրաւունք ալ ունի:

– Իմացայ, որ ցանկեր կը պատրաստեն եղեր, շատ մը ծանօթ Տայեր պիտի քշուին, ուրիշներ պիտի բանտարկուին:

– Լուր չունիմ, – պատասխանեց Արշակ չոր շեշտով մը:

– Ես աղէկ տեղէն իմացայ:

– Կրնայ ըլլալ:

– Պէտրի պէյը, Բէշատ պէյը իմ մտերիմ բարեկամներս են:

– Անոնցմէ՞ իմացար:

– Աղէկ տեղէն իմացայ, դուն ալ հարկաւ գիտես, բայց չգիտնալ կը ձեռագնես, իրաւունք ունիս, քու դիրքդ շատ փափուկ է, միայն թէ ես քու գիտցած մարդերէդ չեմ, ինչ որեւէ վնաս չկըրնար գալ:

– Այնպէս է, – պատասխանեց լրտեսը:

– Նոյնիսկ լսեցի, որ այդ ցանկերը պատրաստելու համար մէկ քանի հայերու դիմում եղեր է:

– Հիմակ արդէն ոստիկանութեան մէջ հայերը շատցած են, խելքէ-մտքէ չանցած մարդիկ լրտեսութիւն կ'ընեն կոր:

Աստիկ կրկին օդի ապսպրեց: Արշակ փորձ մը ըրաւ մեկնելու, բայց չյաջողեցաւ և ստիպուեցաւ մէկ քանի գաւաթ ևս խմել:

– Ո՞վ է քու փնտռած մարդդ, – հարցուց Աստիկ:

– Ի՞նչ մարդ, – ըսաւ Արշակ:

– Ներս մտած ատենդ մէկը կը փնտռէիր կոր:

– Հա՛, – պատասխանեց լրտեսը, – բարեկամ մը, որուն հետքը ժամանակէ մը ի վեր կորսնցուցի, երիտասարդ մըն է՝ Տրդատ անուն...

– Հասկցայ, – գոչեց Աստիկ, – օր մը միասին նստեր էինք յոյն գինեպանի մը խանութը:

– Ճիշդ յիշեցիր, ահա այդ երիտասարդը կը փնտռեմ:

– Կարծեմ, որ այդ Տրդատը յեղափոխական է, հնչակեան կուսակցութեանն է:

– Թերևս այնպէս ըլլայ, տեղեկութիւն չունիմ, ես զինքը կը փնտռեմ կոր անձնական գործի մը համար, արդեօք զինքը տեսա՞ր երէկ, այսօր...

Աստիկ պահ մը մտածեց, յետոյ յանկարծ ձեռքը ճակտին տանելով՝ ըսաւ.

– Այո՛, կը յիշեմ, որ զինքը տեսայ երէկ առտու...

– Վստահ ես, – գոչեց լրտեսը:

– Բացարձակապէս ապահով եմ, նոյնիսկ զինքը բարեկեցի, ուրիշ երիտասարդի մը հետ աճապարանքով կ'երթար կոր յուզուած երևոյթով մը, նոյնիսկ բարևս չառաւ կամ աւելի ճիշդը՝ զիս չճանչնալ ձեռքուց, իրաւ ալ, անգամ մը միայն զիս տեսած էր:

– Բայց ո՞ր տեսար զինքը:

– Շիշլիի կողմը:

– Աւելի չես կրնա՞ր ճշդել տեղը:

– Ճիշդ սթասիօնին մօտերը տեսայ, արագ քայլերով իր ընկերոջը հետ քովէս անցաւ ու փողոց մը մտաւ, իսկ ես թռամվայ նստեցայ:

– Ընկերը ինչպէ՞ս մարդ էր:

– Նիհար երիտասարդ մըն էր, թուիս դէմքով, ճիշդ այն երիտասարդը, որուն հետ նստած էր գինեպանին խանութը:

– Հասկցայ, – գոչեց Արշակ, – այդ երիտասարդն ալ կ'ուզէի տեսնել, ուրեմն կ'երևայ, որ հիմա Շիշլիի կողմերը կը բնակին:

– Այնպէս կ'երևայ... հիմա կը յիշեմ, որ միւս երիտասարդին թեկն տակ հաց մը կար, իսկ Տրդատ ծրար մը բռնած էր:

– Շատ շնորհակալ եմ ձեր տուած տեղեկութիւններէն: Հիմա թոյլ տուէք, որ երթամ:

– Ո՞ր պիտի երթաք, նստեցէք...

– Ո՛չ, անմիջապէս Շիշլի պիտի երթամ Տրդատը փնտռելու:

– Այդչափ կարեո՞ր է:

– Այո՛, չափազանց կարևոր:

Աստիկ ջանաց վար դնել լրտեսը, բայց այս վերջինը այլևս տեղի չտուաւ:

Ոտքի ելաւ ու շնորհակալութիւն յայտնելով՝ մեկնեցաւ:

Կ'ուզէր ժամանակ չկորսնցնելով խուզարկութեան սկսիլ՝ գտնելու համար Տրդատը և իր ընկերը:

Աստիկի տուած տեղեկութիւնը չափազանց գոհ ըրած էր զինքը:

Ինչպէս ըսինք, օրերէ ի վեր Արշակ իզուր կը հետապնդէր հնչակեան երիտասարդը: Կամաց-կամաց սկսած էր յուսահա-

տիլ և այն համոզումը գոյացնել, թէ Տրդատ խոյս տուած էր Պոլսէն: Ոստիկանատան մէջ իր պետերն ալ նոյն համոզումը ունէին:

— Ամենէն կարևոր որսը փախցուցիր,— կ'ըսէին իրեն ծաղրական շեշտով մը:

Հիմա եթէ ինք յաջողէր փախստականին հետքը գտնել ու ձերբակալել, ասիկա իրեն համար մեծ յաջողութիւն մը և փառքի տիտղոս մը պիտի ըլլար:

Մուկթը կոխած էր արդէն, երբոր Արշակ թռամվայ մը նետուեցաւ Շիշլի երթալու համար: «Արդեօք հետքը պիտի կրնան^ո գտնել»,— կը մտածէր:

Իր ճարպիկութեան վրայ մեծ համարում ունէր, բայց իր յոյսը ալ աւելի դրած էր դիպուածին վրայ:

«Տրդատի ներկայութիւնը Շիշլիի մէջ,— կը խորհէր,— պարզապէս դիպուածի շնորհիւ իմացայ: Եթէ դիպուածով այս գարեջրատունը չմտնէի, եթէ հոն Աստիկ էֆէնտիին չհանդիպէի, եթէ անոր ստիպումներուն վրայ և գրեթէ կամքիս հակառակ քովը չնստէի ու խօսքի չբռնուէի, այս միջոցիս բան մը իմացած պիտի չըլլայի, իզո՛ւր Բերայի մէջ, անդին-ասդին, պիտի փրնտուէի զինքը. դիպուածն է, որ շատ անգամ հրաչքներ կը գործէ, մանաւանդ մեր ասպարէզին մէջ»:

Այս մտածումներով զօրացած՝ Արշակ հասաւ Շիշլիի կայարանը և վար իջաւ կառքէն:

«Խուզարկութիւնս գէշ ատեն սկսայ,— խորհեցաւ ինքնին,— հիմա այլևս գրեթէ գիշեր է, և Տրդատ ու իր ընկերը տուններնին քաշուած ըլլալու են...»:

Կայարանին մօտերը գտնուած սրճարան մը մտաւ և սուրճ մը ապսպրեց:

«Իմ ենթադրութիւնս սխալ է,— կը մտածէր,— այժմ աւելի հաւանական է, որ Տրդատ գիշերը դուրս ելլէ տունէն... Իրենք զիրենք ծածկելու ստիպուած մարդիկ ընդհանրապէս գիշերը դուրս կ'ելլեն, քան թէ ցերեկը»:

Աճապարանքով սուրճը խմեց և դուրս ելաւ և սկսաւ ժուռ գալ, առանց որոշ նպատակի մը, Տրդատին հանդիպելու տարտամ յոյսով:

Պահ մը խորհեցաւ երթալ պահականոց և ոստիկանութեան աջակցութիւնը խնդրել, բայց շուտով հրաժարեցաւ այդ մտածումէն:

Ոստիկանութիւնը կրնար օգտակար ըլլալ իրեն, եթէ Տրդատի բնակավայրը գիտնար:

Հիմա ի՞նչ ծառայութիւն կրնային մատուցանել իրեն. ոչինչ: Յետոյ լրտեսը կը նախընտրէր ամէն բան իր ձեռքովը ընել, որպէսզի ինք կարենար իրեն վերապահել, յաջողութեան պարագային, գործին ամբողջ փառքը:

Այսպէս, մուկթին մէջ, քայլամուտը, ուղղուեցաւ դէպի Պուկար Չարշըսի:

Երբ մուկթ փողոցէ մը կ'անցնէր, յանկարծ ցնցում մը ունեցաւ:

Երկու մարդիկ կ'երթային իրմէ 20-30 քայլ հեռաւորութեամբ:

Լրտեսը այդ երկու անցորդները նմանցուց Տրդատին և իր ընկերոջ, բայց բոլորովին վստահ չէր:

Միջոց մը լուսաւորուած պատուհանի մը առջևէն անցան: «Ասոնք են,— ըսաւ լրտեսը մտովի,— այս անգամ որոշապէս ճանչցայ»:

Եւ յաղթական ուրախութիւն մը շողաց դէմքին վրայ: Տրդատ և իր ընկերը ապահովաբար իրենց տունը կ'երթային:

«Անգամ մը որ տուն մտնեն, գործը կը դիւրանայ,— ըսաւ ինքնիրեն,— անմիջապէս պահականոց կ'երթամ, մէկ-երկու ոստիկան հետս կ'առնեմ և անմիջապէս երկուքն ալ կը ձերբակալեմ... Գիտէի, որ պիտի յաջողէի, բայց չէի հաւատար, որ այսչափ դիւրին պիտի ըլլար... Եւ երկուքը միասին...»:

Այս մտածումներով կը հետևէր երկու երիտասարդներուն, երբ այս վերջինները յանկարծ կանգ առին փողոցին ծայրը: Հոն ճամբան երկուքի կը բաժնուէր:

«Տեսնենք ո՞ր կողմ պիտի դառնան»,— ըսաւ լրտեսը ինքնին:

Բայց երկու երիտասարդները փոխանակ ճամբանին շարունակելու՝ պահ մը կեցած խօսակցեցան, մինչ Արշակ տան մը դրան կոթնած՝ ինքզինքը կը ծածկէր:

Բայց անակնկալ բան մը պատահեցաւ, որ շատ շփոթեցուց լրտեսը:

Երկու երիտասարդները փոխանակ միասին իրենց ճամբան շարունակելու, իրարմէ բաժնուեցան: Մին դէպի աջ դարձաւ, միւսը դէպի ձախ:

«Կ'երևայ, որ տարբեր բնակարաններ կը նստին»,— խորհեցաւ Արշակ:

Այժմ որո՞ւն պէտք էր հետևիլ:

Լրտեսը ասոր համար բնաւ չվարանեցաւ:

«Տրդատին ետևէն երթանք»,— վճռեց:

Եւ այդ ուղղութեամբ քալել սկսաւ:

Երիտասարդը սկսած էր քայլերը արագել: Լրտեսն ալ նոյնը ըրաւ:

Տրդատ կ'երևայ, որ իմացաւ Արշակի ոտնաձայնը և յանկարծ ետին դարձաւ և փոխանակ ճամբան շարունակելու՝ սպասեց:

Լրտեսը վայրկեան մը շփոթեցաւ. ի՞նչ դիրք պէտք էր բռնել հիմա: Կենս՛լ, թէ՞ ճամբան շարունակել:

«Եթէ կենամ, բոլորովին պիտի կասկածի, լաւագոյն է, որ ճամբան շարունակեմ, թերևս զիս չճանչցաւ,— մտածեց,— ասկէ զատ, ճանչցաւ կամ չճանչցաւ, ճար չկայ, մինչև ծայրը երթալու է»:

Եւ ճամբան շարունակեց մինչև որ մօտեցաւ Տրդատին:

Այս վերջինը ապահովաբար ճանչցած էր լրտեսը, որովհետև ձեռքը տարաւ գրպանը և ըէփովէրը բռնեց:

— Վա՛յ, Արշա՛կ էֆէնտի, դո՞ւն ես եղեր,— ըսաւ լրտեսին, երբ այս վերջինը բոլորովին մօտեցաւ իրեն:— Հեռուէն չճանչցայ քեզի:

— Ես ալ քեզ չճանչցայ,— պատասխանեց Արշակ:

— Եթէ զիս չճանչցար ինչո՞ւ ետևէն կուգայիր:

— Ետևէ՞դ կուգայի, այդ ի՞նչ խօսք է:

— Ես այնպէս ենթադրեցի:

— Շատ սխալ, պարզապէս դիպուածով հանդիպեցայ քեզի:

— Շիշլիի կողմե՞րը կը նստիս:

— Չէ՛, բարեկամի մը եկած էի ու հիմա տեղս կը դառնայի, իսկ դուն ի՞նչ գործ ունիս այս կողմերը:

— Ես Շիշլի կը նստիմ:

— Կը կարծէի, որ Բերա էիր:

— Այո՛, առաջ Բերա սենեակ բռնած էի, բայց հիմա հոս փոխադրուած եմ:

— Շատո՞նց է...

— Քանի մը շաբաթ կայ...

— Անոր համար է, որ քեզ տեսած չունիմ... կ'երևայ, որ Բերայի կողմերը եկած չունիս:

— Հիւանդ էի, սենեակէս դուրս չէի ելլեր կոր,— պատասխանեց երիտասարդը, որ իր ամբողջ պաղարիւնութիւնը պահած էր, ինչ որ զարմանք կը պատճառէր լրտեսին:

— Նոյնիսկ ժամադրութեան ալ չեկար,— ըսաւ Արշակ:

— Ի՞նչ ժամադրութիւն,— հարցուց Տրդատ:

— Ջարմանալի բան, մոռցա՞ր, Արշալիբի մասին:

— Ա՛, այդ խնդիրը ալ ինձի համար նշանակութիւն չունի, այդ միջոցին զինքը տեսնելու պէտք ունէի, բայց յետոյ ալ պէտք չմնաց:

Տրդատին և լրտեսին միջև այս խօսակցութիւնը տեղի կ'ուենար կեցած:

— Եթէ ձեր ճամբան այս կողմէն է, միասին ճամբանիս շարունակենք,— ըսաւ լրտեսը:

— Շատ աղէկ,— հաւանեցաւ Տրդատ:

Յիսուն քայլի չափ առաջ երթալէ ետքը Տրդատ ըսաւ՝ կանգ առնելով:

— Ես հիմա դէպի ձախ պիտի դառնամ տունս երթալու համար, իսկ դուն եթէ Բերա պիտի երթաս ու թուամվայ նստիս, ուղղակի կը շարունակես:

— Անհոգ եղիր, ես ճամբաները գիտեմ,— պատասխանեց լրտեսը ժպտելով,— ուրեմն այս փողոցին մէջէն է տունդ:

— Այո՛, բաւական ծայրը, եթէ ժամանակ ունիս, եկուր մինչև տուն երթանք, քիչ մը կը տեսակցինք, հետաքրքրական բաներ ունիս, անշուշտ, պատմելիք:

— Ի՞նչ կ'ուզես, որ պատմեմ:

— Տեղեկութիւն կ'ուզէի առնել սա վերջին օրերու ձերբակալութիւններուն մասին:

- Իրաւցընէ քեզ կը հետաքրքրէ՞ ատիկա:
- Բնականաբար, գոնէ իբրև նախկին Հնչակեան, - պատասխանեց Տրդատ ժպտելով:
- Եթէ այդպէս է, ուրեմն իրաւցընէ կրնամ քեզի հետաքրքրական բաներ պատմել:
- Ուրեմն եկէք, տեսնենք, սուրճ չունի՞մ, բայց քօնեաք կըրնամ հրամցնել:
- Շնորհակալ եմ:
- Փողոցը ամայի էր բոլորովին, տունները ցանցառ և ընդհանրապէս պարտէզով շրջապատուած:
- Կարծես թէ գիւղ է այստեղ, - դիտել տուաւ լրտեսը:
- Այո՛, բոլորովին գիւղի կը նմանի:
- Քու տունդ ալ պարտէզի մէ՞ջ է:
- Այո՛, բաւական մեծկակ պարտէզ մը:
- Առանձի՞ն կը բնակիս:
- Այս միջոցիս առանձին եմ, տնեցիները քանի մը օրուան համար ազգականի մը տուն գացին, կարծեմ հարսնիք ունին եղեր:
- Տանտէրը հա՞յ է:
- Ո՛չ, յոյն է, - պատասխանեց Տրդատ:

**ԳԼՈՒԽ Ի
ՀՈՐԻՆ ԳԱՂՏԵՒԹԸ**

Այսպէս խօսակցելով մուտին մէջ հասան պարտէզի մը դրան առջև:

- Տրդատ ոտքի հարուածով մը դուռը բացաւ:
- Ետեէս եկուր, - ըսաւ լրտեսին, - ուշադրութիւն ըրէ՛, աջ կողմդ հոր մը կայ, որ կափարիչ չունի:
- Աղէկ որ ըսիր, որչա՛փ ալ մուտ է, բան մը չեմ տեսնար կոր:
- Այո՛, ծառերը բոլորովին մուտ կ'ընեն:
- Հասան տան դրան առջև: Տրդատ բանալիով մը բացաւ գայն, առաջ ինք ներս մտաւ, սեղանին վրայ դրուած լամպան վառեց և յետոյ ներս հրամցուց հիւրը:

- Տանը մէջ բոլորովին առանձի՞ն ես, - հարցուց լրտեսը վարանոտ քայլով մը ներս մտնելով:

- Արդէն ըսի, որ տնեցիները քանի մը օրուան համար տունէն բացակայ են, - պատասխանեց Տրդատ:

- Տնեցիներէն դուրս թերևս ուրիշ վարձակալներ ալ կրնան ըլլալ:

- Ո՛չ, մարդ չկայ, միայն ես, կամ, աւելի աղէկ չէ՞, առանձին գլուխ գլխի կը տեսնուինք:

Լրտեսը բնականաբար չափազանց գոհ էր Տրդատը ձեռք անցընելուն համար, բայց միւս կողմէ մտատանջութիւն մը ունէր:

Ինք նախապէս ծրագիր մը պատրաստած էր, որուն համեմատ նախ հեռուէն պիտի հետեւէր յեղափոխականին, անոր տունը պիտի սորվէր և յետոյ մէկ-երկու ոստիկաններու օժանդակութեամբ գայն պիտի ձերբակալէր:

Արդ, հիմա ղէպքերը ուրիշ ընթացք մը առած էին և իր ծրագիրը վիժեցուցած:

Տրդատին տունը սորված էր թէև, բայց միևնոյն ատեն ինքզինքը ցոյց տուած:

Անշուշտ կրնար ժամ մը մնալ հոն և յետոյ երթալ ու ոստիկանները առնելով վերադառնալ:

Բայց խնդիրը այն էր, թէ Տրդատ պիտի սպասէ՞ր իր վերադարձին, թէ՞ անմիջապէս կծիկը պիտի դնէր:

Այս երկրորդ պարագային, որսը հազիւ ձեռք անցուցած, պիտի փախցնէր:

«Ինչ կը կասկածի՞, թէ՞ ոչ, ամբողջ գործը ասոր վրայ է, - կը մտածէր, - եթէ ինչ կասկած չունի ապահովաբար տեղէն պիտի չչարժի, և այն ատեն խնդիրը կը դիւրանայ: Առաջին անգամ երբ որ զիս տեսաւ որեւէ յուզում կամ շփոթութիւն չունեցաւ, ասկէ կրնամ հետեցնել, թէ իմ մասիս կասկած չունի. բայց թերևս ասիկա իր պաղարիւնութեան և վարպետութեան արդիւնքն էր»:

Ու Արշակ բաւական շփոթած էր իր բռնելիք ընթացքին մասին:

Պահ մը խորհեցաւ ձերբակալութիւնը կատարել առանձին,

բայց շուտով հրաժարեցաւ այդ խորհուրդէն: Երիտասարդը հաւանօրէն գինեալ ըլլալու էր, և անշուշտ ինքզինքը պիտի պաշտպանէր: Գիտէր, թէ Տրդատ յանդուգն, քաջասիրտ ու Ֆիզիքսպէս ալ իրմէ զօրաւոր էր:

«Վարպետութեամբ գործ տեսնենք,— մտածեց,— և ջանանք իր վատահուօրինը բոլորովին գրաւել»:

Մինչ լրտեսը այս մտածումներուն մէջ խորասուզուած էր, երիտասարդը զբաղած էր իր հիւրը պատուասիրելու: Զինքը գետնայարկի փոքրիկ սենեակի մը մէջ տեղաւորելէ ետքը գնաց սեղան մը բերաւ դուրսէն, որու վրայ երկու փոքրիկ գաւաթներ դրաւ, յետոյ գնաց քօնեաքի շիշը և քանի մը կտոր շաքար բերելու:

Ի վերջոյ, գաւաթները լեցնելով, ըսաւ.

— Կը ցաւիմ, որ ուրիշ բան մը պիտի չկրնամ հրամցնել քեզի, եթէ տանտիկինը հոս ըլլար, մեզի սուրճ կ'եփէր:

— Սուրճը ի՞նչ պիտի ընենք,— պատասխանեց Արշակ,— քօնեաքը աւելի լաւ է:

— Ուրեմն ձեր կենացը:

— Զեր կենացը:

Երբ գաւաթները պարպուեցան, լրտեսը ըսաւ.

— Գիտե՞ս, Տրդատ, շատ ուրախ եմ քեզի հանդիպելուս, օրերէ ի վեր քեզ կը փնտռէի ամէն կողմ, հիմա որ քեզ տեսայ, նախ և առաջ պէտք է, որ ըսելիքս ըսեմ:

— Խօսէ՛, տեսնենք,— պատասխանեց Տրդատ:

— Պէտք է ժամանակ մը մէջտեղ չելլաս և մեծ զգուշութեամբ վարուիս,— շարունակեց լրտեսը,— գիտցած եղիւր, որ ոստիկանութիւնը քեզի կը փնտռէ կոր...

— Իրա՞ն կ'ըսես,— հարցուց երիտասարդը անտարբեր ձևով մը:

— Սուտ ըսելու ի՞նչ պէտք ունիմ:

— Բայց ես վախնալիք բան մը չունիմ:

— Պարապ խօսքեր մի՛ ըներ, իբրև բարեկամ խօսինք և ո՛չ թէ իրարու վրայ կասկածելով, գիտցած եղիւր, որ Արշակի բացէիբաց քեզի կ'ամբաստանէ իբրև իրեն դէմ եղած մահափորձին հեղինակներէն մէկը:

— Ատ ի՛նչ արտառոց զրպարտութիւն,— գոչեց երիտասարդը:

— Ես ալ անկեղծօրէն համոզուած եմ, որ այդ գործին մէջ դուն որևէ բաժին չունիս, ինչպէս նաև միւսները, որոնք հիմա բանտը կը գտնուին. այդ մահափորձին մասին իմ կարծիքս ի՛նչ է, գիտե՞ս, պարզապէս Արշակիին կողմէ սարքուած խաղ մըն է, և այս բանը ես առջի օրէն ըսի Բէշատ պէյին, ինչպես նաև ուրիշներու, և ասոր համար գէշ մարդ եղայ Արշակիին հետ: Բայց ասոնք պարապ խօսքեր են, գանք բո՛ւն խնդրին, ոստիկանութիւնը քեզի կը փնտռէ կոր և ինծի ալ մասնաւորապէս պաշտօն յանձնուած է հետքը գտնելու:

— Ուրեմն այս իրիկուն մեծ յաջողութիւն մը ունեցար,— պատասխանեց երիտասարդը խնդալով:

— Այնպէս է,— ըսաւ լրտեսը՝ ինքն ալ խնդալով,— շատ աղէկ ըրած ես ինքզինքդ այս կողմերը ծածկելով. ասիկա ցոյց կուտայ, թէ դուն ալ գիտես, որ այս միջոցիս դրութիւնը շատ գէշ է: Միայն թէ ձեռք առած զգուշութիւնդ բաւական չէ, մանաւանդ կը տեսնեմ, որ անխոհեմութիւն կ'ընես և դուրս կ'ելլես կոր:

— Բայց ի՞նչ ընեմ, քանի որ ստիպուած եմ դուրս ելլելու, մանաւանդ այս օրերս, քանի որ տան մէջ բոլորովին առանձին եմ:

— Ես եթէ քու տեղդ ըլլամ՝ հոս ալ չեմ մնար:

— Ո՛ր երթամ:

— Նայէ, որ Պոլսէն դուրս ելլաս, որչափ ատեն որ հոս գըտնուիս միշտ վտանգի մէջ ես... իբրև քու հին բարեկամդ քեզի այս խորհուրդը կուտամ:

— Շատ շնորհակալ եմ:

— Նոյն խրատը տուր նաև քու միւս ընկերներուդ:

— Ո՛ր ընկերներս,— հարցուց Տրդատ:

— Կաղաչեմ այդ կերպով մի՛ խօսիր հետս,— ըսաւ լրտեսը վիրաւորուած շեշտով մը,— տես, ես ինչպէս անկեղծօրէն կը խօսիմ հետդ:

— Կատակ կ'ընեմ,— պատասխանեց երիտասարդը ժպտելով,— գիտեմ, թէ որո՞ւ կ'ակնարկես. հնչակեան ընկերներու, բայց ասոնք տեսնելու առիթը չունիմ:

— Մէկու մը միջոցով լուր դրկէ իրենց, թող չկարծեն, որ

բանտէն արձակուած ըլլալով ա՛լ վտանգը անցուցած են, ամէնքն ալ մէկ օրէն միւսը կրնան կրկին ձերբակալուիլ, և այս անգամ ալ ազատուած չիկայ, ինքզինքնին, ով գիտէ, ուր կը գըտնեն: Կացուծիւնը շատ ծանր է, գիտցած ըլլաս:

– Բայց ինչո՞ւ համար:

– Որովհետեւ կառավարութիւնը ամբողջ հայ ազգը իրեն թըշնամի կը նկատէ կոր:

Լրտեսը շարունակեց բացատրել օրուան կացութեան վտանգները և կրկին յորդորեց երիտասարդը, որ աւելի ապահով տեղ մը երթայ ծածկուելու:

– Կարելի եղածին չափ շուտ տեղդ փոխէ՛, – խրատ տուաւ, – նոյնիսկ, եթէ կրնաս, այս իրիկուն ուրիշ տեղ մը գնա՛:

– Բայց այս տեղը ո՛չ ոք գիտէ, և փողոցէն բնաւ ոստիկան չանցնիր:

– Ոստիկաններէն այնչափ մի՛ վախնար, ծպտուած լրտեսներէն վախցիր:

– Ուրեմն իրաւցընէ՞ ոստիկանութիւնը այսչափ կատաղութեամբ ետեւէս ինկած է:

– Պատուոյս վրայ կ'երդնում, – գոչեց լրտեսը:

Նոյն միջոցին դուռը զարնուեցաւ:

– Մարդ եկաւ, – ըսաւ Արշակ վրդոված դէմքով մը:

– Հոգ մի՛ ըներ, դրացի մը ըլլալու է: Երբեմն բանի մը պէտք կ'ունենան ու կուգան ուզելու, – պատասխանեց Տրդատ դուրս ելլելով, որպէսզի դուռը բանայ:

«Արդեօք հիւ՞ր մըն է, – մտածեց լրտեսը, – իր մէկ ընկե՞րը, եթէ այդպիսի մէկն է, ապահովաբար ներս չառած՝ դռնէն պիտի ճամբէ. ջանամ գոնէ երեսը տեսնելու»:

Արշակ մօտեցաւ սենեակին դրան և բացուածքէն գաղտագողի ակնարկ մը նետեց դուրս:

Նոյն րոպէին Տրդատ տան դուռը կը բանար:

Երիտասարդ մը ներս մտաւ:

Լրտեսը անմիջապէս ճանչցաւ զայն: Տրդատի ընկերն էր, այն, որ քիչ մը առաջ, փողոցին մէջ, զատուած էր իրմէ:

«Անշուշտ զինքը ճամբու պիտի դնէ», – մտածեց Արշակ՝ իր տեղը վերադառնալով:

Բայց իր ենթադրութեան մէջ կը սխալէր: Տրդատ իր ընկերոջ հետ սենեակ մտաւ:

– Կարծեմ իրար կը ճանչնաք, – ըսաւ լրտեսին դառնալով:

– Կը յիշեմ, որ անգամ մը քեզի հետ տեսայ էֆէնտին յոյնին զինետունը, – պատասխանեց Արշակ, – եթէ չեմ սխալիր, ըսիր, որ կէյվէցի վաճառական մըն է:

– Շատ աղէկ յիշողութիւն ունիս եղբր, – դիտել տուաւ Տըրդատ:

– Էֆէնտի՞ն ալ այս կողմերը կը բնակի, – Հարցուց լրտեսը:

– Այո՛, հոս մօտերը:

Երկու երիտասարդները նստեցան Արշակին քով, և Տրդատ նոր գաւաթ մը բերելով՝ քօնեաք լեցուց ամենուն:

Լրտեսը կը խորհէր, թէ Տրդատ բոլորովին ապահով էր իր անկեղծութեան վրայ, քանի որ ընկերը փոխանակ ճամբելու՝ ներս բերած էր: Եւ իր ներշնչած այս վստահութիւնը շատ կ'ուրախացնէր զինքը:

Երեք անձերուն մէջ խօսակցութիւն մը սկսաւ՝ ատեն-ատեն գաւաթ մը քօնեաքով ու սրկառէթով մը համեմուած:

Ի վերջոյ Արշակ ոտքի ելաւ:

– Ալ ատենը անցաւ, կամաց-կամաց երթամ, – դիտել տուաւ: Յետոյ աւելցուց.

– Միւսի՛ւ Տրդատ, ըսածներս մի՛ մոռնար, զգուշութիւնը ձեռքէ մի՛ թողուր: Մնաք բարով...

– Նստի՛ր, – գոչեց Տրդատ դաժան ձայնով մը:

Լրտեսը այդ խօսքէն ու երիտասարդին կերպարանքէն այլայլած՝ երկու ընկերներուն երեսը նայեցաւ՝ ջանալով պահել իր պաղարիւնութիւնը:

– Ատենը ուշ է, – կմկմաց:

– Նստի՛ր, կ'ըսեմ քեզի, – պոռաց Տրդատ ալ աւելի խիստ ձեռով մը, – մինչև հիմա դիմակով խօսեցանք, քիչ մըն ալ դիմակները վար խօսինք...

Արշակ այս խօսքերը լսելուն պէս հասկցաւ կացութիւնը և արագ շարժումով մը գրպանէն ըէվովէր մը հանեց, բայց երիտասարդը արդէն պատրաստ էր այդ շարժումին և խկոյն բռնեց զինեակ ձեռքը ու խլեց ըէվովէրը, մինչ միւս ընկերը լրտեսին կը փաթթուէր՝ անոր բազուկները անշարժութեան մատնելով:

Տրդատ ընկալվելը գրպանը դնելէ ետքը փութաց խուզարկել Արշակին վրայ-գլուխը՝ տեսնելու համար, թէ ուրիշ զէնք ունէ՞ր:

— Կրնաս թողուլ թևերը, — ըսաւ իր խուզարկութիւնը աւարտելէ ետքը իր ընկերոջ:

— Հիմա նստէ՛, ու տեսնուինք:

Արշակ հասկեցաւ, որ ծուղակը ինկած էր և համակերպեցաւ իր ճակատագրին:

Բազմոցին վրայ նստաւ:

— Հիմա որ ընկալվելդ առինք ձեռքէդ, — ըսաւ Տրդատ, — կը յուսամ, որ խելօք կը նստիս:

— Արդէն խելօք նստած էի, — պատասխանեց Արշակ:

— Բէնկալվելը առինք, բայց տակաւին ուրիշ զէնք մը կը մնայ քովդ, — շարունակեց երիտասարդը, — խրատ կուտամ, որ այդ զէնքդ գործածելու փորձ չընես:

— Ի՞նչ զէնք, — հարցուց լրտեսը զարմացած, — դուն հիմա վրաս խուզարկեցիր և տեսար, որ ուրիշ զէնք չի կար վրաս:

— Այո՛, զէնք մը ունիս, որ վրայէդ չեմ կրնար առնել. այդ զէնքը քու ձայնդ է, հասկեցա՞ր, հիմա թերևս փորձուիս պոռալ, կանչել ու այսպէս դրացիններուն ուշադրութիւնը հրաւիրել, գիտցած ըլլաս, որ եթէ քիչ մը ձայնդ բարձրացնես՝ գլուխդ կը պայթեցնեն ատրճանակի հարուածով մը:

— Հասկեցայ, բայց չեմ կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ այս կերպով կը վարուիք հետս, արդեօ՞ք այն ծառայութեան համար, գոր քիչ մը առաջ ուզեցի քեզի մատուցանել:

— Քու ծառայութեանդ պէտք չունինք, — գոչեց Տրդատ, — և գիտենք անոնց արժէքը:

— Ուրեմն կը կասկածի՞ս իմ անկեղծութեանս վրայ:

— Այո՛, կը կասկածիմ և իրաւունք ունիմ կասկածելու:

— Ի՞նչ ապացոյց ունիս, — հարցուց լրտեսը, որ ամբողջ խորամանկութիւնը ժողոված էր օձիքը ազատելու համար այն անտանելի կացութենէն, ուր ինկած էր:

— Ապացոյցներ պիտի տամ, — պատասխանեց երիտասարդը, — նախ կրնա՞ս ուրանալ, թէ ոստիկանութեանը լրտես մըն ես:

— Այդ բանը երբեք չեմ ուրացած և կարծեմ քիչ մը առաջ իմ ըսած խօսքերովս ատիկա հաստատեցի:

— Կրնա՞ս ուրանալ, որ ինծի հետ բարեկամութիւն հաստատեցիր, Արշակի հասցէն տալ խոստացար, բարեկամութիւն կեղծեցիր պարզապէս:

— «Կեղծեցիր» չեմ ընդունիր, ես մինչև ետքը անկեղծ վարուեցայ քեզի հետ:

— Ուրեմն քու դիտաւորութիւնդ մեր բնակարանը հասկնալ և մեզ ձերբակալել չէ՞ր:

— Երբեք ատանկ բան մը մտքէս չէի անցուցած:

— Մեզի հետ ունեցած տեսակցութիւններդ չէի՞ր պատմած ոստիկանութեան:

— Երբեք:

— Կ'ուրանա՞ս ուրեմն այս բանը:

— Բացարձակապէս:

— Եւ եթէ ես հակառակը ապացուցանե՞մ, — գոչեց Տրդատ:

— Անկարելի է այդ բանը, — պնդեց լրտեսը:

— Լաւ, ուրեմն հիմա պիտի ապացուցանեմ:

— Ես ալ ատոր կը սպասեմ, — պատասխանեց լրտեսը հանդարտութեամբ:

— Կը յիշես, որ օր մը ժամադիր եղած էինք յոյն գինեպանին, ուր մինչև ուշ ատեն սպասեցի, բայց դուն չեկար:

— Այո՛, կը յիշեմ, այդ օրը անակնկալ գործ մը ունեցայ, շատ ուշ մնացի, երբոր եկայ, գինետան տէրը ըսաւ, որ ինծի սպասեր ու ի վերջոյ դացեր ես, այդ օրէն ետքը ա՛լ չկրցայ քեզ գրտնել:

— Ատոր պատճառը պիտի բացատրեմ հիմա: Երբ գինետանէն դուրս ելայ, գացի դիմացի տունը, Մարիքային:

— Մարիքա՛, — ըսաւ Արշակ՝ թեթև մը շփոթուած:

— Այո՛, Մարիքային, որ ծանօթ էր ինծի: Հազիւ թէ նստած էի, յանկարծ դուռը զարնուեցաւ: Մարիքա ըսաւ, որ եկողները երկու թուրքեր են, մէկը ոստիկանութեան պաշտօնեայ և միւսն ալ գաղտնի լրտես և թէ ստիպուած էր անպատճառ ընդունիլ զիրենք: Մարիքա խնդրեց, որ տեղ մը պահուրտիմ, մինչև որ զանոնք ճամբու դնէ և աճապարանքով զիս մտցուց անկողնին

քով գտնուած դարակը: Քիչ ետքը ներս մտան երկու թուրքերը, նստեցան և օղի բերել տալով՝ սկսան խօսակցել: Բնականաբար իրենց խօսքերը բառ առ բառ կը լսէի: Յանկարծ անուն մը ուշադրութիւնս գրաւեց: Գիտե՞ս ի՞նչ անուն էր այդ:

– Ինչպէ՞ս կրնամ գիտնալ,– դիտել տուաւ Արշակ:

– Այդ ոստիկանութեան պաշտօնեաները քու անունդ արտասանեցին:

– Կրնայ ըլլալ,– պատասխանեց լրտեսը, որ կամաց-կամաց իր պաղարիւնութիւնը կը սկսէր կորսնցնել:

– Իրենց խօսքերը կէտ առ կէտ կը յիշեմ,– շարունակեց Տըրդատ:– Թուրքերէն մին ըսաւ, որ դուն դիմացի գինետունը ժամադիր եղած ես Հնչակեանի մը, որուն հետ տեսակցելէ ետքը պիտի գաս գիրենք գտնաս. տարակոյս չի կար, որ այդ Հնչակեանը ես էի, այդպէս չէ՞:

– Չեմ գիտեր,– պատասխանեց լրտեսը դողահար ձայնով մը:

– «Հնչակեաններուն խնդիրը շատ աղէկ ճամբու մէջ է» կ'ըսէր թուրքը,– շարունակեց Տըրդատ,– «Արշակ շատ վարպետութեամբ ծուղակ մը լարած է իրենց, որուն մէջը պիտի իյնան ապահովաբար». այս բառերը ես դարակին մէջէն իմ ականջներովս լսեցի:

– Այդ մարդիկը սուտ խօսած են կամ դուն սխալ լսած ես,– ըսաւ լրտեսը այլայլած,– ես ատանկ խօսք չեմ ըրած մէկու մը:

– Մի՛ այլայլիր և սպասէ,– գոչեց Տըրդատ:

– Այլայլած չունիմ,– պատասխանեց Արշակ, որ գերմարդկային ջանքեր կ'ընէր պաղարիւնութիւնը պահելու համար:

– Քիչ մը ետքը սենեակին դուռը բացուեցաւ, և դուն ներս մտար. կը յիշե՞ս կոր:

– Ատանկ բան մը միտքս կուգայ կոր,– կմկմաց Արշակ:

– Երկու թուրքերը ուրախութեամբ ընդունեցին քեզի, ուշ մնալուդ պատճառը հարցուցին, դուն ալ պատասխանեցիր, որ անակնկալ գործի մը համար ստիպուեր ես մինչև Սամաթիա երթալ և ատոր համար չես կրցած Տըրդատին հետ ժամադրութեանդ գտնուիլ... բայց վնաս չունի, աւելցուցիր, վաղը առտու կրկին պիտի գայ եղբր: Ու յետոյ իրարու հետ խօսեցաք, թէ ինչ

պէտք էր ընել, թուրքերը կ'ըսէին, որ հարկ էր զիս անմիջապէս ձերբակալել, իսկ դուն կը պնդէիր, որ լաւագոյն էր սպասել, իմ վստահութիւնս շահիլ բոլորովին, միւս ընկերներու մասին ալ տեղեկութիւն քաղել ինչ և յետոյ ամէնքս միասին ձերբակալել, ի վերջոյ, աւելցուցիր ինծի ականակելով՝ «Ինեղճը գլխուն գալիքը չի գիտեր»: Բոլոր այս խօսքերը կը լսէի թաքստոցէս և այնչա՛փ կատաղութիւն կը զգայի լսելով քու դաւաճանութիւնդ, որ խորհեցայ յանկարծ դուրս ցատքել դարակէն ու ըէվովէրը քաշելով՝ արժանի պատիժդ տալ: Բայց ուրիշ գերագոյն մտածումներ զիս կ'արգիլէին այդ տեսակ յախուռն արարք մը գործելու: «Եթէ այդպիսի յիմարական գործ մը տեսնեմ, ի՞նչ պիտի ըլլայ արդիւնքը,– կը մտածէի,– պարզապէս պիտի վտանգեմ ամբողջ գործը, մինչդեռ հիմա, որ ամէն բան իմացայ, հիմա որ գիտեմ, թէ դիմացինս ինչ տեսակ մարդ է, կրնամ օգտակարապէս գործածել ինչ որ լսեցի այս գիշեր»: Յետոյ Մարիքա ներս մտաւ, և ձեր խօսակցութիւնը ընդհատուեցաւ: Այս անգամ բռնի նստեցուցիք աղջիկը և պահանջեցիք, որ ձեզի հետ երգ մը երգէ: Օղիի բաժակները իրարու կը յաջորդէին, և երգերը կը շարունակէին: Վերջապէս ա՛լ բոլորովին գինով վիճակի մէջ ելաք, գացիք:

Լրտեսը լուռ ու սոգոյն մտիկ կ'ընէր այս խօսքերը առանց պատասխան մը տալու: Կատարելապէս կը յիշէր Մարիքայի տան մէջ փոխանակուած խօսակցութիւնը և որևէ հնարք չէր կրնար գտնել զանոնք հերքելու համար:

– Ահա՛ թէ ինչու,– շարունակեց Տըրդատ,– հետևեալ առտու չեկայ գինեպանին, և անմիջապէս ընկերոջս հետ տեղափոխուեցանք հոս, Շիշլի, մինչդեռ մեր ընկերները հետզհետէ կը ձերբակալուէին...

– Ես անոնց ձերբակալութեան մէջ դեր չունիմ,– ըսաւ լրտեսը:

– Կրնայ ըլլալ,– պատասխանեց Տըրդատ:– Բայց գոնէ զիս ձերբակալելու աշխատեցար:

– Բայց մինչև հիմա ազատ ես:

– Այո՛, սակայն, ո՛չ քու շնորհիւդ, ու եթէ մինչև այսօր չի կրցար զիս ձերբակալել, պատճառը այն է, որ հետքս կորսնցու-

ցած էիր: Եւ ահա այս իրիկուն յանկարծ գտար, չեմ գիտեր՝
ինչպէս:

– Պարզապէս դիպուածով Հանդիպեցայ քեզի, և եթէ ճամբան
չկենայիր, ու քովէդ չանցնէի, բնաւ պիտի չտեսնայի քեզի:

– Սուտ կը խօսիս կոր, – գոչեց Տրդատ:

– Կ'երդնում, որ սուտ չէ:

– Այս իրիկուն յատկապէս Շիշլի չեկա՞ր մեզի փնտռելու:

– Չէ՛, – պատասխանեց լրտեսը:

– Մեզի չհետապնդեցիր՞:

– Քեզի առանձին տեսայ:

– Դարձեալ սո՛ւտ կը խօսիս, – պոռաց երիտասարդը:

– Պատուոյս վրա կ'երդնում:

– Պիտի ապացուցանեմ, որ սուտ կը խօսիս:

– Ինչպէ՞ս...

– Դուն մեզ տեսար ճամբան, երբ այս ընկերոջս Հետ տուն
կուգայինք, և կամաց-կամաց սկսար մեզի հետևիլ... Մենք քե-
զի առաջին վայրկեանէն նշմարեցինք և որովհետև հասկցանք,
որ մեզ կը հետապնդես, անմիջապէս զգուշական միջոցներ
ձեռք առինք: Օրինակի համար, որոշեցինք իրարմէ բաժնուիլ,
յետոյ քեզ վարպետութեամբ այս տունը բերել ու յետոյ կրկին
միանալ այստեղ... Ինչպէս կը տեսնաս, մեր ծրագիրը յաջողու-
թեամբ գլուխ հանեցինք:

Լրտեսը գլխիկոր և լուռ կը մնար:

– Կ'ընդունի՞ս, որ ճիշդ են բոլոր ըսածներս, – հարցուց երի-
տասարդը:

– Ես դիպուածով ձեզի տեսայ, – պնդեց Արշակ:

– Եւ սակայն մեզի հետապնդեցիր:

– Ատիկա ճիշդ է:

– Եւ ծածկաբար:

– Այսինքն բոլորովին վստահ չէի, որ դուն էիր, անոր հա-
մար չուզեցի անմիջապէս քովդ մօտենալ:

– Երբոր մենք կեցանք ու պահ մը խօսակցելէ ետքը իրարմէ
բաժնուեցանք, դուն դրան մը տակը պահուրտեցար, փոխանակ
ճամբադ շարունակելու. ասիկա ցոյց կուտայ, թէ մեզի կը հե-
տապնդէիր, առանց ուզելու, որ քեզ տեսնենք:

– Բայց վերջապէս ի՞նչ ըսել կ'ուզես, – ըսաւ Արշակ, որ ինք-
նարդարացման որևէ միջոց չէր կրնար գտնել:

– Ապացոյցներ ուզեցիր ինչ, և ես զանոնք տուի, ահա խըն-
դիրը: Հիմա ուրիշ բան մը պիտի պահանջեմ քենէ:

– Ի՞նչ բան:

– Ինչպէ՞ս իմացար, որ մենք Շիշլիի կողմը կը գտնուէինք:

– Ըսի արդէն, որ դիպուածով Հանդիպեցայ ձեզի:

– Սո՛ւտ կը խօսիս, ճշմարտութիւնը խոստովանէ՛, հակառակ
պարագային պիտի ստիպուինք տարբեր կերպով վարուիլ
Հետդ:

Այս սպառնալիքը իր ազդեցութիւնը ըրաւ:

Արշակ տեսաւ, որ ուրացումը այլևս անօգուտ էր, երիտա-
սարդները ամէն բան գիտէին:

– Այս իրիկուն իմացայ, որ հոս ես եղեր, ինչպէս նաև քու
ընկերդ:

– Ինչպէ՞ս իմացար:

– Մէկը ձեզի տեսած էր երէկ առտու, ան ըսաւ:

– Ո՞վ է այդ մէկը:

Լրտեսը պահ մը վարանեցաւ, յետոյ պատասխանեց.

– Աստիկ Մարկոսեան է՞Ֆէնտին:

Տրդատ այս անունը լսելով՝ զարմացաւ: Այդ անունով մէկը
չէր յիշեր:

– Ո՞վ է այդ Աստիկ է՞Ֆէնտին, – հարցուց:

– Փաստաբան և թուրք թերթերու խմբագիր է, – պատաս-
խանեց Արշակ:

– Բայց ես այդպիսի մարդ չեմ ճանչնար:

– Կ'երևայ, որ մոռցեր ես, օր մը իրեն հետ միասին գտնուե-
ցանք յոյն գինեպանին խանութը:

– Հիմա յիշեցիր, – գոչեց երիտասարդը, – ուրեմն այդ մարդն
ալ քեզի պէս լրտես է...

– Չեմ գիտեր, – պատասխանեց Արշակ:

– Ինչ որ է... այս կէտը մեծ կարևորութիւն չունի: Հիմա հաս-
կըցանք, որ յատկապէս մեզի հետապնդելու համար եկած ես հոս:

– Եթէ այդպէս ըլլար, ձեզի խորհուրդ չէի տար զգուշական
միջոցներ ձեռք առնելու, – պատասխանեց Արշակ:

– Այդ խորհուրդներդ պարզապէս խաղ է...

– Ի՞նչ խաղ կ'ուզես որ ըլլայ...

– Մեզի վստահութիւն ներշնչելու և քնացնելու համար... ինչ որ դուն չես ուզեր խոստովանիլ, մենք կը գուշակենք: Քու դիտաւորութիւնդ էր մեր ետեւէն գալ, տուներնիս սորվիլ և յետոյ ոստիկանութեան ձեռքով ձերբակալել...

– Իրողութիւնը հակառակը ցոյց կուտայ...

– Ո՛չ, այլ ատիկա կը հաստատէ, բարեբախտաբար մենք շուտով նշմարեցինք քեզ և իսկոյն զգուշական միջոցներ ձեռք առինք, այսպէս՝ փոխանակ ճամբանիս շարունակելու միասին՝ Իրարմէ բաժնուեցանք, այս կերպով շփոթութեան մատնեցինք քեզ: Ես գիտէի, սակայն, որ դուն իմ ետեւէս պիտի գայիր և դիտամար կեցայ ու հետդ խօսակցութեան բռնուեցայ, որպէսզի միասին տուն բերեմ քեզի: Անգամ մը որ հոս եկար, գործդ դժուարացաւ: Տունս թէև սորվեցար, բայց ինչպէ՞ս պիտի օգտուէիր ատկէ: Առանձին չէիր համարձակեր զիս ձերբակալելու: Եթէ դուրս ելլէիր ոստիկան բերելու համար, կրնայի ես փախչիլ, և ճիշդ ասոր համար փորձեցիր իմ վստահութիւնս շահիլ և զգուշութեան յորդորներ տալ, ճիշդ չե՞մ գուշակած:

– Կը տեսնեմ, որ ինչ որ ըսեմ, անօգուտ է, – պատասխանեց լրտեսը ընկճուած դէմքով մը:

– Շատ ճիշդ կը խօսիս, այս ինքնարդարացումի որևէ խօսք օգուտ չունի. մեզի հանդէպ քու դաւաճանութիւնդ, ինչպէս տեսար, փաստերով ու ապացոյցներով ցոյց տուի, հիմա պատրաստուէ՛ քու արժանի պատիժդ կրելու:

– Ի՞նչ պատիժ, – հարցուց լրտեսը դողահար ձայնով:

– Այն միակ պատիժը, որ կարող ենք տալ դաւաճաններուն:

– Բայց ի՞նչ իրաւունքով մէկը կը դատէք ու կը դատապարտէք:

– Ատիկա մեր խղճին գիտնալիք բանն է, – գոչեց երիտասարդը:

Լրտեսը երկու երիտասարդներուն նայուածքին մէջ կարգաց իր մահուան վճիռը և բոլոր մարմինովը սարսուաց: Մինչև հիմա գերագոյն ճիգերով կրցած էր իր պաղարիւնութիւնը պահել, բայց յանկարծ տկարացաւ:

«Այս մարդիկը զիս պիտի սպաննեն», – խորհեցաւ, և այս մտածումը զինքը սարսափեցուց:

– Ներեցէ՛ք ինձի, – գոչեց պաղատագին:

– Դաւաճանին համար ներում չի կայ:

– Յիշէ՛ մեր ունեցած բարեկամութիւնը:

– Դուն ինչո՞ւ չյիշեցիր:

Լրտեսը շարունակեց իր աղաչանքներ, որոնց երկու երիտասարդները սառն կերպով պատասխանեցին: Ի վերջոյ Արշակ տեսաւ, որ փրկութեան որևէ յոյս չի կայ և անկարելին ուզեց փորձել:

Յանկարծ ոստումով մը ոտքի ելաւ և ուզեց դէպի սենեակին դուռը խորանալ, բայց երկու երիտասարդները յարձակեցան վրան և արգիլեցին զինքը:

Այն ատեն լրտեսը կատաղի յուսահատութեամբ մը սկսաւ պայքարել երկու երիտասարդներուն հետ, բայց կռիւը երկար չտևեց, որովհետև ոյժերը անհաւասար էին: Արշակ ուժասպառ գետին տապալեցաւ, մինչ երկու երիտասարդները նախապէս պատրաստուած չուան մը իր վիզը կ'անցընէին:

Լրտեսը պոռալու փորձ մը ըրաւ, բայց ձայնը խեղդուեցաւ կոկորդին մէջ:

Այսուհանդերձ, ինքնապահպանութեան ընազդէն մղուած, անիկա շարունակեց պայքարել երկու երիտասարդներուն դէմ:

Բայց չուանը արդէն իր վիզը կը սեղմէր, և կամաց-կամաց ուժասպառ գալարումներով անշարժ փռուեցաւ գետին:

– Սատկեցաւ, – ըսաւ Տրդատ:

– Ոչ տակաւին, – պատասխանեց ընկերը, – դեռ կը շնչէ:

– Չուանը քիչ մըն ալ սեղմենք:

Քանի մը վայրկեան ևս, ու ահա լրտեսը յետին ցնցումի մը մէջ շունչը փչեց:

Երկու երիտասարդները պահ մը սարսափահար իրարու նայեցան:

Իրենց ըրածը որքան ալ արդար գործ մը կը նկատէին, այսուհանդերձ քստմնելի բան մը կը թուէր:

Պայքարի միջոցին, ամէն բան մոռցած, խելայեղօրէն կուռած էին, բայց հիմա, գետին փռուած այդ անշարժ մարմինը, իրենց խղճմտանքին վրայ կը ճնշէր:

Ճնշող լուռութիւնը առաջին անգամ Տրդատ խզեց:

– Եթէ ողջ ձգէինք զինքը, թերևս այս վայրկեանիս ձերբակալուած ու բանտ նետուած պիտի ըլլայինք,– ըսաւ:

– Եւ, ով գիտէ, դեռ քանինե՛ր իրեն պատճառովը զնտաններու մէջ պիտի փճանային,– պատասխանեց ընկերը:

– Ու, յետոյ, մենք զինքը չհալածեցինք ու ծուղակը չձգեցինք, մենք պարզապէս խոյս տուինք իրմէ ու եկանք ծածկուելու այստեղ: Ինքն էր, որ մեր ետեւէն ինկաւ և ուզեց մեր թաքստոցը իմանալ, մեր ըրածը պարզապէս ինքնապաշտպանութեան գործ մըն էր:

– Եւ արդարութեան գործ մը միանգամայն:

– Հիմա ժամ առաջ այս դիակը անհետացնենք:

– Ինչպէ՞ս պիտի ընենք:

– Հոգ մի՛ ընեն, ատիկա դիւրին է, ես ամէն բան խորհած եմ, տանը ետեւ, պարտէզին մէջ, փոքրիկ չորացած հոր մը կայ, զինքը հոն կը նետենք ու հորը կը լեցնենք:

– Ուրեմն շուտով լմնցունենք ամէն բան:

Երկու երիտասարդները լրտեսին դիակը վերցուցին և դուրս հանեցին սենեակէն:

Կէս ժամ ետքը փոքրիկ հորը գոցուած էր դաւաճանին մարմնոյն վրայ:

– Հորերը շատախօս չեն ըլլար և իրենց վստահուած գաղտնիքը կը պահեն,– ըսաւ Տրդատ, երբ ամէն բան աւարտեցաւ:

Երիտասարդները լրտեսը թաղելէ առաջ անոր գրպանները խուզարկած էին և թուղթերու ծրար մը գտած:

Երբ սենեակ վերադարձան ու ամէն բան կարգի դրին, անցան լամպարին քով և սկսան քննել այդ թուղթերը:

ԳԼՈՒԽ ԻԱ

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Այդ ծրարին մեծ մասը անձնական թուղթեր էին, որոնք որեւէ շահեկանութիւն չունէին երիտասարդներուն համար:

Տրդատ զանոնք աչքէ կ'անցընէր ու պատռելով՝ մէկ կողմ կը նետէր:

Յանկարծ թուղթ մը իր ուշադրութիւնը գրաւեց:

Հայերէն գրուած էր և նօթագրութիւն մըն էր, որմէ կարելի չէր շատ բան հասկնալ: Երիտասարդը երկու անգամ ուշադրութեամբ կարդաց զայն, յետոյ իր ընկերոջ դառնալով՝ ըսաւ.

– Վահէ՛, տես ի՞նչ կը հասկնաս այս գրուածքէն:

Ու բարձրաձայն սկսաւ կարդալ.

«Թիւ 17էն (բերանացի): Ուշադրութիւն դարձնել երեք Ա. Մ. ներուն, Ա. Մ. (Խ.), Ա. Մ. (Պ. Պ.), Ա. Մ. (Տ.) – Վահան Թօշիկեան («Վերջին լուր»), տեսնել անպատճառ Վահէ Քափյանեանը: Պատրիարքարանի մէջ քննութիւն. թուղթերը կարելի է ձեռք անցընել. դրամը չխնայելով, Թէոդիկին հասցէն: Յակոբ Տէր-Յակոբեան («Վերջին լուր»): Բաղդատի ցանկը: Հայ Բարեգործական Միութեան անդամակիցները (տեսնել տարեկան տեղեկագիրը): Միացեալ Ընկերութեան (նոյնպէս) Օ. Զ. Տ. 1662. Մ. 300. Փնտռել թիւ 17ի վերջին ժուռնալին մէջ:

«Արթին էֆէնտիին ցանկը: Պէշիկթաշ Միհրդատ Հայկազն:

«Հնչակեաններու կեդրոնատեղին:

«Լուր տալ թիւ 17ին՝ երեսփոխաններուն մասին:

«Աբիկ Մուպահեաճեան (Օրթաքէօյ):

«Յանկին մէջ անցընել մոռցուած անունները: Արթին էֆէնտիին դիմում:

«Պ. Պ-էն և Ն. Շ-էն առնել Կ. Կ. Մ. և տալ թիւ 17ին:

«Աստիկ Մարկոսեանի մասին խօսիլ Րէշատ պէյին: Պէտրի պէյ (տասը օրէն)»:

– Ի՞նչ կ'ըսես այս նօթագրութեան,– հարցուց Տրդատ, երբ ընթերցումը աւարտեց:

– Յայտնի է, թէ կարևոր թուղթ մըն է այդ, դժբախտաբար բան մը չենք կրնար հասկնալ ...

– Մէջը ծանօթ մարդիկներու անուններ կան, և հաւանական է, որ այդ դաւաճանը աղէկ նպատակով չէ, որ այդ մարդոց անունը նշանակեր է:

– Ամենէն շահեկանը թիւ 17ն է,– դիտել տուաւ Վահէ:

– Ի՞նչ է որ այդ թիւ 17,– հարցուց Տրդատ,– ես բան մը չհասկցայ:

– Լաւ կը յիշեմ, որ ասկէ տարի մը առաջ թիւ 17 խաֆիէի

խնդիր մը ծագեցաւ, որու մասին թերթերը երկար-բարակ գրեցին:

– Ես չեմ յիշեր կոր:

– Այո՛, որովհետեւ այն ատեն Պոլիս չէիր: Շատ հաւանական է, որ այդ 17 թիւը անոր կ'ականարկէ կոր:

– Բայց ո՞վ է այդ խաֆիէն:

– Ձեմ գիտեր, միայն սաչափը կը յիշեմ, որ գինքը կամբաստանէին իբրև Պատրիարքարանի գաղտնիքները կառավարութեան հաղորդող լրտես մը: Այն ատեն քանի մը մարդոց վրայ կասկածներ եղան, քննութիւն բացուեցաւ, բայց ի վերջոյ խնդիրը մարեցաւ և յայտնի չեղաւ, թէ ո՞վ էր այդ թիւ 17 խաֆիէն:

– Ուրեմն այդ մարդը դեռ մինչև այսօր կը գործէ՞ կոր:

– Այո՛, թուղթէն այնպէս կ'երևայ:

– Մենք մեծ սխալ մը գործեցինք, – գռչեց Տրդատ:

– Ի՞նչ սխալ...

– Նախապէս այս թուղթերը քննելու էինք, երբ տակաւին Արշակ կրնար անոնց մասին մեզի բացատրութիւն տալ:

– Իրաւունք ունիս, – պատասխանեց Վահէ, – մե՛ղք, որ խելք չըրինք, յայտնի կ'երևայ, որ այս թուղթին մէջ շատ կարևոր գաղտնիքներ ծածկուած են:

– Հիմա ի՞նչ կրնանք ընել այս նօթագրութիւնը:

– Կարծեմ ոչինչ, – պատասխանեց Վահէ, – այս ալ կը պատուենք ու կը ղրկենք միւսներուն քով:

– Բայց շատ կարևոր թուղթ մը կ'երևայ կոր ասիկա... մանաւանդ մէջը անուն մը կայ, որ կրնայ մեզի առաջնորդ ըլլալ:

– Ի՞նչ անուն:

– Աստիկ Մարկոսեանի անունը:

– Շատ ճիշդ է ըսածդ, այո՛, այդ անունը ընդհանուր մթութեան մէջ լոյսի նշոյլ մըն է... միայն թէ ինչպէ՞ս կրնանք շահագործել ատիկա:

– Այդ մասին կը խորհինք... Հիմակուհիմա այս թուղթը պահենք և երթանք հանգստանանք:

Երկու երիտասարդները գացին պառկելու:

Հետեեալ առտուն կանուխ Տրդատ արթնցաւ և անգամ մը ևս կարդաց խորհրդաւոր նօթագրութիւնը:

«Պէտք է, որ անպատճառ ծանօթութիւն հաստատենք Աստիկ Մարկոսեանի հետ, – կը խորհէր, – այդ մարդը թերևս լրտես մըն է, բայց չի կրնար մեզի վնաս մը հասցնել, զի իբրև հնչակեան միայն Արշակը կար, որ կը ճանչնար և Արշակ այլևս մէջտեղ չիկայ: Հիմա ապահով կրնամ պտըտիլ ամէն կողմ»:

Տրդատ այսպէս խորհելէ ետք հագուեցաւ և դուրս ելաւ տունէն՝ Վահէի պատուիրելէ ետքը, որ տունը մնայ և հսկողութիւն ընէ:

«Մ՛ըր կարելի է գտնել Աստիկը», – կը հարցնէր ինքնին Տրդատ:

Գիտէր, որ այդ անձը թուրք թերթերու կ'աշխատակցէր և անորոշապէս կը յիշէր, որ մասնաւորաբար «Իգտամ»ի մէջ պաշտօն ունէր:

Ուղղակի դիմեց Պապը Ալիի պողոտան, յիշեալ թուրք թերթին խմբագրատունը:

– Աստիկ էֆէնտին հո՞ս է, – հարցուց հոն գտնուող խմբագիրներէն մէկուն:

– Այո՛, վերի սենեակն է, – պատասխանեց խմբագիրներէն մէկը:

Տրդատ ուղղուեցաւ սանդուխէն վեր:

Արդարև Աստիկ Մարկոսեան գրասեղանի մը առջև բազմած գրելու զբաղած էր:

Տրդատ անմիջապէս ճանչցաւ զինքը և շիտակ քովը մօտեցաւ:

– Բարև՛, Աստի՛կ էֆէնտի, – ըսաւ գլխարկը հանելով:

Աստիկ գլուխը վեր առաւ և ճանչցաւ երիտասարդը:

– Վա՛յ, պարո՞ն Տրդատ, դո՞ւք էք եղեր, հրամայեցէք, – գռչեց, – ատ ինչ հով փչեց, երբեք չէի սպասեր ձեր այցելութեան:

– Այս կողմերէն կ'անցնէի, ուղեցի անգամ մը տեսնել ձեզի:

– Շատ աղէկ ըրիք, շատ շնորհակալ եմ, ինծի համար մեծ պատիւ կը համարեմ ձեզի նման երիտասարդի մը այցելութիւնը:

– Կ'աղաչեմ, Աստի՛կ էֆէնտի, իմ համեստութիւնս կը վիրաւորէք:

– Ինչ ըսել է, ես չողորթըմ չեմ, անկեղծօրէն կը խօսիմ:

Աստիկ աթոռ մը հրամցուց երիտասարդին և միևնոյն ատեն սիկանէթի տուփը հանելով՝ անոր ներկայացուց:

Տրդատ հատ մը առաւ, վառեց և սկսաւ ծխել:

– Ձեզի մէկը կը փնտուէր կոր, արդեօք գտա՞ւ, – հարցուց Աստիկ:

– Ո՞վ...

– Արշակ էֆէնտին, երէկ իրիկուն իրեն հանդիպեցայ, ձեզի կը փնտուէր կոր, ես ալ առջի օր, առտուն Շիշլի ձեզի տեսած էի, ըսի իրեն, և անմիջապէս ելաւ գնաց, շատ կարևոր գործի մը համար անպատճառ ձեզի տեսնել կ'ուզէր:

Տրդատ այս խօսքերը լսեց թեթեւ սարսուռ մը զգալով, այսուհանդերձ իր պաղարիւնութիւնը պահեց և ըսաւ.

– Ո՞ր Արշակին մասին կը խօսիք:

– Արշակ էֆէնտին, պաշտօնեայ, կառավարական պաշտօնեայ... – կմկմաց Աստիկ:

– Այդպիսի մէկը չեմ յիշեր կոր:

– Ջարմանալի՛ բան, կը կարծէի, որ մտերիմ բարեկամներ էք... ձեզի կը փնտուէր կոր, և երբոր ըսի, թէ Շիշլիի կողմերը ձեզ տեսած եմ, չափազանց գոհ եղաւ և իսկոյն գնաց ձեզի գրտնելու. կը յիշէ՞ք, օր մը նստած էիք յոյնի մը գինետունը, ես ալ եկայ և ձեզ առաջին անգամ ճանչնալու բախտը ունեցայ:

– Հիմա յիշեցի, – գոչեց Տրդատ, – այո՛, այո՛, Արշակը, որ ժամանակին ճանչցած եմ Պուլկարիոյ մէջ, բայց իրարու հետ մեծ մտերմութիւն մը չունինք, այն օրը դիպուածով իրարու հանդիպեցանք ու քիչ մը տեսնուեցանք. կը զարմանամ, որ զիս փնտուէր է. իրարու հետ որեւէ գործ մը չունինք:

– Թերևս ինք պէտք ունեցած է ձեզի:

– Կրնայ ըլլալ:

– Ուրեմն ձեզ չգտա՞ւ:

– Ո՛չ, արդէն ինչպէս կրնար գտնել, տունս չէր գիտեր:

– Գոնէ հասցէնդ տուէք, որպէսզի եթէ կրկին հանդիպիմ իրեն, կարենամ ըսել:

– Դուք իրեն հասցէն տուէք ինծի, ես կ'երթամ կը գտնեմ զինքը, – պատասխանեց Տրդատ:

– Իր տանը հասցէն չեմ գիտեր, բայց զինքը կրնաք ոստիկանատունը գտնել:

– Ոստիկանութեան պաշտօնեա՞յ է...

– Զէի՞ք գիտեր:

– Ո՛չ, տեղեկութիւն չունէի, ինչպէս ըսի, զինքը շատ քիչ կը ճանչնամ:

– Ինչ որ է, ես կը կարծէի, որ մտերիմ բարեկամներ էք:

– Ձեր ենթադրութիւնը սխալ է, բայց կարևորութիւն չունի այս խնդիրը:

– Այնպէս է, – հաստատեց Աստիկ, – այդ Արշակը արդէն իմ ալ բարեկամս չէ, երբեմն կը հանդիպիմ իրեն ու մէկ քանի խօսք կը փոխանակեմ, այսչափ... ես շատ չեմ սիրեր ոստիկանութեան հետ կապ ունեցող մարդիկը:

– Արշակը արդեօք լրտե՞ս է:

– Շատ հաւանական է... և քանի որ տեղը եկաւ, ըսեմ ձեզի, որ լաւ կ'ընէք, եթէ հետը շատ յարաբերութիւն չունենաք:

– Շնորհակալ եմ ձեր տուած խորհուրդէն, – պատասխանեց Տրդատ, – արդէն ես ալ իրմէ հեռու կը փախչէի կոր:

– Այս միջոցիս մանաւանդ շատ զգուշութեամբ վարուելու է, կացութիւնը խիստ ծանր է:

– Իրա՞ւ կ'ըսէք:

– Բնականաբար, չէ՞ք տեսնար, թէ հայերուն դէմ ի՛նչ հալածանք կայ. մանաւանդ հնչակեաններուն դէմ:

– Այդ մասին վախ չունիմ, – ըսաւ Տրդատ, – ես որեւէ կուսակցութեան չեմ պատկանիր:

– Ես ձեզի համար չեմ խօսիր, – պատասխանեց Աստիկ, – խօսքս ընդհանուրին համար է, բայց ներեցէք, արդեօք մասնաւոր ըսելի՞ք մը ունէիք ինծի:

Այս հարցումը ըստ էության մը շփոթեցուց Տրդատը:

Մասնաւոր ըսելիք մը չունէր, այլ պարզապէս փափաքած էր Աստիկի հետ ծանօթութիւն հաստատել, յուսալով, որ պիտի կրնար անկէ տեղեկութիւններ քաղել կարգ մը խնդիրներու մասին, որոնք զինքը կը շահագրգռէին, բայց ասոր համար հարկ էր նախ Աստիկի վստահութիւնը գրաւել:

– Այո՛, – պատասխանեց, – ուզեցի ձեզ տեսնել, յուսալով, որ կրնաք ինծի օգտակար ըլլալ, որովհետեւ լսած եմ, որ պաշտօնական շրջանակներու հետ մօտէն յարաբերութիւն ունիք:

Աստիկ մտածեց, թէ երիտասարդը իրմէ ծառայութիւն մը խնդրելու եկած էր և իսկոյն որոշեց շահագործել զայն:

– Անշուշտ շատ յարաբերութիւններ ունիմ,— պատասխանեց,— իմ պաշտօնիս բերումով, ու բոլոր բարձր պաշտօնեաները իմ բարեկամներս են, շատերը դպրոցական ընկերներ, որոնց հետ մտերմօրէն կը տեսնուիմ և այդ յարաբերութիւններուս շնորհիւ կրցած եմ շատերու ծառայութիւն մատուցանել, մանաւանդ այս միջոցիս, ուր զինուորական ծառայութեան խնդիրը կայ, քանի որ կրցայ ազատել զինուորութենէ:

– Իրա՞ւ կ'ըսէք...

– Անշուշտ, բարձրաստիճան սպաները բոլորն ալ ինծի ծափօթ են:

Աստիկ գրասեղանին վրայ դրուած իր պարութեան բացաւ, մէջէն մէկ քանի թուղթեր հանեց և ըսաւ.

– Տեսէ՛ք, ասոնք բոլոր զինուորական ծառայութենէ ազատելու համար ըլլալիք գործողութիւններուն թուղթերն են. ամէնքն ալ հայ երիտասարդներ, բայց նոյնիսկ թուրքեր և յոյներ կան, որոնք ինծի դիմում կ'ընեն... վստահ եմ, որ դուք ալ այդ տեսակ գործի մը համար եկած էք, մի՛ քաշուիք, ըսէ՛ք:

– Չէ՛, ես զինուորական ծառայութեան հետ գործ չունիմ,— պատասխանեց երիտասարդը:

– Ինչպէ՞ս կ'ըլլայ... բուն զինուորական տարիքի մէջն էք:

– Այո՛, սակայն օտար հպատակ եմ:

– Ի՞նչ հպատակութիւն:

– Ամերիկեան քաղաքացի եմ:

– Բայց ատիկա բաւական չէ. կառավարութիւնը ձեզի պաշտօնապէս ամերիկացի չի ճանչնար, քանի որ կայսերական իրատէսով ձեր հպատակութիւնը չէք փոխած:

– Բայց ամերիկեան քաղաքացիի անցագիր ունիմ, զոր դեպքում ալ վաւերացուցած է:

– Թերևս ես այնպէս գիտեմ, որ այդ անցագիրները մեծ արժէք մը չունին, այսուհանդերձ դուք հոգ մի՛ ընէք, եթէ պէտք ըլլայ, ես կրնամ ձեզ ազատել:

– Շնորհակալ եմ,— պատասխանեց Տրդատ:

– Ես իմ ձեռքէս եկած ծառայութիւնը երբեք չեմ զլանար, մանաւանդ հայերուն:

– Արդէն լսած էի այդպէս ըլլալը:

– Իրա՞ւ կ'ըսէք,— գոչեց Աստիկ ուրախութեամբ,— իմ մասին գովեստով խօսած են:

– Այո՛, միշտ ձեր մասին գովեստով լսած եմ:

– Որոնցմէ՞...

Երիտասարդը պահ մը վարանեցաւ, որո՞ւն անունը կրնար տալ, մանաւանդ որ Աստիկի մասին միայն քանի մը խօսք լսած էր Արշակէն, ուստի տարտամօրէն պատասխանեց.

– Ձեզ ճանչցողները միշտ գովեստով կը խօսին:

– Որովհետև ամենուն օգտակար ըլլալ ջանացած եմ:

Բոլոր այս խօսակցութիւնը որևէ կերպով օգտակար չէր ըլլար Տրդատին:

Ուզեց ուղղակի իր փնտռած նիւթը շօշափել:

– Ձեռն ծառայութիւն մը պիտի խնդրեմ ո՛չ թէ ինծի համար, այլ ուրիշներու համար,— ըսաւ:

– Խօսեցէ՛ք: Ձեզի մտիկ կ'ընեմ:

– Դուք որ խմբագիր էք, անշուշտ մօտէն տեղեակ էք քաղաքական կացութեան:

– Բնականաբար, մանաւանդ որ ես լրագրութեան մէջ ուղղակի քաղաքականութեամբ կը զբաղիմ, թէ՛ թուրք թերթերու մէջ և թէ՛ ֆրանսական թերթերու մէջ...

– Գիտէք, որ վերջերս կառավարութիւնը իր ընթացքը փոխեց հայոց նկատմամբ և շատ թշնամական աչքով սկսաւ մեզ նայիլ:

– Ափսոս, որ շատ ճշմարիտ է ձեր ըսածը... ցաւալի բան է այս, բայց իրողութիւն է:

– Եւ ասոր հետևանքը այն եղաւ, որ շատ մը անմեղ հայեր հալածանքի ենթարկուեցան:

– Եւ ուրիշ շատեր ալ պիտի ենթարկուին,— դիտել տուաւ Աստիկ, որ խօսակցութեան առած այս նոր ձևէն չափազանց կը շահագրգռուէր:

– Բազմաթիւ ձերբակալութիւններ եղան,— շարունակեց երիտասարդը:

– Մասնաւորաբար հնչակեան կուսակցութիւնէն:

– Այո՛,— հաստատեց Տրդատ,— այդ մարդոցմէ մաս մը թէև ազատ արձակուեցան, բայց ուրիշներ դեռ բանտը կը մնան:

– Եւ կարծեմ դիւրաւ ալ իրենց օձիքը պիտի չկրնան ազատել:

– Կարելի չէ՞ արդեօք, որ այդ բանտարկեալներէն մէկ քանիին համար դիմում կատարուի:

– Կարելի է, բայց խնդիրը շատ փափուկ է, – պատասխանեց Աստիկ:

– Դուք, որ ազդեցիկ մարդիկ կը ճանչնաք, թերևս կարենաք բան մը ընել:

– Անշուշտ կը ճանչնամ, ամէնքն ալ ծանօթ են ինծի, բայց նորէն կը կրկնեմ, շատ դժուար առաջարկ մը կ'ընէք:

– Նոյնիսկ, եթէ կարելի է, դրամական զոհողութիւն մըն ալ կ'ընենք:

Դրամի խօսքը լսելուն Աստիկ կրկնապատկեց իր ուշադրութիւնը:

– Արդէն դրամը անհրաժեշտ է, – վճռեց՝ սիկառէթ մը վառելով ու հատ մըն ալ երիտասարդին հրամցնելով:

– Միայն թէ մեծ գումար մը պէտք չէ, որ պահանջուի:

– Դրամը իմ գրպանս պիտի չմտնէ, ասոր կրնաք ապահով ըլլալ, ես այդ տեսակ գործերէ բնաւ դրամ չեմ առներ, ասոր կրնաք հաւատալ:

– Արդէն կը հաւատամ այդպէս ըլլալուն, – պատասխանեց Տրդատ:

– Իմ սկզբունքս է ազգակիցներուս ձեռքէս եկած ծառայութիւնը մատուցանել առանց փոխարինութեան:

– Շատ գեղեցիկ սկզբունք:

– Փա՛ռք Աստուծոյ, դրամ չահելու շատ միջոցներ կան:

– Այնպէս է, մանաւանդ ձեզի նման անձնաւորութեան մը համար:

– Հիմա դուք ըսէք, թէ խնդիրը որո՞նց վրայ է, – հարցուց Աստիկ:

– Մէկ քանի հնչակեաններ, – պատասխանեց Տրդատ:

– Հնչակեա՛ն, – գոչեց Աստիկ, – հիմա խնդիրը շատ կնճռուտեցաւ:

– Դրամով ամէն բան կը դիւրանայ, – դիտել տուաւ երիտասարդը:

– Բայց նոյնիսկ դրամի մասին վերապահութեամբ կը խօսիք կոր, այդ հնչակեանները ձեր ընկերներն են:

– Ո՛չ թէ ընկեր, այլ բարեկամ, կամ աւելի ճիշդը՝ ծանօթ:

– Միևնոյն բանը չէ՞:

– Ո՛չ, բաւական տարբերութիւն կայ, եթէ իմ ընկերներս ըլլային, այն ատեն ես ալ հնչակեան կ'ըլլայի, – պատասխանեց Տրդատ ժպտելով:

– Հնչակեան ըլլաք կամ չըլլաք՝ կարևորութիւն չունի:

– Ընդհակառակը, այս միջոցիս շատ կարևորութիւն ունի, բայց ինչ որ է, շիտակը խօսելու համար, այդ մարդիկը, որոնց համար ձեզի կը դիմեմ, իմ բարեկամներս չեն, թէև անունով կը ճանչնամ զիրենք, այլ ինծի յանձնարարուած են ուրիշներու կողմէ, և դրամն ալ անոնք պիտի վճարեն:

– Լա՛ւ, լա՛ւ, այդ կէտը կարևորութիւն չունի, միայն թէ ի՞նչ ամբաստանութեամբ բանտարկուած են ձեր ազատել ուզած անձերը:

– Ամբաստանութիւնը անորոշ է, իբր թէ պետութեան դէմ կը դաւեն եղեր:

– Հասկցայ խնդիրը, – պատասխանեց Աստիկ լուրջ կերպարանք մը առնելով, – բայց ձեզի որոշ բան մը չեմ կրնար ըսել. նախ այդ մարդոց անունները պէտք է տաք ինծի:

Տրդատ, ըստ բախտի, քանի մը անուն տուաւ:

Աստիկ փութաց զանոնք արձանագրել թուղթի մը վրայ:

– Պէտք է տեղեկանամ, թէ այդ անձերը ցանկին մէջ անցա՞ծ են, – ըսաւ:

«Յանկ» բառը լսելով՝ երիտասարդը թեթեւ ցնցում մը ունեցաւ:

Իսկոյն յիշեց, թէ այդ բառը քանի մը անգամ գրուած էր լըր-տեսին վրայէն գտնուած նօթագրութեան մէջ:

– Ի՞նչ ցանկ է այդ, – հարցուց անտարբեր ձևով մը:

– Չէ՞ք գիտեր, – հարցուց Աստիկ ձայնը ցածցնելով:

– Չէ՛, – պատասխանեց երիտասարդը, – այդպիսի ցանկի մը խօսքը չեմ լսած:

– Յայտնի կ'երևայ, որ անցած-դարձածին մօտէն ծանօթութիւն չունիք:

- Այնպէս է, ես շատ քաջուած կեանք մը կ'անցընեմ:
- Այդ ցանկը, – շարունակեց Աստիկ, – օրուան մեծագոյն դէպքն է և շատերու համար ալ ճշմարիտ սարսափ մը:
- Ինչո՞ւ համար:
- Բացատրեմ քեզի, կառավարութիւնը կամ աւելի ճիշդը Հանրային ապահովութիւնը ծածկաբար շատ մը հայերու ցանկերը պատրաստած է. այդ ցանկերուն մէջ կան ամէն տեսակ անձեր, յեղափոխական, մտաւորական, առևտրական և այլն, և այլն, վերջապէս բոլոր ծանօթ դէմքերը:
- Բայց ի՞նչ բանի պիտի ծառայեն այդ ցանկերը:
- Ահաւասիկ խնդիրը, այս մասին որոշ բան մը գիտցող չի կայ, որովհետև խնդիրը շատ ծածուկ կը պահուի: Բայց կարելի է ենթադրել, որ փորձանք մը կը պատրաստուի մեզի համար, և այս մասին ասդին-անդին քննութիւն մը կատարեցի, և արդիւնքը շատ լաւ է:
- Այսինքն ի՞նչ է սպառնացող վտանգը:
- Պարզապէս աքսոր... ցանկին մէջ նշանակուած անձերը հեռաւոր տեղեր պիտի աքսորուին, ահաւասիկ ինչ որ կրցայ իմանալ: Հիմա եթէ քու ըսած անձերդ ցանկին մէջ կը գտնուին, այն ատեն զանոնք ազատելը շատ դժուար, գրեթէ անկարելի կ'ըլլայ, հակառակ պարագային թերևս յաջողիմ բան մը ընել դրամի ուժով:
- Սակայն դուք ինչպէ՞ս կրնաք հասկնալ ցանկին մէջ գրտնուած անունները:
- Ատիկա իմ գիտնալիք բանս է, – պատասխանեց Աստիկ խորհրդաւոր կերպով ժպտելով:
- Երիտասարդը առաջին անգամուան համար ալ բաւ համարեց այս տեսակցութիւնը և մեկնելու շարժում մը ըրաւ:
- Ինչո՞ւ կ'աճապարէք, – ըսաւ Աստիկ, – դեռ գործերնիս չաւարտեցինք:
- Կը վախնամ, որ ձեր զբաղումներուն արգելք կ'ըլլամ, – պատասխանեց երիտասարդը, – ասկէ զատ կարծեմ, որ այժմ ուրիշ խօսելիք մը չունինք, այժմ դուք ձեր հասկնալիքը կը հասկընաք, և յետոյ կ'որոշենք, թէ ինչ պիտի ընենք:
- Այո՛, բայց կենսական խնդիր մը կը մոռնաք:

- Ի՞նչ խնդիր:
- Այնպէս կարգադրեցինք, որ նախ պիտի քննէի, թէ ձեր ըսած անձերուն անունը կա՞յ գաղտնի ցանկերուն մէջ:
- Այո, ճիշդ է, այդպէս ըսիք դուք, ե՞րբ պիտի կրնաք ձեր պատասխանը տալ:
- Պատասխանը կրնամ հաղորդել վաղը կամ միւս օր, միայն թէ բան մը անհրաժեշտ է. այսինքն դրամը, առանց դրամի ինչպէ՞ս կ'ուզէք, որ այդ գաղտնիքը իմանանք:
- Ի՞նչ, ատոր համա՞ր ալ դրամ պիտի տրուի, – գոչեց երիտասարդը:
- Բնականաբար, առանց դրամի ի՞նչ կարելի է ընել:
- Սակայն, Աստիկ էֆէնտի, ես արդէն յայտնեցի, որ այս գործին մէջ պարզ միջնորդ եմ, ես դրամ տալու իրաւասութիւն չունիմ և ոչ ալ դրամ ունիմ, – աւելցուց երիտասարդը ժպտելով:
- Աստիկ, որ կը պատրաստուէր դրամ ստանալու, երիտասարդին այս խօսքերուն վրայ յուսախարութեան դժգոհ շարժում մը ըրաւ:
- Ուրեմն, – ըսաւ, – պարապ տեղը ժամանակ կորսնցուցինք:
- Այս խօսքերը երիտասարդը իրեն ուղղուած կշտամբանք մը նկատեց:
- Կը ներէք, Աստիկ էֆէնտի, – ըսաւ, – ես կը կարծէի, որ մեր ըրածը պարզ տեսակցութիւն մըն էր և ոչ թէ սակարկութիւն մը:
- Դրամի խօսքը ամենէն առաջ դուք բացիք:
- Բայց անմիջապէս վճարելու խօսք չըրի, որչա՞փ դրամ պէտք է:
- Ցանկերը քննելո՞ւ համար:
- Այո, – պատասխանեց Տրդատ:
- Ես աժան կերպով կրնամ ընել, օրինակի համար՝ 5-6 ոսկիով:
- Եթէ գիտնայի, կ'ըսէի բարեկամներուս, որ դրամ տային ինձի:
- Եւ գիտցած եղիր, որ այս գործը ուրիշ ոչ ոք կրնայ ընել, նոյնիսկ տասնապատիկ դրամ վճարելով:

– Արշակ էֆէնտի^օն ալ կարող չէ,– Հարցուց Տրդատ:
 – Արշակ էֆէնտի պարզ լրտես մըն է,– գոչեց Աստիկ,– ա-
 նիկա ապահովութեան պետին դէմը բարեւ կը բռնէ, մինչդեռ ես
 մտերմաբար հետը կը տեսնուիմ, եթէ Արշակ էֆէնտիին վրայ
 յոյս դրած ես՝ ապահով եղիր, որ քու մարդիկը տակաւին երկար
 ատեն կը մնան բանտը:
 – Ո՛չ, ես Արշակ էֆէնտիի անունը դիպուածով տուի:
 – Այդ տարբեր բան,– ըսաւ Աստիկ:
 – Արդէն այդ մարդուն հետ տեսնուիլ անգամ չեմ ուզեր:
 – Եւ շատ աղէկ կ'ընես:
 – Բայց դառնանք մեր բուն խնդրին: Այսպէս, ուրեմն, նախ
 ցանկերը քննելու համար դրամ պիտի վճարուի և յետոյ՝ բան-
 տարկեալները ազատելու համար:
 – Մի՛ կարծեր սակայն, որ երկրորդ վճարումը այնքան ոչինչ
 պիտի ըլլայ, որքան առաջինը,– դիտել տուաւ Աստիկ:
 – Ատոր տարակոյս չի կայ, հիմա ես կ'երթամ իմ բարեկամ-
 ներս կը տեսնեմ, իրենց կը հաղորդեմ քու ըսածներդ և պա-
 տասխանս կը բերեմ ձեզի:
 – Քանի որ դուք գործին մէջ ուղղակի բան մը չունիք, աւե-
 լի աղէկ չըլլա՞ր, որ շիտկէ շիտակ այդ ձեռք բարեկամները տես-
 նամ:
 – Այդ ալ կ'ըլլայ,– պատասխանեց Տրդատ:
 – Եւ լաւագոյնը այդ է, որովհետեւ ժամանակ կորսնցնելու
 չէ, վաղը կրնայ ըլլալ, որ պաշտօնի վրայ գտնուող իմ բարե-
 կամներս հրաժարին, և անոնց տեղ ինծի անծանօթ մարդիկ
 պաշտօնի կոչուին, այն ատեն բան մըն ալ չեմ կրնար ընել:
 – Շատ ճիշդ կը խօսիք:
 – Ուրեմն ե՞րբ կրնամ տեսնել ձեր բարեկամները:
 – Չեզի լուրը կը բերեմ:
 – Հիմա ուղղակի իրե՞նց պիտի երթաս:
 – Այո՛, միտքս այնպէս է:
 – Ուրեմն կրնաս անմիջապէս զիրենք առնել, բերել:
 – Երթալիք տեղս բաւական հեռու է,– առարկեց Տրդատ,–
 ատկէ գատ վստահ չեմ, որ զիրենք անպատճառ տունը պիտի
 գտնեմ:

Աստիկ, որ իւղոտ որս մը գտած ըլլալ կը կարծէր, շուտով
 տեղի չտուաւ:

– Ես մէկ քանի ժամ տակաւին հոս եմ,– ըսաւ,– եթէ զիրենք
 գտնես, անմիջապէս առ, բեր, գործը կարգադրենք, իսկ եթէ
 դուրս ելած ըլլան, անշուշտ մինչև իրիկուն զիրենք կը գտնես:
 – Հաւանական է,– պատասխանեց երիտասարդը:
 – Այն պարագային Բերա տեղ մը ժամադիր կ'ըլլանք, օրի-
 նակի համար՝ Լիւքսէնպուրկի սրճարանը ժամը 5-էն մինչև 7
 ձեզի կը սպասեմ:
 – Բայց, Աստի՛կ էֆէնտի, մենք չենք ուզեր այսպէս ձեր
 թանկագին ժամերը յափշտակել...
 – Չէ՛, չէ՛, ինծի երեքը նեղութիւն չպատճառեր ասիկա, ես
 արդէն հոն ուրիշներու հետ ալ ժամադրութիւն ունիմ, արդէն
 ստիպուած եմ Լիւքսէնպուրկ հանդիպելու:
 – Այդ տարբեր,– պատասխանեց Տրդատ:
 – Միայն թէ անպատճառ եկէք,– պնդեց Աստիկ:
 – Խնդիրը նախ զիրենք գտնելուն վրայ է,– դիտել տուաւ
 Տրդատ, որ վերջնական խօսք մը տալէ կը զգուշանար:
 – Ես 5էն 7 պիտի սպասեմ:
 Երիտասարդը Աստիկ էֆէնտիի ցոյց տուած բարեացակա-
 մութեան մասին իր շնորհակալիքը յայտնելով՝ վերջապէս յաջո-
 դեցաւ օձիքը ազատել:

ԳԼՈՒԽ ԻԲ

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱՆՐԱՆԱՅ

Այդ իրիկունը Վահան Թօշիկեան շատ ուշ մեկնեցաւ «Վեր-
 չին լուր»ի խմբագրատունէն:

Մտածկոտ դէմքով մը ուղղուեցաւ դէպի կամուրջ՝ ակնոցը ե-
 դրականօրէն քիթէն կախուած և թերթերու ծրար մը գրպանին
 մէջ:

Մինչև իրիկուն վրդովեցուցիչ լուրեր իմացած էր ու այժմ
 անոնց ազդեցութեան ներքեւ կը գտնուէր:

Երբ կամուրջ հասաւ, ձեռք մը իր ուսին դպաւ:

Թօշիկեան յանկարծ ցնցուեցաւ և դող ելած ետին նայեցաւ:

– Դո՞ւն ես եղբր, Աբի՛կ, – գոչեց, – զիս դող հանեցիր:

Արդարև իր ետին կեցած էր Աբիկ Մուպահեան՝ թևին տակ խոշոր ծրար մը առած:

– Ինչո՞ւ դող ելար, – հարցուց թեթև մը ժպտելով:

– Եղբա՛յր, մէկէն ի մէկ կարծեցի, որ ոստիկան մըն էր...

– Ոստիկանի հետ ի՞նչ գործ ունիս:

– Ես ի՛նչ գիտնամ, այս օրերս շատ ջղայնոտ ու կասկածոտ դարձած եմ. ամէն վայրկեան ինձի այնպէս կուգայ, որ պիտի ձերբակալուիմ... այսօր մանաւանդ շատ գէշ տրամադրութեան մէջ եմ:

– Գիտե՞ս, որ կացութիւնը շատ ծանրակշիռ հանգամանք մը առնելու վրայ է, – ըսաւ Աբիկ խորհրդաւոր ձևով մը և ձեռքը մօրուքին տանելով:

– Այո՛, ես ալ այսօր երկիւղալի բաներ իմացայ, – պատասխանեց Թօշիկեան:

– Մութին մէջ դաւադրութիւններ կը սարքուին կոր բոլոր ազգին դէմ:

– Կացութիւնը պարզապէս յուսահատական է, – դիտել տուաւ Թօշիկեան:

– Եւ Պատրիարքարանը բան մը ըրած չունի:

– Զեռքէն ի՞նչ կուգայ:

– Ի՛նչ ըսել է, վերջապէս ազգային իշխանութիւն մըն է, պէտք է դիմումներ կատարէ, բացատրութիւն ուզէ. ես այս մասին թէև խօսեցայ Պատրիարքին, բայց շատ կարևորութիւն չտուաւ ըսածներուս. գաւառներէն եկած տեղեկութիւններն ալ շատ գէշ են, ամէն կողմ վախ ու սարսափ կը տիրէ կոր, պէտք է անպատճառ բան մը ընել:

– Դժբախտութիւնը այն է, որ պատերազմին հետեանքով դեսպաններն ալ բացակայ են... գոնէ կարելի էր անոնց դիմում ընել:

– Գերմանիոյ և Աւստրիոյ դեսպանները հոս են, թո՛ղ անոնց դիմեն... Հիմա բոլոր ազդեցութիւնը անոնց ձեռքն է... այս կէտն ալ բացատրեցի Պատրիարքին... վերջապէս շարժելու է, գործելու է, բան մը ընելու է:

– Անոնց քաղաքականութիւնը այնպէս կը պահանջէ, որ այս միջոցիս թուրքերուն հետ աղէկ երթան, կը կարծե՞ս, որ հաւանին ի նպաստ հայերուն միջամտութիւն մը ընել:

– Մինչև աստիճան մը կ'ընեն. մենք մեծ բան մը չենք պահանջեր կոր, այլ պարզապէս ապահովութիւն. գիտես, որ առջի օրը եկան ամենուս տունը, ով կայ, ով չիկայ՝ գրեցին, իբր թէ հացի վէսիքա պիտի տան եղբր, բայց յետոյ իմացանք, որ թուրքերուն, յոյներուն և հրեաներուն տուները չէ գրուած, յայտնի է, որ խնդիրը հացի խնդիր չէ, այլ միմիայն հայոց դէմ կարգադրութիւն մը:

– Բայց ի՞նչ կրնայ ըլլալ այդ, – հարցուց Թօշիկեան մտատանջ դէմքով մը:

– Ո՛վ գիտէ, ամէն պարագային՝ մեզի նպաստաւոր բան մը չէ, այս մասին Վարչութեան մէկ անդամին ուշադրութիւնը հրաւիրեցի այսօր:

– Ի՞նչ ըսաւ:

– Ըսաւ, թէ ինքն ալ ատանկ բան մը իմացած է, թէ ուրիշ մէկ քանի թաղերու մէջ ալ նոյն գործողութիւնը ըրած են, բայց կարևորութիւն տալիք բան մը չէ, Աստուած տար՝ այնպէս ըլլար:

– Մեր կողմերն ալ իմացայ, որ ամուրի հայերուն ցուցակը կը պատրաստեն եղբր, – պատասխանեց Թօշիկեան:

– Ահաւասիկ կասկածելի բան մըն ալ, բարեբախտաբար մենք երկուքս ալ ամուսնացած ենք:

– Վերջապէս եթէ այս փորձանքներէն գլուխնիս ողջ ազատենք, շատ մեծ բան է, – եզրակացուց Թօշիկեան:

Այսպէս խօսակցելով հասած էին Ղալաթիա:

– Ես հոս մէկու մը պիտի հանդիպիմ ու անկէ Օրթաքէօյ պիտի երթամ, – ըսաւ Աբիկ:

– Իսկ ես Բերա պիտի ելլեմ, – պատասխանեց Թօշիկեան: Թողունք, որ Աբիկ երթայ իր տեսնելիք անձը գտնէ, և մենք հետևինք «Վերջին լուր» ի խմբագրին:

Թօշիկեան միշտ տխուր ու մտածկոտ ուղղուեցաւ թիւնէլ և շտապեց երկրորդ կարգի վակօնը:

Հոն նոր ծանօթ մը գտաւ իր դէմը:

Սեպուհ Ակունին էր, որ ականջին ծռելով ըսաւ.

– Կարևոր բաներ իմացայ...

– Ի՞նչ բան, – հարցուց Վահան կասկածոտ և վրդոված դէմքով մը:

– Հոս ըսուելիք բաներ չեն, երբոր առանձին մնանք, այն ատեն կ'ըսեմ:

– Լաւ, – պատասխանեց Վահան:

Քանի մը վայրկեան ետքը երկու բարեկամները դուրս կ'ելլէին թիւնէլէն ու թեւթեւի կ'ուղղուէին դէպի թիւնէլի բասաժը:

– Այս ճամբէն երթանք, – ըսած էր Ակունի, – որպէսզի աւելի առանձին ըլլանք:

Երբ քիչ մը յառաջացան՝ Ակունի ըսաւ.

– Կարծեմ ամէնքս ալ վտանգի մէջ ենք:

– Ի՞նչ վտանգ:

– Ձերբակալուելու, բանտարկուելու և թերևս աքսորուելու վտանգը:

– Ի՞նչ կ'ըսես, – գոչեց Թօշիկեան, – բայց ամէնքս ըսելով ի՞նչ կը հասկնաս:

– Մասնաւորաբար խմբագիրները, կամ աւելի ընդարձակ սահման մը տալու համար, մտաւորականները:

– Բայց ի՞նչ կ'ուզեն մենէ, մանաւանդ ոչ կուսակցական խմբագիրներէն:

– Հիմա այդ զանազանութիւնը գոյութիւն չունի, կառավարութեան աչքին ամէնքս կասկածելի ենք:

– Քու առած տեղեկութիւնդ հաստատ աղբիւրէ՞ է, – հարցուց Թօշիկեան վրդոված դէմքով մը:

– Այո՛, – պատասխանեց Սեպուհ Ակունի հաստատական շեշտով մը:

– Ի՞նչ աղբիւր:

– Սատրք պէյը ըսաւ, – պատասխանեց Ակունի:

– Սատրք պէյ՞, ո՞վ է այդ մարդը, կառավարական պաշտօնեա՞յ է:

– Չէ՛, ոստիկանութեան լրտես է, բայց սովորական լրտեսներէն չէ, ամբողջ անցած-դարձածէն տեղեկութիւն ունի, երէկ գիշեր տեղ մը միասին էինք, ինքն ալ բաւական խմած էր, բերնէն

փախցուց, իմ շատ հին ծանօթս է, միասին շատ քէյֆեր ըրած ենք, թէև լրտես է, բայց գէշ մարդ չէ, շատ անգամներ ինծի օգտակար եղած է, իր միջոցով բաւական մարդիկ փորձանքէ ազատած եմ:

– Է՛յ, որոշ բան մը ըսա՛ւ, – հարցուց Թօշիկեան, որուն յուզումը հետզհետէ կ'աւելնար:

– Որոշ բան ի՞նչ կ'ուզես, որ ըսէ, այնչափ միայն հասկցուց, թէ խմբագիրներու, հրատարակիչներու, գրագէտներու դէմ մասնաւոր խստութիւններ ձեռք պիտի առնուին և խորհուրդ տուաւ, որ զգոյշ ըլլամ և եթէ կարելի է, ժամանակի մը համար քաշուիմ լրագրական ասպարէզէն, նոյնիսկ հասկցուց, թէ այս օրերս քանի մը ձերբակալութիւններ պիտի ըլլան:

– Հարցուցի՞ր, թէ որոնք են ձերբակալուելիքները:

– Հարցուցի, բայց չուզեց ըսել. «քեզի համար դեռ վախնալիք բան մը չի կայ» ըսաւ միայն:

Այնալը Չարչըսիէն անցնելով՝ երկու բարեկամները մեծ փողոց ելան:

– Եկուր նստինք, մէյ մէկ գարեջուր խմենք, – առաջարկեց Ակունի:

Բայց Թօշիկեան մերժեց:

– Չէ՛, – ըսաւ, – այս իրիկուն տրամադրութիւն չունիմ, արդէն խռոված էի, դուն միտքս բոլորովին պղտորեցիր, շիտակ տուն պիտի երթամ, դուրսերը պտրտիլ չեմ ուզեր:

Ակունի տեսաւ, որ իր բարեկամը չափազանց վրդոված էր և ուզեց զայն սրտապնդել:

– Այդչափ մի՛ վախնար Վահան, – ըսաւ, – տակաւին քենէ առաջ որչա՛փ ձերբակալիքներ կան...

– Դաշնակցականներուն ինչո՞ւ մինչև հիմա բան մը չըրին, – դիտել տուաւ Թօշիկեան:

– Կարծեմ անոնց դէմ ալ հալածանքը պիտի սկսի:

– Մնաք բարով:

– Երթաս բարով:

Եւ երկու խմբագիրները իրարմէ բաժնուեցան:

Թօշիկեան իր ճամբան շարունակեց արագ քայլերով, գլուխը կախած, մտածկոտ:

Ժամ առաջ կ'ուզէր տուն հասնիլ: Իրեն այնպէս կը թուէր, թէ տունը, թէ և առժամայ, բայց ապահով ապաստանարան մըն էր:

Այսպէս քալելով հասաւ Հարպիէի վարժարանին դէմը և մտաւ կողմնակի փողոց մը, ուր կը գտնուէր իր բնակարանը:

Մուտքը տիրած էր արդէն, երբ բնակարանէն ներս մտաւ:

Տիկինը չէր եկած տակաւին, և լոյս չի կար բնակարանին մէջ:

Այս մթու թիւնը ալ աւելի ճնշեց իր վրայ, և Թօշիկեան մեղա- մաղձօրէն մըմնջեց բանաստեղծին տողերը.

«Գիշերը մուտ է, մո՛ւթ հոգիիս պէս...»:

Յետոյ երկար «օ՛Ֆ, օ՛Ֆ» մը արձակեց և լուցկին բռնկցնե- լով վառեց սեղանին վրայ տրուած լամպարը:

Սենեակը լուսաւորուեցաւ, և ասիկա թեթև սիոփանք մը ե- դաւ իրեն համար:

«Սա թերթերը աչքէ անցընեմ»,— մտածեց՝ գրպանէն թուղ- թերուն ծրարը հանելով ու սեղանին քով բազմելով:

Վայրկեան մը ետք, խոր ընթերցումի մը մէջ ընկղմած էր՝ իր քիչ մը առաջուան մտատանջութիւնները մոռնալով:

Տիկինը երբ եկաւ, ճաշեցին, և յետոյ կրկին շարունակեց իր ընթերցումը:

Գիշերը բաւական յառաջացած էր, և Թօշիկեան կը պատ- րաստուէր երթալ պառկելու, երբ յանկարծ դուռը զարնուեցաւ:

— Ո՞վ կրնայ գալ այս ժամանակ,— գոչեց խմբագիրը այլայ- լած:

— Ի՞նչ դող կ'ելլաս,— պատասխանեց կինը յանդիմանական շեշտով մը,— դեռ այնչափ ուշ չէ, թերևս դրացի մը այցելու- թեան եկաւ:

— Երթամ, նայիմ:

Եւ Վահան գնաց դուռը բանալու:

Հազիւ թէ բացած էր՝ երկու մարդիկ ներս մտան:

Խմբագիրը գոյնը նետեց և դողդղալ սկսաւ:

Ներս մտնողներէն մին լրտես Հիտայէթն էր և միւսը երկայ- նահասակ թուրք մը:

— Վահան Թօշիկեանը դո՞ւն ես,— հարցուց Հիտայէթ թուր- քերէն լեզուով:

— Այո՛,— կմկմաց Թօշիկեան:

— Եկած ենք ձեր տունը խուզարկութիւն կատարելու:

— Բայց... բան մը չունիմ. ես պարզ խմբագիր մը, չէզոք մէկն եմ,— կմկմաց Թօշիկեան, որուն յուզումը հետզհետէ կ'աւելնար:

— Հրաման ունինք տունը խուզարկելու, իրար անցնելիք, դող ելլելիք բան մը չիկայ,— պատասխանեց Հիտայէթ միշտ թուրքերէն և չարաշուք ժպիտ մը շրթունքին վրայ,— եթէ վտանգաւոր բան մը չունիս՝ աւելի աղէկ, այն ատեն բնաւ յու- զուելու պատճառ չունիս:

— Հրամանեցէ՛ք, խուզարկեցէք,— ըսաւ խմբագիրը նկուն հա- մակերպութեամբ մը:

Ոստիկանութեան երկու Արգոսները սկսան իրենց անարգ գործողութեան: Երկարատե ու մանրակրկիտ խուզարկութիւն մը կատարեցին՝ բնակարանին ամէն կողմը խնամով հաւաքելով ու ծրարելով իրենց գտած բոլոր անվնաս թուղթերը, թերթերը, գիրքերն ու տետրակները:

Բոլոր այս գործողութեան միջոցին խեղճ խմբագիրը դողդո- ջուն քայլերով կը հետեւէր երկու լրտեսներուն:

Իր յուզումը քիչ մը մեղմելու համար անընդհատ կը ծխէր:

Տիկին Հայկանոյշ Մառք աւելի պաղարիւնութիւն ցոյց կու- տար և կը ջանար սրտապնդել իր ամուսինը:

— Վահան, — կ'ըսէր, — քանի որ անմեղութեանդ վրայ վստահ եմ՝ վախնալու բան մը չունիս:

Վերջապէս խուզարկութիւնը աւարտեցաւ, թուղթերը և գիրքերը խոշոր ծրար մը ըրին, կապեցին, և թուրք ոստիկանը զայն թևին տակ առաւ:

— Թօշիկեան չ'Ֆէնտի, դուք ալ միասին եկէք,— ըսաւ Հիտա- յէթ:

— Ե՛ս ալ միասին,— գոչեց Վահան դողահար,— ո՞ւր պիտի երթանք:

— Հոս մօտը, պահականոց:

— Բայց... գիշերուան այս ժամուն ի՞նչ պիտի ընեն զիս, եթէ հարցաքննութեան համար է, վաղը առտու ես ձեր ուզած ատե- նը կուգամ. եթէ պէտք կայ՝ երաշխաւոր մը տամ, այստեղ, դրա- ցիներէն:

– Հրաման ունինք ձեզ միասին տանելու, – պատասխանեց Հիտայէթ դաժան դէմքով մը, – ուստի պարապ խօսքերով ժամավաճառ չըլլանք:

– Բայց գոնէ այս խուզարկութեան և ձերբակալութեան պատճառը ըսէք, – միջամտեց Հայկանոյ Մառք:

– Պատճառը կ'իմանայ, երբոր միասին գայ:

Թօշիկեան ըմբռնեց կացութեան անողոքելիութիւնը և գլխիկոր հետևեցաւ ոստիկաններուն՝ աղիողորմ նայուածք մը ուղղելով իր կնոջ:

Տասը վայրկեանէն հասան պահականոց և իսկոյն ուղղուեցան քօմիսէր մուսվինին սենեակը:

Այս վերջինը նուրբ դիմագիծներով, քաղաքավար ձևերով երիտասարդ մըն էր:

– Ահաւասիկ բերինք, – ըսաւ Հիտայէթ խմբագիրը ցոյց տալով:

– Ո՞վ է այս էֆէնտին, – հարցուց քօմիսէրի փոխանորդը:

– Վահան Թօշիկեան, «Վերջին լուր» թերթի խմբագիրը:

– Այո՛, այո՛, հիմա յիշեցի, լա՛ւ, տունն ալ խուզարկեցի՞ք:

– Այո՛, մանրակրկիտ կերպով խուզարկեցինք և բոլոր վնասակար թուղթերը և գիրքերը ծրարելով՝ միասին բերինք:

– Աղէկ, հիմա կրնաք երթալ, էֆէնտին թո՛ղ հոս մնայ:

Հիտայէթ և իրեն ընկերացող թուրք ոստիկանը դուրս ելան: Քօմիսէրը գրպանէն սիկատէթի տուփը հանեց, հատ մը ինք առաւ, հատ մըն ալ հրամցուց խմբագրին:

Այս վերջինը իրեն հանդէպ ցոյց տրուած այս յարգալից վերաբերմունքէն քաջալերուած՝ ուզեց օգուտ քաղել քօմիսէրին բարեացակամութենէն և խօսակցիլ իր հետը:

– Արդեօք զիս հարցաքննելո՞ւ համար հոս բերել տուիք, – հարցուց:

– Ո՛չ, – պատասխանեց միւսը, – ես ձեզ հարցաքննելու պաշտօն չունիմ, ինծի միայն հրաման եղած է ձեր տունը խուզարկել տալ և ձեզ ձերբակալել:

– Ուրեմն ես հիմա ձերբակալուած եմ...

– Այնպէս կ'երևայ, – պատասխանեց քօմիսէրը նուրբ ժպիտով մը:

– Գոնէ պատճառը կրնա՞ք ըսել:

– Չեմ կրնար, որովհետեւ ես ալ չեմ գիտեր:

– Բայց որեւէ պատճառ չի կար տունս խուզարկելու և զիս ձերբակալելու:

– Եթէ պատճառ չըլլար, այդպիսի հրաման մը չէին տար:

– Պարզապէս զրպարտութեան մը հետևանք է:

– Շատ հաւանական է... երբոր ձեզ հարցաքննեն, ամէն բան կը լուսաբանուի, ապահով եղէք, և եթէ զրպարտիչ մի կայ, իր արժանի պատիժը կը ստանայ:

– Ե՞րբ պիտի հարցաքննուիմ:

– Այդ ալ չեմ գիտեր... հաւանօրէն վաղը առտու կ'իմանաք:

Այս գիշեր պարապ տեղը մի՛ մտմտաք:

– Ուրեմն այս գիշեր հո՞ս պիտի անցընեմ:

– Բնականաբար, ատենը ուշ է, և հիմա ձեզ չեմ կրնար ղըրկել ոստիկանութեան տնօրէնութեան:

– Գոնէ թոյլ պիտի տա՞ք, որ այս սենեակին մէջ մնամ մինչև առտու:

– Ատիկա անկարելի է, միայն ձեզի բացառաբար առանձին սենեակի մը մէջ դնել կուտամ, փոխանակ բանտը դնելու:

Քօմիսէրը զանգակը հնչեցուց: Ոստիկան մը ներս մտաւ:

– Էֆէնտին քովի սենեակը տարէ՛ք, և թո՛ղ հոն անցունէ՛ք գիշերը, – ըսաւ քօմիսէրը ոստիկանին՝ ցոյց տալով խմբագիրը:

– Գլխուս վրայ, – պատասխանեց այս վերջինը և Թօշիկեանին դառնալով աւելցուց.

– Հրամանեցէ՛ք, էֆէնտի՛:

Խմբագիրը ոտքի ելաւ, բարևեց քօմիսէրը և ընկերացաւ ոստիկանին:

Ոստիկանը զինքը առաջնորդեց փոքրիկ սենեակ մը, ուր սեղան մը և քանի մը աթոռներ կը դտնուէին, սենեակին դրան վերի կողմը ապակեայ էր և այս կերպով դուրսէն աղօտապէս կը լուսաւորէր:

Ոստիկանը դուռը գոցեց, կղպեց և հեռացաւ:

Թօշիկեան, սրտաբեկ, ինկաւ աթոռի մը վրայ՝ գլուխը երկու ձեռքերուն մէջ առած:

Խղճմտանքի մանրակրկիտ քննութիւն մը կ'ընէր ինքնին

գտնելու համար, թէ ի՞նչ յանցանք կրնար գործած ըլլալ իր վրայ հրաւիրելու համար ոստիկանական այս խստութիւնը:

Իգո՛ւր աչքին առջև կը պատկերացնէր ամբողջ իր ազգային և հանրային գործունէութիւնը, բան մը չէր գտնար, որ կարենար կասկած հրաւիրել իր վրայ: Ո՛չ մէկ յեղափոխական կուսակցութեան պատկանած էր ինք, ո՛չ մէկ դաւադրական գործի մասնակցած: Իրա՛ւ է, որ երբեմն, ազգային շրջանակի մէջ, փոքրիկ դաւեր սարքած էր Պատրիարքի մը ընտրութիւնը յաջողցնելու, առաջնորդ մը հրաժարեցնելու, վարդապետ մը արդարացնելու կամ ուրիշ մը դատապարտելու համար, բայց ատոնք անվնաս, անմեղ խաղեր էին, որոնք որևէ կերպով չէին կրնար Օսմանեան կայսրութեան ապահովութիւնը խանգարել:

Յետոյ յանկարծ յիշեց իր մասնակցութիւնը Երուսաղէմի խնդրին մէջ, իբրև Չեքմ պաշտպան Ղևոնդ Մագսուտեանի: Ասիկա բնականաբար իրեն դէմ գրգռած էր հակառակորդները:

Թօշիկեան կը խորհէր, թէ հակադեոնոզեաններուն մէջ կա՞ր մէկը, որուն կարելի ըլլար վերագրել զրպարտիչի դերը: Իզուր մի առ մի աչքին առջև կը բերէր հակադեոնոզեան պարագլուխները, անոնց մէջ ո՛չ ոք կը գտնէր այդպիսի անարգ գործ մը կատարելու կարող:

«Զէ,— մտածեց,— այդ մարդիկը գաղափարի հակառակորդներ են միայն և կարելի չէ, որ զիս լռեցնելու կամ հեռացնելու համար այսպիսի միջոցներու դիմեն:

Ուրե՞մն:

Թերևս թիւրիմացութեան մը զոհ գացած եմ,— խորհեցաւ,— անունի շփոթութիւն մը եղած է. այսպիսի բաներ յաճախ պատահած են թուրք ոստիկանութեան մէջ, վաղը զիս կը հարցաքննեն, սխալմունքը մէջտեղ կ'ելլէ, ու ազատ կ'արձակուիմ»:

Այս վարդազոյն երազը զինքը քիչ մը սրտապնդեց, բայց ամէն երազներու պէս շուտով ցնդեցաւ, և կրկին մութ խոհեր պաշարեցին իր միտքը:

Եթէ, ընդհակառակը, գործին մէջ սխալմունք մը չըլլար, եթէ ճիշդ ու ճիշդ իրենց փնտռած անձը Վահան Թօշիկեանն էր, այն ատեն ի՞նչ պիտի ըլլար իր վիճակը, հակառակ իր անմեղութեան՝ ազատ պիտի չթողուէր, այլ երկար-բարակ քննութեան

պիտի ձեռնարկէին, իր քովը գտնուած թուղթերը մի առ մի պիտի թարգմանէին անոնց մէջ որևէ վնասակար բան մը գտնելու համար, և այս գործողութիւնը, ո՛վ գիտէ, քանի՛ ամիսներ պիտի տևէր... ու ինք այդ ամիսները պիտի անցընէր աղտոտ բանտի մը անկիւնը:

Այս հեռապատկերը սոսկացուց զինքը:

Եւ յիշեց ընտանեկան մաքուր ու հանդարտիկ յարկը, ուրկէ այնքա՛ն անակնկալ ու բիրտ կերպով խլուած ու նետուած էր անծանօթին փորձանաւոր ճամբուն վրայ:

Ամենէն աւելի զինքը տագնապողը իր կացութեան այդ անորոշութիւնն էր:

«Գոնէ գիտնայի, թէ ի՞նչ բանի համար կը ձերբակալուիմ»,— կը կրկնէր ինքն իրեն:

Ժամերով այսպէս սև մտածումներու մէջ անցուց երիտասարդ խմբագիրը, անընդհատ ծխելով, մինչև որ սիկառէթները սպառեցան:

Այսպէս իր միակ մխիթարանքն ալ պակսեցաւ իրեն:

Ի վերջոյ ուժասպառ ինկաւ աթոռին վրայ և սկսաւ մրափել: Երևակայութիւնը այնքան գրգռուած էր, սակայն, որ սոսկալի երազներ քունին մէջ իսկ զինքը կը շարչարէին:

Ինքզինքը կը տեսնէր Պայազիտի հրապարակը, կախաղանի մը ոտքը, ճերմակ շապիկ մը հագած, մինչ զազրադէմ գնչու մը կը ջանար չուանը իր վիզը անցընել, ու խեղճը սուր ճիչ մը արձակելով՝ ընդոստ կը ցատքէր աթոռին վրայէն:

Քիչ ետքը կրկին կը փորձէր քնանալ, և այս անգամ դարձեալ մահուան գործիքը կը ցցուէր իր աչքերուն առջև, բայց փոխանակ Պայազիտի հրապարակին՝ փոխադրուած կ'ըլլար կամուրջին գլուխը:

Այս մղձաւանջներով անցուց ամբողջ գիշերը, մինչև որ աքաղաղի մի հեռաւոր ձայնը աւետեց իրեն, թէ արշալոյսը մօտ էր:

Քիչ-քիչ լոյսը սկսաւ մաղուիլ սենեակին միակ պատուհանէն ներս:

Հագիւ թէ արևը ծագած էր, երբ ոստիկան մը եկաւ, իր արգելարանին դուռը բացաւ և կոշտ ձայնով մը պոռաց.

– Քալէ՛, տեսնենք:

– Ո՞ւր պիտի երթանք,– Հարցուց Թօշիկեան:

– Քալէ՛, կ'ըսեմ կոր:

– Այո՛, բայց...

– Երկար մի՛ ըններ:

Խմբագիրը տեսաւ, որ ոստիկանը դերամատչելի մէկը չէր, և խոհեմութիւն համարեց լռելեայն համակերպիլ ճակատագրին:

Երբ փողոց ելան՝ ոստիկանը հարցուց.

– Ոտքո՞վ կ'երթաս, թէ՞ կառք նստիլ կ'ուզես:

– Հեռո՞ւ է երթալիք տեղերնիս,– Հարցուց Թօշիկեան:

– Պոլիս պիտի երթանք,– բացատրեց ոստիկանը:

– Ուրեմն կառք նստինք:

Ոստիկանը կառապանի մը նշան ըրաւ, որ իսկոյն կառքը մօտեցուց:

Երկուքը մէկ բազմեցան մէջը:

– Արդեօք կարելի չէ՞ սրկէ փաքէթ մը սիկառէթ առնել,– ըսաւ Թօշիկեան,– սիկառէթս սպառած է, և ես առանց ծխելու չեմ կրնար կենալ:

– Կ'առնենք,– բարեհաճեցաւ պատասխանել ոստիկանը:

Ու քիչ մի անդին կառքը կեցնելով ծխավաճառի մը խանութին առջև՝ թոյլ տուաւ երիտասարդին, որ վար իջնէ և իր գնումը կատարէ:

Թօշիկեան, երբ կառքը վերադարձաւ, սիկառէթ մը վառեց և հատ մըն ալ ոստիկանին հրամցուց:

Կառքը ուղղուեցաւ Ղալաթիա, յետոյ կամուրջէն անցաւ և ի վերջոյ կանգ առաւ ոստիկանատան առջև:

Հոն պարզ հարցաքննութենէ մը ետքը իր ինքնութիւնը ստուգեցին և երկու ծպտեալ ոստիկաններով, որոնց մին դարձեալ Հիտայէթն էր, առաջնորդուեցաւ «Վերջին լուր»ի խմբագրատունը, որ նոյն միջոցին կը գտնուէր դաշնակցական Ատոմ Շահէնի տպարանը, էպու Սուլուս ճատտէսի:

Առտուան այդ ժամուն ո՛չ թերթին հրատարակիչ Տէր-Ներսէսեան, ո՛չ ալ միւս խմբագիրները եկած էին: Միայն գրաշարները, ներսը, իրենց գործովը կը զբաղէին:

– Ո՞րն է քու գրասենեակդ,– հարցուց Հիտայէթ, երբ դուռնէն ներս մտան:

– Ես մասնաւոր գրասենեակ չունիմ,– պատասխանեց Թօշիկեան,– արդէն ամբողջ խմբագրութիւնը սա սենեակն է...

Եւ խմբագիրը ձեռքովը ցոյց տուաւ դրան աջ կողմը գրտնուած փոքրիկ սենեակը:

Երկու ծպտեալ ոստիկանները հոն մտան և սկսան խուզարկել ամէն կողմ և հաւաքել ինչ թուղթ որ գտան:

Իգո՛ւր Թօշիկեան կ'ըսէր, թէ այդ թուղթերը իրեն չէին վերաբերեր, այլ խմբագրութեան:

– Դուն մեր գործին մի՛ խառնուիր,– դիտել կուտար Հիտայէթ:

Այդ թուղթերը ընդհանրապէս խմբագրութեան զրկուած ու չհրատարակուած յօդուածներ էին:

Գործողութիւնը շատ երկար չտևեց: Լրտեսները իրենց ժողված թուղթերը ծրարեցին և խմբագիրն ալ միասին առնելով՝ վերադարձան ոստիկանատուն:

Ճամբան միջոց մը Թօշիկեան, որ Հիտայէթի քովէն կը քալէր, հայերէն լեզուով հարցուց:

– Աստուծոյ սիրոյն, ի՞նչ է ինծի դէմ եղած ամբաստանութիւնը:

– Չեմ կրնար ըսել,– պատասխանեց լրտեսը:

– Ե՞րբ պիտի կրնամ իմանալ:

– Երբ որ պատերազմական ատեանը քեզ հարցաքննէ:

«Պատերազմական ատեան» բառերը սարսուռ մը տուին երիտասարդ խմբագրին, և յուզումէն ակնոցը քիթէն ինկաւ:

Թօշիկեան ծոեցաւ ու գայն վերցուց գետնէն: Բարեբախտաբար կակուղ հողին հանդիպած էր, ու ապակին չէր կոտրած:

– Ուրեմն պատերազմական ատեանին առջև՞ պիտի ելլեմ,– գոչեց յուսահատօրէն:

– Բնականաբար,– պատասխանեց լրտեսը պաղարիւնով:

– Կը պաղատիմ, ամբաստանութեան ինչ ըլլալը ըսէք ու զիս մտատանջութենէ փրկեցէք, այս անորոշ կացութիւնը զիս բոլորովին կը ջլատէ կոր...

– Չեմ կրնար յայտնել, միայն սաչափը ըսեմ, որ եղած ամբաստանութիւնը շատ ծանր է... չա՛տ ծանր:

Եւ այս վերջին բառերը արտասանեց այնպիսի շեշտով մը, որ երիտասարդը կրկին սարսուռաց:

– Ուրեմն կարելի է, որ ծանր դատապարտութի՞ւն մը կրեմ...

– Շատ հաւանական է:

– Ի՞նչ միջոցով կրնամ օձիքս ազատել, խորհուրդ մը, խրատ մը տուէ՛ք, դուք փորձառու էք...

– Ի՞նչ կ'ուզես, որ ըսեմ,– պատասխանեց լրտեսը,– եթէ շատ դրամ և զօրաւոր պաշտպաններ ունիս, թերեւս յաջողիս բան մը ընելու:

Շա՛տ դրամ հայ խմբագրի մը քով... այդ մարդը իր քիթին կը խնդար: Գալով զօրաւոր պաշտպաններու՝ Թօշիկեան կը խորհէր, թէ որո՞ւ կրնար դիմում ընել: Մէկ քանի անուններ կը ներկայանային իր յիշողութեան. ընդհանրապէս հայ մէպուսներու անուններ: Բայց պիտի ուզէի՞ն ի նպաստ իրեն միջամտութիւն մը ընել, մանաւանդ երբ իմանային, որ ծանրակշիռ ամբաստանութեան մը ներքեւ կը գտնուի:

Այս դառն մտածումներով պաշարուած՝ Թօշիկեան երկու լրտեսներուն հետ հասաւ ոստիկանատուն և առաջնորդուեցաւ Քըսմը սիասիի յարկաբաժինը, քօմիսէրին սենեակը:

Հո՞ն իր անունը, մականունը և արհեստը հարցուելէ ետքը քօմիսէրը ոստիկանի մը ըսաւ.

– Էֆէնտին տարէ՛ք:

Վահան, գլխիկոր, հետևեցաւ ոստիկանին:

Այս վերջինը զինքը տարաւ փոքրիկ սենեակ մը և դուռը վրայէն կղպեց:

Մտմտուքը դարձեալ տիրեց հէ՛զ խմբագրին վրայ:

«Գոնէ,– կը մտածէր,– զիս առանձին չբանտարկէին և ուրիշ բանտարկեալներու հետ դնէին, խօսակցելով ժամանակ կ'անցնէի, մինչդեռ հիմա մտատանջութեանս հետ դէմ դէմի մնացած եմ»:

Միակ յոյս մը ունէր, այն էր, թէ զինքը պիտի կանչէին, հարցաքննէին, և վերջապէս պիտի հասկնար իր ձերբակալութեան պատճառը:

Եւ սակայն ժամերը կ'անցնէին, և զինքը հարցնող չի կար:

Խեղճ երիտասարդը անընդհատ սենեակին մէջ կը դառնար գառազեղի մը մէջ բանտարկուած առիւծի մը պէս:

Իրիկուն եղաւ, և տակաւին բան մը չէր դրած բերանը, սակայն բնաւ անօթութիւն չէր զգար: Մէկ քանի անգամ ոստիկանը եկաւ հարցնելու, թէ ուտելիք կ'ուզէ՞ր:

– Ո՛չ,– պատասխանեց:

Բայց ի վերջոյ խորհեցաւ, թէ այս ծոմապահութիւնը կրնար իր կորովը, որուն այնքա՛ն պէտք ունէր, տկարացնել և քիչ մը բան բերել տալով՝ կերաւ:

Գիշեր եղաւ, և դարձեալ հարցնող, փնտռող չի կար:

Յուսահատութիւնը կը տիրէր իր վրայ:

Աթոռի մը վրայ ինկաւ և փորձեց քնանալ:

Երկար ատեն անքուն մնալէ ետքը վերջապէս աչքերը փակեց:

Բայց ահա՛ դուռը բացուեցաւ, և ոստիկան մը ներս մտաւ:

– Քալէ՛,– ըսաւ,– միւտիր էֆէնտին քեզ կ'ուզէ:

Թօշիկեան ոտքի ելաւ և ժամացոյցը նայեցաւ: Կէսգիշերին քսան վայրկեան կար:

– Այս ատեն ի՞նչ պիտի ընէ զիս,– հարցուց կասկածոտ շեշտով մը:

– Չեմ գիտեր, քալէ՛:

Վայրկեան մը ետքը կը մտնէին Քըսմը սիասիի տնօրէն Րէշատ պէյի սենեակը:

Տնօրէնը բազմած էր իր գրասեղանին առջև և առջևը դրուած թուղթերու դէզ մը աչքէ կ'անցընէր:

Խմբագիրը յարգանքով բարևեց և ոտքի վրայ կեցաւ:

– Չեր անունը ի՞նչ է,– հարցուց Րէշատ պէյ:

– Վահան Թօշիկեան:

– Արհեստիդ ի՞նչ է:

– Խմբագիր եմ:

– Ո՞ր թերթին կ'աշխատակցիք:

– «Վերջին լուր»ի:

– Ամուսնացա՞ծ եք:

– Այո՛:

– Զաւակ ունի՞ք:

– Ո՛չ:

– Ո՞ւր կը բնակիք:

– Բանկալթի:
 – Դուք Եւրոպա բնակող անձերու հետ յարաբերութիւն ունի՞ք եղեր:
 – Ի՞նչ տեսակ անձեր:
 – Պետութեան դէմ դաւաճանող վնասակար անձերու հետ յարաբերութիւն ունի՞ք եղեր:
 – Բնա՛ւ երբեք... այդ բանը չեմ ընդունիր:
 – Քիչ մը ետքը պիտի ապացուցանեմ:
 – Անկարելի է, պէ՛յ էֆէնտի, ես երբեք այդ տեսակ անձեր չեմ ճանչցած ու հետերնին յարաբերութիւն ունեցած:
 – Դուք Եւրոպա պտըտած և զանազան քաղաքներու մէջ բնակա՞ծ էք,– շարունակեց Րէշատ:
 – Եթէ ես Վահան Թօշիկեանն եմ, բնա՛ւ Եւրոպա ոտք գրած չեմ:
 – Պիտի ապացուցանենք Եւրոպա երթալը:
 – Գոյութիւն չունեցող իրողութիւն մը ինչպէ՞ս կրնաք ապացուցանել:
 – Քիչ ետքը կը տեսնուինք: Ուրեմն կը պնդէք, թէ ոտքերնիդ Պոլսէն դուրս դրած չէ՞ք:
 – Ես այդպիսի բան մը չըսի, միայն ըսի, թէ Եւրոպա չեմ գացած:
 – Ո՛ւր գացած էք ուրեմն:
 – Իզմիր գտնուած եմ բաւական ատեն:
 – Ի՞նչ գործով կը զբաղէիք հոն:
 – Խմբագրութեամբ, «Արշալոյս» թերթը կը հրատարակէի:
 – Որչա՞փ ատենէ ի վեր «Վերջին լուր»ին կ'աշխատակցիք:
 – Իր հրատարակուիլ սկսելէն ի վեր... այսինքն քանի մը ամիսէ ի վեր:
 – Ե՞րբ գացած էք Եւրոպա:
 – Բայց, պէ՛յ էֆէնտի, ձեզի արդէն ըսի, որ ես երբեք Եւրոպա չեմ գացած:
 – Անօգուտ է ուրանալը, լաւագոյն է, որ ամէն բան տեղն ի տեղօք խոստովանիք:
 – Ճշմարտութիւնը կը խօսիմ:
 – Մենք ամէն բան գիտենք, մեզի մոլորեցնելու մի՛ աշխատիք... ապացոյցներ ունինք:

– Չեմ գիտեր, թէ ի՞նչ արժէք ունին ձեր ապացոյցներ, բայց ես կը պնդեմ և կրնամ հաստատել, թէ Եւրոպա չեմ գացած:
 – Եւրոպա գտնուող ո՞ր անձերուն հետ կը թղթակցիք:
 – Ոչ ոքի հետ:
 – Բնաւ թղթակցութեան մէջ չէ՞ք ծանօթ անձնաւորութեան մը հետ:
 – Չէ՛,– պատասխանեց Թօշիկեան հաստատ շեշտով մը:
 – Մեր կառավարութեան դէմ դաւաճանող անձի մը հետ,– պնդեց Քրսմը սիասիի տնօրէնը:
 – Պատուոյ վրայ կ'երդնում, որ չէ:
 – Եթէ հիմա հակառակը ապացուցանե՞մ:
 – Անկարելի է:
 Րէշատ պէյ գրասեղանին գզրոցը քաշեց և փոքրիկ թուղթ մը Հանեց անկէ:
 Այցաքարտ մըն էր:
 – Այս այցաքարտը որո՞ւնն է,– Հարցուց՝ զայն Թօշիկեանի ցոյց տալով:
 Այս վերջինը մօտեցաւ և այցաքարտին վրայ Ֆրանսերէն գրուած կարդաց իր անունը. «Վահան Թօշիկեան, խմբագիր «Վերջին լուր» օրաթերթի»:
 – Այս այցաքարտը ձե՞րն է,– Հարցուց Րէշատ պէյ:
 – Իմն է,– պատասխանեց խմբագիրը:
 – Կը խոստովանի՞ք, որ բո՛ւն ձեր այցաքարտն է...
 – Այո՛, կը խոստովանիմ,– պատասխանեց Թօշիկեան, որ կը խորհէր, թէ այդ այցաքարտին սեփականութիւնը ընդունելով ուէ կերպով չէր կրնար վտանգել իր անձը:
 – Լաւ ուրեմն, հիմա այցաքարտին միւս կողմը կարդացէք:
 Եւ Րէշատ պէյ թուղթը դարձուց:
 Թօշիկեան ակնոցը շտկեց, քիչ մըն ալ մօտեցաւ և կարդաց հետեւեալը.
 «A son Excellence Cherif Pacha Paris
 L'homme est venu. Nous avons couse avec lui. L'affaire est en bonne voie»:
 (Առ Նորին վսեմութիւն Շէրիֆ փաշա Բարիզ:
 Մարդը եկաւ: Իրեն հետ խօսեցանք: Գործը լաւ ճամբու մէջ է:)

Նոյն ընդհանուր եթէ կայծակը իյնար Թօշիկեանի գլխին այն-
քան պիտի չսարսափէր, որչափ այս տողերը կարդացած վայր-
կեանին:

Յանկարծ գունատեցաւ և ամբողջ մարմնով սկսաւ դողալ:

Անշուշտ, ինք չէր գրած այդ բառերը, բայց իրեն կը վերագ-
րէին և ինք ինչպէ՞ս հակառակը պիտի ապացուցանէր, մանա-
ւանդ պիտի բարեհաճէի՞ն իր արդարացումները լսել: Յայտնի
էր, որ ոստիկանութիւնը իր համոզումը գոյացուցած էր արդէն,
քանի որ այնքա՛ն խիստ խուզարկութիւններէ ետքը ձերբակա-
լած էր զինքը և արտաքին յարաբերութենէ բոլորովին զրկած:

Գերագոյն ճիգ մը ըրաւ իր պաղարիւնութիւնը պահելու հա-
մար:

«Եթէ այլայլութիւնս նշմարէ,— խորհեցաւ,— իմ յանցաւո-
րութեանս իբր նոր փաստ մը պիտի նկատէ»:

Եւ սակայն Րէշատ պէյ նշմարած էր երիտասարդին շփոթու-
թիւնը:

— Ի՞նչ պիտի ըսէք ասոր,— հարցուց, երբ Թօշիկեան ընթեր-
ցումը աւարտեց:

— Այցաքարտը իմս է, բայց այս գիրը իմս չէ,— պատասխա-
նեց խմբագիրը:

— Միակ դիւրին պատասխանն է, և ասոր կը սպասէի, բայց
մի՛ կարծէք, որ միամտօրէն կը հաւատամ ձեր ըսածին. քանի որ
այցաքարտը ձերն է, դուք այդ տողերը գրած էք:

— Կ'երդնում, որ ես չեմ գրած:

— Ուրիշ մը ի՞նչ պէտք ունէր ձեր քարտին վրայ գրելու:

— Չեմ գիտեր, բայց ես չեմ գրած այդ տողերը...

— Ձեր շահը կը պահանջէ, որ ամէն բան խոստովանիք, հա-
կառակ պարագային ձեր վիճակը շատ ծանր է, ձեր գլուխը
վտանգի մէջ է: Որչա՞փ ժամանակէ ի վեր յարաբերութեան մէջ
էք Շէրիֆ փաշայի հետ:

— Բայց երբեք յարաբերութիւն չեմ ունեցած իրեն հետ:

— Ձեր պաշտպանութեան համար շատ գէշ միջոց մը կ'ընտ-
րէք կոր, ձեր փրկութիւնը միմիայն անկեղծ խոստովանութեան
մէջ է... ամէն բան ըսէք ճիշդ ու ճիշդ, և կը խոստանամ անմի-
ջապէս ձեզ ազատ թողուլ և նոյնիսկ բացառիկ շնորհներ ալ ը-

նել, միայն թէ պէտք է, որ ձեր մեղսակիցներուն անունները մի
առ մի ըսէք:

— Մեղսակից չունիմ, պէ՛յ էֆէնտի, ասիկա կեղծ գրութիւն
մըն է զիս կորստեան մատնելու համար:

— Մենք գիտենք, թէ դուք պարզ գործիք մըն էք, և ասոր
համար ձեզի հետ ներողամտութեամբ պիտի վարուինք, միայն
թէ պետք է, որ բուն յանցաւորներուն անունը տաք մեզի:

— Կ'երդնում, որ բան մը չեմ գիտեր, բանէ մը տեղեկութիւն
չունիմ, բոլորովին անմեղ եմ. ես կեանքիս մէջ բնաւ քաղաքա-
կանութեամբ չեմ զբաղած, որևէ կուսակցութեան չեմ պատկա-
նած. հարցուցէք, քննեցէք և դուք ալ պիտի համոզուիք:

— Եթէ ինքնապաշտպանութեան այս ձևը շարունակէք, ձեզի
հետ ուրիշ կերպ վարուելու պիտի ստիպուինք. գիտէք, որ մենք
մարդը խօսեցնելու միջոցները ունինք:

Այս թաքուն սպառնալիքը սարսուռ մը տուաւ թշուառ երի-
տասարդին, բայց իր ամբողջ կորովը ժողովելով՝ պատասխանեց.

— Ինչ որ ալ ընէք, այս ըսածներէս տարբեր յայտարարու-
թիւն չեմ կրնար ընել, որովհետև այս է ճշմարտութիւնը:

— Կը յամառի՞ք ուրեմն:

— Ճշմարտութիւնը կը խօսիմ, պէ՛յ էֆէնտի:

Րէշատ պէյ բարկութեամբ զանգակը հնչեցուց և ոստիկան
մը ներս մտաւ:

— Այս մարդը իր տեղը տա՛ր և ըսէ՛, որ լաւ հակողութիւն ը-
նեն,— գոչեց:

Թօշիկեան վերադարձաւ իր խցիկը բոլորովին բարոյա-
լքուած:

ԳԼՈՒԽ ԻԳ

ՄՈՒԹԻՆ ՄԷՋ ՆՇՈՅԼ ՄԸ

Պապը Ալիի պողոտային մօտ, Մէսէրէթ օթելի դէմը, «Նշան
Պապիկեան» գրատան մէջ հաւաքուած էին խումբ մը անձեր:

Անոնց մէջ կը տեսնուէին նախ խանութիւն երկու տէրերը՝
պարոն Արշակ և պարոն Պետրոս:

Աւաջինը գիրուկ, կարմիր երեսներով գեղեցիկ երիտասարդ մը, որուն նմաններուն ընդհանրապէս մեր կիները «պէյ կ'ըլմանի» կ'ըսեն:

Երկրորդը ակնոցաւոր, կարճահասակ, նիհար երիտասարդ մը, հետաքրքիր աչքերով ու քիթով մը, որ ենթադրել կուտայ, թէ Բաքոսի թշնամիներէն էր:

Հոն էր նաև Օննիկ էֆէնտի Չիֆթէ-Սարաֆ, սրածայր մօրուքով հուժկու երիտասարդ մը, որ իր գլուխը բարձր կը կրէր սրբութիւն սրբոցի մը պէս:

Գրիգոր Թորոսեան իր շիլ նայուածքովը կեցած էր գիրքերու տակ ծածկուած սեղանի մը առջև:

Քիչ մը անդին՝ Հայկազուն էֆէնտի Պէկեան, ակնոցը քիթին, աչքէ կ'անցընէր փիլիսոփայութեան հատորներ՝ անոնց մէջ ընտրութիւն մը ընելու համար և միևնոյն ատեն կը հետեւէր ընդհանուր խօսակցութեան:

Խօսակցութիւնը, բնականաբար, կը դառնար օրուան քաղաքական կացութեան շուրջ:

Պատերազմի լուրերուն վրայ կը խօսէին:

Այդ միջոցին Թուրքիա արդէն մասնակցած էր ընդհանուր պատերազմին և իր յարաբերութիւնները խզած Համաձայնական պետութիւններու հետ, այնպէս որ պատերազմի լուրերը միմիայն գերմանական աղբիւրէ էին: Այս միակողմանի տեղեկութիւնները հակակշռելու համար ամէն մարդ իր կողմէ լուրեր կը հնարէր և հրապարակ կը նետէր:

Այդ սուտ լուրերն էին, որ «Նշան Պապիկեան» գրատան մէջ վիճաբանութեան առարկայ կը դառնային:

– Ֆրանսացիները մեծ յաղթութիւն մը տարած են,– կը Հաւաստէր Չիֆթէ-Սարաֆ,– Գերմանիոյ գահաժառանգը մահացու կերպով վիրաւորուեց և էքս լա Շափէլ փոխադրուեց է:

– Ուրկէ՞ իմացար,– հետաքրքրուեցաւ Արշակ:

– Երէկ իրիկուն Գատրգիւղի շոգենաւին մէջ, յոյն բարեկամ մը ունիմ, ան ըսաւ:

– Միւսիւ Անտոնաքի՞ն:

– Այո՛:

– Անոր լուրերը միշտ ճիշդ կ'ըլլան,– Հաստատեց Պետրոս՝

վայրկեան մը դադրեցնելով քիթին տակէն երգած իր մէկ միօրինակ եղանակը:

– Ես ալ ատանկ բան մը իմացայ,– ըսաւ Գրիգոր Թորոսեան,– միայն թէ գահաժառանգը վիրաւորուած չէ, այլ գերի բռնուած և Բարիկ փոխադրուած:

Նոյն միջոցին խանութէն ներս մտաւ Արթին Գևոնեան իր այսահարի դէմքով:

– Տղա՛ք,– գոչեց,– իմացա՛ք վերջին լուրը:

– Ի՞նչ է եղեր,– Հարցուց Արշակ միշտ հետաքրքիր:

– Կեցի՛ր, սպասէ՛, մի՛ ըսեր,– միջամտեց Թորոսեան և իսկոյն գրպանէն շիշի խցան մը հանեց ու սեղանին վրայ դրաւ, յետոյ աւելցուց.

– Հիմա կրնաս խօսիլ:

Ասիկա կը նշանակէր, թէ ըսուելիք խօսքերը «մանթար» էին:

– Խենթ մ'ըլլար,– գոչեց Արթին բորբոքած,– իմ լուրերս, գիտես, որ աղէկ աղբիւրէ են:

– Այո՛, այո՛, անոր լուրերը գերմանական ղեսպանատունէն են,– Հաստատեց Արշակ,– խօսէ՛, տեսնե՞ք, ի՞նչ է եղեր:

– Մտեր են,– գոչեց Արթին:

Այս «մտեր են»ը այնպիսի շեշտով մը արտասանեց, որ Հայկազուն Պէկեանը ընդհատեց իր ընթերցումը և Հարցուց.

– Ո՞վ մտեր է, ո՞ւր մտեր են:

– Անգլիացիները Տարտանէլէն ներս մտեր են,– Հաստատեց Արթին,– ղեսպանատունը երէկ գիշեր տակն ու վրայ եղած էր, սնտուկները կը պատրաստեն կոր փախչելու համար:

– Ո՞ւր պիտի փախչին:

– Դէպի Գոնիա, կառավարութիւնն ալ կ'երթայ կոր:

– Իրա՞ւ կ'ըսես:

– Գերմանական ղեսպանատան դռնապանը ըսաւ:

– Ես չեմ հաւատար,– պատասխանեց Արշակ, որ իրեն մասնագիտութիւն ըրած է չհաւատալու լաւատես լուրերուն:

– Նոր ձերբակալութիւններ կա՞ն, ան նայինք,– ըսաւ Թորոսեան:

– Ի՞նչ ձերբակալութիւն:

– Ես ի՞նչ գիտնամ, կամաց-կամաց կարգը մեզի պիտի գայ:

– Դու ես վախ չունիս, ո՛չ Հնչակեան ես, ո՛չ ալ դաշնակցական:

– Անանկ բաներու նայած չունին:

Եւ ահա ներս մտաւ Պետիկը՝ «Թէրճիման»ի հայ խմբագիրը:

– Վահան Թօշիկեանը բռներ, տարեր են,– գոչեց առանց ուկէ նախաբանի:

– Իրա՞ն կ'ըսես,– ըսաւ Թորոսեան:

– Այո՛, այս առտու կանուխ երկու ոստիկաններով հոս՝ «Վերջին լուր»ին խմբագրատունը բերեր են և հոն խուզարկութիւն կատարեր են...

– Սխալ չըլլա՞յ:

– Հիմա Հրաչեայ Տէր-Ներսէսեանը տեսայ, ան ըսաւ, սխալ չէ, ոստիկանատուն կ'երթար կոր խնդիրը հասկնալու և պէտք եղածը ընելու համար:

– Զարմանալի՛ բան, Վահան Թօշիկեանէն ի՞նչ կ'ուզեն:

– Կարծեմ զրպարտութեան մը զոհ գացած է խեղճը,– ըսաւ Պետիկ,– նոյնիսկ կը կասկածիմ, թէ ո՞վ է այդ զրպարտութիւնը ընողը:

– Ո՞վ է, տեսնե՞ք,– հարցուց Թորոսեան:

– Չեմ ուզեր անունը տալ,– պատասխանեց Պետիկ խորհրդաւորաբար ձեռով մը,– սակայն վստահ եմ, որ ան է:

– Գոնէ՛ յայտնի՞ է, թէ ի՞նչ զրպարտութեամբ զինքը բանտարկած են:

– Ո՛չ,– պատասխանեց Պետիկ,– դեռ որոշ տեղեկութիւն մը չկայ, տեսնե՞ք Հրաչեան պիտի կրնա՞յ հասկնալ, բայց կատարուած գործողութիւններէն այնպէս կ'երևայ, որ ծանր ամբաստանութիւն մը կայ վրան, թէ՛ տունը խուզարկեր են և թէ՛ խմբագրատունը. ես իրեն ըսի, որ այդ մարդէն զգուշանայ:

– Բայց ո՞վ է ակնարկած մարդդ:

– Պատրիարքարանի պաշտօնեայ մըն է,– պատասխանեց Պետիկ:

Այս խօսքերը ընդհանուր հետաքրքրութիւն առաջ բերին:

– Թիւ 17 խաֆիէն չըլլա՞յ,– ըսաւ Օննիկ Զիֆթէ-Սարաֆ խնդալով:

– Պատրիարքարանի պաշտօնեայ,– գոչեց իր կարգին Հայկազուն Պէկեան,– սարսափելի բան է. ի՞նչ պաշտօնեայ է:

– Այսինքն Պատրիարքարանի քարտուղարներէն մէկն է,– պատասխանեց Պետիկ,– այդ մարդը վերջերս խնդիր ունեցած էր Թօշիկեանի հետ... Հիմա կ'երևայ, որ այս ձեռով վրէժը լուծեր է: Անցածները զինքը տեսայ փողոցը, Թօշիկեանի մասին շատ գանգատ յայտնեց... Իբր թէ գործ մը կայ եղեր, որ իրեն պիտի տրուի, և Թօշիկեանը այդ գործը ձեռքէն յափշտակեր է: «Անոր գլուխը փորձանք մը պիտի բերեմ»,– ըսաւ: Ես Թօշիկեանին հաղորդեցի այս սպառնալիքը, կարևորութիւն չի տուաւ:

– Ես հասկցայ, թէ որո՞ւ կ'ակնարկես,– ըսաւ Թորոսեան,– այդ մարդը ամէն բան ընելու կարող է... արդէն իրեն համար նոյնիսկ ըսուեցաւ, թէ լրտեսութիւն կ'ընէ:

– Ես ալ այնպէս լսած եմ,– հաստատեց Պետիկ:

– Կասկած կայ, թէ թիւ 17 խաֆիէն ալ ինքն է,– շարունակեց Թորոսեան:

– Կարծեմ իր մասին քննութիւն մը կատարուեցաւ:

– Այո՛, բայց կարելի չեղաւ փաստացի ապացոյցներ գտնել:

– Բայց այդպիսի մարդ մը ինչպէ՞ս տակաւին պաշտօնի վրայ կը թողուն,– գոչեց Հայկազուն Պէկեան:

– Պաշտպաններ ունի,– բացատրեց Թորոսեան,– նոյնիսկ Վարչութեան մէջ անդամներ կան, որոնք զինքը կը պաշտպանեն... Թէ և ամէնքն ալ գիտեն, որ վստահելի մէկը չէ:

– Թերևս կը վախնան իրմէ և ասոր համար զինքը պաշտօնի վրայ կը պահեն,– ըսաւ Օննիկ:

Արթին Գևորգեան, որ խանութիւն դրան առջև կեցած էր, յանկարծ գոչեց.

– Աբիկ Մուպահհեանը կ'անցնի կոր, անոր քով նոր լուրեր ըլլալու է:

Թորոսեան իսկոյն փողոց ելաւ ու՝

– Աբիկ էֆէնտի,– պոռայ:

Մուպահհեան գլուխը դարձուց և բարևեց:

– Եկո՛ւր, եկո՛ւր,– գոչեց Թորոսեան:

– Եղբա՛յր, գործ ունիմ,– պատասխանեց Աբիկ:

– Վայրկեան մը միայն, կարևոր լուրեր ունինք:

Այս վերջին բառերը բաւ եղան, որպէսզի Աբիկ շեղում մը ընէ դէպի «Պապիկեան» գրատունը:

– Իմացա՞ր Վահան Թօշիկեանի ձերբակալութիւնը,– Հարցուց Թորոսեան:

– Իմացայ,– պատասխանեց Աբիկ ձայնը ցածցնելով,– երէկ իրիկուն խեղճին Հետ միասին անցանք Ղալաթիա, շատ տխուր և շատ մտածկոտ էր, կարծես գլխուն գալիք փորձանքը կը նախազգար կոր:

– Զինքը ազատելու համար դիմում մը չէ՞ք ընել:

– Ո՞վ պիտի ընէ:

– Զարմանալի բան, ուղղակի Պատրիարքարանը: Թող Գամէր Շիրինեանը երթայ աշխատի, իր գործն է:

– Բնականաբար, բայց նախ խնդիրը հասկնանք, թէ ի՞նչ պատճառաւ ձերբակալուել է:

– Յայտնի է, որ սուտ զրպարտութիւն մը ըրած են իրեն դէմ:

– Ես ալ այնպէս կը կասկածիմ,– պատասխանեց Աբիկ:

– Նոյնիսկ Պետիկը գիտէ կոր, թէ ո՞վ է այդ զրպարտութիւնը ընողը:

– Իրա՞ն կ'ըսես:

– Նա՛, իրեն հարցուր,– պատասխանեց Թորոսեան,– անանկ չէ՞, Պետիկ:

– Այսինքն ես անկէ կը կասկածիմ, բայց բոլորովին վստահ չեմ:

– Ո՞վ է, տեսնեք, այդ զրպարտութիւնը ընողը:

– Ես չեմ ուզեր անունը տալ,– պատասխանեց Պետիկ:

– Բայց ես հասկցայ, թէ ո՞վ է ու ես ալ կը հաւատամ, որ ան ըրած է այս վատութիւնը:

– Բայց ո՞վ է, տեսնեք:

Թորոսեան ծռեցաւ Աբիկի ականջին և անուն մը փսփսաց:

Աբիկ ձեռքը մօրուքին տարաւ և ըսաւ.

– Որոշ ապացոյցներ ունի՞ք:

– Չէ՛, բայց կ'երևայ, որ իրեն և Թօշիկեանի միջև վերջերս թշնամութիւն մը կայ եղեր:

– Այո՛, այդ խնդիրը գիտեմ,– պատասխանեց Աբիկ:– Բայց վերջապէս ատոր վրայ յիշով կարելի չէ զինքը ամբաստանել, եթէ աւելի զօրաւոր փաստեր չի կան մէջտեղ:

– Բայց ամէնքս ալ գիտենք, որ այդ մարդը կասկածելի է:

– Վերջին անգամ, երբ թիւ 17 խաֆիէին առթիւ քննութիւն

կատարուեցաւ, իրեն մասին ալ կասկածներ յայտնուեցան և Հարցուփորձեր եղան, բայց կարելի չեղաւ բան մը հաստատել,– պատասխանեց Աբիկ:

– Այդ քննութիւնները վրաս գրէ,– գոչեց Թորոսեան,– այդ քննութիւնները եղան ո՛չ թէ խնդիրը լուսաբանելու համար, այլ պարզապէս մարելու համար:

– Ո՞րն է, տեսնեք, սա կարևոր լուրը, որուն համար զիս մինչև հոս բերիք:

– Բայց կարևոր լուրը ըսինք, Թօշիկեանի ձերբակալութիւնն է:

– Ատիկա ես ձենէ առաջ իմացայ, և Հիմակ ալ Պատրիարքարան կ'երթամ կոր, որպէսզի, եթէ կարելի է, բան մը ընենք խեղճ տղան ազատելու համար:

Այս ըսելով Աբիկ Մուպահեաճեան հեռացաւ և ուղղուեցաւ դէպի «Ժամանակ»ի խմբագրատունը:

Գրատան մէջ հաւաքուած միւս անձերն ալ մէկկի-մէկկի ցրուեցան:

Արշակ և Պետրոս խանութին անկիւնը քաշուեցան՝ իրենց ուստայնը լարած ճանճի սպասող մամուկներու պէս:

Եւ սակայն փոխանակ պարարտ յաճախորդի մը՝ Արամ Անտոնեան ներս մտաւ:

– Ի՞նչ է այս,– գոչեց,– ձեզի տակաւին չե՞ն ձերբակալեր:

– Խենթ խօսքեր մի՛ ընել,– ըսաւ Արշակ,– կատակի ատեն չէ:

– Կատակ չեմ ընել, ամէնքս ալ պիտի ձերբակալուինք, որոշուած է,– պատասխանեց Անտոնեան:– Ցանկը պատրաստուել է:

– Ի՞նչ ցանկ:

– Լուր չունի՞ք, վեց հազար հոգինոց ցանկ մը պատրաստուած է, որուն մէջ ամէնքս ալ կանք, քիչ օրէն պիտի քշուինք, պատրաստուեցէք:

– Այդ ցանկին խօսքը մենք ալ լսեցինք,– ըսաւ Պետրոս,– բայց պարապ խօսք ըլլալու է, ասկէ զատ ո՛չ թէ 6000, այլ 600 անուն կայ եղեր:

– Ես աղէկ տեղէ իմացայ,– շարունակեց Անտոնեան,– քիչ

մը առաջ ալ Զօհրապը տեսայ, շա՛տ յուսահատ էր: «Այս մարդիկը ամէն ծայրայեղութեան պիտի դիմեն», ըսաւ: Կ'երեւայ, որ մեզի դէմ սարսափելի կերպով գրգռուած են:

– Բայց մենք ի՞նչ ըրած ունինք իրենց:

– Կ'երեւայ, որ Վանի մէջ դէպքեր պատահեր են, Հայերը ապստամբեր են ու թուրքերուն դիմադրեր:

– Ի՞նչ պատճառով:

– Զինուորութեան խնդրի Համար, զինուորական տարիք ունեցողները լեռները քաշուեր ու իրենց վրայ ղրկուած ոստիկաններուն դիմադրեր են, Զօհրապը ըսաւ, թէ այս մասին ընդարձակ տեղեկագիրներ եկեր են, և թէ Թալէաթը շատ կատղած է եղեր: «Մենք ձեռնէ բոլորովին տարբեր ընթացք կը սպասէինք», ըսեր է, վերջապէս կացութիւնը շատ ծանր է: Զօհրապը նոյնիսկ վախ ունի, թէ ընդհանուր ջարդ մը պիտի ըլլայ:

– Իրեն Համար գոնէ վախ չի կայ,– դիտել տուաւ Արշակ:

– Ընդհակառակը, ինք վախ ունի, թէ իրեն գլուխն ալ փորձանք մը պիտի բերեն:

– Թող Հոս չի մնայ, դրամ ունի, կրնայ ուզած տեղը երթալ:

– Դժբախտաբար քու կարծածիդ պէս չէ, այս միջոցիս դրամական նեղութիւն ալ ունի, պատերազմը ամէն գործերուն ալ վնաս տուաւ. ինք ըսաւ, որ եթէ դրամ ունենայի՝ վայրկեան մը չէի մնար Պոլիս:

Նոյն միջոցին տարտամ քայլերով գլխարկաւոր երիտասարդ մը ներս մտաւ, որուն անորոշ նայուածքը տեսակ մը մտածկոտ ապշութիւն կ'արտայայտէր:

Այս երիտասարդը տաղանդաւոր բանաստեղծ Եղուարդ Գօլանճեանն էր:

– Վահան Թօշիկեանն ալ ձերբակալեր են,– ըսաւ դանդաղ խօսուածքով մը:

– Նոր բարի լոյս,– գոչեց Արշակ,– այդ լուրը դեռ նո՞ր իմացար դուն:

– Այս առտու ձերբակալուեր է:

– Գիտենք, գիտենք, եթէ ուրիշ բան մը ունիս՝ ան ըսէ:

– Չէ՛, ուրիշ բան չունիմ,– պատասխանեց Գօլանճեան միամիտ դէմքով մը,– բայց ինչո՞ւ Թօշիկեանը կը ձերբակալեն կոր,

արդեօք անունի՞ն Համար. զինքը Վահան Մամիկոնեանը կարծեցին, թէ՞ Վահան անունէն վախցան, այն ատեն թող Պալըք Բազարիէն վահանաձուկերը ժողվեն ու տանին բանտարկեն:

Գօլանճեան կը սպասէր, որ իր այս սրամտութիւնները Հիացողական զնահատութիւններու պիտի արժանանային, բայց ընդհակառակը, կատարեալ անտարբերութեամբ ընդունուեցան:

– Գօլանճեան՝, այսօր–վաղը քեզի ալ պիտի բռնեն տունէն,– ըսաւ Արշակ,– շատ մի երևար Հրապարակին վրայ:

– Թող ուրիշները մտածեն, ինծի ինչո՞ւ պիտի տանին,– պատասխանեց երիտասարդ բանաստեղծը,– ես սիկլորթածի եմ, յեղափոխական չեմ, քաղաքականութեամբ չեմ զբաղիր:

– Գրագէտ չե՞ս, ատիկա բաւական է կասկածելի ըլլալու Համար:

– Ես միայն բանաստեղծութիւն կը գրեմ,– պատասխանեց Գօլանճեան:

– Մի՛ վախնար, քեզի դպչող չըլլար,– միջամտեց Անտոնեան,– քեզի բռնեն նէ՛ ալ բանտ չեն տանիր:

– Հապա ո՛ւր կը տանին,– Հարցուց Պետրոս, որ Անտոնեանի միտքը Հասկցած էր, բայց կ'ուզէր, որ բաց խօսեցնել տալ:

– Անոր տեղը ուրիշ է,– պատասխանեց Անտոնեան,– ամէն մարդ կը ճանչնայ Գօլանճեանը և գիտէ, թէ անպատասխանատու խառնուածք մը ունի:

– Անպատասխանատու... այս բացատրութիւնը կ'ընդունի՞ս,– Հարցուց Արշակ՝ բանաստեղծին դառնալով:

– Կ'ընդունիմ,– ըսաւ այս վերջինը,– նախատական բան մը չեմ տեսնար ասոր մէջ, Աստուած ալ անպատասխանատու է:

Այս փիլիսոփայական խորհրդածութիւնը ընելով՝ Գօլանճեան նայեցաւ իր խօսակիցներուն երեսը տեսնելու Համար, թէ Հիացողական արտայայտութիւն մը կ'երեւա՞ր անոնց դէմքերուն վրայ:

Բայց այս անգամ ալ յուսախար եղաւ:

– Պատերազմէն ի՞նչ լուր ունիս,– Հարցուց Անտոնեան:

– Գերմանացիները Բարիզի մտտեցեր են...

– Ատ ուրկէ՞ Հանեցիր:

– Գերմանացի մը ըսեր է Լաֆօնթէնին,– պատասխանեց Գօլանճեան,– Հիմակ ալ տեսայ, որ գերմանական դրօշակ պարզած էին Եիւքսէկ Քալտըրըմ...

– Ատկէ՞ց կը հետեցնես, թէ Բարիզի մօտեցած են:

– Գերմանական դրօշակ պարզուած ըլլալը ապացոյց մըն է, որ նոր յաղթանակ մը շահած են:

– Մօ ապ’ը, այսօր Գերմանիոյ կայսրուհին ծննդեան տարեդարձն է, անոր համար ամէն տեղ գերմանական դրօշակ պարզած են,– գոչեց Արշակ,– դուն լրագի՞ր ալ չես կարդար, այսօր բոլոր թերթերը գրած էին:

– Ես թերթ չկարդացի տակաւին,– խոստովանեցաւ բանաստեղծը,– ուրեմն ենթադրութիւնս սխալ է:

– Արդէն ե՞րբ շիտակ խօսք մը ըսած ունիս:

– Եղբա՛յր, թերթ չկարդալը յանցա՞նք է,– ըսաւ Գօլանճեան ինքզինք չքմեղացնելու համար:

– Անշուշտ յանցանք է, մանաւանդ քեզի պէս մէկու մը համար, որ ինքզինքին գրագէտի հովեր կուտայ:

– Ես գրագէտ ըլլալէ առաջ սիկուրթաճի եմ,– յայտարարեց Գօլանճեան տեսակ մը հպարտութեամբ:– Գրականութիւնը փոր չկշտացնէր, փարա վաստկելուն միջոցը գտնելու է:

Յետոյ երիտասարդ բանաստեղծը մեծամարդութեամբ աւելցուց.

– Այսօր տակաւին գործ մը չկրցանք ընել, երթամ քանի մը գանձումներու պտրտիմ, օրականս հանեմ:

– Գնա՛, գնա՛,– քաջալերեց Արշակ:

Գօլանճեան մեկնումի տարտամ շարժում մը ըրաւ, յետոյ ժամացոյցը նայեցաւ, քիթին տակէն «դեռ կանուխ է եղեր» փսփսաց:

– Կանուխ չէ, ուշ անգամ մնացեր ես,– դիտել տուաւ Արշակ:

Գօլանճեան խանութին դրան առջև պահ մը կեցաւ, կրկին ժամացոյցը նայեցաւ և վերջապէս դանդաղօրէն հեռացաւ «մնաք բարով» մը մոմալով, որ սակայն առանց արձագանգի մնաց:

– Ուրեմն այսպէս, Զօհրապն ալ ինքզինք ապահովութեան մէջ չզգար կոր,– ըսաւ Պետրոս՝ Արամ Անտոնեանի դառնալով:

– Երէկ իրիկուն «Ազատամարտ»ի խմբագրատունը հանդիպեցայ, անոնք ալ իրարանցումի մէջ էին, Զարդարեան մանաւանդ շատ վրդոված էր այդ ցանկին պատճառաւ:

– Բայց ո՞վ կրնայ պատրաստած ըլլալ այդ ցանկը կամ ցանկերը, թուրքե՞րը:

– Թուրքերը իրենք իրենցմէ բան մը չեն կրնար ընել,– պատասխանեց Արամ Անտոնեան,– բայց հայեր կան, որոնք «անձնուկրաբար» կ’օգնեն իրենց. հայ լրտեսները այս միջոցիս նորէն գործի վրայ են, ասպարէզը դարձեալ իրենց մնացած է:

Եւ Արամ Անտոնեան քանի մը անուններ տուաւ, որոնց համար հաւաստեց, թէ բաժին ունէին ցանկի պատրաստութեան մէջ:

– Զգելու-հեռանալու է Պոլիսէն,– ըսաւ Պետրոս մտածկոտ և տխուր:

– Ինչպէ՞ս կարելի է հեռանալ Պոլսէն, երբ ճամբաները գոցուած են,– դիտել տուաւ Արշակ,– պատերազմի առաջին օրերուն, երբ թուրքերը տակաւին չէին մասնակցած, կարելի էր, բայց հիմա ճար չի կայ, ծուղակին մէջ բռնուած ենք:

– Պարապ խօսք,– գոչեց Արամ Անտոնեան,– փախչելու միջոց կայ, դուն դրամէն լուր տուր... նոյնիսկ մարդ փախցնելու համար գործակալութիւններ հաստատուած են:

– Այսչափ խիստ հսկողութեան մէջ ինչպէ՞ս կ’ընեն կոր...

– Հազար տեսակ միջոցներ ունին, բայց ամենէն պարզը պուլկարական անցագիրն է... այդպիսի անցագիր մը ձեռք ձգեցի՞ր մի՞ հանգիստ կերպով կրնաս Պուլկարիա անցնիլ:

– Այո՛, բայց անցագիրը ինչպէս կարելի է ձեռք ձգել, ո՞վ խենթեցեր է, որ այս միջոցիս իր անցագիրը հանէ, քեզի տայ:

– Դրամի համար ամէն բան կ’ընեն: Ասկէ զատ անցագիրին տէրը բան մը չկորսնցնէր, քանի որ անգամ մը որ Պուլկարիա հասնիս՝ անցագիրը կրնաս իրեն վերադարձնել: Ես գիտեմ, որ մէկ պուլկարական անցագիրով չորս հոգի հետզհետէ փախան:

– Եւ ոստիկանութիւնը չի կրցա՞ւ հասկնալ:

– Անցագիրը քննող ոստիկանին ձեռքը քանի մը մէծիտիէ դրի՞ր մի՞ ալ բարակը չի նայիր,– պատասխանեց Արամ Անտոնեան:– Ասկէ զատ գործակալութիւնները համաձայնած են ոս-

տիկանութեան հետ, այնպէս որ եթէ փախուստդ անոնց միջոցաւ կատարուի, ապահով կերպով կրնաս ուզած տեղդ երթալ... այդ գործակալութիւնները սարսափելի դրամ կը շահին կոր այս միջոցիս, որովհետեւ բոլոր հարուստ յոյն և թուրք երիտասարդները զինուորական ծառայութենէ ազատելու համար արտասահման կ'երթան կոր:

— Այդ գործակալութիւններուն մէջ հայեր ալ կա՞ն,— հարցուց Պետրոս:

— Ամէն ազգէ մարդ կայ,— պատասխանեց Անտոնեան,— պուլկար, հայ, յոյն, թուրք և հրեայ... շէնք-շնորհք կազմակերպութիւն է:

Արամ Անտոնեան մանրամասն տեղեկութիւններ տուաւ մարդ փախցնելու պաշտօն ունեցող այդ գործակալութիւններուն վրայ և ի վերջոյ յայտնեց, թէ ինքն ալ կը պատրաստուէր կծիկը դնել Պոլիսէն:

— Ո՛ր երթալու միտք ունիս,— հետաքրքրուեցաւ Արշակ:

— Նախ՝ բնականաբար Պուլկարիս, անկէ ալ Եգիպտոս կ'անցնիմ և մինչև պատերազմին վերջանալը հոն կը մնամ... Ինտոր է նէ՞ գործ մը կը գտնեմ: Հոստեղի կացութիւնը անտանելի դարձած է... ամէն օր ձերբակալուելու սարսափին մէջ կարելի է չէ ապրիլ:

Եւ Արամ Անտոնեան մեկնեցաւ գրատունէն՝ տխուր տպաւորութեան մը ներքև թողլով իր խօսակիցները:

ԳԼՈՒԽ Ի Դ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏԵԱՆԻՆ ԱՌՋԵՒ

Վահան Թօշիկեանի բանտարկութիւնը, ինչպէս տեսանք, իր ծանօթներու և բարեկամներու շրջանակին մէջ բաւական յուզում առաջ բերած էր:

Ամէն կողմ դիմումներ կ'ըլլային զինքը սպառնացող փորձանքէն ազատելու համար:

Ազդեցիկ անձնաւորութիւններ մինչև Թալէաթի ու ապահովութեան պետ Պէտրի պէյի բարեխօսած էին իր մասին:

Երկու իթթիհատական պետերը խուսափողական պատասխաններ տուած էին:

— Մենք տեղեկութիւն չունինք այդ ձերբակալութենէն, կ'երևայ, որ խնդիրը կարևոր բան մը չէ, քիչ մը համբերեցէք, թող քննութիւնը աւարտի ու անկէ ետքը, եթէ պէտք ըլլայ, կը միջամտենք: Առ այժմ չենք կրնար բան մը ընել:

Այս տեսակ խօսքերով պատասխանած էին իրենց դիմողներուն:

Գայով Թօշիկեանի՝ ան կը շարունակէր խիստ հսկողութեան մը առարկայ ըլլալ Քըսմը սիասի մէջ: Յարաբերութենէ բոլորովին դադրեցուցուած էր, և ո՛չ ոք կրնար մօտենալ իրեն:

Առաջին հարցաքննութենէն ետքը երկրորդ անգամ Րէշատ պէյ զինքը կանչել տուած էր քովը և կրկին խիստ հարցաքննութեան մը ենթարկած:

Դարձեալ խնդիրը ծանօթ այցաքարտին շուրջը կը դառնար:

Թօշիկեան դիտեց, սակայն, որ Քըսմը սիասիի տնօրէնը իրեն հանդէպ աւելի քաղաքավար ընթացք մը ունէր, քան առաջին հարցաքննութեան միջոցին, ընթացք, որ չէր համապատասխաներ հարցումներու խստութեան հետ: Երիտասարդ խմբագիրը իրո՛ւր կը ջանար այս երևոյթին պատճառը գուշակել:

— Ուրեմն կը պնդէք, որ այս գիրը ձեր կողմէ չէ գրուած,— ըսաւ Րէշատ պէյ:

— Բնականաբար կը պնդեմ,— պատասխանեց Թօշիկեան:

— Կրնա՞ք ձեր ըսածը ապացուցանել:

— Կարծեմ թէ շատ դիւրին է:

— Ինչպէ՞ս...

— Իմ գիրս կրնաք բաղդատել այցաքարտին վրայ գտնուած գիրին հետ և պիտի տեսնէք, որ բոլորովին տարբեր է:

— Այդ ըսածը խելքի մօտ է,— պատասխանեց Րէշատ:

— Արդէն դիտեցի որ,— շարունակեց Թօշիկեան,— այցաքարտին մէկ քանի տող գիրերն ալ իրարու չեն նմանիր:

— Ատիկա ես ալ նշմարեցի,— պատասխանեց Րէշատ պէյ,— յետոյ կարծես թէ այդ գիրերը աղջկան գիրեր են կամ կնոջ, բայց ո՛չ էրիկ մարդու:

— Նոյն բանը ես ալ նշմարեցի:

- Ասոր ի՞նչ բացատրութիւն կուտաս:
- Ես ի՞նչ բացատրութիւն կ'ուզէք, որ տամ, միակ բացատրութիւնը այն է, որ այդ տոմսակը կեղծ է և յատկապէս գրած են գլխուս փորձանք բերելու համար:
- Ուրեմն թշնամիներ ունիս:
- Բնական է, որ թշնամիներ ունենամ:
- Մասնաւորապէս մէկու մը վրայ կը կասկածի՞ս:
- Վահան Թօշիկեան պահ մը մտածեց, յետոյ խուսափողական ձևով մը պատասխանեց.
 - Ո՛չ...
 - Բայց ինչպէ՞ս կ'ըլլայ, որ քու այցաքարտդ թշնամիներուդ քով կը գտնուի:
 - Ատիկա անկարելի բան մը չէ, ասկէ զատ ո՛վ որ ուզէ կըրնայ ուզած մարդուն այցաքարտը շինել տալ որևէ տպագրիչի մը:
 - Իսկ ինչպէ՞ս պիտի ապացուցանես, որ Շէրիֆ փաշայի Հետ յարաբերութիւն չես ունեցած:
 - Կարծեմ, ըստ օրինի, ամբաստանողին պարտականութիւնն է իր ամբաստանութիւնը հաստատել և ո՛չ թէ ամբաստանեալին՝ ինքզինք արդարացնել,– պատասխանեց Թօշիկեան, որ հետզհետէ կը քաջալերուէր Հարցաքննութեան առած ուղղութենէն:
 - Քաղաքական այսպիսի ծանրակշիռ խնդիրներու մէջ տարբեր կերպով կը վարուինք,– պատասխանեց Րէշատ պէյ,– և պարզ կասկած մը բաւական է գլուխդ մեծ փորձանք մը բերելու, ուստի լաւագոյն է, որ դուն ինքզինքդ արդարացնելու աշխատիս:
 - Բայց ինչպէ՞ս ապացուցանեմ:
 - Ամէն բան խոստովանելով, նոյնիսկ եթէ յանցապարտ արարքներու մէջ գտնուած ես, պէտք է անմիջապէս ճշմարտութիւնը խօսիս և կրնաս վստահ ըլլալ, որ այդ կերպով միայն կարելի է ազատիլ:
 - Խոստովանելու բան մը չունիմ:
 - Այն ատեն պիտի ստիպուինք մեր քննութիւնը առաջ տանիլ,– եզրակացուց Րէշատ պէյ:

Յետոյ մէկ քանի անկարևոր հարցումներ ևս ուղղելէ ետքը իր հարցաքննութիւնը աւարտեց, և երիտասարդ խմբագիրը կրկին վերադարձուցին իր խցիկը:

Բայց Թօշիկեան այս անգամ կազդուրուած վերադարձաւ իր բանտը:

Րէշատ պէյի վարմունքին մէջ, ինչպէս ըսինք, բարեացակամութիւն մը նշմարած էր: Ասկէ զատ հարցաքննութիւնը յաջողած էր, և իրեն այնպէս կը թուէր, թէ իր տուած պատասխանները համոզած էին հարցաքննիչը:

«Կ'երևայ, որ համոզում գոյացուցած են իմ անմեղութեանս մասին,– կը մտածէր,– և պարզ ձևակերպութեան համար զիս տակաւին կը պահեն կոր...»:

Իր Քրոմը սիասիի բաժնին մէջ մնալն ալ բարեբախտ նշան մը կը նկատէր: Եթէ զինքը իրապէս յանցաւոր դատէին՝ պէտք էր որ պատերազմական ատեան ղրկէին:

Բոլոր այս մտածումները զինքը սրտապնդեցին ու Հանդարտեցուցին:

Ձերբակալուելէն ի վեր առաջին անգամ ըլլալով՝ Հանգիստ քունով քնացաւ: Իրեն այնպէս կը թուէր, թէ վերջին գիշերն էր, որ կ'անցընէր այդ դժնդակ բանտին մէջ:

Առտուն զուարթ տրամադրութեան ներքեւ արթնցաւ և սպասեց: Վայրկեանէ վայրկեան կը կարծէր, թէ դուռը պիտի բացուէր և կարճ գործողութենէ մը ետքը զինքը ազատ պիտի թողուին:

Ամէն անգամ, որ դուրսը ոտնաձայն մը կը լսէր, սրտատրոփ ուրախութիւն մը կը զգար և կը յուսար տեսնել փրկարար հրեշտակը, որ ոստիկանի մը կերպարանքով պիտի երևնար:

Երկար սպասումէ մը ետքը արդարև բանտին դուռը բացուեցաւ, և ոստիկան մը ներս մտաւ:

«Վերջապէ՛ս»,– խորհեցաւ ինքնին երիտասարդ խմբագիրը, որ բոլորովին իր լաւատես երազներուն անձնատուր եղած էր:

Բայց յանկարծ դէմքը մթագնեցաւ, և յուսահատութիւնը պատեց իր ճակատը:

Ոստիկանը իր ձեռքին մէջ բռնած էր քէլէփճէ մը:

– Երկնցո՛ւր ձեռքերդ,– ըսաւ դաժան ձայնով մը:

Թօշիկեան սարսուռաց:

- Ի՞նչ կայ,- թոթովեց շուարած:
- Պիտի երթաս,- գոչեց ոստիկանը:
- Ո՛ր...

- Պատերազմական ատեանը:

- Պատերազմական ատեան՛ը,- ըսաւ Թօշիկեան յուսա-
կտուր,- բայց երէկ այդպիսի բան մը չըսաւ Բէշատ պէյ:

- Չեմ գիտեր, թէ Բէշատ պէյ քեզի ի՞նչ ըսաւ, բայց ինծի
հրաման ըրին, որ քեզ պատերազմական ատեան տանիմ... օն,
ժամանակ չկորսնցնենք, ուրիշներ ալ կան, քեզի կը սպասեն
կոր:

- Մէյ մը Բէշատ պէյը չե՞մ կրնար տեսնել:

- Բէշատ պէյը դեռ չէ եկած, ասկէ զատ ի՞նչ պիտի ընես.
Ինք հրաման ըրած է, որ քեզ տանինք, իրեն հետ տեսնուիլդ օ-
գուտ մը չունի:

- Բայց այս քէլէփճէն ի՞նչ պիտի ըլլայ, ես ոճրագո՞րծ եմ:

- Հրամանը այսպես է... ես առանձին 4 հոգի առանց քէլէփ-
ճէի չեմ կրնար տանիլ, երկնցո՛ւր ձեռքերդ:

Թօշիկեան ստիպուեցաւ համակերպիլ:

Իր ամբողջ գեղեցիկ երազները, այսպէս, սոսկալի մղձաւան-
ջի մը կը փոխուէին:

Ինք կը սպասէր ազատ արձակուելու և ահա պատերազմա-
կան ատեանի բանտը կ'առաջնորդուէր:

Տրտում տիտուր, ուրիշ մէկ քանի բանտարկեալներու հետ, ո-
րոնք իրեն պէս ձեռնակապներ կը կրէին, ճամբայ ելաւ երկու
հրացանակիր ոստիկաններու հսկողութեամբ:

Երիտասարդ խմբագիրը ամօթահար կը քալէր՝ գաղտագողի
նայուածքներ ուղղելով շուրջը:

Կը վախնար, որ իր այս վիճակին մէջ ծանօթի մը կը հանդի-
պի ճամբան:

«Գոնէ սա քէլէփճէները չընէին», - կը խորհէր դառնու-
թեամբ:

Բարեբախտաբար ճամբան շատ երկար չէր, և քառորդ ժամ
ետքը կը մտնէին պատերազմական նախարարութեան ընդար-
ձակ բակը:

Քիչ յետոյ խմբագիրը բանտարկուած էր պատերազմական
ատեանի բանտը:

Բարեբախտաբար այս անգամ զինքը առանձին չբանտարկե-
ցին:

Հազիւ թէ մտած էր մեծ գովուչը, անմիջապէս շրջապատուե-
ցաւ հայերէ:

Ասոնք իրեն ծանօթ հնչակեաններ էին՝ Փարամազ, տօքթոր
Պէննէ, Պօղոս Պօղոսեան, Վարազդատ, Գազիկ Օզանեան, Արծ-
րունի, Աշիքպաշեան, Գրլըճեան, Գեղամ Վանիկեան և այլն. ա-
մէնքն ալ մատնիչ Արշաւիրի զոհերը:

Թօշիկեանի ընկճուած վիճակը հակապատկեր մը կը կազմէր
հնչակեաններու անհոգ, գրեթէ զուարթ վիճակին հետ:

Ասոնք, ամիսներէ ի վեր բանտին մէջ, ընտելացած էին այս
կեանքին, անկէ զատ, իրենցմէ շատեր, արդէն քանի՛- քանի ան-
գամներ ճաշակած էին թրքական բռնակալութեան հաճոյքները:

Արծրունի ժպտուն դէմքով մը հարցուց նորեկին.

- Ի՞նչ լուր, տեսնեք, արտաքին աշխարհէն:

- Այդ աշխարհին հետ յարաբերութիւններս խզած եմ արդէն
երեք օրէ ի վեր,- պատասխանեց Թօշիկեան:

- Դուն վերջին անգամ գուրսէն հոս եկող մէկն ես, հետեա-
բար քու լուրերդ միշտ նորութիւն են մեզ համար:

- Ծշմարիտը՝ աղէկ բաներ չունիմ ձեզի հաղորդելիք... կա-
ցութիւնը շատ ծանրացած է, և խստութիւնները աւելցած հա-
յերուն դէմ, ասոր մէկ ապացոյցը ահաւասիկ իմ ձերբակալու-
թիւնս և բանտարկութիւնս է:

- Իրա՛ւ, ինչո՞ւ համար քեզ հոս բերին:

Վահան Թօշիկեան մանրամասնօրէն պատմեց իր ձերբակա-
լութեան պարագաները և կրած հարցաքննութիւնը:

- Մի՛ վախնար,- ըսաւ Արծրունի,- եղածը այնքա՛ն անճոռ-
նի ամբաստանութիւն մըն է, և զրպարտութիւն ըլլալը այնքա՛ն
յայտնի, որ կարելի չէ քեզ դատապարտել:

- Բայց այն ատեն ինչո՞ւ զիս հոս ղրկեցին:

- Որովհետեւ ուրիշ կերպ չէին կրնար ընել, ամբաստանու-
թիւնը այնքա՛ն ծանր էր, որ առանց պատերազմական ատեանի
առջև ելլելու՝ չէիր կրնար ազատիլ: Բայց նորէն կը կրկնեմ,

վախնալու բան մը չունիս, քու խնդիրդ շատ թեթեւ բան մըն է... մեր կացութիւնը շատ աւելի ծանր է, որովհետեւ մեզի դէմ որոշ և ապացուցուած փաստեր կան, թէ և մէջերնիս կը գտնուին անձեր, որոնք բոլորովին անմեղ են, այսուհանդերձ մենք բնաւ յոյսը չենք կտրած, ընդհակառակը, մեծ յոյս ունինք, որ օճիքնիս պիտի ազատենք: Քեզի համար աշխատող մարդ չունի՞ս դուրսը:

– Անշուշտ ունիմ և կը յուսամ, որ պարապ չեն կեցած:

– Հոգ մի՛ ըներ ուրեմն, քանի մը օր հազիւ հիւր կը մնաս այստեղ:

Այս խօսքերը բաւական ազդեցին Թօշիկեանի վրայ, և դէմքը քիչ մը զուարթացաւ:

– Պատերազմէն ի՞նչ լուր, – հարցուց Արծրունի:

– Ամենակարևոր իրողութիւնը այն է, որ թշնամին սկսած է ուժեղանալ Տարտանէլը, – ըսաւ Թօշիկեան, – օրուան մեծ դէպքն է այս, և կառավարութիւնը իրարանցումի մէջ է:

– Մենք ալ իմացանք և շատ ուրախացանք... երկու օրէ ի վեր կը խօսուի ատոր վրայ, դժբախտաբար որոշ բան մը չենք գիտեր, բանտապահները կցկտուր տեղեկութիւններ կուտան՝ բնականաբար իրողութիւնները խեղաթիւրելով... ուրեմն ճի՞շդ է այդ լուրը:

– Բնականաբար, – ըսաւ Թօշիկեան, – թերթերը քանի օրէ ի վեր այս մասին պաշտօնական զեկոյցներ կը հրատարակեն... այս անգամ եղածը պարզ ցոյց մը չէ, այլ լուրջ կոիւ մը Տարտանէլէն ներս մտնելու համար:

Ամէնքը ժողովուած էին երիտասարդ խմբագրին շուրջը և անյազօրէն մտիկ կ'ընէին:

– Ռմբակոծումին մանրամասնութիւնները գիտե՞ս, – հարցուց շուրջիներէն մին:

– Իմ գիտցածս երեք օր առաջուան դէպքերն են, – դիտել տուաւ Թօշիկեան...

– Հոգ չէ, մեզի համար միշտ նոր են:

– Անգլիական և Ֆրանսական մարտանաւներ ութը ժամ շարունակ ուժեղանալով են Տարտանէլի դուրսը և ասիական եզերքը գտնուող չորս ամրոցները: Թէ և պաշտօնական զեկոյցը կ'ը-

սէ, թէ ուժեղանալով շատ քիչ վնաս տուած է, բայց լուր կայ, թէ ընդհակառակը, ամրոցները ստիպուած են իրենց կրակը դարձեցնել: Արդէն կառավարութեան ցոյց տուած իրարանցումն ալ կ'ապացուցանէ, թէ խնդիրը շատ լուրջ է:

– Ուրեմն կրնայ ըլլալ, որ անգլիացիները և Ֆրանսացիները քիչ օրէն Պոլիս մտնեն:

– Ամէն բան կարելի է:

– Այն ատեն ամէնքս մէկ կ'ազատինք բանտէն, – գոչեց Հընչակեաններէն մէկը խնդալով:

– Բայց տեսնե՞ք մեզի ողջ կը թողո՞ւն, – պատասխանեց Փարամազ:

– Ինչո՞ւ պիտի չթողուն:

– Անոնք ներս չմտած՝ մեզի անդիտի աշխարհ կը դրկեն թուրքերը:

– Թո՛ղ անոնք մտնեն, ու մենք ալ անդիտի աշխարհը երթանք, – գոչեց Հնչակեաններէն մին:

– Կ'ըսուի թէ, – շարունակեց Թօշիկեան, – կառավարութիւնը պատրաստութիւններ կը տեսնէ Պոլսէն մեկնելու, եթէ Տարտանէլի յարձակումը աւելի լուրջ հանգամանք մը ստանայ:

– Իրա՞ւ կ'ըսես, – գոչեցին մէկ քանինքը ուրախութեամբ:

– Այո, – հաստատեց Թօշիկեան, – նոյնիսկ յատկապէս խոշոր սնտուկներ պատրաստուած են, որպէսզի պաշտօնաթուղթերը Գոնիա փոխադրուին պէտք եղած ատեն, նոյնիսկ ուրիշ բան մըն ալ լսեցի:

– Ի՞նչ բան, – հարցուցին հետաքրքիր:

– Իբրև թէ Հայտար փաշայի կայարանը, շոգիի ներքև, պատրաստ կը սպասէ եղբր կառախումբ մը, որպէսզի պէտք եղած ժամանակ նախարարները և բոլոր բարձրաստիճան պաշտօնէութիւնը փոխադրէ Պոլսէն հեռու, վերջապէս քաղաքական կացութիւնը շատ ծանրակշիռ հանգամանք մը առած է, դժբախտաբար բոլոր ատոնք պատճառ կ'ըլլան կոր, որ կառավարութիւնը իր խստութիւնները աւելցնէ Հայերուն դէմ:

– Ատիկա կարևորութիւն չունի, – դիտել տուաւ Արծրունի, – խնդիրը այն է, որ թշնամիները կարենան ներս մտնել Տարտանէլէն... Հոս հասած օրերնին մենք արդէն ազատած կ'ըլլանք:

Նոյնիսկ եթէ իրենք չուզեն մեզի թողուլ, մենք դուռները խորտակելով դուրս կ'ելլենք:

Այս խօսքերը ընդհանուր խանդավառութիւն յառաջ բերին Հայ բանտարկեալներու վրայ, որոնց դէմքերը ուրախութեամբ կը ճառագայթէին:

Խօսակցութիւնը շարունակուեցաւ նոյն նիւթին վրայ. կը վիճարանէին, թէ ո՞րքան հաւանականութիւն կար Տարտանէլէն անցնելու: Ամէնքը այն համոզումը ունէին, որ անիկա մեծ դժուարութիւն մը չէր ներկայացնէր անգլիֆրանսական միացեալ նաւատորմին համար: Յետոյ սկսան հաշուել, թէ քանի օրէն նաւատորմը պիտի երևար Պոլսոյ ջուրերուն մէջ, և այսպէս անցուցին մինչև իրիկուն:

Այդ ընկերական շրջանակին մէջ երիտասարդ խմբագիրը մոռացաւ իր մտմտութենքերը և Հիմա շատ աւելի գուարթ էր, քան Քըսմը սիասիի բանտին առանձնութեան մէջ:

Քանի մը օրեր անցան այսպէս. յետոյ զինքը հանեցին պատերազմական ատեանին առջև, ուր գրեթէ նոյն հարցումները ըրին, ինչ որ ըրած էր Բէշատ պէյ, և հետևաբար Թօշիկեանն ալ նոյն պատասխանները տուաւ:

Ուրիշ մէկ քանի անգամներ ևս հարցուփորձեցին զինքը, առանց որևէ վերջնական որոշում մը կարենալ տալու:

Հիմա ակներև էր, որ խմբագիրը զոհ եղած էր ստոր գրպարտութեան մը, բայց և այնպէս չէին ուզեր օձիքը թողուլ:

Այսպէս շաբաթներ անցուց պատերազմական ատեանին բանտին մէջ, մինչև 1915 ապրիլի սկիզբները:

Վերջապէս ապրիլ 9, Հինգշաբթի օր, ազատ արձակուեցաւ, ճիշդ այն միջոցին, ուր ուրիշ մտաւորական մը՝ Թէոդիկ ու իր հրատարակիչը՝ Մելքոն Յովակիմեան, կը բանտարկուէին «Ամէնուն տարեցոյց»ի մէջ երևցած «խռովայոյզ» գրութիւններու համար:

Իր ազատութեան հետեւալ օրը Վահան Թօշիկեան գացած էր Ղալաթիոյ Խորհրդարանը, ուր հաւաքուած էին յանձնաժողովի մը անդամները: Անոնց մէջ կը գտնուէին մէկ քանի ջոջ վաճառականներ, ինչպէս նաև կուսակցականներ, որոնց մէկն էր Համբարձում Պոյաճեան:

Ամէնքը շնորհակտեցին երիտասարդ խմբագիրը այսքան աժան կերպով ազատած ըլլալուն և իր ձերբակալման և հարցաքննութեան մանրամասնութիւնները ուզեցին իմանալ:

Թօշիկեան գոհացուց զիրենք և պատմեց գլխուն եկածները:

— Ի՞նչ տպաւորութիւն կրեցիր քու բանտային կեանքէդ, — հարցուց ներկաներէն մէկը:

— Տպաւորութիւնս այն է, որ, — պատասխանեց Թօշիկեան, — կառավարութիւնը չափազանց գրգռուած է Հայերուն դէմ և մասնաւորաբար կուսակցականներուն դէմ և նամանաւանդ հրեշտակեաններուն դէմ: Եւ դառնալով դէպի Համբարձում Պոյաճեան՝ աւելցուց.

— Ես եթէ ձեր տեղը ըլլամ, այսօրուրնէ իսկ զգուշական միջոցներ ձեռք կ'առնեմ և, եթէ կարելի է, Պոլսէն կը հեռանամ:

Նուրբ քմծիծաղ մը երևցաւ Պոյաճեանի երիթացած նահատակի դէմքին վրայ:

— Կ'երևայ, որ, — ըսաւ, — բանտային կեանքին չես վարժուած:

— Առաջին բանտարկութիւնս է այս, — պատասխանեց Թօշիկեան:

— Ահա ճիշդ ասոր համար չափազանց ազդուեր ես և զգուշութեան խորհուրդներ կուտաս մեզի, բայց մենք, ափսո՛ս, բանտ շա՛տ տեսեր ենք ու ալ ընտելացած ենք անոր հետ, հետևաբար վախնալու պատճառ չունինք, ասկէ զատ չեմ կարծեր, որ անմիջական վտանգ մը սպառնայ մեզի, դեռ երկու օր առաջ Թալէաթ պէյի հետ տեսնուեցայ և շատ սիրալիբ կերպով:

— Իմ բանտային տպաւորութիւններս ուզեցիք իմանալ, և ես ալ անկեղծօրէն ըսի, իցի՛ւ թէ սխալած ըլլայի, և դուք իրաւունք ունենայիք:

Ներկայ եղող միւս կուսակցականներն ալ Պոյաճեանի համամիտ գտնուեցան:

Կառավարութեան կողմէ Հայերուն հանդէպ ընդհանուր հալածանք մը չի կար. եղածը մասնակի բան մըն էր, արդիւնք մաս մը հնչակեաններու դաւադրական մէկ ձեռնարկին:

Բայց Հիմա Իթթիհատի պետերը համոզուած էին, որ հնչակեան մեծամասնութիւնը համամիտ չէր այդ դաւադրութեան, և անոր ապացոյցը այն էր, որ ձերբակալուած հնչակեաններու մե-

ծամանութիւնը ազատ արձակուած էր, և բանտը միմիայն 22-23 հոգի մնացած էին, որոնց շատերն ալ յուսալի էր, որ քիչ օրէն ազատ պիտի թողուէին:

Ձոջ վաճառականներուն կարծիքն ալ այդ էր:

— Այս միջոցիս կառավարութեան գլուխը այնչափ բռնկած է, որ հայերով զբաղելու ատեն չունի,— յայտարարեց խոշոր փողով վաճառական մը:

— Վիճակին շատ ծանրացած է,— դիտել տուաւ ուրիշ մը,— թէ՛ Տարտանէլի և թէ՛ Կովկասի սահմանը:

— Երէկ նոյնիսկ լուր կար, թէ ռուսերը էրզրում մտեր են:

— Ես ալ ատանկ բան մը լսեցի, բայց ո՛չ թէ ռուսերը, այլ իբր թէ հայ կամաւորներու խումը մը եկեր ու քաղաքը գրաւեր է:

— Ես ատոր չեմ հաւատար,— յայտարարեց էրզրումցի վաճառական մը,— ամբացած քաղաք մը ինչպէ՞ս կամաւորական խումբի մը կողմէ կրնայ գրաւուիլ:

— Վերջապէս իրողութիւնը այն է, որ Կովկասի ճակտին վրայ թուրքերուն վիճակը շատ գէշ է:

— Ո՞ր ճակտին վրայ աղէկ է որ արդէն:

Եւ խօսակցութիւնը շարունակուեցաւ քաղաքական կացութեան շուրջ:

ԳԼՈՒԽ ԻԵ ԱՐՀԱՒԻՐՔԻ ՕՐԵՐԸ

Լրտես Արշակի անակնկալ անյայտացումը բնականաբար մեծ յուզում յառաջ բերած էր ոստիկանութեան մէջ:

Ոստիկանութիւնը համոզուած էր, որ Արշակ զոհ գացած էր ոճիրի մը: Եւ յայտնի էր, որ այդ ոճիրը գործուած էր վրէժխընդրական նպատակով:

Գիտէին, որ օրերէ ի վեր հայ լրտեսը կը հետապնդէր Տըր-դատն ու իր ընկերը, ուստի կ'ենթադրէին, թէ այդ հետապնդումի միջոցին տեղի ունեցած էր ոճիրը:

Եւ սակայն ոճրագործը կամ ոճրագործները գտնելու համար որևէ հետք կարող չէին գտնել:

Շաբաթ մը անընդհատ փնտռութիւններէ ետքը ոստիկանութիւնը յուսահատ հրաժարեցաւ իր խուզարկութիւններէն:

Այսուհանդերձ այս խորհրդաւոր անյայտացումը կը շարունակէր խորին մտատանջութիւն պատճառել ապահովութեան պետ Պէտրի պէյի:

«Եթէ Արշակը հնչակեանները սպաննած են,— կը խորհէր,— ուրեմն այդ մարդիկը տակաւին զօրաւոր կազմակերպութիւն մը ունին Պոլսոյ մէջ և հակառակ մեր կատարած ձերբակալութիւններուն՝ կրնան իրենց մտադրած դաւադրութիւնը գործադրել»:

Եւ այս հաւանականութիւնը կը սարսափեցնէր զինքը, որովհետև իբրև Իթթիհատական կուսակցութեան պետերէն մէկը, կ'ենթադրէր, որ ինքն ալ կրնար զոհ երթալ այդ դաւադրութեան:

Պէտրի պէյ մտային այս տրամադրութեան ներքև կը գըտնուէր, երբ առտու մը Աստիկ Մարկոսեան եկաւ իրեն այցելութեան: Հազիւ թէ ներս մտած էր, ապահովութեան պետը դաժան դէմքով մը ըսաւ.

— Աղէկ որ եկար, ես ալ քեզ կանչել պիտի տայի:

— Արդեօք ձեր վսեմութիւնը իմ ծառայութեանս պէտք ունի,— պատասխանեց Աստիկ մէկ քանի թէմէնահներ ընելով:

— Քու մասիդ անախորժ բաներ կը լսեմ կոր:

— Անախորժ, ի՞նչ ըսել կուզէ ձեր վսեմութիւնը, ես չեմ կարծեր, որ քննադատելի արարքներու մէջ գտնուած ըլլամ:

— Ընդհակառակը, շա՛տ ու շա՛տ քննադատելի գործեր կ'ընես կոր:

— Ձեր վսեմութիւնը կը հաճի՞ այս մասին աւելի յստակ բացատրութիւն մը տալ:

— Բիթը ամէն տեղ կը խօթես կոր,— ըսաւ Պէտրի պէյ՝ միշտ իր դաժանութիւնը պահելով:

— Չեմ հասկնար,— կ'մկմաց Աստիկ, որ կը սկսէր վրդովիլ այս խօսքերէն:

— Պուլկարիա մարդ կը փախցնես, զինուորական ծառայութենէ մարդ կ'ազատես, գործերնիդ պիտի տեսնեմ ըսելով՝ ասդիէն-անդիէն դրամ կը շորթես, ես ի՛նչ գիտնամ, վերջերս ամէն տեսակ աղտոտ գործերու մէջ մատ ունիս:

– Ձեր վսեմութեան սխալ տեղեկութիւն տուած են: Ես միշտ օրինաւորութեան սահմանի մէջ կը գործեմ և երբեք եպերելի արարք մը չեմ ըրած: Այս մասին կրնաք ապահով ըլլալ:

– Ես իմ ըսածս գիտեմ:

– Իմ մատուցած ծառայութիւններս մէջտեղն են, և դուք ալ մօտէն ծանօթ էք անոնց:

– Ճիշդ այդ ծառայութիւններուդ Համար մինչև Հիմա աչք գոցեցի, բայց այլևս պէտք չէ, որ չափը անցընես, այս անգամ կը ներեմ քեզի, միայն թէ աշխատէ՛, որ նորէն քու մասիդ անախորժ բաներ չիմանամ, որովհետև այն ատեն տարբեր կերպով պիտի վարուիմ:

– Յանցանքի մը մէջ չեմ գտնուած, որպէսզի պէտք ըլլայ ինծի ներել,– պատասխանեց Աստիկ, որ ներողութեան խօսքերէն քաջալիքուած էր:

– Ինչ որ է, դուն իմ ըսածներս կը Հասկնաս, ա՛լ կարճ կապենք,– ըսաւ Պէտրի պէյ:

– Հիմա կը բարեհաճի՞ք ինծի մտիկ ընել,– պատասխանեց Աստիկ:

– Նորէն ի՞նչ խնդիր ունիս:

– Ոչինչ բան մը... փոքրիկ շնորհ մը: Ձեր կողմէ տրուելիք պարզ հրաման մը բաւական է:

– Բայց խնդիրը ի՞նչ է...

– Հայ բանտարկեալի մը մասին, որ սխալմամբ կարծեմ ձերբակալուած է իբրև Հնչակեան, թէև որևէ կուսակցութեան չպատկանիր... Աբգար անուն երիտասարդ մը:

– Ձեմ յիշեր կոր անանկ մէկը:

– Վերջերս ձերբակալուած է, Հազիւ քանի մը շաբաթ կայ: Պէտրի պէյ գրասեղանին գզրոցը բացաւ, թուղթերու դէզ մը դուրս Հանեց, աչքէ անցուց և ըսաւ.

– Այդ քու ակնարկած մարդը զուտ Հնչակեան մըն է և իր մասին երկար ժուռնալ մըն ալ կայ... խեղճ Արշակ էֆէնտիին կողմէ գրուած:

– Արշակ էֆէնտին սխալած ըլլալու է:

– Ձեմ կարծեր, Արշակ էֆէնտին թեթևօրէն գործ տեսնող մէկը չէր:

– Ես եթէ անգամ մը զինքը տեսնամ, կրնամ Համոզել, որ սխալած է:

– Ո՞վ պիտի տեսնէք,– Հարցուց Պէտրի պէյ:

– Արշակ էֆէնտին:

– Բայց Արշակ էֆէնտին 10-12 օրէ ի վեր մէջտեղ չի կայ և Հաւանօրէն ոճիրի մը զոհ գացած է:

– Ի՛նչ կ'ըսէք,– գոչեց Աստիկ զարմացած:

– Ձէի՞ր գիտեր, օրերով խուզարկութիւն կատարեցին Հետքը գտնելու Համար, բայց իզո՞ւր:

– Բայց ես զինքը այս օրերս տեսայ:

– Տեսա՞ր մի,– գոչեց Պէտրի պէյ,– ո՞ւր, ե՞րբ:

Աստիկ պահ մը մտածեց, յետոյ պատասխանեց.

– Ձեր վսեմութիւնը իրաւունք ունի, 10-12 օր առաջ իրիկուն մը իրեն Հանդիպեցայ Բերա, գինետան մը մէջ: Բայց անկէ հետքը չտեսայ:

– Կը յիշե՞ս, թէ ի՛նչ խօսեցաք,– Հարցուց Պէտրի պէյ:

– Կատարելապէս,– պատասխանեց Աստիկ,– ես Հոն նստած էի, երբ ներս մտաւ և չորս կողմը նայեցաւ մարդ մը փնտռելու պէս: Հարցուցի, թէ ով կը փնտռէր, պատասխանեց՝ թէ Տրդատ անուն երիտասարդ մը, որ ես ալ ճանչցած էի իր միջոցաւ...

– Է՛յ,– ըրաւ Պէտրի պէյ չափազանց Հետաքրքրուած,– շարունակէ՛, տեսնենք:

– Իրեն ըսի, որ Տրդատ և իր ընկերը նախորդ օր տեսած էի Շիշլիի կողմերը, ասոր վրայ չուզեց նստիլ և իսկոյն մեկնեցաւ, Հաւանօրեն Շիշլի երթալու Համար:

– Իրաւցընէ տեսա՞՞մ էիր Տրդատը:

– Եթէ տեսած չըլլայի՞ ինչո՞ւ սուտ պիտի խօսէի,– պատասխանեց Աստիկ:

– Ահա այդ իրիկուրնէ ի վեր Արշակին Հետքը կորսնցուցած ենք:

– Ի՛նչ կ'ըսէք, արդեօք դժբախտութիւն մը պատահած է իրեն:

– Հաւանօրեն, կ'երևայ, որ Շիշլիի կողմը կրցած է գտնել Տրդատի և իր ընկերոջ Հետքը, և թշուառականները տեսնելով, որ գլխերին փորձանք մը պիտի գայ, որևէ կերպով սպաննած են խեղճ մարդը:

– Ուրեմն ես անուղղակի պատճառ եղայ այդ Արշակ էֆէն-տիրին մահուան,– պատասխանեց Աստիկ՝ տխուր դէմք մը առնելով:

– Խնդիրը ատոր վրայ չէ, դուն գործին մէջ որեւէ պատասխանատուութիւն չունիս, դուն ուզած ես ծառայութիւն մը մատուցանել իրեն:

– Բնականաբար,– ընդմիջեց Աստիկ:

– Շատ գոհ եմ, որ եկար, և դիպուածով այս խօսքը բացուեցաւ,– ըսաւ Պէտրի պէյ, որ այլևս դաժան շեշտով մը չէր խօսեր Աստիկի հետ:

– Շատ երջանիկ եմ, որ անգիտակցաբար ձեզի հաճոյք մը պատճառեցի:

– Հիմա ալ տարակոյս չի կայ, թէ Արշակ Շիշլիի կողմերը զոհ գացած է իր անձնութեան:

– Ես ալ այդպէս կը կարծեմ:

– Հիմա կրնանք մեր խուզարկութիւնները վերսկսել աւելի արդիւնաւոր կերպով, քանի որ որոշ շրջանակի մը մէջ պիտի կատարուին անոնք:

– Կը կարծէ՞ք, որ այդ երիտասարդները, երբեք եթէ սպաննած են Արշակը, միշտ կը մնան Շիշլիի կողմերը:

– Եթէ յաջողեցան դիակը անհետացնել առանց որեւէ հետք մը թողլու, ինչո՞ւ համար տեղափոխուին, այժմ ինքզինքնին բոլորովին ապահով զգալու են:

– Իրաւունք ունիք:

Պահ մը լուռութիւն տիրեց: Աստիկ ուզեց օգտուել Պէտրի պէյի իր հանդէպ ցոյց տուած բարեացակամութենէն:

– Սա Աբգարի մասին բան մը չէ՞ք կրնար ընել արդեօք,– հարցուց:

– Ատիկա թո՛ղ հիմակուհի մա մնայ,– պատասխանեց Պէտրի պէյ,– պէտք է, որ թուղթերը լաւ մը քննեմ, եթէ իրեն դէմ ծանր բան մը չի կայ, կը հաննեք, քանի մը օրէն մէյ մը անցիր հոսկէ, քեզի պատասխան մը կուտամ:

Աստիկ, առանց աւելի պնդելու, ոտքի ելաւ, շնորհակալութիւն յայտնեց և մեկնեցաւ:

Այս տեսակցութեան օրուան իրիկունն իսկ ոստիկանական

անսովոր հսկողութիւն մը կը տեսնուէր Շիշլիի կողմերը: Այդ թաղի բնակիչները զարմանքով կը տեսնէին ամէն փողոցներու մէջ ոստիկաններու և լրտեսներու ներկայութիւնը, որոնք կ'երթային, կուգային, իրարու հետ կը փսփսային խորհրդաւոր ձևերով:

Այս երևոյթը ամենուն հետաքրքրութիւնը արթնցուցած էր և զանազան մեկնութիւններու տեղի տուած:

Տրդատ միշտ կը բնակէր իր ընկերոջ հետ այն տունը, ուր մեր ընթերցողները առաջնորդեցինք արդէն, և ուր տեղի ունեցած էր Արշակի եղբրական վախճանը:

Այդ օրը ինք դուրս չէր ելած և իրիկունը, ուշ ատեն, սեղանին քով նստած լամպարին լոյսովը գիրք մը կը կարդար՝ սպասելով Վահէին, որ բաւական ժամանակ է վեր դուրս ելած էր: Վերջապէս դուռը զարնուեցաւ, և Վահէ երևցաւ:

Խռոված կերպարանք մը ունէր, որ իսկոյն Տրդատի ուշադրութիւնը գրաւեց:

– Ի՞նչ կայ,– հարցուց:

– Գէշ բաներ,– պատասխանեց միւսը:

– Խօսէ՛, տեսնեք:

– Վտանգի մէջ ենք:

– Ինչպէ՞ս, ինչո՞ւ համար:

– Կարծեմ ոստիկանութիւնը իմացած է, որ Շիշլի կը գտնուինք:

– Ինչո՞ւ համար այդպէս կը հետեցնես:

– Չեմ հետեցնիր, այլ պարզապէս իրողութիւնն է, որ կ'ըսեմ: Ամբողջ թաղը ոստիկաններով և լրտեսներով լեցուած է:

– Բայց թերևս ուրիշ գործի մը համար է:

– Ես ալ առաջ այնպէս ենթադրեցի,– պատասխանեց Վահէ,– և նպարավաճառ Նիքօլիին հարցուցի, թէ ի՞նչ էր ոստիկանական այս իրարանցումին պատճառը: Նիքօլի պատասխանեց, թէ ոստիկանութիւնը երկու հայ երիտասարդներ կը փրնտուէ կոր, որոնք 10-12 օր առաջ այս կողմերը հայ լրտես մը սպաննեցին: Հիմա հասկցա՞ր, թէ ինչո՞ւ վրդոված եմ և կ'ըսեմ, թէ վիճակնիս ծանր է:

– Արդարև իրաւունք ունիս,– պատասխանեց Տրդատ՝ ինքն ալ մտածկոտ դէմք մը առնելով:

– Պէտք է, որ օձիքնիս ձեռք չի տալու ճար մը մտածենք:

– Բարեբախտաբար ոստիկանները և լրտեսները անձնապէս մեզի չեն ճանչնար,– դիտել տուաւ Տրդատ:

– Ատիկա բարեբախտութիւն մըն է, բայց բաւական չէ մեր ապահովութեան համար:

– Անշուշտ,– պատասխանեց Տրդատ,– ինչ որ ալ ըլլայ, պահենք մեր պաղարիւնութիւնը և այնպէս գործենք:

– Միայն թէ շուտով ընենք, ինչ որ պիտի ընենք:

– Նախ՝ պէտք չէ, որ դուրս ելլենք մէկ քանի օր, մինչև որ խուզարկութիւնները քիչ մը մեղմանան:

– Կը կարծե՞ս, որ նոյնիսկ տունները խուզարկելու ձեռնարկեն:

– Ինչու չէ, ամէն բան հաւանական է, մանաւանդ որ հիմա զինուորական փախստականները պատրուակ բռնելով՝ կրնան ազատօրէն տունները մտնել, և ոչ ոք կրնայ դիտողութիւն մը ընել:

Երկու երիտասարդները մինչև առտու մտատանջութեան մէջ անցուցին:

Առտուն կանուխ Տրդատ արթնցուց իր ընկերը և ըսաւ.

– Գիշերը երկար ժամեր մտածեցի և սա որոշման յանգեցայ, որ իսկոյն պէտք է թողունք այս տունը և ուրիշ տեղ մը ապաստանինք, լաւագոյնը կրկին Բերա երթալն է, հոն աւելի դիւրաւ կրնանք ծածկուիլ:

– Շատ իրաւունք ունիս,– պատասխանեց Վահէ,– միայն թէ ո՞ւր պիտի երթանք:

– Նախ սա ըսեմ, որ ասկէ ետքը պէտք չէ միասին բնակինք, այս կերպով եթէ մէկերնիս ձերբակալուինք, գոնէ միւսը կ'ազատի:

– Խնդիրը ապահով տեղ մը գտնելու վրայ է:

– Այս մասին ալ ես խորհեցայ, բարեկամներէս մին ինծի տուն մը յանձնարարած էր Թաուլա պաշի կողմերը, նոյնիսկ տունն ալ այցելեցինք, բայց վարձքին համար չկրցանք համաձայնիլ, քիչ մը շատ դրամ ուզեցին, բայց հիմա շատ բարակը նայելու ատեն չէ:

– Հայո՞ւ տուն մըն է,– Վահէ հարցուց:

– Այո՛, մայր մը և իր երկու աղջիկներն են, մայրերնին կարուհի է, շատ շնորհքով ընտանիք մըն են:

– Ուրիշ վարձակալներ կա՞ն տանը մէջ:

– Կարծեմ թէ մէկ քանի հոգի կան:

– Ատիկա պատիկ անպատեհութիւն մըն է:

– Չեմ կարծեր, անոնք ի՞նչ գիտեն իմ ով ըլլալս, մանաւանդ որ տարբեր անունով մը ներկայացած եմ իրենց:

– Ենթադրենք, որ դուն այդ կերպով գործդ կարգադրեցիր, ես ի՞նչ պիտի ընեմ,– հարցուց Վահէ:

– Բեզի համար ալ բան մը կը մտածենք,– պատասխանեց Տրդատ:

– Ուրեմն որոշած ես անմիջապէ՞ս փոխադրուիլ:

– Լաւագոյնը այդ է,– պատասխանեց Տրդատ,– իսկ դուն առայժմ կրնաս մեր նախկին տունը երթալ, մինչև որ աւելի յարմար տեղ մը գտնենք:

Երկու երիտասարդները այսպէս որոշեցին իսկոյն հեռանալ տունէն:

– Նախ ես երթամ,– ըսաւ Տրդատ,– ու կէս ժամ ետքն ալ դուն մեկնէ:

Երիտասարդը դուրս ելաւ և ամայի փողոցներէ անցնելով՝ ուղղուեցաւ դէպի Թաթաւլա և հոնկէ ալ, միշտ խոտոր ճամբաները ընտրելով, հասաւ Թաուլա պաշի և աներեոյթ եղաւ կողմնակի փողոցի մը մէջ:

Վահէ ևս անվտանգ կերպով կրցաւ հասնիլ այն տունը, ուր երկու երիտասարդները կը բնակէին նախապէս:

Ոստիկանական խուզարկութիւնները շարունակեցին քանի մը օր, Շիշլի կողմերը, բայց առանց որևէ արդիւնքի:

– Այդ մարդիկը կ'երևայ որ Պոլսէն հեռացած են,– վճռեց Պէտրի պէյ և այլևս չզբաղեցաւ անոնցմով:

Ինչպէս ըսինք, ապրիլ 9ին Վահան Թօշիկեան արձակուած էր բանտէն, երկու օր ետքը, շաբաթ իրիկուն մը, չարաշուք լուր մը տարածուեցաւ Պոլսոյ կողմը, Պապը Ալիի շրջականները:

– Չերբակալութիւններ եղած են,– կը փսփսային իրարու:

– Որո՞նք են ձերբակալուածները:

– Ստեփան Բիւրքեճեան, «Եփրատ» գործակալութեան տէրը, յետոյ տպարանատէր Ատոմ Շահէն, յետոյ գրաշար մը:

– Բայց ինչո՞ւ ձերբակալուած են:

– Յայտնի չէ, ո՛չ ոք որոշ բան մը գիտէ, ոստիկաններ եկեր տարեր են, դեռ ուրիշներ ալ ձերբակալուած են, կ'ըսուի:

– Այդ ըսած անձերդ ամէնքն ալ դաշնակցական են, ուրեմն անոնց դէմ է եղածը:

– Որոշ բան մը չեմ գիտեր:

Եւ որովհետեւ ո՛չ ոք որոշ բան մը չէր գիտեր, ամէն մարդ ուզած ենթադրութիւնները կ'ընէր.

– Հայերը Վանին և Էրզրումին տիրեր են, անոր համար կառավարութիւնը այդ ձերբակալութիւնները կ'ընէ:

– Վանին ու Էրզրումին համար ինչո՞ւ կ'ուզես, որ Ստեփան Քիւրքեանը, Ատոմ Շահէնը ձերբակալեն, այդ ի՛նչ խենթ խօսք:

– Ոստիկանութիւնը մեծ դաւադրութենէ մը կը վախնայ կոր:

– Նորէն Հայ մատնիչի մը գործը ըլլալու է, ո՛վ գիտէ, ի՛նչ զրպարտութիւններ ըրած է խեղճերուն համար:

Եւ այսպէս ամէն մարդ իր ուզած ձեռք կը մեկնէր այդ ձերբակալութիւնները, բայց առանց մեծ նշանակութիւն մը ընծայելու անոնց:

Սակայն Հետեեալ առտու, կիրակի, խնդիրը տարբեր հանգամանք ստացաւ:

Ամբողջ գիշերը ձերբակալութիւններ կատարուած էին Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ, և ձերբակալեալները, ամէնքն ալ, քիչ-չատ ծանօթ անձեր էին:

Հիմա սարսափը կը կարդացուէր ամենուն դէմքին վրայ:

Փողոցը, սրճարաններուն մէջ, տուները ամէն մարդ այդ ձերբակալութիւններով կը զբաղէր:

– Իմացա՞ր, տօքթոր Թորգոմեանն ալ բռներ են:

– Բայց անիկա յեղափոխական չէ, ասկէ զատ գահաժառանգին անձնական բժիշկն է:

– Յեղափոխականի չեն նայիր կոր, չե՞ս գիտեր, Բիւզանդ Քէչեանն ալ տարած են, մարդը ամէն օր յեղափոխականներուն դէմ կը գրէր:

– Զարմանալի բան, ուրեմն ի՛նչ է նպատակնին:

– Ո՛վ գիտէ, փաստաբան, բժիշկ, խմբագիր կուսակցական, վերջապէս մարդ չեն ձգած, ձերբակալած են:

– Քանի՞ Հարիւր Հոգի են բռնուողները:

– Դեռ ոչ ոք գիտէ, ոմանք 200 կ'ըսեն, ուրիշներ 350, մինչև իսկ 2000 ըսողներ կան:

– Չափազանցութիւն ըլլալու է:

– Կոմիտաս վարդապետն անգամ բռներ են:

– Պարապ խօսքեր մի՛ ըներ, Կոմիտաս վարդապետը ինչո՞ւ պիտի բռնեն, դուն սխալ իմացեր ես կամ քիթիդ խնդացեր են:

– Տղայ մի՛ ըլլար, իր աշակերտներէն մէկը ըսաւ: Ինք իմացեր է, քեզի պէս չէ ուզեր հաւատալ, տունը գացեր է և տունէն ըսեր են, որ գիշերը եկեր, տարեր են:

– Վարդապետը այդպէս կեցած տեղը կը ձերբակալե՞ն:

– Կը կարծես, որ միայն Կոմիտաս վարդապետը ձերբակալուած է, դեռ ուրիշ վարդապետներ ու քահանաներ ալ կան...

– Իրա՞ւ կ'ըսես:

– Հապա՛, Պալազեան վարդապետը, Յովնան վարդապետը, Ֆէրիզեղի Վարդան քահանան, ես ի՞նչ գիտեմ, դեռ ուրիշ շատեր:

– Գոնէ Հիմա դադրա՞ծ են ձերբակալութիւնները:

– Դեռ կը շարունակուին եղբր...

Ու այսպէս, ամէն մարդ, իր գիտցածները կը հաղորդէր ուրիշներուն՝ յաճախ չափազանցելով իրողութիւնները: Թէև առանց չափազանցութեան ալ սարսափելի էին անոնք:

Անոնք, որ խորհրդաւոր ցանկի մը գոյութիւնը կը հաստատէին, այժմ կը յաղթանակէին:

– Ես չէի՞ ըսեր կոր, առաջուրնէ ցանկ պատրաստուած էր, այս գործը ամիսներ առաջ որոշուած բան մըն էր, վեց հազար Հոգինոց ցանկ մը կայ ոստիկանութեան ձեռքը:

– Վեց հազար Հոգի, այդչափ մարդը ո՛ւր պիտի պատսպարեն:

– Պատսպարելու ի՛նչ պէտք կայ, պիտի բռնեն, քչեն:

– Ատանկ բան չկրնար ըլլալ, հարկաւ նախ դատավարութիւն պիտի ըլլայ, առանց դատելու ինչպէ՞ս կը բռնեն, կը քչեն:

Հակառակ տիրող սարսափին, լաւատեսներ ալ պակաս չէին:

– Կարևորութիւն տալիք բան չէ, – կ'ըսէին ասոնք, – պարզապէս աչք վախցնելու համար եղած բան մըն է, քանի մը օր

վար պիտի դնեն, յետոյ մէկիկ-մէկիկ պիտի արձակեն, պարապ տեղը իրար մի՛ անցնիք:

Եւ սակայն հետեւեալ օրը նոր շշնկոց մը տարածուեցաւ ամէն կողմ:

– Ձերբակալուածները ամէնքն ալ աքսորեր են:

– Ամէնքը չէ, մեծ մասը:

– Ես լսեցի, որ ամէնքն ալ շոգենաւ դրեր ու ճամբայ հաներ են:

– Դէպի ո՞ւր:

– Յայտնի չէ, այդ մասին սարսափելի խօսքեր լսեցի:

– Ի՞նչ խօսք...

– Իբր թէ ծովին բացը պիտի տանին ու շոգենաւ պիտի ընկըղմեն եղեր:

– Չեմ կարծեր, որ այդ տեսակ բան մը ընելու համարձակին:

– Այս մարդիկը ամէն բան ընելու կարող են:

Յետոյ ուրիշ չարաշուք լուր մըն ալ կը փսփսային իրարու ականջէն.

– Գիտե՞ս, ձերբակալուածներէն տասներկու հոգի երէկ գիշեր կախեր են:

– Ի՞նչ կ'ըսես, անհաւատալի՛ բան:

– Շատ ստոյգ աղբիւրէ մը իմացայ:

– Որո՞նք են կախուողները:

– Ակնուհին, Խաժակը, Ջարդարեանը, Ճանկիւլեանը, Մուրատը, Խօթոր Տաղաւարեանը, Հրաչը և ուրիշ հինգ անձեր, որոնց ո՛վ ըլլալը յայտնուած չէ:

– Սարսափելի՛ բան, երէկ գիշեր կրկին բաւական ձերբակալուածներ եղեր է:

– Ասոնց առաջը առնելու համար բան մը պիտի չկրնա՞նք ընել:

– Ի՞նչ կ'ուզես, որ ընենք:

– Եղբա՛յր, Պատրիարքարանը չկրնա՞ր բան մը ընել:

– Պատրիարքը դիմում ըրեր է, պարզապէս զինքը ճամբու դրեր են, Թալէաթը զինքը չէ ընդունել անգամ:

Երեքշաբթի օր սարսափը դարձեալ կը շարունակուէր: Նոր ձերբակալուածներ չէին եղած թէև, բայց ամէն մարդ վախի մէջ էր:

Նոյն օրը սուլթանին դահակալութեան տարեդարձն էր, և այս առթիւ քաղաքը դրօշազարդարուած էր:

Իրիկուան դէմ յանկարծ լուր մը տարածուեցաւ:

Անգլիացիները զօրք ցամաք հանած էին Տարտանէլ:

Այս իրողութիւնը նոր յոյսով մը վառեց ամենուն սիրտերը:

– Քանի մը օրէն համաձայնականները Պոլիս կը մտնեն, – կ'ըսէին իրարու:

Պաշտօնական զեկոյցը կ'ըսէր.

«Թշնամին իր մարտանաւերուն պաշտպանութեան տակ, ապրիլ 12ին առտուն ձեռնարկեց զինուոր ցամաք հանելու կէլիպօլուի թերակղզիին չորս կէտերուն վրայ, ինչպէս նաև Գում Գալէի կողմերը:

«Թէքէ պրունի կողմերը ցամաք ելած թշնամի զինուորները ծով թափուեցան սուինաւոր յարձակումով. Արը պրունի կողմերը ցամաք ելլելով՝ յառաջանալու աշխատող թշնամի զօրախումբերը մեր ուժերուն յարձակումին վրայ պարտաւորուեցան ետ քաշուիլ և եզերք քշուեցան: Այս կողմերը մաս մը զօրաթևեր երէկ գիշեր խուճապով պարտաւորուեցան իրենց նաւակները փախչիլ: Այսօր ալ մեր զօրախումբերը յաջողութեամբ կը շարունակեն իրենց յարձակումները բոլոր ճակատներուն վրայ: Երէկ, միևնոյն ատեն, ծովի կողմէ ալ բռնաբարելու համար, թշնամիին մէկ նաւատորմը նեղուցին մօտեցաւ և մեր կրակին վրայ ետ քաշուեցաւ: Այս միջոցին, թշնամիին մէկ թորփիլանաւը ընկղմուեցաւ և ծանրապէս վնասուած ուրիշ թորփիլանաւ մըն ալ քաշկուտելով Թենետոս տարուեցաւ:»

Հակառակ պաշտօնական զեկոյցին այս լաւատես յայտարարութիւններուն, ամենուն համոզումը այն էր, որ համաձայնականները մեծ յաղթանակ մը տարած են:

Նոյնիսկ ըսողներ կային, թէ թշնամի մարտանաւերը անցած են նեղուցներէն և մէկ ժամէն միւսը պիտի երևան Պոլսոյ առջև:

Միևնոյն ժամանակ ուսական նաւատորմը կը ուժակոծէր Վոսփորի նեղուցը, և թնդանօթի ծայները կը լսուէին յստակօրէն:

Բոլոր ասոնք պահ մը մոռացնել տուին Հայերու խուճապը, և ուրախ տրամադրութիւն մը յաջորդեց նախորդ օրերու սարսափին:

Եւ սակայն օրերը կ'անցնէին, մարտանաւերը չէին երևար, ու ձերբակալութիւնները կը շարունակուէին. հիմա որոշապէս հասկցուած էր, թէ ձերբակալուածներուն թիւը 350ի չափ էր, որոնց մէկ մասը ղրկուած էր Չանդրըր և միւս մասը՝ Այաչ:

Ի՞նչ պիտի ըլլար այդ աքսորականներուն վիճակը:

Ո՛չ ոք գիտէր:

Վերջ առաջին գրքի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թանգարանի կողմից 5
 Մեծ եղեռնը պատկերող առաջին հայ վեպը - Ս. Մուրադյան ... 7
 Վաղուան հայ մտատրականները - Ե. Օտեան 23

ԹԻՒ 17 ԽԱՏԻԷՆ

Իբր նախաբան քանի մը խօսք 24
 ԳԼՈՒԽ Ա - Ազգային ժողովի դնփակ գիտը 26
 ԳԼՈՒԽ Բ - Կանաչ հովանոցով կիճը 36
 ԳԼՈՒԽ Գ - Նախարարին սնտուկը 42
 ԳԼՈՒԽ Դ - Խմբագրատան մէջ 47
 ԳԼՈՒԽ Ե - Զօհրայ և Թալէաթ 54
 ԳԼՈՒԽ Զ - Մեծ արկածախնդիր մը 62
 ԳԼՈՒԽ Է - Հե՞տք մը 86
 ԳԼՈՒԽ Ը - Վարչութեան բացատրութիւնը 103
 ԳԼՈՒԽ Թ - Նոր յայտնութիւններ 117
 ԳԼՈՒԽ Ժ - Գիշերային ժողով մը 122
 ԳԼՈՒԽ ԺԱ - Վարագոյրը կը պատոհի 131
 ԳԼՈՒԽ ԺԲ - Նորի Օսմանիէի քլիպը 146
 ԳԼՈՒԽ ԺԳ - Խորհրդատր զոյգ մը 159
 ԳԼՈՒԽ ԺԴ - Դաւաճանը 173
 ԳԼՈՒԽ ԺԵ - Մթութեան մէջ 179
 ԳԼՈՒԽ ԺԶ - Մարիքայի տանը մէջ 199
 ԳԼՈՒԽ ԺԷ - Արշաիր Եասեան 207
 ԳԼՈՒԽ ԺԸ - Ուր կրկին կ'երևայ Աստիկ Մարկոսեան 224
 ԳԼՈՒԽ ԺԹ - 1914 Յուլիս 14 227
 ԳԼՈՒԽ Ի - Հորին գաղտնիքը 246
 ԳԼՈՒԽ ԻԱ - Խորհրդատր նօթագրութիւն մը 260
 ԳԼՈՒԽ ԻԲ - Կացութիւնը կը ծանրանայ 273
 ԳԼՈՒԽ ԻԳ - Մութիւն մէջ ճշոյլ մը 291
 ԳԼՈՒԽ ԻԴ - Պատերազմական ատեանին առջև 302
 ԳԼՈՒԽ ԻԵ - Արհաւիրքի օրերը 312

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐՔԵՐԸ**

1. Լ. Չորմիսեան, Համապատկեր Արևմտահայոց մէկ դարու պատմութեան, հտ. Բ, Բէյրութ, 1974
2. Նույնի, հտ. Գ, Բէյրութ, 1975
3. Խ. Թիթիւնեան, Ամմահներուն հետ (Վասպուրական մեր աշխարհի մէջ), Բէյրութ, 1974
4. Ա. Մահարի, Իմ ողիսականը, Անթիլիաս, 1994
5. Գ. Սևան, Սփյուռքահայ գրականության ուրվագծեր, հտ. Բ, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1997
6. Գ. Սևան, Գառնիկ Աղաբաբյան, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1998
7. Ա. Ափիսյան, Կարմիր լիպուսին. Վարդան Գրիգորյանի պատմավեպը, Երևան, 1997
8. Երվանդ Օտյանի հիշատակին (Հողվածներ, հուշեր, նամակներ), Երևան, «Արեգ», 1994
9. Ս. Մանուկյան, Երվանդ Օտյան, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1997
10. Ե. Օտեան, Հայ Տիասրորան, Երևան, ԳԱԹ, 1999
11. Ե. Օտեան, Նամակներ, Երևան, ԳԱԹ, 1999
12. Ե. Օտեան, Վերնատունէն, Երևան, ԳԱԹ, 1999
13. Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հտ. 5, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1998
14. Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 8, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1999
15. Նույն ժողովածուի հտ. 10, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1999
16. Ն. Թումանյան, Թումանյանի մանկությունը, Երևան, 1999
17. Վ. Աճէմեան, Ուրիշ առաւօտ մը, Երևան, 1998
18. Չարենցեան ասոյթներ, Բէյրութ, 1997
19. Ա. Բակունց, Ժառանգություն, Երևան, 1999
20. Է. Ջրբաշյան, Պուշկինը և հայ բանաստեղծները, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1999
21. Հայ ազգագրություն և բանահյուսություն (Թալին), Երևան, ՀՀ ԳԱԱ, 1999
22. Հայ ազգագրություն և բանահյուսություն (Լոռի), Երևան, ՀՀ ԳԱԱ, 1999
23. Մասնա ծոեր, հտ. Դ, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1999
24. Մ. Կիրճեան, «Ազգայիններ», Երևան, ԳԱԹ, 1999
25. Մ. Կիրճեան, Մարտիկ աղա, Երևան, ԳԱԹ, 1999

26. Ա. Եղիազարյան, «Մասնա ծոերի» պոետիկան, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1999
27. Հ. Բախչիւնյան, XVII-XVIII դարերի հայ գրականությունը, Երևան, «Լույս», 1999
28. Գարեգին Ա, Ջրույցներ Ջովաննի Գուայտայի հետ, Ս. Էջմիածին, 1999
29. Կոմիտաս, Նամակներ, Երևան, ԳԱԹ, 2000
30. Է. Ջրբաշյան, Թումանյանի գրական ժառանգությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2000
31. Մասնա ծոեր, Նորահայտ պատումներ, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2000
32. Ե. Օտեան, Թիւ 17 խաֆիէն, գիրք Ա, ԳԱԹ, Երևան, 2000

**ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ
ԹԻԻ 17 ԽԱՖԻԷՆ
ՎԷԿ**

**Էջադրումը և ձևավորումը
ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ**

**Շարվածքը՝
ԳՈՀԱՐ ԳԱԼՍՏՅԱՆԻ
ԼԱՌԻՐԱ ՎԻՐԱԲՅԱՆԻ**

**Սրբագրիչներ՝
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՈՒՍՏՅԱՆ
ՆԱԻՐԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ**